

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱԽԱԶԻՆ ՓՈՒԼԸ ՖՐԱՆՏԻԱԿԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
(XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ - XX ԴԱՐԻ ՄԿԻՋԲ)



UNIVERSITÉ D'ÉTAT D'EREVAN
INSTITUT DES ÉTUDES ARMÉNOLOGIQUES

VAROUJEAN POGHOSYAN

**LA PREMIÈRE ÉTAPE DU GÉNOCIDE
DES ARMÉNIENS À TRAVERS LE PRISME
DE L'HISTORIOGRAPHIE ET DE LA PENSÉE
PUBLIQUE ET POLITIQUE FRANÇAISES
(FIN DU XIX^e – DÉBUT DU XX^e SIÈCLES)**

Deuxième édition, refondue et complétée

EREVAN
ÉDITIONS DE L'UNIVERSITÉ D'ÉTAT D'EREVAN
2011

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԴԵՏԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՏ

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱԴԱՏՄԱՆՔ
(XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ – XX ԴԱՐԻ ՍԿԻՋԲ)

Երկրորդ, բարեփոխված և լրացված հրատարակություն

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
2011

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (27)

Պ 797

Պողոսյան Վարուժան

Պ 797 Դայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիակամ պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ) (Երկրորդ, բարեփոխված և լրացված հրատարակություն) / Վ. Պողոսյան: - ԵՊՀ հրատ., 2011.- 356 էջ + 8 էջ ներդիր:

Մենագրության առաջին հրատարակությունը լույս է տեսել 2005 թ.: Երկրորդ՝ բարեփոխված և լրացված, հրատարակության մեջ հեղինակն ընդլայնել է թեմայի ժամանակագրական շրջանակները, հավելել նոր ենթագլուխ («Դամիոյան կոտորածները 1909-1918 թթ. ֆրանսիական պատմագրության լուսաբանմամբ»), կատարել կառուցվածքային փոփոխություններ, իսկ որոշ գլուխներ վերաշարողել են և համալրել են նյութերով: Մենագրությունը շարողված է ցեղասպանագիտության ժամանակակից նվաճումների հենքի վրա:

Նախատեսված է պատմաբանների համար:

ԵՊՀ Գրադարան



SU0185493

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (27)

ISBN 978-5-8084-1414-3

© Պողոսյան Վարուժան, 2011
© ԵՊՀ հրատ., 2011

ԵՊՀ Սարգիս և Մարի Իսրայելյանների անվան գրադարան
Sarkis and Marie Israelyan Library of Yerevan State University
Բιблиոթեկա ЕГУ им. Саркиса и Марии Исаакяновых

Ակադեմիկոս Դրանտ Ավետիսյանի անմոռաց հիշատակին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նրանց [իայերի] գործը մարդկության գործն է:
Անառող Ֆրանս

XIX դարի 90-ական թվականներին Աբդուլ Համիդ II-ի նախաձեռնությամբ ծրագրված և Օսմանյան կայսրության տարածքում իրականացված արևմտահայության զանգվածային բնաջնջման քաղաքականությունը հետագայում շարունակեցին անշեղորեն կենսագործել երիտրուրքերը և քենալականները: Տասնամյակներ անց քաղաքագետներն ու միջազգային իրավունքի մասնագետներն այս իրադարձությունը բնութագրեցին իբրև XX դարում արձանագրված առաջին ցեղասպանություն:

Դայոց ցեղասպանության պատմագրության մեջ առաջադրվել են այս եղելության ժամանակագրական շրջանակները սահմանող զանազան, անգամ իրարաներժ տեսակետներ: Ըստ գերիշխող տեսակետի՝ Դայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել 1915 թ., քանզի բնաջնջման գործընթացը կլանել է անհամենատ մեծ թվով՝ շուրջ մեկուկես միլիոնի հասնող զոհեր: Այս տեսակետի կողմնակիցները գտնում են, որ 1915 թ. ցեղասպանությանը նախորդել և հաջորդել են համապատասխանաբար՝ համիդյան և քենալական կոտորածները: Նրանց հիմնական կովանը հանգում է, ընդհանուր առմամբ, 1908 թ. երիտրուրքական հեղափոխության արդյունքում՝ երիտրուրքերի որդեգրած թուրքիզմի գաղափարախոսության հիման վրա հայ ժողովրդի համատարած ոչնչացման փաստնանը¹:

Քննարկելով 1890-ական թվականներին և 1915 թ. տեղի ունեցած կոտորածները համեմատական կտրվածքով՝ հարցի պատմության նշանավոր մասնագետ, ամերիկահայ պատմաբան Վ.

¹ Տե՛ս օրինակ R. H. Kévorkian, *Le génocide des Arméniens*, Paris, 2006, p. 9 ; R. Melson, *Revolution and Genocide. On the Origins of the Armenian Genocide and the Holocaust*, Chicago and London, 1992, p. XVI; T. Akçam, *Un acte honteux. Le génocide arménien et la question de la responsabilité turque*, [Paris], 2008, p. 59.

Տատրյանը հանգում է մեր կողմից անընդունելի եզրակացության՝ Դայոց ցեղասպանության «ճարտարապետներ» համարելով միայն երիտրուրքերին²:

Ժամանակակից ֆրանսիացի պատմաբանները ևս հարցը մեկնաբանում են, ըստ Եւրյան, միևնույն դիրքերից, 1890-ական թվականներին տեղի ունեցած հայ ժողովրդի բնաջնջումը համարելով 1915 թ. Դայոց ցեղասպանության նախերօգանք կամ «մեծ կոտորածներ»³: Նրանց թվում, սակայն, Ա. Տեր-Մինասյանի դիրքորոշումը սկզբունքային փոփոխություն է կրել, որը մեր կարծիքով, ողջունելի է: Վերջին հոդվածներից մեկում նա համիլյան կոտորածները բնութագրում է իրեն «Դայոց ցեղասպանության առաջին գործողություն»⁴: Ի տարրերություն իր մեծաթիվ ժամանակակիցների՝ Կ. Սուրայյանի մոտեցումը ևս ընդգրկուն է, քանզի իր տարբեր աշխատություններում 1894-1896 թթ. հայկական կոտորածները նա համարում է «ցեղասպանային գործընթացի սկիզբ»⁵:

Այս հարցում միանշանակ չէ Դայոց ցեղասպանության պատմության անվանի մասնագետ Ի. Տերմոնի դիրքորոշումը. եթե այս իրադարձության պատմությանը նվիրված իր ընդհանրացնող գործ առաջին հրատարակությունում 1890-ական թվականների զանգվածային կոտորածները նա, մեր կարծիքով, իրավամբ բնորոշում է իրեն «ցեղասպանություն»⁶, ապա հետագայում նրա հայացքները կրել են ակնհայտ փոփոխություն: Նույն գործի երկրորդ հրատարակությունում հեղինակը համեմատելով 1895 թ. կոտորածները 1915 թ. եղեռնի հետ, գերադասում է ձեռնպահ մնալ նախկինում առաջադրած տեսակետից⁷: Դաշվի առնելով, սակայն, համիլյան

² V. Dadrian, Histoire du génocide arménien. Conflits nationaux des Balkans au Caucase, Paris, 1996, p. 292-293.

³ J.-M. Carzou, Un génocide exemplaire. Arménie 1915, Paris, 2006, p. 82-109 ; A. Asso, Le cantique des larmes. Arménie, 1915. Paroles des rescapés du génocide, Paris, 2005, p. 27 ; A. Ter Minassian, 1918-1920, La République d'Arménie, 2006, p. 12 ; V. Duclert, Affronter la barbarie. La perception française des grands massacres d'Arméniens dans l'Empire ottoman en 1894-1896 // « Revue d'histoire de la Shoah », N 189, juillet-décembre 2008. Violences de guerre, violences coloniales, violences extrêmes avant la Shoah, p. 31.

⁴ A. Ter Minassian, Les Arméniens dans l'Empire ottoman : de l'internationalisation de la question arménienne au traité de Lausanne // Arménie une passion française « le mouvement arménophile en France 1878-1923 ». Sous la direction de Claire Mouradian, Paris, 2007, p. 36.

⁵ C. Mouradian, L'Arménie, Paris, 2^{ème} éd., 1996, p. 53 ; A. Dastakian, C. Mouradian, 100 réponses sur ... Le génocide des Arméniens, Clamecy, 2005, p. 13.

⁶ Y. Ternon, Les Arméniens. Histoire d'un génocide, Paris, 1977, p. 112.

⁷ Y. Ternon, Les Arméniens. Histoire d'un génocide. Édition revue et mise à jour par l'auteur, Paris, 1996, p. 127. Այսուհետև կիղենք գործ երկրորդ հրատարակությունը:

կոտորածների կանոնավորությունը և զոհերի ընտրությունն ըստ ազգային պատկանելության՝ Տերնոնը փաստում է դրանց ցեղասպանային բնույթը⁸: Այդուհանդերձ, գիտական տարակարծությունների նկատմամբ հարգանքով լի՛ նա անվարան շեշտում է նաև, որ այս առնչությամբ «բանավեճը շարունակվում է»⁹: Դրանով իսկ Տերնոնն ակնարկում է, որ չի հավակնում, ի տարբերություն իր Փրանսիացի որոշ գործներների, վերջնական խոսքի: Այս պայմաններում, օրինաչափ է, որ որոնումների մեջ գտնվող տեսաբան պատմաբանը վերջին տարիներին, ըստ եռթյան, հրաժարվել է «ցեղասպանային կոտորածներ» եզրույթից: Իր տարակուսանքը հայտնելով այն օգտագործելու նպատակահարմարության շուրջ՝ նա այն անվանել է «խուսափողական» (dérobade)¹⁰, իսկ 1890-ական թվականների կոտորածների մասին հայտնել փոքր-ինչ այլ կարծիք, ըստ որի՝ դրանք «զարկ են տալիս բազում տասնամյակներ հարատևող մի գործնքացի, որը դյուրին կդարձնի ցեղասպանության իրականացումը»¹¹:

Ժամանակակից հայունական պատմաբաններից Վ. Թունյանի կարծիքը 1894-1897 թթ. տեղի է ունեցել «նախացեղասպանություն»¹²: Մեր կարծիքով, սակայն, «նախացեղասպանության» բնորոշման հարցում ավելի համոզիչ են Ո. Սաֆրաստյանի կովանները, որն իբրև այդպիսին համարում է բուլղարացիների ոչնչացմանը միտված՝ դեռևս 1870-ական թվականներին օսմանյան իշխանությունների մշակած ծրագրերը¹³:

1890-ական թվականներին արևմտահայության զանգվածային բնացնումն իբրև սոսկ կոտորածներ բնորոշող տեսակետի կողմնակիցներից շատերը շեշտադրում են նաև 1915 թ. Մեծ եղեռնի համեմատությամբ՝ քննարկվող ժամանակահատվածում զոհերի անհամեմատ նվազ թվաքանակը: Ամերիկացի հայտնի պատմաբան Ո.

⁸ Տե՛ս օրինակ Յ. Տերնոն, *L'État criminel. Les génocides au XX^e siècle*, Paris, 1995, p. 182.

⁹ Յ. Տերնոն, *Les Arméniens. Histoire d'un génocide*, p. 127.

¹⁰ Յ. Տերնոն, *Guerres et génocides au XX^e siècle. Architecture de la violence en masse*, Paris, 2007, p. 12.

¹¹ Նույն տեղում, էջ 111:

¹² Բ. Գ. Տүնիք, *Младотурки и армянский вопрос. Часть первая 1908-1912 гг.*, Ереван, 2004, с. 20.

¹³ Ո. Սաֆրաստյան, Նախացեղասպանություն (proto-genocide). տեսության և պատմության խնդիրներ (Օսմանյան կայսրության օրինակով).— Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Ուլութեան Սաֆրաստյանի ընդհանուր խմբագրությամբ, III, Երևան, 2005, էջ 33-42:

Սելսոնը, օրինակ, կոտորածի՝ իբրև երևույթի տիպաբանության շուրջ առաջադրած, չորս կետից բաղկացած իր հայեցակարգի շրջանակում 1890-ական թվականների արևմտահայության կոտորածները դասուն է «ներքին համայնքային խնբերի դեմ պետության կողմից իրականացված կոտորածների» շարքը, քանզի «կոտորածի» հիմնական բաղադրիչ նա, ըստ երթյան, համարուն է զոհերի սահմանափակ թվաքանակը¹⁴:

Մենք, սակայն, դժվարությամբ ենք ընթանում, թե որքանո՞վ է արդարացի միայն XIX դարի 90-ական թվականներին պետական քաղաքականության մակարդակով, բացահայտ կանխամտածվածության և եթնիկական ծագման հիման վրա տեղի ունեցած շուրջ 300000 մարդու ոչնչացման փաստը բնորոշել իբրև կոտորած: Այս առնչությամբ նկատենք, որ ցեղասպանությունը դատապարտող՝ ՄԱԿ-ի Գլխավոր նստաշրջանի՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի երկրորդ հոդվածն ամբողջությամբ անտեսում է զոհերի քանակի հանգամանքը, իսկ փոխարենը շեշտը դնում ցեղասպանության՝ իբրև երևույթի սահմանման վրա¹⁵:

Դիրավի, կոտորածն ու ցեղասպանությունը՝ իբրև երևույթներ, եականորեն տարբերվում են միմյանցից, որոնց զանազանման հիմնական չափորոշիչների թվով ցեղասպանության՝ իբրև երևույթի, զգալի թվով նասնագետներ հստակորեն առանձնացնում են այս կամ այն իրադարձության իրականացումը պետական քաղաքականության մակարդակով¹⁶: Տերնոնն այս առնչությամբ իրավամբ

¹⁴ R. Melson, A Theoretical Inquiry into the Armenian Massacres of 1894-1896 // "Comparative Studies of Society and History", t. XXIV, 3 July, 1982, p. 484.

¹⁵ Տե՛ս Գеноցիդ արման: ответственность Турции и обязательства мирового общества. Документы и комментарии, т. 1. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов, М., 2002, с. 29.

¹⁶ H. Fein, Accounting for Genocide. National Responses and Jewish Victimization during the Holocaust, New York, London, 1979, p. 7; B. Harff, The Etiology of Genocide.—Genocide and the Modern Age. Etiology and Case Studies of Mass Death. Edited by I. Wallmann and M. N. Dobkowski, New York, Greenwood Press, 1987, p. 48; Առևարձի՝ Recognizing Genocides and Politicides // Genocide Watch. Edited by Helen Fein, New Haven, London, 1992, p. 27-29; F. Chalk & K. Jonassohn, The History and Sociology of Genocide. Analyses and Case Studies, New Haven & London, 1990, p. 23, 26; R. Melson, Revolution and Genocide, p. 26; Y. Ternon, L'État criminel. Les génocides au XX^e siècle, p. 65-78 ; I. L. Horowitz, Government Responsibilities to Jews and Armenians: Nazi Holocaust and Turkish Genocide Reconsidered // "Armenian Review", 1986, v. 39, N 1, p. 3; Առևարձի՝ Taking Lives. Genocide and State Power. Fifth Edition, Revised, New Brunswick & London, 2002, p. 14, 23.

Նշում է. «Ցեղասպանության պատասխանատուն միշտ պետությունն է... Ցեղասպանությունը պետական հանցանք է, ինքնուրույն պետության կամքի կենսագործումը, որը և այն զանազանում է՝ իրենց պետության կողմից չլիազորված իրոսակախմբերի կամ զորքերի իրականացրած կոտորածից»¹⁷:

Բացի դրանից, ցեղասպանության՝ իբրև երևույթի ժամանակակից մասնագետներից շատերը ցեղասպանությանը բնորոշ առանցքային հատկանիշներից են համարում դիտավորության հանգամանքը¹⁸: Դայրենական պատմաբաններից այս հարցի քննությանն անդրադեմ է Ռ. Սաֆրաստյանը, որի՝ «ցեղասպանությունը» «կոստորածից» տարբերակելու հարցում առաջադրած մեկնաբանությունները, մեր կողմից միանգամայն ընդունելի են: Վկայակոչելով «ցեղասպանության» հիմնական բնորոշչիներից մեկը՝ ռասայական, ազգային կամ էթնիկական խումբը ոչնչացնելու հարցում «մտադրվածության» կամ «դիտավորության» հանգամանքը, նա հասարակագիտական և իրավագիտական տեսանկյուններից այդ երևույթ-

Նշենք նաև, որ պետական քաղաքականության առկայության հանգամանքը, որը ցեղասպանության պարագայում նենք համարում ենք conditio sine qua non, ցեղասպանության՝ իբրև երևույթի, ժամանակակից մասնագետների շրջանում տեղի է տվել, այդուհանդերձ, տարակարծությունների: Տե՛ս օրինակ մեր օրերի խոշորագույն մասնագետներից՝ այս տեսակետի կողմնակից, ամերիկացի հայտին քաղաքագետ Ռուդոլֆ Զ. Ռումելի և այն վիճարկող՝ Երևանի հոլորուսություն և ցեղասպանության ինստիտուտի տնօրեն Խորայն Չառնիի բանավեճն այս առիթով. R. J. Rummel, Le nouveau concept de génocide.— Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides. Sous la direction de Israel Charny, Toulouse, 2001, p. 48-55 ; I. W. Charny, Démocide : vers un nouveau concept global. Présentation des travaux de R.J. Rummel.— Նույն տեղում, էջ 45-48: Ի. Չառնիին, ի դեպ, համակարգիր են տարբեր մասնագետներ, այդ թվում գիտության՝ համեմատաբար այս նոր մասնաճյուղի նախակարապետներից Լեռ Կուպերը (1908-1994). տե՛ս L. Kuper, Genocide. Its Political Use in the Twentieth Century, New Haven and London, 1982, p. 86: Տե՛ս նաև M. Shaw, War and Genocide. Organized Killing in Modern Society, Cambridge, 2005, p. 44-45, 47; Առլին՝ What is Genocide? Cambridge, 2007, p. 154-155.

¹⁷ Y. Ternon, նշվ. աշխ., էջ 65:

¹⁸ Տե՛ս օրինակ F. Chaik & K. Jonassohn, նշվ. աշխ., էջ 26; Y. Ternon, նշվ. աշխ., էջ 91-92; V. Dadrian, The Determinants of the Armenian Genocide, [Yale], 1998, p. 7; J. Balint, I. W. Charny, Définitions du génocide.— Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides, p. 43-44: Այս հարցի մասին մանրամասն տե՛ս Ռ. Սաֆրաստյան, Ցեղասպանության ծագումնաբանության հարցի շուրջ. դիտավորության հանգամանքի կիրառումը.— Դայր Եթեռն-90: Հողվածների ժողովածու, պատասխանատու խմբագիր՝ Արամ Մինոնյան, Երևան, 2005, էջ 367-371:

ների միջև, իրավանք, արձանագրում է ոչ միայն քանակական, այլև որակական զանազանություններ¹⁹:

Քննարկելով հարցն ըստ այս չափանիշների՝ գտնում ենք, որ հարկ է Դայոց ցեղասպանության ժամանակագրական շրջանակները սահմանելու խնդրում շատ ավելի իրատեսական համարել ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի կարծիքը. «Եթե խոսքը վերաբերում է Օսմանյան կայսրությունում Դայոց ցեղասպանությանը, – գրում է նա, – հարկ է նկատի ունենալ ոչ միայն 1914-1918 թթ. համընդհանուր կոտորածը, այլև XIX դարի Վերջի և XX դարի սկզբի զանգվածային ջարդերն ու կոտորածները»²⁰: Նա իրավանք նշել է. «Կարևոր գոհերի քանակը չէ. մի դեպքում 300 հազար, մյուս դեպքում՝ մի լինուկես: Մենք գիտենք, որ լինում են ինչպես մեծ, այնպես էլ փոքր ծավալի ցեղասպանություններ»²¹: Ըստ այդմ՝ 1890-ական թվականներին տեղի ունեցած զանգվածային կոտորածները նա միանգամայն իրավամբ բնութագրել է իրեն ցեղասպանություն²²:

Այս առնչությամբ հարկ է, ի դեպ, նշել, որ Տերնոնը, որն ինչպես և ժամանակակից Ֆրանսիացի պատմաբանների գերակշռող մասը, մատնանշում է Դայոց ցեղասպանության իրականացման միայն երկու փուլ (1915 թ. մայիս-հուլիս և 1915 թ. օգոստոս-1916 թ. դեկտեմբեր), ցեղասպանության՝ իրեն երևույթի սահմանման կապացությամբ, միաժամանակ առաջադրում է իրատեսական և Դայոց ցեղասպանության՝ իր իսկ ժամանակագրական դասակարգմանը, մեր կարծիքով, անհարիր մեկնաբանություն. «Առանց նախանշված խմբի բնաջնջման ծրագրման հնարավոր չի խոսել ցեղա-

¹⁹ Ո. Սաֆրաստյան, Նախացեղասպանություն (proto-genocide), էջ 29, 33; Առյօն՝ Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնարանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, էջ 24:

²⁰ Մ. Գ. Ներսիսյան, Предисловие.— Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Составители М. Г. Нерсисян, Р. Г. Саакян. Под редакцией М. Г. Нерсисяна, второе, дополненное издание, Ереван, 1982, с. III.

²¹Տե՛ս Ս. Ներսիսյան, Արևմտահայերի 1915-1916 թթ. ցեղասպանության պատմության մի քանի հարցերի շուրջը.— Ս. Ներսիսյան, Դայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, 2005, էջ 14:

²² Նույն տեղում; տե՛ս նաև Առյօն՝ Օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին.— Ս. Ներսիսյան, Դայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 64, 67, Առյօն՝ Դայլսկան հարցի ծագումը և մեծ տերությունները.— Պատմարանասիրական հանդես, 1999, թիվ 1, էջ 104:

²³ Յ. Ternon, Աշկ. աշխ., էջ 184-188; Առյօն՝ Guerres et génocides au XX^e siècle, p. 151-170.

սպանության մասին: Սակայն, զանգվածային սպանությունը՝ իբրև ցեղասպանություն բնորոշելու համար անհրաժեշտ չէ, որ այդ ծրագրումը մշակված լինի ամբողջությամբ²⁴:

Մենք ցանկանում ենք ուշադրություն հրավիրել ևս մեկ էական հանգամանքի վրա. Դայոց ցեղասպանության գործընթացը, Տերնոնի նշած հայեցակարգային կարևոր հանգամանքից բացի, թեպետ հրականացվել է տարբեր գաղափարախոսությունների հիմնան վրա (պանիսլամիզմի և պանթուրքիզմի), երբեւ չի մարել և անհամաշափ սաստկությանը ու զանազան եղանակներով կիրառվել է առանց ընդհատումների, հանգամանք, որը հավաստել է նաև իրադարձությունների՝ եվրոպացի ժամանակակիցների գերակշռող մասը:

Մեր համոզմանը Դայոց ցեղասպանությունը հարկ է դիտել իբրև շուրջ երեք տասնամյակ հարատևած (1894-1922)՝ փուլային, անհամաշափ զարգացում ունեցած միասնական գործընթաց, որը պետական քաղաքականության մակարդակով իրականացրել են թե՛ համիդյան և թե՛ երիտրության վարչակարգերը, ինչպես նաև քենալականները: Ըստ այդմ՝ առաջարկում ենք Դայոց ցեղասպանության գործընթացը դասակարգել երեք հիմնական փուլերի: առաջին՝ համիդյան (1894-1908), որն ընդգրկում է արևմտահայության բնաջնջման սանձազերծումը և լայնածավալ իրականացումը, երկրորդ՝ երիտրության (1909-1918), երրորդ՝ գործընթացը հասնում է զագարնակետին (1915-1916 թթ. արևմտահայության համատարած բնաջնջումը հայտնի է Մեծ եղեռն անվամբ) և երրորդ՝ քենալական (1919-1922). այս փուլում արդեն հայ ժողովրդի դեմ ուղղված ցեղասպան քաղաքականությունն իրականացվել է նաև Արևելյան Դայաստանում²⁵:

Նշենք, որ Մ. Ներսիսյանից բացի օսմանյան տարբեր վարչակարգերի և քաղաքական ուժերի կողմից իրականացված հայ ժողովրդի ոչնչացումն իբրև միասնական գործընթաց դիտել են նաև շատ այլ պատմաբաններ և ցեղասպանության՝ իբրև երևույթի մաս-

²⁴ Y. Terrien, Guerres et génocides au XX^e siècle, p. 285.

²⁵ Ըստ բուրքական սկզբանադրյուրների՝ Ռ. Սաֆրաստյանը և Դ. Ղազարյանը վերջերս բացահայտել են, թե՛ հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպան քաղաքականությունը շարունակելու և թե՛ միաժամանակ Դայաստանը որպես պետություն վերացնելու քենալականների մտադրությունը. Ռ. Սաֆրաստյան, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնարանությունը (1876-1920 թթ.), էջ 191-194; Դ. Ղազարյան, Մոսկվայի և Կարսի 1921 թվականի պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Երևան, 2010, էջ 179-181:

նագետներ²⁶, այդ թվում Իրվինգ Լուի Շորոուիցը (ԱՄՆ) և Եհուդա Բաուերը (Իսրայել)²⁷: Դարկ ենք համարում փաստել նաև ԵՊՀ Դայոց պատմության ամբիոնի մի շարք աշխատակիցների ներդրումն այս կնճռոտ հարցի լուսաբաննան խնդրում, որոնք 1990-ական թվականներից ի վեր, Դայոց ցեղասպանության պարբերացման հարցում ստարել են հայեցակարգային այս մոտեցումը և համիլյան կոտորածները բնորոշել իրու Դայոց ցեղասպանության բաղկացուցիչ մաս²⁸:

Ինչ Վերաբերում է խորհրդային այլազգի պատմաբաններին, ապա 1894-1896 թթ. կոտորածների գնահատականն առավել անկողմնակալ դիրքերից տվել է Ա. Սիլինը: Չհետապնդելով Դայոց ցեղասպանության համակողմանի քննության նպատակ, նա, այդուհանդերձ, XIX դարի 90-ական թվականներին տեղի ունեցած հայ ժողովրդի ոչնչացումը բնութագրել է իրու «նոր պատմության մեջ աննախադեպ ցեղասպանության քաղաքականություն»²⁹:

²⁶ Տե՛ս օրինակ M. Prince, Un génocide impuni. L'arménocide, Beyrouth, 1975, p. 97-114, 147-242, 345-376; Ю. Г. Барсегов, Геноцид армян — преступление по международному праву, М., 2000, с. 17-22; Առաջին՝ Предисловие.— Геноцид армян: ответственность Турции и обязателъства мирового сообщества, с. 11; Ա. Պողոսյան, Կ. Պողոսյան, Դայկական հարցի և Դայոց ցեղասպանության պատմություն, հ. առաջին: Դայերի բնաջնջման օսմանյան քաղաքականությունը, Երևան, 2000, էջ 30; Դ. Գյանե, Կրկ ս Արարատ. Արման Վեցներ և Գеноцид армян, М., 2005, с. 47, 56-57; Առաջին՝ Շեյխ Փայեզ ձև-Ղուսեյն օ գենոցի արման: «Ислам не причастен к их действиям», М., 2007, с. 11; Ո. Սաֆրաստյան, Նախացեղասպանություն (proto-genocide), էջ 42; Ք. Ղազարյան, Դայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում 1890-1922 թթ., հ. Երկրորդ, Երևան, 2007, էջ 134-135:

²⁷ I. L. Horowitz, Government Responsibilities, p. 2; Առաջին՝ Taking Lives, p. 157-158. Ինչ վերաբերում է Ե. Բաուերին, ապա այս հարցի շուրջ նա իր կարծիքը հայտնեց 2005 թ. ապրիլի 20-21-ին Երևանում գումարված «Ծանրազույն հանցանք, ծայրագույն մարտահրավեր» ցեղասպանությունն ու մարդու իրավունքները» միջազգային համաժողովին ներկայացնած՝ «Անցյալ ցեղասպանությունների դասերը որպես ապագա ցեղասպանությունները կանխելու ուղեցույց» գեկուցումում:

²⁸ Տե՛ս օրինակ Ե. Ղանիիլյան, Դայ ժողովրդի Սեծ եղենը Երիտրուքական վարչակարգի կողմից (1914-1918 թթ.).— Դայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր, մաս 1, Երևան, 1995, էջ 86-105 (սույն հոլվածը Վերահրատակվել է Պ. Շովհաննիսյանի Խմբագրությամբ լուս տեսած՝ «Դայոց ցեղասպանությունը. ուսումնասիրություններ» հոդվածների ժողովածուում, Երևան, 2001); Առաջին՝ Դայոց Սեծ եղենը (1894-1922 թվականներ).— Դայոց պատմություն: Դնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2000, էջ 235-260; Առաջին՝ The Armenian Genocide of 1894-1922 and the Accountability of the Turkish State, Yerevan, 2005.

²⁹ А. С. Симонян, Экспансия Германии на Ближнем Востоке в конце XIX века, М., 1971, с. 207.

Անհրաժեշտ ենք համարում ի սկզբանե նշել, որ Դայոց ցեղասպանության տարրեր փուլերի պատմությունը պատմաբանները լուսաբանել են անհամաշափ: Ֆրանսիական պատմագրությունը ևս բացառություն չի կազմել: Այդուհանդերձ, այսօր հրապարակի վրա արդեն առկա է հարուստ և բազմաբնույթ պատմագիտական գրականություն: Չնայած այդ հանգամանքին, Դայոց ցեղասպանության պատմությունն ուսումնասիրողները մինչև Վերջերս չեն լուսաբանել պատմագիտական մտքի նվաճումներն ու ելեզները տարրեր երկրներում: Դայոց ցեղասպանության պատմագրության ուսումնասիրության ասպարեզում հարկ է ընդգծել ժամանակակից հայրենական պատմաբանների ներդրումը, որոնք ծեռնարկել են առաջին քայլերն այս ուղղությամբ³⁰: Ցավոք, երկար ժամանակ ստվերում էր մնացել նաև վաղեմի ավանդույթներով առանձնացող՝ Դայոց ցեղասպանության ֆրանսիական պատմագրության արժեքավոր ավանդը³¹, որի՝ հավուր պատշաճի գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը կասկածից վեր է, առավել ևս եթե հաշվի առնենք ֆրանսիացի պատմաբանների և հեղինակների իրականացրած աշխատանքի ոչ միայն պատմագիտական, այլև քաղաքական նշանակությունը:

Ըստ այդմ՝ սույն մենագրությունում Դայոց ցեղասպանության պատմագրության մեջ առաջին անգամ քննական վերլուծության ենք ենթարկել Դայոց ցեղասպանության առաջին փուլի պատմության հիմնահարցերի մեկնաբանումը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի կողմից XIX դարի 90-ական թվականներից, այն է՝ իրադարձության սանձազերծումից, մինչև երիտրուրքերի իշխանության տապալումը 1918 թ., քանի որ Թուրքիայում դրան հաջորդած իշխանափոխությունից հետո Ֆրանսիայում Դայոց ցեղասպանության պատմության նկատմամբ հետաքրքրությունը շեշտակիորեն նվազել է: Դարցի եռթյունն այն է, որ

³⁰ Մ. Կարապետյան, Դայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցեր որ հայ պատմագրության մեջ, Երևան, 1999; Առյօն՝ Դայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հիմնահարցերը հետխորհրդային հայ պատմագրության մեջ, Երևան, 2005; Մ. Կարապետյան, Է. Գևորգյան, է. Մելքոնյան, Ա. Արգարյան, Դայոց Մեծ Եղեռնի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 2010; Ն. Պովիաննիսյան, Դայոց ցեղասպանությունը արարական պատմագիտության քննական լույսի ներք, Երևան, 2004:

³¹ Այս հարցը սահմանափակ կտրվածքով քննարկել է միայն Ռ. Գ. Սահակյանը. Ռ. Սահակյան, Դայլական ցեղասպանության պատմությունը ֆրանսիական հրատարակություններում. – Ռ. Սահակյան, Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 223-239:

1923 թ. հանրապետության հռչակումից ի վեր, Թուրքիայում պետական քաղաքականության մակարդակով Հայոց ցեղասպանության փաստը շրջանցվել է լուրությամբ: Այդ իսկ պատճառով արևմտյան կապիտալիստական մեծ տերությունները, այդ թվում Ֆրանսիան, Ելենով իրենց ռազմավարական շահերից, շահագրգուժածություն են հանդիս բերել Թուրքիային՝ Խորհրդային Միությանը հակադրելու հարցում և հետևաբար, թուրքական կառավարող շրջանակներին հաճոյանալու նպատակով նոռացության են նատնել Հայոց ցեղասպանությունը³²: Այս թեմայի նկատմամբ հետաքրքրությունը Ֆրանսիայում վերստին աճել է միայն 1960-ական թվականների կեսերից՝ կապված Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցի հետ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է մի շարք էական հանգամանքներով: Նախ Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ ավելի քան հարյուր տարի խոր արմատներ ծգած՝ ցեղասպանության արժանահավատությունը վիճարկող, անգամ դրա իսկ փաստը բացահայտողեն և լկտիաբար ժխտող ուղղության դիրքորոշման դատապարտմամբ: Ժամանակակից թուրք պատմաբանները և նրանց սատարող մի շարք այլազգի ուսումնասիրողներ միտումնավոր կեղծում են պատմական իրականությունը, մասնավորապես ժխտում Հայոց ցեղասպանության իրականացումը պետական քաղաքականության մակարդակով և կանխամտածվածության հիման վրա, մերժում իրադարձության՝ իբրև ցեղասպանության փաստը, փոխարենն առաջարում հակապատմական կեղծ փաստարկներ՝ խարիսափելով այդ ճանապարհին անհարիր մեկնաբանությունների լաբիրինթոսում:

Եթե Թուրքիայի հանրապետության հռչակումից ի վեր՝ թուրքական դեկավար շրջանակները որդեգրել են Հայոց ցեղասպանությունը նոռացության տալու քաղաքականությունը, ապա իրավիճակը զգալիորեն փոխվեց 1970-ական թվականներից՝ կապված 1960-ական թվականների կեսերից միջազգային ասպարեզում դրա ճանաչման գործընթացի սկզբնավորման հետ: Դրանից ի վեր Թուրքիայի դեկավարները հարկադրաբար լքեցին իրենց նախորդների որդեգրած մարտավարությունը՝ անցում կատարելով նոռացության քաղաքականությունից ժխտման քաղաքականության: Այս ժամանակաշրջանից առ այսօր, Թուրքիայում և մի շարք այլ երկրներում, մասնավորապես ԱՄՆ-ում, լույս է ընծայվել բազմաբնույթ պատմա-

³² N. Margossian, L'avant et l'après du génocide des Arméniens.— «Գիտության գլուխություն», 2005, հ. 5, էջ 44-45:

գիտական գրականություն (փաստաթղթերի ժողովածուներ, մենագրություններ և այլն), որը հետապնդելով միջազգային հանրության ապակողմնորոշման նպատակ՝ հրատարակվել է գերազանցապես անգլերեն լեզվով:

Պատմական իրականության հետ հեռավոր առնչություն չունեցող՝ Դայոց ցեղասպանության պատմությունը խեղաթյուրող, յուրօրինակ այս «խաչակրաց արշավանքի» հիմքում, ըստ Էության, խարսխված են լոկ քաղաքական պատճառներ, որոնցից առավել կարևոր՝ դեռևս XVI դարում ռազմակալված հայ ժողովորդի պատմական հայրենիքի նկատմամբ Թուրքիայի իրավունքների ամրագրումն է³³, մարտավարություն, որին հետամուտ են եղել թե՛ Օսմանյան կայսրության և թե՛ Թուրքիայի հանրապետության տարբեր վարչակարգերի դեկավարները:

Դայոց ցեղասպանության պատմականությունը ժխտող ժամանակակից թուրք և այլազգի պատմաբանների առաջադրած մեկնաբանությունները, ընդհանուր առմանք, համահունչ են XIX դարի վերջին ծևավորված՝ Դայոց ցեղասպանության պատմագրության ժխտողական ուղղության, նախակարապետների (գլխավորապես Ֆրանսիացի) հիմնական թեզերին: Այս է՛ XIX դարի 90-ական թվականներին, ազատ և անկախ Դայաստանի ստեղծմանը հետամուտ հայկական ազգային կուսակցությունները, մինչ այդ թուրքերի հետ խաղաղ գոյակցության պայմաններում ապրող օսմանահապատակ հայերին դրդել են օսմանյան պետության դեմ ուղղված ահարեկչական գործողությունների, որոնք աստիճանաբար վերածվել են Օսմանյան կայսրության տարածքն ընդգրկած լայնածավալ ապստամբությունների: Այս պայմաններում, պետությունը հարկադրաբար ճնշել է տարբեր վայրերում ծագած հայերի ապստամբական գործողությունները, ինչն անխուսակելիորեն հանգեցրել է հակամարտությունների³⁴:

³³ Սանրամասն տե՛ս Y. Ternon, *Éclats de voix. Recueil de textes 1974-2005*, Paris, 2006, p. 75, 116, 134 :

³⁴ Տե՛ս օրինակ İ. C. Özkaya, *Le peuple arménien et les tentatives de réduire le peuple turc en servitude*, Istanbul, 1971, p. 113-137 ; S. J. Shaw, E. K. Shaw, *History of the Ottoman Empire and Modern Turkey. V. II: Reform, Revolution and Republic: The Rise of Modern Turkey, 1808-1971*, Cambridge, 1977, p. 203-204; *Facts from the Turkish Armenians*, Istanbul, 1980, p. 5; P. A. Moser, *Arméniens, où est la réalité ?* Saint-Aquilin-de-Pacy, 1980, p. 33-55 ; *The Armenian Issue in Nine Questions and Answers*, Ankara, 1985, p. 14-16; K. Gürün, *The Armenian File. The Myth of Innocence Exposed*, London, Nicosia, Istanbul, 1985, p. 127-160; E. Uras, *The Armenians in History and the Armenian Question*, Istanbul, 1988, p. 727-755; A.

Մեր կողմից քննարկվող ժամանակահատվածում՝ Դայոց ցեղասպանության գործընթացի ժամանակակից ֆրանսիացի հեղինակները, պատմագիտական նշանակության առունով ոչ համարժեք իրենց աշխատություններում, պատմության կեղծարարների թեզերին անուղղակիորեն տալիս են հումկու հակահարված։ Ըստ այդմ՝ նրանց աշխատությունները ծեռք են բերում մեծ այժմեականություն։

Բացի դրանից, XIX դարի վերջի և XX դարի սկզբի ֆրանսիացի հեղինակների՝ Դայոց ցեղասպանության պատմությանը տված գնահատականները հիմնավորում են ցեղասպանագիտության ասպարեզում առաջադրված ցեղասպանության՝ իրեւ երևույթի սահմանանան առնչվող մի շարք հայեցակարգային դրույթներ, որոնք բնորոշ են, ինչն ակնհայտորեն բացահայտվում է նրանց ուսումնասիրությունների ետնախորքի վրա, նաև 1890-ական թթ. հայկական կոտորածներին։ Դրանց թվում են, մասնավորապես ցեղասպանության իրականացումը պետական քաղաքականության մակարդակով, ցեղասպանության հիմնական բնորոշչներից մեկի՝ կանխամտածվածության առկայությունը, ինչպես նաև տիտուր մի փաստ՝ ցեղասպանության ենթարկվող ժողովրդի բնաջնջման պատասխանատվությունը՝ ցեղասպանությունն իրականացնողների կողմից գոհի վրա բարդելու հակումը և այլն։

Դայոց ցեղասպանության պատմությունն անկողմնակալ դիրքերից լուսաբանող հարուստ գրականություններ, որը կարելի է դասակարգել երկու հիմնական խմբերի՝ սկզբնաղբյուրների հրատարակությունների (արխիվային փաստաթղթերի ժողովածուներ՝³⁵, օտա-

Süli, Armenians and the 1915 Event of Displacement, Ankara, 1999, p. 60-61; S. R. Sonyel, The Great War and the Tragedy of Anatolia (Turks and Armenians in the Maelstrom of Major Powers), 2nd edition, Ankara, 2001, p. 23-32; J. McCarthy, E. Arslan, C. Taskiran, O. Turan, The Armenian Rebellion at Van, The University of Utah Press, 2006, p. 51-77, 130: Փոքր-ինչ այլ է ամերիկացի պատմաբան Գ. Լեոնի դիրքորոշումը, որը թեպետ չի արդարացնում հայկական կոստրածները, այդուհանդերձ, դրանց պատասխանատվությունը բարդում է գլխավորապես հայ հեղափոխականների վրա, որոնց քառորդությունը երկրում ստեղծել էր վախի այնպիսի մրնություն, որը բուրքերի մոտ տեղի էր տվել «կատաղի հակազդեցության»: Տե՛ս G. Lewy, The Armenian Massacres in Ottoman Turkey. A Disputed Genocide, The University of Utah Press, 2005, p. 19, 28:

³⁵ Թվարկներ առավել կարևորները. Documents diplomatiques. Affaires arménienes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, Paris, 1897 ; Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, Paris, 1897 ; The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16. Documents presented to Viscount Grey of Fallodon, London, 1916; Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von D' Johannes Lepsius, Potsdam, 1919; Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Составители М. Г.

րազգի և հայ ականատեսների հուշեր, որոնք անառարկելիորեն հավաստում են հայ ժողովրդի դեմ պետական մակարդակով օսմանյան տարրեր Վարչակարգերի իրականացրած ոճրագործության իրողությունը) և գիտական ուսումնասիրությունների, մեր օրերում ունի ավելի քան հարյուր տասը տարրվա պատմություն: Այդուհանդերձ, Դայոց ցեղասպանության պատմությունը վերջին տարիներին կրկին իր վրա է բևեռել թե՝ արտասահմանյան³⁶ և թե՝ հայրենական³⁷ պատմաբանների ուշադրությունը: Ըստ այդմ՝ նրանց ֆրանսիացի նախորդների՝ միևնույն ասպարեզում ներդրած լումայի ուսումնասիրությունը, որն ի դեպ, նրանք, այդ թվում նաև ֆրանսիացի պատմաբանները, երբեւ չեն արժենորել, ծեռք է բերում մեծ նշանակություն:

XIX դարի 90-ական թվականների կեսերին Արդուկ Շամիդ II-ի սանձագերծած Դայոց ցեղասպանության գործընթացն իր ծավալով և սոսկալի դաժանությամբ աննախադեպ էր նույնիսկ Օսմանյան կայսրության պատմության քառուղիներում, որի «գրեթե բոլոր էջերը», ըստ ֆրանսիացի նշանավոր քաղաքական գործիչ, սոցիալիստ Ֆրանսիս դը Պրեսանսեի (1853-1914) ոլոպուկ բնորոշման՝

Нерсисян, Р. Г. Саакян. Под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966; второе, дополненное издание, Ереван, 1982; A. Beylerian, Les grandes puissances, l'Empire ottoman et les Arméniens dans les archives françaises (1914-1918), Paris, 1983 ; Österreich-Armenien 1872-1936. Faksimilesammlung Diplomatischer Aktenstücke. Herausgegeben und Eingeleitet von Mag. D' Artem Ohandjanian. Band I-XII, Wien, 1995; Армянский вопрос и Геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива Министерства иностранных дел кайзеровской Германии. Сборник. Составитель, автор предисловия, введения и примечаний доктор исторических наук, профессор Вардес Микаелян, Ереван, 1995; Documenti diplomatici italiani sull'Armenia. Seconda serie: 1891-1916. A cura di M. Russo, v. 1-2, Firenze, 1999; United States Official Records on the Armenian Genocide 1915-1917, compiled with an introduction by Ara Sarafian, Princeton and London, 2004; W. Gust (Hg.), Der Völkermord an den Armenien 1915/16. Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amtes, Hamburg, 2005:

³⁶ Տե՛ս օրինակ V. Dadrian, Histoire du génocide arménien ; R. Melson, նշվ. աշխ.; R.H. Kévorkian, avec la collaboration de Paul B. Paboudjian, Les massacres de Cilicie d'avril 1909 // La Cilicie (1909-1921). Des massacres d'Adana au mandat français. Volume préparé par Raymond H. Kévorkian, Paris, 1999, p. 7-142 ; Առաջին Հայոց ազգային առաջնահարկը, Երևան, 2007; Ո. Գասպարյան, Դայուկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. – 1921 թ.), Երևան, 2005:

³⁷ Տե՛ս օրինակ Ս. Պողոսյան, Կ. Պողոսյան, նշվ. աշխ.; Յ. Ղազարյան, Դայողովով ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում 1890-1922 թթ., հ. առաջին-երկրորդ, Երևան, 2007; Ո. Գասպարյան, Դայուկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. – 1921 թ.), Երևան, 2005:

«աղտոտված են արյամբ»³⁸: Դամիջյան կոտորածների ընթացքն ու ծավալը ֆրանսիացի ականավոր պատմաբան, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1897) Ալբեր Վանդալին (1853-1910) հինգ են տվել հավաստելու, որ 1890-ական թթ. տեղի ունեցած հայ ժողովրդի աննախաղեպ բնաջնջման համեմատությամբ՝ «1822 թ. Թիոսի, 1860 թ. Լիբանանի, 1876 թ. Բուլղարիայի կոտորածները ոչ այլ ինչ էին, եթե ոչ մանկական խաղեր»³⁹:

Այս պայմաններում, ինքնին հասկանալի է, որ օսմանյան կառավարության հայահալած քաղաքականության ամենի ալիքներն ալեկոծել են Եվրոպացի մտավորականներից շատերի հույզերը, հարուցել նրանց անսանձ զայրույթը: Ի շարս այն երկրների (Անգլիա, Գերմանիա, Շվեյցարիա, Ռուսաստան և այլն), ուր համիջյան կոտորածներն անարձագանք չեն մնացել⁴⁰, առանձնանում է ժողովրդավարական իինավուրց ավանդույթներ ունեցող Ֆրանսիան, որտեղ հայկական կոտորածներին առնչվող սարսափների՝ Եվրոպա հասած արձագանքը հնչել է ավելի ուժգին, քան այլուր՝ «շնորհիվ մի շարք մեծահոգի ֆրանսիացիների, որոնք դարձել են նահատակ-ված ժողովրդի դատապաշտպանները»⁴¹:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում տեղի ունեցած հայկական կոտորածներին առնչվող հավաստի տեղեկությունները, չնայած օսմանյան իշխանությունների կողմից կաշառված ֆրանսիա-

³⁸ Pour l'Arménie et la Macédoine. Préface de V. Bérard. Introduction de P. Quillard. Rapport de Francis de Pressensé, Paris, 1904, p. 21-22.

³⁹ Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M[onsieur] Albert Vandal de l'Académie française dans la salle de la Société de Géographie. Le 2 février 1897, Paris, 1897, p. 35.

⁴⁰ Տե՛ս օրինակ Ս. Վ. Օվհանյան, Армяно-болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во второй половине XIX в., Ереван, 1968, с. 266-281; Յ. Տերով, Les Arméniens. Histoire d'un génocide, p. 142-145; Ա. Ջ. Կիրակոսյան, Великобритания и Армянский вопрос (90-е годы XIX века), Ереван, 1990, с. 160-181; Ա. Ա. Չովակիմյան, Հայկական հարցը սերբական մամուլում (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ). - «Պատմաբանասիրական հանդես», 1990, թիվ 4, էջ 57-60; Ա. Գ. Ներսիսյան, Արևմտահայերի կոտորածները և ուսումնավորականությունը 1894-1896 թվականներին. - «Պատմաբանասիրական հանդես», 1997, թիվ 1, էջ 15-24; Ա. Ն. Չայրունի, Ցոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2001, էջ 47-72; Ա. Բախչինյան, Հայաստան - Սկանդինավիա: Պատմամշակութային առնչություններ, Երևան, 2003, էջ 100-103:

⁴¹ F. Macler, La nation arménienne. Son passé, ses malheurs, Paris, 1924, p. 45. Տե՛ս նաև Պ. Տամապետեան, «Եւրոպական պրոպագանդ» (1899-1906). - «Ազդակ», 1983, թիվ 48, էջ 972:

կան մամուլի լրակյացությանը⁴², շնորհիվ թե՛ Օսմանյան կայսրությունում հավատարմագրված ֆրանսիացի դիվանագետների անձնութաց գործունեության և թե՛ հայ գործիչների (մասնավորապես ՀՅԴ անդամների) Ֆրանսիայում ծավալած քարոզչական աշխատանքի, ոչ միայն հատել են դրա սահմանները, այլև վերհանել ֆրանսիական մտավորականության բողոքի բուռն ալիք: Անկասկած, Արորուլ Համիդի գահակալության օրոց տեղի ունեցած հայկական կոտորածներին առնչվող լուրերը որևէ երկրում այնպիսի մանրամասնությամբ չեն քննարկվել և ըստ արժանվույն մեկնաբանվել, ինչպես Ֆրանսիայում, ուր մեծ թվով նշանավոր պատմաբաններից զատ, ջարդարարներին խստագույնս նշանակել և անարգանքի սյունին են գամել նաև տարբեր կողմնորոշումներ ունեցող բազում անվանի քաղաքական գործիչներ, գրողներ, հոգևորականներ, լույս են ընծայվել փաստաթղթերի ժողովածուներ, ֆրանսիացի ականատեսների հուշեր, գրքեր: Նրանցից ոմանք հայ ժողովրդին զորավիճ են եղել ելնելով, անտարակույս, զանազան՝ քրիստոնեական, մարդասիրական կամ քաղաքական նկատառումներից, սակայն, չնայած տարբեր հարցերում ունեցած տարակարծություններին, ընդհանուր առնամբ, հանդես են եկել միասնական դիրքերից:

Այդուհանդեռ, հարկ է ընդգծել, որ ֆրանսիացի մտավորականների և, մասնավորապես պատմաբանների գերակշռող մասը հայ ժողովրդին սատարել է գերազանցապես մարդասիրական մղումներից դրդված և անշահախնդրորեն կատարել իր քաղաքացիական պարտք: Խստագույնս դատապարտելով արևմտահայության համար կործանարար հետևանքներով հեյ ֆրանսիական կառավարության թրքամետ դիրքորոշումն՝ նրանցից շատերը հակադրվել են Ֆրանսիայի պետական քաղաքականությունը կերտող՝ Երրորդ հանրապետության դեկավարներին և առաջ բերել նրանց դժգոհությունը: Ուստի սույն գրքի բնաբանում նշված Անատոլ Ֆրանսի՝ «Նրանց [իայերի] գործը մարոկության գործն է»⁴³ խոսքերը, խիստ հատկանշական են հայ ժողովրդի ողբերգության ի տես՝ Ֆրանսիայում հայանպաստ շարժմանը հարած ոչ միայն պատմաբան-

⁴² Ըստ բուլղարացի հասարակական գործիչ Դիմիտր Սպիրովի (1868-1906) հավաստման՝ արևատյան լրագրողներին կաշառելու համար սուլթանը տարեկան ծախսում էր 250000 բուրքական ոսկի: Տե՛ս Դ. Ա. Սպիրով, Դայերի սարսահելի կոտորածները (1894-1896), Երևան, 1997, էջ 48: Այլ մասին վկայել են նաև ֆրանսիացի ժամանակակիցները. տե՛ս օրինակ V. Bérard, La politique du sultan, Paris, 1897, p. 290; U. Gohier, Trois fantoches. Hanotaux-Méline, Paris, 1897, p. 43:

⁴³ A. France, Pour l'union arménienne // « Pro Armenia », 25 mai 1901.

ների, այլև անվանի մտավորականների և քաղաքական ու հոգևոր գործիչների գրաված դիրքորոշումը բնութագրելու համար:

Դարկ է մանրամասնել, որ ինչ Վերաբերում է ֆրանսիական պատմագրության՝ Դայոց ցեղասպանության արծարծնան հարցում դրսեռության անթաքույց հետաքրքրությանը, ապա դրա ակունքներում խարսխվում են նաև մի շարք այլ էական հանգամանքներ: Խոսքը, մասնավորապես Վերաբերում է XIX դարի 80-90-ական թվականներին ֆրանսիական գաղութային քաղաքականության աննախադեպ ծավալմանը⁴⁴, որը խթանում էր արևելյան երկրներում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ հետաքրքրության աճին և XIX դարի վերջին քառորդում ֆրանսիական պատմագրության դիմագիծը ծեսփոխած նշանակալից տեղաշարժներին՝ կապված պողիտիվիստական պատմագրության ներկայացուցիչների գործունեության հետ⁴⁵, որոնք հետևողականորեն առաջադրում էին պատմական սկզբնաղբյուրների մանրազնին քննության և այդ թվում՝ փաստաթղթերի ժողովածուների հրատարակության անհրաժեշտությունը⁴⁶:

XIX դարի վերջի և XX դարի սկզբի ֆրանսիացի հեղինակների աշխատություններից զատ, օգտագործելով եվրոպական և հայկական տարաբնույթ սկզբնաղբյուրներ, գլխավորապես փաստաթղթերի ժողովածուներ, ինչպես նաև ժամանակակից պատմաբանների և ցեղասպանության՝ իրու երևույթի մասնագետների աշխատությունները՝ կիրառել ենք պատմահամեմատական և պատմավերլուծական մեթոդները, որոնք հնարավորություն են ընծեռել անկողմնակալ դիրքերից ամբողջացնելու ֆրանսիացի պատմաբանների և գործիչների ավանդի հավաստի պատկերը, ինչպես նաև բացահայտելու նրանց միջև առկա տարածայնությունները, նրանց մոտեցումների սահմանափակությունները և խոցելի կողմերը:

⁴⁴ А. З. Манфред, Внешняя политика Франции 1871-1891 годов, М., 1952, с. 243; П. П. Черкасов, Судьба империи. Очерк колониальной экспансии Франции в XVI-XX вв., М., 1983, с. 35; В. И. Антиохина-Московченко, Третья республика во Франции. 1870-1918, М., 1986, с. 34.

⁴⁵ Պ. Գարսիան գերադասում է պատմագիտական այս ուղղությունն անվանել «մերոդական». տե՛ս C. Delacroix, F. Dosse & P. Garcia, Les courants historiques en France XIX^e-XX^e siècle. Édition revue et augmentée, Paris, 2009, p. 97:

⁴⁶ Ch.-O. Carbonell, Histoire et historiens. Une mutation idéologique des historiens français 1865-1895, Toulouse, 1976, p. 413-417; G. Thuillier et J. Tulard, Les écoles historiques, Paris, 1990, p. 25-31; Լ. Բ. Տարան, Историческая мысль Франции и России. 70-е годы XIX — 40-е годы XX в., Киев, 1994, с. 25-31; C. Delacroix, F. Dosse & P. Garcia, նշվ. աշխ., էջ 121-125:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ հեղինակն առաջին անգամ քննական վերլուծության է Ենթարկել Հայոց ցեղասպանության փաստն անվերապահորեն հավաստող՝ ֆրանսիական ծագում ունեցող փաստաթղթերի ժողովածուները։ Դաշվի առնելով ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության վավերագրերն ամփոփող՝ «Նեղին գիրք» անվամբ հայտնի ժողովածուի անժմտելի նշանակությունը, համակողմանիորեն վերլուծել ենք դրանում հրատարակված բազմաթիվ փաստաթղթերը։ Խոսքը, մասնավորապես վերաբերում է Օսմանյան կայսրությունում հավատարմագրված ֆրանսիացի դիվանագետների՝ Արևմտյան Հայաստանում և կայսրության այլ տարածքներում ծավալված կոտորածների նկարագրություններն ամփոփող՝ արտաքին գործերի նախարարության ղեկավարներին հղած գեկուցագրերին⁴⁷։ Թեև արտաքին գործերի նախարարության ղեկավարների ջանքերով այդ վավերագրերի զգալի մասը հրատարակվել է կրօնական նկարագրությունում, այդուհանդերձ, դրանք հայկական կոտորածների պատկերն անկողմնակալորեն բացահայտող անհերքելի փաստաթղթեր են, որոնց նշանակությունն անզնահատելի է։ Բացի դրանից, մանրազնին քննության ենք Ենթարկել նաև սակավաթիվ, սակայն, արժեքավոր այլ ժողովածուներ, որոնք ամփոփում են, մասնավորապես հայ ականատեսների վկայությունները, ինչպես նաև շատ այլ փաստաթղթեր։

Սենագրությունում առաջին անգամ հանգանանորեն ուսումնասիրել ենք համիդյան կոտորածների ընթացքը լուսաբանող ֆրանսիացի պատմաբանների և հեղինակների ներդրումը։ 1895-1918 թթ. ֆրանսիական պատմագրությունը մեծապես օժանդակել է Հայոց ցեղասպանության գիտական և համակողմանի ուսումնասիրությանը։ Այս ժամանակաշրջանում ֆրանսիայում լույս են տեսել այս իրադարձության պատմությանը նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնց հեղինակները, այդ թվում անվանի պոզիտիվիստ պատմաբանները (Է. Լավիս, Շ. Սենյորոս և ուրիշներ), ինչպես նաև նապոլեոնագիտության ասպարեզում՝ Սապոլեոն I-ին ջատագովող ուղղության կարկառուն ներկայացուցիչները (Ա. Վանդալ, Է. Դրիո), ոչ միայն Հայոց ցեղասպանությանը, այլև թե՛ Արևոլ Կամիդի կենսագրականներում, անողոքաբար մերկացրել են հա-

⁴⁷ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, Paris, 1897 ; Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, Paris, 1897.

միոյան վարչակարգի քաղաքականությունն արևմտահայության բնաջնջման կապակցությամբ, քացահայտել Դայոց ցեղասպանության՝ իր պետական քաղաքականության մակարդակով իրականացվող եղելության բնույթը: Անշաշառորեն լուսաբանել ենք ֆրանսիական պատմագրության տարբեր ուղղությունների ներկայացուցիչների մոտեցումների առանձնահատկությունները, արժնորել նրանց աշխատությունների նշանակությունը ցեղասպանության պատմության գիտական ուսումնասիրության ասպարեզում:

Մեծ տեղ ենք հատկացրել նաև Դայոց ցեղասպանության ժմտողական ուղղության ակունքների քացահայտմանը, Դայոց ցեղասպանության պատմագրության մեջ առաջին անգամ ապացուել, որ այն սկզբնավորվել է Ֆրանսիայում՝ մեր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանում, մանրամասնորեն ուսումնասիրել այդ ուղղության ներկայացուցիչների հակապատճենական թեզերը:

Մանրամասնենք, որ թե՛ քաղաքական և թե՛ հոգևոր գործիչների ու գրողների՝ տարբեր գիտական հրատարակություններում և մամուլում հրատարակված հոդվածները, ֆրանսիական պատմագիտական մտքի անքակտելի մասն են: Ուստի չենք անտեսել նրանց հայանպատ ելույթները, արժնորել ենք նաև խորհրդարանային գործունեության արդյունքում՝ Դայկական հարցին միջազգայնացում տալու խնդրում տարբեր քաղաքական գործիչների ներդրած անուրանալի ավանդը: Չնայած ցեղասպանության տարբեր հիմնախնդիրների մեկնաբանության հարցում նրանցից ոմանց կողմնորոշումների զանազանությանը, Վերոնշյալ ժամանակաշրջանում նրանք բոլորը նշանակալից ավանդ են ներդրել արևմտահայությանը զորավիգ լինելու ասպարեզում և դատապարտել ցեղասպանության կազմակերպիչներին: Նրանց զգալի մասը նույնիսկ անվարան խարազանել է Երրորդ հանրապետության ղեկավարների թրքամետ քաղաքականությունը:

Դայոց ցեղասպանության պատմության հիմնահարցերը գրքում քննարկել ենք ցեղասպանագիտության ժամանակակից նվաճումների ետնախորքի վրա:

Մեր կողմից ուսումնասիրվող թեման, որի վրա մեր ուշադրությունը հրավիրել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նախկին տնօրեն, Երջանկահիշատակ ակադեմիկոս Դրանտ Ավետիսյանը (1927-2004), Դայոց ցեղասպանության պատմագրության մեջ, ըստ եռության, չի լուսաբանվել: Անշուշտ, ֆրանսահայ պատմաբան է. Քայացյանը մասնակիորեն անդրադարձել է թեմային առնչվող որոշ

հարցերի, սակայն, խիստ սահմանափակ՝ ֆրանսիացի գործիչների հետ Արշակ Չոպանյանի (1872-1954), առնչությունների բացահայտման կտրվածքով⁴⁸: Վերջերս, 1894-1908 թթ. արևմտահայությանը սատարած զանազան ֆրանսիացի գործիչների հայանպաստ գործունեության հիմնական դրվագներն ամփոփող՝ տեղեկատվական բնույթի գիրը է հրատարակել Մ. Խարազյանը⁴⁹, որը շեշտը դրել է գլխավորաբան ֆրանսիական մամուլում տպագրված հոդվածների և որոշ քաղաքական գործիչների ելույթների բովանդակության վերաշարադրման վրա: Նրա շարադրանքում, սակայն, բացակայում են վերլուծական մոտեցումը և հեղինակային խոսքը, քանզի նա, փաստորեն, բավարարվում է իր իսկ հիշատակած սակավաթիվ գործիչների հոդվածներից կամ ֆրանսիական խորհրդարանում նրանցից ոմանց ունեցած ելույթներից բերված ընդարձակ քաղվածքների հրապարակմամբ: Մեր նախորդներից իմաստ ունի հիշատակել նաև ֆրանսիացի պատմաբան Վ. Դյուկլերին, որն անդրադարձել է սոսկ Ժ. Ժուլենի և Շ. Կոշենի խորհրդարանային ելույթներին, որանք, այրուհանդերձ, չընճարկելով՝ նրանց ժամանակակիցների քաղաքական գործունեության ընդհանուր հենքի վրա⁵⁰: Դայրենական պատմաբաններից Ե. Գասպարյանն անդրադարձել է Անատոլ Ֆրանսի՝ հայ ժողովրդի հետ ունեցած առնչությունների լուսաբանմանը⁵¹: Պատմագիտական մտքի վերլուծությունը նշված հեղինակների խնդիրներում չի ընդգրկվել:

Ինչ վերաբերում է հայրենական պատմաբաններին, ապա՝ Դայրենապանության ֆրանսիական պատմագրության մեջ հետաքրքրող ժամանակահատվածը նրանց ուշադրությունից ամբողջությամբ վրիպել է: Փօխարենը, ժամանակ առ ժամանակ, նրանք անդրադարձել են ֆրանսիացի գործիչներից ոմանց հայանպաստ ելույթներին և բավարարվել սոսկ հպանցիկ դիտարկումներով⁵²:

⁴⁸ E. Khayadjian, Archag Tchobanian et le mouvement arménophile en France, Marseille, 1986 ; 2^{ème} éd., Alfortville, 2001. Այսուհետև կիդենց գրքի երկրորդ հրատարակությունը:

⁴⁹ M. Kharazian, De l'illusion à la tragédie. La France et la Question arménienne de 1894 à 1908 (des massacres hamidiens jusqu'à la révolution jeune-turque), Paris, 2007.

⁵⁰ V. Ducleart, Եղվ. աշխ., էջ 31-55:

⁵¹ Ե. Գասպարյան, Անատոլ Ֆրանսը և հայ ժողովրդը, Երևան, 2003:

⁵² Տե՛ս օրինակ Ա. Ն. Մանցականյան, Դայր ժողովրդի ողբերգությունը ոուս և համաշխարհային հասարակական մտքի զնահատմամբ, Երևան, 1965, էջ 139-141; Ծ. Պ. Աղայան, Դայր ժողովրդի ազատազարկան պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 207-209, 213; Զ. Կիրակոսյան, Երիտրութերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), գիրք առաջին, Երևան, 1982, էջ 94-101;

Սույն գրքի առաջին հրատարակությունը լույս է տեսել 2005 թ.⁵³: Ընթերցողի դատին հանձնվող գրքի երկրորդ, բարեփոխված և լրացված հրատարակության մեջ հեղինակն ընդլայնել է թեմայի ժամանակագրական շրջանակները, ավելացվել նոր բաժին («Դամիդյան Կոտորածները 1909-1918 թթ. ֆրանսիական պատմագրության լուսաբանմամբ»), կատարել կառուցվածքային շահեկան փոփոխություններ, իսկ որոշ գլուխներ վերաշարադրել է և համալրել մինչ այդ իրեն անմատչելի նյութերով: Ըստ այդմ՝ մեր պարտքն ենք համարում երախտագիտության խոսք ուղղել Մոնպելիեի Պոլ Կալերի համալսարանի պրոֆեսոր Պիեռ Բարալին, որը սիրալիրաբար մեզ է ուղարկել ուսումնասիրվող թեմայի համար մեծ կարևորություն ունեցող՝ մեզ անմատչելի մեծ թվով տպագիր միավորների պատճեններ, ինչպես նաև ժամանակակից ֆրանսիացի պատմաբանների գրքեր և հոդվածներ: Ծնորհակալ ենք նաև մեր այն բոլոր գործընկերներին, որոնց օժանդակությամբ ճեղք ենք բերել տարրեր երկրների գրադարաններում պահվող գրքույկների և հոդվածների պատճեններ:

Այդուհանդեռձ, Դայոց ցեղասպանության պատմագրության մեջ առաջին անգամ ծեռնարկելով սույն թեմայի ուսումնասիրությունը՝ ամենակին չենք հավակնում, պատմագիտական գրականության համապարփակ ընդգրկմանը, առավել ևս՝ արժարժվող հարցերի շուրջ վերջնական խոսքի⁵⁴: Մենք երախտագիտությամբ կընդունենք

Գ. Բ. Պարիքջանյան, Դայոց ժողովորի ազատագրական պայքարը XIX դարի վերջին և XX դարի սկզբին, Երևան, 1986, էջ 15, 21-22; Ա. Ճ. Կարակոչյան, նշվ. աշխ., էջ 130-131, 156-157; Ս. Վ. Արզումանյան, Պարավոր գոյանարտ, Երևան, 1989, էջ 221-223; Ա. Ս. Դամբարյան, Ազատագրական շարժումները Արևմտյան Դայաստառում (1898-1908 թթ.), Երևան, 1999, էջ 29-34; Ե. Ա. Գասպարյան, Դայասիրական շարժումը Ֆրանսիայում Առաջին աշխարհամարտի տարիներին, Երևան, 1999, էջ 9-14; Ս. Պողոսյան, Ֆրանսիացի մտավորականությունը և Դայկական հարցը. – Դայ-ֆրանսիական պատմամշակութային առնչությունները. VII միջազգային գիտաժողովի նյութեր. «20-րդ դարի Ֆրանսիան և հայերը», Երևան, 20 և 22 սեպտեմբերի 2000, Երևան, 2001, էջ 40-48; Կ. Զ. Թաթոյան, Արևմտյան Դայաստառը, արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի րունատիրության դեմ 1878-1908 թթ., Երևան, 2001, էջ 425-436; Ա. Ս. Խաչատրյան, Դայասիրական դրսնորումները Ֆրանսիայում Սասունի ապստամբության ընթացքում. – «Բանքեր Երևանի համալսարանի», 2001, թիվ 3, էջ 117-123:

⁵³ Վ. Պողոսյան, Դայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմանը (XIX դ. Վեց – XX դ. սկիզբ). Երևան, 2005:

⁵⁴ Տես 1890-ական թվականների հայկական կոտորածներին նվիրված պատմագիտական գրականության մատենագիտությունը. G. N. Shirinian, The Armenian

պատմաբանների և ցեղասպանության՝ իրու երևույթի, մասնագետների դիտողություններն ու առաջարկությունները:

Տողերիս հեղինակը երկար տարիներ աշխատել է ակադեմիկոս Դ. Ավետիսյանի գլխավորած ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում և նրա հետ եղել զերմ, անկեղծ և աննշական փոխհարաբերությունների մեջ: Իր՝ իրու Դայոց ցեղասպանության պատմաբանի կայացման գործում, նա մեծապես պարտական է նրա օժանդակությանն ու բարյացական վերաբերմունքին: Ուստի սույն գիրքը նա սիրով նվիրում է նրա աննոռաց հիշատակին:

Երախտապարտ ենք ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Արամ Սիմոնյանին՝ գրքի հրատարակության հարցում ցուցաբերած համակողմանի օժանդակության համար:

Ծնորհակալական խոսք ենք ցանկանում ուղղել նաև ԵՊՀ Դայաստամի պատմական աշխարհագրության և քարտեզագրության աշխատանոցի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Բարկեն Դարությունյանին և քարտեզագիր Վարդան Սիսիթարյանին՝ գրքում զետեղված «1890-ական թթ. հայկական կոտորածներն Օսմանյան կայսրությունում» քարտեզը մեզ տրամադրելու համար:

ԳԼՈՒԽ I

ՀԱՅՈՑ ՏԵՂԱՍՊԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏՊԱԳԻՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. «ԴԵՂԻՆ ԳԻՐՁԸ»

XIX դարի 90-ական թվականների հայկական կոտորածների պատմությանն առնչվող ֆրանսիական տպագիր սկզբնաղբյուրները բազմաբնույթ են: Դրանց թվում առավել մեծ կարևորություն ունի Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության արխիվի վավերագրերն անփոփող «Դեղին գիրձը», որն, ի դեպ, մեծարժեք սկզբնաղբյուր է ոչ միայն համիլյան կոտորածների, այլև Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությանը նվիրված փաստաթրթերի ժողովածուների թվում առհասարակ:

«Դեղին գիրձը» լուս է տեսել 1897 թ. Ֆրանսիայի Ազգային ժողովի մի շարք պատգամավորների գործադրած ջանքերի շնորհիվ: 1896 թ. նոյեմբերի 3-ին Ազգային ժողովի նիստում, երբ առաջին անգամ քննարկվում է Հայկական հարցը, պատգամավորներ ժան Ժորժը, Դենի Կոշենը և Ալբեր դը Մունը խստագույնս դատապարտում են ֆրանսիական կառավարության և, մասնավորապես արտաքին գործերի նախարար Գաբրիել Շանուտոյի (1853-1944) թքամետ քաղաքականությունը, որի հետևանքով արտաքին գործերի նախարարության արխիվում պահվող՝ Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանն առնչվող փաստաթրթերը մինչ այդ մնացել էին փակի տակ, ու պահանջում դրանց լուս ընծայումը: Ըստ Վ. Տատրյանի պատկերավոր արտահայտության՝ այս «այլախոհ» պատգամավորների⁵⁵ ճնշմանք, ֆրանսիական կառավարությունը մեծ ուշացումով իրականացնում է արտաքին գործերի նախարարության արխիվի փաստաթրթերի որոշ մասի հրապարակումը:

⁵⁵ V. Dadrian, նշվ. աշխ., էջ 160: Տե՛ս նաև Կ. Termon, նշվ. աշխ., էջ 132:

«Ղեղին գիրքը»⁵⁶ ընդգրկում է 1891-1897 թթ. Կոստանդնուպոլ-սում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնի (1843-1924)⁵⁷, Օսմանյան կայսրության տարբեր տարածաշրջաններում հավատարմագրված ֆրանսիացի դիվանագետների (Գուստավ Սեյրին, Ժյուլ Ռը լա Բուլի-նիեր, Ալֆոնս Սիլիեր, Մորիս Կարլիե, Պիեռ-Արել Բերժերոն և այլք)՝ հայկական կոտորածների նկարագրություններն ամփոփող՝ Ֆրան-սիայի արտաքին գործերի նախարարության դեկանակարներին հղած գեկուցագրերը, ինչպես նաև Թուրքիայում բարենորոգումների նպա-տակով մեծ տերությունների ներկայացուցիչների նշակած նախա-գծերը:

«Ղեղին գրքի» հավելվածում⁵⁸ հրատարակված փաստաթղթերը դասակարգված են աշխարհագրական սկզբունքով: Գրքի տասնե-րեք բաժնից յուրաքանչյուրում ժողովված են Արևմտյան Հայաստա-նում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության զանազան վայրերում՝ Անգորա (Անկարա), Ալեքսանդրետ, Ջալեպ և այլն գտնվող ֆրան-սիացի դիվանագետների գեկուցագրերը, որոնք իրադարձություննե-րի պատկերն ուրվագծում են ըստ բնակավայրերի: Կրոնափոխու-թյանը նվիրված է առանձին բաժին:

«Ղեղին գրքում» հրատարակված փաստաթղթերը լույս են սփոռում Հայոց ցեղասպանության առաջին փուլի պատմությանն առնչվող մի շարք էական հանգամանքների վրա, որոնց քննությանը կանդրադառնանք ստորև:

Նախ ֆրանսիացի դիվանագետներն անառարկելիորեն հավաս-տում են Հայկական հարցի գոյության փաստը. 1894 թ. փետրվարի

⁵⁶ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, Paris, 1897. Նշենք, որ «Ղեղին գրքից»՝ 1894 թ. Սասունի, 1895-1896 թթ. Տրավիզոնի, Դիարբեքիրի, Սերսատիայի, Ուրֆայի կոտորածներին առնչվող որոշ հատվածներ բարզապահվել են ոռութեն և գերմաներեն լեզուներով. Армянский вопрос по документам французской Желтой книги.— Братская помощь пострадавшим в Турции армянам, 2-е изд., М., 1898, отдел II, с. 95-124; “Der Christliche Orient”, 1897, N. V/VI, S. 251-266; N. VII, S. 317-325; N. VIII, S. 360-368; N. IX, S. 401-416: Ավելի ուշ ոռութեն բարզամանված հատվածները Վերահրա-տարակվել են նաև «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» ժո-ղովածուում. տե՛ս Գеноцид армян в Османской империи, с. 115-122:

⁵⁷ Կոստանդնուպոլսում նրա դիվանագիտական առաքելության մասին տե՛ս L. Villate, La République des diplomates. Paul et Jules Cambon, 1843-1935, Paris, 2002, p. 143-178:

⁵⁸ Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, Paris, 1897.

20-ին Կամբոնն այդ առիթով գրում է. «Ղայկական հարցն այսօր գոյություն ունի: Ավելի քան մեկ տարի Ղայաստանը և հարակից նահանգները դարձել են ցավալի իրադարձությունների թատերաբեմ: Մեր հյուպատոսները յուրաքանչյուր շաբաթ մեզ լուրեր են հաղորդում ծերբակալությունների, հայերի և իշխանությունների միջև տեղի ունեցող արյունալի բախումների մասին»⁵⁹: Ղայկական հարցի ժագումը Կամբոնն իրավամբ պայմանագրում է Բերլինի Վեհաժողովի ընդունած պայմանագրի 61-րդ հոդվածով, նշելով, սակայն, որ այդ ժամանակաշրջանում հայկական ազգային զարթոնքը դեռևս ծնունդ չէր առել: Ղայկական կուսակցությունների հիմնադրումը և գործունեությունը նա պատճառաբանում է այն հանգամանքով, որ Բարձր Դուռը չէր կատարում հայկական նահանգներում բարենորոգումների՝ իր իսկ ստանձնած պարտավորությունները: Դուռը, ինչպես նշում է Կամբոնը, «Ղայաստանում ահաբեկչության, ծերբակալությունների, սպանությունների, գողությունների և այլնի վարչակարգը պահպանելու իր շահագրգոռվածությամբ, թվում է, թե հաճույքով արագացնում է իրադարձությունների ընթացքը»⁶⁰: Թվարկելով զանազան վայրերում տեղի ունեցող սպանությունները և հավաստելով հայերի համար ստեղծված սպառնալից իրավիճակը, դեսպանն իր մտավախությունն է հայտնում, որ նման պայմաններում կարող էր ժագել եվրոպական տերությունների միջամտության անհրաժեշտությունը: «Ահա թե ինչպիսին է Ղայկական հարցի եռթյունը 1894 թ. սկզբին», – եզրակացնում է նա:⁶¹

Ի սկզբանե, Ֆրանսիացի դիվանագետների գեկուցագրերն անվերապահորեն վկայում են, որ Ղայոց ցեղասպանությունն իրականացվում էր պետական քաղաքականության մակարդակով, կենտրոնական և տեղական իշխանությունների անմիջական իրահրմանը, ինչպես նաև հովանավորությամբ: Սասունի դեպքերի առիթով, երգրումուն Ֆրանսիայի հյուպատոս Բերժերոնը 1894 թ. նոյեմբերին գրել է Ղանոսոյին, որ օսմանյան կառավարությունը մինչ այդ պահը չի արձագանքել այն բոլոր հանցանքներին, որոնք ամեն պահի գործում էին քրդերն ու համիդին զորամիավորումները⁶²: Սասունի ապստամբությանը Վերաբերող այլ գեկուցագրերում ևս, թե՛ Բերժե-

⁵⁹ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 10-11.

⁶⁰ Նույն տեղում, էջ 12:

⁶¹ Նույն տեղում:

⁶² Նույն տեղում, էջ 19:

րոնը և թե՛ Դիարբեքիրում Ֆրանսիայի փոխհյուպատոս Մեյրիեն վկայում են, որ ռազմական իշխանությունները միայն Կոստանդնուպոլիսից ստացված հրամանների հիման վրա են վճիռ կայացրել ապստամբ հայերին ճնշելու համար նշանակալից գինված ուժեր Սասուն ուղարկելու շուրջ⁶³:

1895 թ. ի վեր, ֆրանսիացի դիվանագետներն ավելի բացահայտ են ընդգծում հայերի բնաջնջման գործընթացում օսմանյան իշխանությունների դերակատարությունը: Կամբոնը փետրվարին գրում է կառավարական շրջանակներում տիրող անիշխանության մասին, որն իրեն զգալ էր տալիս ավելի, քան երբեք: Նրա հավաստնամբ՝ վարչությունն ու իշխանություններն իրենց օրինակով ու վարչագործ հրահրում էին մոլեռանդություն, իսկ բարերում և մարդկանց մտքերում տիրում էր խառնաշփոթ: «Նահանգներում իրավիճակը, հավանաբար, ավելի վատթար է: Իշխանությունները շատ վատ են տրամադրված օտարերկրացիների և քրիստոնյաների նկատմամբ», – շարունակում է նա⁶⁴: «Ենպանը խիստ է արտահայտվում, մասնավորապես, օսմանյան գերազույն իշխանությունների և պաշտոնյաների մասին: Կոտորածների ծավալման առնչությամբ, նոյեմբերի 4-ի թվակիր գեկուցագրում Կամբոնը նշում է կայսրության տարածքում նկատվող մեծ հոլովունների, մահմեդականների մոլեռանդության աճի մասին, որն, ըստ նրա՝ չափ ու սահման չի ունեցել. «Օսմանյան իշխանությունների անտարբերությունը և սուլթանի շրջապատում գտնվող որոշ պաշտոնյանների մասնակցությունը [կոտորածներին – Վ. Պ.] քաջալերում են այս շարժումը», – շարունակում է նա⁶⁵:

Կամբոնը խստագույնս նշանակում է, հատկապես, Բարձր Դուռը քաղաքականությունը: Ցավով հավաստելով աղետալի իրադարձությունների համար իշխանությունների վրա բարդվող պատասխանատվությունը՝ նա նոյեմբերի 4-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարարին հղած գրության մեջ իր պարտքն է համարում «բողոքել Բարձր Դուռն հանցագործ անտարբերության և հանցակցության առիթով՝ իենց նոր տեղի ունեցած այն կանխամտածված կոտորածների (ընդգծումը մերն է – Վ. Պ.) կապակցությամբ, որոնց զին են

⁶³ Նույն տեղում, էջ 15:

⁶⁴ Նույն տեղում, էջ 34:

⁶⁵ Նույն տեղում, էջ 165:

դարձել ոչ միայն հայերը, այլև քրիստոնեություն դավանող բոլոր անձինք»⁶⁶:

Ֆրանսիացի դիվանագետները մատնանշում են «կարմիր սուլթանի» անձնական պատասխանատվությունը հայկական կոտորածների սանձազերծման հարցում: Կամբոնը հիմնավորապես բացահայտում է Աբդուլ Ջամիդ II-ի դերը Սասունի ապստամբությունն արյան մեջ խեղոնու գործում: «Գնդապետ Խսմայիլ բեյը, – գրում է նա, – Ելույթ է ունեցել՝ կարգադրելով գինվորներին իրի ճարակ դարձնել ու ավերել գյուղերը, իսկ ապստամբներին սրի քաշել, ավելացնելով, որ նրանք իրավասու են անելու այն ամենն, ինչ կամենում են, այն պայմանով, սակայն, որ ոչնչացնեն բոլոր մարդկանց: Այդպիսին էր սուլթանի իրամանք» (ընդգծումը մերն է – Վ. Պ.)⁶⁷:

Կոստանդնուպոլսում գործերի հավատարմատար դը լա Բուլինիերը տվել է Աբդուլ Ջամիդի հետևյալ հակիրճ գնահատականը. «Անհանար փաստերն ակնհայտորեն վկայում են, որ մարդասպաններին զինում է անձամբ սուլթանը, որը նրանց կարգադրում է հալածել հայերին» (ընդգծումը մերն է – Վ. Պ.)⁶⁸:

Զանազան նահանգներում տիրող իրավիճակը մանրամասնորեն ներկայացնող «Ղեղին գրքի» վավերագրերում բազմից փաստվում է նաև տեղական իշխանությունների ղեկավար դերը ցեղասպանության իրականացման գործում: 1895 թ. հոկտեմբերին Տրավիզոնում տեղի ունեցած կոտորածների առիթով տեղում Ֆրանսիայի հյուպատոս Սիլիերը հիմնվելով իր և իր գործընկերների ստացած հավաստի փաստերի վրա՝ գրում է Կամբոնին, որ խոսքը վերաբերում է կանխամտածված և հասունացած շարժման, որի նասին ակնհայտորեն վկայում են բազմազան մանրամասներ՝⁶⁹:

Ելնելով Սեբաստիայում փոխարիստացած կարլիեի՝ կամբոնին հյած 1895 թ. նոյեմբերի 12-ի թվակիր գեկուցագրից, կարելի է եզրակցնել, որ այստեղ տիրել է միևնույն իրավիճակը. «Կոտորածը, հավանաբար, նախապատրաստված է եղել. – Նշում է նա, – քանզի նկատելի էր յուրօրինակ անկաշկանդվածություն: Այն, որ իշխանությունը հանցակից էր, թվում է հավանական: Գաղտնիքը լավ էր պահ-

⁶⁶ Նույն տեղում, էջ 168:

⁶⁷ Նույն տեղում, էջ 42:

⁶⁸ Նույն տեղում, էջ 275:

⁶⁹ Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, p. 4.

պանվել, թեև նախօրեին, երեկոյան, արվել էին մի քանի գուսահայտարարություններ»⁷⁰:

Մեյրիեն ևս 1895 թ. դեկտեմբերի 18-ին ընդգծում է Դիարբեքիրի տեղական իշխանությունների դերը հայերի ոչնչացման գործում: «Սատ իմ տեղեկությունների՝ հարկ եմ համարում հաստատակամորեն հայտարարել, – գորում է նա Կամբոնին, – որ գլխավոր կառավարիչը, զինվորական հրամանատարը, ժանդարմների պետը սարսափելի տեսարանների առջև մնացել են անտարբեր և բացարձակապես ոչինչ չեն արել դրանք կանխելու համար, իսկ եթե նրանք անմիջականորեն դրանց չեն մասնակցել, ապա իրենց վարժագծով քաջալերել են դրանք իրականացնողներին»⁷¹:

1895 թ. նոյեմբերին Դաճնում տիրող միևնույն իրավիճակն է արձանագրում Մերսինում հյուպատոս Սուլմարիպան, ըստ որի՝ տեղի կայմակամը մահմեդական բնակիչներին հրամայել է կոտորել հայերին⁷²:

Ըստ ֆրանսիացի դիվանագետների վկայությունների՝ հետագայում ևս պատկերը որևէ փոփոխություն չի կրել: Դիմնվելով Ուրֆայից (Ուրիհա) ստացված տեղեկությունների վրա՝ Կամբոնը հավաստում է տեղական իշխանությունների «անգործությունը» և նրանց մասնակցությունը հայկական ջարդերին⁷³: Այդ առիթով Մեյրիեն նրան հաղորդում է 1896 թ. հունվարի 8-ին Դիարբեքիրում սպառնալից իրավիճակի պահպաննան, մահմեդականների՝ զինաթափումից հրաժարվելու և կառավարության, բոլոր պաշտոնյանների և, մասնավորապես տեղի կառավարչի հանցագործ դիրքորոշման մասին, որն ուղի է հարթել մեքենայությունների համար⁷⁴:

Պետական մարմինների և բարձրաստիճան պաշտոնյանների վարժագծի մերկացումից բացի, «Դեղին գրքի» փաստաթղթերում բացահայտվում է նաև օսմանյան բանակի և ոստիկանության գործուն մասնակցությունն արևմտահայերի ցեղասպանությանը: Բազմիցս քննարկելով այս հարցը, Կամբոնը հայ բնակչության ոչնչացման գործում ռազմական իշխանությունների ունեցած կործանարար դերի առիթով, մասնավորապես հավաստի է համարում անկարգություններ արձանագրված բազմաթիվ վայրերում կանոնավոր բա-

⁷⁰ Նույն տեղում, էջ 39:

⁷¹ Նույն տեղում, էջ 31:

⁷² Նույն տեղում, էջ 97:

⁷³ Նույն տեղում, էջ 46:

⁷⁴ Նույն տեղում, էջ 34:

նակի գինվորների մասնակցությունը հուզումներին, որոնք ճնշելու համար նրանց կանչել էին⁷⁵: Անդրադառնալով Կեսարիայում տեղի ունեցած կոտորածներին, 1896 թ. հունվարին դեսպանը գրում է. «Եմի բերված տեղեկությունները վկայում են, որ զորքը բացահայտորեն մասնակցել է կոտորածին ու կողոպուտին, իսկ գինվորները բարձրաձայն հպարտացել են չորս ժամ շարունակ սպանելու և կողոպտելու թույլտվությամբ»⁷⁶: 1896 թ. սեպտեմբերին Ակնում ծավալված ջարդերի առիթով արդեն, նա վկայակոչում է ստուգ փաստեր: Ըստ նրա տվյալների՝ շուրջ 2000 հայի, որոնց թվում եղել են մեծ թվով կանայք և երեխաներ, սպանել են գինվորները: Բացի դրանից, կողոպտվել է հայկական թաղամասի 1150 տուն, որոնցից 980-ը հրկիզվել է: Ըստ այս ամենի՝ կոտորածների պատասխանատվությունն ամբողջությամբ նա բարդում է զորքերի վրա⁷⁷:

Դետաքրօրական է 1895 թ. դեկտեմբերի 18-ի թվակիր՝ Կամբոնին հղած Մեյրիեի հաղորդագրությունը, ըստ որի՝ Դիարբեքիրի «գրեթե բոլոր մահմեդականները, գինվորները, զափթիեները և երկրամասի քրոները մասնակցել են այս սարսափելի կոտորածին... Ոստիկանությունը և զորքերը միջանտել են միայն զոհերի վրա գրոհելու համար: Ես տեսել եմ սեփական աչքերով, թե ինչպես են գինվորները և զափթիեները մահմեդականների և քրոների հետ մեկտեղ կրակում քրիստոնյաների վրա»⁷⁸: Սեբաստիայից Կարլիեն հավատում է զափթիեների և գինվորների մասնակցությունը ոչ միայն կոտորածին, այլև հայ բնակչության ունեցվածքի կողոպուտին⁷⁹:

Ցեղասպանությունն ուղեկցվում էր հայկական բնակավայրերի կողոպուտով, հրկիզումով և ավերումով: Մեծ թվով գեկուցագրերում բերվում են հայկական վիլայեթներում տեղի ունեցած կողոպուտին առնչվող փաստեր: Քոչվոր քրոների կողմից 1894 թ. Սասունի գյուղերը կողոպտելու և հրկիզելու մասին հիշատակում են Մեյրիեն և Բերժերոնը⁸⁰: Կամբոնը մատնանշում է երգրումում հայերին պատկանող 1500 կրապակի և հարյուրավոր տների կողոպուտը⁸¹, նույն

⁷⁵ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 245.

⁷⁶ Նույն տեղում, էջ 196:

⁷⁷ Նույն տեղում, էջ 296:

⁷⁸ Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, p. 30-31.

⁷⁹ Նույն տեղում, էջ 40:

⁸⁰ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 16, 18.

⁸¹ Նույն տեղում, էջ 163, 172:

Վիլայեթի գյուղերում անասունների հափշտակումն ու բնակիչների ունեցվածքի թալանը, քրդական հրոսակախմբերի կողմից Դիարբեքի շուկայի կողոպուտն ու հրկիզումը⁸², Անգորայի Վիլայեթում ագարակների կողոպուտը և անասունների հափշտակումը⁸³, ընդգծելով, որ մեղավորները մնացել են անպատճի՛:

Այս հարցի շուրջ Սերսինից Սումարիան տեղեկացնում է Կամբոնին գյուղական վայրերում ավարառուների գործած ապօրինությունների մասին, որոնք ձերբակալելիս են եղել ճանապարհորդներին, նրանցից փրկագին պահանջել, ծեծել, իսկ վերջիններս իրենց նույնիսկ շատ երջանիկ են զգացել այն դեպքում, երբ նրանց փողերը չեն հափշտակվել⁸⁴: Դիմնվելով նրա իսկ տվյալների վրա՝ Կամբոնը հաղորդում է Աղանայի վիլայեթում 640 տան և խանութի կողոպտման մասին⁸⁵: «Սեր գործակալն երգումում ձեռք է բերել մի լիակատար ցուցակ, – գրում է դեսպանը, – որն արտացոլում է Մոլլա Սուլեյման գյուղի հայ բնակիչներից հափշտակած իրերի և անասունների քանակը: Այդ ցուցակն ակնհայտ է դարձնում, որ բացի անասուններից, եզներից, կովերից կամ ոչխարներից, հափշտակվել են հողանշակման համար անհրաժեշտ բոլոր իրերը և գործիքները, ամբողջ կահույքն ու տնային սպասքը»⁸⁶: Դը լա Բուլինիերը վկայում է, որ 1896 թ. Բանկ օտոնմանի հետ կապված միջադեպից հետո, Կոստանդնուպոլսում ևս արձանագրվել են կողոպուտի բազմաթիվ փաստեր⁸⁷: Նա հիմնվում է, մասնավորապես մայրաքաղաքի Խասքյոյ թաղամասի օրինակի վրա, ուր հայերին պատկանող 800 տնից չեն կողոպտվել միայն տասը⁸⁸: Սերաստիայից Կարլիեն տեղեկացնում է Կամբոնին, որ հայերի բոլոր կրպակներն ու խանութներն ամբողջությամբ թալանվել են: Կողոպտիչները գողացել են նույնիսկ լուսամուտները⁸⁹:

Դայոց ցեղասպանության իրականացման գործում, անտարակույս, նշանակալից է մահմեդականների մոլեռանդության հանգամանքը, որը ֆրանսիացի դիվանագետները չեն անտեսել: Այս առու-

⁸² Նույն տեղում, էջ 167:

⁸³ Նույն տեղում, էջ 196:

⁸⁴ Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, p. 96.

⁸⁵ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 235.

⁸⁶ Նույն տեղում:

⁸⁷ Նույն տեղում, էջ 264:

⁸⁸ Նույն տեղում, էջ 284:

⁸⁹ Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, p. 39.

մով հատկանշական է Կամբոնի՝ 1895 թ. հոկտեմբերի 31-ի թվակիր գեկուցագիրը, որտեղ նշված է. «Մեր հյուպատոսների բազմաթիվ հեռագրերը, որոնք ես ամեն օր ստանում եմ և մանրամասն գեկուցագրերն ինձ տեղեկացնում են մահմեդականների գոգովածության, ամենուր քրիստոնյաների վրա գրոհելու նպատակով նրանց ձեռնարկած բացահայտ նախապատրաստությունների, գենքի և ռազմամթերքի գննան, զաղտնի հավաքների, սաղրանքների և սպառնալիքների մասին»⁹⁰: Սահմեդականները, ըստ Կամբոնի մեկ այլ վկայության՝ սուլթանին են հղել բողոքի մի հեռագիր, ուղղված Անատոլիայի որոշ վիլայեթներում նախատեսվող վարչական բարենորդումների իրականացման դեմ. «Նրանք հաստատակամորեն տրամադրված են վաղը չել մյուս օրը հարձակվել քրիստոնյանների վրա՝ եթե ակնկալված պատասխանն իրենց չգոհացնի»⁹¹:

Ալեքսանդրետի վիլայեթում մահմեդական խաժամուժի տրամադրվածության մասին պարզորոշ վկայում է նաև տեղում փոխհյուպատոս Լոնգվիլը, որը Կամբոնին հղած՝ 1895 թ. նոյեմբերի 22-ի թվակիր գեկուցագրում նշում է, թե ինչպես են զինված մահմեդականները շրջափակման մեջ պահել Չոր Սարզվան գյուղը և գոչելով՝ «Վրեժ լրութել մեր եղբայրների մարդասպաններից», ոչնչացրել բոլոր նրանց, ովքեր փորձել են այնտեղից դուրս ելնել»⁹²: 1896 թ. հունվարին նա շարունակում է տեղեկացնել մահմեդականների ծայրահեղ գրգովածության մասին. «Մեր կողմերում մահմեդականների մոլեռանդությունը հեռու է մարելուց: Վայրագությունները շարունակվում են ներքին նահանգների բազմաթիվ փոքր վայրերում, որոնց գրեթե անհայտ անվանումները նշված չեն որևէ քարտեզի վրա»⁹³:

Սահմեդականների մոլեռանդությանն, անկասկած, մեծապես խթանում էր զոհերին և դահիճներին անջրպետող կրոնական զանազանության հանգամանքը: «Դեղին գրքում» գետեղված բազմաթիվ փաստաթղթերի հետինակներ հավաստում են հայերին պատկանող եկեղեցիների պղծումն ու ավերումը, հայ հոգևորականների նկատմամբ մահմեդական մոլեռանդների դրսնորած վայրագ վերաբեր մունքը: Նշենք դրանցից մի քանիսը:

⁹⁰ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 162.

⁹¹ Նույն տեղում, էջ 167:

⁹² Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, p. 117.

⁹³ Նույն տեղում, էջ 103:

1896 թ. հունվարի 13-ին Կամբոնն այս առիթով գրում է. «Աղջա-Գյունեյում՝ Զարշամբայի կազայում, տարածաշրջանի Ելուզակնե-րին պատճելու համար ուղարկված կանոնավոր քանակի գինվորնե-րը պատճառ են դարձել տարատեսակ անկարգությունների, պա-րաներով կապկապած քահանայի ներկայությամբ պղծել են ու կո-ղոպտել Եկեղեցին, իսկ բնակչության հայտնել, որ բանություններ կգործադրեն բոլոր նրանց նկատմամբ, ովքեր չեն ընդունի իսլա-մը»⁹⁴: 1896 թ. հունիսի 10-ին նա արտաքին գործերի նախարարին է ներկայացնում 1895 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ղերջանի կազայում տեղի ունեցած չարագործությունների պատկերն ամփո-փող մի համառոտ աղյուսակ: Ըստ դրանում ամփոփված տեղեկու-թյունների՝ թուրքերը Բագախճում և Խաչիկ-Օղլու Գոմում ներխու-ժել են Եկեղեցի, քահանային վիրավորել, ջորթուրում Եկեղեցին վե-րածել են ախորի, Փիրիսում ներխուժելով Եկեղեցիները՝ դրանք կո-ղոպտել են ու հրկիզել, Աղաթերում ավերել են երկու Եկեղեցի, իսկ Կարաբուլաղում, Խնճրիում, Եսպեզերեկում՝ Սուլթ-Թորոսի և Սուլթ-Դավթի վանքերը»⁹⁵:

1895 թ. նոյեմբերի 12-ին Սուլմարիպան Կամբոնին հաղորդել է համանման տեղեկություններ, ըստ որոնց՝ Սսիսում գինված բնա-կիչները, որոնց հետևել են բնակավայրի գինվորներն ու զափրիե-ները, մուտք են գործել հայկական Եկեղեցի, ոտնահարել սուլթ գործերը, պղծել սուլթ սափորները, հանել քահանայի գլխարկը, որը լցուել են աղբով և մերկացրել նրա կնոջը»⁹⁶:

Դիրավի, ի տարբերություն, պատմության ընթացքում տեղի ունեցած այլ ցեղասպանությունների (օրինակ՝ Երկրորդ համաշ-խարհային պատերազմի տարիներին Շոայի (հրեաների) կամ Պո-րացմոսի (գնչուների), Դայոց ցեղասպանության առանձնահատկու-թյուններից մեկը՝ իրադարձությունների վրա կրոնական զանազա-նության թողած դրոշմն է, որը հայ ժողովրդի ողբերգության պարա-գայում, անտարակույս, ունեցել է էական դեր: Կրոնական գործոնի ազդեցությունը, որն իրավասու չենք շրջանցելու, այդուհանդերձ, միանշանակ չի եղել: Բացի մահմեդականների մոլեռանդությունը սաստկացնելուց, այն պատճառ է դարձել նաև ծավալի առումով ան-նախադեպ զանգվածային բռնի կրոնափոխության համար: Այս իրո-

⁹⁴ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 195.

⁹⁵ Նույն տեղում, էջ 237:

⁹⁶ Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, p. 96.

զությունը ժխտելն անհնար է, իսկ լռության մատնելն անթույլատրելի, թեև Դայոց ցեղասպանության պատմագրության մեջ՝ սոսկ այդ հիման վրա կոտորածներն իբրև լոկ կրոնական հիմք ունեցող իրադարձություն մեկնարանող տեսակետն անընդունելի է և չի աղերսվում պատմական իրականությանը:

Իրոք, իրադարձությունների բազմաթիվ ականատեսների վկայություններում, այդ թվում «Ղեղին գրքում» իրատարակված գեկուցագրերում, արձանագրվել են մեծաքանակ արժանահավատ և անհերթելի փաստեր, որոնք անվերապահորեն վկայում են ցեղասպանության ընթացքում՝ Օսմանյան կայսրության տարբեր վիլայեթներում մահվան դատապարտված հայերի՝ հարկադրաբար դավանանքը փոխելու միջոցով մահվան ճիրաններից բազմիցս խուսափելու մասին: Այդ մասին պարզորոշ վկայում է Անգլիայի դեսպան սըր Ֆիլիպ Կյուրին՝ 1896 թ. մարտի 10-ին Կամբոնին հղած նամակում: Հիմնվելով Բիրեջիկում (Դալեպի տարածաշրջան) գտնվող անգլիացի դիվանագետ Ֆիցմորիսից ստացած տվյալների վրա, նա գրում է. «Կոտորածի օրը բնակեցված էր 240 տուն: Այն բանից հետո, երբ սպանվել են 150 քրիստոնյա՝ 1500-ի հասնող կենդանի մնացած առաքելականները, բողոքականներն ու կաթոլիկներն իրենց իսկ ծնողների արյունաթաքախ դիակների առջև ու ամբոխի ծնշնամք ընդունել են իսլամը: Բիրեջիկում չի մնացել և ոչ մի քրիստոնյա»⁹⁷: Հիմնվելով նույն սկզբնադրյուրի վրա՝ Կամբոնը 1896 թ. մայիսի 14-ին գրում է Դանուտոյին. «Բիրեջիկի տարածաշրջանում արձանագրվել է կրոնափոխության 4300 դեպք, Ուրֆայում՝ 500, Սևերեկում՝ 200, Աղյամանում և շրջակայքում՝ 900, Վերջապես Ալբիստանում և Մարաշի շրջակայքում՝ բազում հարյուրավոր»⁹⁸:

Կրոնափոխությունը զոհերին, ինչպես նշեցինք, պարտադրվել է բռնությամբ: Այդ մասին է վկայում, օրինակ՝ Անգորայում Ֆրանսիայի փոխհյուպատոս Գյուլիուսն: 1895 թ. դեկտեմբերի 18-ին Կամբոնին հղած հաղորդագրության մեջ նա նշում է ահաբեկչության հետևանքով ստեղծված մթնոլորտում այրիացած հայ կանանց, որքացած երիտասարդ աղջիկներին ու երեխաններին հարկադրաբար իսլամն ընդունել տալու՝ ամենամոլեռանդ մահմեդականների տրամադրվածության մասին: Ըստ նրա վկայության՝ մահից խուսափելու համար շատերը համաձայնվել են դիմել կրոնափոխության,

⁹⁷ Նույն տեղում, էջ 90:

⁹⁸ Նույն տեղում, էջ 92:

իսկ նրանք, ովքեր մերժել են՝ կենդանի նետվել են բոցերի մեջ⁹⁹: Իսկ Ուրֆայից՝ Դալեպում Ֆրանսիայի հյուպատոս Պոնյոնին հղված՝ 1896 թ. հունվարի 22-ի թվակիր նամակում այդ առիթով նշվում է. «Բիրեթիկում այսօր չկա գեր մեկ քրիստոնյա: Բոլոր նրանք, ովքեր չեն սպանվել կամ նետվել Եփրատը՝ հարկադրաբար ընդունել են իսլամը»¹⁰⁰:

Կրոնափոխությամբ, սակայն, թուրք ջարդարարների մոլեգմությունն ամենակին չի նվազել: Դավատուրացությունը գուգակցվել է հայ կանանց նկատմամբ գործադրվող անասելի բռնություններով: Ընդ որում, ցեղասպանությունն իրականացնողները կյանքի են կոչել քրիստոնյա կանանց առևանգելու, գերեվարելու և հասարակական վայրերում վաճառելու՝ ստրկատիրական ժամանակներին բռնրոշ վայրագ սովորություն: 1894 թ. Խեկտեմբերի 4-ին Դանութոյին հղած գեկուցագրում Մեյրիեն Սասունում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում, ի թիվս համիդին գորամիավորումների գործած ոճիրների, հիշատակում է աղջիկների առևանգման, նույնիսկ հղի կանանց որովայնի հատման փաստեր: Ըստ նրա տվյալների՝ զոհվել է շուրջ 7500 մարդ, իրո ճարակ դարձել 30 գյուղ և առևանգվել 400 կին, որոնցից 200-ը, պատվազուրկ լինելուց խուսափելու համար, հավանաբար, փորձել է ջրասույզ լինել¹⁰¹: Դեկտեմբերի 18-ին, արտաքին գործերի նախարարին հղած հերթական գեկուցագրում, անդրադառնալով Դիարբեքիրում տիրող իրավիճակին, Մեյրիեն հիշատակում է ջրադրում հիսուն աղջկա և կնոջ առևանգման փաստը և միաժամանակ մանրամասնում, որ գյուղերում առևանգվածների թիվն անհամար է¹⁰²:

Անգորայից Գյուլիուամ՝ 1895 թ. դեկտեմբերի 18-ին հայտնում է Կամքոնին, որ Կեսարիայում իրենց տներից ու հասարակական բաղնիքներից քշված մեծ թվով մերկ կանայք և երիտասարդ աղջիկներ անարգվել են, այնուիետև՝ կոտորվել փողոցներում կամ առևանգվել¹⁰³:

Կոտորածների ծավալմանը գուգընթաց՝ իրավիճակն աստիճանաբար բարդացել է: Ալեքսանդրետում Ֆրանսիայի փոխհյուպատոս

⁹⁹ Նույն տեղում, էջ 114:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 50:

¹⁰¹ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 16.

¹⁰² Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, p. 33.

¹⁰³ Նույն տեղում, էջ 114:

ԼոնգՎիլը՝ 1896 թ. հունվարի 3-ին տեղեկացնում է Կամբոնին ոչ միայն Ուրֆայում դեկտեմբերին ջարդերի վերսկսման, այլև Պայաս տարածաշրջանում քրիստոնյա կանանց վաճառքի մասին. «Եթեք երիտասարդ կանայք բռնությանք տարվել են Ուզերլի գյուղի խոջայի մոտ, երկու այլ կանանց գնել է Դոելի-Առլի անունով մի մահմեդական առևտրական՝ յուրաքանչյուրի համար վճարելով քան թուրքական ոսկի... Վեցերորդ երիտասարդ աղջկան վաճառել են կանոնավոր բանակի գինվորները Դորուկում»¹⁰⁴:

1896 թ. հունիսի 10-ին Կամբոնը Ջանոտոյին իրազեկում է Դերջանի կազայում 1895 թ. հոկտեմբեր-նոյեմբերին հայ կանանց նկատմանք գործադրված տարբեր բռնությունների մասին: Ըստ նրա՝ Քյոթուրում և Ապրանքում բազմաթիվ կանանց առևանգել են ու բռնաբարել, իսկ Դվնիկում, Աստոյի Գոմում, Մանթառայում և Կարաբուլաղում երիտասարդ կանանց և աղջիկների գերակշռող մասին բռնաբարել¹⁰⁵:

Ըստ Ուրֆայից Ֆրանսիայի հյուպատոսին հղված՝ 1896 թ. հունվարի 22-ի թվակիր նամակի, այնտեղ և Բիրեջիկում հասարակական վայրերում շարունակվել է չնչին գներով կանանց և երիտասարդ աղջիկների վաճառքը¹⁰⁶:

Ֆրանսիացի դիվանագետների գեկուցագրերը պարզորոշ վկայում են, որ ստրկավաճառությունն ավելի լայն տարածում է գտել Ջալեպի վիլայեթում: Այդ հարցի շուրջ՝ 1896 թ. նոյեմբերի 10-ին Ջալեպից, Կամբոնին հավաստի տեղեկություններ է հաղորդել Պոնյոնը, ըստ որոնց՝ Դիարբեքիրում, Ուրֆայում և այն վայրերում, ուր կոտորածներ են արձանագրվել, առևանգված երիտասարդ հայ աղջիկները, մի քանի ամսից ի վեր, գրեթե հրապարակայնորեն վաճառվել են Ջալեպի Բաբ-Ներաբի քաղանասում: Դյուպատոսը, որը հնարավորությունից գուրկ է եղել հստակեցնելու վաճառված երիտասարդ աղջիկների նույնիսկ մոտավոր թիվը, այս կապակցությանք խստիվ դատապարտել է օսմանյան իշխանություններին: Վերջիններիս իրազեկությունը քրիստոնյաների վաճառքին նա համարել է «գրեթե հավաստի», սակայն, միաժամանակ, ցավով արձանագրել, որ նրանք

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 103:

¹⁰⁵ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 237.

¹⁰⁶ Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, p. 50.

ոչինչ չեն ծեռնարկել ստրկավաճառությանն ընդդիմանալու համար¹⁰⁷:

Դայոց ցեղասպանության պատմությանն առնչվող հիմնահարցերը «Դեղին գրքի» վակերագրերում լուսաբանվում են լայն կտրվածքով, ինչը հնարավոր է դարձնում խտակ պատկերացում կազմել օսմանյան իշխանությունների՝ կոտորածների պատասխանատվությունն ամբողջությամբ հայ ազգարնակչության վրա բարդելու՝ ի սկզբանե ի հայտ բերած արատավոր միտումի մասին: Կամքոնի հարցումին, թե արդյո՞ք ստույգ է այն տեղեկությունը, ըստ որի՝ Դիարբեքիրում հայերը ներխուժել են մզկիթներից մեկը և դարձել առօճակատման պատճառ, 1895 թ. նոյեմբերի 2-ին Մեյրիեն պատասխանել է. «Մահմեդականներն այս կոտորածին նախապատրաստվում էին վաղուց ի վեր. նրանք այն իրականացրել են կամովին և որևէ սադրանք դրա պատճառ չի դարձել: Ինչ վերաբերում է հայերի մզկիթ ներխուժելու վարկածին, ապա այն չի հանապատասխանում իրականությանը»¹⁰⁸: Անգորայում 1896 թ. սեպտեմբերին բռնկված հրդեհի առիթով, Կամբոնը տեղեկացնում է Դանուսոյին, որ օգտվելով պատեհ առիթից զինված մահմեդականները նետվել են դեպի քրիստոնյաների բաղամասը, մեղադրել հայերին մզկիթը հրկիցելու մեջ և Վրեժխնդրության կոչել¹⁰⁹:

Այս ստոր գործելամիջոցին թուրքերը դիմել են հաճախ, ուստի, բնականաբար, այն պարբերաբար գրավել է ֆրանսիացի դիվանագետների ուշադրությունը, բայց դրա պատճառները լավագույնս մեկնաբանել է Սուլմարիպան: Թուրքերի՝ Զեյթուն մուտք գործելուն հաջորդած իրադարձությունների առիթով Կամբոնին հղած՝ 1896 թ. հունվարի 3-ի թվակիր գեկուցագրում նա նշում է. «Դամառելով հայերի ապստամբության շուրջ, կառավարությունն օգտագործում է իր միակ զենքը. այն է՝ ջանում է Եվրոպային համոզել իր անառարկելի իրավասության մեջ (հայերի ապստամբությունը ճնշելու հարցում – Վ. Պ.) և իր գործին զորավիճ լինելու համար անհրաժեշտ է համարում զեյթունցիների վրա բարդել այն վայրագությունների պատասխանատվությունը, որոնք գործելու սովորույթ միայն թուրքերն ունեն»¹¹⁰:

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 123-124:

¹⁰⁸ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 169.

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 269:

¹¹⁰ Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, p. 61.

Հայերի նկատմամբ բուռն ատելությունն, անշուշտ, բոլոր թուրք պաշտոնյաներին չէ բնորոշ եղել: Նրանցից ոմանք սատարել են իրենց ենթակայության ներքո գտնվող հայ հպատակներին, պաշտպանել նրանց իրավունքները, խոշնողութել, իրենց սահմանափակ հնարավորությունների սահմաններում, կուտորածների ծավալմանը: Դա փաստվում է նաև «Ղեղին գրքում» գետեղված որոշ գեկուցագրերում:

1895 թ. հոկտեմբերի 4-ին Էրզրումից Բերժերոնը Կամբոնին հաղորդում է կուսակալի ծեռնարկած «անհրաժեշտ միջոցառումների» մասին, որոնք նպաստել էին խուսափելու տարրեր բնույթի պատահարներից¹¹¹: 1896 թ. հունիսին Կամբոնը տեղեկացնում է Ղիարբեցիրում նոր կոտորածների՝ գրեթե բացահայտորեն տեղի ունեցող նախապատրաստությունների խափանմանը միտված՝ տեղի գինվորական հրամանատար Զիա փաշայի գործողությունների մասին¹¹²: Վերը հիշատակված՝ 1896 թ. սեպտեմբերին Անգորայում բռնկված հրդեհի առիթով քաղաքում տեղի ունեցած հոլովումների ընթացքում, ցատ Կամբոնի հավաստման՝ տեղի կուսակալ Թևֆիկ փաշան, ցուցաբերել է մեծ եռանդ և զսպել խռովարաններին¹¹³: Միևնույն փաստն է արձանագրում նաև Գյուլիլուան, որն Անգորայի կուսակալի ծեռնարկած միջոցառումները համարում է շահավետ. «Ղիրավի,- նշում է նա, - անմիջապես ոտքի են հանվել ամբողջ զորքը, ոստիկանությունը և ժանդարմերիան, ծեռնարկվել են նախազգուշական ամենավճռական միջոցառումներ..., սպաներն ու գինվորները «սուլթանի անունից» փողոցներում կոչ են արել մահմեդական բնակչությանը թույլ չտալ կարգի որևէ խախտում»¹¹⁴:

Ինչպես տեսնում ենք, «Ղեղին գրքում» Հայոց ցեղասպանության առաջին փուլին առնչվող իրադարձությունները լուսաբանվում են, հիրավի, ընդարձակ հենքի վրա¹¹⁵: Դրանում գետեղված դիվա-

¹¹¹ Նույն տեղում, էջ 15:

¹¹² Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 241.

¹¹³ Նույն տեղում, էջ 296:

¹¹⁴ Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, p. 115.

¹¹⁵ «Ղեղին գիրքն» ամփոփում է նաև այլազգի քրիստոնյաների, մասնավորապես Եվրոպացի հոգևորականների կոտորածներին առնչվող փաստեր, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի համար Եվրոպացի ղիվանագետների մշակած բարենրոգումների տարրեր նախագծեր, որոնք օսմանյան վարչակարգը երթև չի կենսագործել: Այդ մասին մանրամասն տե՛ս Վ. Պողոսյան, Ֆրանսիական տպագիր սկզբանդրյութները 1894-1896 թթ. հայկական կոտորածների մասին. - Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2004, թիվ 9, էջ 110-111:

Նազիտական գրագրություններից առավել արժեքավոր են, անտարակույս, Կամբոնի գեկուցագրերը, որոնք խարսխվում են գերազանցապես զանազան նահանգներում գտնվող ֆրանսիացի դիվանագետներից ստացված հավաստի տեղեկությունների վրա: Ինչպես իրավամբ նշել է իրադարձությունների ժամանակակից Լյուտովիկոս դը Կոնտանտոնը՝ Կամբոնն «ամիս առ ամիս, իսկ երեմն օր առ օր, մեզ տեղեկացնում է արյունալի ողբերգության մանրամասներին»¹¹⁶: Նրա անաշառ գեկուցագրերն, իրոք, բացահայտում են առաջին հերթին օսմանյան իշխանությունների դեկավար դերն արևմտահայության բնաջնջման գործընթացում և աներկայորեն հավաստում հայ բնակչության նկատմամբ գործադրված զանգվածային բոնությունները: Ֆրանսիական կառավարության թրքամետ քաղաքականության ետնախորքի վրա Կամբոնի դիրքորոշումը կարելի է բնորոշել իբրև Խիզախում¹¹⁷: Կամբոնի՝ ֆրանսիական կառավարության քաղաքականությանն անհարիր սկզբունքային վարքագիծը, որը եզակի երևույթ է դիվանագիտության պատմության մեջ, առաջ է բերել Դամուտոյի զայրույթը, որն այդ արիթրով 1898 թ. իր դժգոհությունն է հայտնել նրա եղբորք՝ դիվանագետ Ժյուլ Կամբոնին: Նշենք նաև, որ Պոլ Կամբոնի ամինազանդությունը Դամուտոյին՝ դարձել է նախարարի՝ 1897 թ. կառավարությանը ներկայացրած հրաժարականի պատճառներից, որն, ի դեպ, մերժվել է¹¹⁸: Ուստի իրավացի է Վ. Տատրյանը, որը Կամբոնին բնութագրում է իբրև «այլախոհ դեսպանի» և «այլախոհ դիվանագետի»¹¹⁹: «Կամբոնը, – գրում է նա, – եզակիներից էր, որն ի հայտ է բերել այդշափ արիթրուն՝ իր կառավարությանը հաղորդելով 1894-1896 թթ. ընթացքի մեջ գտնվող կոտորածի «սարսափազդու» իրողությունները»¹²⁰: Բացի դրանից,

¹¹⁶ L. de Contenson, *Les réformes en Turquie d'Asie. La question arménienne. La question syrienne*. Deuxième édition, Paris, 1913, p. 24.

¹¹⁷ Նրա հայանապատ գործունեության մասին տե՛ս L. Villate, նշվ. աշխ., էջ 157-166:

¹¹⁸ Նույն տեղում, էջ 173:

¹¹⁹ V. Dadrian, նշվ. աշխ., էջ 161:

¹²⁰ Նույն տեղում, էջ 169: Դարկ է նշել, որ այս ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում գտնվող ֆրանսիացի դիվանագետների և գործակալների վարքագիծը բարձր գնահատականի է արժանացել դեռևս իրադարձությունների ժամանակակից մի քանի նշանավոր պատմաբանների կողմից: Նրանց թվում Ա. Վանդալը հավաստել է, որ «ֆրանսիացի հյուպատոսներն արել են այն ամենը, ինչ հարկ է, որ արվեր և փրկելով քաջարիկ մարդկային կյանքեր՝ իրենց անունները պահպան կատարվում»: Տե՛ս Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M. Albert Vandal, p. 17: Էռեստ Լավիսը նրանց վարքագիծը համարել է «քաջարի» և «հերոսա-

խոսելով Կամբոնի հայանպաստ գործունեության մասին, հարկ չկա անտեսելու, որ նա անձանք կանոնավորապես իրականացրել է տարբեր ոճիրների բացահայտմանը միտված հետաքրնություններ, հանձնարարել իր ենթակայության ներքո գտնվող՝ Օսմանյան կայսրության տարբեր բնակավայրերում հավաստարմագրված ֆրանսիացի դիվանագետներին հաղորդել այն բոլոր անցքերի մասին, որոնց ականատեսը նրանք կդառնան, խրախուսել է զոհերին հովանավորելու համար նրանց գործադրած ջանքերն ու հավաստիացրել, որ անհրաժեշտության դեպքում կարող են ապավինել իր օգնությանը¹²¹.

Թեև Ֆրանսիայի դեկավար շրջանակների և, մասնավորապես, թրքամետ Դանուսոյի ջանքերի շնորհիվ արտաքին գործերի նախառարության արխիվում պահվող մեծ թվով վավերագրեր «Դեղին գրքում» գիտակցաբար չեն ընդգրկվել, իսկ ամփոփված փաստաթղթերի մի մասը հրատարակվել է կրօնական մերուկ¹²², ժողովածուն, այդուհանդերձ, համիլյան կոտորածների պատմության շուրջ հաղորդում է բազմաբնույթ տեղեկություններ, որոնք մեծապես

կան» (տե՛ս E. Lavisse, Note sur le Livre Jaune // « Revue de Paris », livraison du 15 mars 1897, p. 452): Այս փաստը հավաստել են նաև իրադարձությունների այլ ժամանակակիցներ. «Մեր հյուպատոսները փոթորկի ժամանակ առաջինն են վտանգի ենթակվել, վերջիններն են խորհեց հանգստի մասին». – Եշում է աբրա L. Գոնդալ. L. Gondal, La Question arménienne // « Annales catholiques », 6 mai 1896, N 1283, p. 51.

Տե՛ս նաև L. Selosse, La question arménienne // « Revue de Lille », 1897, p. 538:

¹²¹ V. Duclert, Աշխ., էջ 51-52:

¹²² Այսօր ամրողական տեսքով հրատարակվել են միայն Դիարբեքիրում Ֆրանսիայի փոխհյուպատոս Գ. Սեյրիի գեկուցագրերը: Տե՛ս G. Meyrier, Les massacres de Diarbékir. Correspondance diplomatique du Vice-Consul de France 1894-1896. Présentée et annotée par C. Mouradian et M. Durand-Meyrier, Paris, 2000 (այս հրատարակության մասին մանրամասն տե՛ս Վ. Պողոսյան, Գուտապէ Մեյրին համիլյան կոտորածների մասին. – Ղայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2004, թիվ 9, էջ 152-159): Կրօնական մանրամասնը, անտարակույս, չի վրիպել ժամանակակիցների ուշադրությունից: Դարձ է առանձնացնել է. Լավսիխն, որը խարազանում է Ֆրանսիայի դեկավար շրջանակների և, մասնավորապես, Դանուսոյի պարսակելի դիրքորոշումն այս հարցում և ապացուցում, որ փաստաթղթերի ընդգրկման առումով «Դեղին գիրքը» մեծապես զիջում է «Կապույտ գրքին»: Տե՛ս E. Lavisse, Աշխ. աշխ., էջ 443-456: Տե՛ս նաև Առյօնի՝ La paix d'Orient // « Revue de Paris », livraison du 15 février 1898, p. 865: Դանուսոյի վարքագիծը խստագույնս դատապարտել են նաև արևմտահայության ցերմեռան պաշտպաններից, սոցիալիստներ Ժ. Ժորեսը և Ֆ. Պո Պրեսսաննեն: Տե՛ս Œuvres de Jean Jaurès. Pour la paix. T. I. Les alliances européennes (1887-1903). Textes ressemblés, présentés et annotés par Max Bonnafous, Paris, 1931, մ. 131; Pour l'Arménie et la Macédoine, բ. 40: Նրանց հայանպաստ գործունեության մասին տե՛ս սույն գրքի երրորդ գլուխ առաջին ներազիւում:

նպաստել են Հայոց ցեղասպանության շուրջ Եվրոպացի ժամանակակիցների պատկերացումների ընդլայնմանն ու հստակեցմանը¹²³:

2. 1894-1896 թթ. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏՊԱԳԻՐ ԱՅԼ ՍԿԶԲՆԱՂՅՅՈՒՐՆԵՐԸ

«Դեղին գրքից» զատ, Ֆրանսիայում հրատարակվել են նաև Եվրոպացի և հայ ականատեսների վկայություններ պարունակող ժողովածուներ: Բացի այդ հրատարակություններից, մեր տրամադրության տակ ունենք ևս մեկ, սակայն, կարևոր սկզբնաղբյուր՝ Սեբաստիայում Ֆրանսիայի փոխհեյուպատոս Մորիս Կարլիեի տիկնոց՝ Եմիլի Կարլիեի օրագիրը:

Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված փաստաթրերի ժողովածուների թվում առանձնահատուկ ուշադրության է արժանի 1896 թ. Փարիզում լույս ընծայված «Հայաստանի կոտորածները. ականատեսների վկայություններ» խորագիրը կրող գիրքը¹²⁴, որի առաջարանում անվանի քաղաքական գործիչ ժորժ Կլեմանսոն (1841-1929) տվել է ջարդարարների անաշառ գնահատականները¹²⁵: Տարբեր նահանգներում արևմտահայերի ցեղասպանության հիմնական դրվագներն արտացոլող փաստաթրերի այս ժողովածուներ գետեղվել են Արևմտյան Հայաստանի (Երզրում, Երզնկա, Մալաթիա, Արարկիր, Վան, Ուրֆա, և այլն), ինչպես նաև

¹²³ Տե՛ս օրինակ F. Jellicx Charmetant, Le Livre jaune et la question d'Orient // « Revue diplomatique et coloniale », 1897, N 1, du 1^{er} mars ; P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie // « Revue des revues », livraison du 15 octobre 1901:

¹²⁴ Les massacres d'Arménie. Témoignages des victimes. Préface de G. Clemenceau, Paris, 1896. Սույն ժողովածուն, ի դեպ, տպագրության է պատրաստել Ա. Չոպանյանը, որի անունը, սակայն, հրատարակիչները որևէ տեղ չեն հիշատակել, հավանաբար, նրան հարվածի տակ չդնելու անհրաժեշտությունից դրվագ: Այդ մասին տե՛ս Կ. Լ. Ղալլաքյան, Արշակ Չոպանյան, Երևան, 1987, էջ 94-95; E. Khayadjian, նշվ. աշխ., էջ 57: Նշենք, որ այս գրքում ամփոփված փաստաթրերի մասին անստորագիր, ընդարձակ հաղորդագրություն է տպագրվել «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուներ, որը հետագայում մասնակի կրօնատումներով վերահրատարակվել է նաև «Հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում» փաստաթրերի ժողովածուն: Պահանջման առաջնահայտությունում՝ փաստաթրերի ժողովածունը:

¹²⁵ G. Clemenceau, Préface.— Les massacres d'Arménie. Témoignages des victimes, p. 5-18. Կլեմանսոնի առաջարանի և նրա հայանպատ գործունեության մասին տե՛ս սույն գրքի երրորդ գլուխ առաջին ենթագլուխում:

Կիլիկիայի քսան քաղաքից ստացված՝ հայ ականատեսների անստորագիր նամակները¹²⁶, որոնք հնարավորություն են ընձեռում ամբողջական պատկերացում կազմել համդիյան կոտորածների ընթացքում օսմանյան կառավարության՝ արևմտահայության նկատմամբ կիրառած քաղաքականության հիմնական առանձնահատկությունների մասին:

Դրաստարակված նամակների հեղինակները ցեղասպանությունն անվարան դիտում են իրեւ պետական քաղաքականությամբ պայմանավորված իրադարձություն, քազմից նատնանշում հատկապես տեղական իշխանությունների դերն արևմտահայության ողբերգության գործընթացում: Այսպես, Տրապիզոնից ստացված՝ 1895 թ. հոկտեմբերի 12-ի թվակիր նամակի հեղինակն ընդգծում է, որ արտաքուստ հայերի ապահովությունը երաշխավորող տեղի կուսակալը և պաշտոնական այլ անձինք ստախոսության և կեղծիքների միջոցով թուրք խաժամուժին բացահայտորեն դրդում էին նշված ժամին հարձակվելու հայերի վրա: «Թուրքերին բաժանում են խմբերի և կառավարությունը նրանց հրացաններ, ատրճանակներ, փանփուշտներ և այլ գենքեր է հատկացնում»:— Նշվում է նամակում: Ըստ նամակագրի՝ շրջապատված թուրք երլուգակներով, կուսակալը ժամանել է հայկական քաղանաս և անձամբ հրահանգներ տվել, մատնանշելով նրանց, մասնավորապես, հարուստներին, ում հարկ էր սպանել¹²⁷:

1895 թ. հոկտեմբերին երգրումում տեղի ունեցած ջարդերի առիթը ականատեսը հաղորդում է, թե ինչպես են՝ «կոտորեք գյավուրներին, ոչնչից մի երկյուղեք» կոչերով, թուրք բարձրաստիճան պաշ-

¹²⁶ Փաստաթերթը հրատարակվել են անստորագիր, քանզի, հակառակ պարագայում, օսմանյան իշխանությունները, անտարակույս, դաժան հաշվեարդար կտսենեին Արևմտյան Դայաստանում բնակվող դրանց հեղինակների հետ: Դամբատության կարգով նշենք, որ 1916 թ. Լոնդոնում «Դայերի նկատմամբ Վերաբերմունքն Օսմանյան կայսրությունում (1915-18 թթ.)» փաստաթերթի ժողովածուի լույս ընծայման պարագայում ևս, Զ. Բրայսն ու Ա. Թոյնրին միևնույն պատճառով որդեգրել են փաստաթերթի հրատարակության այս սկզբունքը: 2000 թ. Արա Սարաֆյանը, սակայն, իրականացրել է սույն ժողովածուի վերահրատարակությունը, ուր, ըստ Թոյնրիի արխիվում պահպանված դրա նախնական սևագիր տարբերակի՝ մատնանշված են վավերագրերի ծագման վայերը և ճշգրտված դրանցից շատերի հեղինակների ինքնությունները: Sir J. Bryce and A. Toumanoff, *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916. Documents Presented to Viscount Grey of Falloden by Viscount Bryce, edited and with an introduction by Ara Sarafian*, Princeton, 2000:

¹²⁷ Les massacres d'Arménie. Témoignages des victimes; p. 25, 27.

տոնյաները հրահրել ամբոխին սպանելու հայերին¹²⁸: Դեպքերի ականատեսները Սղերդից և տեղեկացնում են, որ քաղաքում ու նրա շրջակայքում պաշտոնատար անձինք քաջալերում էին թուրք խաժանութին և քուրդ հրոսակներին, ինչպես նաև նպաստում նրանց աղետարեր նոլուցը սանձազերծմանը¹²⁹: Խարբերդում և շրջակա գյուղերում տեղի ունեցած սարսափելի հրադարձությունները, ինչպես հավաստում է այստեղից ստացված նամակներից մեկի հեղինակը, «Ճավալվել են վերից տրված հրամանի հիման վրա, որը մաքիավելիական գործելամիջոցներով կենսագործել են գլխավոր կառավարչի պաշտոնակատար Մուստաֆա փաշան և զինվորական հրամանատար Ռադիր փաշան»: Եզրափակելով, նամակի հեղինակը ևս մեկ անգամ ընդգծում է այն մեծ պատասխանատվությունը, որը ստեղծված իրավիճակում բարդվում է նահանգային իշխանությունների վրա¹³⁰:

Արաբկիրից 1895 թ. դեկտեմբերի 26-ին գրում են տեղական իշխանությունների՝ կոտորածների նախապատրաստության գործում ունեցած դերի, նաև նավորապես թուրք բնակչությանը զենք և ռազմանթերք բաժանելու նասին: Կոտորածից երկու օր առաջ, ինչպես նշվում է նամակում, բանագնացներն այցելել են Արարկիրի բոլոր գյուղերը և փողոցներում հայտարարել, որ բոլոր նրանք, ովքեր Մուհամեդի զավակներն են պարտավոր են անմիջապես կատարել իրենց պարտքը, այն է՝ սպանել բոլոր հայերին և կողոպտել ու հրկիցել նրանց տները. «Ոչ մի հայ չպետք է խնայվի. այսպիսին է Պալեի՝ հրամանը... Ինչպես տեսնում ենք, – Եզրակացնում է նամակագիրը, –

¹²⁸ Նույն տեղում, էջ 52:

¹²⁹ Նույն տեղում, էջ 83:

¹³⁰ Նույն տեղում, էջ 122, 138-139:

* Խոսք Վերաբերում է, ի տարրերություն Բարձր Ղոանը, Արդուլ Չամիդ II-ի գաղափարներն ընդունած ու նրա շուրջ համախմբված համախոհների հանցախմբին, որը հաստատվել էր Ելղզ-Քյոշքում և 1890-ական քվականների կեսերից ի վեր իր ծեռօքում կենտրոնացրել օսմանյան պետության դեկավարման զսպանակները: Չանոտոյին հղած՝ 1895 թ. հունիսի 12-ի քվակիր զեկուցագրում, Կամրոնն այս առնչությամբ պետությունում ստեղծված կացությանը տվել է հետևյալ հայիրը և ընդգրկուն զնահատականը. «Կարելի է ասել, որ չորս տարուց ի վեր կառավարությունը Ղանից տեղափոխվել է Պալե... Ես ավելի քան մեկ անգամ առիթ եմ ունեցել հավաստելու... Ղոան անզորությունն ամենաստրահան գործակալներին իր կամքը պատասխելու հարցում»: *Sé's Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman*, p. 77; Այդ մասին մանրամասն տես L. Selosse, Աշկ. աշխ., էջ 306-607; F. Georgeom, *Abdülhamid II. Le sultan calife (1876-1909)*, Paris, 2003, p. 148-152:

իսկական մեղավորը կառավարությունն է, որն արծակել է այս հրեշավոր հրամանը»¹³¹:

Զննարկելով ցեղասպանությանն առնչվող հիմնախնդիրները՝ վավերագրերի հեղինակներն անդրադառնում են օսմանյան կառավարության հայահալած քաղաքականության այլևայլ դրսերումներին: Դիշատակենք զանազան նահանգներում կոտորածների պատասխանատվությունը հայերի վրա բարդելուն վերաբերող բազմաթիվ փաստերից մի քանիսը: Ըստ ականատեսներից մեկի վկայության՝ կառավարության ներկայացուցիչները Տրավիզոնում թուրք բնակչությանը գրգռելու նպատակով հայտարարել են, թե հայերը՝ անգլիացիների հետ մեկտեղ ցանկանում են տապալել Օսմանի հարստությունը և վերացնել իսլամը¹³²: Գրեթե միևնույն իրավիճակն է տիրել Երզնկայում, որտեղ, ինչպես վկայում է դեպքերի ականատեսներից մեկը, թուրք պաշտոնյան ջանացել է ապացուցել, թե «կոտորածի սադրիչները եղել են հայերը» և նրանց ներկայացնել իրքն կառավարության դեմ ապստամբելու և թուրքերի վրա հարձակվելու ցանկություն ունեցողների¹³³: Իսկ Բիթլիսում, ըստ նամակագրի հավաստման՝ ոստիկանությունը ծերբակալել է հայերին և նրանց մեղադրել կոտորածներ հրահրելու մեջ: Բացի դրանից, խոշտանգումների ենթարկված հայերը հարկադրաբար հեռագիր են ուղարկել կենտրոնական իշխանություններին, որով ստանձնել են տեղի ունեցած անկարգությունների պատասխանատվությունը և «խոստովանել», թե իբր իրենք են դրանք հրահրել¹³⁴: Նույնպիսի փաստեր են արձանագրվել նաև Արարկիրից ստացված նամակներում, ուր հայ բանտարկյալներին ստիպել են ստորագրել համաննանքությի ստահող փաստաթորթերի տակ¹³⁵:

Բազմաթիվ նամակների հեղինակների անդրադառնել են նաև բանի կրոնափոխությանը: Ըստ նամակներում հիշատակված փաստերի՝ բանի կրոնափոխության բազում դեպքեր են արձանագրվել Բաբերդում (Բայրութ), Բիթլիսում, Սղերդում, Սուշում, Խարբերդում, Արարկիրում և այլուր: Վաճի վիլայեթում քրիստոնեական հավատքից հրաժարվել են՝ Խիզանում՝ 648, Սպարկերտում՝ 571,

¹³¹ Les massacres d'Arménie. Témoignages des victimes, p. 143-144.

¹³² Նույն տեղում, էջ 25:

¹³³ Նույն տեղում, էջ 52:

¹³⁴ Նույն տեղում, էջ 72, 77:

¹³⁵ Նույն տեղում, էջ 146, 149:

Մամրտանքում՝ 244, Գաղգառում՝ 477 ընտանիքների բնակիչներ¹³⁶: Բալուում և Հիսնի-Մանսուրում՝ մահվան սպառնալիքի տակ, հայերին հարկադրել են ուրանալ հավատքը, իսկ Մուշի տարածքում նույնիսկ քահանաներին են պարտադրել ընդունել իսլամը¹³⁷:

Նամակներում արտացոլված առանցքային խնդիրներից է նաև կանանց հանդեպ կիրառված բռնությունների իրողությունը: Ըստ նամակագիրներից մեկի Վկայության՝ Մուշում կանանց և աղջիկների առևանգումը դարձել էր սովորական երևոյթ¹³⁸: 1895 թ. աշնանը Բալուից տեղեկացնում են, որ բնակչության ընդհանուր թվում՝ բռնությունների ենթարկված կանանց թիվը հասնում է 60-ից 70 տոկոսի¹³⁹: Բացի այդ, նամակագիրներից շատերը շեշտում են նաև հայ կանանց՝ թուրքերին բռնությամբ կնության տալու հանգամանքը: 1895 թ. դեկտեմբերին, օրինակ, Խարբերդից գրում են. «Առեվանգված երիտասարդ կանայք և կույսերը ենթարկվել են ամենավատթար բռնությունների և հարկադրաբար ամուսնացել թուրքերի հետ»¹⁴⁰: Նույն է հավաստում նաև Արաքիրի բնակիչներից մեկը, որը 1895 թ. նոյեմբերին հաղորդում է երիտասարդ աղջիկների և այրիացած կանանց՝ սպառնալիքի տակ հարկադրաբար կրոնափոխ լինելու, իսկ այնուհետև թուրքերի հետ ամուսնանալու մասին¹⁴¹:

Թեև ներկա ժողովածուն ամփոփում է լոկ հայկական ծագում ունեցող փաստաթղթեր, այդուհանդերձ, այն ևս համիլյան կոտորածների պատկերը մանրանասնորեն և անաչառ ներկայացնող սկզբնադրյուր է: Նկատենք, որ այն արձագանքների է արժանացել Փրանսիական մանուլում և մեծապես նպաստել միջազգային հասարակական կարծիքի ուշադրությունը հայկական կոտորածների վրա գամելու¹⁴²:

Դարկ է չանտեսել մեկ այլ ժողովածու ևս, որը հրատարակվել է անանուն հեղինակի աշխատասիրությամբ (հավանաբար Վերը

¹³⁶ Նույն տեղում, էջ 96-97:

¹³⁷ Նույն տեղում, էջ 196, 221:

¹³⁸ Նույն տեղում, էջ 89:

¹³⁹ Նույն տեղում, էջ 191:

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 127:

¹⁴¹ Նույն տեղում, էջ 165:

¹⁴² St's Ռոգր Կեղծանվամբ տպագրված՝ Քիառի գրախոսությունը. M. L. Rogre, Les massacres d'Arménie. Quelques documents et remarques en l'honneur de sultan Abdul-Hamid, de la civilisation européenne et de l'alliance franco-russe // « Mercure de France », septembre 1896, p. 385-403. Արձագանքների մասին մանրանասն տե՛ս Ե. Khayadjian, նշվ. աշխ., էջ 60-62:

նշված պատճառով) և ընդգրկում է քաղվածքներ ֆրանսիական տարբեր պարբերականներում («Լ'Արմենի», «Ույու դ'Օրիհան», «Ույու դ'Օրիհան քրետիեն») լույս ընծայված հոդվածներից¹⁴³: Առաջարանում անանուն հեղինակը տվել է Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակի հետևյալ հակիրճ գնահատականը. «Այն ժամանակ, եթե թուրք Կոստանդնուպոլիսում հաճոյանում է Եվրոպային և նրան ծեռք մեկնում՝ տալով հազարավոր խոստումներ, որոնք կատարելու մտադրություն ամենակին չունի, կենտրոնական նահանգներում, Դայաստանում, արյան մեջ սուզված՝ սպանում է, կոտրում, հրկիզում և քռնաբարում»¹⁴⁴:

Առաջարանում հեղինակը հայկական կոտորածներն, իրավամբ, քննարկում է օսմանյան կառավարության՝ կայսրության տարածքում բնակվող զանազան ժողովուրդների նկատմամբ կիրառած ցեղասպան քաղաքականության ետնախորքի վրա, որը նրա մոտեցման առավելությունն է: Ըստ նրա՝ օգտվելով մեծ տերությունների միջև առկա տարածայնություններից, թուրքերը ոչ միայն հմտորեն ժխտում են իրենց դժնի արարքները, այլև հայերին մեղադրում քրդերի և այլոց գործած բարբարոսությունները հրահրելու համար: «Այսպիսին է տարիներ ի վեր տեղի ունեցող այն մռայլ կատակերգությունը, որի գոհը դարձել են հայերը, ինչպես նախկինում հույները, Լիբանանի մարոնիտները, իսկ ավելի ուշ՝ բուղարացիները»¹⁴⁵:

Ժողովածուն ամփոփում է 1895-1896 թթ. Արևմտյան Դայաստանում, Կիլիկիայում և Կոստանդնուպոլիսում տեղի ունեցած կոտորածներին վերաբերող հաղորդագրություններ, որոնց հեղինակների անունները չեն հրապարակվում: Բացի դրանից, այստեղ տպագրվել են նաև տեղեկատվական բնույթի հաղորդումներ պատմաբան Անատոլ Լերուա-Բոլիոյի, հոգևոր գործիչներ հայր Շարմետանի և աբբա Պիզանիի՝ համիլյան կոտորածներին նվիրված հրապարակային դասախոսությունների վերաբերյալ¹⁴⁶:

Սույն ժողովածուի գիտական արժեքը նվազ նշանակալից է, քանզի խոսքը վերաբերում է ֆրանսիական մամուլում արդեն տպագրված նյութերի վերատպությանը: Այդուհանդերձ, այն ևս նապաստել

¹⁴³ La vérité sur les massacres d'Arménie. Documents nouveaux ou peu connus. Par un Philarmène, Paris, 1896.

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 5-6:

¹⁴⁵ Նույն տեղում, էջ 6:

¹⁴⁶ Այդ մասին մանրամասն տես՝ սույն գրքի երկրորդ գլխի առաջին ենթագլխում և երրորդ գլխի երրորդ ենթագլխում:

Է ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՍՄԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԺԱՅԻՆ ԿՈՄՊ-
ՐԱԾՆԵՐԻՆ ԻՐԱՋԵԿԵԼՈՒ ԳՈՐԾԻՆ:

Դամիդյան կոտորածների պատմության առնչվող արժեքավոր
սկզբնադրյուրների թվում ուրույն տեղ են գրադեցնում հայր Ֆելիքս
Շարմետանի հրատարակած փաստաթրերի ժողովածուները¹⁴⁷:

Վերոնշյալ ժամանակաշրջանում Ֆրանսիայում լույս ընծայված՝
հայկական կոտորածների պատմությունը լուսաբանող սկզբնադր-
յուրներից է նաև 1895-1896 թթ. Սեբաստիայում Ֆրանսիայի փոխ-
հյուպատոս Սորիս Կարլիեի տիկնոց՝ եմիլի Կարլիեի օրագիրը¹⁴⁸:
Գրառումներն սկսելով 1895 թ. օգոստոսին, ամուսնու հետ Սեբաս-
տիա ժամանելուց անմիջապես հետո, տիկին Կարլիեն մինչև 1896
թ. մարտի կեսերը բարեխողորեն արձանագրել է քաղաքում և մա-
սամբ նաև դրա շրջակայքում ծավալված իրադարձությունների ըն-
թացքը:

Առաջին իսկ գրառումներում Կարլիեն թեպետ տարակուսանք է
հայտնում Կանից ստացված՝ քրիստոնյաների կոտորածին վերաբե-
րող լուրերի հավաստիության շուրջ, այդուհանուրք, հղելով Գլադ-
ստոնի՝ Աբդուլ Դամիդին տված «մեծ մարդասպան» հակիրճ
բնութագիրը, եղրակացնում է, որ նրանից ամեն ինչ սպասելի է¹⁴⁹:

1895 թ. նոյեմբերին, դեռևս կոտորածների ծավալման առաջին
օրերին, Կարլիեն հերքում է հայերի կարծեցյալ ապստամբությանն
առնչվող վարկածը: Այս առումով, հետաքրքրական է նոյեմբերի 5-ի
նրա գրառումը. «Մեզ հասնող մանրամասները վկայում են, որ ոչ թե

¹⁴⁷ **Պլելիք Շարմետան**, Martyrologue arménien. Tableau officiel des massacres d'Arménie dressé après enquêtes par les six ambassades de Constantinople et statistique dressée par des témoins oculaires, Paris, s. d. ; **Անոյին** 'L'Arménie agonisante et l'Europe chrétienne. Appel aux chefs d'État, Paris, s. d. Տե՛ս նաև անգլերեն և գերմաներեն բարգ-
մանությունները՝ **Պլելիք Շարմետան**, Dying Armenia and Christian Europe. An Appeal to those in Power, London s. d.; **Պեր Շարմետան**, Das sterbende Armenien und das christliche Europa // "Der Christliche Orient", 1897, H. VII, S. 289-301; H. VIII, S. 337-349. Դայր Շարմետանի հրատարակած փաստաթրերի ժողովածուների մասին մանրա-
մասն տե՛ս սույն գրքի երրորդ գլխի երրորդ ենթագլխում:

¹⁴⁸ **Մ. E. Carlier**, Au milieu des massacres. Journal de la femme d'un Consul de France en Arménie, Paris, 1903. Տիկին Կարլիեի օրագիրը, որոշ կրծատումներով, առաջին անգամ լույս է ընծայվել «Ռեյլու դե լո Մոնդ» ամսագրում: Տե՛ս E. Carlier, En Arménie. Journal de la femme d'un Consul de France // « Revue des deux mondes », livraison du 15 janvier 1903, p. 406-433: Այն բարգմանվել է նաև հայերեն. տե՛ս « Աշակ », 1903, թիվ 1, էջ 220-227; թիվ 2, էջ 259-264; է. Կարլիե, Կոտորածների մեջ: Դայաստանում Ֆրանսիայի հյուպատոսի կնոջ օրագիրը. Ֆրանսերենից բարգմանությունը՝ Լաուրա Մարկոսյանի, Երևան, 2010:

¹⁴⁹ **Մ. E. Carlier**, Au milieu des massacres, p. 42.

հայերն են ապստամբել, այլ մահմեդականներն են սպանում ու կողոպտում»¹⁵⁰: Վկայակոչելով էրգորմում տեղի ունեցած անցքերը, Կարլիեն հիմնավորապես մերկացնում է թուրք ջարդարարների՝ կոտորածների պատասխանատվությունը հայերի վրա բարդելու համար գործադրած ջանքերն ու նենգ գործելամիջոցները: «Էրգորմում սպանություններն սկսվել են աննախաղեպ ձևով: Քաղաքապետարանում ծառայող մի հայի սպանել են իր գրասենյակում, այնուհետև՝ սափել նրա մորուքը և դիմահարդարել: Դրանից հետո, նրան հագցրել են թուրքական զգեստ, ապա՝ «վրեժ», «վրեժ» բացականչություններով դին շրջել քաղաքում»¹⁵¹:

Նկարագրելով Սեբաստիայում ծավալված իրադարձությունները, Կարլիեն ուշադրությունը կենտրոնացնում է քաղաքի շուկայում տեղի ունեցած կոտորածների վրա: Ըստ նրա վկայության՝ այնտեղ ոչ մի հայ չի փրկվել, իսկ պահեստում ապաստանած անձանց կոտորել են զինվորները, որոնք նոյեմբերի 12-ին նրանց սպանել են սվինների հարվածներով¹⁵²: Կարլիեն մատնանշում է նաև հայերի կոտորածներին՝ զինվորներից բացի թուրք խաժամուժի և այլ վայրերից ժամանած լեռնականների ունեցած մասնակցությունը, որոնք, սարսափից համրացած նրանց կանանց առջև, գենքերի բացակայության պատճառով զոհերին սպանել են մահակների, երկաթե ծողերի հարվածների, քարերով նրանց գլուխը ջարդելու միջոցով և կամ նույնիսկ պատրաստվել են նրանց ջրախեղի անել¹⁵³: Որոշ վայրերում մարդասպաններն անգամ որպես գնդակ օգտագործել են զինատվածների գլուխները¹⁵⁴: Իսկ նոյեմբերի 15-ին նա արդեն նշում է ամբողջ քաղաքում դիմահոտի տարածման մասին, ինչը բնակիչներին հարկադրել է փակել լուսամուտները:

Կարլիեն մանրամասնորեն անդրադառնում է նաև հայերի ունեցվածքի կողոպտման իրողությանը: Քաղաքի այն փողոցով, որով Կարլիեն անցել է, չի նշնարել ոչ մի դի, սակայն ամենուր տեսել է արյան հետքեր և կողոպտված տներ¹⁵⁵: Նոյեմբերի 12-ին նա այդ առիթով գրում է. «Զինվորները փողոցի ծայրն են հասնում ավարով ծանրաբեռնված, արյունաներկ ծեռքերով... Ես տեսնում են

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 51:

¹⁵¹ Նույն տեղում, էջ 55:

¹⁵² Նույն տեղում, էջ 59:

¹⁵³ Նույն տեղում, էջ 68-69:

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 79:

¹⁵⁵ Նույն տեղում, էջ 80:

մահմեղականների, որոնք անցնում են հրաշալի մետաքսե և ոսկեգօծ կտորներից բաղկացած ավարով ծանրաբեռնված... Խաժամությունը շարունակում է կողոպտել հատկապես ամայի տները»¹⁵⁶:

Ինչ վերաբերում է զոհերի թվին, ըստ Կարլիեի հաշվարկների՝ Սեբաստիայում սպանվել է 1500 հայ, իմանովին ավերվել են 300 խանութ և 400 կրպակ: Զոհերի առնչությամբ նա մանրամասնում է հայ տղամարդկանց հանդեպ որսևորված առանձնահատուկ դաժան վերաբերմունքը, իսկ ինչ վերաբերում է Երիտասարդ աղջկներին, փաստում է Սեբաստիայում և նրանց գերակշռող մասի առևանգումն ու վաճառքը¹⁵⁷:

Դարկ է, ի դեպ, նշել, որ Կարլիեն եղակի ականատեսներից է, որը չի շրջանցել հայերի կրած նյութական վնասների հարցը և հղելով հայերի իսկ կատարած հաշվարկները՝ հավաստել, որ դրանք տատանվում են 26 միլիոն բուրքական ոսկու սահմանում¹⁵⁸: Այս հարցում, սակայն, մենք հակված չենք նրա հաղորդած տեղեկությունն ընդգրկուն համարելու, քանզի ցեղասպանության հետևանքով հայերի կրած նյութական վնասների շուրջ առհասարակ սպառիչ կարծիք հայտնելը գրեթե անհնար է:

Բուն Սեբաստիայում տեղի ունեցած կոտորածներից բացի, հիմնվելով ականատեսներից ստացած վկայությունների վրա, Կարլիեն ցաջուցրիկ տեղեկություններ է հաղորդում նաև քաղաքի շրջակա գյուղերում տիրող իրավիճակի շուրջ: Այսպես, նոյեմբերի 5-ին նա նշում է Կարահիսարի, Զարայի, Դիվրիգի (Տևրիկի) հրկիզման մասին, որոնց բոլոր բնակիչները ոչնչացվել են, բացառությամբ ավերակների տակ գտնվող և ըստ այդմ՝ սովոր դատապարտված մի քանի հարյուր մանկահասակ երեխաների¹⁵⁹:

Թեև տիկին Կարլիեի հաղորդած տեղեկությունները, անտարակույս, հավաստի են և արժեքավոր, այդուհանդերձ, լիարժեք լինել չեն կարող, քանզի նա իմանվում է գլխավորապես իր անծնական դիտարկումների և մասամբ միայն որոշ ականատեսներից ստացված վկայությունների վրա: Դարկ է, սակայն, նկատի ունենալ, որ խոսքն, այնուամենայնիվ, վերաբերում է սոսկ օրագրային գրառումների, այլ ոչ թե զանազան սկզբնաղբյուրների համադրման հիման վրա՝ սպառիչ վիճակագրական տվյալներ ամփոփող շարադրանքի: Նշենք, ի

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 68:

¹⁵⁷ Նույն տեղում, էջ 91:

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 96:

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 51:

դեպ, որ հաշվի առնելով Սեբաստիայում տեղի ունեցած կոտորած-ների շրջանում նրա խիզախ վարքագիծը՝ ֆրանսիական կառավա-րությունը նրան պարզեատրել է Պատվո լեգենի շքանշանով:

Ընդհանրացնենք. ֆրանսիական տպագիր սկզբնաղբյուրներում ամփոփված տեղեկություններն անառարկելիորեն հավաստում են օսմանյան իշխանությունների ղեկավար դերը Դայոց ցեղասպանու-թյան սանձազերծնան գործում, բացահայտում, մասնավորապես Աղրուլ Շամիդ II-ի վճռորոշ դերակատարությունը հայ ժողովրդի լայ-նածավալ բնաջնջման ընթացքում և փաստում կոտորածների մտա-հեցումն ու իրականացումը պետական քաղաքականության նա-կարդակով: Դրանում է այդ վավերագրերի անժխտելի պատմական նշանակությունը:

Բացի դրանից, մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում լույս ընծայված ֆրանսիական տպագիր սկզբնաղբյուրներում, մաս-նավորապես «Դեղին գրքում» զետեղված փաստաթղթերը նեծապես նպաստել են համիդյան կոտորածների հավաստի պատկերի լու-սաբանմանը, ընդլայնել ֆրանսիացի ժամանակակիցների պատկե-րացումները Դայոց ցեղասպանության գործընթացին առնչվող ման-րամասներում: Դրանք ֆրանսիացի պատմաբաններից և քաղաքա-կան ու հոգևոր գործիչներից շատերին (Ե. Դրիո, Ժ. Բեքեր, Պ. Կուլ-բո, Դ. Կոշեն, Պ. Քիառ, հայր Հարմետան) հնարավորություն են ըն-ձեռել, ինչպես կտեսնենք ստորև, ձեռնամուխ լինելու 1890-ական թվականների հայկական կոտորածների պատմության ավելի խորը և գիտական ուսումնասիրությանը:

Դարկ է նաև չանտեսել այն էական հանգամանքը, որ քննարկ-ված ժողովածուներում ընդգրկված վավերագրերը հումկու հակա-հարված են տալիս մեր օրերի՝ Դայոց ցեղասպանության իրողու-թյունը ժխտող պատմության կեղծարարներին և դրանով իսկ ավելի քան մեկ դար ամբողջությամբ պահպանում իրենց այժմեականու-թյունը:

ԳԼՈՒԽ II

ՂԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՆԱԴԱՏՄԱՍՔ

1. 1894-1896 թթ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ 1895-1908 թթ. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՆԱԴԱՏՄԱՍՔ

XIX դարի 90-ական թվականներին ծևավորվող՝ Հայոց ցեղասպանության պատմությունն անկողմնակալ դիրքերից լուսաբանող պատմագրության ակունքների մոտ գտնվում են ֆրանսիացի բազմաթիվ, այդ թվում, անվանի պատմաբաններ, որոնք իրադարձության պատմությունը քննարկել են բազմաբնույթ գիտական աշխատություններում: Խոսքն առնչվում է ոչ միայն ցեղասպանության սկզբնական փուլի պատմությունը մեկնաբանող հատուկ ուսումնասիրությունների, այլև Արևելյան հարցի պատմությանը նվիրված մենագրությունների և Աբդուլ Համիդ II-ի կենսագրականների, որոնցում հեղինակները զգալի տեղ են հատկացրել նաև Հայկական հարցին:

Հայոց ցեղասպանության փաստն անսքող հավաստող ֆրանսիացի պատմաբանների, այդ թվում, Եվրոպական պատմագիտական երկնակամարում վաղուց ի վեր քաջ հայտնի անհատականությունների, աշխատությունները միմյանցից տարբերվում են ոչ միայն բնույթով, այլև վեր հանված հիմնահարցերի ընդգրկումով և վերլուծություններով, ինչը պայմանավորված է թե՝ հեղինակների հայացքների զանազանությամբ և թե՝ նրանց օգտագործած տարատեսակ սկզբնաղբյուրներով: Մեր կողմից ուսումնասիրվող հեղինակները քննարկել են Հայոց ցեղասպանությանն առնչվող միանգամայն տարբեր հիմնախնդիրներ, որոնց շուրջ առաջադրել են զանազանվող, անգամ իրարամերժ մեկնաբանություններ, այդ թվում հայեցակարգային խնդիրներում:

Նախ քննարկենք մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ֆրանսիայում լույս ընծայված՝ Հայոց ցեղասպանության պատմու-

թյանը նվիրված պատմագիտական այն ուսումնասիրությունները, որոնց հեղինակները նյութը շարադրել են Օսմանյան կայսրության տարբեր նահանգներ կատարած այցելությունների ընթացքում ստացած տպավորությունների հիմնան վրա: Նման բնույթի ուսումնասիրությունների թվում, որոնք, ըստ այդմ, ծերջ են թերութ նաև սկզբնադրյուրի նշանակություն, առավել արժեքավոր է հրապարակախոս Վիկտոր Բերարի (1864-1931) «Սուլթանի քաղաքականություն» գիրքը:

Դեղինակի հետաքրքրությունը Հայկական հարցի հանդեպ ծագել է դեռևս արյունալի իրադարձությունների սկզբնական փուլում, երբ, ըստ հայ ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչ, 1894 թ. հնչակյան կուսակցության անդամ Ստեփանոս Սապահ-Գյուլյանի (1861-1928) վկայության՝ ֆրանսիական «չափավորական համրապետականների մի մասը ծածուկ մի պատվիրակություն ուղարկեց Հայաստան՝ գործերի դրությունն ուսումնասիրելու», որի կազմում ընդգրկված էր նաև «պ. Վիկտոր Բերար համակրելի երիտասարդը»¹⁶⁰.

Փարիզ Վերադառնալուց հետո Բերարը գինվորագրվել է արևմտահայության պաշտպանության գործին և այդուհետև պարբերաբար լուսաբանել Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունները¹⁶¹: Նրա առաջարաններով տպագրվել են արևմտահայության և Հայկական հարցի պատմությանը նվիրված այլևայլ իրատարակություններ¹⁶²: Մեր թենայի կտրվածքով մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Ռևյու դը Պարի» ամսագրում 1896-1897 թթ. լույս ընծայված «Սուլթանի քաղաքականությունը» խորագիրը կրող նրա հոդվածաշարը¹⁶³, որի ընդլայնված տարբե-

¹⁶⁰ Ա. Սապահ-Գիւլեան, Ֆրանսիան և հայոց խնդիրը.- «Լոր-դար», 1897, թիվ 2:

¹⁶¹ V. Bérard, Le sultan, l'islam et les puissances, Paris, 1907 ; Առյօնի՝ La révolution turque, Paris, 1909 ; Առյօնի՝ La mort de Stamboul. Considérations sur le gouvernement des Jeunes-Turcs, Paris, 1913.

¹⁶² Aghassi. Zéitoun depuis les origines jusqu'à l'insurrection de 1895. Préface par Victor Bérard, Paris, 1897 ; Pour l'Arménie et la Macédoine. Préface de Victor Bérard. Introduction de Pierre Quillard, Paris, 1904.

¹⁶³ V. Bérard, La politique du sultan // « Revue de Paris », լիւրասոն 15 դեկտեմբեր 1896 ; լիւրասոն 1st հունվար 1897 ; լիւրասոն 15 հունվար 1897. Իրավիճակի հավաստի պատկերն արտացոլող Բերարի այս հոդվածաշարը, անշուշտ, մեծապես նպաստել է նահատակվող արևմտահայության համակիրների շարքերի ստվարացմանը Ֆրանսիայում: Ինչպես հավաստել է Սապահ-Գյուլյանը՝ «Հայաստանի և հայոց քարեկամների թիվը գնալով ահագին ծավալ է ստանում Պարիզում: « Revue de Paris »-ի մեջ պ. Վիկտոր Բերարի գրած հոդվածներն իրենց անմիջական ազդեցությունն ունեցան,

րակը 1897 թ. նա հրատարակել է առանձին գրքով¹⁶⁴:

Բերարը հիմնվում է ոչ միայն իր անձնական տպավորությունների և ականատեսներից ստացած վկայությունների վրա, այլև օգտագործում մատչելի տպագիր սկզբնաղբյուրներ, ճամանակորապես Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության փաստաթթերն ամփոփող «Կապույտ գիրքը», որը նրան հնարավորություն է ընձեռել անկործնակալորեն ներկայացնել Օսմանյան կայսրությունում բնակվող քրիստոնյա ժողովուրդների և առաջին հերթին հայերի վիճակն իր ամբողջ բազմերանգությամբ, վերլուծել արևմտահայության հանդեպ Արդուլ Դամիդի կիրառած քաղաքականության ելեւցները, մասսամբ նաև ցեղասպանության դրդապատճառները: Ստորև ուշադրությունը կվենտրոնացնենք սոսկ այն խնդիրների վրա, որոնք եական են ցեղասպանության մեկնաբանության ասպարեզում Բերարի գրաված դիրքորոշումը լուսաբանելու համար:

Անդրադարձալով Արևմտյան Դայաստանի տարբեր բնակավայրերում (Սասուն, Դիարբերի և այլն) 1890-ական թվականներին տեղի ունեցած հայկական կոտորածներին, Բերարը պարբերաբար մատնանշում է օսմանյան իշխանությունների դեկավարությամբ տեղի ունեցող հայկական կոտորածների՝ իբրև պետական քաղաքականության մակարդակով իրականացվող իրադարձության բնույթը, մատնանշում «մի ամբողջ ազգության բնաջնջումը»¹⁶⁵ Պալեի հրահանգների հիման վրա¹⁶⁶, բազմից վկայակոչում կայսրության սահմաններում՝ «Ղեկավարը թույլատրել է սպանել հայերին»՝ որպես ասույթ թևածող խոսքերը¹⁶⁷: Ինչպես նա մանրամասնում է՝

վասնզի ավելի քան հիսուն հոգի պատգամավորների ժողովի անդամներից իրենց առանձին համակրությունն են հայունել ապ. հողվածագրին յուր շահագրգիռ հողվածների համար: Նրանցից ունանք առանձնակի շեշտած են, որ իրենք պատրաստ են հարկավոր ժամանակին արձագանք տալ յուր ծայնին պատգամավորների ժողովի մեջ: Տե՛ս Դայաստանի բարեկամները Ֆրանսիայում.՝ «Լոր-դար», 1897, թիվ 6:

¹⁶⁴ V. Bérard, La politique du sultan, Paris, 1897. Թեսակն Բերարի գիրքը 1897-1900 թթ. ունեցել է չորս հրատարակություն, այդուհանեղեք, հաշվի առնելով դրա կարևորությունը. Սարտին Սելքոնյանը 2005 թ. Վերահրատարակել է դրա առաջին երկու գլուխներն առանձին գրքով: Տե՛ս V. Bérard, La politique du sultan. Les massacres des Arméniens : 1894-1896. Préface de Martin Melkonian, Paris, 2005 (մենք կիրենք գրի առաջին հրատարակությունը): Նշենք նաև, որ Բերարի գրքից մի հատված լուս է ընծավի ուսերեն բարգնանությամբ: Տե՛ս В. Берар, Августовские убийства в Константинополе (1896 г.)— Братская помошь пострадавшим в Турции армянам, с. 83-93:

¹⁶⁵ V. Bérard, Աշվ., էջ 290:

¹⁶⁶ Նույն տեղում, էջ 56, 64, 72, 314:

¹⁶⁷ Նույն տեղում, էջ 22, 27, 30, 74, 248:

300000 հայ գրկել է կյանքից, իսկ 1894 թ. հուլիսի 1-ից ի վեր՝ ավելի քան 500 հայկական համայնքներ կործանվել են կամ փորձությունների ենթարկվել օսմանյան պաշտոնյաների թողտվության հետևանքով¹⁶⁸: Այս առիթով հարկ է նշել, որ Բերարն իրավամբ քրդերին դիտելով իբրև սոսկ կատարածուների, մեծ նշանակություն չի տալիս կոտորածներին ունեցած նրանց մասնակցությանը. «Նրանք միշտ ենթարկվել են սահմանադրական, քաղաքացիական և ռազմական իշխանություններին... և կոտորածի ժամանակ եղել միայն իշխանության գործակալները, տիրոջ կամակատարները»¹⁶⁹:

Մանրամասն քննարկելով հայկական տարրեր կուսակցությունների հիմնադրմանն առնչվող փաստեր, Բերարն Արդուլ Դամիդի հայահալած քաղաքականության սանձազերծումը պայմանավորում է, մասնավորապես հնչակյանների գործունեությամբ: Ինչպես նա նշում է, «հայերի գաղտնի մեքենայությունների առիթով իշխանությունների գանգատները», ինչպես նաև մահմեդականների դժգոհությունն ու անհանգստությունը նրա մոտ առաջ են բերել անհաղթահարելի սարսափիները¹⁷⁰: Ուստի 1880-ական թթ. Վերջից սուլթանի կարգադրությանը հայերի հանդեպ կիրառված զանազան բռնությունները (Եկեղեցիների խուզարկում, դպրոցների փակում, սպանություններ, արտաքսումներ և այլն), ըստ Բերարի՝ իրականացվել են իր միայն այն բանից հետո, եթե օսմանյան գահակալը վերջնականապես համոզվել է, թե ամբողջ հայ ժողովուրդը հետևում է ազգային կուսակցություններին¹⁷¹:

Փոքր-իսկ դրվատանքի չարժանացնելով հայկական կուսակցությունների գործունեությունը, որոնք ըստ նրա համոզման՝ հայ ժողովրդին մղում էին դեպի «Վտանգավոր ուղի», Բերարը հանիրավի նշում է, որ նրանք «խարխափում էին պարսավելի և անօգտավետ քաղաքականության ոլորտում»¹⁷²: Չնայած այս հանգամանքին, նա, այնուամենայնիվ, խիստ քննադատության է ենթարկում սուլթանի որդեգրած դիրքորոշումը, որը «պատրաստվում էր գործել շատ ավելի մեծ և շատ ավելի հանցավոր սխալ, կարծեք կանխակալորեն, ազգին շփոթելով կոմիտեների հետ, ժողովրդին՝ մի խումբ առաջնորդների հետ»¹⁷³: Միաժամանակ, նա համոզված է, որ եթե

¹⁶⁸ Նույն տեղում, էջ 75:

¹⁶⁹ Նույն տեղում, էջ 71-72: Տե՛ս նաև նույն տեղում, էջ 52:

¹⁷⁰ Նույն տեղում, էջ 164:

¹⁷¹ Նույն տեղում, էջ 166:

¹⁷² Նույն տեղում, էջ 175:

¹⁷³ Նույն տեղում:

սուլթանը նույնիսկ ընդուներ ազգային կուսակցությունների պահանջները, «կարծի է կարծել, որ նա կարող էր ժառայել իր կառավարության ու իր ժողովուրդների իրական շահերին»¹⁷⁴: Նման հետևությամբ, նա, փաստորեն, հակասելով իր իսկ նախկին գնահատականներին, հայկական կուսակցությունների գործունեությանն, իվերջո, տալիս է անկողմնակալ գնահատական, ընդունելով, որ նրանց որդեգրած քաղաքականությունն ամենակին չէր հակասում ոչ միայն հայ, այլև կայսրությունում բնակվող օսմանահպատակ այլ ժողովուրդների շահերին: Անհայտ է, որ կուսակցությունների, նաև նավորապես հնչակյանների ծավալած գործունեության ազգային-ազատագրական բնույթի առնչությամբ դեռևս չունենալով ամբողջական տեղեկություններ և ըստ այդմ՝ հստակ պատկերացումներ նրանց ծրագրերի և խնդիրների մասին¹⁷⁵, Բերարն անզոր է եղել այս հիմնախնդիրը լուսաբանելու հավիր պատշաճի, չխուսափելով այդ ծանապարհին իրարամերժ, հակասական, այդ բվում նաև անընդունելի մեկնաբանություններից:

Ինչ վերաբերում է ցեղասպանության գաղափարի հասունացման քննությանը, ապա Բերարն ուշադրությունը կենտրոնացնում է հիմնականում Աբդուլ Ջամիդի վրա կրոնական գործոնի ունեցած վճռորոշ նշանակության վրա, ընդգծում, որ համաձայն «մահմեդական իին ավանդույթի՝ կառավարությունը երբևէ չի շրջանցում հեկատոնքները»: Բացի դրանից, նա մեծ նշանակություն է տալիս նաև մահմեդական մոլեռանդ քարոզիչների՝ սուլթանի վրա ունեցած ազդեցությանը, որոնք վերջինիս մեջ արմատավորել են այն գաղափարը, ըստ որի՝ գոյություն պահպանելու իրավունք կարող էին միայն մահմեդականներն ունենալ¹⁷⁶: «Այսպես, աստիճանաբար, միանգամայն տարբեր ուղիներով... ձևավորվել է, հասունացել, ճնշող դարձել կոտորածի գաղափարը», – եզրակացնում է նա¹⁷⁷:

Բերարի տեսադաշտից չեն Վրիպել ցեղասպանության իրականացմանն առնչվող մի շարք եական հանգամանքներ: Նախ նա մարդագնին վերլուծում է կայսրության մահմեդական բնակչությանը՝ մոտալուտ կոտորածներին հոգեբանորեն նախապատրաստելու ուղ-

¹⁷⁴ Նույն տեղում, էջ 176:

¹⁷⁵ Այդ մասին մանրամասն տե՛ս Գ. Չովիաննիսյան, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն... Հայ ազգային և Պայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914 թթ.), Երևան, 2003, էջ 26-40:

¹⁷⁶ V. Bérard, նշվ. աշխ., էջ 189-190, 192:

¹⁷⁷ Նույն տեղում, էջ 192-193:

դությանք Աբդուլ Դամիդի ծեռնարկած քայլերը: Ըստ նրա մեկնաբանության՝ չբավարարվելով սոսկ կրոնական մոլեռանդության բորբոքմամբ, սուլթանը ջանում էր մահմեղականների շրջանում կյանքի կոչել սոցիալական և քաղաքական հիմքեր ունեցող ատելությունները: Դենց դրանով է նա պայմանավորում Աբդուլ Դամիդի՝ հայերի մտադրությունները կեղծելու նպատակով գործադրած ճիգերը: Ինչպես գրում է Բերարը՝ սուլթանը հավաստում էր, որ հայերին «ստարում է Եվրոպան, որը գործելով իսլամին ստորադաս դարձնելու նպատակով և հանուն քրիստոնեության շահերի՝ պահանջում է ոչ թե իրավունքներ, այլ արտոնություններ», որոնք կարող էին մահմեղականին կախման մեջ դնել քրիստոնյայից¹⁷⁸: Չբավարարվելով սոսկ փաստի արծանագրմամբ՝ Բերարը խորանուխ է լինում նաև այն հետևանքների բացահայտման մեջ, որոնց հանգեցրել էր Աբդուլ Դամիդի քաղաքականությունը և մատնանշում, որ «ոչ միայն ամբոխն է իր արտոնություններն ու շահերը վկանգված համարել, այլև ծրագրված բարենորդումներին վերաբերող լուրերը տագնապահութ են արել վերնախավին»՝ նույնիսկ սուլթանի համախոհներին առժամանակ միավորելով երիտրութերի հետ¹⁷⁹:

Օսմանյան իշխանությունների՝ 1895 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսում Բաբը Ալիի՝ հնչակյանների նախածեռնությամբ կազմակերպված բողոքի ցույցը չկանխելու իրողությունը Բերարը դիտում է իբրև բացահայտ սադրանք, որը հետապնդում էր սուլթանի նենգ մտադրությունների կենսագործմանը հիմնավորում տալու նպատակ: Ցույցին անմիջապես հաջորդած հայկական ջարդերը նայրաքաղաքում, նա համարում է «հետևողական կոտորածների սկիզբ», որոնք զանազան նահանգներում ծավալվել են իշխանությունների ուղարկած բանագնացների ազդանշանի հիման վրա¹⁸⁰: Ըստ կանխամտածված ծրագրի՝ ցեղասպանության իրականացումը նա հիմնավորում է բազմաթիվ փաստերով, որոնք վկայում են, որ իշխանությունները պաշտոնանկ էին անում այն բոլոր աստիճանավորներին, որոնք ի հայտ էին բերում իրենց «անկարողությունը»՝ կոտորածներին առնչվող կարգադրությունների ի կատար ածնան հարցում¹⁸¹: Ակնբախ է, որ զանազան կտրվածքներով քննարկելով Դայոց ցեղասպանության գործընթացին առնչվող հան-

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 240:

¹⁷⁹ Նույն տեղում, էջ 241-243:

¹⁸⁰ Նույն տեղում, էջ 195:

¹⁸¹ Նույն տեղում, էջ 204-206:

գամանքները, Բերարը բազում փաստերով հիմնավորում է հայ ժողովրդի բնաջնջան պարագայում՝ օսմանյան վարչակարգի քաղաքականությանը բնորոշ կանխամտածվածության և դիտավորության իրողությունը, որը նրա նոտեցման ամենամեծ արժանիքներից է:

Դարկ է մեկնաբանել դրանցից ևս մեկը: Բերարը հիմնվելով Սասունի կոտորածները հետաքանող հանձնաժողովի կազմած արձանագրության վրա՝ հերքում է հայերի ապստամբության հնարավորությունը, մատնանշում, որ բնակչությանը կոտորել են և բնակավայրերը հրդեհել՝ օսմանյան իշխանությունները¹⁸²:

Ընդհանուր առնամբ, հեղինակը եզրակացնում է. «Փօքր Ասիայում տեղի ունեցած կոտորածները շարունակվել են ավելի քան երկու տարի, ամայացրել մի տարածաշրջան, որն ավելի մեծ է, քան Ֆրանսիան և XX դարի նախաշեմին խոյացրել երեք հարյուր հազար մարդկային գլուխներից բաղկացած մի բուրգ, որը, հավանաբար, կմնա իրու այդ ժամանակաշրջանի հուշարձաններից մեկը»¹⁸³: Ինչ վերաբերում է անձանք Աբրուլ Ջամիլին, ապա նա, ինչպես նշում է Բերարը, արել է ամեն ինչ՝ «պատմության մեջ մարդասպանի փառապան մականունի արժանանալու համար»¹⁸⁴:

Բերարը, որի տեսադաշտից չի վիճակ նաև հայ ժողովրդի հանդեպ մեծ տերությունների կառավարող շրջանակների դրսնորած անկարելից վերաբերմունքը, անվարան հավաստել է նրանց «անուղղակի մեղսակցությունը» հայկական կոտորածներին: Այս հենքի վրա է նա քննարկում Ջայոց ցեղասպանության գլխավոր պատճառը՝ այն շաղկապելով արևմտյան տերությունների՝ արևմտահայության համար նախատեսված բարենորոգումների գործընթացի նկատմամբ վերահսկողության բացակայությանը 1880-ական թվականներից ի վեր: Այդ փաստից ելնելով, Բերարը եզրակացնում է, որ Ջայկական հարցը լուծում է ստացել ըստ սուլթանի հայեցողության՝ հայ ժողովրդի հանդեպ մեծ տերությունների անտարբեր վերաբերմունքի պատճառով. «Պալեի հրամանով սկսված կոտորածները... շուտով հայտնի դարձին լուծման որդեգրված տարբերակի մասին»¹⁸⁵: Իրավամբ մեծ տեղ հատկացնելով հայ ժողովրդի ճակատագրում տերությունների քաղաքականության կործանարար

¹⁸² Նույն տեղում, էջ 295:

¹⁸³ Նույն տեղում, էջ 200:

¹⁸⁴ Նույն տեղում, էջ 358:

¹⁸⁵ Նույն տեղում, էջ 314:

հետևանքների վերլուծությանը, Բերարը հանգում է միանգամայն իրատեսական հետևության, ըստ որի՝ նրանց ծվատած տարածայնություններն Արդուլ Շամիդին հնարավորություն են ընձեռել «Շայստանը վերածել անապատի»¹⁸⁶:

Բերարը խիստ քննադատության է ենթարկել, մասնավորապես ֆրանսիական կառավարության թրջամետ քաղաքականությունը, բացահայտել որա հիմնական պատճառներից մեկը. «Արդուլ Շամիդը, – գրում է նա, – նպաստում է, որ Ֆրանսիան և նրա ֆինանսիստներն ու ծեռնարկատերերը փող շահեն, իսկ նրա լրագրողներին դրամ ու շրանշաններ է բաշխում»¹⁸⁷:

Ինչ վերաբերում է համիդյան կոտորածների «լուսաբանման» հարցում ֆրանսիական մամուլի գրաված դիրքորոշմանը, որը հանգում էր կատարյալ անտարբերության, ապա ըստ Բերարի՝ այն ոչ այլ ինչ էր, եթե ոչ «լուսաբան դավադրություն»: Նրա համոզմամբ, «լուսաբան դավադրության համար, անկասկած, վճարում է թուրքական դեսպանությունը (ֆրանսիական տասնյոթ թերթ ստանում են դրամական նպաստներ), սակայն այդ ամենը տեղի է ունեցել ֆրանսիական կառավարության հանդուրժողականության հետևանդուկ»¹⁸⁸:

Ըստ այս ամենի՝ պատահական չէ, որ Զոպանյանը Բերարի գիրքը բնութագրել է իբրև ականատեսի «սարսափի ու զայրոյի կենդանի աղաղակ»¹⁸⁹, իսկ Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1892) է. Լավիսը գրքի առաջաբանում տվել է Բերարի ուսումնասիրության հետևյալ բարձր գնահատականը. «Ժամանակակից քաղաքականության ամենակարևոր հարցերից մեկը Ֆրանսիայում առաջին անգամ ներկայացվել է իր ամբողջության մեջ, կոտորածների պատճառները բացահայտվել են, Եվրոպայի անուղղակի մեղսակցությունն ապացուցվել»¹⁹⁰: Զանազան առիթներով թե՛ Լավիսը և թե՛ Զոպանյանը

¹⁸⁶ Նույն տեղում, էջ 196, 329:

¹⁸⁷ Նույն տեղում, էջ 282: Շետագա աշխատություններում նա քննադատական խոսքը է ուղղում նաև Վիլիելմ II-ի հասցեին, նրան անվանում Արդուլ Շամիդի «տիրակալ»: Տե՛ս V. Bérard, Politique française // «Revue de Paris», livraison du 1^{er} juillet 1905, p. 217:

¹⁸⁸ V. Bérard, La politique du sultan, p. 290.

¹⁸⁹ Տե՛ս Բերարի՝ «Անահիտին» հետք նամակին կից Զոպանյանի մուտքի խոսքը. «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 4, էջ 124:

¹⁹⁰ E. Laveisse, Préface.— V. Bérard, նշվ. աշխ., էջ II:

կորկին անդրադառնալով Բերարի գրքին՝ միանգամայն իրավամբ այն բնորոշել են իրեւ «հիասքանչ»¹⁹¹:

Բացի Բերարից, Լյուտովիկոս դը Կոնտանսոնը ևս Դայոց ցեղասպանությամն առնչվող զամազան դրվագներ քննարկում է Արևածագան Դայաստանում ստացած անձնական տպավորությունների հիմնա վրա, նյութը շարադրում ըստ՝ Արևելք կատարած ճանապարհորդությունների ընթացքում գրի առած նորերի¹⁹²: Դայկական կոտորածներին ընդհանուր բնույթի գնահատականներ տալուց բացի, նա խոսք կենտրոնացնում է նաև իր այցելած բնակավայրերում (Ուրֆա, Մարաշ, Այնթար և այլն) տեղի ունեցած իրադարձությունների վրա:

Կոնտանսոնի մեծ արժանիքն արևածահայության բնաջնջման իրականացնան փաստումն է պետական քաղաքականության մակարդակով, Աբդուլ Շամիդ II-ի նախաձեռնությամբ, որին, ինչպես և Գլահստոնը, անվանում է «մեծ մարդասպան»¹⁹³: Նրա համոզմանք՝ ճգնաժամի դրսեւորման եղանակները կախված են եղել «քաղաքական և կրոնական տեսանկյուններից ամենազոր միապետից՝ սուլթան Աբդուլ Շամիդից, որը կարող էր շրջանցել սպանությունները»¹⁹⁴: Եթեասպանության միակ պատասխանատուններ նա համարում է օսմանյան կառավարությանն ու դեկավար շրջանակներին, որոնց, ինչպես նշում է՝ «գործելու կարգախոս տրվել էր Վերից»¹⁹⁵:

Ինչ վերաբերում է կատարածուներին, Կոնտանսոնը նատնանշում է՝ ըստ ստացված իրամանի գործած գինվորների և նրանց աջակցած մահմեդական բնակչության դերը, որոնք ոչ միայն շահագրգության էին օգտվելու սուլթանի տված՝ հայերին սպանելու թույլտվությունից, այլև հետապնդում էին ավարի իրենց բաժինը հափշտակելու նպատակ¹⁹⁶: Միաժամանակ նա չի շրջանցում նաև մահմեդականների մոլեռանդության հանգամանքի էական նշանակությունը: Բիրեցիկում տեղի ունեցած կոտորածների առիթով նա նշում է, որ ուղղափառ, կաթոլիկ և բողոքական հայերի համատա-

¹⁹¹ E. Lavisson. *Notre politique orientale* // « Revue de Paris », livraison du 15 mai 1897, p. 275 ; A. Tchobanian, *L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient. Conférence faite le 9 mars 1897 à la salle de la Société de Géographie sous la présidence de M. Anatol France*, Paris, 1897, p. 10.

¹⁹² L. de Contenson, *Chrétiens et musulmans. Voyages et études*, Paris, 1901, p. XIII.

¹⁹³ Նույն տեղում, էջ 65:

¹⁹⁴ Նույն տեղում:

¹⁹⁵ Նույն տեղում, էջ 97:

¹⁹⁶ Նույն տեղում, էջ 61:

բաժ բնաշնջումն իրականացնում էր մոլլաների առաջնորդությամբ գործող մահմեդական բնակչությունը:

Այդուհանդեռձ, Կոնտանտինոս դեռևս ի վիճակի չի եղել խորա- մուխ լինելու Դայոց ցեղասպանության պատճառների համակողմա- նի ուսումնասիրության մեջ: Նրա շարադրանքը պարզորոշ վկայում է, որ ինչպես ֆրանսիացի ժամանակակիցներից շատերը, նա ևս չի ըմբռնել ցեղասպանության իրական պատճառը և այն չի պայմանա- վորել սուլթանի՝ Դայկական հարցին «լուծում» տալու մտադրու- թյամբ: Դասկանալի է, որ այս հարցի շուրջ, ի տարբերություն ժամա- նակակիցներից ունաց, նա դեռևս հստակ պատկերացումներ չի ու- նեցել, ինչը դյուրին չէր կարող լինել, եթե առավել ևս հաշվի առնենք պաշտոնական Ֆրանսիայի որդեգրած քրքամնետ քաղաքականու- թյունը քննարկվող ժամանակաշրջանում:

Կոնտանտինոն իր սահմանափակ տեղեկատվության և ոչ լիար- ժեք պատկերացումների շրջանակում թեև ջանում է ուղղակի կապ արձանագրել սուլթանի պանխանական գաղափարների և XIX դարի 90-ական թվականներին կյանքի կոչված զանգվածային կո- տորածների միջև, որոնց իրականացումը դիտում է իրու արևելյան քռնակալությանը քննորոշ ինամենի գործելամիջոց¹⁹⁷, այդուհան- դեռձ, շարունակում է հարցը քննարկել խիստ սահմանափակ կտրվածքով՝ օսմանյան գահակալի անձնական դիրքորոշման հեն- քի վրա. «Աբդուլ Դամիդը, – գրում է նա, – մնացել է նախ և առաջ՝ արևելյան քռնակալ», իսկ Արևելքում «պարբերաբար տեղի ունեցող արյունահեղությունները, կոտորածները դիտվում են իրու կառա- վարման միջոց, որին դիմում են, որպեսզի գահակալի իշխանության հետ հաշվի նստեն»¹⁹⁸: Սա մեկնաբանությունն, անտարակույս, չի կարելի համարել սպառիչ:

Կոնտանտինոնը քննարկում է նաև դեռևս իր ժամանակակիցների շահարկած՝ համիդյան կոտորածների մեկնաբանությանն առնչվող մի շարք էական խնդիրներ, օրինակ, Օսմանյան կայսրությունում քռակվող հայերի թվաքանակի հարցը, որը նրա տարբեր ժամանա- կակիցներ նվազեցրել են, քանզի հիմնվել են գերազանցապես Վ. Քինեի անստույգ տեղեկությունների վրա¹⁹⁹: Նա, սակայն, վկայակո-

¹⁹⁷ Նույն տեղում, էջ 78:

¹⁹⁸ Նույն տեղում, էջ 66, 67:

¹⁹⁹ Տե՛ս օրինակ P. Pisanî, *Les affaires d'Arménie*, Paris, 1895, p. 19 ; E. Lamy, *La France du Levant*, Paris, 1900, p. 84 ; R. Pinon, *L'Europe et l'Empire ottoman. Les aspects*

չելով Կոստանդնուպոլսի Դայոց պատրիարքարանի տվյալները, իր դեռևս ոչ լիարժեք տեղեկությունների սահմաններում հակահարված է տալիս այս թյուր տեսակետի կողմնակիցներին, հավաստում, որ XIX դարի վերջին հայ ազգաբնակչության թիվը կայսրության տարածքում հասնում էր շուրջ երկու միլիոնի²⁰⁰:

Դեղինակի ուշադրությունից չի Վրիփել նաև Դայոց ցեղասպանության գործընթացում հայերին վերագրվող կարծեցյալ պատասխանատվության հանգամանքը, ինչի մասին հիշատակում է հպանցիկ, ուստի այս հարցում ևս նրա մեկնաբանություններն աչքի չեն զարում հիմնախնդրի քննության կատարելությամբ: Այդուհանդերձ, տեղում իրադարձություններն ուսումնասիրելու հիման վրա, նա հայերի բնաշնչան պատասխանատվությունը գերադասում է, փաստորեն, բարդել հայ ժողովողի դահիճների, այլ ոչ «դժբախտների»՝ իր կարծիքով ցուցաբերած անխոհեմության, այն է՝ 1890-ական թվականներին անզգույշ պահվածքի վրա: Արդյունքում, սակայն, Կոնտանտինոպ միանգամայն օրինաչափ է համարում «չլսված և չտեսնված չափերի հասմող»՝ թուրքական կեղեցմանը դիմադրելու հայերի իրավունքը²⁰¹: Ակնհայտ է, որ նրա համակրանքներն անասելի տառապանքներ կրող հայ ժողովողի կողմում են:

Թեպետ Կոնտանտինոպ բացահայտորեն չի քննադատում Եվրոպական պետությունների՝ հայկական կոտորածների հարցում դրսերած անկարեկից վերաբերմունքը, նրա շարադրանքում, այնուամենայնիվ, թուրքիկ արտացոլվել են մեծ տերությունների քաղաքականության նկատմամբ քննադատական ակնարկներ,

actuels de la question d'Orient, Paris, 1908, p. 43: **Տե՛ս նաև** Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 2-7:

²⁰⁰ L. de Contenson, նշվ. աշխ., էջ 152: Արևմտահայության թվաքանակի հարցը՝ իրադարձությունների ֆրանսիացի ժամանակակիցների շրջանում տեղի է տվել իրարամերժ կարծիքների: Այս մասին տե՛ս R. H. Kévorkian, P. B. Pavoudjian, Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide, Paris, 1992, p. 53-55: Այս առիթով հարկ է նշել, որ ըստ Ա. Դամբարյանի հավաստի հաշվարկների՝ 1860-1870-ական թթ. Օսմանյան կայսրությունում բնակվում էր շուրջ երեք միլիոն հայ, որից 2.5 միլիոն՝ Արևմտյան Դամբարյան: Տե՛ս Ա. Դամբարյան, Ազգարային հարաբերությունները Արևմտյան Դամբարյանում (1856-1914), Երևան, 1965, էջ 45; Առվելի՝ Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը՝ «Բանքեր Երևանի համալսարանի», 1969, թիվ 2, էջ 110: Տե՛ս նաև Պ. Ս. Սիմոնյան, Դամբարյան հայկական հարցը և ոռու հասարակական միտքը 19-րդ դարի 90-ական թվականներին, Երևան, 2003, էջ 76; Գ. Գալյոյան, Դամբարյանը մեծ տերությունների աշխարհակալական առնակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, 2004, էջ 363-368:

²⁰¹ L. de Contenson, նշվ. աշխ., էջ 111-112:

մասնավորապես հայերին «հուսալի աջակցություն» չցուցաբերելու առնչությամբ²⁰², իսկ Վիլիելմ II-ին նա բացահայտորեն անվանում է Աքդու Շամիդի բարեկամ²⁰³:

Կոնստանտինի հապանցիկ, գուցեև ոչ միշտ սպառիչ, սակայն, անաշառ դիտարկումներն առավել մեծ արժեք են ստանում, եթե նկատի ունենանք, որ հեղինակը ֆրանսիացի եզակի մտավորական-ներից է, որը եղել է իրադարձությունների ականատեսը:

Ի տարբերություն՝ իրադարձության այս ականատեսների, քննարկվող ժամանակաշրջանում ֆրանսիացի մեծ քվով պատմաբանների աշխատություններին բնորոշ է հիմնախնդիրների գիտական մանրազնին քննարկումը: Նրանց քվով ակադեմիական բարձր մակարդակով և գիտական վերլուծությունների խորությամբ առանձնանում է Ա. Կանդալի փորձածավալ, սակայն, արժեքավոր գրքույկը, որն անուրանալի ավանդ ունի հայ ժողովրդի իրավունքները սատարելու և Շայոց ցեղասպանության կազմակերպիչներին անարգանքի սյունին գամելու ասպարեզում: Լինելով ոչ միայն նապոլեոնագիտության ջատագովական ուղղության կարկառուն ներկայացուցիչ, այլև XVIII դարի ֆրանս-թուրքական դիվանագիտական հարաբերությունների պատմության ուսումնասիրող²⁰⁴, նա, բնականաբար, ամենայն ուշադրությամբ հետևել է Օսմանյան կայսրության տարածքում ծայր առած իրադարձությունների ընթացքին: Բացի դրանից, պատմագիտական մեծ գիտելիքների տեր պատմաբանը հիանալի պատկերացնում էր Օսմանյան կայսրության զարգացման պատմական օրինաչափությունները, նրա տեղն ու դերն իր օրերի եվրոպական մեծ տերությունների քաղաքականության տատասկու խաչմերուկներում, Շայկական հարցի երթյունն ու ցեղասպանության դրդապատճառները:

Քաղաքացիական կայուն դիմագիծ ունեցող պատմաբանը չէր կարող լուսաբար շրջանցել Աքդու Շամիդի սանձազերծած հայկական կոտորածները, որոնք նրան որոշել են, նախապես Պ. Կամբռնից հավաստի տեղեկություններ ստանալուց հետո²⁰⁵, 1897 թ. փետրվարի 2-ին Փարիզի Աշխարհագրական ընկերության սրահում՝ շուրջ

²⁰² Նույն տեղում, էջ 111:

²⁰³ Նույն տեղում, էջ 69:

²⁰⁴ A. Vandal, Une ambassade française en Orient sous Louis XV : la mission du marquis Villeneuve, 1728-1741, 2^{ème} éd., Paris, 1887. Կանդալի գիտական պատկառելի ժառանգության մասին տես՝ Ségur de, Albert Vandal // «Revue des deux mondes», livraison du 15 novembre 1910, p. 241-276:

²⁰⁵ L. Villate, նշվ. աշխ., էջ 164:

1500 ունկնդրի ներկայությամբ, հանդես գալ Հայկական հարցին նվիրված հրապարակային ելույթով²⁰⁶, որը Պ. Կուլբոն՝ նույն հարցին նվիրված իր ելույթում բնութագրել է իրու «սքանչելի»²⁰⁷: Քիչ անց, Վանդալի ելույթը հրատարակվել է առանձին գրքույկով²⁰⁸:

Վկայակոչելով բազմաթիվ անհերքելի փաստեր՝ Վանդալն անկողմնակալորեն ուրվագծում է Օսմանյան կայսրությունն ալեկոծած աննախառեալ իրադարձությունների համայնապատկերը, դրանց տալիս հավաստի զնահատականներ: Հայերի բնաջնջումը կոստանդնուպոլսում և Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում նա բնութագրում է իրու «մեծագույն կոտորած», «հրեշտավոր արարք», այն ժամանակների վերադարձ՝ «երբ թուրքմենական հորդաներն ասպատակում էին քաղաքակիրք և քրիստոնեական Ասիան»²⁰⁹: 1894 թ. օգոստոսին Սասունի տարածքում տեղի ունեցած կոտորածների կապակցությամբ նա մեկնաբանում է հայերի ըմբռուսության պատճառը, այն պայմանավորելով սոսկ որոշ գյուղերում արդեն վճարված հարկը կրկին անգամ վճարելուն առնչվող պահանջով, որը համարում է աննախառեալ կոտորածի միակ շարժառիթը: «Անկանոն գործերը և համիդիեները հարձակվեցին Երկրամասի վրա: Ավելի քան երեսուն գյուղ հրկիզվեց, բնակչությունը զանգվածաբար ոչնչացվեց և երբ մասամբ միջազգային քննիչ հանձնաժողովն այս վայրերը ժամանեց, հանդիպեց մարդկանց դիակներից բաղկացած մի սարի, դիակներից ուրծացած գետնի»²¹⁰:

Հայոց ցեղասպանության գիշավոր պատճառ միանգամայն իրավամբ համարելով Հայկական հարցին լուծում տալու անհրաժշտությունը, Վանդալն, այդուհանդերձ, իրադարձության դրդապատճառները պայմանավորում է հայկական կուսակցությունների գործունեությամբ, նշելով սակայն, որ դրա ակունքներն իրենց հեր-

²⁰⁶ Սատ Սապահ-Գյուլյանի վկայությամ՝ «Երբեք մի դասախոսություն դեռ այդքան մեծ հետաքրքրություն և ոգևորություն չեր առաջացրել»: Տե՛ս Ս. Սապահ-Գիլեան, Պ. Ալբրե Վանդալի դասախոսությունը. – «Նոր դար», 1897, թիվ 31:

²⁰⁷ P. Coulbaut, Les massacres d'Arménie et le rôle des puissances européennes, Anger, 1889, p. 14.

²⁰⁸ Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M. Albert Vandal de l'Académie française dans la salle de la Société de Géographie. Le 2 février 1897, Paris, 1897. Սապահ-Գյուլյանն, ի դեպ, վկայում է, որ սույն գրքույկը լույս է տեսել 15000 օրինակով: Տե՛ս Ս. Սապահ-Գիլեան, Պատասխանատունները, Փրավիտէնս, 1916, էջ 156:

²⁰⁹ Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M. Albert Vandal, p. 14, 15, 17.

²¹⁰ Նույն տեղում, էջ 15:

թին սկիզբ էին առնում չարաշահումներից, աննկարագրելի բռնություններից և պայմանագրերին ընթացք չտալուց²¹¹:

Ամենաեականը, սակայն, այն է, որ ըստ Կանդալի դիրքորոշման՝ Հայոց ցեղասպանությունն իրականացվել է ոչ թե տարերայնորեն, այլ ըստ նախօրոր ծրագրված և մանրազնին նշակված նախագծի։ Հայկական կոտորածների նախապատրաստման գործում նա, մասնավորապես ընդգծում է Պալեի վճռորոշ դերը։ Անդրադառնալով Տրապիզոնում, Էրզրումում, Դիարբեքիրում, Մուշում, Ուրֆայում, Բիթլիսում, Վանում, Սեբաստիայում, Կեսարիայում, Մալաթիայում սանձագերծված կոտորածներին, նա առանձնահատուկ նշանակություն է տալիս, մասնավորապես լայն տարածում գտած՝ «Ղեկավարը թույլատրում է սպանել հայերին»՝ թևածող ասույթին, որն ամենուր՝ «մի քանի շաբաթում, միայն այն վայրերում, ուր եվրոպական հյուպատոսներն էին բնակվում», պատճառ էր դարձել ավելի քան երեսուն հազար զոհի։

Պատմաբանի ուշադրությունից չի վրիպել կատարածումների դիմագերծման հարցը, քանզի իիմնավորապես բացահայտել է զորքերի, համիդիե ջոկատների և մոլեռանդ մահմեդական բնակչության՝ կոտորածների իրականացնան ընթացքում ունեցած եռանդուն մասնակցությունը. «Քաղաքներում հաշվեհարդարն իրագործում են զորքերը և մոլեռանդ մահմեդական բնակչությունը... Սինարեթների բարձունքից մյուեզինները ժողովրդին աղոթքի կոչելու փոխարեն՝ դրդում են կոտորածի, դաժանության, այնուհետև՝ նրանք մարդասպաններին մատնացույց են անում քրիստոնյային»²¹²:

Ամենակին մոռացության չտալով թե՛ կրօնական գործոնի և թե՛ մահմեդական մոլեռանդության ունեցած կործանարար դերը հայկական կոտորածներում, Վանդալն, այդուհանդերձ, ուշադրությունը սևորում է հայերի նկատմամբ սուլթանի վարած քաղաքականության գլխավոր միտումի՝ ցեղասպանության միջոցով նրանց բնաջնջելու հանգամանքի վրա. «Այս ամենը, – գրում է նա, – կատարվում է Պալեի իրակրմանք, նրա իրամանով։ Պալեի համար ֆանատիզմը սպանության մերենա է, որի ընթացքը նա շարժման մեջ է դնում, ըստ իր հայեցողության՝ ակտիվացնում, կարգավորում։ Սեկ այլ առիթով, նա շեշտում է. «Գոյության փոքր-իսկ նշանի առկայության դեպքում նրան (հային – Վ. Պ.) սպանում են»²¹³:

²¹¹ Նույն տեղում, էջ 13:

²¹² Նույն տեղում:

²¹³ Նույն տեղում, էջ 16-17, 20:

Ակնհայտ է, որ ֆրանսիացի պատմաբանն արևմտահայերի կոտորածներն անվանելով «ներոնյան մղձավանջներ»²¹⁴, որանք իրավամբ դիտում է իրեն պետականորեն իրականացվող քաղաքականության հիման վրա տեղի ունեցող իրադարձություն: Այդ նասին են վկայում նաև նրա՝ Կոստանդնուպոլսում 1896 թ. մի խումբ դաշնակցականների կողմից Բանկ օտոնանի գրավման դիպվածին տված մեկնարանությունները: Այս հարցում Վանդալն ուշադրություն է դարձնում այն անձանց խորամանկ ու նենգ վարչագծի վրա, որոնք իրականացնում էին պետության դեկավարի մտահղացումները: «Դավաճանները նախապես Պալեին իրազեկել են նրանց (հայերի – Վ. Պ.) մտադրությանը, որը, սակայն, թույլ է տվել, որ այդ փորձն ի կատար ածվի, որպեսզի այն օգտագործի իրեն պատրվակ՝ հայերի, անպաշտպան հայերի համատարած կոտորածի համար»: Դետևաբար, սուլթանի որդեգրած քաղաքականությունն այս հարցում նա բնութագրում է իրեն միապետի՝ իր իսկ հպատակների մի ստվար զանգվածի դեմ հյուսած դավադրություն²¹⁵:

Ըստ այս ամենի և չանսալով Դանուտոյի՝ «շատ խիստ հարձակողական դիրք» չգրավելուն առնչվող խնդրանքին²¹⁶, Վանդալն Աբդուլ Ջամիլին համարում է «աշխարհին երբեւ հայտնի՝ մարդկանց ամենամեծ դահիճներից մեկը» և պատմության մեջ առաջին անգամ նրան անվանում «կարմիր սուլթան»²¹⁷, որը «դատապարտված է ավելի վատթար կացության, քան հազարավոր հանգուցյաները և այս կայսրությունում, որտեղ այդքան մարդիկ են տառապում, միմյանց ատում և իրար սպանում, ամենամեղավորն է ու ամենադժոխան ամենքից»²¹⁸:

Քաջ գիտակցելով իր՝ իրեն պատմաբանի բարոյական ու քաղաքացիական պարտքը, Վանդալը չի բավարարվում սոսկ փաստերի թվարկմամբ և ելույթի երկրորդ մասը նվիրում է ստեղծված անելանի կացությունը շտկելու ուղիների որոնմանը: Նրա համոզմամբ,

²¹⁴ Նույն տեղում, էջ 13:

²¹⁵ Նույն տեղում, էջ 14, 19:

²¹⁶ U. Սապտա-Գիլեսան, նշվ. աշխ., էջ 154:

²¹⁷ Պայոց ցեղասպանության պատմագրության մեջ պատմաբաններից ոմանք այս բնորշումը սխալմամբ վերագրել են այլ գործիների: Օրինակ՝ U. Պրանսը՝ Կիւմանսուին, իսկ Վ. Գուստով՝ Կամբոնին: Stev M. Prinsse, նշվ. աշխ., էջ 299; Վ. Գուստ, Դաւթի ցեղասպանությունը: Աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովորդի ողբերգությունը, Երևան, 2002, էջ 66:

²¹⁸ Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M. Albert Vandal, p. 13, 21.

ջանի որ Թուրքիան ի վիճակի չէ բարենորոգվելու, հետևաբար, այն հարկ է բարենորոգել բռնի միջոցներով: Օսմանյան կայսրությանը ֆինանսական համատիրություն պարտադրող վարչակարգի հաստատումը համարելով «արդյունավետ դեղամիջոց», նա, այնուամենայնիվ, հաշվի առնելով այն կատաղի դիմադրությունները, որոնց այդ տարրերակն անվարան կյանքի կոչչի, գերադասում է դրանից ծեռնպահ մնալ՝ նախապատվությունը տալով տեղական բնույթի բարենորոգումների իրականացման անհրաժեշտությանը (խոսքը, մասնավորապես Վերաբերում է վերահսկողության ներքո գտնվող և երաշխիքներ ունեցող տեղական բարենորոգումների համակարգի հաստատմանը, հայկական նահանգներում եվրոպացի կառավարիչների նշանակմանը, հարկերի գանձման կարգավորմանը, անկողմնակալ արդարադատության հաստատմանը և այլն)²¹⁹, որոնք, նրա կարծիքով, ոչ միայն կասացնեին արևմտահայերի ջարդերը, այլև շեշտակիորեն կրաթելավեին նրանց վիճակը: Դարցի լուծումը հաջողությամբ պսակելու համար, ըստ նրա՝ անհրաժեշտ էր, որ Ֆրանսիան հող նախապատրաստեր փոխզիջումների ու համաձայնության կայացման համար²²⁰: Ուստի նա ֆրանսիացի գործներին, հրապարակախոսներին, հասարակական և կրոնական գործիչներին կոչում է ծևավորել կառավարության հայանպաստ քաղաքականությանն օժանդակող հասարակական կարծիք:

Ամբողջությամբ ծեռնպահ մնալով եվրոպական պետությունների դեկավար շրջանակների և ֆրանսիական կառավարության՝ Դայկական հարցի և արևմտահայերի ցեղասպանության նկատմամբ դրսեորած անկարեկից վերաբերմունքի քննադատությունից, ինչն անկասկած Վանդալի մոտեցման ակնբախ բացբողումն է, նա բավարարվում է Ֆրանսիայի արևելյան քաղաքականության առանձնահատկությունների մանրակրկիտ վերլուծությամբ, ելնելով եվրոպական պետությունների միջև հավասարակշությունը պահպանելու և ըստ այդմ՝ իր պետության շահերից, ընդգծում Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու անհրաժեշտությունը: Իբրև 1891-1893 թթ. ծևավորված ռուս-ֆրանսիական դաշինքի ջատագով, Վանդալ այս հարցի լուծման հեռանկարը շաղկապում է ռուս-ֆրանսիական հարաբերությունների հետագա զարգացմանը: Ընդունելով, որ դաշնակիցների «շահերն Արևելքում չեն համընկնում», նա, այդուհանդերձ, չի բացառում հաշտության

²¹⁹ Նույն տեղում, էջ 35-37:

²²⁰ Նույն տեղում, էջ 49:

Եզրեր գտնելու հավանականությունը, նույնիսկ պնդում է, որ «այս ուղղությամբ համատեղ գործունեությունը և անգամ նախաձեռնությունը թե' մեկ և թե' մյուս տերության համար կլինեն նույնքան օգտակար, որքան և պատվաբեր»²²¹:

Նշենք, որ իր մտորումների ընթացքում Վանդալն, անտարակույս, տուրք է տվել Ֆրանսիայի արտաքին քաղաքականության մարդասիրական բնույթի գերազահատմանն Արևելքում, գունազարդել կառավարող շրջանակների բարյացական դիրքորոշումն Արևելյան հարցում:

Դայկական հարցին առնչվող փոքր-ինչ այլ հիմնախնդիրներ է շոշափում և Դայոց ցեղասպանության սանձազերծումն այլ ելակետներից մեկնաբանում Բարձրագույն հետազոտությունների դպրոցի պրոֆեսոր Լեոն Սարիյեն (1842-1901), որոնք գուրկ չեն հետաքրքրությունից: Խիստ ուշագրավ են, մասնավորապես նրա դիտարկումներն արևմտահայերի քաղաքական նպատակների շուրջ: Վերլուծելով Սասունի հայկական գյուղերում քրդերի՝ պարբերական բնույթ կրող ասպատակություններին առնչվող խնդիրը, հեղինակը նշում է ոչ միայն հայերի շրջանում դրանց հետևանքով առաջ եկած դժգոհությունների մասին, այլև բացառում «առճակատում հրահրելու» Վերջիններիս ցանկությունը: Միևնույն հարցը նա քննարկում է շատ ավելի լայն կտրվածքով և իբրև թուրքերի՝ իրավիճակի հավաստի պատկերը խեղաթյուրելու պատասխան՝ պարզաբանում, որ հայերը չեն ծգուում անկախության, այլ, փաստորեն, շահախնդիր են բարենորոգումների իրականացման հարցում այն վարչակարգում, որի ենթակայության ներք գտնվում են, ինչպես նաև ցանկանում են սոսկ պաշտպանել իրենց կյանքը, ունեցվածքը, կանանց և աղջիկների պատիվը քրդերի և այլոց բռնություններից²²²: Դրանով իսկ նրա մեկնաբանությունը ծերք է բերում մեծ այժմեականություն, քանզի առ այսօր այս հարցը շահարկվում է Դայոց ցեղասպանության պատմության կեղծարարների կողմից:

Թեև մակերեսորեն, հեղինակն, այնուամենայնիվ, վկայակոչում է Դայկական հարցի գյուղության փաստը, Բեռլինի վեհաժողովի՝ Բարձր Դոանը պարտադրած բարենորոգումների տխուր ճակատագիրը, բազմաթիվ առջիններով հանգամանորեն անդրադառնում հայերի անապահով վիճակին. «Այն հայերին, որոնք իրենց ապրանքները, տները, կանանց պատիվը և երբեմն սեփական կյանքը

²²¹ Նույն տեղում, էջ 46, 48:

²²² L. Marillier, La Question arménienne, Paris, 1897, p. 2, 3.

պաշտպանելու հանցանքն են գործել՝ նետում են բանտ», – գրում է նա²²³:

Ինչ վերաբերում է օսմանյան կառավարությանը, որը հայերին համիրավի կասկածում էր անկախ և ինքնուրուց Դայաստան կազմավորելու փափագներ գուրգուրելու մեջ, ապա Մարիյեն հայերի նկատմամբ ննան դիրքորոշումը շաղկապում է տերությունների պարտադրած բարենորդումների ծրագրի կենսագործման պահանջին: Ստեղծված պայմաններում՝ սուլթանը հայերին սկսում է դիտել իբրև նենգ հպատակների, ուստի նրա և օսմանյան պաշտոնյաների միջև ծևավորվում է հայացքների ընդհանրություն, որի արդյունքում բազմապատկվում են հայերի նկատմամբ կիրառվող հալածանքները²²⁴: Թեև Դայոց ցեղասպանությունը հեղինակն ուղղակիորեն չի դիտում իբրև մի իրադարձություն, որը ծնունդ էր առել սուլթանի որդեգրած՝ Դայկական հարցին վերջնական լուծում տալու «միակ» հնարավոր եղանակի կենսագործման հետևանքով, անեն դեպքում, հստակորեն նատնացույց է անում օսմանյան միապետի և պաշտոնական անձանց դեկավար դերը կոտորածներին ընթացք տալու հարցում, որոնք ամեն բանից զատ, ջանում էին զոհերին իբրև մեղավորներ ներկայացնելու միջոցով «զանգվածային կոտորածին» օրինականություն հաղորդել²²⁵:

Այսպես, Մարիյեն ամենկին չշրջանցելով ջարդարարների գործած վայրագությունները, անվանելով նրանց «բարբարոսներ»²²⁶, պարբերաբար ընդգծում է առավել կարևոր՝ օսմանյան իշխանությունների՝ կոտորածներին ունեցած մասնակցության հանգամանքը: Օրինակ, 1895 թ. Արևմտյան Դայաստանի բազմաթիվ քաղաքներում և գյուղերում տեղի ունեցած ջարդերի առիթով նա, մասնավորապես մատնանշում է «տեղական իշխանությունների լրակյաց հանցակցությունը, որոնց դիրքորոշումն, անկասկած, կյանքի է կոչվել ավելի բարձր շրջանների թույլտվությամբ, իսկ երբեմն՝ հստակ հրամանների հիման վրա»²²⁷: Դեղինակի համանման դիտարկումներին ենք հանդիպում նաև 1896 թ. Բիթլիսում, Սարաշում, Ուրֆայում և այլ վայրերում տեղի ունեցած կոտորածների դրվագ-

²²³ Նույն տեղում, էջ 9:

²²⁴ Նույն տեղում, էջ 5, 6:

²²⁵ Նույն տեղում, էջ 9:

²²⁶ Նույն տեղում:

²²⁷ Նույն տեղում, էջ 15:

ների նկարագրության ընթացքում²²⁸: Տեղասպանության գլխավոր պատասխանատու համարելով Աբդուլ Շամիդին, նա հեգնանքով ակնարկում է հայկական կոտորածների հարցում մեղքի բաժինն ունեցող օսմանյան պաշտոնյաների հանդեպ սուլթանի «բարյացական» վերաբերմունքը²²⁹:

Ամեն դեպքում, Մարիյեն տարբեր առիթներով համադրելով անսքող փաստերը՝ առանձնացրել է որոշ թուրք նահանգային դեկավարների և հոգևոր գործիչների, արժևորել հայերի նկատմամբ դրսնորած նրանց բարյացակամ վերաբերմունքը, որոնք իրենց հնարավորությունների սահմաններում ջանացել են սատարել հայերին, անգամ գերադասել են իրենց իսկ շնորհազրկությունը, քան արդարությունն ու մարդասիրությունը ուժնահարող հրամանների ի կատար ածումը: Ի վերջո, նա կոտորածների պատասխանատու է համարում միայն նրանց, ովքեր դրանց առնչվող հրամաններ են արձակել²³⁰:

Միաժամանակ Մարիյեն քննադատական խոսքեր է ուղղում Եվրոպական տերությունների հասցեին՝ սուլթանի հետ մեկտեղ, իրավամբ, նաև նրանց վրա բարդում կոտորածների պատասխանատվությունը: Եվրոպական տերությունները պարտավոր էին, ըստ նրա՝ կոտորածից, բռնի կրոնափոխությունից փրկել մի ժողովրդի, որի «միակ զանցանքն այն է, որ թույլատրել է իրեն կոտորել առանց դիմադրության»: Եվրոպայի միջամտությունը դիտելով իբրև միջազգային պայմանագրերի միջոցով հավատված իրավաբանական պարտավորություն, Մարիյեն շարունակում է. «Նա կարող էր, եթե այդ ցանկանար, անել այն, ինչ պետք է աներ. նա ի զորու էր, սակայն չցանկացավ այդ անել»²³¹: Քննադատելով Եվրոպական մեծ տերություններին սոսկ հայերի հանդեպ ցուցաբերած «պլատոնական» համակրանքի, իսկ նրանց դեկավարներից ոմանց՝ «համատեղ միջամտություն» ձեռնարկելուն ընդդիմանալու և դրան խոչընդոտելու համար, նա, այրուհանուերձ, չի մեկնաբանում նման քաղաքականության պատճառները, որոնք հանգում էին գլխավորապես Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպաննանը:

²²⁸ Նույն տեղում, էջ 17-18:

²²⁹ Նույն տեղում, էջ 14:

²³⁰ Նույն տեղում, էջ 6-7, 15, 19:

²³¹ Նույն տեղում, էջ 19:

Տարիներ անց, Մարիյեի ողբերգական վախճանի առիթով հարգանքի խորին տուրք մատուցելով նրա հիշատակին՝ «Անահիտը» տվել է նրա գործունեության հետևյալ բարձր գնահատականը. «Մարիյե գլխաւոր նախադրդիչներն մին եղաւ Ֆրանսայի մեջ հայասիրական շարժման զարթումին, եւ մինչեւ իր վերջին վայրկեանը իր սիրտը մեզի հետ եղաւ, իր բոլոր ուժերը մեր դատին տրամադրութեանը նուիրուած մնացին... Մեր ժողովուրդը պիտի չմոռնայ այդ կեղեցուածներու սրտանց բարեկամ ու պաշտպան հանդիսացող ֆրանսացին անունը»²³²:

Եվրոպական տերությունների քաղաքականությունը շատ ավելի, քան Մարիյեն հատու քննադատության է Ենթարկում Պ. Կուլբոն՝ Անժերի Կաթոլիկական համալսարանում 1899 թ. փետրվարի 24-ին ունեցած՝ Դայոց ցեղասպանությանը նվիրված հրապարակային ծավալուն ելույթում: Վկայակոչելով այդ ժամանակաշրջանուն արդեն լուս ընծայված թե՛ Ֆրանսիական և թե՛ անգլիական դիվանագիտական փաստաթրերի ժողովածուներում ամփոփված հարուստ վավերագրերը, նա, ինչպես և Վանդալը, ցուցաբերում է ընդգրկուն մոտեցում՝ բազմապիսի առանցքային հարցերի վերհանմամբ: Դեղինակի դիրքորոշումը խարսխվում է մի շարք էական դրույթների վրա, ինչպիսիք են Օսմանյան կայսրությունում հայերի անելանելի կացությունը, բարենորոգումների անցկացման հարցում Բարձր Դռան չկանությունը, հայերի բնաշնջումն օսմանյան կառավարության կողմից պետական քաղաքականության մակարդակով, եվրոպական տերությունների քաղաքականության խարազանումը:

Դայերի կացության վատթարացումը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո նա մեկնաբանում է օսմանյան գահակալի հայահալած քաղաքականության սաստկացմամբ, հեզնաբար նշելով, որ նրա իրականացրած բարենորոգումները մնացել են միայն թղթի վրա²³³: Ըստ նրա՝ թեպետ հայերի գանգատները որևէ հետաքրքրության չեն արժանացել, թուրքերը, սակայն, անվարան դիմել են իրենց խիստ բնորոշ մեթոդներին, որոնք «հայտնի են ամենքին: Պահպանելու համար իրենց տիրապետությունը՝ թուրքերը երբեք չեն խորշել դիմելու ամենաարյունալի միջոցների: Այնժամ, երբ հույներն են անհանգստություն պատճառում՝ նրանց կոտորում են, այնժամ, երբ ենիշերիներն այլևս պիտանի չեն դառնում՝ նրանց

²³² «Անահիտ», Գ տարի, 1901, թիվ 10-11, էջ 266:

²³³ P. Coulbaut, նշվ. աշխ., էջ 3, 4:

գնդակոծում են, երբ հայերն են գանգատվում՝ նրանց բնաջնջում են»²³⁴:

Չանտեսելով այն էական դերը, որը սուլթանի կայացրած որոշումների կենսագործման և իրադարձությունների հետագա ընթացքի վրա ունեցել են թե՛ կրոնական զանազանության հանգամանքը և թե՛ մահմեդական մոլեռանդությունը (հեղինակը, մասնավորապես նշում է կրոնափոխության հազարավոր դեպքերի հետևանքով քրիստոնյաների և մահմեդականների միջև թվական հավասարակշռության խախտման մասին), Կուլքոն շարունակ ուշադրության կենտրոնում է պահում հայերի հանդեպ պետականորեն դրսեորվող քաղաքանության հանգամանքը, պարբերաբար շեշտում Արդուլ Ջամիդի և օսմանյան գերագույն իշխանությունների վճռորոշ դերակատարությունը: «Դուքը վճռել եր ոչնչացնել հայերին երկաթի, կրակի և սովի միջոցով», – հավատում է նա: 1895 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած հայերի ջարդերը Կուլքոն շաղկապում է Պալեի հրահանգների, իսկ երկարատև ամիսների ընթացքում հազարավոր քրիստոնյաների կոտորածների իրականացումը՝ անձանբ սուլթանի հրամանների հետ²³⁵:

Արդուլ Ջամիդի որդեգրած՝ հայերի զանգվածային ոչնչացման քաղաքականության մեկնակետն, իրավամբ, համարելով 1894 թ., Կուլքոն, այդուհանդերձ, գտնում է, որ լայնահուն կոտորածների սանձազերծմանը մեծապես նպաստել է 1895 թ. աշնանն Օսմանյան կայսրությունում տարածում գտած՝ Արդուլ Ջամիդի կողմից քրիստոնյաներին զիջումներ անելուն Վերաբերող շշուկը, որն Արևմտյան Ղայաստանի զանազան նահանգներում հանգեցրել է «սուլթանի պաշտոնյաների դեկավարությամբ» ծավալուն ջարդերի: «Այդ պահից ի վեր, գոհերի թիվը հարկ է հաշվել հազարներով, այլ ոչ թե հարյուրներով... Գրեթե երեք ամսվա ընթացքում հայերով բնակեցված բոլոր գյուղերը կողոպտվել են, այնուհետև՝ հրկիզվել, բնակչիչները՝ ոչնչացվել»: Կոտորածին ավելի մեծ թափ հաղորդելու մտադրությամբ է, որ «Արդուլ Ջամիդը քրդերին բաժանել է մի քանի թնդանոթ և կատարելագործված հրացաններ»²³⁶:

Ջայր Շարմետանի հրապարակած փաստաթղթերի²³⁷ ուսումնա-

²³⁴ Սույն տեղում, էջ 5:

²³⁵ Սույն տեղում, էջ 5, 10, 14:

²³⁶ Սույն տեղում, էջ 7, 10, 11-13:

²³⁷ Այդ մասին մանրամասն տե՛ս սույն գրքի երրորդ գլխի երրորդ ենթագլխում:

սիրությունը մեծապես նպաստել է ցեղասպանության գործընթացի շուրջ Կուլբոյի պատկերացումների հստակեցմանը և թույլատրել հանգելու խիստ իրատեսական եզրակացությունների. «Սխալ կիխնի կարծել, թե Դայկական հարց այլս գոյություն չունի... Կարմիր սուլքանը փոխել է մարտավարությունը... Զանգվածային կոտորածների համակարգը մերժվել է, այժմ դիմել են առանց դատ ու դատաստանի մահապատիճների, անհատական սպանությունների, բռնի կրօնափոխությունների և, մասնավորապես սովամահության»²³⁸: Ակնհայտ է, որ Կուլբոն, ի տարբերություն շատերի, ըմբռնել է և հավուր պատշաճի արժենորել հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականության շարունակական բնույթը՝ զանազան եղանակների կիրառմամբ, ինչը մենք համարում ենք նրա մոտեցման ակնառու առավելություններից:

Կուլբոյի ելույթում մեծ տեղ է հատկացված նաև Եվրոպական պետությունների քաղաքականության վերլուծությանը, որը հիմք է ծառայել խստագույնս դատապարտելու՝ հայերի ողբերգության առնչությամբ նրանց որսակորած քանահրական վերաբերմունքը: Նրան հաջողվել է վերհանել նման անտարբեր դիրքորոշման հիմնական պատճառները. «Դայերի ճակատագիրը,— գրում է նա,— տերություններին առանձնապես չի անհանգստացնում. Ֆինանսական հարցից բացի, խոսքը նրանց համար նախ և առաջ՝ վերաբերում է այն բանին, որ խոչընդոտեն իրենցից որևէ մեկի ազդեցության ընդլայնմանը կամ նրա տարածքի ընդարձակմանը»²³⁹: Տերությունների վարած քաղաքականության ոլորտում նա իրավամբ առանձնացնում է նրանց անվերապահորեն որդեգրած՝ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման և տարանջատ գործողություններից ձեռնպահ մնալու սկզբունքները: Չանտեսելով, սակայն, նրանց պառակտող տարածայնությունները՝ Կուլբոն ծաղրի է ենթարկում այսպես կոչված «Եվրոպական համերգը»՝ տերությունների կարծեցյալ միասնական գործողությունը, որը հիմնովում է նրանց միջև առկա «փոխադարձ անվստահության և ատելության վրա» և «ծնունդ է առել ոչ թե հետաքրքրությունների ընդհանրությունից, այլ նկրտումների հակադրությունից»: Նենց այս դիրքերից է նա մոտենում նաև Դայկական հարցի լուծմանը ուսւ-

²³⁸ P. Coulbaut, նշվ. աշխ., էջ 30-31:

²³⁹ Նույն տեղում, էջ 26:

Ֆրանսիական դաշինքի լույսի ներքո՝ անհնարին համարելով, ի տարբերություն Վանդալի, «հակասական շահերի հաշտեցումը»²⁴⁰:

Եվրոպական պետությունների թվում Կուլքոն, սակայն, բացառություն է անում Ֆրանսիայի համար և ցուցաբերելով բացահայտ կողմնակալ մոտեցում՝ նրան հանդիրավի ներկայացնում իրու քրիստոնյաների երդայալ հովանավորի, որի «քարի համբավն աշխարհում բազում դարեր ի վեր նրան վերածել է ազգերի խաղաղասեր դատավորի», միաժամանակ հավաստում, որ Ֆրանսիան երեւ չի հրաժարվել իր օժանդակությունը ցուցաբերել քրիստոնյաներին՝ մահմեղականների հետ նրանց դարավոր հակամարտության խաչուղիներում²⁴¹:

Դիմնվելով «Դեղին գրքի» վրա, Կուլքոն վկայակոչում է բազմաթիվ արժանահավատ փաստեր՝ ակներև դարձնելու համար կոտորածների ընթացքում՝ Օսմանյան կայսրությունում ծառայողական պարտականություններն իրականացնող ֆրանսիացի դիվանագետների՝ հայերի հանդեպ ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքը, որոնց միջանտության շնորհիվ փրկվել են բազմաթիվ մարդկային կյանքեր: «Ֆրանսիան, – եզրակացնում է նա, – Դայաստանում տեղի ունեցող կոտորածների ժամանակ իր ներկայությունն Արևելքում զգալ է տվել հիասքանչ ձևով: Մեր դեսպանի (Պոլ Կամբոնի – Վ. Դ.) հպարտ խոսելառնը հարգանք է ներշնչել սուլթանին»²⁴²:

Դայերի փրկության հարցում Ֆրանսիայի քաղաքականության ծախողումը նա մեկնաբանում է Արևելքում բողոքականության տարածմամբ, որը տեղի է տվել Անգլիայի և հատկապես Գերմանիայի վարկի բարձրացմանը: Դենց դրանով է նա անիրավացիորեն պայմանավորում Ֆրանսիայի գործադրած ջանքերի փոխարինումը «Եվրոպական համերգի» անպտուղ գործունեությամբ:

Կանդալի հետքերով գունազարդելով Ֆրանսիայի արևելյան քաղաքականությունը և նրան ներկայացնելով Արևելքում բնակվող քրիստոնյա ժողովուրդների ջերմեռանդ հովանավորի դերում, Կուլքոն դրանով իսկ ստանձնում է, ըստ եռթյան, իր երկրի պետական քաղաքականության ջատագովի դերը, անտեսելով այն կործանարար հետևանքները, որոնք հայերի բնաջնջման ընթացքում ունեցել են Ֆրանսիայի բացահայտ թրքամետ քաղաքականությունը: Ֆրանսիացի դիվանագետների գործադրած ջանքերը (թե՛ Բարձր Դոան

²⁴⁰ Նույն տեղում, էջ 26-29:

²⁴¹ Նույն տեղում, էջ 14-16:

²⁴² Նույն տեղում, էջ 19-20, 21:

առջև բողոքի ծայն բարձրացնելու ուղղությամբ և թե՛ անպաշտպան հայերին նահանգներուն օգնության ծեռք մեկնելու հարցում) շրջանցելն անհարկի է: Սակայն հարկադրված ենք միաժամանակ շեշտել, որ գովերգելով Ֆրանսիայի պետական քաղաքականության մարդասիրական բնույթն Արևելքում, Կուլըոն Դայոց ցեղասպանության կասեցման ուղղությամբ ֆրանսիական կառավարող շրջանների կարծեցյալ շահագրգուվածությունն ու հետևողականությունը չի հիմնավորում որևէ փաստով, ինչի հետևանքով հանգում է պատմական իրականությանն այս հարցում հակասող հետևության:

Դայոց ցեղասպանության իրականացումը պետական քաղաքականության մակարդակով առավել ցայտունորեն հաջողվել է բացահայտել Լուի Սելըսին Դայկական հարցի պատմությանը նվիրված ընդարձակ և վերլուծական հոդվածում²⁴³: Թեև նա սահմանափակվում է բուն կոտորածների պատմության հիմնական դրվագների շուրջ հպանցիկ տեղեկությունների հաղորդմամբ, այդուհանդերձ, նրա գլխավոր և դրվագանքի արժանի ներդրումը հանգում է ցեղասպանության հիմնական պատճառների վերլուծությանը և սուլթանի քաղաքականության համակողմանի ուսումնասիրությանը:

Դայկական հարցը հեղինակն իրավամբ դիտում է իրեն Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս և այն համարում Դայոց ցեղասպանության իրականացման հիմնական պատճառ, մասնավորապես ընդգծելով, որ Դայկական հարցին լուծում տալու համար հարկ էր ոչնչացնել հայերին²⁴⁴: Շարժառիթների թվում նա չի անտեսում մահմեղականների ատելությունը քրիստոնյաների հանդեպ և, ինչն ավելի կարևոր է՝ եվրոպական տերությունների սին խոստումների հետևանքով՝ բարենորոգումներ ակնկալող հայերի մշտական սպասողական և լարված վիճակը, ուստի և արժնորում է օսմանյան իշխանություններին անհանգստություններ պատճառող այս հանգամանքի նշանակությունը ևս²⁴⁵:

Դիմնվելով արժանահավատ սկզբնաղբյուրների և հատկապես հայր Շարմետանի իրատարակած փաստաթղթերի վրա՝ Սելըսն Օսմանյան կայսրության տարբեր վիլայեթներում գործող վարչակարգը բնորոշում է իրեն «ահակերչական»: Դղելով հիմնավոր փաստեր՝ նա տարբեր կտրվածքներով բացահայտում է և հիմնավորում Դայոց ցեղասպանության իրականացումը պետական քաղաքակա-

²⁴³ Selosse L., La question arménienne // « Revue de Lille », 1897, p. 289-311 ; 516-539.

²⁴⁴ Նույն տեղում, էջ 517:

²⁴⁵ Նույն տեղում, էջ 303-304:

նության մակարդակով, լիովին դիմագերծում օսմանյան պաշտոնյաներին, այդուհանդերձ, շեշտում, որ մարդասպանների հանցակիցը ոչ այնքան նրանք են, որքան հայերի բնաջնջումն իրականացնող բարձրաստիճան գինվորականներին հովանավորող և նրանց պարգևների արժանացնող օսմանյան վարչության վերին օդակներում գտնվող ղեկավարները²⁴⁶: Ըստ այդմ՝ նա հայկական կոտորածների պատասխանատվությունը բարորում է գերազանցապես անձամբ Արդուլ Դամիդ II-ի և նրա շուրջ համախմբված հանցախմբի՝ Պալեի վրա²⁴⁷: «Ամբողջ չարիքի, վարչական կոռուպցիայի, ֆինանսական խառնաշփոթի, կոտորածների կազմակերպման պատասխանատվությունը բարդվում է անձամբ սուլթանի վրա», – եզրակացնում է նա²⁴⁸:

Միանգամայն իրատեսական են և ընդունելի Դայկական հարցում սուլթանի որդեգրած խորամանկ քաղաքականությանն առնչվող Սելոսի մեկնաբանությունները: Թեև Օսմանյան կայսրության տրոհման հնարավորությունը նա քննարկում է իբրև Դայկական հարցի լուծման հնարավոր տարերակներից մեկը, այդուհանդերձ, այն չի համարում իրատեսական, քանզի գիտակցում է, որ տերություններից և ոչ մեկը նույնիսկ չի պատերացնում, թե ինչպես է հնարավոր այդ անել²⁴⁹: Ուստի արևմտահայերի համար Եվրոպական տերությունների մշակած բարենորոգումների ծրագրերի իրականացման տապալումը նա շաղկապում է գլխավորապես բոլոր պետությունների հավանությանն արժանացած՝ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման «տիխրահօչակ» վարդապետությանը, մանրամասնելով, որ սուլթանը հմտորեն օգտվում էր նրանց տարածայնություններից և թշնամանքից²⁵⁰:

Սելոսը քննադատության է ենթարկում Եվրոպական տերությունների ղեկավարներին, որոնք գիտակցելով սուլթանի չկամությունը բարենորոգումների իրականացման խնդրում ցանկություն չեն դրսկորում նրան դրանք պարտադրելու²⁵¹: Թեև հայկական կոտորածների անպատճելիության հարցում նրա քննադատության կիզակետում գտնվում է առաջին հերթին Գերմանիայի կայսրը, այդուհան-

²⁴⁶ Նույն տեղում, էջ 301:

²⁴⁷ Նույն տեղում, էջ 305-307:

²⁴⁸ Նույն տեղում, էջ 528:

²⁴⁹ Նույն տեղում, էջ 528-529:

²⁵⁰ Նույն տեղում, էջ 517-518:

²⁵¹ Նույն տեղում, էջ 535:

դերձ, նա չի զլանում չափավոր դիրքերից հանդիմանանքի խոսքեր ուղղել նաև Երրորդ հանրապետության ղեկավարների հասցեին, մասնավորապես «Դեղին գրքի» տպագրության հարցում ցուցաբերած հապաղման և փաստաթղթերը կրօնատումներով հրապարակելու համար²⁵²:

Սելոսի հիմնական արժանիքներից հարկ է ընդգծել նաև օսմանյան ղեկավարների և նրանց ձայնակցող արևմտյան գրչակների կողմից շրջանառության մեջ դրած՝ հայերի կարծեցյալ ապստամբության վարկածի հերթումը, որն իբր պատճառ է դարձել նրանց հանդեպ բռնությունների կիրառման համար: «Մամեդականների գոհերի թիվն աննշան է, ինչն անբացատրելի երևույթ է, եթե, ինչպես հավակնում են թուրքերը, խոսքն առնչվում է հայերի կողմից հրահրված ապստամբությանը», – գրում է նա²⁵³: Դայերին իբրև ապստամբների, անուղղելի հեղափոխականների, ներկայացնելու միտումը, որոնք ձգտում են ոչնչացնել հեզ և անպաշտպան նահմեդականներին, նա համարում է լկտիություն²⁵⁴: Նույնիսկ Դաշակյան կուսակցության առնչությամբ հեղինակը թեև հիշատակում է, որ նրա գործունեության հետքը փաստվել է այլոց կողմից տարբեր՝ օսմանյան իշխանությունների համար ոչ այնքան քարեհած իրադարձությունների վրա, այդուհանդերձ, ինքը նման հարցադրմանը հավանություն չի տալիս: Փոխարենը, սակայն, նա չի զլանում առիթն օգտագործել այս կուսակցության առնչվող խնդիրը շահարկել՝ Անգլիայի քաղաքականության խարազանման համար, մասնավորապես Եգիպտոսի բռնագրավման հարցում²⁵⁵:

Սելոսի շարադրանքում նկատելի են նաև տարբեր բացքողումներ, մասնավորապես նա շրջանցել է Հայոց ցեղասպանության մեկնաբանման համար մեծ նշանակություն ունեցող այնպիսի էական հիմնահարցեր, ինչպիսիք են հայկական տարածքների բռնագրավումը, Դայկական հարցի առաջացման հանգամանքների վերլուծությունը: Նա գերծ չէ նաև միսալ հավաստումներից, օրինակ, հայերի և մահմեդականների թվաքանակի հարաբերակցության հարցում: Դաշանաբար, իրեն սոսկ նատչելի, սակայն, կողմնակալ սկզբնադրյուրների հիման վրա, ակնհայտորեն նվազեցնելով օսմանահպա-

²⁵² Նույն տեղում, էջ 538-539:

²⁵³ Նույն տեղում, էջ 301:

²⁵⁴ Նույն տեղում, էջ 303:

²⁵⁵ Նույն տեղում, էջ 305: Այդ մասին մանրամասն տե՛ս սույն գրքի Երկրորդ գլուխ երրորդ ենթագլուխում:

տակ հայերի թիվը, նա կարծիք է հայտնում, ըստ որի՝ իրենց անունը կրող տարածքում նրանք իբր կազմել են բնակչության հազիվ մեկ երրորդը: Դարևան տարածաշրջաններում՝ թե՛ Օսմանյան կայսրության և թե՛ Կովկասում բնակվող հայերի թվաքանակն առհասարակ նա ներկայացնում է երկուս և կես միլիոնի սահմանում: Ինչպես տեսնում ենք, դեռևս ամբողջությամբ չկողմնորոշվելով այս հարցում, Սելյոս Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի մոտավոր թիվը շփոթել է Սերծավոր Արևելքում բնակվող հայերի ընդհանուր թվաքանակի հետ:

Չնայած նման թերացումներին, հարկ են համարում նշել, որ Սելյոսի ուսումնասիրությունն իր ժամանակի համար ունեցել է մեծ նշանակություն, որը մեծապես նպաստել է ոչ միայն ֆրանսիական հանրությանը հավաստի տեղեկություններ հաղորդելուն, այլև, ինչն ավելի կարևոր է, Դայկական հարցի պատմության գիտական լուսաբանմանը:

Քննարկվող ժամանակաշրջանում Դայոց ցեղասպանության ուսումնասիրության ասպարեզում մեծ հետաքրքրություն է դրսելորել «Ռևյու դե ռեյու» հանդեսի տնօրեն Ժան Ֆինոն (1856-1922), որն առաջիններից է Ֆրանսիայում լուսաբանել համիլյան կոտորածների հավաստի պատկերը և ֆրանսիական հանրությանը ստույգ տեղեկություններ հաղորդելու նպատակով հրապարակել անգլիացի հասարակական և հոգևոր գործիչ, Դայկական հարցին նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ Մարտում Մաք Ջոլի «Դայաստանը Եվրոպայի առջև» աշխատությունը²⁵⁶: Դրա ընդարձակ ներածական հոդվածում Ֆինոն շոշափում է Օսմանյան կայսրությունում արևմտահայության բնաջնջմանն առնչվող մի շարք հարցերը²⁵⁷:

Դիմնվելով, իր իսկ հավաստմամբ, ամեն օր ստացվող նորանոր փաստերի վրա՝ Ֆինոն Դայոց ցեղասպանությունը մեկնաբանում է իբրև օսմանյան կառավարության կողմից պետական քաղաքականության մակարդակով իրականացվող իրադարձություն: «Մի ամբողջ քրիստոնյա և քաղաքակիրթ, խաղաղասեր ու խելացի ժողո-

²⁵⁶ Mac Coll M., L'Arménie devant l'Europe // « Revue des revues », livraison du 1^{er} septembre, 1895, p. 381-402 ; livraison du 15 septembre, 1895, p. 492-521. Նշենք նաև, որ երկու տարի անց Փարիզում այն վերահատարակվել է. տե՛ս Mac Coll M., L'Arménie devant l'Europe. Le gouvernement turc est une théocratie, Paris, 1897:

²⁵⁷ J. Finot, Un peuple de martyrs ! (La Question arménienne) // « Revue des revues », livraison du 1^{er} septembre 1895.

վուրդ,— գրում է նա,— ... անհետանում է մարդասպամների դանակների հարվածներից, որոնց բացահայտորեն հովանավորում է նույնքան բարբարոսական, որքան և դաժան կառավարությունը»²⁵⁸: Յեղասպանության գործընթացում նա արձանագրում է միայն մեկ՝ կոտորածների մոլեգնության աճին առնչվող փոփոխություն, որը «ժամանակ առ ժամանակ կրկնապատկվում է»: Նուրբ երգիծանքով նա նշում է, որ օսմանյան կառավարությունը խույս է տալիս քաղաքակիրթ երկրին բնորոշ «տարրական պարտավորություններից», սակայն, փոխարենը՝ կազմում է իր բոլոր իրավունքներից և դիմում «ժողովուրդների իրավունքին», որպեսզի կոտորածները շարունակելու թույլտվություն ստանա»²⁵⁹:

Սասունի ջարդերն անվանելով «սարսափելի», Ֆինոն նկատում է, որ դրանք «զարիուրանքով են համակել իրենց իսկ թուրքերին»²⁶⁰: Նա բացահայտում է համիլյան վարչակարգի եռթյունը, որը ոչ միայն չի խորչել կոտորածներից, կողոպուտից, գյուղերի ամայացումից, հազարավոր ընտանիքներ սնանկացնելուց, այլև չի քողարկել իր անզորությունը կարգ ու կանոնը պահպանելու հարցում: «Ընդհանուր առնամբ, մենք մասնակցում ենք,— եզրակացնում է նա,— ամենահեշավոր ներկայացման՝ ընդհանուր իրավունքների նկատմամբ գործադրվող ոճիրների թագադրության ու մեծարմանը, որոնք պայմանավորված են եվրոպական պետությունների կողմից ճանաչված կառավարության դիրքորոշմաբ»²⁶¹: Ի դեպ, Ֆինոն ոչ միայն հիմնավորապես դիմագերծում է օսմանյան գերազույն իշխանություններին, այլև ֆրանսիացի եզակի պատմաբաններից է, որը հարևանցիորեն ակնարկում է պատմական Դայաստանի ռազմակալման փաստը, եեզնանքով նշում, որ թուրքական կառավարությունը կոտորածն իրականացնում էր «իր (ընդգծումը հեղինակինն է – Վ. Պ.) տարածքներում»²⁶², թեև գերծ է մնում մանրամասների մեջ թափանցելուց:

Ֆինոն մանրազնին քննարկում է և դատապարտում եվրոպական պետությունների դիրքորոշումը, իսկ Դայկական հարցի հանդեպ նրանց դրսեւրած անտարբերությունը պատճառաբանում Օսմանյան կայսրության գործերին միջամտելու ցանկության բացակա-

²⁵⁸ Նույն տեղում, էջ 377:

²⁵⁹ Նույն տեղում:

²⁶⁰ Նույն տեղում, էջ 378:

²⁶¹ Նույն տեղում, էջ 377:

²⁶² Նույն տեղում:

յությամբ, հանգանանք, որը կարող էր «Եվրոպայի չորս անկյուններում իրդեհ քռնկել»²⁶³:

Ֆինոյի անուրանալի արժանիքներից է նաև հայերի վրա բարդ-վող անհիմն նեղադրանքների հերցումը, ըստ որոնց՝ անկախություն ծեռք բերելու նրանց զգտումները մեծ դժվարություններ են հարուցել Եվրոպական դիվանագիտության առջև: Նա զուգահեռներ է անցկացնում արևելահայերի և արևմտահայերի կացությունների միջև, ըստ այդմ՝ վկայակոչում Արևմտյան Դայաստանում բնակվող հայերի անապահովության առնչվող բազմապիսի փաստեր և հիմնավորում օսմանյան վարչակարգից արևմտահայության դժգոհության օրինաչփությունը: Ուստի Դայաստանի անկախության հոչակնան խնդրի շահարկման կապակցությամբ նա պարզաբանում է. «Խոսքը Վերաբերում է այդ դժբախտ բնակիչների կյանքին և ունեցվածքին, այլ ոչ քաղաքական երազանցների»²⁶⁴:

Ազատագրական շարժման զարդոնքն Արևմտյան Դայաստանում Ֆինոն պայմանավորում է մեծ տերությունների անտարբեր դիրքորոշմամբ և նշում, որ անհավասար պայքարում մասի փնտրող հայ երիտասարդությունը հույս էր տածում իր «հերոսական վախճանի միջոցով Եվրոպային դուրս բերել խորն ընդարձացումից»²⁶⁵: Ի տարբերություն իր մի շարք ժամանակակիցների՝ նա քննադատական խոսքեր է ուղղում ֆրանսիական դիվանագիտության հասցեին, որն իր հովանու ներքո է վերցնել Թուրքիային և միաժամանակ ֆրանսիացիներին հիշեցնում է հայ ժողովրդին օգնության ծեռք մեկնելու պարտքի զգացողության նաև:

Ինչպես տեսնում ենք, ոչ միայն Ֆինոյի մեկնաբանություններն են իրատեսական, այլև հարցադրումներն են ինքնատիպ, քանզի նա արժենորել է իրադարձությունների ժամանակակցի համար դեռևս ոչ այնքան մատչելի, սակայն, սկզբունքային նշանակություն ունեցող հիմնահարցեր, որոնք հաճախ վրիպել են այլոց ուշադրությունից, ինչը և կարևորում է նրա մոտեցման նշանակությունը²⁶⁶.

²⁶³ Նույն տեղում, էջ 378:

²⁶⁴ Նույն տեղում, էջ 379:

²⁶⁵ Նույն տեղում:

²⁶⁶ Նշենք նաև, որ «Ուկու դի ուկու» հանդեսում Ֆինոն հրապարակել է նաև Չոպանյանի կողմից իրատարակության պատրաստված «Դայաստանի կոտորածներոց», դեռևս անտիկ ժողովածուից մի նամակ՝ նվիրված Ուրժայի կոտորածներին, որին կից ժամուցան մեջ արտացոլվել են մեր կողմից Վերլուծված՝ նրա հիմնական եղրակացությունները: Les massacres d'Edesse. (Récit d'un témoin) // « Revue des revues », 82

Դարկ է չանտեսել Սապահ-Գյուլյանի ջանքերով 1896 թ. Փարիզում կազմակերպված «հոչակաւոր սալոնների տեր՝ նշանաւոր բոլոր տիկիններից մի բացառիկ» հավաքում²⁶⁷ տիկին Յուդրի-Մենոսի՝ համիդյան ջարդերին նվիրված ելույթը: Յեղինակն ընթանալով ցեղասպանության սանձազերծման պատճառների բուն էռթյունը, դրա իրականացումը պայմանավորում է «Դայկական հարցից ծերբագատվելու» նպատակ հետապնդող՝ Արդուլ Յամիդի ծրագրած քաղաքականությամբ: Խոսելով Տրապիզոնի կոտորածների մասին, նա, մասնավորապես նշում է, որ դրանք սկսվել են «Կոստանդնուպոլիսից տեղ հասած գաղտնի իրամանների հիման վրա», հավաստի է համարում իշխանությունների մասնակցությունը նահանգներում ընթացող հայերի կոտորածներին, չի անտեսում կրոնափոխությանն առնչվող փաստերը²⁶⁸:

Ինչ վերաբերում է 1894 թ. Սասունի իրադարձություններին, Յուդրի-Մենոսը հայերի ընթառապությունը մեկնաբանում է օսմանյան իշխանություններից ակնկալվող արդարության բացակայությամբ: Թուրք ջարդարարներին նա բնութագրում է իրեն «հրեշների», իսկ 1895 թ. Կոստանդնուպոլիսում տեղի ունեցած Բաբը Ալիի ցույցին հաջորդած արյունալի բախումներն անվանում «իսկական կոտորած»: Յուդրի-Մենոսը հայկական կոտորածները դիտելով իրեն «նոր Սուրբ Բարեթուղիմեոսյան գիշեր», համոզված է, որ «անհնար է մատնանշել այն բոլոր քաղաքների անվանումները, որտեղ մահմեդական մոլեռանդությունն ահաբեկչություն, մահ և հուսալքություն է սփռել»²⁶⁹: Թեև, ինչպես նկատեցինք, ցեղասպանության իրականացումը նա մեկնաբանում է Արդուլ Յամիդի ծրագրած քաղաքականությամբ, այդուհանդերձ, մատնանշում է նաև այն թուրք պաշտոնյաներին, որոնք արել են իրենցից կախված հնարավոր ամեն ինչ՝ կոտորածները կասեցնելու համար²⁷⁰:

Դայոց ցեղասպանության իրականացման հարցում Յուդրի-Մենոսը խստագույն դատապարտում է Եվրոպական տերություններին, որոնք «քույլատրել են իրականացնել այն ամենասարսափաղու կոտորածները, որոնց վկան է դարձել քաղաքակիրք կոչվող դա-

livraison du 15 juillet 1896, p. 153-160. Դմմտ. Les massacres d'Arménie. Témoignages des victimes, p. 239-258:

²⁶⁷ Ս. Սապահ-Գիլեսն, նշվ. աշխ., էջ 156:

²⁶⁸ Les massacres en Arménie par M^{me} Hudry-Menos, Paris, 1896, p. 3, 6, 10.

²⁶⁹ Նույն տեղում, էջ 11:

²⁷⁰ Նույն տեղում, էջ 4, 6, 11:

րաշրջանը», դրանց թվում բացառություն չանելով Ֆրանսիայի համար: Հեղինակը ֆրանսիական կառավարությանը պախարակում է, ի տարրերություն անգլիական կառավարության, արտաքին գործերի նախարարության արխիվում պահպող փաստաթղթերի ժողովածուի՝ «Նեղին գրքի» իրապարակման հարցում դրսեորած չկանության համար²⁷¹:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև «Ույու ոն Ռեյուտում» տպագրված՝ Արդուլ Շամիդին և նրա մերձավորներին նվիրված անստորագիր մի հոդված, որը տրված է սուլթանի գործունեության համառոտ գնահատականը²⁷²: Անանուն հեղինակն անկողմնակալորեն ուրվագծում է նրա դիմագիծը, անվանում նրան «արյունաբրու իրեց»²⁷³, որը հետամուտ է մահմեդական կայսրության վերակազմավորմանն այն հիմունքներով, որոնք առաջադրել է Օնար խալիֆը²⁷⁴: Հեղինակն իր համոզմունքն է հայտնում, որ նման կայսրության շրջանակներում կարող են գոյություն ունենալ մարդկանց երկու խումբ՝ հավատացյալները և նրանց ծառայող ռայան: Ընդգծելով, այսպիսով, օսմանյան վարչակարգի քաղաքականության ռասիստական եռթյունը, նա, այդուհանդերձ, գտնում է, որ Արդուլ Շամիդը ոչ միայն ձգտում էր այդ քաղաքականությունը համատեղել իսլամի պատմության առաջին դրվագների հետ, այլև իրականացնում էր «հայկական կոտորածներ և թուրքերի արտաքսումներ»²⁷⁵. Այսպիսով, ինչպես տեսնում ենք, 300000 հայի բնաջնջումը հեղինակը մեկնաբանում է, առանց մանրամասների մեջ թափանցելու, թե՝ սուլթանի՝ պանխալամական գաղափարներին տուրք տալու միտումով, շրջանցելով, ի դեպ, օսմանիզմի գաղափարախոսության վերլուծությունն ու դրա իրականացման ասպարեզում Բարձր Դռան կրած անհաջողությունները և թե՝ դրանք դիտում է իբրև կայսրությունում տիրող խառնաշվիթ իրավիճակի ընդհանուր շղթայի բաղկացուցիչ օղակ՝ առանց բացահայտելու ցեղասպանության գլխավոր պատճառները: Այրուհանդերձ, նա իրավամբ մատնանշում է հայկական կոտորածների հետևանքով տնտեսության ոլորտում կայսրությանը պատճառված վնասները, որոնց

²⁷¹ Սույն տեղում, էջ 3, 4:

²⁷² Le maître et les serviteurs d'Yeldiz. (Dans l'intimité d'une Cour à la fin du XIX^e siècle) // « Revue des revues », livraison du 15 août 1897, p. 304-310 ; livraison du 15 septembre 1897, p. 409-417.

²⁷³ Սույն տեղում, էջ 415:

²⁷⁴ Սույն տեղում, էջ 416:

²⁷⁵ Սույն տեղում, էջ 417:

հետևանքով «անկում են ապրել առևտուրը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը»²⁷⁶: Հեղինակը մերք ընդ մերք քննադատական խոսքեր է ուղղում Եվրոպական տերությունների հասցեին, որոնք սուլթանին թույլատրել են իր գաղափարները վերածել քաղաքական գործողությունների²⁷⁷:

Նշված հեղինակները, չնայած տարբեր, այդ թվում սկզբունքային որոշ հարցերում ցուցաբերած իրարամերժ մեկնաբանություններին, հիմնահարցերի ընդգրկման զանազանությանը, ինչը միանգամայն օրինաչափ է, այդուհանդերձ, միասնական դիրքորոշում են ունեցել Դայոց ցեղասպանության իրականացման հարցում՝ օսմանյան գերագույն իշխանությունների դիրքորոշման բացահայտման՝ ժամանակակիցների համար կնճռոտ խնդրում, արևմտահայության լայնածավալ բնաջնջումը պայմանավորել են օսմանյան պետական քաղաքականությամբ: Արժանին մատուցելով նրանց՝ Դայոց ցեղասպանության պատմությանն առնչվող մեծ թվով խնդիրներ անկողմնակալ դիրքերից լուսաբանելու համար, ցանկանում ենք հավաստել, որ իրադարձությունը պետական քաղաքականության մակարդակով մեկնաբանելը և այն արժանահավատ փաստերով հիմնավորապես ապացուցելը նրանց ամենամեծ արժանիքն է:

Այս խնդիրը, սակայն, ոչ բոլոր ժամանակակիցներն են ըմբռնել հավուր պատշաճի: Դայոց ցեղասպանությանը հայեցակարգային բնույթի այլ մեկնաբանություններ են տպել իրադարձության մի շարք այլ ժամանակակիցներ, այդ թվում հայտնի պատմաբաններ, որոնցից են Բերնար Կարա դը Վոն և Անատոլ Լեբուա-Բոլիոն:

Առաջիններից մեկը, ով Ֆրանսիայում արձագանքել է հայկական կոտորածներին եղել է հայտնի արևելագետ, պատմաբան բարոն Կարա դը Վոն (1867-?)²⁷⁸: Փարիզի Մատենագիտական սրահում՝ 1896 թ. մարտի 9-ին համեստ գալով այս հարցին նվիրված գիտական գեկուցմամբ²⁷⁹, նա, սակայն, անտեսել է Դայկական հարցի գոյության իսկ փաստը և հետևաբար՝ դրա լուծնան ուղղությամբ Արդուլ Դամիդ Ա-ի գործադրած եռանդագին ջանքերը: Այս պայմաններում, հարկավ, նա չէր կարող 1890-ական թվականներին Օսմանյան

²⁷⁶ Նույն տեղում:

²⁷⁷ Նույն տեղում:

²⁷⁸ Carré de Vaux, *La doctrine de l'Islam*, Paris, 1909.

²⁷⁹ Les massacres d'Arménie. Conférence faite au salon Bibliographique le 9 mars 1896.

Par M. le baron Carré de Vaux, Paris, 1896.

կայսրությունն ալեկոծած ողբերգական իրադարձությունների դրդապատճառներին տալ սպասիչ մեկնաբանություններ:

Կարա դը Վոն ուշադրությունը կենտրոնացնում է, մասնավորապես Օսմանյան կայսրությունում ապրող հայերի թշվառ վիճակի, կոտորածների ընթացքի և դրանց հարակից հարցերի վրա: Նրա կարծիքով անելանելի կացությունը հայերին դրդել է ընդզգելու, որն արտահայտվել է, առաջին հերթին՝ Օսմանյան կայսրության սահմաններից դուրս լրագրեր հրատարակելու և հանրահավաքներ կազմակերպելու միջոցով: Ընդ որում, այդ ասպարեզում հայերի ծավալած գործունեության դեմ ուղղված օսմանյան կառավարության վարքագիծը ենթարկվում է նրա խիստ քննադատությանը. «Ավելի մեծ ազատություններ ստանալու նշանակությամբ նրանց (հայերի – Վ. Պ.) ձեռնարկած փոքրագույն իսկ շարժումը թուրքերը կարող են դիտել իրեն ապստամբական գործողություն»²⁸⁰: 1895 թ. Բարք Ալիի ցույցին հաջորդած բռնությունների առիթով Կարա դը Վոն եղանակացնում է. «Ասիայում այս պահին մահմեդական ոգին ամբողջությամբ պատրաստ էր մեծ հանցանքներ իրագործելու և հեռվում, անհայտ հովտում, բողկլտաց այն կայժը, որից պետք է սարսափելի հրդեհ բռնկվեր»²⁸¹:

Թուրքերի հետ մեկտեղ քրդերին և լազերին համարելով հայերի ողբերգության «գլխավոր հեղինակներ»՝ Կարա դը Վոն իրեն կոտորածների միակ հնարավոր դրդապատճառ դիտում է մահմեդականների և քրիստոնյաների միջև վաղուց ի վեր գոյություն ունեցող կրոնական առճակատումը: Ըստ նրա՝ մահմեդական նոլեռանդությունը սանձագերծվել է 1894 թ. Սասունում «նողկալի դաժանությամբ իրականացված գործողություններից» ի վեր: «Դայերի դժգոհությունը, նրանց հուզումները, կոչերը տերություններին՝ նրանց նույնացրել են ապստամբներին: Անհավատների դեմ նախկինում Մուհամեդի արտաքերած մոլեգին անեծքները կիրառելի էին նրանց համար»²⁸².

Արևմտյան Դայաստանում տեղի ունեցած անցքերը Կարա դը Վոն բնութագրում է իրեն «սարսափելի կոտորած», «ահարկու տեսարաններ», որոնք Տրապիզոնի, Երգրումի, Վանի, Բիթլիսի, Մուշի և այլ նահանգներում իրականացվել են «հաջորդաբար կամ միաժա-

²⁸⁰ Նույն տեղում, էջ 7:

²⁸¹ Նույն տեղում, էջ 8:

²⁸² Նույն տեղում:

մանակ և անողոք համանմանությամբ»²⁸³: Նրա ելույթն, ի դեպ, զանազանվում է մյուս բոլորից՝ այլոց շրջանցած խնդիրների շոշափմամբ, քանզի սակավաթիվ մտավորականներից է, որը հանգանակալից քննարկել է գյուղական վայրերում տեղի ունեցած վայրագությունները: «Թվում է, թե իրագործված դաժանությունները, – գրում է նա, – շատ ավելի բարբարոսական բնույթ են կրում գյուղերում, քան քաղաքներում»: Դենց գյուղերում է, որ նրա կարծիքով, հայերին ոչնչացնելու կամ կրոնափոխությամբ անհավատներին բնաջնջելու՝ մահմեղականների աներեր գաղափարը, որն ամբողջությամբ անիրազործելի է քաղաքներում, իրականության և վերածվել ամենացավալի ձևով²⁸⁴:

Դայոց ցեղասպանության մեկնաբանության հարցում որդեգրած մոտեցումը Կարա դը Վոյին, անկասկած, մղել է առանձնահատուկ ուշադրություն դարձնել գյուղերում վանքերի ու եկեղեցիների կողոպտման, ավերման, պղծման, ինչպես նաև մոլեգին կրթերի բորբոքման պատճառ դարձած՝ քահանաներին ամենադաժան խոշտանգումների Ենթարկելու փաստերին: «Մահմեղական հորդաների մոլեգնությունը կրոնական տարրի հանդեպ, – հավաստում է նա, – ամենուր դրսնորդում է ծայրահեղորեն: Քահանաները ոչ միայն դատապարտված են վատրարագույն կտտանքների, այլև նրանց դիակներն են հոշոտվում»²⁸⁵:

Կոտորածները նա համեմատում է «սարսափելի փոթորկի» հետ, որի ամեի ալիքները կործանել են ամեն ինչ, հաշվի չառնելով «ո՛չ տրված խոստումը, ո՛չ սահմանված իրավունքը, ո՛չ ընտանիքը, ո՛չ հավատքը, ո՛չ մանկությունը, ո՛չ մայրությունը, ո՛չ ի թիվս այլ հանգամանքների՝ հարգանքի արժանի հոգևորականությանն ու կուսությունը»²⁸⁶:

Դեղինակը զանազան տեսանկյուններից վերլուծում է կոտորածների ընթացքում հայերի դրսնորած վարքագիծը, որը շատերն, ըստ էլության, շրջանցել են: Դարևանցիորեն ակնարկելով պատմական Դայաստանի ռազմակալումը, նա նվաճման հետևանքով մահմեղականների լժի տակ գտնվող հայերի կողմից «հարաբերական անկախության» որոնումը համարում է միանգամայն օրինաչափ²⁸⁷: Քա-

²⁸³ Նույն տեղում, էջ 10, 11-12:

²⁸⁴ Նույն տեղում, էջ 10, 11:

²⁸⁵ Նույն տեղում, էջ 12:

²⁸⁶ Նույն տեղում, էջ 13:

²⁸⁷ Նույն տեղում:

ցառելով հայերի սադրիչ գործողությունների հնարավորությունը, Կարա դը Վոն ջանում է բացահայտել նրանց գրաված գերազանցապես կրավորական դիրքորոշման պատճառները. «Նախ կարելի է ենթադրել, որ եթե հայերն, ընդհանուր առմանք, չեն նարտնչել, ապա այդ արվել է այն պատճառով, որ ցանկացած բնույթի պայքարն անհնար էր: Ինչ վերաբերում է մոտալուտ կոտորածներին ի տև նրանց անգործությանը, ապա դրան նպաստել են նի շարք պատճառներ՝ կառավարության հավաստիացումները, տերությունների գործողությունները, հյուպատոսների քայլերը»²⁸⁸:

Այդուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ Կարա դը Վոն սակավաթիվներից է, որը թռուցիկ հայացք է նետել հայերի ինքնապաշտպանության դրվագների վրա և փաստել, որ նրանք մեծ հերոսությամբ պաշտպանվել են այնտեղ՝ որտեղ դրա համար եղել են նպաստավոր պայմաններ: Խոսքը մասնավորեցնելով Զեյթունի ինքնապաշտպանության վրա, հեղինակն այն համարում է «արդյունավետ», իսկ կայացած հաշտության պայմանները՝ «պատվավոր»²⁸⁹: Դարկ է նաև ընդգծել, որ թեև հարևանցիորեն, Կարա դը Վոն, այնուամենայնիվ, քննադատական խոսքեր է ուղղել թե՛ Ֆրանսիայի, որն անսալով հայերի կոչին, որևէ նախաձեռնությամբ հանդես չի եկել և թե՛ հակասություններից բակտվող Եվրոպական բազմաթիվ ժողովուրդների հասցեին²⁹⁰:

Ի վերջո՝ Դայոց ցեղասպանությունը բացառապես կրոնական զանազանության հանգամանքով պայմանավորող հեղինակը հայկական կոտորածների պատասխանատվությունն անիրավացիորեն վերագրում է սոսկ կրոնական հակամարտությանը. «Մեր կարծիքով Դայաստանի կոտորածների պատասխանատուն իսլամն է: Դրանք իրականացվել են ըստ Ղուրանի խրատների, իսլամականության ոգու և ավանդությների ու հանուն այս կրոնի հավատացյալների համար ի սկզբանե նախանշված՝ անհավատներին ոչնչացնելու նպատակի»²⁹¹: Անկախ այս հանգամանքից, նա սոսկ թռուցիկ մատնանշում է թուրքական իշխանությունների անժխտելի մասնակցությունը հայկական կոտորածներին. «Անհնար է հանցագործությունների այս լայնածավալ հանակարգը ներկայացնել իբրև քուրդ և լազ հորդաների՝ տարերայնորեն սանծագերծած բարբարոսության

²⁸⁸ Նույն տեղում, էջ 14:

²⁸⁹ Նույն տեղում, էջ 15:

²⁹⁰ Նույն տեղում, էջ 8, 17:

²⁹¹ Նույն տեղում, էջ 15:

հետևանք»²⁹². Այդուհանդերձ, քանի որ հիմնահարցի նրա մեկնաբանության հիմքում խարսխվում է հայեցակարգային, մեր կողմից, անտարակույս, անընդունելի մեկնակետ, նա, ըստ եռթյան, շրջանցում է թուրքական իշխանությունների մասնակցության վերլուծությունը, որևէ փաստով չի հիմնավորում իր իսկ անառարկելի եզրակացությունը, որն արդյունքում վերածվում է մերկապարանոց հայտարարության: Այդուհանդերձ, նրա ելույթն աչքի է ընկնում քննարկված խնդիրների բազմազանությամբ, որը և կանխորոշում է նրա տեղը պատմագիտական ծավալուն գրականության ասպարեզում:

Կարա դը Վոյի՝ Դայոց ցեղասպանությունն իբրև սոսկ կրոնական շղարշով պարուրված իրադարձություն մեկնաբանող ելակետային դրույթը լիովին համահունչ է Բարոյական գիտությունների ակադեմիայի անդամ (1887), Ռուսաստանի և Եվրոպայի պատմությանը նվիրված մի շարք ուսումնասիրությունների հեղինակ²⁹³ Անատոլ Լերուա-Բոլիոյի (1842-1912) դիրքորոշմանը²⁹⁴: Ունենալով լայն գիտելիքներ և պատմագիտական հզոր ներուժ, նա ևս հայկական կոստորածների պատմությանն առնչվող հարցերը քննարկել է ընդարձակ հենքի վրա:

Դայաստան այցելած Լերուա-Բոլիոն հայերին անվանում է «գրքախտ» և «ճնշված» ժողովուրդ, իսկ Դայկական հարցը՝ «ցավալի» ու «տանջահար»: Նա դառնությամբ է նշում, որ Դայաստանը վերածվել է սոսկ աշխարհագրական հասկացության, իսկ թուրքերը հավակնում են քարտեզի վրայից ջնջել ոչ միայն Դայաստան անունը, այլև վերացնել հայ ժողովորդին²⁹⁵: Դայերի համար ստեղծված ծանր կացությունը նա մասամբ պայմանավորում է հայկական նահանգները մայրաքաղաքից անջրպետող տարածությամբ. այնտեղ «Քուրքական վարչության արատներն իրենց զգալ են տալիս ամենադժմի ծևով: Այնտեղ իսլամի հին ոգին գերիշխում է միահեծանորեն, այնտեղ չկա որևէ վերահսկողություն, քրիստոնյաների համար չկա արդարություն, այնտեղ ամենազոր են ոչ միայն փաշայի

²⁹² Նույն տեղում:

²⁹³ A. Leroy-Beaulieu, L'empire des czars et les Russes, Paris, 1881 ; Առյան՝ Études russes et européennes, Paris, 1897.

²⁹⁴ Les Arméniens et la Question arménienne. Conférence faite par M. Anatole Leroy-Beaulieu, membre de l'Institut à l'Hôtel des Sociétés savantes le 9 juin 1896, Paris, 1896. Դամիկան կոստորածներին նվիրված հեղինակի սույն գրքովկի լույս ընծայմանը նախորդել է այս հարցին նվիրված նրա հրապարակային դասախոսությունը Փարիզի Գիտական ընկերությունների սրահում՝ 1896 թ. հունիսի 9-ին:

²⁹⁵ Նույն տեղում, էջ 6:

կամ կայմակամի կամքը, այլև հաճախ՝ վերջին թուրքի կամայական քնահաճույքները»²⁹⁶: Օսմանյան կայսրությունը համարելով անսահմանափակ միապետություն, նա Արդուլ Շամիդին բնութագրում է իրոք ժամանակակից մարդուն բնորոշ որևէ հատկանիշից գործ անձնավորության, որը «հին թուրքերի սկզբունքների և նախապաշտությունների յուրօրինակ գերին էր» և բացարձակապես հակված չէր հավասարություն հաստատելու «ռայայի» և մահմերական հավատացյալների միջև²⁹⁷:

Դայերի՝ ինքնապաշտպանական միջոցների դիմելու փաստը Լերուա-Բոլիոն իրավամբ մեկնարանում է նրանց վիատությամբ, որոնց բողոքները, ինչպես պարզաբանում է, նույնիսկ Բեռլինի վեհաժողովից հետո թե՛ Եվրոպական դիվանագիտական և թե՛ օսմանյան ղեկավար շրջանակներում (որոնք պատասխանել են ընդամենը սպառնալիքներով կամ բանտարկությամբ), մնացել են անարձագանք: Ցանկություն իսկ չդրսնորելով հայերին՝ «իրենց իսկ օգնելու ցանկություն դրսնորելու համար» մեղադրելու հարցում²⁹⁸, նա մանրամասն քննարկում է այն հանգամանքները (ազգային կուսակցությունների, լրագրության հիմնադրում, հայրենակիցների շրջանում ազգային ոգու արթնացում), որոնք պատճառ են դարձել հայերին անարիխստներ, նիհիլիստներ և հեղափոխականներ անհրավացիորեն անվանելու համար: Նա հիմնավորապես հերքում է այս մտացածին կռվանները. «Այնժամ, երբ նրանք դառնում են այնքան անվեհեր, որ չեն հանդուրժում կեղեցումը, այնժամ, երբ համարձակվում են ինքնապաշտպանական ջանքեր գործադրել՝ նրանց անվանում են հեղափոխականներ, որոնց դեմ թույլատրելի է ցանկացած միջոցի կիրառումը»²⁹⁹:

Ցնցված կոտորածներից՝ Լերուա-Բոլիոն հայտարարում է. «Պատմությունը երբեմ չի արձանագրել, ես կասեմ ավելին, արևմիսկ... մեր տխուր՝ այշափ հանցագործությունների հետևանքով արյունաների եղած երկրագնդի վրա, հավանաբար, երբեմ չի տեսել այնպիսի սարսափագդու ներկայացում, քան այն, որը շաբաթներ և ամիսներ շարունակ ընթացել է Արևելյան Անատոլիայի հարթավայրերում»³⁰⁰: Խուսափելով, ըստ էության, կոտորածների մանրամաս-

²⁹⁶ Նույն տեղում, էջ 15-16:

²⁹⁷ Նույն տեղում, էջ 21, 23:

²⁹⁸ Նույն տեղում, էջ 28:

²⁹⁹ Նույն տեղում, էջ 29:

³⁰⁰ Նույն տեղում, էջ 30:

ների նկարագրության մեջ թափանցելուց, նա ճգնում է բացահայտել դրանց պատասխանատուներին: Որքան տարօրինակ է, բայց օսմանյան կառավարությանը և Աբդուլ Համիդին խիստ բնորոշ և անկողմնակալ գնահատականներ տրված պատմաբանը թե՛ մեկին և թե՛ մյուսին ամբողջությամբ զերծ է պահում հայկական ջարդերի պատասխանատվությունից: Կոտորածների պատասխանատուների բացահայտման առնչությամբ հեղինակն առաջարրում է բավականին մշուշապատ և ծավալուն մեկնաբանություն՝ ըստ որի ակնհայտ է, որ նա հակված չէ օսմանյան կառավարությանը և սուլթանին անգամ հանդիմանելու. «Ես չեմ ցանկանում հավատալ, որ սուլթանը կարող էր նման հրաման արձակել: Ես չեմ կարող ընդունել, որ Դուռը կամ Պալեն կարող էին կառավարիչներին՝ համանամ ծևով հայ ազգի բնաջնջումը նախանշող ցուցում տալ: Բայց այն, ինչն ինձ հայտնի է..., այն, ինչը բխում է ականատեսների բոլոր պատումներից, հանգում է նրան, որ այս ամենը կատարվել է կանխանտածված ծևով՝ իշխանությունների ազդանշանի հիմնան վրա: Այն է՝ եթե Անատոլիայի խորքերում Ստամբուլից կամ Ելբազ-Քյոչքից տրված հրաման չեն ունեցել, ապա գիտակցել են, որ կոտորելով՝ կարող են հաճոյանալ»³⁰¹: Մեկ այլ առիթով միևնույն հարցին տրված նրա մեկնաբանությունը նույնքան աղոտ է. «Բավական է պնդել, որ նրանք, ովքեր տվել են կոտորածների ազդանշանը, կարծել են, թե կարող են հածոյանալ Պալեն»³⁰²:

Ինչպես տեսնում ենք, Լերուա-Բոլիոյի դիրքորոշումը ցեղասպանության պատասխանատունների դիմագերծման հարցում՝ մեղմ ասած միանշանակ չէ: Խիստ դժվար է, անշուշտ, եթե չասենք անհնար՝ կռահելն իսկ, թե սուլթանին և օսմանյան կառավարությանը կոտորածներին անմեղսակից համարող պատմաբանն ի՞նչ նկատի ունի «իշխանություններ» անորոշ հասկացության տակ: Չատ ավելի խրթին է կողմնորոշվելն այն հարցում, թե ո՞վեր են կոտորածների ազդանշան տված խորհրդավոր անձինք, որոնց ինքնության բացահայտումը Լերուա-Բոլիոն խնամքով շրջանցում է:

Չարունակելով իր մտորումները, նա համառոտակի իիշտակում է XIX դարի ընթացքում Քիոսում, Լիբանանում, Բուլղարիայում, Եգիպտոսում տեղի ունեցած տարբեր՝ այդ թվում մահմեդականների կոտորածների մասին և հանգում որքան անտրամաբանական, նույնքան և անմեկնաբանելի հետևության. «Այդպիսիք են արևելյան

³⁰¹ Նույն տեղում, էջ 31:

³⁰² Նույն տեղում, էջ 33:

քաղաքականության գործելամիջոցները: Իսկ դրանից հետո, պարոնայք, արդյո՞ք հայերի կոտորածը ծեզ զարմանք է պատճառում»: Ինչպես տեսնում ենք, հայկական ջարդերի հարցում նա գերադասում է, փաստորեն, մեղավոր ճանաչել «արևելյան քաղաքականությանը և մահմեղական մոլեռանդրությանը», ծեռնպահ մնալով, սակայն, թե՝ «արևելյան քաղաքականություն» հեղիեղուկ հասկացության մեկնաբանումից և թե՝ այն կերտողների անունները թվարկելուց³⁰³:

Ինչ վերաբերում է «մահմեղական մոլեռանդրությանը», ապա այդ առիթով արդեն Լերուա-Բոլիխոն չի զլանում անհրաժեշտ պարզաբնույններ տալ, քանզի նրա որդեգրած հայեցակարգը խարսխվում է Դայոց ցեղասպանության հարցում կիրառվող՝ հեռահար նպատակներ հետապնդող օսմանյան պետական քաղաքականության փաստի ժխտման վրա և ուղղակիորեն հանգում հայկական կոտորածները զուտ կրոնական պիտակով սքրուլու գաղափարին. «Եթե իսկական մեղավորը մոլեռանդրությունը չէ, ապա քրիստոնյայի նկատմամբ տածվող ատելությունն է և նախանձը, քանզի կրոնական ատելություններն այստեղ ծուլվում են ազգերի ատելությանը»: Դանգամանորեն անդրադառնալով տիրող իրավիճակի բարդացման հարցին, նա իրավամբ մատնանշում է օսմանյան բանակի զինվորների և սպաների մեծամասնության մասնակցությունը կոտորածներին, որոնց օգնությանը դիմել էին կարգ ու կանոն հաստատելու նպատակով, որոնք սակայն, քրիստոնյաների նկատմամբ տածած ատելությունից դրդված՝ վերածվել են կոտորածների կատարածուների³⁰⁴:

Ելնելով ցեղասպանությունն իբրև միմիայն կրոնական երևույթ մեկնաբանելու տեսակետը բազմակողմանիորեն հիմնավորելու անհրաժեշտությունից, Լերուա-Բոլիխոն վկայակոչում է զանազան, հիրավի, հավաստի փաստեր: «Դայերը, – գրում է նա, – միակ զոհերը չէ, որ եղել են: Դանգուցյաների թվում եղել են հարյուրավոր, եթե ոչ հազարավոր՝ տարբեր արարողակարգ ունեցող այլ քրիստոնյաներ»: «Բարդ և ցավոտ» Դայկական հարցի «ամենատխուր» կողմերից մեկը նա հանարում է բռնի կրոնափոխությունը, որի՝ իբրև իր դիրքորոշման հիմնավորման հերթական կովանի վրա հիմնվում է

³⁰³ Նույն տեղում, էջ 33:

³⁰⁴ Նույն տեղում, էջ 33, 34:

հաճույքով. «Բազմաթիվ վայրերում գոհերին՝ մահվան և ուրացման միջև ընտրության հնարակորություն է ընծեռվել»³⁰⁵:

Դասկանալի է, որ իրադարձությունների ընթացքին այսչափ իրազեկ պատմաբանը հազիվ թե անտեղյակ լիներ Օսմանյան կայսությունում հայկական կոտորածների՝ պետական քաղաքականության մակարդակով իրականացնանը, և դրանց իրական պատճառներին: Այդուհանդերձ, դժվարանում ենք ասել, թե ի՞նչ գործոններ են նրան մղել զանց առնելու ջարդերի կազմակերպիչների անունները և անտեսելու Դայոց ցեղասպանության մտահղացնան և իրականացնան հարցում սուլթանի և Բարձր Դուռը մտադրություններն ու գործադրած ջանքերը: Ի վերջո, նա գերադասում է սոսկ «մարդկային խղճի» անունից պահանջել, որ «այդ դժբախտներին կրոնական ազատություն տրվի»³⁰⁶:

Այսպես, Դայոց ցեղասպանությունը պատմաբանն ամբողջությամբ պայմանավորում է մահմեդականների և քրիստոնյանների միջև վաղուց ի վեր առկա հակամարտությամբ, որն անհրաժեշտության պարագայում չի հապաղում իրավառվել: «Այլ միջոցների բացակայության հետևանքով՝ իսլամի գերիշխանությունը հաստատվում է սրով», – եզրակացնում է նա: Դուք հետևանքով, «ոչ հեռավոր անցյալում ծաղկում ապրող այս երկրամասն այսօր վերածվել է ամայի անապատի, լի ավերված գյուղերով ու հրկիզված խորհրմերով», իսկ մազապուրծ հայերը դատապարտված են կործաննան, որովհետև «ցուրտը, սովը, թշվառությունն անպատիժ ծևով ավարտին են հասցնում մարդասպանների գործը»³⁰⁷:

Ինչ վերաբերում է արևմտահայերին օժանդակություն ցուցաբերելու հարցին՝ Լեռուա-Բոլիոն եվրոպական պետությունների համար անհրաժեշտ է համարում Բարձր Դոնից պահանջել՝ «աշխարհի առջև Եվրոպային խայտառակող վայրագությունների» կասեցումը և «համանան բարբարոսության կրկնությանը» խոչընդոտող զանազան, այդ թվում՝ հայերի համար ապրելու, աշխատելու, կրոնը դավանելու երաշխիքներ»³⁰⁸:

Լեռուա-Բոլիոն քննադատում է մեծ տերությունների անկարեկից վարչագիծը Դայոց ցեղասպանության հարցում, ֆրանսիական մամուլի լրակյացությունը, քառասունից հիսուն հազար հայի հեղ-

³⁰⁵ Նույն տեղում, էջ 34, 35:

³⁰⁶ Նույն տեղում, էջ 35:

³⁰⁷ Նույն տեղում, էջ 36:

³⁰⁸ Նույն տեղում, էջ 38, 39:

ված արյունը համարում «դիվանագիտության անշրջահայացության և անփութության» հետևանք³⁰⁹: Նա «Եվրոպայի պարտականությունն» է համարում Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ Վերահսկողության սահմանումը, որն ըստ նրա՝ հնարավորություն կընծեռեր հայերի կոտորածների կասեցման միջոցով ի չիք դարձնելու Օսմանյան կայսրության ներքին գործերին Եվրոպական տերություններից որևէ մեկի գինված միջամտության հավանականությունը և հողմացրիվ անելու մեծ պատերազմի բռնկման հեռանկարը: Այլ կերպ ասած՝ Լերուա-Բոլիոն հանդես է գալիս իբրև Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման ջատագով և երկյուղելով դրա տրոհումից՝ մեծ շահագրգովածություն հանդես բերում, մասնավորապես այնտեղ բնակվող ժողովուրդների անվտանգությունն ապահովելու հարցում, որը դիտում է իբրև Օսմանյան կայսրության գոյատևման ամենաանհրաժեշտ նախապայման: Այս հարցում հարկ է նրան արժանին մատուցել, քանզի ազնվորեն և բացահայտորեն նա ստանձնում է Եվրոպական տերությունների և, ըստ այդմ՝ Ֆրանսիայի քաղաքականության պաշտպանի դեր: Եվրոպական պետությունների Վերահսկողությունը համարելով հարցի լուծման միակ հնարավոր տարբերակ, նա գտնում է, որ հակառակ դեպքում կայսրությունը «մեկը մյուսի ետևից կկորցնի իր բոլոր Եվրոպական և ասիական նահանգները... Ահա հենց սրանից է, որ թե՛ հանուն [Բարձր] Դուռ և թե՛ հանուն Եվրոպայի, մենք ցանկանում ենք խուսափել. և այդ աղետը կանխելու համար այն, ինչ մենք պահանջում ենք..., ես կասեմ մեկ բարով՝ դա այնպիսի Թուրքիա ունենալու է, որը բնակվելու պիտանի լինի ամենքի՝ թե՛ քրիստոնյաների և թե՛ մահմեդականների համար»³¹⁰:

Ինչպես տեսնում ենք, Լերուա-Բոլիոն, կամա թե ակամա, հանդես է գալիս, փաստորեն, ոչ այնքան իբրև հայերի պաշտպան, որքան Եվրոպական երկրների միջև գոյություն ունեցող հավասարակշռության պահպանման ջերմեռանդ քատագով՝ հմտորեն օգտագործելով հայկական խաղաքարտը³¹¹: Ամեն դեպքում, նրա

³⁰⁹ Նույն տեղում, էջ 20, 32:

³¹⁰ Նույն տեղում, էջ 40:

³¹¹ Այս հարցի վրա որոշ չափով լույս է սփռում Սապահ-Գյույշանի վկայությունը, որի խնդրանքով ֆրանսիացի պատմաբանը հանդես էր եկել այս ելույթով: Ըստ նրա՝ Դանուտոն խնդրել էր հոեստորին «չափաւոր լեզու գործածել»: Տե՛ս Ս. Սապահ-Գիլեան, նշվ. աշխ., էջ 153:

Ելույթն, անկախ իրադարձություններին տրված՝ հաճախ անընդունելի մեկնաբանություններից, անկասկած, նպաստել է լռության այն ամուր պատճեղի սասանանը, որը հայկական կոտորածների եղելությունն անջրագետում էր ֆրանսիական հասարակության լայն խավերից³¹²:

Ինչպես նախորդ երկու հեղինակները՝ Ռ. Բարիդոնը և համիդյան կոտորածները մեկնաբանում է հայեցակարգային համահունչ դիրքերից, այն մեկնաբանելով գլխավորապես իրու կրոնական հակամարտության հիման վրա կյանքի կոչված իրադարձություն: Դիմնվելով հայ ականատեսների վկայությունների, ինչպես նաև անգլիացի քաղաքական գործիչների (Գլաստոն, Դիլոն և ուրիշներ) ելույթների վրա՝ նա վերիհանել է հայկական կոտորածների համառոտ, սակայն հավաստի պատկերը և խիստ քննադատության ենթարկել եվրոպական պետությունների քաղաքականությունը³¹³:

XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունում հայերի համար ստեղծված անելանելի կացության առիթով Բարիդոնը նշում է. «Նույնիսկ այդ պահին, որը նրանց (հայերի – Վ. Պ.) պատմության լավագույն ժամանակաշրջաններից եր, նրանց վիճակը նույնքան վատթար էր, որքան Ամերիկայի ստրուկներինը՝ Քաղաքացիական պատերազմից առաջ... Նրանք երբեւ չեն ունեցել ո՛չ փոքր-իսկ անկախություն և ո՛չ նույնիսկ իրենց կանանց ու երեխաներին պաշտպանելու իրավունք»³¹⁴:

³¹² Այս առիթով, ի դեպ, տարիներ անց, նա հայտարարել է. «Ես առաջինն էի, որ Փարիզում, կոտորածների շուրջ տիրող լուրջան ժամանակաշրջանում, հանդես եկա հայերի համար ելույթով». La Manifestation au Théâtre du Château-d'Eau de Paris (15 février 1903).— Pour l'Arménie et la Macédoine, p. 59. Սապահ-Գյուլյանը և հավաստում է, որ Լերուա-Բոլիոյի գրքույկի լույս ընծայումից հետո (ի դեպ, 10000 օրինակով), «հասարակական խնդիրներով պարապող մէկը չմնաց, որ մեծանուն դասախոսի մտքերին հաղորդակից չլիներ» (տե՛ս Ս. Սապահ-Գյուլյան, նշվ. աշխ., էջ 154): Նշենք նաև, որ Լերուա-Բոլիոյի գրքույկին նվիրված ընդարձակ հոդված է լույս ընծայել «Մշակը», որտեղ ոչինչ նշված չէ Նայոց ցեղասպանության մեկնաբանության հարցում հեղինակի գրաված դիրքորոշման մասին, քայլ փոխարենը՝ քննության նյութը են դարձել հայերի անցյալի, դավանանքի հետ կապված երկրորդական բնույթի հարցերին վերաբերվող նրա տեսակետները («Մշակ», 1896, թիվ 100): Ավելի լայն կտրվածքով, սակայն վերստին առանց վերլուծական նոտեցման՝ Լերուա-Բոլիոյի գրքույկը ներկայացվել է նաև ֆրանսիական մամուլում: S'è Les Arméniens et la Question arménienne, conférence faite par M. Anatole Leroy-Beaulieu.— La vérité sur les massacres d'Arménie, p. 121-125:

³¹³ R. Baridon, Arménie. Coup d'œil général et explicatif sur son histoire et les derniers événements, Paris, 1896.

³¹⁴ Նույն տեղում, էջ 5:

Վերլուծելով Բեռլինի վեհաժողովից հետո մեծ տերությունների և Օսմանյան կայսրության միջև ծևավորված փոխհարաբերությունները՝ Բարիդոնն առաջադրում է Արևմտյան Հայաստանի շուրջ ստեղծված քաղաքական իրավիճակի միանգանայն ընդունելի մեկնաբանություններ։ Նա թափանցում է Հայկական հարցում Արդուլ Համիդի խուսանավողական քաղաքականության ժալքերի մեջ և բացահայտում դրա պատճառները, այն է՝ Բարձր Դուռը գիտակցում էր, որ իր՝ իբրև պետության գոյատևման անհրաժեշտությունը թելադրվում էր մեծ տերությունների միջև հավասարակշռությունը պահպանելու անհրաժեշտությամբ։ Վկայակոչելով հայ ժողովորի կյանքում բախտորոշ նշանակություն ունեցած այս անառարկելի իրողությունը, նա հանգում է միանգանայն իրատեսական հետևողական «Սուլթանը համարձակություն է ունեցել առաջին իսկ պահից խախտելու իր բոլոր խոստումները և Բեռլինի պայմանագրի հաջորդ օրվանից ի վեր որդեգրել է քրիստոնյա հպատակներին ոչնչացնելու համակարգը»³¹⁵։

Բարիդոնն անդրադարձում է համիդի գորամիավորումների կազմավորման ուղղությամբ Արդուլ Համիդի գործադրած ջանքերին, դրանցում ընդգրկված իրուսակների հանցանքներին, ինչպես նաև 1895 թ. մայիսին՝ հայկական նահանգներում բարենորդումների անցկացման պահանջով հանդես եկած մեծ տերությունների դեսպանների միջամտության հետևանքով տեղի ունեցած հայկական ջարդերին։ «Ծրագիրը, որով առաջնորդվում էին, – նշում է նա, – հանգում էր մեծ թվով մարդկանց սպանությանը, որպեսզի անզոր դարձնեին տեղի քրիստոնյաներին, ապրողներից հափշտակեին գոյության յուրաքանչյուր միջոց, այնուհետև՝ սովամահության դատապարտեին կամ սպանեին նրանց, ովքեր կիրաժարվեին գրկաբաց ընդունել իշլամը»³¹⁶։

Այս հարցը կարիք ունի առավել հանգամանալից քննության, քանզի Հայոց ցեղասպանության մեկնաբանության ասպարեզում Բարիդոնի հայացքների ամբողջ համակարգը խարսխված է դրա վրա։ Հեղինակը նկարագրում է հայկական նահանգներում և Կոստանդնուպոլսում տեղի ունեցած կոտորածների մանրամասները, որոնք, սակայն, սխալմամբ պայմանավորում է սոսկ կրոնական առնակատման հանգամանքով և քննարկում իշխանությունների՝ կայս-

³¹⁵ Նույն տեղում, էջ 6:

³¹⁶ Նույն տեղում, էջ 8:

րության տարածքում բնակվող քրիստոնյա այլ ժողովուրդների նկատմամբ դրսևորած վերաբերունքի ընդհանուր հենքի վրա:

Նախ նշենք, որ հայերից բացի օսմանյան լծի տակ հեծում էին շատ այլ՝ թե՛ քրիստոնյա և թե՛ մահմեդական ժողովուրդներ, որոնց նկատմամբ ևս օսմանյան տարբեր վարչակարգեր պարբերաբար կիրառել են բնաջնջման քաղաքականություն, ուստի Դայոց ցեղասպան քաղաքականությունն օսմանյան վարչակարգի ցեղասպան քաղաքականության ընդհանուր շղթայում տեղադրելով՝ Բարիդոնի մոտեցումը ողջունելի է, իսկ այդ առիթով տարակարծություններ տածելն իսկ անհմաստ է:

Այդուհանդերձ, Դայոց ցեղասպանության մեկնաբանության հարցում ուշադրությունը բևեռելով մինհայն, հիրավի, իր էական դերն ունեցած կրոնական դավանանքների տարբերության հանգանանքի վրա և այն անիրավացիորեն ներկայացնելով իբրև արևմտահայության բնաջնջման միակ պատճառ³¹⁷, հեղինակն ամբողջությանը շրջանցում է այն առանձնահատկությունները, որոնք, հայ ժողովով ողբերգության պարագայում, բնորոշ էին Բարձր Դռան կիրառած օսմանյան պետական քաղաքականությանը և հայկական զանգվածային կոտրածներն ակնհայտորեն զանազանում էին քրիստոնյա այլ ժողովուրդների նկատմամբ գործադրված զանգվածային բռնություններից:

Ի վերջո, Դայոց ցեղասպանությունը Բարիդոնը մեկնաբանում է իբրև զուտ կրոնական հողի վրա խարսխված իրադարձություն՝ բացարձակապես չիմնավորելով դրա իրական պատճառները, տեսադաշտից, այդպիսով, դուրս բողնելով Դայկական հարցին «լուծում» տալու՝ սուլթանի որդեգրած յուրօրինակ տարբերակը, որի հեռակար նպատակը ոչ միայն հեղինակի բազմիցս իրավամբ շեշտած՝ կայսրության տարածքում բնակվող քրիստոնյաների, այդ թվում հայերի՝ ոչնչացումն էր, այլև բռնագրավված հայկական պատմական տարածքների հայաբափումն ու դիվանագիտության քառուղիները միխճված Դայկական հարցից մեկընդմիշտ ծերբազատումը:

Նահատակվող հայությանն օգնության հասնելու միակ գործնական միջոցը հեղինակը համարում է Եվրոպայում հասարակական կարծիքի աշխուժացումը, որը և կիարկադրեր, ըստ նրա՝ մեծ տերությունների կառավարություններին լրջորեն զբաղվել «նարդասիրական այս գործով»³¹⁸:

³¹⁷ Նույն տեղում, էջ 4, 10:

³¹⁸ Նույն տեղում, էջ 14:

Դայոց ցեղասպանության պատճառների բացահայտման հարցում միևնույն սահմանափակ մոտեցումն է դրսնորում Բարձրագույն հետազոտությունների դպրոցի դասախոս Պոլ Պասին՝ խիստ մակերեսային բնույթի գրքույկում, որի՝ «Եշմարտությունը Դայաստանի մասին» խորագիրն իսկ ամբողջությամբ բացահայտում է հեղինակի միակ նպատակը³¹⁹. Պասին, հավանաբար, անհրաժեշտ տեղեկատվության խիստ սակավության պատճառով բավարարվում է սոսկ ամենաընդհանուր բնույթի դիտարկումներով, որոնք հայտարարում հանգում են 1894-1896 թթ. Սասունում, Զեյթունում, Կոստանդնուպոլսում տեղի ունեցած առավել ցցուն իրադարձությունների շուրջ սոսկ բռուցիկ տեղեկությունների հաղորդմանը: Արևմտահայության բնաջնջման սանձազերծումը նա պայմանավորում է սոսկ 1893-1894 թթ. մահմեղական մոլեռանդության զգալի աճով, որը «սուլթանի կառավարությունը» ոչ միայն դեկավարել է, այլև դրան ընթացք տվել³²⁰: Զակնարկելով նույնիսկ Դայկական հարցի գոյությունը, որի մասին Պասին, հավանաբար, դեռևս պատկերացումներ չի ունեցել, նա շրջանցում է Դայոց ցեղասպանության բուն պատճառները, իսկ փոխարենը հղելով բռնի կրոնափոխությանն առնչվող փաստեր՝ եզրակացնում. «Կոտորածն ամենուր ունեցել է կրոնական երանց»³²¹: Դրանով իսկ նա, անուղղակիորեն, բացասել է ցեղասպանության իրականացումը պետական քաղաքականության մակարդակով:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ֆրանսիացի պատմաբանների մի մասը Դայկական հարցի և Դայոց ցեղասպանության պատճմության լուսաբանմանն անդրադարձել է նաև Ֆրանսիայի արևելյան քաղաքականությանը և Արևելյան հարցի պատճմությանը նվիրված ընդհանուր բնույթի աշխատություններում: Դրանցից առավել կարևոր է Ֆրանսիացի նշանավոր պատմաբան, անվանի նապոլեոնացն: Ֆրանսիակի արևելյան քաղաքականության գիտակ եղուարդ Դիրիոյի (1864-1947)³²² Արևելյան հարցի պատճմությանը

³¹⁹ P. Passy. La vente sur l'Arménie. Paris, 1896.

³²⁰ Առև. տեղերթ. լո 3:

³²¹ Առև. տեղերթ. լո 5:

³²²Տե՛ս օրինակ E. Driant. La politique orientale de Napoléon. Schastach et Gardane (1816-1861). Paris, 1944

նվիրված գիրքը³²³, ուր նա մանրամասնորեն քննարկում է համիլյան կոտորածների պատմությունը:

Դամառոտակի կանգ առնելով հայկական տարածքների մասնատնան և XIX դարի 70-ական թթ. Հայկական հարցի ծագման վրա, նա հանգամանալից ներկայացնում է Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերի կացությունը 1880-1890-ական թվականներին, բազմից ընդգծում Աբրուլ Դամիդի քաղաքականության՝ Բեռլինի վեհաժողովի ընդունած պայմանագրով ստանձնած պարտավորություններին անհարի միտվածությունը և բարենորոգումների հրականացման հարցում արևմտյան տերությունների գործադրած ջանքերի անարդյունավետությունը. «Անցել են ամիսներ, տարիներ, – գրում է նա, – իսկ ո՞չ մի բարենորոգում չի հրականացվել. հարկերը զանձվել են ավելի կամայականորեն, քրդերը դարձել ավելի աներկյուղ ու գիշատիչ, քան երթեւ, կառավարությունը նրանց ընձեռել է գործելու հնարավորություն, դեռ ավելին՝ քաջալերել է»:

Դրիոն իրադարձությունների եզակի ժամանակակիցներից է, որը խորամուխ է եղել համիլյան վարչակարգի քաղաքականության մանրամասների մեջ, քանզի նրա ելակետային դրույթը հանգում է այն բանին, որ Աբրուլ Դամիդը Վճռել էր «Հայկական հարցին լուծում տալ հայերին ոչնչացնելու միջոցով»³²⁴: Այսպես, Դայոց ցեղասպանության սանձազերծումն իրավամբ շաղկապելով Հայկական հարցին լուծում տալու սուլթանի մտադրությանը, նա հայ ժողովրդի նկատմամբ կիրառված բռնությունների քաղաքականության մեկնաբանման խնդրում ցուցաբերում է շատ ավելի, քան իր ժամանակակիցները, ընդգրկուն նոտեցում, մանրամասնում 1892-1893 թթ. հայերին կրօնափոխելու և վտարելու ուղղությամբ սուլթանի գործադրած ջանքերը, որոնք միտված էին, փաստորեն, միևնույն գերնպատակի իրականացմանը:

Բուն համիլյան կոտորածների ուսումնասիրության հարցում արդեն Դրիոն հիմնվում է «Դեղին գրքում» զետեղված փաստաթղթերի վրա, մանրամասնորեն նկարագրում 1894-1895 թթ. ջարդերի ընթացքը: Սակայն, ինչն ավելի կարևոր է, նա շեշտում է, որ 1895

³²³ E. Driault, *La question d'Orient depuis ses origines jusqu'à nos jours*, Paris, 1898. Նշենք, որ այս գրքի 1909 թ. հրատարակությունը լույս է տեսել հայերեն բարգմանությամբ. Ե. Տօխո, Արեւելեան խնդիրը եւ Հայկական հարցը իր ծագումէն մինչեւ մեր օրերը, բարգմանեց՝ Եր. Արմաթշխանլեան, Կ. Պոլիս, 1913:

³²⁴ Նույն տեղում, էջ 252:

թ. նոյեմբեր-դեկտեմբերին Արևմտյան Հայաստանի տարրեր գավառ-ներում ու քաղաքներում (Դիարբեքիր, Սուշ, Սալաթիա և այլն) կոտորածները տեղի են ունեցել «ըստ Կոստանդնուպոլիսից տեղ հասած իրամանների»³²⁵, դրանով իսկ ավելի ակնառու դարձնելով իրադարձության իրականացումը պետական քաղաքականության նակարդակով:

Դրիոյի ուշադրությունից չի վրիհան նաև հայկական կուսակցությունների գործունեության հանգամանքը: Այս խնդրի լուսաբանման հարցում ևս նրա մոտեցումն արժանի է ուշադրության: Նա չի ժխտում հայերի՝ հեղափոխական գործունեությանը տուրք տալու իրողությունը, նույնիսկ մատնանշում է, որ ամենասարսափելի ողբերգությունների գիրկը Հայաստանին նետել են «անձամբ սուլթանի վարած քաղաքականությունը, ազգային կուսակցությունների գործունեությունը, Եվրոպական տերությունների անտարբերությունը կամ չկամությունը»³²⁶: Այսպիսով, թեև Դրիոն հայ ժողովրդի բնաջնջման պարագայում հայկական կուսակցություններին մասնակի պատասխանատվությունից ամբողջությամբ գերծ չի պահում, այդուհանդերձ, պատասխանատվությունը հավասարապես բարդում է օսմանյան գահակալի և Եվրոպական պետությունների վրա:

Հայերի վրա բարդվող պատասխանատվության առնչությամբ էականն այն է, որ նա չի բավարարվում փաստի արձանագրմամբ, այլ ջանում է, իր հնարավորությունների սահմաններում, այն մեկնաբանել: Ցանկություն իսկ չդրսենորելով հայերին ներկայացնելու իրքն նախահարձակ կողմից՝ նա Վերլուծում է նրանց՝ նման գործելամիջոցի դիմելու դրդապատճառները, ինչպիսիք են խորը վիատությունը թե՛ Եվրոպական տերությունների անարդյունավետ քաղաքականությունից և թե՛ Ռուսաստանի՝ իրենց նկատմամբ դրսենորած անբարյացակամ վերաբերմունքից (հեղինակն անհերքելի փաստերով հիմնավորում է Ալեքսանդր III-ի քաղաքականության հայահալած բնութքը): Ի վերջո, Դրիոն անկողմնակալորեն մատնանշում է, որ հեղափոխական գործունեությամբ հայերը հետապնդել են միայն մեկ նպատակ՝ հարկադրել տերություններին և սուլթանին վերհիշել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի գոյության մասին: Դրանում է Դրիոյի մոտեցման և կոտորածների սանձազերծման հարցում միայն հայերի վրա դրանց պատասխանատվությունն անվերապահորեն բարդող նրա տարրեր ժամանակակիցների անընդունելի դիրքությունը:

³²⁵ Նույն տեղում, էջ 255:

³²⁶ Նույն տեղում, էջ 252:

րոշման ակնհայտ զանազանությունը, որոնց նա տալիս է արժանի հակահարված:

Եվրոպական պետությունների պասիվ դիրքորոշման առիթով՝ Դրիոն թեև ծեռնպահ է մնում նրանց հասցեին բացահայտ քննադատական խոսքեր ուղղելուց, այդուհանդերձ, իր տարակուսանքն է հայտնում առ այն, թե ինչպես է Եվրոպան թույլատրել նման ոճոի իրականացումը, որը միջնադարից ի վեր աննախաղեալ է³²⁷: Ինչ վերաբերում է Ֆրանսիայի քաղաքականությանը, ապա նա գտնում է, որ 1896 թ. Նիկոլայ II-ի Փարիզ կատարած այցից հետո Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը ֆրանսիական կառավարությունը վերածել է «ժամանակակից Եվրոպական իրավունքի հիմնաքարերից մեկի և այն դրեւ մեծ տերությունների համատեղ երաշխավորության ներքո»³²⁸:

Եզրափակելով իր ընդհանրացումները, հեղինակը վկայակոչում է Գլաստոնի և Վանդալի Արդուլ Շամիդին՝ համապատասխանաբար՝ «մարդասպան սուլթան» և «կարմիր սուլթան» տված մականունները: Գլաստոնի գնահատականը նա ընդգրկում չի համարում, քանզի ըստ նրա ոչ ստույգ տեղեկությունների՝ հայերի «գոհերի թիվը հասնում է գրեթե 150000-ի, իսկ այդ կտրվածքով՝ 1870-1871 թթ. ֆրանս-պրուսական պատերազմն առավել սարսափազդու չի եղել»³²⁹:

Ինչպես և Դրիոն, Դայոց ցեղասպանության հիմնական պատճառը միևնույն դիրքերից է մեկնաբանում նաև Ժորժ դը Դյուլբորը (1848-1911): Օսմանյան կայսրությունում համիդյան վարչակարգի դրսեռութ հայահալած քաղաքականության հենքի վրա նա հիմնավորապես մերկացնում է XIX դարի 70-90-ական թվականներին արևմտահայության նկատմամբ Բարձր Դռան գործադրած բռնությունները և բացահայտում դրանց դրսեռում եղանակները: Ուշադրությունը կենտրոնացնելով Բեռլինի վեհաժողովին հաջորդած ժամանակահատվածում հայերի գոյության և անվտանգության համար ստեղծված անապահով պայմանների վրա, հեղինակը հայահալած քաղաքականության կազմակերպման գործում պարբերաբար ընդգծում է օսմանյան իշխանությունների դեկավար դերը, մասնավորապես մատնանշում ոչ միայն նրանց կրավորական վարչագիծը քրդերի հարձակումներից հայերին պաշտպանելու հարցում, այև հաճախ նրանց իսկ մասնակցությունը «դժբախտ քրիստոնյա ժողովուրդնե-

³²⁷ Նույն տեղում, էջ 258:

³²⁸ Նույն տեղում, էջ 258-259:

³²⁹ Նույն տեղում, էջ 258:

րի» դեմ ուղղված գործողություններին³³⁰: Քանզի հայերի հանդեպ ոճիրների իրականացման ընթացքում քրդերն աչքի էին զարնում բացահայտ հանգնությամբ, դը Դյուբորն, իրավամբ, այս հանգամանքը բնորոշում է իրեւ նրանց մոտ արմատացած անպատճելիության զգացողության վկայություն և դրանով իսկ, ևս մեկ անգամ ընդգծում նրանց նկատմամբ իշխանությունների որդեգրած բարեհած դիրքորոշումը³³¹:

Ինչ վերաբերում է արևմտահայության նկատմամբ պարբերաբար գործադրվող բռնություններին, ապա հղելով արժանահավատ փաստեր, նա անկողմնակալորեն ներկայացնում է նրա համար առկա իրավիճակի նռայլ, սակայն հավաստի պատկերը (գյուղերի հրկիզում և ավերում, բանտերում ծերբակալված հայերի խոշտանգումներ, երիտասարդ աղջիկների առևանգում և այլն):

Դը Դյուբորը հիմնավորապես բացահայտում է Աբդուլ Ջամիլի հայատյաց դիմագիծը, փաստերով հիմնավորում, որ նա հայերին պատժում էր նույնիսկ իրենց իրավիճակի բարելավմանն առնչվող հարցերով իրեն դիմելու համար, անվարան շեշտում, որ նման վարքագիծը մեծապես նպաստում էր օսմանյան իշխանությունների՝ «հայերի դեմ ուղղված մոլեռանդությունը բորբոքելուն»³³²: Ըստ դը Դյուբորի հայեցակարգի՝ 1890-ական թվականներին սանձազերծված Ջայոց ցեղասպանությունն ուղղակիորեն առնչվում է Ջայկական հարցին, որը մենք ամբողջությամբ բաժանում ենք: Այլ կերպ ասած, հեղինակն ընթրնել է սուլթանի՝ Ջայկական հարցին լուծում տալու որդեգրած քաղաքականության իմաստն ամբողջ խորությամբ. «Աբդուլ Ջամիլի անբարյացակամությունը բարենորդումների առնչությամբ ակնհայտ է: Նա ցանկանում էր լուծում տալ Ջայկական հարցին հայերին բնաջնջելու միջոցով», – փաստում է նա³³³:

Թեպետ դը Դյուբորը գտնում է, որ Ջայոց ցեղասպանության «արյունալի տեսարանները» համատեղելի են V դարի բարբարուսների արարքների հետ, այնուամենայնիվ գերադասում է շրջանցել դրանց թվարկումը: Օսմանյան Վայրագ Վարչակարգի ճիրաններում հեծող արևմտահայության ողբալի վիճակն ավելի ընդգծելու համար, նա գուգահեռներ է անցկացնում ռուսական տիրապետության

³³⁰ G. de Dubor, La Question arménienne // « La vie contemporaine et revue parisienne réunie », 1^{er} novembre 1896, p. 203.

³³¹ Նույն տեղում, էջ 205:

³³² Նույն տեղում:

³³³ Նույն տեղում, էջ 207:

տակ գտնվող արևելահայերի և արևմտահայերի կացությունների միջև և ցցուն ծևով ի հայտ բերում առկա ահօԵլի զանազանությունները: Նրա կարծիքով, ի դեպ, եթե Արևմտյան Հայաստանը խելացիորեն կառավարվեր, ապա կդառնար Օսմանյան կայսրության «գանձերից»³³⁴:

Ակներև է, որ Հայկական հարցի բարեհաջող լուծումը հեղինակը պայմանավորում է, մասնավորապես բարենորոգումների իրականացմամբ և ըստ այդմ՝ խիստ քննադատության ենթարկում եվրոպական տերություններին, որոնց «մասամբ պատասխանատու» է համարում հայկական կոտորածների համար, քանզի նրանք չեն բարեհաճել ըստ ստանձնած պարտականությունների՝ բարենորոգումների գործընթացի նկատմամբ անհրաժեշտ վերահսկողություն սահմանել³³⁵: Ինչպես և դը Դյուբորի ֆրանսիացի ժամանակակիցներից ոմանք, նա ևս իրատեսորեն է մեկնաբանում եվրոպական մեծ տերությունների՝ Հայկական հարցում ցուցաբերած կաշկանդվածության գիշավոր՝ այն է զինված միջամտությունից խուսափելու պատճառը, որը կիանզեցներ նրանցից մեկի կողմից Կոստանդնուպոլիսի գրավմանը³³⁶ և անխուսափելիորեն նրա իսկ դիրքերի շեշտակի ամրապնդմանը Մերձավոր Արևելքում՝ ի վես այլոց: Ի վերջո, տերությունների՝ Բարձր Դառնը հղած բողոքները բնորոշելով իրունքում այլատոնական», դը Դյուբորը, արդեն ի տարբերություն Դրիոյի, նրանց խստագույնս դատապարտում է բողտվության համար³³⁷ և Հայկական հարցի արմատական լուծումը պայմանավորում բացառապես եվրոպական տերությունների միջամտությամբ:

Դը Դյուբորին հաջողվել է իրատեսական դիրքերից մեկնաբանել Հայկական հարցի հիմնական առանձնահատկությունները: Սակայն նրա հողվածի արժանիքներից կցանկանայինք առանձնացնել ևս մեկը: Հեղինակը բազմապիսի փաստերով հիմնավորում է Օսմանյան կայսրությունում՝ ժամանակակից ցեղասպանագետների առաջարած նոր կատեգորիայի՝ ցեղասպան հասարակության գոյության փաստը³³⁸: Նման հասարակությունը, ինչպես ամենուր, այս-

³³⁴ Նույն տեղում, էջ 209:

³³⁵ Նույն տեղում, էջ 203:

³³⁶ Նույն տեղում, էջ 213:

³³⁷ Նույն տեղում:

³³⁸ Ի. Տերնոնն անդրադառնալով այս հարցին պարզաբանում է. «Ցեղասպան հասարակություններն այնպիսի հասարակություններ են, որտեղ պետությունն անխոչընդունում տնօրինում է իր քաղաքացիների կյանքը»: Տե՛ս Y. Terrien, L'État criminel, p. 72. Ի. Լ. Դորուիկցն այս առնչությամբ իրավամբ նշում է. «Ցեղասպան հա-

տեղ ևս, եթե ոչ ակտիվ միջամտությամբ, ապա առնվազն պասիվ դիրքորոշմամբ, հիրավի, 1894 թ. ի վեր օսմանյան իշխանություններին լայն հնարավորություններ է ընծեռել հայ ժողովրդի հանդեպ անշեղորեն իրականացնելու ցեղասպանության լայնածավալ քաղաքանությունը:

XIX դարի 90-ական թվականներին հայ ժողովրդին բազմից սատարել է Էռնեստ Լավիսը (1842-1922): Ֆրանսիայի արևելյան քաղաքականությանը նվիրված հոդվածներում, ինչպես և իր ժամանակակից ֆրանսիացի գործիչների գերակշռող մասը, նա հանդես է գալիս Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանան դիրքերից, հավաստում, որ Ֆրանսիան թուրքիայում ունեցել է ֆինանսական մեծ շահախնդրություններ՝³³⁹: Օսմանյան կայսրության հովանավորի դեր ստանձնելը համարելով Ֆրանսիայի առաջնահերթ խնդիրներից, Լավիսն, այդուհանդերձ, համոզված է, որ նման քաղաքականությունը չի ենթադրում «սուլթանին իրավունք վերապահել վայրագ բռնակալության միջոցով վարկարեել այդ կայսրության գոյության իսկ փաստը»: Ավելին, նա գտնում է, որ Ֆրանսիայի պարտականությունների մեջ է մտնում Օսմանյան կայսրությունում բնակվող և անկախության տենչացող ժողովուրդների վերածնությանը զորավիճ լինելը՝³⁴⁰:

Թեև Լավիսը մանրազնին չի քննարկում հայկական կոտորածների ընթացքը, նրա որոշ դիտարկումներն, այնուամենայնիվ, հնարավորություն են ընծեռում պատկերացում կազմել այդ իրադարձության շուրջ նրա ունեցած դիրքորոշման վերաբերյալ: Օսմանյան կառավարությունը բնութագրելով իրու «կրպիտ, բարբարոսական և արատավոր»՝³⁴¹, նա «սարսափելի ճգնաժամի գլխավոր պատճառ» համարում է Աբդուլ Համիդին, նշելով, որ «Արևելյան հարցն արդի ժամանակաշրջանում վերածվել է սուլթանի հարցի»³⁴²:

սարակությունը տիրապետության միակ ձևն է, որը մարդկանց պարբերաբար գրկում է կյանքից»: Տե՛ս I. L. Horowitz, *Taking Lives. Genocide and State Power*, p. 154.

³³⁹ E. Lavisse, Questions // «Revue de Paris», livraison du 15 janvier 1897, p. 459-460.

³⁴⁰ Նույն տեղում, էջ 460-461:

³⁴¹ E. Lavisse, *Notre politique orientale* // «Revue de Paris», livraison du 15 mai 1897, p. 282. Նշենք, որ Լավիսի այս հոդվածը մանրազնին քննական վերլուծության են ենթարկել հնչակյան կուսակցության օրգան «Նոր կյանք» ամսագրի թրակիցները: Տե՛ս «Նոր կյանք», Ա տարի, 1898, թիվ 1, էջ 12-14; թիվ 4, էջ 60-63; թիվ 5, էջ 78-80:

³⁴² E. Lavisse, Questions, p. 463.

Աբդուլ Ջամիջին մեկ այլ առիթով անվանելով «վախկոտ քռնակալ, որին ատում են և արհամարհում իրենք իսկ՝ մահմեղականները»³⁴³, Լավիսը Ջայոց ցեղասպանությունը մեկնաբանում է իրեն կանխամտածված և նախապես ծրագրված իրադարձություն, 1895 թվականը համարում «մշայլ ժամանակաշրջան», երբ կոտորածները հաջորդում էին միմյանց³⁴⁴: 1895 թ. Տրավիզոնում տեղի ունեցած ջարողերի առիթով նա նշում է. «Այսօր մենք իրազեկ ենք այդ կոտորածի սարսափազդու մանրամասներին, որն իրականացվել է հստակ իրամանի հիման վրա, սկսվել ու ավարտվել ըստ տրված ազդանշանի»³⁴⁵:

Լավիսի հոդվածներում ակնառու է մեծ տերությունների և, մասնավորապես, Ֆրանսիայի ղեկավար շրջանակների՝ հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ դրսնորած անտարեր Վերաբերմունքի, Օսմանյան կայսրության ներքին գործերին միջանտելու ցանկության բացակայության քննադատությունը, հանգամանք, որը սուլթանին լայն հնարավորություններ է ընծեռել անշեղորեն կենսագործելու արևմտահայության ոչնչացման քաղաքականությունը: Բանկ օտոմանի գրավման հետ կապված միջադեպի առիթով նա գրում է. «Անողոք քռնությունները, որոնք բազում շաբաթներ ի վեր նախապատրաստել էին դավադրությանն իրազեկ օսմանյան իշխանությունները, դեսպանների աչքի առջև բազմաթիվ օրեր հարատևած սարսափելի կոտորածներն ապացուցում են սուլթանի աներեր համոզնունքն առ այն, որ Եվրոպայից երկյուղելու ոչինչ չուներ»³⁴⁶:

Լավիսը խարազանում է հատկապես Պանտոյի թրքամետ քաղաքականությունը, որի ջանքերով «Դեղին զքում» գտնեղված մեծ քվով փաստաթղթեր հրատարակվել են կրծատումներով³⁴⁷, ֆրամսիհական կառավարության՝ հայկական կոտորածների իրողությունը ֆրանսիական հասարակությունից քողարկելու շահագրգությունը, ինչպես Բերարը, բնութագրում է իրեն «լրության դավադրություն»³⁴⁸, ընդգծում դրա կազմակերպիչների վրա բարովոր մեծ պատասխանատվությունը: «ճգնաժամը շարունակվում էր,— գրում է

³⁴³ E. Lavisse, La paix d'Orient // « Revue de Paris », livraison du 15 février 1898, p. 865.

³⁴⁴ E. Lavisse, Notre politique orientale, p. 297.

³⁴⁵ Նույն տեղում, էջ 294-295:

³⁴⁶ Նույն տեղում, էջ 302:

³⁴⁷ E. Lavisse, Note sur le Livre Jaune // « Revue de Paris », livraison du 15 mars 1897, p. 443-451.

³⁴⁸ Նույն տեղում, էջ 455:Տե՛ս նաև E. Lavisse, Questions, p. 463:

Լավիսը՝ կոտորածները կրկնվում էին, կարմիր բիծն ընդլայնվում էր, իսկ սուլթանը շարունակում էր ստել: Այս ամենը միմյանց հաջորդում էին կառավարության և մամուլի լրակյացության, հասարակության անհրազեկության պայմաններում»³⁴⁹:

Լավիսի մոտեցումը թեև ունի ակնառու առավելություններ, ինչպիսիք են ցեղասպանության իրականացման փաստումը պետական քաղաքականության մակարդակով, մեծ տերությունների անկարեկից քաղաքականության քննադատությունը, այդուհանդերձ, ընդհանուր առմանք, այն համահունչ է պաշտոնական Ֆրանսիայի արևելյան քաղաքականությանը, քանզի նա, այնուամենայնիվ, հանդես է գալիս Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման դիրքերից, ինչի ապահովմանն է, փաստորեն, միտքած նաև նրա՝ կայսրության քրիստոնյա ժողովուրդների վերածնության, այն է՝ նրանց կացության բարելավումն ապահովելուն առնչվող հորդորության մեջ:

Ընդհանուր բնույթի ուսումնասիրությունների թվում իր ուրույն տեղն ունի Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1913) Էտիեն Լամիի (1845-1919) «Լևանտի Ֆրանսիան» մենագրությունը³⁵⁰, ուր մանրակրկիտ Վերլուծված են Ֆրանսիայի արևելյան քաղաքականության ելեկտրոնները: Դամիլյան կոտորածները դարձնելով հանգամանալից ուսումնասիրության նյութ, նա հայերի ճակատագիրն Օսմանյան կայսրությունում քննարկում է ոչ թե իբրև մասնակի երևույթ, այլ օսմանյան լծի տակ հեծող քրիստոնյա ժողովուրդներին վիճակված տառապանքների ընդհանուր հենքի վրա, որոնց ազգային ինքնագիտակցության զարթոնքը պայմանավորում է հպատակների նկատմամբ թուրքերի հաստատած տիրապետությունը դատապարտող՝ XVIII դարի Ֆրանսիական բուրժուական հեղափոխության առաջադրած վեհ սկզբունքներով: «Այդ պահից ի վեր, նրանց իդեալի անսանծելի հաստատականության և ապստամբությունների հետևանքով Օսմանյան կայսրության առջև ծառացել է մեծ բարդությունների հետ կապված գոյատևման խնդիրը», – գրում է նա³⁵¹:

Բնութագրելով հայերին իբրև «խելացի, հարուստ, ծկուն և ճարպիկ» ժողովուրդ, նշելով XIX դարի ընթացքում նրանց փափագած՝ դավանանքի ազատության, անձի ապահովության և այլ իդեալի մասին, հեղինակը հավաստում է, որ խաղաղ իրավիճակը հարատևել է

³⁴⁹ E. Lavisse, Note sur le Livre Jaune, p. 454.

³⁵⁰ E. Lamy, նշվ. աշխ.:

³⁵¹ Նույն տեղում, էջ 74:

մինչև Արդուլ Շամիդի գահակալությունը, երբ օսմանյան միապետը, ինչպես նա նեկանքանում է, «ցանկացել է միաժամանակ ճնշել կայսրության տարածքային ամբողջականությանը սպառնացող ազգային շարժումները և ձախողել ազատական բարենորոգումները, որոնք նույնիսկ մահմեդականների շրջանում, քաջալերելով հեղափոխական ոգին՝ ի զորու էին սասանելու գահը և սպառնալու սուլթանի կյանքին»: Նամանօրինակ Երկուուղներից Արդուլ Շամիդը, ըստ նրա՝ Վճռել է ծերբազատվել «իսլամական ոգուն, նախկին բռնապետությանը բնորոշ միջոցներին վերադառնալու և քրիստոնյա ազգերի նկատմամբ՝ մահմեդական ազգերին տրամադրվող գերիշխանության միջոցով»³⁵²: Կռահելով սուլթանի ռասխատական քաղաքականության էլությունը, Լամին մատնանշում է, որ Արդուլ Շամիդը ցանկանում էր «քոնության դեմ ճնշվածների մղած դիմադրությանը բռնության տեսք տալ և նրանց, ովքեր պաշտպանում էին իրենց ունեցվածքները, կանանց, երեխաններին՝ ներկայացնել իրեն օրինական իշխանության դեմ ոտքի ելած ապստանքների»³⁵³:

Չանտեսելով 1890 թ. ի վեր հայերի կացության վատրարացունը, 1894 թ. սկիզբ առած ջարդերը, Լամին ուշադրությունը կենտրոնացնում է ամենակարևոր՝ ցեղասպանության իրեն պետական քաղաքականության մակարդակով իրականացվող եղելության հանգանաքի վրա: Սուլթանը, որն օգտվելով Եվրոպական տերությունների տարածայնություններից, պատրաստվում էր լայնահուն ընթացք տալ հայերի բնաջնջման գործընթացին, նահանգներն է ուղարկում իր բանագնացներին, որոնք տանում էին կոտորածների իրականացնան առնչվող իրահանգները: Միայն դրանք ստանալուց հետո են, ըստ նրա՝ տեղերում ձեռնամուխ եղել հայերի զանգվածային ոչնչացմանը, որի հետևանքով, ըստ հեղինակի տվյալների՝ 1895 թ. «սպանվում է, այրվում կամ կենդանի հուղարկավորվում 150000 տղամարդ, կին և երեխա, իսկ 80000-ը զոհվում է թշվառությունից»: Ֆրանսիացի պատմաբանը նրանց համարում է եվրոպական տերությունների «անգործունեության» զոհեր: «Բարենորոգումների զաղափարը սուզվում էր համակ արյան մեջ, գոյատևում էր միայն հեղափոխության զաղափարը, որը հանգեցնում էր վրեժխնդրության», – նշում է նա³⁵⁴:

³⁵² Նույն տեղում, էջ 85-86:

³⁵³ Նույն տեղում, էջ 86:

³⁵⁴ Նույն տեղում, էջ 91-92:

Այս առունով հատկանշական է այն բացատրությունը, որը Լամին տախս է սուլթանի դիրքորոշմանը՝ կապված դաշնակցականների կողմից Բանկ օստոնանի գրավման հետ: Կասկածից վեր համարելով Աբդուլ Ջամիդի իրազեկությունը նախապատրաստվող գործողությանը, նա սուլթանի թողտվությունը մեկնաբանում է իբրև ցեղասպանության գործընթացի ծավալման համար տարերայնորեն ի հայտ եկած՝ պատեհ առիթը բաց չքողնելու խորանանկ մտադրություն: Խոսքը վերաբերում է մի առիթի, որը սուլթանը, հիրավի, անհապաղ օգտագործել է հերթական անգամ կայսրության մայրաքաղաքի փողոցներն արյունաներկ անելու համար. ըստ նրա տվյալների՝ այս անգամ զոհվել է 8000 մարդ: Ֆրանսիայի չափավոր դիրքորոշումն այս հարցում Լամին բնորոշում է իբրև մի վարժագիծ, որը վարկաբեկել է պետության բարոյական հեղինակությունը:

Ակնհայտ է, որ Լամին, իրադարձությունները մեկնաբանում է միանգամայն անկողնակալ դիրքերից, սակայն, ֆրանսիական կառավարության քաղաքականության քննադատության հարցում դրսկորում, այդուհանդեմ, զուսա վերաբերմունք: Թեև նրան, անտարակույս, հաջողվել է կոահել Աբդուլ Ջամիդի հայահալած քաղաքանության մի շարք էական նրբերանգներ, ինչպիսիք են Ջայոց ցեղասպանության գործընթացն Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման անհրաժեշտությամբ պատճառաբանելը, Բարձր Դուռ ռասիստական քաղաքականության եռթյան բացահայտումը, զոհերին՝ ապստամբներ ներկայացնելու և ըստ այդմ՝ արևմտահայության բնաշնչման պատասխանատվությունը հայերի վրա բարդելու սուլթանի ստոր մտադրությունը, այդուհանդերձ, որոշ սկզբունքային հարցերում նա թույլատրել է վրիպումներ: Սասնավորապես, իրականության հետ որևէ աղերս չունի հեղինակի այն պնդումը, ըստ որի՝ «ամբողջ Թուրքիայում սփռված հայ ազգը ոչ մի տեղ, նույնիսկ իր անունը կրող երկրամասում, մեծամասնություն չէր կազմում»³⁵⁵:

Արևելյան հարցի պատմությանը նվիրված ուսումնասիրությունների թվում հարցադրումների ինքնատիպությամբ առանձնանում է ֆրանսիացի լրագրող, 1895-1898 թթ. իբրև «Տան» թերթի թղթակից Կոստանդնուպոլսում բնակված ժորժ Գոլիսի (1865-1912)³⁵⁶ մեծագործությունը, ուր Ջայկական հարցի պատմությանն առնչվող զանա-

³⁵⁵ Նույն տեղում, էջ 84: Այս հարցի մասին տե՛ս վերը:

³⁵⁶ Նրա մասին մանրամասն տե՛ս V. Bérard, Préface.— G. Gaulis, La ruine d'un empire. Abd-ul-Hamid, ses amis et ses peuples, Paris, 1913, p. V-XI:

զան խնդիրներ քննարկված են դրա թե՛ պատմական և թե՛, ինչն ավելի կարևոր է, գաղափարական նախադրյալների կտրվածքներով³⁵⁷: XIX դարում օսմանյան պետության դեկավարների քաղաքականության հիմնական նպատակը հաճարելով կայսրության սահմաններից դուրս բնակվող մահմեդական ժողովուրդներին իրենց «հոգևոր իշխանությանը» Ենթարկելու միտումը³⁵⁸, հեղինակը հավաստում է, որ Աբդուլ Ջամիդի համար պանիսլամիզմը դարձել էր զավթած իշխանությունը պահպանելու միակ հենարանը³⁵⁹:

Դայոց ցեղասպանության գործընթացը միանգանայն իրավամբ քննարկելով գերազանցապես այս հայեցակարգի շրջանակներում, Գոլիսը հայկական զանգվածային կոտորածները դիտում է իրեն պանիսլամիզմի իրականացրած «մեծ գործ», որով այն կարող էր հպարտանալ³⁶⁰:

Դայկական հարցի ծագման քաղաքական ակունքները հեղինակը որոնում է Թանգիհմաթի՝ XIX դարի առաջին կեսին Օսմանյան կայսրությունում սկիզբ առած բարենորոգումների ժամանակաշրջանում ծագած խմորումներով, իսկ համիդյան կոտորածները բնորոշում իրեն Թանգիհմաթի ճգնաժամ, որի առաջընթացին խոչընդոտել էր պանիսլամիզմը³⁶¹: Ընդհանուր առմամբ, Դայկական հարցի ծագումը Գոլիսն իրավամբ պայմանավորում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին հաջորդած՝ միջազգային պայմանագրերում անրագրված բարենորոգումների իրականացման անհրաժշտությամբ:

Դարկ է Գոլիսին արժանին հատուցել, քանզի Դայոց ցեղասպանության սանձազերծման մեկնաբանության հարցում նա կրահել է հայկական նահանգներում նախատեսված բարենորոգումների իրականացման խնդրի առաջնակարգ նշանակությունը, որը Ենթադրում էր Եվրոպական պետությունների միջամտությունը և, ըստ այդմ, մեծ տեղ է հատկացրել այդ խնդրին: Ցեղասպանության գլխավոր պատճառների թվում դասելով «Եվրոպական միջամտության շարժադրմերի վերացման» անհրաժշտությունը, նա նշում է. «Աբդուլ Ջամիդի

³⁵⁷ G. Gaulis, *Les questions d'Orient*, Paris, 1905.

³⁵⁸ Նույն տեղում, էջ 10:

³⁵⁹ Նույն տեղում, էջ 25:

³⁶⁰ Նույն տեղում, էջ 43:

³⁶¹ Նույն տեղում, էջ 31:

օրոք, անգամ երբ արտասանվում է բարենորոգուն բառը, այն հանգեցնում է կարճատև կոտորածի»³⁶²:

Դայոց ցեղասպանությունը պատճառաբանելով սուլթանի կանչամտածված քաղաքականությամբ՝ Գոլիսը 1889 թ. համարում է նշանակալից տարեթիվ՝ սուլթանի հակահայկական քաղաքականության սանձազերծնան ասպարեզում: Ըստ նրա՝ Աբդուլ Դամիդն արհամարիելով Եվրոպայից ակնկալվող հնարավոր դիմադրությունների հնարավորությունը, «վճռել է վերջ տալ Դայկական հարցին իր եղանակով (ընդգծումը մերն է – Վ. Պ.)»³⁶³: Այսպիսով, հեղինակի հիմնական արժանիքներից է ցեղասպանության իրական պատախանատունների դիմագերծումը: «Ահեղի հանցագործության»՝ երեք հարյուր հազար հայի բնաշնչնան կազմակերպիչներ նա համարում է սուլթանին և Պալեին: Այս «սարսափելի ողբերգության» գլխավոր գործող անձը, ըստ նրա՝ կարող էր լինել միայն «մի հրեշ», որին նկարագրելն իսկ անհնար է³⁶⁴:

Ի շարս Դայոց ցեղասպանության հիմնահարցերի, Գոլիսը քննարկում է Աբդուլ Դամիդի՝ հայերին իրեւ նախահարձակ կողմի ներկայացնելու վարկածը, բազում փաստերով ապացուցում, որ Եվրոպական տերությունների առջև հայերին հիմնավորապես վարկարեկելը՝ սուլթանի հետապնդած հիմնական նպատակներից էր: Նա ծանրանում է, նաև սուլթանի գործադրած եռանդագին ջանքերի վրա, որոնք հետապնդում էին հայերին՝ իրեւ սուլթանի դեմ մահափորձի կազմակերպիչների ներկայացնելու նպատակ, նշում, որ տարբեր բնակավայրերում սուլթանի քանագնացների այցելություններին հաջորդում էին հայկական կոտորածները³⁶⁵: Դրանով իսկ նա մեկ անգամ ևս շշտում է Դայոց ցեղասպանության՝ իրեւ պետական քաղաքականության մակարդակով տեղի ունեցող իրադարձության բնույթը:

Դպրանցիկ հայացք նետելով հայկական կոտորածների «ամոթալի ժամանակաշրջանում» Եվրոպական պետությունների քաղաքականության վրա, նա հեգնանքով նշում է, որ տերությունների միջամտությունը հանգել է միայն զրույցների, դատարկ սպառնալիքների և դիվանագիտական քայլերի³⁶⁶:

³⁶² Նույն տեղում, էջ 40:

³⁶³ Նույն տեղում, էջ 33:

³⁶⁴ Նույն տեղում, էջ 28:

³⁶⁵ Նույն տեղում, էջ 41:

³⁶⁶ Նույն տեղում, էջ 42:

Ինչպես տեսնում ենք, Դայկական հարցին լուծում տալու անհրաժեշտությունը շաղկապելով օսմանյան գահակալների պանխալամական քաղաքանության հետ, Գոլիսն այն իրավամբ համարել է Դայոց ցեղասպանության հիմնական պատճառներից, ինչը նրա մոտեցման անժխտելի առավելությունն է:

Դամիդյան կոտորածների գործընթացին հակիրճ, սակայն դիպուկ գնահատականներ է տվել նաև ժորժ Բեքերը՝ XIX դարի 80-90-ական թվականների բականյան պատերազմների և Արևելյան հարցի պատմությունը լուսաբանող ուսումնասիրության մեջ³⁶⁷: Զժխտելով «Վերջին ժամանակներում» առկա անելանելի կացության բարելավնան՝ հայերի մտադրությունները և բարենորդումների կենսագործման նպատակով նրանց հիմնադրած կուսակցությունների գոյության փաստը, Բեքերն, այդուհանդերձ, ամբողջությամբ բացահայտում է Աբդուլ Դամիդի հայահալած քաղաքականության էությունը. «Սուլթան Աբդուլ Դամիդը, – գրում է նա, – Դայաստանում տեղի ունեցող անկարգությունները ճնշելու պատրվակի ներքո, բազում անգամներ այդ տարածաշրջան է ուղարկել գինված հրոսակախմբեր, որոնք կոտորել են հազարավոր քրիստոնյաների: Սուլթանի հանցակցությունը մարդասպանների հետ որևէ մեկի կասկածն այլևս չի հարուցում»: Դիմնվելով «Դեղին գրքում» անփոփած փաստաթղթերի վրա, հեղինակը հավաստում է նաև Դայոց ցեղասպանության՝ իրեն նախապես ծրագրված եղելության փաստը:

Բեքերը համոզված է, որ եթե կայսրության տարածքում տերությունների՝ սուլթանին պարտադրած բարենորդումների ծրագիրն անշեղորեն չիրականացվի, ապա հայկական կոտորածները, որոնք նա բնութագրում է իրեն «սարսափելի», յուրաքանչյուր պահի կարող են վերսկսվել:

Աբդուլ Դամիդի գործունեությանը նա տալիս է սպառիչ գնահատականներ, անվանում նրան բարենորդումների բացահայտ թշնամի, որը դրանք կը ընդունի միայն այն պարագայում, եթե տերությունները դանակը նրա կոկորդին սեղմեն: Ըստ Բեքերի՝ Աբդուլ Դամիդը հմտորեն համաձայնությունների է հանգում՝ իր իսկ խոստացած բարենորդումների ծրագրի իրականացումը տապալելու նպատակով: Սակայն, սուլթանի քաղաքականության առնչվող նրա բացատրություններն ամենակին սպառիչ չեն, քանզի նա այն մեկնաբանում է հիմնականում կրոնական գործոնի՝ Վերջինիս կայացրած որոշում-

³⁶⁷ G. Becker, *La guerre contemporaine dans les Balkans et la question d'Orient (1885-1897)*, Paris, 1899.

Ների վրա թողած վճռորոշ նշանակության հենքի վրա: Բեքերի համոզմամբ՝ սուլթանը «գգում է, որ այս բարենորոգումները միտում ունեն հավասարության եզրեր սահմանելու քրիստոնյաների և մահմեդականների միջև, հողմացրիկ անելու իր հպատակների կույր հավատքը և գիտակցում, որ փոքր անց դրանք իր ձեռքերից կկորցեն այն հզոր լժակը՝ կրոնական մոլեոանդությունը, որի միջոցով կարող է ոտքի հանել ամբողջ թուրքական կայսրությունը»:

ԶԺՄՍԵԼՈՎ հանդերձ Բեքերի իրավացիությունն այս հարցում, նշենք, որ բարենորոգումների ծրագրերի կենսագործման տապալման իրողությունը խարսխվում էր շատ ավելի լայն հենքի վրա, քան այդ ներկայացված է նրա գրքում, քանզի հեղինակն ամենին ուշադրություն չի դարձել հարցի ուսումնասիրության քաղաքական կողմի վրա: Դարկ է մեկնաբանել, հատկապես, որ Բուլղարիայի՝ կայսրությունից անջատման իրողությունից ահարեւկված սուլթանը, անկասկած, շատ ավելի սոսկում էր հայկական վիլայեթներին ինքնավարություն տրամադրելու հեռանկարից, հանգամանք, որն ամբողջությամբ շրջանցել է Բեքերը:

Արևելյան հարցի և մասամբ Դայկական հարցի պատմությանն առնչվող որոշ խնդիրներ արծարծվել են նաև պատմաբան Ռենե Պինոնի (1870-1958) գրքում, որը վերջինիս ծագումն արդարացիորեն պայմանավորում է Բեռլինի վեհաժողովում սկիզբ առած քննարկումներով³⁶⁸: Պինոնի շարադրանքում չկան հայկական կոտորածների պատճառների մեկնաբանություններ և գնահատականներ, քանզի նրա ուշադրության կենտրոնում լոկ դիվանագիտական հարաբերությունների պատմությունն է:

Դանգամանորեն անդրադառնալով մեծ տերությունների քաղաքականությանը, Պինոնը ջանում է բացահայտել Դայոց ցեղասպանության հարցում նրանց անտարեր վարքագծի պատճառները և, մասնավորապես Ֆրանսիայի որդեգրած քաղաքականության էությունը, որը հանգում էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանը: Այս բանաձևը, ինչպես նա նշում է, դարձել էր Ֆրանսիայի ավանդական քաղաքականության հիմնահարցերից մեկը, որը նա հարմարեցրել էր «իր կարիքներին և արդի հետաքրքրություններին»³⁶⁹: Տերությունների պասիկ դիրքորոշման

³⁶⁸ R. Pinon, L'Europe et l'Empire ottoman. Les aspects actuels de la question d'Orient, p. 42.

³⁶⁹ Նույն տեղում, էջ 53:

առիթով՝ Պինոնն առաջադրում է իրատեսական մեկնաբանություն, այդ իրողությունը հիմնավորում մասսամբ նրանց ծվատող տարածայնություններով, մասսամբ հայ հեղափոխականների՝ Օսմանյան կայսրության տարածքում ծավալած գործունեությամբ, քանզի նման պայմաններում, Եվրոպական պետությունների միջանտությունը կարող էր քաջալերել Թուրքիայում այնպիսի գործողությունների իրականացմանը, որոնց դեմ նրանք խիստ օրենքներ էին կիրառում իրենց երկրներում։ Իսկ այս ամենն Արդուլ Շամիդին հնարավորություն էր ընձեռում «բավարարվելու լայնահուն խոստումներով, հետաձգելու յուրաքանչյուր բնույթի բարենորոգումներ և շարունակելու կոտորածները»³⁷⁰։

Դայոց ցեղասպանության պատմությունը հպանցիկ քննարկել է նաև ֆրանսիացի մեծ պատմաբան՝ Շառլ Սենյորոսը (1854-1942), որը XIX դարի Եվրոպայի քաղաքական պատմությանը նվիրված՝ ընդհանուր բնույթի ուսումնասիրության մեջ տվել է Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած անցքերի համառոտ, սակայն անկողմնակալ գնահատականներ։ Նշելով, որ արևմտահայության հանդեպ Արդուլ Շամիդի Վարած քաղաքականությունը 1890 թ. ի վեր կրել է փոփոխություններ, նա հիշատակում է հայկական հեղափոխական փոքր կուսակցության ձևավորման մասին (առանց ճշգրտելու, թե որ կուսակցությանն է առնչվում խոսքը), որը հայերի համար պահանջում էր «ինքնավարություն և անձնական անվտանգության երաշխիքներ, այլ ոչ թե անջատում կայսրությունից»։ Այդ պահանջներն, ըստ նրա իրատեսական մեկնաբանության՝ պատճառ են դարձել նախ՝ «իրական կամ կարծեցյալ հեղափոխականներին» դատապարտելու, այնուհետև՝ 1894-1895 թթ. «զանգվածային կոտորածների» համար, որոնք դեկավարում էին «մահմեդական իշխանությունները և իրականացնում զինվորները կամ վարձու մարդասպանները, սակայն պաշտոնապես Եվրոպային ներկայացվում իբրև հայկական ապստամբություններ»³⁷¹։

Ինչպես տեսնում ենք, սահմանափակվելով նույնիսկ ամենահամառոտ դիտարկումներով և ձեռնպահ մնալով մանրամասների մեջ խորամուխ լինելուց, Սենյորոսին հաջողվել է Դայոց ցեղասպանության պատմությանն առնչվող որոշ կարևոր հանգամանքներ արժեվորել հավուր պատշաճի։

³⁷⁰ Նույն տեղում, էջ 50։

³⁷¹ Ch. Seignobos, *Histoire politique de l'Europe contemporaine. Evolution des parties et des formes politiques 1814-1896*, Paris, 1897, p. 605.

Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակին է նվիրված չորս տարի Կոստանդնուպոլիսում բնակված եղնոն Ֆազիի գիրքը: Ելնելով շարադրանքից, կարելի է հավաստել, որ հեղինակը քաջատեղյակ է եղել համիդյան վարչակարգի օրոք օսմանյան տարրեր ատյաններում ու ասպարեզներում (Բարձր Դուռ, Պալե, Ֆինանսական ոլորտ և այլն) իշխող մթնոլորտին և անկողմնակալ բացահայտել է տեղի ունեցող բազմաթիվ ապօրինությունների իրական պատկերը: Թեպետ նա չի հետապնդել սուլթանի ազգային քաղաքականության մանրամասն վերլուծության նպատակ, այնուամենայնիվ, համառոտակի տվել է Ադրուլ Շամիդի քաղաքականության գնահատականն այս ասպարեզում՝ նրան անվանել «քրիստոնյա հպատակներին կոտորող», «Ելորդի իր պալատում դողահար» բռնակալ³⁷²: Շեղելով գերմանացի ժամանակակիցներից մեկի հաշվարկները, Ֆազին անվարան պնդել է, որ նույնիսկ Շռոմեական կայսրության արյունաբերու տիրակալներ Ներոնի կամ Շելիոգաբալոսի օրոք «այդչափ անմեղ մարդիկ չեն զոհվել», որքան Աբրուլ Շամիդի տիրակալության հաստատումից ի վեր: Ի դեպ, նա քրիստոնայների կյանքի համար կայսրությունում ստեղծված անելանելի պայմանների հարցը քննարկել է մարդու իրավունքների տեսանկյունից, ինչը եզակի երևույթ է քննարկվող ժամանակաշրջանում: «Պատմությունը կիավաստի, որ երբեմ մարդկային էակի ամենատարրական ազտություններն այնպիսի ծայրահեղությամբ չեն ոտնահարվել, ինչպես Վերջին տասնինգ տարվա ընթացքում թուրքիայում»³⁷³:

Ընդհանուր բնույթի աշխատությունների թվում ցանկանում ենք առանձնացնել է. Լավիսի և Ա. Ռամբոյի խմբագրությամբ լույս ընծայված «Շամընդիհանուր պատմություն՝ IV դարից մինչև մեր օրերը» ծավալուն կոլեկտիվ աշխատությունում ամփոփված՝ թուրքագետ Մ. Լ. Կահենի «Խալամական աշխարհը» ուշագրավ հոդվածը³⁷⁴: Շեղինակը մանրամասնորեն քննարկում է կայսրության տարածքում բնակվող զանազան ժողովուրդների նկատմամբ՝ օսմանյան վարչակարգի կիրառած բռնի օսմանացման քաղաքականությունը և դրա ձախողումն իրավամբ մեկնաբանում իբրև Շայոց ցեղասպանության հիմնական պատճառներից մեկը:

³⁷² E. Fazy, *Les Turcs d'aujourd'hui ou le grand Karagheuz*, Paris, 1898, p. 244, 248.

³⁷³ Նույն տեղում, էջ 244:

³⁷⁴ M. L. Cabanis, *Le monde islamique.— Histoire générale du IV^e siècle à nos jours. T. XII. Le monde contemporain, 1870-1900. Ouvrage publié sous la direction de M[essieurs] Ernest Lavisse, Alfred Rambaud, Paris, 1901.*

Անդրադառնալով XIX դարում Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների քանակական հարաբերակցության կարևոր խնդրին, Կահընը չի ճշգրտում քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում հայերի թվաքանակը, այդուհանդերձ, իրավամբ շեշտում է 1840-1870 թթ. կայսրության բնակչության (ներառյալ թե՛ մահմեդականները և թե՛ քրիստոնյաները) թվում օսմանցիների փոքրամասնության հանգամանքը³⁷⁵: Նեղինակը խոսքը կենտրոնացնում է տարբեր երկրներից Օսմանյան կայսրությունում բնակություն հաստատած մահմեդական ժողովուրդների օսմանացման քաղաքականության վրա և իրավամբ ընդգծում, որ 1829 թ. Հունաստանի պատագրումից ի վեր, այն ավելի լայնածավալ ընթացք էր ստացել (քանզի օսմանցիները ծովել էին իրենց իսկ կորցրած կամ ուսւների բռնագրաված տարբեր նահանգներից տեղափոխվող Վերաբնակներին): Այնուամենայնիվ, նա չի հստակեցնում Բարձր՝ Դռան՝ Օսմանյան կայսրության տարածքում բնակվող այլազգիների հանդեպ կիրառած նոր՝ օսմանացման քաղաքականության հիմնական պատճառը, որի դեկավարներն ահաբեկված ազգային-ազատագրական շարժումների զարթոնքից և, մասնավորապես Հունաստանի կործուից, մակերեսային բարենորոգումների միջոցով հարկադրաբար դիմել էին խուսանավելու քաղաքականության՝ ժողովուրդների ծովման և միասնական՝ օսմանական ժողովորդի ստեղծման միջոցով, կայսրության տարածքային մասնատման սկիզբ առած գործընթացի կանխարգելման հեռահար նպատակով³⁷⁶:

Կահընն արձանագրում է, 1870 թ. ի վեր, դեպի Օսմանյան կայսրության տարածք մահմեդականների հոսքի աճ, որը, ինչպես նաև զանազան մահմեդական և քրիստոնյա ժողովուրդներով բնակեցված նահանգների անջատումը կայսրությունից, նպաստում է կայսրության տարածքում բնակչության կազմում օսմանցիների և այլոց հարաբերակցության խախտմանը: Այս պայմաններում, ժողովուրդների բռնի օսմանացման ասպարեզում նա ընդգծում է հատկապես Արդուշ Համիդի դեկավար դերը, բայց և միաժամանակ նշում, որ այդ հարցում նրան մեծապես խոչընդոտում էր տարբեր ժողովուրդների (ալբանացիներ, արաբներ) շրջանում անջատողական ձգտումների վերելքը: 1894-1895 թթ. հայկական զանգվածային կոտորածների հարցը նա մեկնաբանում է այս հենքի վրա, որոնք իրավամբ համա-

³⁷⁵ Նույն տեղում, էջ 479:

³⁷⁶ Այդ մասին մանրամասն տես՝ Պ. Ա. Սաֆրատյան, Доктрина османализма в политической жизни османской империи, Ереван, 1985, с. 18-47:

րում է ոչ թե «մասնավոր փաստ», այլ քաղաքական համակարգի մշակած ծրագրի բաղկացուցիչ մաս, այն է՝ պետական մակարդակով տեղի ունեցած իրադարձություն, որը հանգում էր «թե՛ կայսրության այն ժողովուրդների բնաջնջմանը, որոնց ծուլելու հետ կապված հույսերն անհավանական էին և թե՛ նրանց փոխարիննանն օսմանացման ենթակա այլ ժողովուրդներով»³⁷⁷:

Կահենը բացահայտել է ոչ միայն կայսրության տարածքում տարբեր ժողովուրդների ազատագրական շարժման վերելքի դեմ պայքարի անհրաժեշտությունից դրդված՝ օսմանյան վարչակարգի կիրառած՝ մահմեդական և քրիստոնյա տարբեր ժողովուրդների միջև (ալբանացիների և հույների, քրդերի և հայերի) երկպառակություններ սերմանելու ստոր քաղաքականության բնույթը, այլև, ի տարբերություն այլոց, բռնի օսմանացման քաղաքականության կիրառման որոշ նենգ եղանակներ, որը նրա մոտեցման առավելություններից է: Դիցուք, համիդիե զորամիավորումների ստեղծումը նա մասամբ պայմանավորում է սուլթանի՝ քրդերի և արաբների օսմանացման գործընթացը դյուրին դարձնելու մտադրությամբ: «Բացի սպասվող զինվորական ծառայություններից, – նշում է նա, – այս զորքի ստեղծումը հետապնդում էր, մասնավորապես քուրդ և արաբ դեկավարներին շնորհվող աստիճանների (զինվորական – Վ.Պ.) և հնարավոր առաջընթացի միջոցով՝ նրանց ենթակայության ներքո պահելու, ինչպես նաև կանոնավոր բանակի սպաների հետ շփումների ծանապարհով՝ նրանց օսմանացնելու նպատակ»³⁷⁸:

Կահենի մոտեցումները, ինչպես տեսնում ենք, հետաքրքիր են և ինքնատիպ, քանզի նա՝ տողերիս հեղինակին հայտնի միակ ֆրանսիացի պատմաբանն է, որն ուշադրությունը կենտրոնացրել է բռնի օսմանացման քաղաքականության վրա և ջանացել, հնարավորության սահմաններում, 1890-ական թվականների հայկական զանգվածային կոտորածների սանծազերծման գործընթացը շաղկապել դրա ծախողման հետ: Այրուհանդերձ, նշենք, որ բռնի օսմանացման առնչվող նրա մեկնաբանությունները սպառիչ չեն: Նրան չի հաջողվել ամբողջությամբ բացահայտել կայսրության տարածքում բնակվող զանազան ժողովուրդների ծուլման ասպարեզում Բարձր Ղուան որդեգրած քաղաքականության նախադրյալներն (ազգային-ազատագրական շարժումների վերելք, կայսրության տարածքային ամբողջականության պահպանման անհրաժեշտություն և

³⁷⁷ M. L. Cahum, նշվ. աշխ., էջ 480:

³⁷⁸ Նույն տեղում, էջ 482:

այլն) ու Ելեզները, օսմանիզմի գաղափարախոսության գարգացման փուլերին բնորոշ առանձնահատկությունները (հեղինակը նույնիսկ չի հիշատակել այդ գաղափարախոսությունը կերտող գործիչների անունները, շրջանցել է նաև օսմանացման գաղափարախոսության դրույթների ամրագրումն օրենսդրական փաստաթղթերում):³⁷⁹

Պատմաբաններից բացի Հայկական հարցի ծագումը և ցեղասպանությանն առնչվող խնդիրները հանգամանորեն վերլուծել են նաև մի քանի իրավաբաններ և դիվանագետներ, որոնց թվում վերլուծությունների խորությամբ և տարատեսակ հարցերի լայն ընդգրկմամբ առանձնանում է իրավաբանության դոկտոր Մաքս Շուբլինի գիրքը³⁸⁰, որն օգտագործել է Անգլիայի և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունների արխիվների վավերագրերն ամփոփող «Կապույտ» և «Դեղին» գրքերը: Հայկական հարցի ծագումը նա իրավամբ պայմանավորում է 1877-1878 թթ. ռուսաթուրքական պատերազմին հաջորդած դիվանագիտական մեքենայություններով: Թնարկելով Բեռլինի վեհաժողովին հաջորդած ժամանակաշրջանում արևմտահայերի իրավիճակը, Շուբլին հիվանդական պատճենում է, որ նրանց կացությունն աստիճանաբար դարձել է ավելի անելանելի, իսկ թուրքերն, ի վերջո, ընտրել են նրանց զանգվածաբար ոչնչացնելու միջոցով՝ այդ հարցին լուծում տալու տարբերակը՝ հիմնավորապես բացահայտելով Հայոց ցեղասպանության հիմնական պատճառը:

Այս հենքի վրա նա քննարկում է օսմանյան կառավարության քաղաքականության մանրամասները, որը «Հայաստանը հեղեղում էր հազարավոր՝ չեղքեզ և այլ վերաբնակներով, բնակչության ընդհանուր թվում հայերի քանակն, անկասկած, նվազեցնելու միտունով»³⁸¹: Մեկնարաններով վերաբնակների որդեգրած՝ իրենց գոյությունը պահպանելու երկու հիմնական՝ հայ բնակչությանը կողոպտելու և կոտորելու ուղիները, նա հանգում է տրամաբանական հե-

³⁷⁹ Այդ մասին մանրամասն տես P. A. Սաֆրատիք, Աշխ., էջ 48-63:

³⁸⁰ M. Choublier, La question d'Orient depuis le traité de Berlin. Étude d'histoire diplomatique, Paris, 1897.

³⁸¹ Նույն տեղում, էջ 390:

տևության. «Դայերի կացությունը դառնում էր նույնիսկ ավելի վատքար, քան ոռւս-թուրքական պատերազմից առաջ»³⁸²:

Շուրջիեն տրամաբանական կապ է արծանագրում քարենորդոգումները կենսագործելու խնդրում սուլթանի դրսադրած չկամության և հայերի շրջանում անկախության գաղափարի հասունացման միջև: Չնայած տերությունների միջամտություններին, «սուլթանը, – ինչպես նա նշում է, – չէր կամենում կատարել այն խոստումները, որոնք իր հպատակներին տվել էր միայն ուժի գործադրման ներքո և որոնց պահանջները, նրա կարծիքով, հավասարազոր էին խռովության»³⁸³: Այսպես, քարենորդումների իրականացման ասպարեզում օսմանյան կառավարության ցուցաբերած համարությունը, քրիստոնյա կառավարիչ ունենալուն, քաղաքացիական օրենսգրքի մշակմանը, հարկերի կարգավորմանն առնչվող՝ հայերի պահանջների անտեսումը, դրդում է նրանց արտասահմանում հիմնադրել կուսակցություններ, որոնց գլխավոր նպատակը հանգում էր «բոլոր եղանակներով, այդ թվում ապստամբության միջոցով, հարկադրել օսմանյան կառավարությանը քարենորդումների իրականացումը» և որոնք «խորհուրդ էին տալիս իրենց եղբայրներին գործել հանուն հայրենիքի ազատագրման և ուժի միջոցով դիմակայել կեղծքիչներին»³⁸⁴: Դավանաբար, իրադարձությունների հետագա զարգացման ընթացքն ու ավարտը հաշվի առնելով, կուսակցությունների խորհուրդներին հետևելու իրողությունը Շուրջիեն անիրավացիորեն համարում է հայերի համար «դժբախտություն»:

Ինչ վերաբերում է համիլյան վարչակարգի քաղաքականությանը, ապա Շուրջիեն չի շրջանցում Աբդուլ Ջամիլի ստոր գործելամիջոցները, համիլյին հեծելազորային գնդերի կազմավորումը մեկնաբանում է թե՛ հայերի շրջանում ըմբոստություններ իրակրելու և թե՛ դրանք ճնշելու միջոցներն ապահովելու նրա մտադրությամբ³⁸⁵: Դայերին գոհասեղանին դնելուց առաջ՝ նրանց իբրև

³⁸² Նույն տեղում, էջ 386:

³⁸³ Նույն տեղում, էջ 391:

³⁸⁴ Նույն տեղում, էջ 397:

³⁸⁵ Ջամիլիի գորամիավորումների իրականացրած առաջին զանգվածային կոտորածն ըստ Ա. Պելերյանի՝ տեղի է ունեցել 1894 թ. օգոստոսին Սասունում: Տե՛ս Ա. Պելերյան, Ջամիլիի գորախումբերու կազմակերպության ծագումը (1890-1894). – «Դայկազեն հայագիտական հանդես», հ. մԴ., Պեյրութ, 1994, էջ 92: Ջամիլիների կազմավորման մասին տե՛ս նաև Վ. Ա. Բայրության, Դայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին, Երևան, 1989, էջ 205-212; M. Russo, La formation des régiments de cavalerie kurde

ապստամբներ ներկայացնելու հանգամանքը, հեղինակը համարում է Բարձր Դռան հետապնդած հիմնական նպատակներից:

Բուն ցեղասպանությունը Շուրլիեն դիտում է իբրև պետական քաղաքականության մակարդակով իրականացվող եղելություն. «Դուքը վճռել է նրանց (հայերին – Վ. Պ.) բնաջնջել երկարի, կրակի և սովի միջոցով», – նշում է նա³⁸⁶: Դեղինակը բացահայտում է օսմանյան կենտրոնական իշխանությունների հանցագությունը տեղի ունեցած զանգվածային բռնություններին, որոնց ծավալման համար նշանաբան են ծառայել տերությունների պահանջած՝ բարենորդումների կենսագործմանն առնչվող լուրերը: 1895 թ. աշնանը Կոստանդնուպոլսում կազմակերպված կոտորածների առիթով նա ընդգծում է պետական մարմինների անգործունեությունը, որոնք դրանք կանխելու համար ոչինչ չեն ծեռնարկել:

Մանրամասն վերլուծելով Եվրոպական պետությունների քաղաքականությունը Դայկական հարցում, Շուրլիեն շեշտում է, հատկապես, նրանց մեղսակցությունը 1896 թ. կոտորածներին: Ըստ նրա՝ հայերին օգնություն ցուցաբերելու գործում մեծ տերություններին առավելապես խոչընդոտել է «փոխադարձ անվստահությունը, որը կազմալուծել է նրանց գործողությունները»³⁸⁷: Օսմանյան կայսրության մասնատման խնդրի առիթով Շուրլիեն հավաստում է, որ դրա տարածքային ամբողջականության պահպանումը տերությունները վերածել են Վարդապետության և «հրաժարվել ռազմարշավից, որը կարող էր հանգեցնել կայսրության ամբողջ տարածքում բնակվող քրիստոնյանների համընդհանուր կոտորածի»³⁸⁸: Այս հարցում, սակայն, ցուցաբերելով ընդգրկուն մոտեցում, նա մեծ տերությունների քաղաքականությունը պայմանավորում է գլխավորապես նրանց ռազմավարական շահերով, կայսրության տարածքի մասնատման արդյունքում՝ նրանցից որևէ մեկի՝ Մերձավոր Արևելքում դիրքերի ամրապնդման անցանկալի հեռանկարից խուսափելու անհրաժեշտությամբ: «Եթե ամբողջ Փոքր Ասիան արյունաներկ եղավ, – գրում է նա, – նրանց համար հիրավի անհնար դարձավ գործել Դայաստանում՝ առանց հարցականի տակ դնելու Օսմանյան կայս-

Hamidié, d'après les documents diplomatiques italiens // Revue d'histoire arménienne contemporaine, t. 1, Paris, 1995, p. 33-43.

³⁸⁶ M. Chouhlier, Աշվ. աշխ., էջ 400:

³⁸⁷ Նույն տեղում, էջ 406:

³⁸⁸ Նույն տեղում, էջ 419-420:

րության գոյությունը և վտանգելու համընդիանուր առակատնան քռնկումից խուսափելու հնարավորությունը»³⁸⁹:

Դայոց ցեղասպանության պատմության առնչվող որոշ հարցեր, սակայն, շատ ավելի սահմանափակ ընդգրկումով, քան Շուբլիեն, քննարկել է նաև իրավաբան Ալբերիկ Կահյուեն (1877-1942)՝ Արևելյան հարցի պատմությանը նվիրված ուսումնասիրության մեջ³⁹⁰: Դեղինակը, ի տարբերություն, հունական և բուլղարական հարցերի, չի ընդունում Դայկական հարցի գոյությունը և ըստ այդմ՝ Դայոց ցեղասպանությունը չի դիտում իբրև մի իրադարձություն, որը պատճառակցական կապի մեջ է եղել Բարձր Դռանը մեծ անհանգստություններ պատճառած այս հարցի լուծման անհրաժեշտության հետ: Չըմքոնելով Դայկական հարցի ինաստը (հեղինակը չի հիշատակում նույնիսկ Սան-Ստեֆանոյի պայմանագրում ամրագրված՝ արևմտահայությանը վերաբերող 16-րդ հոդվածի մասին)՝ Կահյուեն դրա ժխտումը հիմնավորում է արտառող մի կովանով, այն է՝ հայ ժողովուրդն, իբր, Բեռլինի պայմանագրի կնքման ժամանակաշրջանում դեռևս չի ունեցել ազգային ինքնագիտակցություն, որը բնորոշ էր միայն Եվրոպայում ապաստանած մի քանի վտարանդիների³⁹¹:

Անկախության գաղափարների արմատացումն ու տարածումը, այդուհանդերձ, նա պայմանավորում է թե՛ հայ ժողովոդի հարստահարման սաստկացմամբ (անասելի ծանր հարկեր, գողերին և հարստահարիչներին պատժելու հարցում՝ պետական մարմինների անկարողություն, «մահմեդական հորդաների»՝ հատկապես, Ռուսաստանը լրած և Արևմտյան Դայաստանում հաստատված չերքեցների կողմից հայ բնակչության իրավունքների ոտնահարում և այլն) և թե՛ Բեռլինի վեհաժողովից հետո Եվրոպական տերությունների՝ արևմտահայության «զագրելի լուծը» մեղմացնելու հարցում դրսկորած անզորությամբ³⁹²:

Նշելով արտասահմանում հայկական հեղափոխական շարժման վերելքի, մասնավորապես ինչակյան կուսակցության հիմնադրման մասին, Կահյուեն, այնուամենայնիվ, հայ ժողովոդի ազգային-ազ-

³⁸⁹ Նույն տեղում, էջ 419:

³⁹⁰ A. Cahuet, *La question d'Orient dans l'histoire contemporaine (1821-1905)*, Paris, 1905.

³⁹¹ Նույն տեղում, էջ 462:

³⁹² Նույն տեղում, էջ 463:

տագրական շարժումը, հանիրավի, բնութագրում է իրեն «անջատողական»³⁹³:

Այդուհանդերձ, նրա մոտեցման նշանակալից առավելությունը հայերի նկատմամբ սուլթանի գրաված դիրքորոշման բացահայտումն է: Կահյուեն խարազանում է 1890-ական թվականներին ստեղծված իրադրության պայմաններում օսմանյան կառավարության՝ հայերի հանդեպ կիրառած քաղաքականությունը, որն «անհրաժեշտ բարենորոգումներ իրականացնելու փոխարեն, դիմել է ծայրահեղ կատաղի միջոցների» և աստիճանաբար թափ առնող հայկական շարժումից ահարեկված՝ յուրաքանչյուր հայի դիտել իրեն Օսմանյան կայսրության թշնամու³⁹⁴: Այդ հենքի վրա է նա մեկնաբանում տիսրահոչակ համիդին գորամիավորումների կազմավորումը:

Վկայակոչելով «Կապույտ» և «Ղեղին» գրքերում իրապարակված դիվանագիտական փաստաթղթերը, Կահյուեն 1890-ական թթ. հայկական զանգվածային կոտորածները դիտում է, փաստորեն, իրեն պետական քաղաքականության մակարդակով իրականացվող իրադարձություն: Բազմիցս անդրադառնալով 1894-1896 թթ. զանազան վայրերում (Սասուն, Տրապիզոն, Երզրում, Սեբաստիա, Դիարբեքիր, Մալաթիա և այլն) տեղի ունեցած կոտորածներին, նա պարբերաբար ընդգծում է դրանց կանխամտածված բնույթը³⁹⁵, շեշտում, նույնիսկ կայսրական ապարանքի հարևանությամբ տեղի ունեցող հայկական ջարդերը կասեցնելու հարցում օսմանյան իշխանությունների և բանակի չկամությունը, ջարդարարներին զինելու ուղղությամբ ոստիկանության սպաների և զինվորների գործադրած ջանքերը³⁹⁶: Դիցուք, 1895 թ. Բարք Ալիի ցուցին հաջորդած կոտորածների առիթով, նա նշում է. «Այս վայրագություններն, ի դեպ, քաջալերել են իշխանությունները, որոնք չեն ցանկացել դրանք կանխել»³⁹⁷:

Կահյուեի շարադրանքում նշանակալի տեղ է հատկացված մեծ տերությունների քաղաքականության վերլուծությանը: Տարբեր կտրվածքներով նա անդրադառնում է Օսմանյան կայսրության ներքին գործերին մեծ տերությունների միջամտության խնդրին և հան-

³⁹³ Նույն տեղում:

³⁹⁴ Նույն տեղում, էջ 464:

³⁹⁵ Նույն տեղում, էջ 466-469:

³⁹⁶ Նույն տեղում, էջ 472:

³⁹⁷ Նույն տեղում, էջ 467:

գում միանգամայն իրատեսական հետևության, այն է՝ Եվրոպական պետությունները բացառում են զինված միջամտության գաղափարը: Մեծ տերությունների որդեգրած նման դիրքորոշման պատճառների լուսաբանման հարցում, սակայն, նրա մեկնաբանությունները թերի են, քանզի նա սահմանափակվում է ուշադրությունը գերազանցապես Անգլիայի և Ռուսաստանի շահերի անհամատեղելիության վրա բևեռելով: Այս հարցում հեղինակին հաջողվել է բացահայտել Արևմտյան Դայաստանի նկատմամբ թե՛ անգլիական և թե՛ ռուսական կառավարող շրջանակների ակնկալությունները: Անգլիայի քաղաքանությունը, որը մեծ շահագրգուվածություն էր հանդես բերում բարենորդումների միջոցով արևմտահայության իրավիճակը բարելավելու հարցում, որպեսզի Դայաստանը մնար օսմանյան վարչակարգի տիրապետության տակ՝ նա իրավամբ պայմանավորում է բրիտանական կառավարության՝ Մերձավոր Արևելքում Ռուսաստանի առաջխաղացմանը դիմակայելու մտադրությամբ³⁹⁸: Ինչ վերաբերում է ինքնակալության քաղաքականությանը, ապա Կահյութն այն հիմնավորում է «ցանկալի» տարածաշրջանն իր ազդեցության ոլորտում պահելու Ռուսաստանի շահագրգուվածությամբ՝ այնտեղ իր տիրապետությունը հաստատելու հեռահար ակնկալությամբ³⁹⁹:

Հեղինակը, սակայն, շրջանցում է Ֆրանսիայի քաղաքականության վերլուծությունը, որը համահունչ էր նրա դաշնակից Ռուսաստանի դիրքորոշմանը և հանգում էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանը: Ըստ այդմ՝ կայսրության ներքին գործերին զինված միջամտությունն անհարիր էր Ֆրանսիայի ռազմավարական շահերին: Ի դեպ, հեղինակի պնդումը, ըստ որի՝ Եվրոպական հասարակական կարծիքը «համառորեն» արտահայտվում էր հօգուտ զինված միջամտության⁴⁰⁰, ամենին չի համապատասխանում իրականությանը, առավել ևս, որ այդ հավաստումը նա չի հիմնավորում որևէ փաստով: Այս առիթով իմաստ ունի նշել, որ նույնիսկ հայ ժողովորի՝ ֆրանսիացի ծերմեռանդ պաշտպանները (սակավաթիվ բացառություններով), որոնց գործունեությանը կանդրադառնանք ստորև, երբեք չեն սատարել զինված միջամտության և դրանից անխուսափելիորեն բխող՝ Օսմանյան կայսրության մասնատման գաղափարը:

³⁹⁸ Նույն տեղում, էջ 465:

³⁹⁹ Նույն տեղում, էջ 464-465:

⁴⁰⁰ Նույն տեղում, էջ 464:

Նկատենք նաև, որ տերությունների կրավորական քաղաքականության ետնախորքի վրա, Կայութեն հմտորեն բացահայտում է հայկական նահանգներում բարենորոգումների իրականացման առնչվող՝ Բարձր Դռանը մեծ տերությունների հղած բողոքներն անտեսելու հարցում օսմանյան գահակալի դիրքորոշման հիմնական պատճառը. «Սուլթանը գիտեր, – նշում է նա, – որ իր կառավարության դեմ հարկադրական միջոցներ կիրառելու հարցում տերությունների միջև համաձայնություն գոյություն չունի»⁴⁰¹: Բացի դրանից, նրա ուշադրությունից չի վրիպել նաև Աբդուլ Համիդին խիստ բնորոշ խուսանավելու հակումը, որն անհրաժեշտության դեպքում, առկա իրավճակը լիցքաբափելու մտադրությամբ՝ տերությունների դեսպաններին անվարան սին խոստումներ էր շռայլում, կապված քրիստոնյաների կացության բարելավման, բարենորոգումների իրականացման հետ:

Ինչպես տեսնում ենք, թեպետ Կայութեն ամբողջությամբ չի ընկալել Հայկական հարցի իմաստը, նույնիսկ ժխտել է դրա գոյությունը, իսկ երբեմն սահմանափակվել ոչ սպառիչ մեկնաբանություններով, իր շարադրանքում, այդուհանդերձ, ընդհանուր առմամբ, հավաստի տեղեկություններ է հաղորդում Օսմանյան կայսրությունում սկիզբ առած Հայոց ցեղասպանության գործընթացի և դրան հարակից որոշ էական հիմնահարցերի մասին:

1890-ական թվականների հայկական կոտորածներին բռուցիկ անդրադարձ է կատարել նաև միջազգային իրավունքի մասնագետ և դիվանագետ է. Ենգելիհարդը՝ Հայկական հարցին նվիրված վերլուծական հոդվածում: Խորանուխ չլինելով իրադարձությունների նկարագրության մեջ, նա փոխարենը բացահայտել է Հայոց ցեղասպանության պատմությանն առնչվող մի շարք էական հանգամանքներ, ինչն ավելի կարևոր է:

Ենգելիհարդը Հայկական հարցի ծագումն իրավացիորեն պայմանավորում է 1870-ական թվականներին տեղի ունեցած դիվանագիտական մեքենայություններով, իսկ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի վերանայման գլխավոր մեղավոր համարում՝ Ուսուսաստանի առաջխաղացման հեռանկարից ահարեկված Մեծ Բրիտանիային⁴⁰²: Նրա հիմնական արժանիքներից է արևմտահայության անելանելի կացության հիմնավոր մեկնաբանումը Բեռլինի վեհաժո-

⁴⁰¹ Նույն տեղում, էջ 461:

⁴⁰² E. Engelhard, La question arménienne // « Revue générale de Droit International Public », 1895, t. II, p. 298-299.

դովիճ հաջորդած ժամանակաշրջանում, Եվրոպական դիվանագիտության բողոքությամբ նրա նկատմամբ օսմանյան վարչակարգի կիրառած սոցիալական և տնտեսական հարստահարումների, ազգային խտրականության փաստումը, ինչը միանգամայն համահունչ է նրա կողմից ներկայացված՝ Օսմանյան կայսրությունում տիրող անիշխանության և օրինականության բացակայության ընդհանուր համայնապատկերին⁴⁰³.

Այս պայմաններում օրինաչափ է, որ 1894 թ. Սասունի ըմբուտությունը, հեղինակը պատճառաբանում է սոսկ հարկերի գանձնան հարցում օսմանյան պաշտոնյաների չարաշահումներով, ցավով արծանագրելով, որ տեղեկատվության բացակայության պատճառով «հայկական վայրագություններին» վերաբերող իրական ծշմարտությունը Եվրոպացիներին մնում է դեռևս անհայտ, թեպետ միաժամանակ կասկած իսկ չի տածում, որ դրանց համեմատությամբ «քուլդարական Վայրագությունները» կարող են լինել սոսկ աննշանակալից սպանությունները⁴⁰⁴: Նման անկողմնակալ հավաստումներով հեղինակը, փաստորեն, հերքում է թե՛ իր ժամանակակից և թե՛ հետագա տասնամյակների պատմության կեղծարարների որոշ հիմնական դրույթներ:

Ի դեպ, ավելորդ չեն նշելը, որ հայկական ապստամբության սին վարկածը հերքելուց զատ, իրավաբան էնգելիարդը խոսքը կենտրոնացնում է նաև մեկ այլ խիստ էական հանգամանքի վրա, ընդգծում, որ հայերը հավակնում էին սոսկ «սահմանադրական ազատությունների»⁴⁰⁵, ակնարկելով, հավանաբար, 1876 թ. Աբդուլ Ջամիլի թեականորեն հռչակած սահմանադրությունը և դրանով իսկ անուղղակիորեն շեշտում հայերի՝ կարծեցյալ անջատողական ձգտումների անհավանականությունը:

Սանրամասնենք էնգելիարդի մոտեցման՝ հիշատակության արժանի ևս մեկ առանձնահատկություն. իր հնարավորությունների սահմաններում նա ջանում է առաջադրել հայ ժողովորդին ճգնաժամային իրավիճակից փրկելու՝ իր համոզմամբ միակ հնարավոր տարբերակը, և ըստ այդմ՝ թափանցում Օսմանյան կայսրության ժողովուրդների ճակատագրին առնչվող հարցերի խրթին քառուղիների մեջ: Լինելով Օսմանյան կայսրության վարչական ապակենտրոնացման կողմնակից, նա հանդես է գալիս միջազգային հանձնա-

⁴⁰³ Նույն տեղում, էջ 299, 305:

⁴⁰⁴ Նույն տեղում, էջ 300:

⁴⁰⁵ Նույն տեղում, էջ 305:

խմբի ջանքերով հայկական նահանգներին ինքնավարություն հատկացնելու առաջարկությամբ՝ Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման պայմաններում⁴⁰⁶: Նշենք, որ կայսրության տարածքում ընդգրկված տարբեր նահանգներին վարչական ինքնավարություն տրամադրելու հարցը քննարկվել է դեռևս 1876 թ. օսմանյան սահմանադրության ծրագրի մշակման ընթացքում, սակայն, որևէ դրական արդյունքի չի հանգեցրել: Միդհատ փաշայի դրվատանքի արժանի առաջարկությունն այս առնչությամբ մերժվել է տարբեր քաղաքական կողմնորոշումներ ունեցող թուրք պետական գործիչների կողմից⁴⁰⁷: Ենգելիարդը, հավանաբար, դրան անտեղյակ չի եղել, հանգանանք, որը և նրան դրդել է կայսրության կազմում ընդգրկված ժողովուրդների համար կենսական այս խնդրին՝ միջագային հանրության միջամտությամբ լուծում տալու առաջարկությամբ համես գալու:

Ի վերջո, շրջանցելով արևմտահայության նկատմամբ սկիզբ առած ցեղասպան գործնքացի մանրամասների թվարկումը, որոնք հեղինակին դեռևս հայտնի չեն եղել, Ենգելիարդը, հնչպես տեսանք, փոխարենը, Դայկական հարցը քննարկում է շատ ավելի կարևոր տեսանկյուններից, փորձում հիմնավորել տարբեր ժողովուրդների, այդ թվում հայերի համար կայսրությունում տիրող խառնաշփոթ իրավիճակի բարելավման անհրաժեշտությունը՝ սկզբունքային վարչական փոփոխությունների կիրառման միջոցով: Նշենք, որ իր ժամանակակիցների թվում նա մեզ հայտնի միակ հեղինակն է, որն ուշադրությունը կենտրոնացրել է այս խիստ էական խնդրի վրա՝ հայերի իրավիճակի բարելավման հարցի քննարկումը տեղափոխելով Օսմանյան կայսրության վարչական ապակենտրոնացման հարթություն: Դա Ենգելիարդի մոտեցման ամենադրվատելի կողմերից է, ինչը և պայմանավորում է նրա հոդվածի կարևորությունը:

Բոլորովին այլ դիրքերից է Դայկական հարցին առնչվող մի շարք խնդիրներ մանրամասն քննարկել դիվանագետ կոմս Ժան-Բատիստ Շողորդին (1826-1899) «Ֆրանսիան և Արևելյան հարցը» փոքրածավալ, սակայն ինքնատիպ հարցադրումներով հագեցված գրքույկում: Դեղինակը՝ հանրապետականների նշանավոր առաջնորդ Լեոն Գամբետայի վարչապետության կարճատև ժամանակաշրջանում (1881 թ. նոյեմբեր – 1882 թ. հունվար) վարել է Սանկտ-

⁴⁰⁶ Նույն տեղում, էջ 306:

⁴⁰⁷ Սանրամասն տես Ի. Ե. Փածեևա, Միջդատ-պաշա. Жизнь и деятельность. Մ., 1977, с. 83-84:

Պետերուրգում Ֆրանսիայի դեսպանի պաշտոնը, սակայն իշխանափոխությունից հետո հրաժարական տվել՝⁴⁰⁸ իբրև դիվանագետ, նա Դայկական հարցը վերլուծում է գլխավորապես Ֆրանսիայի արևելյան քաղաքականության ետնախորքի վրա: Թե՛ Ֆրանս-ռուսական հարաբերություններին առնչվող՝ Ռուսաստանում Երրորդ հանրապետության նախկին դեսպանի վերլուծություններն ունեն իր պետության որդեգրած սկզբունքների նկատմամբ խիստ քննադատական միտում: Այս առումով, Շոդորդիի մոտեցումը մեծապես զանազանվում է նրա ժամանակակից Ֆրանսիացի պատմաբանների և գործիչների՝ պետական քաղաքականությանը հիմնականում հավանության արժանացնելու, առավել ևս այն հիմնավորելու դիրքորոշումից:

1890-ական թվականներին Դայկական հարցում Ֆրանսիայի՝ հայ ժողովորդի շահերին չհամապատասխանող քաղաքականության մեկնաբանությունն ածանցվում է Շոդորդիի՝ ռուս-ֆրանսիական հարաբերությունների հայեցակարգին: Դայկական հարցին առնչվող խնդիրները նա քննարկում է 1891-1893 թթ. ռուս-ֆրանսիական դաշինքի հետևանքով ծևավորված միջպետական հարաբերությունների հենքի վրա: Դատկանշական է, որ Շոդորդին, ի տարբերություն իր ժամանակակիցների հանդես է գալիս իբրև ռուս-ֆրանսիական դաշինքի շրջանակում՝ Ռուսաստանի նկատմամբ Ֆրանսիայի գրաված ստորադասի կարգավիճակի դատավիետող, որի հետևանքով վերջինս, ինչպես նա համոզիչ ձևով հիմնավորում է, վերածվել էր, փաստորեն, ինքնակալության կամակատարի:

Ուստի Արևելյան հարցի քննարկման խնդրում ևս, հեղինակը Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունն ամբողջությամբ պայմանավորում է նրա դաշնակից Ռուսաստանի քաղաքականությամբ և ըստ այդմ՝ անհրաժեշտ համարում համառոտակի մեկնաբաննել ինքնակալությամ՝ Օսմանյան կայսրության հանդեպ գրաված դիրքորոշումը: Շոդորդին անողոք քննադատության է ենթարկում Ֆրանսիայի դաշնակցի՝ սուլթանի հանդեպ որդեգրած ընդգծված հովանավորական քաղաքականությունը, որը հանգում էր Օսմանյան կայսրության գործերին չմիջանտելուն և լայն հնարավորություններ էր ընծեռում Աբդուլ Դամիդին կոտորելու քրիստոնյաներին՝⁴⁰⁹ Ռուսաստանի ստանձնած անտարբեր դիտորդի կարգավիճակը կոմս

⁴⁰⁸ Chaudordy c^{ie} de, *La France et la question d'Orient*, Paris, 1897, p. 6.

⁴⁰⁹ Նույն տեղում, էջ 2-3:

Շողորդին մեկնաբանում է Օսմանյան կայսրությունում գործող «վատթար վարչության» միջոցով այն քայլայելու ինքնակալության ցանկությամբ, ինչը նրան հնարավորություն կտար, բարենպաստ առիթի ընծեռնան պարագայում, այն վերածել «կախյալ պետության»: Այս ասպարեզում Ռուսաստանի քաղաքականության բացահայտման կապակցությամբ նա առաջադրում է ընդունելի մեկնաբանություններ, որոնք, ընդհանուր առնամբ, համահունչ են, ինչպես կտեսնենք ստորև, նրա ժամանակակիցներից ժան Ժորեսի բացատրություններին:

Ինչ Վերաբերում է կայսրության տարածքում բնակվող քրիստոնյա ժողովուրդների հանդեպ Ռուսաստանի գրաված դիրքորոշմանը, ապա այս հարցում ևս Շողորդին ցուցաբերում է քննադատական մոտեցում և մատնանշում, որ ի տարբերություն հայերի ու հույների՝ ինքնակալությունը հովանավորում էր միայն սլավոնական ժողովուրդներին⁴¹⁰:

Ֆրանսիայի թօքամետ քաղաքականությունը Դայկական հարցում կոմս Շողորդին միանգամայն իրավամբ ոդիտում է իրեն Ռուսաստանին սիրաշահելու դրսնորում և այն ենթարկում անողոք քննադատության: Նա երրորդ հանրապետության՝ վարչապետ Ժյուլ Մելինի կառավարության 1896 թ. ապրիլից իշխանության դեկի մոտ գտնվող կոպիտ սխալներից է համարում հայկական կոտորածների շուրջ կատարյալ լուսաբանումը: Դայկական կոտորածներին առնչվող հարցում ֆրանսիական մամուլի պահպանած լուսաբանումը Շողորդին մեկնաբանում է ոչ այնքան սուլթանի գործադրած ջանքերով (ինչպես իր ժամանակակիցները), որն, իրոք, կաշառել էր արևմտյան, մասնավորապես ֆրանսիացի լրագրողներին, որքան ֆրանսիական կառավարության քաղաքականությամբ, որը խոչընդոտել է արձագանքել իրադարձությանը և «հանրությանը տեղեկացնել սարսափներին»: Իսկ ինչ Վերաբերում է «Դեղին գրքի» հրատարակությանը, հեղինակը շրջանցելով դրա լուս ընծայման հանգամանքները (հատկապես ֆրանսիացի պատգամավորների մեծ լուման այս հարցում), ինչը նրա ակնհայտ բացքողումներից է, սահմանափակվում է միայն հավաստելով փաստաթղթերի այս ժողովածուի տպագրության փաստը մեծ ուշացումով՝ 1894-1896 թթ. «առանց ընդմիջումների շարունակված կոտորածների սկզբից ավելի քան երկու տարի անց»⁴¹¹:

⁴¹⁰ Նույն տեղում, էջ 3:

⁴¹¹ Նույն տեղում, էջ 7-8:

Շողորդին դրվատում է «այլախոհ» դեսպան Կամբոնի ջանքերը, որն իր ծեպագրերում պարբերաբար լուսաբանել է Հայոց ցեղասպանության գործընթացը, ինչը միանգամայն օրինաչափ է, եթե նկատի ունենանք հեղինակի խիստ քննադատական դիրքորոշումը պետական քաղաքականության հանդեպ, դեսպանի վկայությունները բնորոշում է իրեւ հստակ և ճգրիտ: Նա առանձնահատուկ ու շաղործություն է բևեռում Կամբոնի և Հանոտոյի՝ հայկական կոտորածների առնչությամբ որդեգրած դիրքորոշումների միջև առկա որոշ զանազանությունների վրա, մասնավորապես ընդգծելով, որ դեսպանն Օսմանյան կայսրության նկատմամբ հարկադրական միջոցներ կիրառելու կողմնակիցն է, (թեև չի մեկնաբանում, որ Վերջինն ևս, ինչպես և նախարարը, չէր սատարում հարցի լուծման՝ զինված միջամտության հնարավոր տարբերակը)⁴¹²:

Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու հարցում արդեն հեղինակը դատափետում է Երրորդ հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացնող Հանոտոյին, որն «ընդդիմանում էր հարկադրական միջոցների կիրառմանը», խոսում սուլքանի անձնական իշխանությանը հարգալից Վերաբերվելու, հայտարարում Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպաննան անհրաժեշտության և յուրաքանչյուր condottiero-ի ու տերությունների տարանջատ գործողությունները մերժելու մասին⁴¹³:

Դիանալիորեն կողմնորոշվելով Արդուլ Համիդի խորամանկ քաղաքականության ծալքերում, դիվանագետ Շողորդին օսմանյան գահակալի հետ բարենորոգումների անցկացման շուրջ բանակցություններ վարելը համարում է սոսկ ժամավաճառություն, քանզի համոզված է, որ «նա դրանք չի իրականացնի»⁴¹⁴: Ըստ այդմ՝ Շողորդին իրավամբ հավաստում է, որ Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը ճանապարհ է հարթում հայկական կոտորածների ծավալման համար: Տոգորված առկա իրավիճակը շտկելու ցանկությամբ՝ նա հակադրվելով պետական քաղաքականությանը, հանդես է գալիս իրեւ սուլթանի նկատմամբ հարկադրական միջոցների կիրառման կողմնակից: Սակայն, նա ցավով փաստում է հայ ժողովրդի փրկությանը միտված նման քաղաքականության հանդեպ Փրանսիական կառավարության ժխտողական վերաբերմունքը և

⁴¹² Նույն տեղում, էջ 8:

⁴¹³ Նույն տեղում, էջ 9:

⁴¹⁴ Նույն տեղում:

այն մեկնաբանում ռուսական ինքնակալության միևնույն՝ չմիջամտելու քաղաքականությանը սատարելու՝ Երրորդ հանրապետության դեկավարների ցանկությամբ⁴¹⁵:

Խիստ քննադատելով՝ ֆրանսիական կառավարության նման դիրքորոշումը, Շոդորդին առաջարկում է հարցի լուծման իր տարրերակը, որը հանգում է Ֆրանսիայի և Ռուսաստանի համատեղ ջանքերի գործադրմամբ Օսմանյան կայսրության նկատմամբ այնպիսի քաղաքականության մշակմանը, որը համատեղելի լինի Ֆրանսիայի ավանդական քաղաքականության սկզբունքներին, այն է՝ քրիստոնյաների շահերի պաշտպանությանը և նպաստի բարենորդումների իրականացնանն Օսմանյան կայսրությունում⁴¹⁶: Այս հարցում, սակայն, Շոդորդիի մոտեցումը հեռու է իրատեսական լինելուց, ինչը կարելի է բացատրել Ֆրանսիայի արտաքին քաղաքականության ակունքների բացահայտման նրա խիստ սահմանափակ մոտեցմամբ: Ըստ նրա ոչ համոզիչ մեկնաբանությունների՝ Ֆրանսիայի ավանդական քաղաքականությունը միշտ միտված է եղել քրիստոնյաների, ինչպես նաև թույերի և ճնշվածների շահերի պաշտպանությանը⁴¹⁷: Ելնելով այս անիրատեսական հայեցակարգից, նա ամբողջությամբ անտեսում է Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման առնչությամբ պետական քաղաքականության գերակա ուղղությունը կյանքի կոչած Ֆրանսիայի ռազմավարական, մասնավորապես ֆինանսական շահերը և դրանք աժանցում բացառապես Դանուտոյի՝ սուլթանի և մահմեդականների հանդեպ հիրավի դրսնորած խիստ բարյացակամ վերաբերմունքին⁴¹⁸:

Այս պայմաններում, հարկ է քննարկել Շոդորդիի՝ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման խնդրին տված մեկնաբանությունները, որին անքակտելիորեն շաղկապվում է Դայկական հարցը: Այս հարցում ևս հեղինակի դիրքորոշումն ամենակին համահունչ չէ նրա ժամանակակիցների մոտեցմանը, քանզի նա այն մեկնաբանում է պետական քաղաքականությանը տրամագծորեն հակասող դիրքերից և սոսկ իր մեջ զարմանքը հայտնում այն համառության կապակցությամբ, որով Ֆրանսիա-

⁴¹⁵ Նույն տեղում, էջ 10:

⁴¹⁶ Նույն տեղում, էջ 11:

⁴¹⁷ Նույն տեղում, էջ 4:

⁴¹⁸ Նույն տեղում, էջ 28-29:

կան կառավարությունը հետանուտ էր կայսրության տարածքային ամբողջականության պահպաննան քաղաքականությանը: Նշենք, որ այս պարագայում հեղինակը խոսքը կենտրոնացնում է հատկապես Կրետեի աղնկահարույց հարցի վրա և խստագույնս դատապարտում ֆրանսիական կառավարությանը Կրետեի՝ Դունաստանին միացմանն ընդդիմանալու համար, ինչն արվում էր հանուն Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման վարդապետության: Իր ժխտական վերաբերմունքն այս քաղաքականության հանդեպ իմանավորելու համար նա վկայակոչում է ավելի քան քսանիինգ տարում այդ սկզբունքի խախտման փաստը⁴¹⁹, իսկ Դանուտոյի որդեգրած դիրքորոշումն այս հարցում անվանում «անորոշ»⁴²⁰:

Ակնհայտ է, որ կոմս Շոդորդիի՝ Արևելյան, այդ թվում Դայկական հարցին լուծում տալու առաջադրած տեսակետները ոչ միայն չեն համապատասխանում պետական քաղաքականության ուղղությանը, այլև միանգանայն անհարիր են այն սատարող՝ իր ֆրանսիացի ժամանակակիցների ճնող մեծամասնության տեսակետին: Շոդորդիի՝ պետական քաղաքականության հանդեպ դրսնորած ննան քննադատական վերաբերմունքը կարելի է, հավանաբար, բացառել նրա արմատական հանրապետական հայացքներով, հակառակ պարագայում՝ Գամբետայի վարչապետության օրոք նա չէր նշանակվի Ուսասատանում Ֆրանսիայի դեսպան: Ուստի՝ բացահայտ հետադիմական քաղաքականություն իրականացնող Մելինի գլխավորած կառավարությանը⁴²¹, ընդդիմության մեջ գտնվող Շոդորդիի՝ նշավակելու իրողությունն օրինաչափ է: Ամեն դեպքում, իր հնարավորությունների սահմաններում, կոմս Շոդորդին արել է հնարավոր ամեն ինչ, հանուն հայ Ժողովրդի շահերի պաշտպանության՝ նրա պատմության ճակատագրական ժամանակաշրջանում:

Դայոց ցեղասպանության պատմությանն առնչվող տարբեր հիմնահարցեր ֆրանսիացի որոշ հեղինակներ հպանցիկ քննարկել են

⁴¹⁹ Նույն տեղում, էջ 26:

⁴²⁰ Նույն տեղում, էջ 25:

⁴²¹ Այդ մասին տե՛ս **Ա. Յ. Մանֆրեդ**, Третья республика (1871-1899 годы).—История Франции в трех томах, М., 1973, т. 2, с. 507-508; **В. И. Антиохина-Московченко**, նշվ. աշխ., էջ 221:

նաև Արդուլ Ջամիջին նվիրված կենսագրականներում: Անտարակույս, հարցերի ընդգրկման և գիտական վերլուծության խորության առումներով այս բնույթի աշխատությունների հեղինակները մեծապես զիջում են նախորդներին, սակայն, նրանց գրչին պատկանող ուսումնասիրությունները ևս գուրկ չեն հետաքրքրությունից:

Դայոց ցեղասպանությունը, իրավի, բարդ գործընթաց է, որն ունեցել է զանազան դրապատճառներ, որոնցից մեկն իրավամբ նկատել է Պոլ դը Ռեզլան: Ջամիջյան կոտորածների մեկնաբաննան հարցում ծեռնպահ մնալով համակողմանի մոտեցում ցուցաբերելուց, նա, սակայն, ի տարբերություն այլոց, ուշադրությունը կենտրոնացնում է մեկ այլ եական հանգամանքի վրա և դրանք պատճառաբանում սուլթանի՝ Օսմանյան կայսրությունում հայերի ծավալած ֆինանսական, արդյունաբերական և առևտրական գործունեությունը կասեցնելու մտադրությամբ: Դրանով է նա մեկնաբանում Արդուլ Ջամիջի հրահրած սարսափազդու կոտորածը, որը «երրևէ հայտնի է Եղել» և որի արդյունքում Օսմանյան կայսրությունը գրկել է՝ հատկացված աննշան ազատությունների վրա խարսխված, հայ ժողովորդի աջակցությունից⁴²²: Ակնհայտ է, որ Դայոց ցեղասպանության պատճառների վերլուծության հարցում նրա մոտեցումը խիստ սահմանափակ է, այդուհանդերձ, նրա արժանիքը դրանցից միայն մեկի բացահայտումն է, որն անտեսելը միանգամայն անհարկի է:

Ցեղասպանությանն առնչվող որոշ հարցեր թռուցիկ արտացոլվել են նաև Արդուլ Ջամիջին նվիրված՝ Ժորժ Դորիսի գրչին պատկանող կենսագրական ուսումնասիրության մեջ, որտեղ անկողմնակալորեն վերհանված են սուլթանի քաղաքականության զանազան ժալքերը և ուրվագծված է նրա իրական դիմագիծը⁴²³: Եղինակն իրավամբ գտնում է, որ ազգային փոքրանամությունների հանդեպ վարած քաղաքականության ասպարեզում սուլթանն ի սկզբանե որդեգրով «divide et impera» սկզբունքը՝ վերացնում էր այն արտոնությունները, որոնք կայսերական հրովարտակներով հատկացվել

⁴²² P. de Réglis, *Au pays de l'espionnage. Les sultans Mourad V et Abdul-Hamid II*, Paris, 1902, p. 129.

⁴²³ G. Dorys, *Abdul-Hamid intime*, Paris, 1901 ; 2^{ème} éd. 1903 (մենք կիղենք գրի երկրորդ հրատարակությունը): Ըստ ժամանակակիցների հավաստման՝ Դորիս կեղծանվամբ հանդիսանում է Եկեղեց Ֆրանսիացի լրագրող Ալեքսանդր Աղոսիդիսը: Այդ մասին տես'ս *À propos « d'Abd-ul-Hamid intime » // « Pro Armenia », 25 avril 1901 ; «Ամահիտ», Գտարի, 1901, թիվ 1, էջ 3:*

էին ոչ մահմեղական համայնքներիմ⁴²⁴: Նա հիշատակում է 1895 թ. Աբդուլ Ջամիջի՝ «Բոսֆորի ալիքները բոլոր հայերի արյամբ բռուրագույն դարձնելուն» առնչվող հայտարարությունը և դրանով ընդգծում ցեղասպանության կանխամտածված բնույթը⁴²⁵, 1896 թ. ծավալված իրադարձություններն անվանում «մեծ կոտորած»⁴²⁶:

Տայով՝ իր անբողջ գործունեության ընթացքում «Պետությունը ես եմ»⁴²⁷ և «Իմ մեջ հետո թեկուզ ջրի եղեն» կարգախոսներով առաջնորդված օսմանյան գահակալի գործունեության ընդհանուր գնահատականը, հեղինակը, մասնավորապես նշում է. «Իր հարազատներին, ինչպես նաև իր հայտակներին նա միայն երկուուր ու սարսափ է ներշնչել և թե՛ յուրայինների և թե՛ իր ժողովրդի համար կմնա իրու այնպիսի մի բռնակալ, ինչպիսին է ամբողջ մարդկության համար, իսկ պատմության առջև՝ իրու կարմիր սուլթան»⁴²⁸:

Աբդուլ Ջամիջի ներքին և արտաքին քաղաքականությանն առնչվող մի շարք հարցեր մակերեսորեն քննարկում է բարոն Դ. դը Շվիտերը՝ օսմանյան գահակալների գործունեությանը նվիրված աշխատության մեջ⁴²⁹. Ջեղինակը, սակայն, ուշադրությունը կենտրոնացնելով սուլթանի կազմակերպած զանազան պալատական դավերի, քաղաքական հակառակորդների հետ հաշվեհարդար տեսնելու հարցերի վրա, շրջանցում է նրա ազգային քաղաքականությանն առնչվող խնդիրների մանրամասն արձարծումը և սահմանափակվում համառոտ դիտարկումներով։ Նա սուկ քոււցիկ հիշատակում է XIX դարում Օսմանյան կայսրության կրած տարածքային կորուստների, արաբական աշխարհում, Ալբանիայում, Կրետեում՝ Բարձր Պոան տիրապետության դեմ բռնկված ապստամբությունների, ինչպես նաև «հայերի կոտորածների» մասին, որոնք բնորոշում է իրու «կայսրությունը ցնցած ավելի աղետալի, քան արտաքին պատերազմները՝ իրադարձություններ»⁴³⁰։ Օսմանյան վարչությունում տիրող կատարյալ անիշխանության և կաշառակերության հենքի վրա նա ընդգծում է սուլթանի կամագրկության հանգամանքը, ինչի հե-

⁴²⁴ G. Dorys, նշվ. աշխ., էջ 63:

⁴²⁵ Նույն տեղում, էջ 73:

⁴²⁶ Նույն տեղում, էջ 73, 98:

⁴²⁷ Նշենք, որ Լուիդովիկոս XIV-ին վերագրվող այս թևավոր խոսքերը մտացածին են։ Այդ մասին տես՝ A. B. Чудинов, Французская революция. История и мифы, М., 2007, с. 87։

⁴²⁸ G. Dorys, նշվ. աշխ., էջ 271:

⁴²⁹ Le baron H. de Schwiter, Trois sultans. D'Abdul-Aziz à Abdul-Hamid, Paris, 1900.

⁴³⁰ Նույն տեղում, էջ 51:

տևանքով տառապող ժողովուրդները կնքում են իրենց մահկանացում⁴³¹: Այլ կերպ ասած՝ օսմանյան վարչակարգի լժի տակ հեծող ժողովուրդների անելանելի կացությունը, նրանց նկատմամբ կիրառվող բանությունները, հայածանքները և զանգվածային կոտորածները, որոնց թվում հեղինակն, ի դեպ, հիշատակում է միայն հայերի բնաջնջան մասին, նա ամենակին չի պայմանավորում Բարձր Դոան պետական քաղաքականությամբ:

Փխսարենը, բարոն Դ. դը Շվիտերը մանրամասնորեն քննարկում է ստեղծված իրավիճակից դրւու գալու ուղիները և հավատարիմ Ֆրանսիայի ռազմավարությանը՝ առաջադրում մեծ թվով բարենորդումների շտապ իրականացում, Օսմանյան կայսրության՝ մեծ տերությունների համար խիստ անցանկալի տրոհումը կանխելու նպատակով, որն, ըստ նրա ամիրատեսական հավաստման՝ մի քանի տարիների, եթե ոչ ամիսների հարց էր դարձել: «Դարկ է, մի խոսքով, — գրում է նա, — որ կայսրությունում դադարեն իշխել բռնակալությունը, կամայականությունը և կաշառակերությունը»⁴³²: Նույնիսկ Աբդուլ Համիդին անվանելով «այն երկրի դահիճը, որը նա կոչված էր ղեկավարելու», հեղինակն առաջարկում է նրան գահընկեց անել և այդ եղանակով շտկել աղետալի իրավիճակը, որի հետևանքով Թուրքիան հեռու չէ կործանումից⁴³³: Ակնհայտ է, որ հեղինակի հիմնական նպատակը եղել է ոչ թե Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների անելանելի կացության վերլուծությունը, այլ կայսրության տարածքային ամբողջականության պահպանման հիմնավորումը: Ըստ այդմ՝ ինչպես և ֆրանսիացի ժամանակակիցներից շատերը, նա հանդես է գալիս իբրև տառապանքներ կրող և բնաջնջվող ժողովուրդների վիճակի բարելավմանն ուղղված բարենորդումների իրականացման ջերմեռանդ կողմնակից:

Մեր թեմայի ուսումնասիրության կտրվածքով նվազ հետաքրքրություն է ներկայացնում օսմանյան նախկին պաշտոնյա Պ. Ֆրեմոնի՝ Աբդուլ Համիդի գահակալությանը նվիրված աշխատությունը, թեև նրան ևս հաջողվել է հիմնավորապես բացահայտել Օսմանյան կայսրությունում առկա իրավիճակը⁴³⁴: Դայոց ցեղասպա-

⁴³¹ Նույն տեղում, էջ 52:

⁴³² Նույն տեղում:

⁴³³ Նույն տեղում, էջ 53:

⁴³⁴ P. Frémont, Abd ul-Hamid et son règne. Par un ancien fonctionnaire ottoman, Paris, 1895.

նությունը, ինչպես նաև քրիստոնյա ժողովուրդների բնաջնջնան փաստը չդարձնելով ուսումնասիրության նյութ, հեղինակը բավարարվում է Օսմանյան կայսրության տարածքում բնակվող քրիստոնյա հպատակների ոչնչացմանն առնչվող թուրքիկ ակնարկներով⁴³⁵: Ուրվագծելով Օսմանյան կայսրությունում տիրող բռնակալական վարչակարգի մանրամասն և արժանահավատ պատկերը (պետական մարմինների չարաշահումներ, իշխանության ներկայացուցիչների գործադրած բռնություններ, աստիճանավորների շրջանում կաշառակերության աճ, ավազակության և գողության աննախադեպ ծավալում), հեղինակն ըստ եռթյան, որևէ զանազանություն չի նշանառում այն կացությունների միջն, որոնցում գտնվել են սուլթանի մահմեդական և քրիստոնյա հպատակները: Դակառակ դեպքում, նա չէր հավաստի, որ «առաջինները տառապում են նույնքան, եթե ոչ ավելի, քան երկրորդները, սակայն որևէ մենք նրանց հարցը եվրոպական հասարակական կարծիքի դատին չի ներկայացնում»⁴³⁶:

Ելնելով շարադրանքից, կարելի է ենթադրել, որ Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակին քաջածանոթ հեղինակն, ըստ եռթյան, շրջանցել է քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ համիդյան վարչակարգի կիրառած հալածանքների և կոտորածների մանրամասն քննարկումը՝ տուրք տալով. հավանաբար, Ֆրանսիական կառավարության թրքամետ քաղաքականությանը կամ կատարել է հատուկ պատվեր:

Աբդուլ Համիդ II-ի կենսագրականների թվում հարցադրումների ինքնատիպությամբ առանձնանում է գրող և լրագրող Ժենեի (1851-1916) վիճահարույց, սակայն, հետաքրքիր հողվածը⁴³⁷: Նա, փաստորեն, սուլթանի միակ կենսագիրն է, որը ծեռնպահ մնալով օսմանյան գահակալի քաղաքական գործունեությանն առնչվող փաստերի, այդ թվում հայ ժողովոյի դեմ կիրառած ցեղասպան քաղաքականության մանրամասների թվարկումից, հարցերը քննարկում է քավականին հետաքրքիր՝ սոսկ նրա՝ իբրև պետական գործչի հոգեբանության վերլուծության հենքի վրա:

Դենեն, ի դեպ, ոչ միայն 1890-ական թվականներին հայկական կոտորածների իրականացման ընթացքում Կոստանդնուպոլիս այցելած ֆրանսիացի սակավաբիկ ժամանակակիցներից է, ինչը նրան հնարավորություն է ընծեռել տեղում ծանոթանալու իրավիճակին,

⁴³⁵ Նույն տեղում, էջ 98-100:

⁴³⁶ Նույն տեղում, էջ 45:

⁴³⁷ J. Denais, Le sultan, Paris, 1897.

այլև եզակիներից է, որը հյուրընկալվել է անծանք սուլթանի կողմից և արժանացել նրա լավագույն ընդունելությանը⁴³⁸: Այդ հանգամանքը, սակայն, նրան ամենահին չի խանգարել իր մոտեցման շրջանակում անկողմնակալ դիրքերից քննարկելու իր նկատմամբ խիստ բարեհած վերաբերմունք ցուցաբերած Աբդուլ Ջամիլի հոգեբանության առանձնահատկությունները և բացահայտել, ըստ իր համոզման, միայն այդ հանգամանքով պայմանավորված՝ հայ ժողովողի բնաջնջման քաղաքականության ակունքները:

Այլազգի օսմանահպատակների հանդեպ առհասարակ Աբդուլ Ջամիլի որդեգրած քաղաքականությունն անհարկի ածանցելով միայն նրա հոգեբանությանը, Ղենեն սուլթանի քաղաքական գործունեությունը մեկնաբանում է խիստ սահմանափակ կտրվածքով՝ ծանրության կենտրոնը տեղափոխելով բացառապես նրա հոգեկան կերտվածքի և մարդկային տարօրինակությունների ուսումնասիրության հարթություն: Ըստ այդ՝ պատահական չե, որ հեղինակը մեծ տեղ է հատկացնում գլխավորապես արօրեական կյանքում Աբդուլ Ջամիլի վարքածի մարդամասների քննարկմանը, ընդգծելով նրան խիստ բնորոշ ավելորդ գգուշությունը, սեփական անձի անվտանգության հետ կապված՝ նրա մոտ արմատացած ծայրահեռ մտավախությունը⁴³⁹, որը ժամանակի ընթացքում վերածվել է հետապնդման բարդությի⁴⁴⁰:

Ելնելով Աբդուլ Ջամիլի գործունեության վերլուծության իր հայեցակարգից, Ղենեն թե՛ օսմանյան վարչակարգի քաղաքականության և թե՛ Ջայոց ցեղասպանության մեկնաբանության հարցերում հանգում է իրականությանն ամենահին չիամապատասխանող հետևողությունների: Մասնավորապես, «աղետալի տարիներին», այն է՝ 1890-ական թվականներին, արևմտահայության հանդեպ Աբդուլ Ջամիլի քաղաքականության մեկնաբանության հարցում նրա թույլ տված սխալների և հանցանքների պատճառը նա որոնում է միայն նրա խաթարված հոգեկան համակարգի ծավերում⁴⁴¹.

Ջեղինակը համառոտակի անդրադառնում է 1878 թ. ի վեր կայսրությունում միահեծան իշխանության հաստատման ուղղությամբ

⁴³⁸ Նույն տեղում, էջ 1: Հյուրերին հմայելու՝ Աբդուլ Ջամիլի հմտության մասին տե՛ս մանրամասն G. Samné & Y.M. Goblet, *La vie politique orientale en 1909*, Paris, 1910, p. 60-62 ; F. Georgeon, նշվ. աշխ., էջ 137-139:

⁴³⁹ J. Denais, նշվ. աշխ., էջ 8-7:

⁴⁴⁰ Նույն տեղում, էջ 5:

⁴⁴¹ Նույն տեղում, էջ 6:

Աբդուլ Ջամիդի գործադրած ջանքերին և «կայսրության քայլայ-մանը նպաստող անվերջանալի հանցանքների» շարքը դիտում իրեն երկրում ամբողջատիրական վարչակարգի հաստատման հե-տևանք⁴⁴²: Այս հարցի շուրջ առաջադրած նրա մեկնաբանությունն ամբողջությամբ համապատասխանում է պատմական իրականությանը: Նրան հաջողվել է նաև, առանց մանրամասների մեջ թափանցելու, ընդհանուր բնույթի հպումներով ուրվագծել Օսմանյան կայսությունում տիրող խառնաշփոթ իրավիճակի հավաստի պատկերը, ընդգծելով, մասնավորապես պետական պաշտոնյաների կաշառվածությունը, բանակում տիրող անիշխանությունը, օսմանյան քաղաքացիների անձի անապահովությունը, բանտերում կալանավորների նկատմամբ գործադրվող խոշտանգումները, մաքսակետերում մարդկանց կողոպտելը և այլն⁴⁴³: Դիմնախնդիրների վերլուծության խիստ սահմանափակ մոտեցման շրջանակում, նաև, ի վերջո, կայսրությունում հաստատված վարչակարգի գործունեության վերլուծության հիման վրա եզրակացնում է, որ օսմանյան պետության հիմնական նպատակը միայն սուլթանի անձի ապահովության երաշխավորումն է⁴⁴⁴: Դարցերի քննարկման նման նեղ տեսանկյունը նրան ամբողջությամբ գրել է Բարձր Դոան և անձամբ սուլթանի քաղաքականության ելեզներում կողմնորոշվելու հնարավորությունից: Նա, մասնավորապես լոռությամբ է շրջանցում խիստ էական մի հանգամանք՝ օսմանյան կառավարության առջև ծառացած՝ կայսրության տարածքային ամբողջականության պահպանման խնդիրը, որի իմաստը, հավանաբար, դեռևս չի ընթանել:

Ինչ վերաբերում է Աբդուլ Ջամիդի գործած անհամար ոճիրներին, որին բնորոշում է իրեն «մեծ մարդասպանի», «անձնավորված ոճիրի», որի կարմիր ձեռքի վիայից «Բուֆորի բոլոր ջրերը չեն կարող վերացնել արյան հետքերը»⁴⁴⁵, Ղենեմ, այդուհանդերձ, խոսքը կենտրոնացնում է սոսկ արևմտահայության բնաջնջման վրա, չակնարկելով իսկ օսմանահպատակ այլ ժողովուրդների նկատմամբ նրա կիրառած ցեղասպան քաղաքականությունը: Ընդհանուր բնույթի դիտարկումներով նա փաստում է արևմտահայության կոտորած-

⁴⁴² Նույն տեղում, էջ 9:

⁴⁴³ Նույն տեղում, էջ 9-10: Այդ մասին տե՛ս նաև J. Denais, Mourad V, vrai kalife, sultan légitime et Abdul Hamid II, usurpateur fraticide. Lettre à S. M. l'Empereur d'Allemagne, Paris, 1898, p. 14:

⁴⁴⁴ J. Denais, Le sultan, p. 11.

⁴⁴⁵ J. Denais, Mourad V, vrai kalife, sultan légitime et Abdul Hamid II, usurpateur fraticide, p. 5, 10, 12, 15.

ները, օրինակ՝ 1896 թ. օգոստոսին Բանկ օտոմանի գրավմանը հաջորդած «մարդկային սարսափելի հեկատոնբերը» կոստանդնուպոլսում, որոնք, նրա կարծիքով, միայն Օսմանյան կայսրությունը չէ, որ պատվազրկել են⁴⁴⁶: Վկայակոչելով «Ղեղին գրքուն» գետեղված ֆրանսիացի դիվանագետների միայն սակավաթիվ գրագրություններ, հեղինակն անուղղակիորեն մատնանշուն է սուլթանի ղեկավար դերը 300000 հայի բնաջնջման գործում, իսկ արևմտահայության ոչնչացմանը վերաբերող «անհավանական» ներկայացվող փաստերի արժանահավատությունը համարում է կասկածից վեր⁴⁴⁷:

Այդուհանդեռձ, այս հարցում ևս հեղինակի ցուցաբերած սահմանափակ վերլուծական մոտեցումը նրան խոչընդոտել է իր իսկ հեղած փաստերից հանգելու ընդգրկուն հետևությունների և Դայոց ցեղասպանության սանձազերծումը պայմանավորել պետական քաղաքականությամբ: Դարկ է իհարկե նշել, որ արևմտահայության բնաջնջման գործընթացին առնչվող հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրությունը նրա հիմնական խնդիրների շարքում նույնիսկ չի ընդգրկվել: Ըստ հեղինակի հավաստման՝ նա հետպնդել է միայն մեկ՝ սուլթան Աբդուլ Ջամիդ II-ին՝ Եվրոպական հանրությանը ներկայացնելու նպատակ⁴⁴⁸: Ուստի Դայոց ցեղասպանությանն անդրադառնալով ընդամենն օսմանյան գահակալի հոգեբանությանը վերլուծության պրիզմայի միջով, նա հայտարարում հանգել է արևմտահայության բնաջնջման առնչությամբ խիստ վիճահարույց, անգամ անընդունելի հետևությունների:

Նախ Ղենեն հայկական կոտորածները հանիրավի ոչնչով չի զանազանում կայսրության տարածքում՝ նույնիսկ մահմեդականների հանդեպ Բարձր Դոան գործադրած բռնություններից⁴⁴⁹ և ընդգործ է բոլոր նրանց դեմ, ովքեր կարծում են, թե վերջիններս կարող են խնայվել⁴⁵⁰: Թեև լայն առումով այս հարցադրմանն առարկելն անհնատ է, նշենք, սակայն, որ Օսմանյան կայսրությունում հաստատված ամբողջատիրական վարչակարգի լայնածավալ գործունեության պայմաններում, նա հայ ժողովրդի հանդեպ օսմանյան կառավարության ցեղասպան քաղաքականությունն, այդուհանդեռձ,

⁴⁴⁶ J. Denais, Le sultan, p. 7-8.

⁴⁴⁷ Նույն տեղում, էջ 13-14, 15:

⁴⁴⁸ Նույն տեղում, էջ 1:

⁴⁴⁹ Արդուլ Ջամիդին նա անվանում է «հայերի և բուրքերի մարդասպան»: Տե՛ս նաև J. Denais, Mourad V, vrai calife, sultan légitime et Abdul Hamid II, usurpateur fraticide, p. 22:

⁴⁵⁰ J. Denais, Le sultan, p. 12.

տեղադրում է միայն օսմանյան հպատակների նկատմամբ առհասարակ Բարձր Դրան կողմից կիրառվող կամայականությունների միևնույն հարթության վրա, չմեկնաբանելով դրան բնորոշ առանձնահատկությունները: Ցանկացած բռնության պատասխանատվությունը նա վերագրում է բացառապես սուլթանին, քանզի նրան ընդդիմանալու պարագայուն յուրաքանչյուր պաշտոնյա կարող էր դառը հատուցել: Նա միևնույն կտրվածքով է քննարկում նաև հայերին կոտորող հանցագործների կողմից կրկնվող՝ «Տերը թույլատրել է սպանել» ասույթը⁴⁵¹ և արդյունքում, արևմտահայության ոչնչացումը մեկնաբանում իրու լոկ սուլթանի քննարկույթը պայմանավորված, բայց ոչ պետական քաղաքականության հենքի վրա խարսխված եղելություն:

Դենեի հիմնական խնդիրն, այդուհանդերձ, պարզության սահմանումն է այն հարցում, թե ինչ հանգամանքներ են դրդել Աբդուլ Ջամիդին նետվելու հանցանքների գիրքը: Սանրամասն վերլուծելով սուլթանի վարքագիծը, նա յուրօրինակ բանտի վերածված Ելրզքոյշը ապաստանած «Նորին դրուհար մեծության»⁴⁵² հայասպան քաղաքականությունը մեկնաբանում է նրա հոգեկան անառողջ վիճակով, մասնավորապես, հետապնդման բարդությով, որով նա տառապում էր, ինչն, ի դեպ, իրավամբ պատճառաբանում է զահակալի ծագումնաբանությամբ, շեշտելով, որ նրա մայրը հիվանդ է եղել թոքախտով, իսկ հայրական կողմից գրեթե բոլոր նախորդները եղել են ալկոհոլիկներ⁴⁵³:

Հետապնդման բարդությը, ինչպես անիրավացիորեն մեկնաբանում է հեղինակը, միակ պատճառն է, որն Աբդուլ Ջամիդին դրդել է զանգվածաբար ոչնչացնելու հայազգի հպատակներին⁴⁵⁴: Ըստ նրա՝ սուլթանն այդ քայլին, այդուհանդերձ, դիմել է ելնելով ոչ թե

⁴⁵¹ Նույն տեղում, էջ 13:

⁴⁵² Նույն տեղում, էջ 7:

⁴⁵³ Նույն տեղում, էջ 14: Նույնն է հավաստում Աբդուլ Ջամիդ II-ի կենսագիրներից Ժ. Ույը. «Նրա յաժմանությունը հետևանք էր հիվանդագին երկյուղի, որը նախավում էր խելացնորության: Նրա ընտանիքում ամենքը փոքրիշատե խելահեղներ էին. ալկոհոլիկներ, խրախճասերներ՝ այլասերված տոհմի ներկայացուցիչներ»: See's G. Roy, Abdül-Hamid. Le sultane rouge. Paris, 1936, p. 237:

⁴⁵⁴ Նշենք, ի դեպ, որ ալկոհոլիկնով տառապող մարդկանց ժամանակների մոտ հոգեկան շեղումների փաստումը խիստ բնորոշ է պատմական այս ժամանակաշրջանում ֆրանսիացի մտավորականներին: Հոգեկան շեղումների հանգեցնող՝ ալկոհոլիզմի հետևանքների հարցը, որը դրսարպատ էր, մասնավորապես մարդկանց ոչնչացմամբ, մանրամասնորեն քննարկել է նաև ֆրանսիացի խոշորագույն վիպասաններից եմիլ Չոլան՝ 1890 թ. լույս ընծայած «Մարդկային գագանը» վեպում:

դաժանությունից, այլ նախազգուշացումից դրդված, քանզի նման գործելամիջոցը նրա մոտ վերածվել է կարծեցյալ հալածողներից և իր կյանքին սպառնացողներից ծերբազատվելու յուրօրինակ միջոցի: Միայն այս՝ իրականությանը չհամապատասխանող հանգամանքով է հեղինակը բացատրում արևատահայության ոչնչացումը 1890-ական թվականներին և Եգրակացնում, որ եթե Աբդուլ Համիդի իշխանությունն առաջադիմի, ապա նա կարող է կոտորել ամբողջ կայսրության բնակիչներին⁴⁵⁵: Նման մոտեցման շրջանակում հեղինակի տեսադաշտից, փաստորեն, ամբողջությամբ դուրս են մնում Շայոց ցեղասպանության պատճառները, դրան բնորոշ առանձնահատկությունները, որոնք այդ գործընթացը զանազանում են այլազգի օսմանականացումից և ցեղասպանության իրականացումը պետական քաղաքականության մակարդակով, ինչը նրա ամենաակնառու թերությունն է: Չնայած Դենեի կողմից Շայոց ցեղասպանությանը վերաբերող որոշ հավաստի փաստերի արձանագրմանը, որը նրա հիմնական արժանիքն է, հարցերի քննարկման խիստ ընդգծված միակողմանի մոտեցման հետևանքով նրա մեկնարանությունները մնում են խիստ սահմանափակ և մակերեսային:

Ոչ միայն հայերի, այլև մյուս բոլոր ժողովուրդների ազատագրման միակ միջոցը, ըստ այդմ, Դենեն, իր հայեցակարգի շրջանակում, համարում է «ժամանակակից վարչակարգի» տապալումն Օսմանյան կայսրությունում:

Եգրափակելուց առաջ, անհրաժեշտ ենք համարում մանրամասնել մի էական հանգամանք, այն է՝ մեր քննարկած ուսումնասիրությունները ֆրանսիացի պատմաբանները գրել են Շայոց ցեղասպանության շուրջ չունենալով դեռևս ամբողջական և լիարժեք տեղեկություններ, ինչն իր դրոշմն է թողել նրանց շարուղուանքի և վերլուծությունների վրա: Այս պայմաններում, նրանց գերակշողող մասը հաճախ սահմանափակվել է Շայոց ցեղասպանության սոսկ այս կամ այն պատճառների վերլուծությամբ, դրանք չի քննարկել պատճառակցական կապի մեջ, իսկ նրանցից ոմանք հաճախ տեսադաշտից դուրս են թողել ցեղասպանության գլխավոր պատճառները: Նրանցից մի մասին հաջողվել է, այդուհանդերձ, միայն մասամբ բացահայտել Շայոց ցեղասպանության որոշ հիմնական պատճառները (Շայկական հարցին լուծում տալու անհրաժեշտությունը, բռնի օսմանացման քաղաքականության ծախողումը և այլն), դիմագերծել

⁴⁵⁵ J. Denais. Le sultan, p. 15.

կազմակերպիչներին և արևմտահայության հանդեպ անկարեկից դիրքորոշման համար խարազանել մեծ տերությունների մի մասի, այդ թվում Ֆրանսիայի, ղեկավար շրջանակներին: Այս առնչությամբ իմաստ ունի մանրամասնել, որ ուշադրությունը կենտրոնացնելով Ֆրանսիայի ոչ հայանպաստ քաղաքականության խարազանման վրա, ինչը միանգամայն արդարացված է, քանզի վճռորոշ դերակատարությունը պատմական այս ժամանակահատվածում պատկանել է Ֆրանսիային և նրա դաշնակից Ռուսաստանին, ֆրանսիացի պատմաբանները գրեթե ամբողջովին շրջանցել են Գերմանիայի ընդօժված քրօնականության⁴⁵⁶ վերլուծությունը:

Դայոց ցեղասպանության ժամանակակից ֆրանսիացի պատմաբաններն իրադարձության պատճառների և հարակից հարցերի շուրջ չեն ունեցել (և չեն կարող ունենալ) միասնական հայեցակարգ, իսկ նրանցից ովանք առաջադրել են անգամ իրականությանը չիամապատասխանող մեկնաբանություններ (օրինակ՝ ցեղասպանությունը պայմանավորել են լոկ կրոնական զանազանության հանգամանքով): Իրենց տեղեկությունների սահմաններում նրանք լուսաբանել են, մասնավորապես Դայոց ցեղասպանության պատմության առանձին, այդ թվում հայեցակարգային հիմնահարցեր, որոնց շաղկապումը միայն հնարավորություն է ընծեռում հայտարարում ստանալ լիարժեք պատկերացումներ ֆրանսիական պատմագրության ներդրած մեծ ավանդի մասին և հավուր պատշաճի այն արժենորել իր ամբողջության մեջ: Անտարակույս, Դայոց ցեղասպանության պատմությունը լուսաբանող նրանց աշխատությունները թե՛ սկզբնաղբյուրների և թե՛ նյութի ընդգրկման առումներով սպառիչ չեն, այդուհանդեռ, այս իրադարձության պատմության գիտական մեկնաբանության ասպարեզում նրանք կատարել են առաջին, անտարակույս, երերուն քայլերը և դրանով իսկ հող նախապատրաստել հետագա տասնամյակներում պատմաբանների հաջորդ սերունդների առավել բեղմնավոր գիտական գործունեության համար:

⁴⁵⁶ Այդ մասին մանրամասն տես **А. С. Ерусалимский**, Внешняя политика и дипломатия германского империализма в конце XIX века, М., 1951, с. 198-199; **А. С. Славин**, Աշխ. լգ 208, 217-218; J.-P. Garnier, La fin de l'Empire ottoman du Sultan Rouge à Mustafa Kemal, [Paris], 1973, p. 72-73:

2. ՀԱՍԻԴՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ 1909-1918 ԹԹ. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՎԱՐ

Դայոց ցեղասպանության առաջին փուլի պատմությունը շարունակել է գրավել ֆրանսիացի պատմաբանների ուշադրությունը նաև 1909-1918 թթ. ժամանակշրջանում: Ստորև քննարկվող հեղինակները ֆրանսիական պատմագրության որոշակի դպրոցների կամ ուղղությունների ներկայացուցիչներ են:

Նրանք, ի դեպ, Դայոց ցեղասպանության առաջին փուլի պատմությանը հատկացրել են շատ ավելի նվազ ուշադրություն, քան իրենց նախորդները, դրան անդրադառնալով Դայոց ցեղասպանության տարբեր փուլերի կամ միջազգային հարաբերությունների պատմությանը նվիրված ընդհանուր բնույթի աշխատություններում և ըստ այդն՝ նրանց ներդրումը իրադարձության ուսումնասիրության բնագավառում համեստ է: Այդուհանդեռձ, պատմագիտական նշանակության առումով ոչ համարժեք նրանց աշխատությունները ևս արժանի են ուշադրության:

Քննարկվող ժամանակաշրջանում Դայկական հարցի և Դայոց ցեղասպանության պատմությանը նվիրված պատմագիտական գրականության ետնախործի վրա բազմազան հիմնահարցերի ընդգրկմամբ և քննական վերլուծությամբ աչքի է զարնում գրող Անդրե Բարի «Սպիտակ ստրկություն (Դայաստան և Սակեդոնիա)» գիրքը: Այս արժեքավոր աշխատությունը, ըստ հեղինակի վկայության՝ գրի է առվել, 1908 թ.՝ 1876 թ. օսմանյան սահմանադրության վերահստատումից հետո: Ելնելով նյութի շարադրանքից, կարելի է անվարան հավաստել, որ հեղինակն այն ավարտին է հասցրել մինչև 1909 թ. սուլթանական հեղաշրջումը և դրա ճնշումը սահմանադրական գործերի կողմից:

Բարի գործի վերնագիրն իսկ երկնտանքի տեղիք չի տալիս հեղինակի՝ այլազգի հպատակների հանդեպ օսմանյան վարչակարգի քաղաքականության շուրջ: Ելնելով XIX դարում Օսմանյան կայսրությունում տարբեր ասպարեզներում (վարչական, ֆինանսական, իրավական և այլն) տիրող խառնաշփոթից՝ Բարն այնտեղ տիրող իրավիճակը բնորոշում է իրեն «անարխիա», որը հանգեցնում է բնիկ ժողովուրդների համար անվտանգության կատարյալ բացակայության և չի երաշխավորում նրանց ունեցվածքի ապահովությունը⁴⁵⁷:

⁴⁵⁷ A. Barre, L'esclavage blanc. (Arménie et Macédoine), Paris, [1909], p. 23.

Թեպետ Բարն օսմանահպատակներին առհասարակ, անկախ ազգային պատկանելության և դավանանքների տարբերություններից, բնորոշում է իրեն «սպիտակ ստրկության» գոհեր, քանզի օսմանյան վարչակարգը նրանց կատարյալ կախման մեջ էր դրել պաշտոնյաներից, այդուհանդերձ, նրանց թվում իրավամբ առանձնացնում է ի տարբերություն դանդաղ հոգևարք ապրող մահմեդականի՝ «ահարկու մեքենայի» ամբողջ ծանրությունը կրող և նահատակվող քրիստոնյաների առավել վատթար կացությունը⁴⁵⁸: Օսմանահպատակ մահմեդականների և քրիստոնյաների միջև առկա զգալի տարբերությունների հստակ ընդգծումը պայմանավորված է գլխավորապես Բարի հայեցակարգի ակնհայտ սահմանափակվածությամբ, որը խարսխվում է թուրքերի կրոնական մոլեռանդության և քրիստոնյաների հանդեպ նրանց մոտ արմատացած խորին ատելության վրա:

Իրականությանն, անտարակույս, սոսկ մասսամբ հանապատասխանող, սակայն, իրադարձությունների ծավալման վրա այնպիսի վճռորոշ ազդեցություն չունեցած, ինչպիսին ներկայացնում է Բարը, այս ետնախորքի վրա է նա քննարկում թանգինաթի ժամանակաշրջանում օսմանյան գահակալների ընդունած՝ բարենորոգումների իրականացում նախատեսող փաստաթղթերը: Նա դրանք իրավամբ բնութագրում է իրեն սոսկ մակերեսային և անօգուտ փաստաթղթեր, որոնց մեկնաբանությունը, սակայն, հանդիրավի, սահմանափակում է միայն կրոնական հակամարտության շրջանակներում: «Թուրքիայում ոչինչ չի փոխվել, քանզի ոչինչ չի կարող փոխվել: Խսլամը նորամուծությունների հանդեպ թշնամական դիրքորոշում ունի», – այսպիսին է նրա հիմնական եզրահանգումը⁴⁵⁹: Ըստ այդմ՝ կայսրության բազմամիլիոն բնակչության (այդ թվում մահմեդական հպատակների) վրա երեք միլիոն թուրքերի, որոնց բնորոշում է իրեն՝ «անուղղելի բարբարոսների», տիրապետությունը, Բարը, ելելով իր ոչ ընդգրկուն հայեցակարգից, հիմնավորում է հատկապես Ղուրանի պատվիրաններով: Ըստ նրա՝ մահմեդականների մոտ ամեն ինչ կանխորոշել է կրոնը, որն ի սկզբանե կարգավորել է թե՝ անծնական կյանքում և թե՝ քաղաքական ոլորտում տիրող բարքերը: Մահմեդականը, ինչպես նա պարզաբանում է, ընդիմանում է յուրաքանչյուր բարենորոգման, քանզի այն ընդունում է իրեն քրիստոնյայից կախ-

⁴⁵⁸ Նույն տեղում, էջ 25, 27-28:

⁴⁵⁹ Նույն տեղում, էջ 27:

ման մեջ ընկնելուն միտված քայլ, ինչը հեղինակն ամբողջությամբ պայմանավորում է նրան բնորոշ կրոնական նախապաշարմամբ⁴⁶⁰:

Նախքան Դայոց ցեղասպանության առաջին փուլի պատմության քննարկմանն անդրադառնալը, Բարն անկողմնակալ դիրքերից հանգամանորեն վերլուծում է արևմտահայության վիճակն Օսմանյան կայսրությունում: Բարձր կարծիքներ հայտնելով հայ ժողովրդի ունակությունների և տարբեր ասպարեզներում (գյուղատնտեսության, առևտության առաջնային գործունեության վերաբերյալ, նաև հայերին համարում է կայսրության տարածքում բնակվող ժողովուրդից ամենատաղանդավորը⁴⁶¹:

Օսմանահպատակ քրիստոնյաների հանդեպ տիրապետող ժողովրդի մոտ արմատացած արհամարհական վերաբերմունքը Բարը ցայտում ծևով լուսաբանում է արևմտահայության օրինակի հիման վրա: Ըստ նրա դիպուկ բնորոշման՝ թուրքերը հային դիտում են իրեն «հարկատու ստրուկի»⁴⁶²: Այս հենքի վրա, հերթական անգամ առանձնացնելով հոգեբանական գործոնի նշանակությունը, նաև հավաստում է, որ հայերին հայածելը և նրանց աշխատանքի արդյունքում յուրացնելը թուրքերը համարում են բարոյական և պատվաբեր: Միևնույն՝ հայերին իրեն ստորադասի վերաբերվելու շրջանակում է հեղինակը քննարկում նաև նրանց համար ստորացուցիչ այնպիսի իրողություններ, ինչպիսիք են զենք կրելու, ծի հեծնելու արգելքը և այլն⁴⁶³:

Խիստ կարևոր են արևմտահայության տնտեսական ծանր կեղծքմանը միտված օսմանյան իշխանությունների քաղաքականության շուրջ Բարի հավաստումները, ինչը նաև մանրազնին մեկնաբանում է օսմանյան վարչական և դատական համակարգերի կողմից նրա հանդեպ կիրառվող զանազան բռնությունների, մասնավորապես բազմապիսի հարկերի հենքի վրա⁴⁶⁴: Դայերի հանդեպ կիրառվող տնտեսական քաղաքականությունն անվանելով «պաշտոնական ավագակություն», Բարն արժնորում է նաև քրոնիկ կողմից նրանց նկատմամբ գործադրվող քռնությունները, կողոպուտներն ու կոտորածները և հանգում հետաքրքիր հետևության. «Դայերի համար արդյունքում առկա է հարկերի անվերջանալի բազմապատկում

⁴⁶⁰ Նույն տեղում, էջ 26:

⁴⁶¹ Նույն տեղում, էջ 29:

⁴⁶² Նույն տեղում, էջ 30:

⁴⁶³ Նույն տեղում:

⁴⁶⁴ Նույն տեղում, էջ 32-34:

և ծավալման հեռանկարներ ունեցող բնաջնջում»⁴⁶⁵: Այլ խոսքերով, Դայոց ցեղասպանությունը հեղինակը դիտում է իբրև արևմտահայության հանդեպ օսմանյան վարչակարգի պետականորեն կիրառած քաղաքականության օրինաշափ շարունակություն: Նման մոտեցումը բացառում է ցեղասպանությունն իրականացրած օսմանյան պաշտոնյաների և հետագայում նրանց հետքերով՝ պատմության կեղծարարների առաջադրած ստահոր փաստարկների արժանահավատության հավանականությունը՝ կապված օսմանյան պետության կողմից հայկական կարծեցյալ հեղափոխական շարժումները հարկադրաբար ճնշելու անհրաժեշտության հետևանքով տեղի ունեցած բռնությունների կիրառման հետ:

Դեղինակին հաջողվել է բացահայտել նաև արևմտահայության հանդեպ իրավական դաշտում կիրառվող ազգային խտրականության քաղաքականության դրսնորումները, քանզի, ինչպես միանգամայն իրավամբ շեշտում է՝ հային թույլատրված է եղել գանգատվել, սակայն, միայն տեսականորեն: Իրականում, թուրքական արդարադատությունը նրան շղթանցում է⁴⁶⁶: Արդյունում՝ Բարը հավաստում է, որ մինչև 1870-ական թվականներն արևմտահայության համար չեն եղել ո՞չ ունեցվածքի և ո՞չ պատվի ապահովության երաշխիքներ: Այդուհանդեռ, նույնիսկ այսպիսի պայմաններում, նա շեշտում է հայերին բնորոշ աշխատասիրությունը, որն, ի վերջո, հանգեցում է նրանց իսկ դահիճներին կերակրելուն⁴⁶⁷:

Դայերի նկատմամբ պետական քաղաքականության մակարդակով իրականացվող տնտեսական կեղեցնան և ազգային խտրականության այս ծավալուն հենքի վրա Բարը մեկնաբանում է հայկական խնդիրների միջազգայնացման խրին հարցը, որն արդարացիորեն պայմանավորում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին հաջորդած բանակցություններով և հայերի՝ իրենց իսկ անմիտիքար կացությունը բարելավելու ուղղությամբ գործադրած ջանքերով: Սակայն, ի տարբերություն օսմանյան վարչակարգի ճիրաններում հեծող արևմտահայության կացության հանգամանքների մանրազնին և համակողմանի քննարկմանը, Դայեկական հարցի ծագման առնչությամբ նրա մեկնաբանությունները խիստ թերի են և հեռու սպառիչ լինելուց: Դդելով Սան-Ստեֆանոյի պայմանագրում գետեղված՝ Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի իրավիճակի բարե-

⁴⁶⁵ Սույն տեղում, էջ 37:

⁴⁶⁶ Սույն տեղում:

⁴⁶⁷ Սույն տեղում, էջ 38:

լավում նախատեսող 16-րդ հոդվածը, Բարը շրջանցում է դրա ամենակարևոր դրույթը, որը վերաբերում էր Ռուսաստանի առջև քարենորոգումների իրականացման գործընթացի շուրջ՝ Բարձր Դուռ ստանձնած պարտավորությանը: Ուստի օրինաչափ է, որ հեղինակը հանգում է պատմական իրականությանն ակնհայտորեն հակասող անընդունելի եզրակացության. նա պնդում է, որ տերություններն այս հոդվածով հույսեր էին կապում Թուրքիայի քարի կամքի դրսնորման հետ, ինչը, նրա կարծիքով, «հավասարազոր էր բարենորոգումների հուղարկավորությանը»⁴⁶⁸: Իրականում պատկերը փոքր-ինչ այլ էր, քանզի 16-րդ հոդվածով սահմանված՝ օսմանյան վարչակարգի հանդեպ Ռուսաստանի վերահսկողության կիրառման պայմաններում, նախատեսված գործընթացը կարող էր հանգեցնել շոշափելի արդյունքների:

Փոխարենը, Բարի գնահատականները միանգամայն ընդունելի են Բեռլինի վեհաժողովին նախորդած ժամանակաշրջանում տերությունների դիրքորոշման առնչությամբ, որոնք դեմ էին Օսմանյան կայսրությունում Ռուսաստանի ազդեցության աճին: Որքան տարօրինակ է, այս հարցում արդեն Բարն արժևորում է 16-րդ հոդվածի նշանակությունը, որը, ինչպես նա նշում է, հայկական նահանգներում ապահովում էր Ռուսաստանի գերակշռող ազդեցությունը⁴⁶⁹:

Նեղինակը մանրանամանորեն նկարագրում է Բեռլինի վեհաժողովի գումարումն ու ընթացքը և գտնում, որ հայերի գործունեությունն անհետևանք չի անցել. «Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը դարձել է Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը», – նշում է նա⁴⁷⁰, շրջանցելով, սակայն, դրանց միջև առկա էական տարբերությունները, կապված Բարձր Դուռ նկատմամբ վերահսկողության սահմանման հետ: Այս փաստն, ինքնին, վկայում է, որ նա, ըստ էության, չի ընթանել ծագման փուլում Հայկական հարցի իրական իմաստը, ամբողջությամբ չի կողմնորոշվել դրա առաջացման պատմական հանգամանքներում: Այս պայմաններում, պատահական չէ, որ 1870-ական թվականների դիվանագիտական հարաբերությունների քննարկման առնչությամբ նա նույնիսկ չի օգտագործում «Հայկական հարց» արտահայտությունը, ինչն արդեն նրա մոտեցման ակնառու թերությունն է (ի դեպ, հեղինակն առաջին

⁴⁶⁸ Նույն տեղում, էջ 40:

⁴⁶⁹ Նույն տեղում:

⁴⁷⁰ Նույն տեղում, էջ 57:

անգամ այն օգտագործում է միայն հայկական կուսակցությունների գործունեության վերլուծության առնչությամբ)՝⁴⁷¹:

Բարենորոգումների խնդիրը ևս Բարը քննարկում է սահմանափակ կտրվածքով, ցավով մատնանշնելով, որ Բեռլինի վեհաժողովից երկու տարի անց Բարձր Դուռը «իրական» բարենորոգումների իրականացման ուղղությամբ ոչ մի քայլ չի ծեռնարկել և սոսկ պահպանել է status quo-ն: Այս առնչությամբ Բարը փաստում է սոսկ Բարձր Դուռ խորանանկ քաղաքականության ելեզները, չբացահայտելով, սակայն, դրանց իրական պատճառները: Իրականությանն ամբողջությամբ համապատասխանող նրա որոշ մեկնարանություններ հանգում են հետևյալին՝ Դուռ վարած քաղաքականությունը պարզորոշ վկայում է, որ համիդյան վարչակարգի իրական ծրագրերը համահունչ չեն եղել 61-րդ հոդվածի ոգուն: Օսմանյան կառավարությանը նա հանդիմանում է ցուցադրական գիծումների մեջ, որի նպատակը երկրում խառնաշփոթի պահպանումն էր՝ բացառապես ծևական փոփոխությունների քողի տակ: «Բարենորոգումները գուտ պատրանքային բնույթ ուսեին», – եզրակացնում է նա՝⁴⁷²: Այդուհանդերձ, նրա մեկնարանությունները պարզորոշ վկայում են, որ միջազգային պայմանագրերով Արևմտյան Հայաստանի համար նախատեսված բարենորոգումների տապալման հանգամանքները նրա համար մնացել են անհասանելի:

Բացահայտորեն և անհարկի գերազանահատելով Անգլիայի հայանետ քաղաքականության նշանակությունը, ինչը միանգամայն բնորոշ է այս ժամանակաշրջանում ֆրանսիական պատմագրությանը՝⁴⁷³, նա կարծիք է հայտնում, թե իբր հանձինս Բեռլինի վեհաժողովի և 1878 թ. հունիսի 4-ին Անգլիայի և Օսմանյան կայսրության միջև Կոստանդնուպոլսում կնքված պայմանագրերի՝ հայերն ունեին Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման երկու երաշխիք՝⁴⁷⁴: Բարենորոգումների ծախտողումը նա մեկնարանում է, ըստ եռթյան, երկրորդական բնույթի հանգամանքներով, ինչպիսիք են հայերի՝ Վերոհիշյալ երկու կարծեցյալ երաշխիքները, որը հարցի լուծումը դատապարտել էր ծախողնան կամ մահմեդական-ներին բնորոշ կրոնական մոլեռանդությունը, ինչի հետևանքով նրանք եվրոպական պետությունների միջամտությունները դիտել են

⁴⁷¹ Նույն տեղում, էջ 65:

⁴⁷² Նույն տեղում, էջ 62:

⁴⁷³ Այդ մասին մանրամասն տե՛ս գրքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում:

⁴⁷⁴ A. Barre, նշվ., աշխ. էջ 59:

իբրև իրենց «հավատալիքների» դեմ ուղղված բացահայտ ոտնձգության դրսերությանը՝ Արդյունքում, Բարը շրջանցում է բարենորոգումների ծախողման հիմնական պատճառը, այն է՝ Եվրոպական տերությունների ներքին տարածայնությունները:

Փոխարենը, սակայն, սուլթանի և մեծ տերությունների փոխհարաբերությունների վերլուծության հարցում նրա մեկնաբանությունները շատ ավելի ընդգրկուն են և արժանի ուշադրության: Նա ծավալվում է Արդուլ Դամիոի դիրքորոշման շուրջ, որը 1880-ական թվականների երկրորդ կեսին հմտորեն օգտագործում էր տերությունների անվճռականությունը, քանզի գիտակցում էր իր համացների անպատճելիությունը: Ուստի նա վճիռ է կայացնում կազմակերպել «լայնածավալ կոտորածներ, որոնք արժանի են կայսրին»⁴⁷⁵, – հեգնաբար եզրակացնում է հեղինակը: Այս հանգամանքը Բարը համարում է, փաստորեն, Դայոց ցեղասպանության նախապայմաններից, որի պատասխանատվությունն անուղղակիորեն և իրավացիորեն բարդում է սուլթանից զատ նաև Եվրոպական պետությունների ուկավար շրջանակների վրա:

Ընդգծելով ստանձնած պարտավորությունների կատարման հարցում օսմանյան զահակալի հապաղումները, Բարը նման դիրքորոշումը մեկնաբանում է իբրև գիտակցված քայլ, որը միտված էր մեծ տերությունների միացյալ գործողությունների ջլատմանը: Այս առունով, հեղինակը գտնում է, որ սուլթանը իրավի հասել է իր նպատակին, քանզի արդյունքում՝ Դուռը ծեռնպահ է մնացել բարենորոգումների իրականացումից⁴⁷⁶:

Բարի շարադրանքում ակնհայտորեն դրսերվում է Դայկական հարցին առնչվող հիմնախնդիրների քննարկումը պատճառակցական կապի մեջ, որը նրա մոտեցման դրվատելի կողմերից է: Նա հիմնավորապես հերքում է հայերի վրա հաճախ բարդվող՝ իրականությանը չհամապատասխանող այն զրապարտությունը, ըստ որի՝ հայերը ծգտել են անկախության, փոխարենը պարբերաբար ընդգծում տասնամյակներ ի վեր նրանց անտրտունք պահպաժը⁴⁷⁷: Ապացուցելու համար, որ հայերի պահանջները հեղափոխական բնույթ չեն կրել, նա հրապարակում է 1878 թ. հունիսի 13/25-ին Բերլինում Խրիմյան հայրիկի՝ տերությունների ներկայացուցիչներին

⁴⁷⁵ Նույն տեղում, էջ 26:

⁴⁷⁶ Նույն տեղում, էջ 65:

⁴⁷⁷ Նույն տեղում, էջ 63:

⁴⁷⁸ Նույն տեղում, էջ 29:

իանձնած խնդրագիրը, ինչպես նաև հայ պատվիրակների՝ վեհաժողովի նախագահին ներկայացրած երկու այլ փաստաթղթեր՝ «Ծրագիր կազմակերպական կանոնակարգի Օսմանյան Դայաստանի» և «Վիճակագիր Օսմանյան Դայաստանի»⁴⁷⁹: Ելմելով արևմտահայության համար ստեղծված կացության առանձնահատկություններից, նա հանգում է միակ հնարավոր հետևության, պնդելով, որ երկնտրանքի առջև հայերին կանգնեցրել են տերությունների անպտուղ գործողությունները. «Ազգերի կողմից լրված՝ Դայաստանն այսուհետև կարող էր հույսեր կապել միայն սուլթանի բարյացակամության հետ կամ հենվել իր սեփական ուժերի վրա», – գրում է նա⁴⁸⁰: Ըստ այդմ՝ 1880-ական թվականների կեսերին երիտասարդ սերնդի կողմից «հեղափոխական մարտավարության» որդեգրումը նա գերադասում է մեկնաբանել սոսկ պայքարի խաղաղ ձևերի անարդյունավետությամբ⁴⁸¹:

Դնչակյան և ԴՅԴ կուսակցությունների կազմավորումը հեղինակը պայմանավորում է բացառապես հայերի, մասնավորապես երիտասարդության՝ ինքնապաշտպանություն կազմակերպելու անհրաժեշտության գիտակցմանք, բացառելով ցեղասպանության պատմության կեղծարարների որդեգրած հիմնական տեսակետներից մեկը՝ հեղափոխական գաղափարներին՝ հայերի տուրք տալու հավանականությունը: Երկու կուսակցության հիմնական նպատակը նա համարում է օսմանյան վարչակարգի բռնությունների շուրջ քաղաքակիրք աշխարհին հավաստի տեղեկությունների հաղորդումը և ապստամբությունների հրահրումը Դայաստանում, սակայն, եական մի վերապահությամբ՝ եվրոպական ազդեցիկ միջամտության ակնկալությամբ⁴⁸²:

Այդուհանդեմ, Բարը ևս մեկ անգամ ընդգծում է, որ արևմտահայերը կանխազգալով վերահաս կոտորածների անխուսափելիությունը և նախքան հեղափոխական գործողությունների հարկադրաբար ոիմելու Վճռի կայացումը, ջանացել են հայցել Անգլիայի աջակցությունը, որը ոչնչի չի հանգեցրել⁴⁸³:

⁴⁷⁹ Նույն տեղում, էջ 42-43, 44-48: Այդ մասին տես է. Կոստանդյան, Մկրտիչ Խորիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 253-255:

⁴⁸⁰ A. Barre, նշվ., աշխ. էջ 54:

⁴⁸¹ Նույն տեղում:

⁴⁸² Նույն տեղում, էջ 65:

⁴⁸³ Նույն տեղում, էջ 67:

Անգլիայի քաղաքականությանը տված անկողմնակալ այս գնահատականի առիթով ևս ցանկանում ենք մանրամասնել, որ այն, ըստ էության, հակասում է նրա նախորդ դիտարկումներից մեկին և վկայում, որ հեղինակն այս հարցում և հստակ կողմնորոշում դեռևս չի ունեցել: Իսկ ինչ վերաբերում է արևմտահայությանը, Բարն իրավացիորեն փաստում է, նույնիսկ այս պայմաններում, ինչակյանների՝ հարվածին հարվածով պատասխանելու հարցում գրաված ժխտական դիրքորոշումը: Այդուհանդերձ, մատնանշելով հայերի՝ բռնակալության վրա խաղաղ միջոցներով ներգործելու ապարդյունության մեջ հավաստիանալու փաստը, նա հանգում է միակ հնարավոր տրամաբանական հետևության: «Այսօր, ինչպես և նախկինում, միայն հեղափոխությունն է շնորհում կյանքի իրավունքը»^{484:}

Դեղինակը մանրանասն քննարկում է 1894 թ. Սասունի ինքնապաշտպանության հետ կապված հանգամանքները, սակայն, այս հարցում ևս ցուցաբերում է փոքր-ինչ անհետևողականություն: Դիցուք, ակնարկելով հայկական ապստամբությունների բռնկումը, նա ոչ միայն չի մեկնարանում դրանց անմիջական դրույապատճառները, այլև, հանիրավի, դրանք բնորոշում է իբրև՝ անողոք ճնշման հանգեցրած «հեղափոխություն»: Փոխարենը, Սասունի ապստամբության առնչությամբ Բարդ հավուր պատշաճի մեկնարանում է ամենաեական հանգամանքը՝ Աբդուլ Ջամիլի դեկավար դերը դրա ճնշման հարցում, որը կարգադրել է օսմանյան զորքերի հրամանատար Զեքի փաշային արյան մեջ խեղդել հայկական ապստամբությունը: Սասունցիների աննախադեպ խոշտանգումների, սպանությունների ծավալի հիման վրա, նա մատնանշում է օսմանյան զորքերի հիմնական նպատակը, այն է՝ հասնել այն բանին, որ «հայկական կոտորածները ոչչով չգիծն պատմության մեջ արձանագրված մեծ կոտորածներին»^{485:}

1895 թ. Բարդ Ալիի ցույցը Բարդ պատճառաբանում է բարենորդումների «մայիսյան» ծրագրի կատար ածման հարցում Բարձր Դոան ցուցաբերած չկամությամբ^{486:} Անկողմնակալ դիրքերից մեկնարաննելով հնչակյանների հիմնական նպատակը՝ տեղեկացնել օսմանյան իշխանություններին, որ հայերն այլևս ցանկություն չունեն խարվել սնանկ խոստումներով, հեղինակն այս պարագայում ևս անուշադրության չի մատնում նրանց մոտ ապստամբելու կամ խա-

⁴⁸⁴ Նույն տեղում, էջ 87:

⁴⁸⁵ Նույն տեղում, էջ 67:

⁴⁸⁶ Նույն տեղում, էջ 69:

նակչություններ կազմակերպելու նտադրության բացակայությունը⁴⁸⁷:

Ցույցին հաջորդած իրադարձությունների առնչությամբ (տերությունների միջամտություն, սուլթանի՝ հոկտեմբերի 17-ի հրովարտակի հրապարակում, որով նա սին խոստումներ էր շռայլում բարենորդումների հրականացման շուրջ), Բարին հաջողվել է ամբողջ խորությամբ բացահայտել Աբդուլ Ջամիդի հայատյաց քաղաքականության հրական դիմագիծը: Տերություններին խարելու քողի տակ, ինչպես նա հիմնավորապես ապացուցում է, սուլթանն ամբողջ կայսության տարածքում միաժամանակ գաղտնաբար կազմակերպում էր լայնածավալ հայկական կոտորածներ, տարբեր վայրեր ուղարկում իր բանագնացներին՝ տեղերում գտնվող իր ներկայացուցիչներին կարգադրելով կոտորել հայերին: Աբդուլ Ջամիդի բանագնացները՝ «ոճրի պատգամավորները», ինչպես նա նշում է, գրգռում էին թուրք և քուրդ մահմեդականների ատելությունը «գյավուրների» նկատմամբ, բորբոքում նրանց կրոնական մոլեռանդությունը, պաշտոնյաներին կարգադրում իրականացնել քրիստոնյա հպատակների համընդիանուր կոտորած⁴⁸⁸: Թե՛ այս և թե՛ տարատեսակ այլ փաստերի վկայակոչմամբ Բարը բացահայտում է հայ ժողովրդի ցեղասպանության կազմակերպումը պետական քաղաքականության մակարդակով, որը նրա ամենամեծ արժանիքն է:

Ջեղինակը, մասնավորապես կարևորում է տեղական օսմանյան իշխանությունների դերը հայերի բնաջնջման կազմակերպման գործընթացում. «Ամենուր իշխանությունները դրդում են մահմեդականներին գործել քրիստոնյաների դեմ: Որոշ վայրերում դրանք նույնիսկ դիմում են քրդական հրոսակախմբերի օգնությանը», – նշում է նա⁴⁸⁹: Իսկ 1895 թ. Դիարբեքիրում տեղի ունեցած կոտորածների հիման վրա, Բարն արդեն հանգում է շատ ավելի հատու եզրակացության, հավաստելով, որ հայկական ջարդերը վկայում էին «թե ինչ չափով են իշխանություններն օժանդակում մարդասպանների գործողություններին»⁴⁹⁰:

Բարի մոտեցման առանձնահատկություններից է Աբդուլ Ջամիդի գահակալության օրոց Ջայոց ցեղասպանության գործընթացի հարատևության փաստումը 1890-ական թվականների լայնածավալ

⁴⁸⁷ Նույն տեղում, էջ 73-74:

⁴⁸⁸ Նույն տեղում, էջ 75, 76:

⁴⁸⁹ Նույն տեղում:

⁴⁹⁰ Նույն տեղում:

կոտորածներին հաջորդած ժամանակահատվածում: Անդրադառնալով Արևածան Դայաստանի զանազան բնակավայրերում (Ուրֆա, Երգրում և այլուր) մինչև 1904 թ. տեղի ունեցած կոտորածների, հեղինակն, իհարկե, հայերի կրած մարդկային կորուստների քանակի առումով համեմատություններ չի արձանագրում 1894 թ. Սասունում և դրան անմիջականորեն հաջորդած իրադարձությունների միջև: Այդուհանդերձ, նա մանրամասն քննարկում է ոչ միայն 1904 թ. Սասունի կոտորածները, այլև արևածահայության դեմ ուղղված ցեղասպանային բնույթ կրող՝ օսմանյան վարչակարգի կիրառած քաղաքականության այլևայլ դրսերումները (մարդկանց խոշտանգումներ, անօրինականություններ բանտերում և այլն):⁴⁹¹

Ծրջանցելով Դայոց ցեղասպանության պատճառների գերակշռող մասը (մասնավորապես, Դայկական հարցին լուծում տալու անհրաժեշտությունը, օսմանացնան քաղաքականության ձախողությունը), ինչը Բարի Վերլութության խոցելի կողմերից է, նա հիմնավորապես բացահայտում է, փաստորեն, դրանցից միայն մեկը՝ Արևածան Դայաստանի հայաթափումը: Այս առումով հետաքրքրությունից զուրկ չէ այդ ուղղությամբ Արդուկ Դամիդի վարած քաղաքականության նշանակումը: Փաստելով կոտորածների և աննախադեպ հայածանքների պատճառով հայերի արտագաղթը տարբեր երկրներ, ինչը հեղինակը դիտում է իբրև կոտորածների հետևանքով հայերին համակած հուսալքության դրսերում, նա միաժամանակ մատնանշում է սուլթանի ջանքերը՝ կապված նրանց պատկանող պատմական տարածքները մահմեդականներով բնակեցնելու հետ՝⁴⁹², հանգամանք, որն, ի դեպ, նրա ժամանակակից ֆրանսիացի պատմաբաններից շատերի ուշադրությունից վրիպել է:

Ի վերջո, Բարը մարդասպանների անկաշկանդ գործողություններն իրավամբ մեկնաբանում է մահմեդականների նոտ արմատացած անպատճելիության զգացումով՝⁴⁹³, ինչն, անտարակույս, ևս մեկ անգամ հարևանցիորեն հավաստում է Դայոց ցեղասպանության իրականացումը պետական քաղաքականության մակարդակով:

Դայ ժողովրդի ողբերգության հարցում Բարը խստագույն դատապարտում է Եվրոպական մեծ տերությունների անտարբեր դիրքորոշումը, որոնց թվում առանձնացնում է հատկապես պատմական այս ժամանակաշրջանում Ֆրանսիայի ամենի հակառակորդ կայզեր:

⁴⁹¹ Նույն տեղում, էջ 84-85:

⁴⁹² Նույն տեղում, էջ 86:

⁴⁹³ Նույն տեղում:

րական Գերմանիային, որը, ինչպես պատկերավոր ծևով նշում է՝ «իր սրով պատսպարում է թուրքերի հանցանքները»⁴⁹⁴: Նրա մտորումներում բացահատորեն նկատելի է հակագերմանական տրամադրվածությունը, ինչն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ֆրանսիացի բոլոր հեղինակներին խիստ բնորոշ առանձնահատկություններից է: Նշենք, որ միաժամանակ նա ծեռնպահ է մնում, ի տարբերություն իր մեծ թվով նախորդների, երրորդ հանրապետության ղեկավարների բացահայտ թրքամետ քաղաքականության քննադատությունից: Ըստ նրա անիրատեսական հաշվարկների՝ 100000-ի հասնող հայերի մարդկային կորուստները հետևանք են դիվանագիտության հետ կապված նրանց ունայն հոլյսերի: Իրականությանը մասամբ համապատասխանող նրա այս եզրահանգումը պարունակում է միաժամանակ չափազանցության տարրեր: Մենք թեև ամենաին հակված չենք թերագնահատելու մեծ տերությունների եսասիրական քաղաքականության չարագուշակ հետեւանքներն արևմտահայության ոչնչացման գրրծում, այդուհանդերձ, հարկ ենք համարում մանրամասնել, որ պատասխանատվության առյուծի բաժինը բարդվում է, անտարակույս, հայ ժողովրդի բնաջնջման ծրագիրը մշակած օսմանյան գահակալի Վրա, որն իրականացվում էր պետական քաղաքականության մակարդակով:

Ինչպես տեսնում ենք, Բարի մոտեցումն ակնհայտ առավելությունների հետ մեկտեղ ունի նաև զգալի թերություններ: Թեև բազում փաստերով նա փաստել է Հայոց ցեղասպանության իրականացումը պետական քաղաքականության մակարդակով, այդուհանդերձ, անկարող է գտնվել ելնելով իր իսկ թվարկած փաստերից՝ խուսափել չափազանցություններին տուրք տալուց: Հայ ժողովրդի բնաջնջման մեկնաբանության խնդրում օսմանյան իշխանությունների պետական մակարդակով կրիառած քաղաքականության վճռորոշ հանգամանքը նրա մտորումներում, ըստ եւթյան, ածանցվում է կրոնական հողի Վրա մահմեդականներին բնորոշ մոլեռանդության և քրիստոնյաների հանդեպ նրանց ատելության փաստմանը:

Բարի անտարակուսելի արժանիքներից է, սակայն, XIX դարի երկրորդ կեսին արևմտահայության կացության մանրազնին և հիմնավոր վերլուծությունը, հայերի կարծեցյալ ապստամբության վարկածի հերքումը, իսկ ինչ վերաբերում է դիվանագիտական հարաբերությունների և, մասնավորապես Հայկական հարցի ծագման

⁴⁹⁴ Նույն տեղում:

քննարկմանը, նրա մեկնաբանությունները մնում են թերի և առարկելի: Ամեն դեպքում նրա գիրքը ոչ միայն նպաստել է Հայոց ցեղասպանության շուրջ հավաստի տեղեկատվության ընդլայնմանը, այլև նշանակալից ներդրում է՝ նրա ժամանակի գիտության չափանիշների կտրվածքով, հարցի գիտական ուսումնասիրության ասպարեզում:

Ի տարբերություն Բարի՝ Հայկական հարցին լուծում տալու անհրաժեշտությանը հանգող, Հայոց ցեղասպանության հիմնական պատճառը հաջողվել է բացահայտել Մոնտորոնում բողոքական աստվածաբանության ֆակուլտետի դեկան Էմիլ Դումերգին (1844-1937): Համիդյան կոտորածների պատճությունը նա հպանցիկ քննարկել է 1916 թ. հունվարի 16-ին Փարիզում՝ Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը նվիրված հրապարակային դասախոսությունում⁴⁹⁵: Հայոց ցեղասպանության սանձազերծումը նա մեկնաբանում է Հայկական հարցի ծագման ակունքների հենքի վրա:

Նախ հայ ժողովրդի պատմական զարգացման ետնախորքի վրա՝ մի քանի անկողմնակալ հապումներով, նա ուղվագծում է Օսմանյան կայսրության կազմավորման ընթացքը: Թուրքերին բնորոշելով իբրև Կենտրոնական Ասիայի անծայրածիր անապատներից եկած հորդաների, Դումերգն իրավամբ նրանց համեմատում է Իրանի և Հայաստանի վրայով անցած փոթորկի հետ, որոնք գրավելով Կոստանդնուպոլիսը, կազմավորել են ավելի քան կայսրություն. «Նրանք ստեղծել են ասիական ռազմամոլության աշխարհը», – մանրամասնում է հեղինակը⁴⁹⁶: Ինչպես տեսնում ենք, նա ի սկզբանե ընդգծում է Օսմանյան կայսրության ռազմամոլ բնույթը, ինչի վրա և խարսխվում է նրա ամբողջ հայեցակարգը:

Դումերգը հավկուր պատշաճի բացահայտում է թուրքերի՝ իբրև Օսմանյան կայսրությունում տիրապետող ժողովրդի, օսմանյան հասարակությունում զբաղեցրած տեղի առանձնահատկությունը, այն է՝ ի վիճակի չինելով համրօգուտ աշխատանքի, նրանք գոյատևում էին քրիստոնյա հպատակներին շահագործելու միջոցով: Օսմանյան կառավարությունը բնորոշելով իբրև վատթարագույնը բոլոր կառավարությունների թվում, նա իրավամբ նշում է, որ բոլոր ոչ թուրք ժողովուրդներին, այն վերաբերվում էր իբրև «կրան կովերի» և

⁴⁹⁵ E. Doumergue, L'Arménie. Les massacres et la question d'Orient. Conférence, études et documents, Paris, 1916.

⁴⁹⁶ Նույն տեղում, էջ 6:

միայն դրանով է բացատրում թուրքերի համդուրժողականությունը քրիստոնյաների հանդեպ:⁴⁹⁷

Ինչ վերաբերում է հայերին, որոնց հեղինակն առանձնացնում է օսմանահպատակ քրիստոնյաների թվում, ապա նրանց նա հակադրում է թուրքերին, մանրամասնելով, որ եթե առաջինները ռազմամոլ են, գիտությունների, արվեստների և առևտություն չունեցող, ապա հայերն աչքի են ընկնում առևտություն ասպարեզում բացառիկ ունակություններով և խաղաղասիրությամբ, ուստի հեղափոխական տրամադրությունները նրանց քնորոշ չեն⁴⁹⁸: Դայոց ցեղապահնության պատմագրության ժխտողական ուղղության ներկայացուցիչների կողմից առ այսօր շահարկվող այս էական հիմնախնդրի շուրջ թեև Դումերգը, ի տարբերություն Բարի, սահմանափակվում է սոսկ նման ընդհանուր բնույթի դիտարկմամբ, այդուհանդերձ, դրանով հակահարված է տալիս նրանց թյուր թեզերին՝ կապված արևմտահայության կարծեցյալ հեղափոխական գործունեության հետ:

Դայկական հարցի ծագման խնդիրը Ուումերգը ուսումնասիրում է պատմական Դայաստանի բաժանման հենքի վրա, որին մեծ նշանակություն է հատկացնում: Ընդգծելով, սակայն, Արևմտյան Դայաստանի բաժանումը վեց վիլայեթի, նա հստակորեն չի մատնանշում այն պատմական հանգամանքները, այն է՝ 1555 թ. Անասիայի և 1639 թ. Կասրե-Շիրինի պայմանագրերը, որոնց հիման վրա տեղի է ունեցել Դայաստանի մասնատումը Թուրքիայի և Պարսկաստանի միջև, ինչն արդեն նրա բացրողումներից է⁴⁹⁹:

1870-ական թվականներից ի վեր սկիզբ առած և մինչև իր օրերը հարատևած միջազգային ճգնաժամի գլխավոր պատճառները, որոնք հանգեցրել են Առաջին համաշխարհային պատերազմի սանձազերծմանը, Դումերգը պայմանավորում է 1878 թ. Բեռլինի վեհաժողովի ընդունած որոշումներով: Բեռլինի պայմանագրում՝ ըստ նրա պատկերավոր համեմատության, «հազիվ տեսանելի տառերով դևն ուրվագծել էր 1876-1916 թթ. իրադարձությունների ամբողջ ծրագիրը»⁵⁰⁰: XIX դարի վերջին տասնամյակներում միջազգային հարաբերությունների ընթացքը քննարկելով նման խիստ նեղ տեսանկյունից, ինչը մեր կողմից անընդունելի է (պայմանագիրը չեր

⁴⁹⁷ Նույն տեղում, էջ 7:

⁴⁹⁸ Նույն տեղում, էջ 8-9:

⁴⁹⁹ Նույն տեղում, էջ 8:

⁵⁰⁰ Նույն տեղում, էջ 11:

ուրվագծում հակամարտ դաշինքների ձևավորումը Եվրոպայում), նա համեմատական քննության է ենթարկում մի կողմից՝ Սան-Ստեֆանոյի «արդարության և ազատագրման», ինչպես նաև «Ռուսաստանի համար խիստ շահավետ» և մյուս կողմից՝ Բեռլինի «անարդար ու նողկալի» պայմանագրերը: Դումերգը թեև, ըստ էության, չի մեկնաբանում դրանցուն ամփոփված՝ հայ ժողովրդի ճակատագրին առնչվող հոդվածների գանազանությունը, այդուհանդերձ, բավարպում է առնվազն այդ էական հանգամանքին առնչվող հպանցիկ ակնարկով, մատնանշելով, որ Վերջինն անվավեր էր դարձնում Ռուսաստանի ստանծնած բոլոր պարտավորությունները⁵⁰¹: Ըստ այդմ, այս պարագայում, միանգամայն իրավամբ նա եզրակացնում է. «Թուրքիան փրկված էր»⁵⁰²:

Միջազգային ասպարեզում իրադարձությունների ժավալնան՝ Դումերգի հայեցակարգի հիմնական առանցքը մեծ տերությունների՝ բարենորոգումների իրականացման հարցուն օսմանյան կառավարության հանդեպ վերահսկողության սահմանման հիմնախնդիրն է: Նա իրավամբ մեծ նշանակություն է հատկացնում Բեռլինի պայմանագրով Եվրոպական պետությունների ստանծնած պարտավորություններին, այն է՝ սուլթանի ներքին գործերի նկատմամբ վերահսկողության սահմանմանը, որը կանխորոշել է տերությունների և Օսմանյան կայսրության փոխարարերությունների զարգացման ընթացքը, և ըստ նրա մեկնաբանության՝ Վերածվել Թուրքիայի համար ստորացուցիչ իրողության: Ակնհայտորեն չափազանցնելով հոգեբանական այս գործոնի նշանակությունը և անհարկի խտացնելով գույնները, Դումերգը տերությունների վերահսկողության սահմանումն անիրավացիորեն ներկայացնում է իբրև սադրանք, ինչը համահունչ է նրա հայեցակարգին: Իրականում, սակայն, մեծ տերությունների՝ Օսմանյան կայսրության ներքին գործերին միջանտելու և վերահսկողություն սահմանելու հեռանկարը, անտարակույս, շիկացրել է մթնոլորտն օսմանյան պետության ղեկավար շրջանակներում, բորբոքել սուլթանի և նրա համախոհների կրթերը, նեծապես նպաստել երկրում ազգայնանոլության վերելքին: Այդուհանդերձ, մեր համոզմամբ, դրանից նման ծայրահեղ չափազանցված հետևության հանգելն աննպատակահարմար է: Առավել ևս Դումերգի իսկ ուրվագծած՝ կայսրությունում տիրող իրավիճակի ետնախորքի վրա, վերահսկողության սահմանումը կարելի է գնահատել ոչ թե իբրև

⁵⁰¹ Նույն տեղում:

⁵⁰² Նույն տեղում:

սաղրանք, այլ սուկ 1880-1890-ական թվականներին գերլարված իրավիճակի առաջացման շարժառիթ:

Ինչպես ցույց տվեց իրադարձությունների զարգացման հետագա ընթացքը, արևմտահայության հանդեպ տերությունների ստանձնած պարտավորվածությունները, հիրավի, կրում էին ձևական բնույթ: Միայն այս առումով արդեն կարելի է համաձայնվել նրա հիմնական հետևություններից մեկի հետ, ըստ որի՝ Բեռլինի պայմանագիրը լինելով ավելին, քան սխալ՝ «հանցանք էր»⁵⁰³: Սասնավորապես արևմտահայության համար այն, իրոք, ունեցել է ճակատագրական նշանակություն, ինչը փաստել է նաև հեղինակը. «Դայաստանի և աշխարհի վիճակը նետված էր»⁵⁰⁴:

Դումերգը, սակայն, ոչնչով չի հիմնավորում մեծ տերությունների՝ Դայկական հարցում իրականացրած անտարբեր քաղաքականության պատճառները և, ըստ էության, խուսափում է արևմտահայության ճակատագիրը կանխորոշած, մասնավորապես Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման վարդապետությանը հավատարիմ մնալու դրանց ղեկավար շրջանակների անսասան ցանկության մեկնաբանությունից:

Դումերգի առաջադրած՝ Դայկական հարցի վերլուծությունների կապակցությամբ նախ հարկ ենք համարում նշել, որ նա չի մանրամասնում դրա ծագման հանգամանքները: Փոխարենը, ելնելով իր հայեցակարգից, նա ծավալվում է Աբդուլ Ջամիդի՝ Եվրոպական տերությունների վերահսկողությունից և ըստ այդմ՝ հետագա ստորացումներից ու սպառնալիքներից ծերբազատվելու մտադրության շուրջ և միայն այս առնչությամբ արդեն առաջին անգամ հիշատակում «Դայկական հարցի» գոյության մասին, որի լուծման «ամենահուսալի միջոցը», ինչպես նա մեկնաբանում է՝ ըստ սուլթանի հոգեբանության, հանգում էր հայերի ոչնչացմանը⁵⁰⁵: Թեև նրան հասու է, ինչպես տեսնում ենք, Դայոց ցեղասպանության գլխավոր պատճառը, այդուհանդերձ, նույնիսկ այս պայմաններում, նա այն, ըստ էության, հիմնավորապես չի մեկնաբանում: Արդյունքում, ժամանակաշրջանի պատճությանն անիրազեկ պատճաբանի համար մնում է անհասկանալի, թե ի՞նչ հանգամանքներում է ծագել Դայկական հարցը և առավել ևս ի՞նչ է այն իրենից ներկայացրել, քանզի այս

⁵⁰³ Նույն տեղում:

⁵⁰⁴ Նույն տեղում:

⁵⁰⁵ Նույն տեղում, էջ 11-12:

խնդիրների շուրջ արդեն նա գերադասում է ձեռնպահ մնալ մեկ-նաբանություններից:

Ինչ վերաբերում է Յայոց ցեղասպանության սանծագերծմանը, հեղինակը սուսկ հպանցիկ հիշատակում է Աբդուլ Ղամիդի նախապատրաստական միջոցառումների, մասնավորապես 1891 թ. համիդիե զորամիավորումների կազմավորման մասին, որոնց անդամներին անվանում է «յաժան կողոպտիչներ», մանրամասնելով, որ սուլթանը նրանց շնորհել էր արտօնություններ, իսկ նրանց զոհերին գրկել նույնիսկ «բողոքելու իրավունքից»⁵⁰⁶:

1894 թ. սուլթանի կարգադրությամբ տեղի ունեցած Սասունի կոտորածի մասին ևս հեղինակը հիշատակում է թռուցիկ⁵⁰⁷: Դրան հաջորդած Եվրոպական պետությունների միջամտությանն առնչվող նրա դիտարկումները խիստ մակերեսային են: Այս կապակցությամբ, սակայն, ցանկանում ենք մեր համաձայնությունը հայտնել նրա հիմնական մեկնաբանություններից մեկի հետ, ըստ որի՝ այդ միջամտությունն ընդամենն արագացրել է սուլթանի ծրագրի իրականացումը և նպաստել 1895 թ. հայկական վեց վիլայեթում կոտորածների ծավալմանը⁵⁰⁸:

Ինչպես տեսնում ենք, Յայոց ցեղասպանության պատմության խնդիրների թվում Դումերզն ուշադրությունը կենտրոնացնում է գլխավորապես մեծ տերությունների միջամտության հանգամանքի վրա: Կոտորածների առնչությամբ նա սահմանափակվում է սոսկ մի քանի, սակայն, խիստ կարևոր մանրամասների թվարկմամբ: Նա պարբերաբար, այդ թվում, ըստ Լեփսիուսի տվյալների՝ փաստում է սուլթանի ղեկավար դերը, և դրանով իսկ առնվազն ակնարկում Յայոց ցեղասպանության իրականացումը պետական քաղաքականության մակարդակով⁵⁰⁹: Այստեղ հարկ է, անտարակույս, մեկնաբանել, որ իրադարձությունների մանրամասների մեջ թափանցելը Դումերզի խնդիրներում նույնիսկ չի ընդգրկվել: Նա հավաստի տվյալներ չի ունեցել անգամ 1894-1896 թթ. արևմտահայության գոհերի քանակի շուրջ, այն պարփակելով 200000-ի սահմանում⁵¹⁰: Ինչ վերաբերում է կոտորածների առնչությամբ Եվրոպական տերությունների, ըստ եռթյան, դիտորդի դերում հանդես գալուն խիստ

⁵⁰⁶ Նույն տեղում, էջ 12:

⁵⁰⁷ Նույն տեղում:

⁵⁰⁸ Նույն տեղում, էջ 13:

⁵⁰⁹ Նույն տեղում, էջ 14:

⁵¹⁰ Նույն տեղում, էջ 15:

բնորոշ կեցվածքին, հեղինակը բավարարվում է քննադատական մի քանի աննշան դիտարկումներով⁵¹¹:

Չնայած ընդհանուր բնույթի դիտողություններին և հաճախ ոչ սպառիչ մեկնաբանություններին, Դումերգին, այդուհանդերձ, հաջողվել է ցուցաբերել Վերլուժական մոտեցում, բացահայտել Արդուլ Շամիդի՝ Շայկական հարցում որդեգրած քաղաքականության էլի-թյունը և հանգել թեպետ ոչ ընդգրկուն, այդուհանդերձ, ընդհանուր առմանք, անկողմնակալ և իրատեսական հետևողական հետևողական հետևողական հետևողական:

Դումերգի դասախոսությանը, ի դեպ, նախորդել է, մեզ հետաքրքրող կտրվածքով և գիտական նշանակության առումով նվազ կարևոր՝ ժողեֆ Դենեի, 1908 թ. երիտթուրքական հեղափոխությանը հաջորդած ժամանակաշրջանում Թուրքիայում տեղի ունեցող խմորումներին նվիրված, 1908 թ. մարտի 8-ին Փարիզում կայացած՝ «Նոր Թուրքիան և իին վարչակարգը» իրապարակային դասախոսությունը, որի ընթացքում նա մակերեսայնորեն քննարկել է նաև 1894-1896 թթ. կոտորածների պատմությանն առնչվող որոշ խնդիրները⁵¹².

Դեղինակն ավելի, քան Դումերգը խուսափում է իրադարձության մանրամասների մեջ թափանցելուց, ինչը նրա հիմնական խնդիրների մեջ ամենակին չի ընդգրկվել: Այդուհանդերձ, իմաստ ունի ծանրանալ նրա որոշ մեկնաբանությունների վրա: Դենեի մոտեցման հիմնական արժանիքը Շայոց ցեղասպանության առաջին փուլի իրականացման փաստումն է պետական քաղաքականության մակարդակով: Նա հղում է առ այդ օսմանյան կենտրոնական իշխանությունների, մասնավորապես Պալեի դեկավար դերն արևմտահայության բնաջնջման գործընթացում բացահայտող տարրեր հավաստի փաստեր⁵¹³:

Շայոց ցեղասպանության սանձազերծման պատասխանատվությունը Դենեն իրավամբ բարդում է օսմանյան պետության դեկավարների վրա, որոնք հղացել են արևմտահայության ոչնչացման ծրագիրը: Միաժամանակ, սակայն, նա ամբողջությամբ չի բացահայտում թուրքերի և քրդերի մասնակցությունն այդ իրադարձությանը և նսեմացնում է ցեղասպանության գործընթացի վրա իր էական դրոշմը թողած՝ պետության կողմից իրահրվող՝ վերջիններիս կրո-

⁵¹¹ Նույն տեղում, էջ 16:

⁵¹² J. Denais, *La Turquie nouvelle et l'Ancien régime. Conférence faite par M. Joseph Denais à Paris le 17 novembre 1908. Annotée le 8 mars, Paris, 1909.*

⁵¹³ Նույն տեղում, էջ 21:

նական մոլեռամդության նշանակությունը, ինչն արդեն բացահայտ շեղում է պատճական իրականությունից և անընդունելի է: Մատնանշելով կայսրության տարբեր Վայոթրում արձանագրված մահմեդականների՝ հայերին ցուցաբերած օժանդակությանն առնչվող փաստեր, որոնք անառարկելիորեն վկայում են գրասիրու մահմեդականների՝ իրենց դավանանքը չընդունող անձանց ցուցաբերած օգնության մասին⁵¹⁴, նա, ըստ այդ, նրանց բնորոշ մոլեռամդությունը, հանիրավի, բնորոշում է ընդամենն իբրև «կարծեցյալ»⁵¹⁵: Հարկ է նշել, որ այս պարագայում Ղենեն անտեսում է մահմեդականների կրոնական մոլեռամդությանն առնչվող՝ ֆրանսիական բազմաթիվ փաստաթրերի ժողովածուներում, այդ թվում «Ղեղին գրքում», հրապարակված անհանար արժանահավատ փաստերը, որոնց նա, հավանաբար, չէր կարող անտեղյակ լինել: 1890-ական թվականների պատմությունը Ղենեն մեկնաբանում է իրականությանն ամենևսին չիամապատասխանող այս հենքի վրա:

Սակայն, պետական քաղաքականության մակարդակով Հայոց ցեղասպանության իրականացման փաստը հավաստող Ղենեի՝ որա հետ մեկտեղ առաջադրած՝ պատմական իրականությանը հակասող, նման անընդունելի մեկնաբանության առնչությամբ հարկ է հաշվի առնել այն պատմական ժամանակաշրջանը, երբ նա հանդես է եկել այս գեկուցմամբ: Երիտթուրքական հեղափոխության արդյունքում՝ 1876 թ. օսմանյան սահմանադրության վերահաստատումից հետո, նա, ինչպես և իր ժամանակակիցները, անտարակույս, մեծ հույսեր է կապել, մասնավորապես կայսրության քրիստոնյա հպատակներին ազատություններ հատկացնելու առնչությամբ՝ երիտթուրքերի շրայլած սին խոստումների հետ: 1908 թ. հեղափոխությունից հետո մահմեդական ժողովուրդների և, մասնավորապես թուրքերի՝ քրիստոնյաների հետ խաղաղ գոյակցելու անիրատեսական հեռանկարն իրադրության լուսաբանման խնդրում նրան կարող էր միայն ապակողմնորոշել և, մեր կարծիքով, դարձել է մահմեդականների մոլեռամդության՝ ցեղասպանության իրականացման վրա թողած դրոշմի ոչ սպառիչ գնահատման հավանական պատճառներից: Բացի դրանից, հարկ չկա անտեսելու ևս մեկ հնարավոր պատճառ, որը ևս սերտորեն առնչվում է 1908 թ. հեղափոխության հոչակած՝ կայսրության ժողովուրդների թեական իրավահավասարությանը: Չի բացառվում, որ հաշվի առնելով ստեղծված նոր իրավիճակի

⁵¹⁴ Նույն տեղում, էջ 20, 21:

⁵¹⁵ Նույն տեղում, էջ 18:

առանձնահատկությունները, նման կողմնակալ մոտեցում Դենեն ցուցաբերել է գիտակցաբար՝ հայերի և երիտրուրքերի միջև հաշտության եզրերի հաստատմանը նպաստելու մտադրությամբ:

Դայոց ցեղասպանության գործընթացին հպանցիկ, սակայն, հիշարժան գնահատականներ են տվել ֆրանսիացի լրագրող՝ իբրև «Ժուրնալ» թերթի գինվորական թղթակից 1916 թ. Արևմտյան Դայաստանի տարրեր քաղաքներ (Երզրում, Տրավիզոն, Երզնկա, Վան) այցելած և իրադարձությունների ականատեսը դարձած Անրի Բարբին⁵¹⁶:

1915 թ. Մեծ Եղեռնին առնչվող խնդիրները Բարբին քննարկում է հայ ժողովրդի անցած ուղղությունը կրա, օսմանյան բռնակալության ներքո վաղուց ի վեր հեծող Արևմտյան Դայաստանի պատմությունը բնորոշում իբրև «Երկարատև ու ողբերգական նահատակություն»⁵¹⁷, ինչը կարելի է համարել նրա դիրքորոշման անկյունաքարդ: Թեպետ Բարբին հիշատակում է տարրեր ասպատակիչների՝ Դայաստանին տիրելու համար մղած պայքարի մասին, սակայն, անտեսում է հայ ժողովրդի կյանքում ճակատագրական նշանակություն ունեցած՝ XVI դարում Դայաստանի մեծ մասի ռազմակալումը թուրքերի կողմից: Այդուհանդերձ, նա հպանցիկ ակնարկում է Դայաստանի բռնագրավման մասին, մատնանշելով դարեր ի վեր օսմանյան լծի ներքո հեծող արևմտահայության թշվառ վիճակն «այն երկրում, որը եղել է իրենց (ընդգծումը հեղինակինն է - Վ. Պ.) երկիրը»⁵¹⁸:

Ըմբռնելով XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ ժողովրդի համբեապ օսմանյան պետության կիրառած ցեղասպան քաղաքականության ակունքները, Բարբին հայ ժողովրդի բնաշնչման գործընթացի վրա նետում է հետադարձ հայացք և ջանում այն քննարկել իր ամբողջության մեջ, ինչն ինքնին ողջախոհ մոտեցում է: Դայոց ցեղասպանության նախակարապետ և մտահղացող նա իրավամբ համարում է Արքուլ Յամիդ II-ին, որը 1878 թ. իետո, ի թիվս այլ հանգամանքների (Արևմտյան Դայաստանի և Ողուսաստանի հարևանությանը, որտեղ բնակվող հայերի վիճակն անհամենատ բարվոք էր, բալկանյան ժողովուրդների օրինակով՝ օսմանյան լծի թոթափնանը միտված ազատագրական շարժման զարգացման հեռանկարը),

⁵¹⁶ H. Barby, Au pays de l'épouante. L'Arménie martyre. Préface de M. Paul Deschanel, Paris, 1917.

⁵¹⁷ Նույն տեղում, էջ 6, 114:

⁵¹⁸ Նույն տեղում, էջ 112:



Նոլայ Գոգոլ



Ալքոնս Սիլիեր



Գուստավ Սեյրիե




Գուստավ Սեյրիեի ընտանիքը
Դիարբեքիրում




Ալբեր Վանդալ



Ամասոս Լեզուա-Բոլին



Գարրիել Հանոստ



Ժան Ժորե



Պիետր Բիան

Pro Armenia

Rédacteur en chef :

Pierre QUILLARD

ADVISER

tout ce qui concerne la question
à M. Pierre Quillard

10, rue Nollet, Paris

ABONNEMENTS :

one 8 ⁿ
two 10 ⁿ
number 0 25

paraissant le 10 et le 25 de chaque mois

COMITÉ DE RÉDACTION :

G. Clemenceau, Anatole France, Jean Jaurès

Francis de Pressensé, E. de Roberty

Secrétaire de rédaction :

Jean LONGUET

Mardi et Vendredi

de 11 h. à midi, 17, rue Guise

ADMINISTRATION :

Société nouvelle de Librairie

et d'édition

(Edmond G. BELLARD)

17, rue Guise, PARIS

TELEPHONE : 301-084

SOMMAIRE

Déclaration
Pro Armenia.
Le Main Sanglant.
Le Tsar et les Arméniens.
L'Arménie devant les Grands
Nouvelles d'Orient.

La Rédition.
 P. Quillard.
 G. Clemenceau.
 F. de Pressensé.
 Jean Longuet.
 P. O.

Nous publierons dans les prochaines numéros des articles d'*Anatole France, Jean Jaurès, Edmond de Roberty, Emile Vandervelde, Emile Ferry, etc.*

Les grands massacres de 1894, 1895, 1896 exécutés par les ordres du sultan Abd-ul-Hamid et qui firent plus de trois cent mille victimes commencent à peine à être connus en Europe dans tous leurs détails; et si récents, ils seraient déjà oubliés et relégués au rang de catastrophes historiques, si l'on voulait suivre les conseils de diplomates à courte mémoire.

Cependant depuis lors, l'extermination méthodique de la race arménienne se poursuit par des moyens plus lents, mais aussi sûrs; et en présence de l'universelle lâcheté, l'auteur des premiers crimes médite de parfaire son œuvre et de déchaîner à nouveau en Anatolie l'assassinat, le pillage, le viol et l'incendie.

Avec le concours d'illustres collaborateurs français et étrangers, nous dénoncerons les atrocités commises et nous rappellerons à l'Europe, sans nous lasser, qu'elle a de par les traités des droits à exercer contre le Grand Assassin, des devoirs à remplir envers les victimes de sa folie.

Il ne s'agit point de réveiller ici l'esprit de croisade ni d'exciter la haine de l'une des races ou des religions qui vivent ou sont professées sur le territoire ottoman.

Mais si nous sommes prêts à divulguer tous les atterrants du Sultan contre chacun des peuples que la mauvaise fortune fit ses sujets, nous nous attachons plus spécialement aux souffrances arméniennes,

parce qu'elles excèdent infiniment toutes les autres;

parce que c'est pour une race entièrement intelligente et apte à recevoir la civilisation occidentale, une question de vie ou de mort immédiate;

parce que, pratiquement, l'Europe est armée, par le traité de Berlin, pour mettre fin à ces horreurs et préparer ainsi la régénération de la Turquie tout entière.

LA RÉDACTION.

Pro Armenia

Quand au mois de novembre 1894, des dépêches adressées de Varna à la presse anglaise annoncèrent pour la première fois les horreurs de Sasoun, le sultan Abd-ul-Hamid nia d'abord le crime commis par son ordre; et dans toute l'Europe les journaux à ses gages attribuèrent à l'imagination malaisante de nouvelles sans scrupules les viols, les mutilations, les incendies, les massacres opérés par les soldats réguliers, les Kavades et les réguliers hamidiés, si justement décorés du nom de leur maître et choisis parmi l'élite des bandits et des égorgeurs.

L'enquête tardive entreprise en plein hiver par trois délégués: un français, un russe et un anglais, démontra surabondamment que le criminel responsable habitait le palais d'Yıldız et qu'il


n'avait fait que payer une dette en décernant l'ordre impérial du Liakat à son fidèle serviteur Zekhi-Pacha, commandant du 4^e corps d'armée. Cependant on continua à négocier avec le Sultan Rouge, et le temps lui fut laissé de préparer à loisir les grandioses tueries de 1895 et de 1896 où il supprima trois cent mille ARMÉNIENS. Il semblait qu'il eût dépassé la mesure, et l'un de ses plus fidèles complices, M. Gabriel Hanotaux se crut obligé de l'en avertir respectueusement par l'intermédiaire de notre ambassadeur à Constantinople.

Il serait désirable que vous cussiez le plus tôt possible un entretien particulier avec le Sultan. Vous lui ferez connaître l'effet produit en France sur la Chambre et sur l'opinion par les révélations qui viennent d'avoir lieu à la Chambre au sujet des massacres d'Arménie.

Il est de la plus haute urgence que le Sultan prenne de lui-même l'initiative des mesures qui peuvent donner satisfaction à un mouvement d'opinion qui tourne contre lui. Tout le monde en Europe est unanime: qu'on ne verse plus une goutte de sang (1).

La dépêche de M. Gabriel Hanotaux est datée du 4 novembre: le lendemain 5 avait lieu le massacre d'Everek, près de Césarée. Et depuis lors, sachant quel compte il pouvait faire sur l'ignominieuse lâcheté des gouvernements européens dont le silence se paie en concessions de chemins de fer et de mines, et en déco-


(1) *Livre Jaune, Affaires arméniennes, 1897.*
n° 285.



Անատոլ Ֆրանս



Սևերին



Վիկտոր Բերար




Ժորժ Կլեմանս



Ալբեր դը Օրսি



Նինո Շորժանիա



Գևանի ჭიჭეძე



Հայր Ֆելիքս Շարմետան

ահաբեկված, մասնավորապես Եվլոպայի՝ Օսմանյան կայսրության ներքին գործերին նոր միջամտության հեռանկարից, «Վայրենի տրամաբանությամբ» վճռել է ոչնչացնել, ըստ իր հոգեբանության և համոզման՝ Վտանգավոր թվացող տարրին⁵¹⁹:

Իրատեսական համարելով հարցի նման մեկնաբանությունը, հարկ է, այդուհանդերձ, ելնելով Բարբիի շարադրանքից, հավատել, որ Դայոց ցեղասպանության պատճառների նրա վերլուծությունը սպառիչ չէ, քանզի հեղինակը շրջանցում է Դայկական հարցի գոյության իսկ փաստը: Այլ խոսքերով՝ նա ամբողջությամբ չի ըմբռնել ցեղասպանության կյանքի կոչման գերխնդրի՝ օսմանյան գահակալի առջև ծառացած Դայկական հարցին թուրքական եղանակով լուծում տալու եռթյունը: Այնուամենայնիվ, Բարբին անդրադառնում է 1877-1878 թթ. պատերազմին հաջորդած ժամանակաշրջանում դիվանագիտական բանակցությունների ընթացքում արևմտահայության կացության բարելավման հետ կապված քննարկումներին և քննադատական խոսքեր ուղղում մեծ տերությունների հասցեին, որոնք ոչինչ չեն ծեռնարկել հայ ժողովորի հանդեպ ստանձնած «հանդիսավոր պարտականություններն» ի կատար ածելու ուղղությամբ⁵²⁰:

Դայոց ցեղասպանության պատմության վերլուծության հարցում Բարբիի հայեցակարգը, ըստ որի՝ այն հարկ է դիտել իրեւ շարունակական բնույթ կրող իրադարձություն, ընդունելի է: Միանգամայն իրավամբ նա առանձնիատուկ ուշադրություն է դարձնում այն հարցին, որ իշխանության գալուց հետո երիտրութերը սուսկ շարունակել են կենսագործել իրենց կողմից գահընկեց արված Աբդուլ Շամիդ II-ի մտահղացած՝ հայերի բնաջնջման ծրագիրը⁵²¹, ինչի մասին վկայում են 1909 թ. Աղանայի կոտորածները: Սակայն ինչն ավելի կարևոր է, մեր կարծիքով, Բարբիի կողմից Դայոց ցեղասպանության գործընթացի շարունակական բնույթի ընդգծումն է համիդյան «սարսափելի վարչակարգին» հաջորդած երիտրութերական իշխանությունների սանձազերծումը⁵²²:

⁵¹⁹ Նույն տեղում, էջ 7-9:

⁵²⁰ Նույն տեղում, էջ 7:

⁵²¹ Նույն տեղում, էջ 13:

⁵²² Բարբիի գրքի մասին մանրամասն տե՛ս Վ. Պողոսեան, Դայոց ցեղասպանության ընկալումը Անրի Բարբիի կողմից.— «Դամիես ամսօրեայ», 2007, թիվ 1-12, էջ 335-362:

Դայոց ցեղասպանության գործընթացի շարունակական բնույթը փաստել է նաև ֆրանսիացի արևելագետ, հնագետ ժակ Մորգանը (1857-1924): Թոռուցիկ անդրադառնալով 1894-1896 թթ. կոտորած-ներին՝ նա պարբերաբար շեշտում է դրանց իրականացումն Արդու Դամիդի կողմից պետական քաղաքականության հիման վրա⁵²³: Լինելով 1896 թ. Կոստանդնուպոլիսում տեղի ունեցած հայերի կոտորածի ականատեսը, Մորգանն այն ոչ միայն բնորոշում է իրուն «սարսափելի սպանդ», այլև ընդգծում հայերի ոչնչացումը՝ ըստ Վաղօրոք նախապատրաստված ծրագրի, այլ կերպ ասած՝ կանխամտածվածության հիման վրա⁵²⁴: Ծրջանցելով Դայոց ցեղասպանության պատճառների քննարկումը, նա բավարարվում է սոսկ իրադարձության սանձազերծումը «Դայաստանի քաղաքական վերածնունդն» անհնարին դարձնելու սուլթանի մտադրությամբ պատճառաբանելով⁵²⁵: Ինչ վերաբերում է Մորգանի առաջադրած մեկնաբանությանը, ապա նման հարցադրումը, հիրավի, կարող էր Արդու Դամիդի մոտ ծնունդ առնել և նրան մեծ անհանգստություններ պատճառել: Միաժամանակ, հարկ է նաև հաշվի առնել, որ 1870-1880-ական թվականներին, ըստ եռության, քննարկվում էր արևմտահայության համար բարենորդումների իրականացման խնդիրը, հարց, որն արդեն Մորգանը հավուր պատշաճի չի բացահայտում:

Ինչպես և 1890-ական թվականներին, այս ժամանակաշրջանում ևս Դայկական հարցի և Դայոց ցեղասպանության առաջին փուլի պատմությանն առնչվող խնդիրներին անդրադարձել են նաև որոշ իրավաբաններ, որոնք արևմտահայության ճակատագրին առնչվող հիմնահարցերը վերլուծել են միջազգային հարաբերությունների հենքի վրա: Սեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականությանը նվիրված գրքում համառոտակի քննարկել է նաև Դայկական հարցի

⁵²³ J. de Morgan, *Essai sur les nationalités*, Paris-Nancy, 1917, p. 84, 92, 94; Առևմի՝ *Contre les barbares de l'Orient*, Paris-Nancy, 1918, p. 28.

⁵²⁴ J. de Morgan, *Contre les barbares de l'Orient*, p. 27.

⁵²⁵ J. de Morgan, *Essai sur les nationalités*, p. 94.

պատմությունը՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Շուսաստանի հակամարտության հոլովույթում⁵²⁶:

Առանց խորամուխ լինելու հայկական կոտորածների պատմության մանրամասներում, Լենոնոնն ուշադրությունը քենում է նասնավորապես 1890-ական թվականներին ։ Յայկական հարցում նեժ տերությունների շահերի բախնան ուսումնասիրության վրա՝ ցուցաբերելով ակնհայտ միտումնավոր մոտեցում: Նրա հիմնական նպատակը Ֆրանսիայի արտաքին արևելյան քաղաքականության հիմնավորումն է և ջատագովումը, մասնավորապես Օսմանյան կայսության տարածքային ամբողջականության պահպաննան հարցում:

Տուրք տալով, ըստ այդմ՝ ծայրահեղությունների, հեղինակը մեծապես չափազանցնում է Անգլիայի արտաքին քաղաքականության բացասական հետևանքները Սերծավոր Արևելքում, ինչը միանգանյան համահունչ է պատմական այս ժամանակաշրջանում ։ Ֆրանսիական պատմագրության ընդհանուր ոգուն: Յայկական հարցում Անգլիայի քաղաքականության մեկնաբանության ասպարեզում Լենոնոնի ընդգծված միակողմանի ողբերոշումը որսկողվում է երկու հիմնական կտրվածքներով: Անթաքույց շեղվելով պատմական իրականությունից, նա նախ մեծապես գունազարդում է «մշուշապատ Ալբիոնի» շահագրգուվածությունն արևմտահայության համար նախատեսվող բարենորոգումների իրականացման հարցում: 1878 թ. հունիսի 4-ի պայմանագրի կապակցությամբ հեղինակը պնդում է, որ Յայաստանում նախատեսվող բարենորոգումների հարցը Սեծ Բրիտանիան իբր վերածել էր «անգլիական գործի», քանզի միջազգային պայմանագրերը նրան ընձեռել են բացառիկ հնարավորություն ։ Յայաստանոր հիմնավորապես իր ազդեցության ոլորտում ընդգրկելու հանար՝⁵²⁷: Այս խիստ չափազանցված հետևությամբ հեղինակը ցանկանում է առարկայական դարձնել Սեծ Բրիտանիայի կարծեցյալ նպատակը, այն է՝ Օսմանյան կայսրության տարածքում իրավիճակի գերլարումը, ինչն ակնհայտ կդարձներ Արդուլ Յամիդ II-ի թուլությունը և հնարավորություն կընձեռեր բրիտանական կառավարությանը հիմնավորելու սուլթանի ներքին գործերին զինված ճանապարհով միջամտելու նպատակահարմարությունը, ինչն «Անգլիային թվում էր անհրաժեշտ»⁵²⁸:

⁵²⁶ E. Lémonon, L'Europe et la politique britannique (1882-1911), deuxième édition, revue et corrigée, Paris, 1912. Գրի առաջին իրատարակությունը լույս է տեսել 1909 թ.:

⁵²⁷ Նույն տեղում, էջ 152:

⁵²⁸ Նույն տեղում, էջ 154:

Բրիտանական կառավարության արևելյան քաղաքականության գնահատման հարցում Լենոնոնի վերջնական խնդիրն է Անգլիային՝ իբրև Օսմանյան կայսրության տրոհման կողմնակցի անարդարացիորեն ներկայացնելը, ինչը պայմանավորված է Անգլիայի կողմից Եգիպտոսի բռնագրավմամբ⁵²⁹:

Իր համոզմամբ, Ֆրանսիայի ռազմավարությանն անհարի՛ Անգլիայի քաղաքականությանը նա հակադրում է Երրորդ հանրապետության և Ռուսաստանի դեկավար շրջանակների՝ իր համոզմամբ խոհեմ քաղաքականությունը, որոնք հետաձուտ լինելով Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման վարդապետությանը, սուլթանին խորհուրդ էին տալիս վարել «զգույշ և չափավոր» քաղաքականություն, իրականացնել բարենորոգումներ և լիցքաթափել իրավիճակը: Լենոնոնը դրվատում է Անգլիայի գինված միջամտությունը խափանելու խնդրում Դանուտոյի ջանքերը, որն Օսմանյան կայսրության ներքին գործերին չնիշամտելու սկզբունքին հավատարիմ⁵³⁰, այդուհանդերձ, սուլթանի վրա ունեցած իր ազդեցությամբ՝ պարտադրել է նրան դիմել հայերի օգտին գիշումների, ինչահիսին է օրինակ համընդիանուր ներման շնորհումը⁵³¹:

Միջազգային հարաբերությունների պատմությանն առնչվող հիմնախնդիրները Լենոնոնը քննարկում է ընդգծված միտումնավոր դիրքերից, շրջանցում արևմտահայության համար կործանարար հետևանքներ ունեցած Ֆրանսիայի թքամետ քաղաքականության հետևանքները, ինչը չի նպաստում իրադարձությունների շուրջ հավաստի պատկերացումների ծևակորմանը: Դա պայմանավորված է առաջին հերթին Ֆրանսիայի արտաքին քաղաքականությանը հիմնավորում տալու անհրաժեշտությամբ: Միաժամանակ, նրա շարադրանքում ակներևաբար իրենց գգալ են տալիս XIX դարի վերջի և XX դարի սկզբի ֆրանսիական պատմագրությանը բնորոշ հակաանգլիական միտումները:

Դայկական հարցի և Դայոց ցեղասպանության պատմության որոշ հիմնախնդիրներ վերլուծել է նաև մեկ այլ իրավաբան (դատապահտան)՝ Ֆրանսուա Սուլըբեգիմ՝ 1911 թ. Մոնպելիեի համալսարանում պաշտպանած՝ «Դայաստանի գործերը և Եվրոպական տե-

⁵²⁹ Այդ մասին մանրամասն տե՛ս գրքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում:

⁵³⁰ Այդ մասին և մանրամասն տե՛ս նույն տեղում:

⁵³¹ Այդ մասին տե՛ս Décret. Réformes en Arménie.— Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 155:

րությունների միջամտությունը (1894-1897 թթ.)» դոկտորական ատենախոսությունում⁵³²: Դիմնվելով գլխավորապես «Դեղին գրքում» ամփոփված վավերագրերի վրա, հեղինակն անկողմնակալ դիրքեռից քննարկում է Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության առաջին փուլի պատմությանն առնչվող մի շարք էական հիմնախնդիրներ, իրու իրավաբան՝ շեշտը դնելով Եվրոպական տերությունների որդեգրած քաղաքականության նեկնարանության վրա՝ իր ժամանակի միջազգային իրավունքի չափանիշների կտրվածքով:

Սուրբեզին նախ համառոտակի անդրադառնում է հայ ժողովրդի պատմական անցյալին, Հայաստանի ռազմակալմանը թուրքերի կողմից, ինչի հետևանքով հայերին վիճակվել է հեծել օսմանյան լծի տակ: Թվարկելով օսմանահպատակ հայերի հարստահարմանը Վերաբերող փաստեր, նա ոչ միայն նրանց կացությունն է բնորոշում իրու ողբալի, այլև պարզորոշ ընդգծում է հայերի համար ստեղծված նման իրավիճակի առկայությունն «իրենց սեփական երկրում» (ընդգծումը մերն է - Վ. Պ.), դրանով իսկ մեկ անգամ ևս ակնարկելով պատմական Հայաստանի ռազմակալման փաստը: Սուրբեզին, սակայն, հանդես չի գալիս սոսկ իրադարձությունների դիտորդի դերում: Հաշվի առնելով հայ ժողովրդի պատմական զարգացման առանձնահատկությունները, արևմտահայության և արևելահայության անցած ուղու վրա հետադարձ հայացք նետելու արդյունքում, նա 1878 թ. հայկական որոշ տարածքների՝ Օսմանյան կայսրության կողմից Ռուսաստանին գիշելու առնչությանը, ելնելով հայ ժողովրդի անվտանգության շահերից, իր կարծիքն է հայտնում Հայաստանի՝ Ռուսաստանի կազմում ընդգրկվելու նպատակահարմարության շուրջ:

1880-ական թվականներին հայկական զարթոնքի կապակցությամբ ևս Սուրբեզին ցուցաբերում է նույնքան անկողմնակալ նոտեցում, հավաստելով, որ հայերը ցանկանում էին սոսկ իրականության վերածել ըստ Բեռլինի վեհաժողովի պայմանագրի՝ Բարձր Դաշնակության պարտականությունները, կապված իրենց իրավիճակի բարելավման հետ: Ի տարբերություն Հայոց ցեղասպանության պատմության՝ իր ժամանակակից ֆրանսիացի Կեղծարարների, նա հնչակյան կուսակցության անդամներին չի հանդիմանում Օսմանյան կայսրությունում ազգամիջյան խռովություններ իրահրելու համար: Նրանց գործունեությունը Սուրբեզին մեկնաբանում է երկու՝

⁵³² F. Surbezy, Les affaires d'Arménie et l'intervention des puissances européennes (de 1894 à 1897) <http://www.imprescriptible.fr/documents/surbezy/>.

հայ ժողովրդի մոտ ազգային ինքնազիտակցության և ազատության գաղափարներ ներարկելու, ինչպես նաև եկրոպական տերությունների միջամտությունը հայցելու մտադրությամբ՝ վերջիններիս ուշադրությունն օսմանյան կարչակարգի չարաշահումների վրա հրավիրելու ակնկալությամբ:

1894 թ. հայկական կոտորածների սանձազերծման առնչությամբ Սուլթանին առաջադրում է ընդունելի մեկնաբանություններ, ըստ որոնց՝ արևմտահայության բնաջնջումը տեղի է ունեցել պետական քաղաքականության մակարդակով, որը նա հավաստում է քաղում փաստերի վկայակոչչնամբ: Անդրադառնալով 1894 թ. Սասունի կոտորածներին, նա մատնանշում է գորքերի՝ օսմանյան կառավարության գաղտնի համաձայնությամբ գործելու հանգամանքը, իսկ հետաքանի համաձայնությունը վարած միջազգային հանճնաժողովի կազմած գենկուցագրում անփոփլած տեղեկությունների կապակցությամբ ընդգծում, որ դրանք չափազանցություններ չեն պարունակում, ինչը խիստ արդիական է, քանզի փաստաթղթում հիմնավորապես հերթվում է հայկական կարծեցյալ ապստամբության վարկածը⁵³³: Արևմտյան Դայաստանի այլ տարածաշրջաններում (Երզրում, Երզնկա, Բարերդ, Բիթլիս, Սերաստիա, Մալաթիա և այլուր) տեղի ունեցած հայկական կոտորածները ևս նա պայմանավորում է օսմանյան վարչակարգի «հանցավոր անտարբերությամբ»: Սուլթանին խարազանում է հատկապես օսմանյան տեղական պաշտոնյաներին՝ վիլայեթների կուսակալներին և նրանց ենթականներին, որոնք հայերի ոչնչացման ընթացքում հաճախ նույնիսկ քաջալերել են մահմեդական բնակչությանը: Ի վերջո, նա հավաստում է, որ օսմանյան իշխանություններն ուրախ էին այն ամենի առիթով, ինչ տեղի էր ունենում, քանզի հույս էին տածում այդպիսով ծերեազատվել հայերից և նրանց գանգատներից: Սուլթանին հավաստում է նաև 1896 թ. Բանկ օտոմանի գրավմանը հաջորդած՝ կոստանդնուպոլսում կազմակերպված հայկական կոտորածներին Բարձր Դատ հանցակցությունը, մասնավորապես ընդգծելով, որ մահմեդականներին «զինել եր օսմանյան կառավարությունը»:

Լինելով իրավաբան, Սուլթանին առանձնահատուկ ուշադրություն է դարձնում գերազանցապես Հայկական հարցի հանդեպ մեծ տերությունների որդեգրած քաղաքականության վերլուծությամբ,

⁵³³ Բազարը տե՛ս Rapport collectif des Délégués consulaires adjoints à la Commission d'enquête sur l'affaire de Sassoun.— Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 96-111:

ինչը նրա մոտեցման առանցքում է: Միջազգային իրավունքի սկզբունքների շրջանակներում մանրամասնորեն վերլուծելով մեծ տերությունների՝ այս կամ այն պետության ներքին գործերին միջամտելու և չմիջամտելու իրավասությունները, Սուրբեզին ելնելով միջապետական փոխհարաբերություններից, հավաստում է, որ տերությունների դեկավար շրջանակները որդեգրել էին այլ պետությունների գործերին չմիջամտելու սկզբունքը: Փոխարենը, նա առանձնացնում է Օսմանյան կայսրության պարագան, խոսքը կենտրոնացնելով, հատկապես տերությունների, ի նպաստ հայերի, սուլթանի ներքին գործերին միջամտելու սկզբունքին հետամուտ լինելու վրա: Այս բացառությունը նա քննորոշում է իբրև չմիջամտելու սկզբունքին անհարի «ամենահրաշալի» օրինակը, քանզի մեծ տերությունները պարբերաբար միջամտել են կայսրության գործերին թե՛ սուլթանի համաձայնությամբ և թե՛ նրա կամքին հակառակ: Ընդհանուր առնամբ, 1878 թ. Դայկական հարցի ժագումից ի վեր, Դայաստանի գործերին Եվրոպայի միջամտության իրավունքը նա իրավանք համարում է «անառարկելի», ինչը հիմնավորում է նախ և առաջ Սան-Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովի պայմանագրերով Բարձր Դոան կողմից այս իրավունքի ճանաչմանը:

Սուրբեզին ոչ միայն քննարկում է Դայկական հարցը միջազգային իրավունքի հարթության վրա և փաստում Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու Եվրոպական պետությունների իրավասությունը, այլև քննադատում նրանց, ըստ եւթյան, ցանկություն չդրսանորելու համար պարտադրելու օսմանյան կառավարությանը՝ կենսագործելու Բեռլինի վեհաժողովի պայմանագրով ստանձնած պարտականությունները: Միանգամայն իրավանք նա ընդգծում է դրա հետևանքով քրիստոնյա հպատակների կացության վատթարացումը 1880-ական թվականներին, ինչն առիթ է տվել նրանց բողոքներին, որոնք և, վերջին հաշվով, 1894 թ. սեպտեմբերին հանգեցրել են Սասունի կոտորածին: Ակնհայտ է, որ հեղինակը Դայոց ցեղասպանության սանձազերծման պատասխանատվությունն Օսմանյան կայսրության ղեկավարներից զատ անուղղակիորեն բարդում է նաև մեծ տերությունների՝ Դայկական հարցուն իրականացրած անարդյունավետ քաղաքականության վրա:

Այդուհանդերձ, Սուրբեզին շատ ավելի մեծ տեղ է հատկացնում Բարձր Դոան՝ արևմտահայության համար բարենորոգումների կենսագործման հարցում դրսնորած չկամության ներկացմանը և նշավակմանը: Նա մանրամասնորեն մեկնաբանում է Կոստանդնուպոլ-

սում հավատարմագրված օտարերկրյա դեսպանների մշակած՝ պատմության մեջ «մայիսյան» անվանք հայտնի բարենորոգումների ժրագիրը⁵³⁴, որը բնորոշում է թե՛ իբրև «բավական չափավոր» և թե՛ հայերի ցանկությունները մեծապես բավարարող ու թուրքերից մեծ զիջումներ չպահանջող:

Ծավալվելով այս կարևոր հարցի շուրջ, Սուլթանին մանրամասնորեն քննարկում է նաև Բարձր Դոան՝ 1895 թ. հունիսին և օգոստոսին դեսպաններին հղած պատասխանները⁵³⁵, որոնք պարզորոշ վկայում են օսմանյան դեկավար շրջանակների՝ արևմտահայության անվտանգության հարցում որևէ բարենորոգումների իրականացումից խուսափելու հաստատակամության մասին. «Այս ոգով ոչինչ չի արվել», – եզրակացնում է նաև:

Դայերի երբեմն ծայրահեղ արարքները (Բանկ օտոմանի գրավում և այլն) Սուլթանին պատճառաբանում է նրանց նկատմամբ «օսմանյան կառավարության անտարբերությամբ և չկամությամբ»: Մասնավորապես, 1895 թ. Կոստանդնուպոլիսում Բաբը Ալիի ցույցը նա շաղկապում է բարենորոգումների իրականացման հարցում Բարձր Դոան գրաված կոչտ դիրքորոշմանը, ինչն իր հերթին առիթ է տվել լայնածավալ կոտորածների սանձագերծման համար: Դրանով իսկ հեղինակը մեկ անգամ ևս հումկու հակահարված է տալիս Դայոց ցեղասպանության պատմության տարբեր կեղծարարների, որոնք հայերի ցույցը պայմանավորում են հնչակյանների կարծեցյալ խառնակիչ գործունեությամբ:

Սուլթանին խստագույնս նշավակում է օսմանյան վարչակարգի երկդիմի քաղաքականությունը, մասնավորապես 1895 թ. հոկտեմբերին Բարձր Դոան մշակած բարենորոգումների թեական ծրագրի քննության հիման վրա⁵³⁶: Այս առիթով նա մատնանշում է, որ դրա ընդունումից ի վեր հայերի կացությունը որևէ փոփոխություններ չի կրել, քանզի նրանց կոտորել են ոչ միայն 1895 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլիսում՝ մինչ այդ ձևական փաստաթղթի ընդունումը, այլև դրանից հետո՝ Արևմտյան Դայաստանի գրեթե բոլոր նահանգներում:

Դիվանագիտական հարաբերությունների պատմության ելեկըներում հիանալի կողմնորոշումներ ունեցող հեղինակը հանգանա-

⁵³⁴ Բնագիրը տե՛ս Mémorandum. – Նույն տեղում, էջ 45-48; Projet de réformes administratives à introduire dans les provinces arméniennes. – Նույն տեղում, էջ 48-56:

⁵³⁵ St's Նույն տեղում, էջ 71-75, 80-81, 87-94:

⁵³⁶ Décret. Réformes en Arménie. – Նույն տեղում, էջ 156-162:

լից անդրադառնում է նաև Եվրոպական մեծ տերությունների՝ Դայ-կական հարցում վարած քաղաքականության առանձնահատկություններին (խոսքը Վերաբերում է, մասնավորապես Օսմանյան կայսրության ներքին գործերին միայն խաղաղ ձևերով միջամտությանը նախապատվություն տալուն), Վերիհանում նրանց միջև առկա տարածայնությունները։ Զինված միջամտության հարցում տերությունների դրսևորած անբարյացակամ վերաբերմունքը նա իրավամբ պատճառաբանում է Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքի խախտման՝ նրանց համար անցանկալի հեռանկարից խուսափելու հանգամանքով, ընդգծում դրան միտված ռուսական ինքնակալության և Երրորդ հանրապետության որդեգրած համահունչ քաղաքականությունն Արևելյան հարցում։

Ընդհանուր առմամբ, Սուլթանակին հանգում է միակ հնարավոր հետևության, այն է՝ տերությունների անհամածայնեցված գործողությունները Բարձր Դաշնության հնարավորություն են ընձեռել օսմանականացած հայերի հետ վարկել ըստ իր հայեցողության։

Չնայած, ընդհանուր գծերով, Սուլթանակին հանգում է միակ հնարավոր հետևության, այն է՝ տերությունների անհամածայնեցված գործողությունները Բարձր Դաշնության հնարավորություն են ընձեռել օսմանականացած հայերի հայեցողության։ Ինչպես և իր ժամանակակից Ֆրանսիացի պատմաբաններից շատերը, Սուլթանին և առիթը բաց չի թողնում չափազանցնելու համար Անգլիայի քաղաքականության դերը Մերձավոր Արևելքում առկա իրավիճակի շիկացման հարցում։ Նա անհարկի Անգլիային է վերագրում 1895-1896 թթ. Օսմանյան կայսրությունում սկիզբ առած խառնաշփոթի պատասխանատվությունը, նույնքան չափազանցված դիրքերից մեկնարանում Օսմանյան կայսրության ներքին գործերին զինված միջամտություն ցուցաբերելու հարցում բրիտանական կառավարության ակնկալությունները։

Բացի դրանից, Սուլթանակի՝ Եվրոպական տերությունների և, մասնավորապես Ֆրանսիայի հասցեին ուղղած քննադատությունը խիստ չափավոր է, քանզի նա բավարարվում է սոսկ ընդհանուր բնույթի դիտողություններով։ Ինչպես և Լենոննը, նա ծեռնպահ է մնում Դանութոյի ընդգծված թքամետ քաղաքականության՝ հայերի համար անբարենպաստ հետևանքների քննարկումից, փոխարենը, սակայն, փաստորեն, հակասելով իրեն, անվարան մատնանշում է իր իսկ հավաստած, սոսկ խուսափողական բնույթ կրող, արևմտահայության հանդեպ սուլթանի կրավորական դիրքորոշման փոփո-

խությունները, նախարարի՝ օսմանյան գահակալի վրա ունեցած ազդեցության հետևանքով: Այս հարցում, ի դեպ, նա բավարարվում է, առանց քննադատական մոտեցման, սուկ Լեմոնոնի փաստարկ-ների վերաշարադրման:

Ի շարու Դայոց ցեղասպանության գործընթացի իրականացման զանազան եղանակների, Սուլթանական արժուություն է, ֆիզիկական ոչնչացումից բացի, նաև բռնի կրոնափոխության հանգանանքը: Այս հարցում, սակայն, նրա մեկնաբանությունները տեղիք են տալիս առարկությունների, քանզի կրոնափոխությունը նա համարում է ոչ այնքան հայերի ոչնչացման նպատակ հետապնդող երևույթ, որը ան Օսմանյան կայսրությունը քրիստոնեության ազդեցությունից դուրս բերելու և դրանով իսկ Եվրոպայի վերահսկողությունից խուսափելու հուսալի միջոց: Այս դեպքում արդեն իրեն զգալ է տալիս իրադարձության պատմությունը գլխավորապես դիվանագիտական հարաբերությունների տեսանկյունից մեկնաբանելու նրա դիրքորոշումը:

Սուլթանական վարչակարգի կողմից պետական մակարդակով իրականացված հայ ժողովորդի բնաջնջման փաստի արժանահավատությունը: Սակայն, նրա հիմնական արժանիքը քննարկվող հարցադրումների վերլուծության հնքնատիպության մեջ է, քանզի նրա գրչին պատկանող թեզը միակն է Ֆրանսիական ընդարձակ պատմագիտական գրականության մեջ, որտեղ Դայկական հարցին առնչվող հիմնախնդիրները քննարկվում են միջազգային իրավունքի հարթության վրա:

Ինչպես տեսանք, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում համիլյան վարչակարգի կողմից պետական մակարդակով իրականացված հայ ժողովորդի բնաջնջման փաստի ընդարձակ պատմագիտական վերլուծությունների խորության առումով, անտարակույս, զհջում է նախորդ ժամանակաշրջանի պատմաբանների ներդրմանը: Նրանց մոտեցումներին, ընդհանուր առմամբ, բնորոշ են միևնույն թերությունները և առավելությունները: Դեղինակներից ոնանք ամբողջությամբ չեն կողմնորոշվել Դայոց ցեղասպանության առաջին փուլի պատմությանն առնչվող հիմնահարցերում (Դայկական հարցի առաջացման, ցեղասպանության պատճառների բացահայտման), երբեմն առաջադրել են նույնիսկ հակասական մեկնաբանություններ (փաստելով պետական քաղաքականության հիման վրա հայկական կոտորածների իրականացումը, այդուհանդերձ, ծանրության կենտրոնը տեղափոխել կրոնական առճակատման հարթություն և այլն).

բավարարվել Եվրոպական պետությունների, մասնավորապես Ֆրանսիայի քաղաքականության չափավոր քննադատությանք, Անգլիայի քաղաքականությունը մեկնարանել կողմնակալ դիրքերից, անտեսել հայ ժողովրդի կրած նյութական վճասների հիմնախնդիրը:

Զննարկվող ժամանակաշրջանում ֆրանսիական պատմագրության ներկայացուցիչների և նրանց նախորդների միջև առկա են նշնարելի զանազանություններ. խոսքը վերաբերում է հատկապես Դայկական հարցում Եվրոպական տերությունների քաղաքականության վերլուծությանը խիստ կողմնակալ դիրքերից: Նրանց դիրքորոշումը հանգում է, մասնավորապես Ֆրանսիայի հակահայկական քաղաքականության, ըստ եռթյան, շրջանցմանը և Գերմանիայի քաղաքականության քննադատությանը խիստ չափազանցված դիրքորոշումը հանգում է ՀՀ դարի սկզբին միջազգային հարաբերությունների ոլորտում տեղի ունեցած նշանակալից տեղաշրջորվ և Առաջին աշխարհամարտի բռնկմամբ:

Այդուհանդերձ, ֆրանսիացի հեղինակների գերակշռող մասը, համիլյան կոտորածները մեկնարանել է իրու պետական քաղաքականությամբ իրականացված իրադարձություն, ընդգծել գործընթացի շարունակական բնույթը, բացահայտել այն անելանելի պայմանները, որոնք առկա էին օսմանյան լծի տակ հեծող արևմտահյության համար, միաժամանակ շեշտել նրանց՝ իրավիճակի սոսկ փոփոխությանը միտված ծեռնարկած քայլերը և հիմնավորապես հերքել հայերի՝ կարծեցյալ ապստամբության վարկածը: Ըստ այս ամենի՝ մենք հակված ենք բարձր գնահատելու այն ավանդը, որը նրանք ներդրել են Դայոց ցեղասպանության առաջին փուլի պատմության գիտական ուսումնասիրության ասպարեզում:

3. ԴԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՍ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՍ ԺԽՏՇՈՂԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՍ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Դայոց ցեղասպանության իրողությունը ժխտող՝ խոր արմատներ ունեցող պատմագիտական ուղղությունը սկզբնավորվել է 1890-ական թվականներին Ֆրանսիայում, որի հանար, անտարակույս, պարարտ հող է նախապատրաստել XIX դարի վերջին և XX դարի սկզբին Ֆրանսիայի արտաքին քաղաքականության թրամետ դիրքորոշումը: Այս ժամանակաշրջանում Ֆրանսիայում հրատարակվել են բազմաթիվ գրքեր և հոդվածներ, որոնց հեղինակները, կատա-

րելով, հավանաբար, Արդուլ Չամիդ II-ի պատվերը և միաժամանակ օգտվելով ֆրանսիական կառավարության թրքամետ քաղաքականության ընծեռած հնարավորությունից, հարցը մեկնաբանել են ելնելով օսմանյան կառավարության համար բարեհաճ լույսի ներք:

Այս ասպարեզում առաջնության դափնին, անտարակույս, պատկանում է Երրորդ հանրապետության բացահայտ թրքամետ արտաքին քաղաքականության գերակա ուղղությունները մշակող և իրականացնող՝ 1894-1895 և 1896-1898 թթ. արտաքին գործերի նախարար Գաբրիել Չանոտոյին: Օսմանյան ղեկավարներին սիրաշահելու մղումից դրդված, օգտագործելով տարրեր միջոցներ, այդ թվում, խորհրդարանական ամբիոնը, վերջինս իր ամբողջ հեղինակությունը գործադրել է հայկական կոտորածներին առնչվող հավաստի տեղեկությունները Ֆրանսիայում հանրության լայն խավերից քողարկելու համար: Ինքնին հասկանալի է, որ մասնագիտությամբ պատմաբան Չանոտոն⁵³⁷ քաջ գիտակցում էր գրավոր խոսքի ուժը: Ուստի օրինաչափ է, որ նա նպատակահարմար է գտել Չայոց ցեղասպանությանն առնչվող խնդիրները, ինչպես նաև Օսմանյան կայսրությունում առկա իրավիճակը հարթելուն միտված՝ Ֆրանսիայի ռազմավարական շահերին համահունչ իր մոտեցումները, որոնք կարող էին լոկ ապակողմնորոշել ֆրանսիական հանրությանը, մանրանասն ներկայացնել նաև գիտական մամուլում: Նրա դիրքորոշման լավագույն առհավատչյան՝ «Անյու դը Պարի» պատմագիտական ամսագրում լույս ընծայված՝ «Արևելքում» խորագիրը կրող անսորագիր հոդվածն՝⁵³⁸, որն ըստ ժամանակակիցների վկայության՝ պատկանում է նրա գրչին⁵³⁹:

Չանոտոյի մտորումներում ակնառու է Արդուլ Չամիդին գովերգելու միտումը: Այս առիթով, ի դեպ, նշենք, որ Վ. Տատրյանը Չայոց

⁵³⁷ Նշենք, որ 1897 թվականից՝ Ֆրանսիական ակադեմիայի անդամ Չանոտոն, ընտրվել էր նաև Ռուսական կայսերական պատմական ընկերության արտասահմանամ պատվավոր անդամ: Տե՛ս C. A. Никитин, Императорское Русское общество // «Вопросы истории», 2007, N 3, с. 9:

⁵³⁸ ***; En Orient // « Revue de Paris », livraison du 1^{er} décembre 1895. Նշենք, որ Չանոտոյի հոդվածը որոշ կրծառումներով վերատպվել է Պ. Զիադի և L. Մարտերիի գրքի հավելվածում. տե՛ս P. Quillard & L. Margery, La question d'Orient et la politique personnelle de M. Hanotaux, Paris, 1897, p. 41-45:

⁵³⁹ Տե՛ս Պ. Զիադի անթվակիր նամակը Ա. Չոպանյանին՝ ԳԱԹ, ֆ. Ա. Չոպանյանի, բաժին III, վավ. 9465: Տե՛ս նաև V. Bérard, նշվ. աշխ., էջ 286: Չարկ է, անտառակույս, մանրանասնել, որ Չանոտոն սույն հոդվածը գրել է նախարարի պաշտոնից հրաժարվելուց հետո ընկած ժամանակաշրջանում: Այդ մասին տե՛ս P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 1^{er} janvier 1906.

ցեղասպանության լուսաբաննան հարցում Դանոտոյի որդեգրած թրքանետ դիրքորոշումը հիմնավորում է մի կողմից՝ ֆրանսիական «ազգային շահերով», որը հավաստման կարիքը չունի, իսկ մյուս կողմից, նրա՝ իբրև Օսմանյան կայսրությունում հավատարմագրված ֆրանսիացի նախկին դիվանագետի⁵⁴⁰. Արդու Դամիդի հանդեպ տածած «անձնական զգացմունքներով»⁵⁴¹, ինչն արդեն մեզ թվում է անհավանական:

Ամեն դեպքում, անառարկելի է, որ Դանոտոյի հոդվածը շարադրված է օսմանյան գահակալի ջատագովման դիրքերից: Արդու Դամիդ II-ը «շատ ուշադիր է և խիստ շրջահայաց, որպեսզի հնարավոր լինի նրան անակնկալի բերել: Իրականում, – շարունակում է հեղինակը, – նա նշանառում է այն, ինչը մենք չենք տեսնում... Եթե մենք նրան մեղադրում ենք անուշադրության համար, նրա ուշադրությունն անբողջությամբ սկզբած է լինում մեր անփույթ հայացքից վրիպած կարևոր գործերի վրա»⁵⁴²: Սուլթանին համարելով «աստվածավախ մահմեդական», հանձին որի, մահմեդականությունն Օսմանյան կայսրությունում գտել է իր առաջնորդին, նա գիտակցաբար կեղծում է կայսրությունում տիրող իրական կացության պատկերը, մասնավորապես անտեսելով նրա քաղաքականության խիստ ընդգծված ազգայնամոլ բնույթը և նրան հանիրավի ներկայացնում՝ իբրև այլազգի հպատակների հանդեպ քննչություն, մեծահոգություն և անկողմնակալություն ցուցաբերող նիապետի⁵⁴³: Ուստի Դանոտոն կասկած իսկ չի տածում, որ միայն նա է ի գորուլութել «Դայաստանն արյունաներկ արած քանությունների և չարաշահումների հետևանքով անցյալ ծմբանը (1894 թ. – Վ. Պ.) ծառացած խնդիրը»⁵⁴⁴: Նման հարցադրումն ունի հեռու գնացող ենթատեքստ, որն ինչպես կտեսնենք, անբողջությամբ համապատասխանում է Ֆրանսիայի որդեգրած արտաքին արևելյան քաղաքականության ուղղվածությանը:

Ցուցաբերելով խիստ կողմնակալ վերաբերմունք և անհիմն գովերգելով Արդու Դամիդ II-ին՝ Դանոտոն, այնուամենայնիվ, անկառող է ժխտել հայկական կոտորածների փաստը, որոնք, սակայն, նա

⁵⁴⁰ Մինչ նախարարի պաշտոնը գրադեցնելը. ի թիվս դիվանագիտական այլ պաշտոնների, Դանոտոն եղել է նաև Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանատան քարտուղար. տե՛ս L. Villate, նշվ. աշխ., էջ 171:

⁵⁴¹ V. Dadrian, նշվ. աշխ., էջ 158:

⁵⁴² ***, En Orient, p. 451-452.

⁵⁴³ Նույն տեղում, էջ 453:

⁵⁴⁴ Նույն տեղում:

մեկնաբանում է հակապատճական դիրքերից: Նախ նա գիտակցաբար շրջանցում է ծայր առած հայկական զանգվածային կոտորածների հրականացումը պետական քաղաքականության նակարդակով, նենգափոխում դրանց ցեղասպան բնույթը և հնտորեն շրջանցում հայկական ողբերգության պատասխանատուների դիմագերծումը: Արդյունքում Դանոստոն հայկական կոտորածները միտումնավոր մեկնաբանում է իրեն կրոնական շղարշ ունեցող իրադարձություն, դառնալով Դայոց ցեղասպանության պատմագրության մեջ հետագայում տարածում գտած և պատմական իրականությունը բացահայտորեն խեղաքյուրող այս թյուր տեսակետի կնքահայրերից: Նա գտնում է, որ «խոսքն, ընդհանուր առմանք, վերաբերում է քրիստոնյաների և մահմեդականների միջև տեղի ունեցող պայքարի մասը կազմող հազարից մեկ միջադեպի», այլ ոչ թե պետական քաղաքանության հենքի վրա խարսխված հայ ժողովրդի բնաջնջման:

Ավելին, արևնտահայության լայնածավալ կոտորածների գործընթացը լկտիաբար բնորոշելով իրեն միջադեպ, Դանոստոն չի տարակուսում, որ այն կարող էր կարգավորվել «փոխզիջումների» ճանապարհով, եթե նախապես ծեղնարկվեին անհրաժեշտ միջոցներ: Դրանով իսկ, թեև բացահայտ ջատագովական դիրքերից Արդուլ Դամիդի ազգային քաղաքականության անհարկի գունազարդմանը, նա խիստ չափավոր դիրքերից, այնուամենայնիվ, ակնարկում է օսմանյան գահակալի կրավորական դիրքորոշումն Օսմանյան կայսրությունում ծայր առած հայկական կոտորածների խնդրում, սակայն, ի վերջո, առկա իրավիճակի պատասխանատվությունը հանիրավի բարդում է միմիայն Եվրոպական պետությունների վրա:

Օսմանյան կայսրությունում ծավալված իրադարձությունների առնչությամբ Եվրոպական մեծ տերությունների քաղաքականության սկզբունքների առաջադրումն ու հիմնավորումը՝ նախարարի մտորումներում աչքի զարնող հաջորդ էական հանգամանքն է: Նա կտրականապես դեմ է արտահայտվում Արդուլ Դամիդի ներքին գործերին միջամտելու հնարավոր տարրերակին, քանզի հիանալի պատկերացնում է, որ այն իդի է Օսմանյան կայսրության՝ մեծ տերությունների համար խիստ անցանկալի տրոհման հեռանկարով: Ուստի այս հարցում իր մոտեցմանը հիմնավորում տալու համար, նա ջանում է մեղավորի դերում ներկայացնել Եվրոպական այն պետություններին, որոնց ներկայացուցիչները զբաղվել են 1894 թ. Սա-

սունի կոտորածների հետաքննությամբ⁵⁴⁵ և իրավիճակի կարգավորման հարցում սուլթանի անվճռականությունն անհրավացիորեն պայմանավորում է նիմիայն մեծ տերությունների միջանտությամբ, որը, «շատ է երկարածզվել» և իբր դարձել, ըստ նրա հայեցակարգի՝ հարցի լուծման ձախողման միակ պատճառը⁵⁴⁶: «Երջին խռովությունների ամենացավոտ հետևանքը՝ Եվրոպայի նոր միջանտության հիմնավորումն է», – եզրակացնում է Ղանոտոն⁵⁴⁷:

Ֆրանսիայի ղեկավար շրջանակների համար ցավագին այս հարցի կապակցությամբ նախարարն առաջադրում է փակուղուց ելնելու, իր համոզմանք, լավագույն տարբերակը, այն է՝ կայսրությունում առկա ճգնաժամը հարկ է համարել ներքին հարց և դրա կարգավորումը բողնել միայն Աբդուլ Ղամիդի հայեցողությանը: «Ղենց սա է, որ պետք է ցանկանան ամենքը: Սուլթանը մնում է իր երկրի տիրակալը»⁵⁴⁸, – եզրակացնում է նա:

Միաժամանակ քաջ գիտակցելով, որ Օսմանյան կայսրության ներքին գործերին մեծ տերությունների միջանտության կասեցումը պայմանավորված է սուլթանի ներքին քաղաքականությամբ, Ղանոտոն ուշադրությունը կենտրոնացնում է այն ուղիների վրա, որոնք, ըստ նրա՝ հարցի խաղաղ կարգավորման գործընթացում կարող էին ունենալ եական նշանակություն: «Ղարկ է, որ նա (սուլթանը – Վ. Պ.) հակված լինի շտապ իրականացնելու իր ստանձնած պարտավորությունները... Ամեն ինչից բացի, պետք է խուսափել այն ամենից՝ քրիստոնյաների հանդեպ բռնություններից, օտարերկրացիների համայնքների կամ համայնքների անդամների վրա հարձակումներից, ինչը կարող է առիթ տալ տերությունների ուղղակի միջանտությանը»⁵⁴⁹.

Ֆրանսիայի ռազմավարական շահերից բխող՝ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման անհրաժշտությունից ելնելով, Ղանոտոն եզրափակիչ խոսքում ևս, ի թիվս այն խնդիրների, որոնք ծառացած էին օսմանյան գահակալի առջև, առաջնային նշանակությունը հատկացնում է «խելամիտ, չափավոր, գգույշ» բարենորոգումների կենսագործմանը⁵⁵⁰: Ըստ այս ամենի՝

⁵⁴⁵ Նույն տեղում:

⁵⁴⁶ Նույն տեղում, էջ 455:

⁵⁴⁷ Նույն տեղում, էջ 456:

⁵⁴⁸ Նույն տեղում, էջ 458:

⁵⁴⁹ Նույն տեղում, էջ 458-459:

⁵⁵⁰ Նույն տեղում, էջ 460-461:

օրինաչափի է, որ նա անվարան կոչում է ֆրանսիացի լրագրողներին «չտարածել տագնապալից լուրեր»⁵⁵¹, այն է՝ շրջանցել հայկական կոտորածներին առնչվող իրողությունների լուսաբանումը:

Դայոց ցեղասպանության մեկնաբանման հարցում Դանուտոյի մոտեցումը, որն ի դեպ, առավել ամբողջական ծևով արտացոլվել է սույն հոդվածի տպագրությունից մեկ տարի անց՝ 1896 թ. նոյեմբերի 3-ին Ազգային ժողովում ունեցած նրա ելույթում, կարիք ունի մեկնաբանությունների: Ինքնին հասկանալի է, որ Օսմանյան կայսրությունում հավատարմագրված ֆրանսիացի դիվանագետներից իրադարձությունների ընթացքին առնչվող հավաստի տեղեկություններ պարբերաբար ստացող արտաքին գործերի նախարարը չեղ կարող անհիրազեկ լինել հայ ժողովորդի բնաջնջման գործընթացի պատճառներին և հանգամանքներին: Այդուհանդեռ, իր տարբեր ելույթներում նա կողմնակալորեն նույնիսկ չի հիշատակում՝ իր ենթակայության ներքո գտնվող դիվանագետների գեկուցագրերում փաստված Դայկական հարցի գոյության⁵⁵², առավել ևս Դայաստանի ռազմակալման մասին, չի մեկնաբանում, թե որոնք էին վերը նշված՝ սուլթանի ստանձնած պարտավորությունները, այն է՝ կատարյալ լորությամբ է շրջանցում Բեռլինի վեհաժողովում ընդունված պայմանագրի 61-րդ հոդվածը, և իբրև դրա հետևանք՝ Դայոց ցեղասպանության իրական պատճառները, առավել ևս կտրականապես ժխտում է դրա իրականացումը պետական քաղաքականության մակարդակով: Այլ կերպ ասած՝ նա հանդես է գալիս հայկական կոտորածների պատմության բացահայտ կեղծարարի ներում: Ուստի պատահական չէ, որ հայ ժողովորդի նվիրյալ Ուրբեն Գոհիեն Դանուտոյի ելույթը բնորոշել է իբրև «Արդուլ Դամիդի հուզումնալից ներբող»⁵⁵³: Դրա համար կային իմանավոր պատճառներ:

Արևելյան հարցում Դանուտոյի որդեգրած այս կոշտ դիրքորոշումն ամբողջությամբ պայմանավորված է ոչ միայն Եվրոպական մեծ պետությունների միջև հավասարակշռությունը պահպանելու անհրաժեշտությամբ, ինչը սերտորեն առնչվում էր Օսմանյան կայս-

⁵⁵¹ Նույն տեղում, էջ 458-459: Այս հարցում Դանուտոյի քաղաքականությանը Մ.Պրանսը տվել է սպառիչ գնահատական. «Չնայած ահեղի հուզումներին, որով ալեկոծվեց ֆրանսիական հասարակական միտքը կոտորածների պատճառով, այդ ժամանակ արտաքին գործերի նախարար Գարրիել Դանուտոն՝ տեղեկատվական մասուի կազմակերպած լուրյան օժանդակությամբ, հաղթանակով պասկեց չմիջամտելու սկզբունքը»: Ste'ս M. Prince, նշվ. աշխ., էջ 322:

⁵⁵² Այլ մասին տե՛ս սույն գրքի առաջին գլուխ առաջին ենթագլխում:

⁵⁵³ U. Gohier, նշվ. աշխ., էջ 51:

րության տարածքային անբողջականության պահպաննան խնդրին և ինքնաբերաբար թելադրում դրա անսասանության անհրաժեշտությունը, այլև Ֆրանսիայի ֆինանսական և տնտեսական շահախնդրություններով Օսմանյան կայսրությունում⁵⁵⁴: Այս հիմնական պատճառներով է Հանուտոն կտրականապես բացառում սուլթանի ներքին գործերին՝ տերությունների միջամտության հնարավորությունը:

Պաշտոնական Ֆրանսիայի արևելյան քաղաքականության երեք հիմնական սկզբունքներն, ի դեպ, նա առաջադրել է Ազգային ժողովում ունեցած՝ հիշված ելույթում, կոչ անելով Եվրոպական պետություններին դրանցով առաջնորդվել արևելյան ճգնաժամի կարգավորման խնդրում, այն է՝ կայացնել տերությունների միջև ամուր դաշինք, բացառել տարանջատ գործողությունների հնարավորությունը և սուլթանից ստանալ նրա հպատակների կյանքի բարելավմանն առնչվող երաշխիքներ⁵⁵⁵:

Ըստ այդմ՝ հայկական կոտորածների փաստն, ըստ Եւրիքյան, ընդունող նախարարը, Ելենով իր պետության շահերից, տարբեր ելույթներում ջանք ու եռանդ չի խնայում հիմնավորելու երկու առանցքային հանգամանքներ: Նախ արևմտահայության համեմատ սուլթանի քաղաքականությունը հարկ է համարել բացառապես Օսմանյան կայսրության ներքին խնդիր, այնուհետև պարտադրել նրան բարելավելու հայերի (և առհասարակ այլազգի հպատակների) կացությունը՝ երկրում ստեղծված գերլարված իրավիճակը լիցքաբարփելու նպատակով: Նրա առաջադրած թե՛ մեկ և թե՛ մյուս թեզերը նպատակառուղղված էին, անտարակույս, մեծ տերությունների՝ Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու հավանականության բացառմանը և իբրև դրա հետևանք՝ Եվրոպայում առկա հավասարակշռության պահպաննանը:

Այս պայմաններում, պատահական չէ, որ տարիներ անց, երբ քաղաքական գործունեությունը լրելուց հետո Հանուտոն գրադաւում

⁵⁵⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս սույն մենագրության վերջարանում:

⁵⁵⁵ Discours de M. Hanotaux, ministre des Affaires étrangères, à la séance de la Chambre des Députés du 3 novembre 1896, p. 317. Բուլղարական մամուլի օրգաններից մեկը Հանուտոյի այս ելույթը գնահատել է իրու «բուրքական սուլթանի առջև ֆրանսիական հանրապետության հաճոյակատարության ամորալի կատակերգություն»: Տե՛ս C. B. Օվհանոս, նշվ. աշխ., էջ 270: Հանուտոյի ելույթի մասին մանրամասն տե՛ս V. Poghosyan, La discussion de la Question arménienne dans la Chambre des Députés aux années 1890 // Բազմավայ, 2007, էջ 469-472: Դրան համառոտակի անդրադարձել է նաև Ի. Տերնոնը. Y. Ternon, Les Arméniens. Histoire d'un génocide, p. 139:

Եր միայն գիտահետազոտական աշխատանքներով, իր հիմնական պատմագիտական ուսումնասիրություններից մեկում երկու ստվարածավալ գլուխներ հատկացնելով Արևելյան հարցի և 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ու Բեռլինի վեհաժողովի պատմության ըննությանը, շրջանցում է թե՛ Դայկական հարցի ծագման ու գոյության փաստը և թե՛ հայկական զանգվածային կոտորածների իրողությունը⁵⁵⁶.

Դայոց ցեղասպանության մեկնաբանության հարցում Դանոսոյի պարսակելի դիրքորոշումը խիստ քննադատության են ենթարկել նրա ֆրանսիացի ժամանակակիցներից ոնանք:Պ. Քիառը և Լ. Սարժերին բացասել են նրա առաջադրած որոշ դրույթներ, ապացուցել, որ հայկական ջարդերը պայմանավորված են եղել պետական քաղաքականությամբ, այլ ոչ թե քրիստոնյաների ու մահմեդականների միջև առկա դավանանքների հակամարտությամբ. «Կոտորածները կազմակերպել եր միայն Պալեն, որը տվել էր դրանց ազդանշանը և ապահովել իրագործումը», – գրում են նրանք⁵⁵⁷: Ընդհանուր առմամբ, նրանք գտնում են, որ սույն հոդվածում Դանոսոյն «որոշակիորեն հանդես է գալիս սուլթանի, այն է՝ Պալենի դիրքերից»⁵⁵⁸: Ուստի Բերարն ունեցել է բոլոր իրավունքները նրան «ֆրանսիական հասարակության և կառավարության առջև» «Աբդուլ Ջամիդի դատապաշտապանն» անվանելու համար⁵⁵⁹, իսկ Քիառը, մեկ այլ առիթով, նրա հոդվածը բնութագրել է իրեն «նողկալի»⁵⁶⁰:

⁵⁵⁶ G. Hanotaux, *Histoire de la France contemporaine* (1871-1900), t. 4, Paris, 1908. Ի տարերություն Դանոսոյի՝ փոքր-ինչ այլ է մեկ այլ հեղինակի դիրքորոշումը, որը ևս, թեև շրջանցում է Դայկական հարցի և Դայոց ցեղասպանության փաստը, այնուամենայնիվ, թեկուց և բոլոցիկ, արձանագրում է «սուլթանի հայտակ քրիստոնյա ժողովի օրինական պահանջի» փաստը, առանց մեկնաբանելու, թե ինչ պահանջի է խորհն առնչվում: C. R. Geblesco, *La Question d'Orient et son caractère économique*, Paris, 1904, p. 117.

⁵⁵⁷ P. Quillard & L. Margery, նշվ. աշխ., էջ 18:

⁵⁵⁸ Նույն տեղում, էջ 32:

⁵⁵⁹ V. Bérard, նշվ. աշխ., էջ 286: Նշենք նաև, որ Աբդուլ Ջամիդը քարձը է գնահատել Դանոսոյի ջանքերը և նրան պարզեատրել է սուլթանին մեծ ժառայություններ նշատուցած անծանց շնորհվող՝ Խնդիազի շքանշանով: Այդ նասին տե՛ս P. Quillard & L. Margery, նշվ. աշխ., էջ 32; Օսման Նուրի, Աբդուլ Ջամիդ երկրորդը և նրա իշխանության շրջանը. – Օսման աղբյուրները Դայաստանի և հայերի մասին, հ. Դ. Թուրքական աղբյուրներ, քարգմանությունը բնագրից՝ Ա. Խ. Սաֆրաստյանի և Գ. Դ. Սամբուրյանի, Երևան, 1972, էջ 180: Սուլթանը նրան արժանացրել է նաև «զերազանցություն» տիտղոսի և գեներալի աստիճանի: Տե՛ս E. Antoine, *Les massacres d'Artéménie*, Bruxelles, 1897, p. 93; Y. Ternon, նշվ. աշխ., էջ 376:

⁵⁶⁰ P. Quillard, *La Quinzaine* // «Pro Armenia», 15 mars 1906.

Ավելի անողոք քննադատությամբ է հանդես եկել Գոհիեն: Վերջինս հիմնավորապես ապացուցել է կանխամտածված ծևով Հայոց ցեղասպանության առնչվող հանգամանքների խեղաթյուրման փաստը «գրապանները թուրքական ուսկով ուռաճացրած և դեմքը հայկական արյամբ աղտոտված» Հանոտոյի կողմից⁵⁶¹, որն, ըստ նրա մեկնարանությունների՝ օր առ օր հետևում էր իրադարձության մանրամասներին՝ ֆրանսիացի դիվանագետների կողմից ստացվող ճեպագրերի հիման վրա, սակայն, որևէ նշանակություն դրանց տալ չէր ցանկանում: Ըստ այդմ՝ նա եզրակացնում է. «Երբեւ սպանությանն ունեցած հանցակցությունն ավելի պարզորոշ ծևով չի հաստատվել»⁵⁶²: Բացի դրանից, նա իրավամբ շաղկապել է Հանոտոյի ընդգծված հակահայկական քաղաքականությունը եվրոպական պետությունների ֆինանսական և տնտեսական շահերին, ի դերև է թերելով դրանց ներհակությունը կործանման դատապարտված արևմտահայության շահերին, ինչը, բնականաբար, շատ ավելի եական հանգամանք է, քան սուլթանի կողմից նախարարի կաշառված լինելը⁵⁶³:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին ֆրանսիայի արտաքին քաղաքականության թրջամետ դիրքորոշումը, անտարակույս, լայն հնարավորություններ է ընձեռել Հայոց ցեղասպանության պատմության նենգափոխման համար: Ուստի պատահական չէ, որ թե՛ նախացան Հանոտոյի կողմից բացահայտորեն նախանշված՝ հարցին առնչվող խնդիրների քննարկման և լուծման տարբերակների մատնանշումը և թե՛ առավել ևս դրանից հետո, հակահայկական տրամադրություններն արտացոլվել են ֆրանսիացի տարբեր հեղինակների՝ Օսմանյան կայսրության պատմությանը և արևմտահայության ողբերգությանը նվիրված աշխատանքներում:

Հայոց ցեղասպանության արժանահավատությունը բացահայտորեն ժխտող հեղինակներից հիշատակենք Պ. Բ. Ալոշին, որին բնորոշ է ոչ միայն Հայոց ցեղասպանության փաստը ժխտելու, այև օսմանյան բարբարոսական կայսրության պատմությունը նենգափոխելու և նրա գահակալներին բացահայտորեն գովերգելու միտունը⁵⁶⁴: Նույնիսկ 1453 թ. Կոստանդնուպոլիսը գրաված, ավերած, քա-

⁵⁶¹ U. Gohier, նշվ. աշխ., էջ 37:

⁵⁶² Նույն տեղում, էջ 45:

⁵⁶³ Նույն տեղում, էջ 23:

⁵⁶⁴ P. B. Allauch, *La Turquie et les Ottomans*, Paris, [1894] ; Մույնի՝ *La vérité sur l'Arménie. Récit d'un témoin oculaire*, Paris, 1895.

ղաքի բնակչությանը սրի քաշած ու կողոպտած արյունարրու սուլ-թան Մեհմեդ II-ի (1451-1481) հասցեին նա անամոթաբար մեծառանքի խոսքեր է շռայլում, ընդգծում, որ սուլթանն իբր հույներին ընձեռել է իրենց կրոնը դավանելու ազատություն և ունեցվածքը տնօրինելու հնարավորություն⁵⁶⁵:

Ընդունելով պանիսլամիզմի գոյությունը, Ալոշն, այդուհանդերձ, ամբողջությամբ ժխտում է այդ գաղափարախոսության քաղաքական բնույթը և ռազմամոլ եռթյունը, որի հիմնական նպատակներից էր իսլամ դավանող ժողովուրդների համախմբումն Օսմանյան կայսրության ղեկավարության ներքո, քանզի այդ ժամանակաշրջանում սուլթանն ամբողջ աշխարհի մահմեդականների առաջնորդն էր՝ խալիֆը: Ալոշը, սակայն, պանիսլամիզմը ներկայացնում է իբրև լոկ կրոնական արմատներ ունեցող գաղափարախոսություն, որն իբր «հիմնվում է ոչ թե ուժի, այլ հավատքի վրա»⁵⁶⁶: Այդուհանդերձ, նույնիսկ նման սահմանափակ կտրվածքով ևս, պանիսլամիզի՝ իբրև գաղափարախոսության նրա մեկնաբանությունը կողմնակալ է և թերի: Այս առնչությամբ հարկ է մանրամասնել, որ Աբրուլ Շամիի որդեգրած՝ պանիսլամիզմի տարբերակը ենթադրում էր նաև կայսրության բնակչության քրիստոնյաների բռնի մահմեդականացում, ինչն արտացոլվեց 1890-ական թթ. արևմտահայության կոտորած ների ընթացքում:

Ինչ վերաբերում է արևմտահայության ճակատագրին, ապա՝ Ալոշը կտրականապես չի ընդունում Շայկական հարցի գոյությունը: Վերլուծելով Սան-Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովի պայմանագրերը, նա շրջանցում է դրանցում գետեղված՝ հայերին վերաբերող հոդվածները, իսկ Շայկական հարցն անվանում «կարծեցյալ»⁵⁶⁷: Անդրադառնալով ժողովրդագորության խնդրին, նա նիտումնավոր նվազեցնում է Արևմտյան Շայաստանի տարբեր վիլայեթներում և կայսրության զանազան քաղաքներում (Բիթլիս, Տրապիզոն, Կոնյա) բնակվող հայերի թվաքանակը: «Փոքրամասնություն կազմող նրանց համայնքը հաճախ խիստ նվազ է», – գրում է նա⁵⁶⁸:

Առաջին հայացքից, Ալոշի դիտարկումներն այս հարցում կարող են, արտաքոց թվալ, առավել ևս եթե նկատի ունենանք, որ 1889-

⁵⁶⁵ P. B. Allauch, La Turquie et les Ottomans, p. 40.

⁵⁶⁶ Նույն տեղում, էջ 120-121:

⁵⁶⁷ Նույն տեղում, էջ 155:

⁵⁶⁸ Նույն տեղում, էջ 156: Այդ մասին մանրամասն տե՛ս սույն գրքի երկրորդ գլխի առաջին ենթագլխում:

1891 թթ. նա բնակվել է Բիթլիսում և շրջագայել Արևմտյան Հայաստանի զանազան նահանգներում: Իրականում, նման մոտեցումն ամբողջությամբ համապատասխանում է նրա հայեցակարգի ընդհանուր ոգուն, քանզի հեղինակի գլխավոր նպատակներից մեկը՝ Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող ազգային խնդիրների շրջանցումն է:

Թեև իր հուշերն ամփոփող՝ 1895 թ. Վերահրատարակված «Իրականություն Հայաստանի մասին» խորագիրը կրող գրքի առաջբանում նա նատնանշում է, թե դրանք իր «Վերջին պատահարների ազդեցության տակ» չեն գրվել⁵⁶⁹, այդուհանդերձ, նրա շարադրանքը վկայում է, որ դա ստահող հայտարարություն է, որին հեղինակը դիմել է հասարակական կարծիքը թյուրիմացության մեջ գցելու մտադրությամբ:

Իրականում Ալոշը ֆրանսիական հանրության ուշադրությունը ըևեռում է սոսկ երկու հիմնական հանգամանքների վրա. դրանք են՝ հայերի բարեկեցությունն Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներում և հապատակների նկատմամբ Արդուլ Շամիդի բարյացական Վերաբերմունքը: Արևմտյան Հայաստան այցելած, բայց տարօրինակ ձևով այնտեղ տիրող իրավիճակին «անիրազեկ» հեղինակը՝ անտեսելով XIX դարի վերջին լուսավորության, մշակույթի և կրոնի ասպարեզներում օսմանյան վարչակարգի հայահալած քաղաքականության սաստկացումը⁵⁷⁰, պնդում է, թե իր այցելած վայրերում՝ կառավարությունն ամենուր հայկական եկեղեցիների և դպրոցների հանդեպ նշտապես ցուցաբերել է անսահման բարեհաճ վերաբերմունք: Արևմտահայության հուսակտուր վիճակի կապակցությամբ, ոտնահարելով իրական փաստերը, նա գրում է. «Ասիայուն հայերն ամենուր ապրում են շքեղության մեջ»⁵⁷¹:

Թե՛ Ալոշի այցելությունը Հայաստան և թե՛ նրա գրքերում նկարագրված դեպքերը ժամանակագրական առումով նախորդում են համիլյյան կոտորածներին: Այդուհանդերձ, Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերի իրավիճակին և նրանց կյանքի պայմաններին վերաբերող, սակայն այցելուի՝ իրականության հետ հեռավոր իսկ առնչություն չունեցող վկայությունները՝ արևմտահայերի բուն կացության մասին փոքրիշատե ստույգ պատկերացում ունե-

⁵⁶⁹ P. B. Allauch, La vérité sur l'Arménie. Récit d'un témoin oculaire, p. 6.

⁵⁷⁰ Այդ մասին տե՛ս Ա. Շամբարյան, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), էջ 49-51:

⁵⁷¹ P. B. Allauch, La vérité sur l'Arménie. Récit d'un témoin oculaire, p. 24, 38, 43.

ցող ընթերցողին անվարան հանգեցնում են սոսկ մեկ հնարավոր հետևության. այն է՝ հեղինակի հետապնդած հիմնական նպատակը 1890-ական թվականների կեսին տեղի ունեցած հայկական զանգվածային կոտորածների կազմակերպիչ Աբդուլ Ջամիդին՝ դրանց փոքր-իսկ պատասխանատվությունից զերծ պահելն է: Սուլթանին մեծարելու միտունը Ալոշի հիմնախնդիրներից է, որը գահ ելնելուն ևեր, ըստ նրա՝ հաղթահարել է այն բոլոր «դժվարությունները, խոչընդոտները և վտանգները, որոնք կարող էին ի հայտ գալ... Նա զահակալի մեծ հատկանիշներին միակցել է մարդկային բոլոր արժանիքները»⁵⁷².

Աբդուլ Ջամիդին անսօրող վերցնելով իր հովանու ներքո, Ալոշը կայսրության տարրեր նահանգներում տեղի ունեցած մի քանի խախտունների համար պետության ղեկավարին պատասխանատու ճանաչելը համարում է «հրեշավոր արարք» և նրան լկտիաբար բնութագրում իբրև՝ «համայն աշխարհի ամենամեծահոգի» և «ամենաազնվաբարո» միապետի⁵⁷³: Նա ընդգծում է հատկապես Աբդուլ Ջամիդի կարծեցյալ՝ խիստ բարյացական վերաբերմունքն իր հպատակների հանդեալ: Սուլթանը «խիստ մտահոգ է, – ինչպես նա նշում է, – իր հպատակների բարօրությամբ և այնքան մեծ նշանակություն է տալիս իր քաջարի բանակի արյունը խնայելուն, որ սուսերը պատյանից հանում է միայն կայսրության շահերը պաշտպանելու համար»⁵⁷⁴: Ուստի միանգանայն օրինաչափ է, որ Ալոշը ոչ միայն լրությամբ է շրջանցում համիդիե հրոսակախմբերի չարաբաստիկ գործողությունները, այլև դրանց կազմավորման փաստն իսկ հիմնավորում է առաջիկա պատերազմներին, որոնց մեջ Օսմանյան կայսրության ներգրավումը բացառված չէր, մասնակցելու անհրաժշտությամբ⁵⁷⁵:

Այս պայմաններում, հետաքրքրությունից գուրկ չէ հայացք նետել նրա՝ ազգային փոքրամասնությունների հանդեալ սուլթանի քաղաքականությանը տված գնահատականների վրա: Ըստ նրա խորհրդածությունների՝ շատերը, «առնվազն անիրազեկ անձինք», չեն ցանկանում հաշվի առնել, թե ինչպիսի «ահելի ծանրության» ներքո է կքված սուլթանը, որի՝ կայսրության ներքին նահանգներում խաղաղություն ապահովելու և բոլոր տերությունների հետ ներդաշ-

⁵⁷² P. B. Allauch, *La Turquie et les Ottomans*, p. 102.

⁵⁷³ P. B. Allauch, *La vérité sur l'Arménie. Récit d'un témoin oculaire*, p. 32.

⁵⁷⁴ P. B. Allauch, *La Turquie et les Ottomans*, p. 105.

⁵⁷⁵ Նույն տեղում, էջ 162:

նակության մեջ գոյակցելու ջանքերը նա գնահատում է իբրև «հերկովեսայն արարք», առավել ևս՝ եթե խորհում ենք, թե որքան տարրերից է բաղկացած Օսմանյան կայսրությունը և թե որքան թշնամիներով է այն շրջապատված»⁵⁷⁶: Ուր ավելին. հեղինակը վկայակոչում է կարծեցյալ հմուտ դիվանագետների, որոնք հաշվի առնելով Արդուլ Դամիդի հայացքների լայնախոհությունը, խելա-մտությունը, տատասկուտ հարցերում ցուցաբերած սառնասրտությունը, նրան անվանում են «աշխարհին զարմանք պատճառող՝ հիասքանչ սուլթան»⁵⁷⁷:

Խորհրդավոր դիվանագետների (որոնց անունները սակայն չեն հիշատակվում) այս բնորոշման հետ կարելի է, ընդհանուր գծերով, համամիտ լինել: Դիմնավորելու համար այդ հավաստումը, ցանկանում ենք վկայակոչել Դենի Կոշենի՝ 1897 թ. փետրվարի 12-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում ունեցած ելույթը, որը հայկական կոտորածների կապակցությամբ հայտարարել է. «Դարկ է նրան (Արդուլ Դամիդին – Վ. Պ.) արժանին հատուցել: Ամեն ինչ արվել է ըստ հիասքանչ մեթոդի: Դազարավոր այրված տները՝ սուլթանի հպատակների տներն էին, հարյուր հիսուն հազար կամ երկու հարյուր հազար սպանված մարդկեր՝ սուլթանի հպատակներն էին»⁵⁷⁸:

Ալոշի գրքերում անհնար է գտնել թե՝ օսմանյան վարչակարգի հայահալած քաղաքականությանը և թե՝ հայկական կոտորածներին առնչվող նվազագույն իսկ ակնարկ. փոխարենը՝ նա հիշատակում է այն խոռվության մասին, որին, ըստ նրա մշուշապատ մտորումների՝ հայերին դրդել են դիմելու ինչ-որ խորհրդավոր՝ «շահագրգիռ անձինք»: Դենց նրանց վրա է, որ հուշերի առաջարանում, հեղինակը հեռակա կարգով բարդում, իր իսկ շոշանցած՝ 1894-1895 թթ. հայկական կոտորածների պատասխանատվությունը: Նրանք «թաքնվում են վարագույրի ետևում մինչ այն պահը, որը նրանց նպաստավոր է թվում՝ հասարակական դժբախտությունից օգտվելու և հանուն իրենց շահերի այն օգտագործելու համար: Պարունայք» առաջնորդները լավ կանեն, եթե այցելեն այն երկրամասերը, որտեղ մենք հենց նոր ենք շրջագայել: Նրանք, սակայն, խորամանկաբար գերադասում են ապրել եվրոպական կենտրոններում, որտեղ, զարտուիլի ճանապարհներով ձեռք բերված դրամով, ուսկեզօծ և

⁵⁷⁶ P. B. Allauch, La vérité sur l'Arménie. Récit d'un témoin oculaire, p. 32.

⁵⁷⁷ Նույն տեղում, էջ 33:

⁵⁷⁸ D. Cochin, Contre les barbares, Paris, 1899, p. 58.

հարուստ կահավորված սենյակներում վայելում են իրահրիշների՝ իրենց կյանքին համապատասխանող հաճույքներ»⁵⁷⁹:

Դետևությունը մեկն է՝ Աբդուլ Ջամիդը «հրեշտակ» է, իսկ հայկական կոտորածների պատասխանատուները՝ Եվրոպայում բնակվող և խօսվության դրդող իրահրիշներն են: Ստանձնած անշնորհակալ առաքելությունն Ալոշին չի հաջողվել կատարել ցանկալի մակարդակով: Նա չի վկայակոչում գեր մեկ փաստ այն մասին, թե ո՞ր ասպարեզներում է երբեւ դրսորպել Աբդուլ Ջամիդի «մեծահոգությունը» քրիստոնյա հպատակների նկատմամբ կամ Ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ պարագաներում է ի հայտ եկել նրա «ազնվաբարո» Վարքագիծը: Փոխարենը, նրա առաջադրած կեղծ վարկածը՝ կապված Ջայոց ցեղասպանության պատճառ դարձած՝ կայսրության տարածքից դուրս գտնվող հայ հեղափոխականների գործունեության հետ, հետագա տասնամյակներում որդեգրել են ցեղասպանության արժանահավատությունը ժխտող և պատմական անցյալը խեղաթյուրող բազմաթիվ թուրք պետական գործիչներ⁵⁸⁰ և նրանց հավատարմորեն ծառայող պատմաբաններ:

Ալոշին ծայնակցում է, սակայն, քննարկվող հարցի նկատմամբ ցուցաբերվող շատ ավելի լայն ընդգրկումով, Ռ. Դե Կուրսոնը, որը ևս իր հավաստման՝ երկու անգամ այցելել է Օսմանյան կայսրության «ասիական նախանգները, որոնք դրանից հետո խօսվահույզ են եղել արհեստածին ապստամբությամբ» և հայկական կոտորածների հետքերով հայկական «ապստամբական շարժման» պատմությանն է նվիրել առանձին ուսումնասիրություն⁵⁸¹: Ի տարբերություն նախորդ հեղինակի՝ նա մանրազնին քննարկում է XIX դարի 80-90-ական թվականներին Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակին, մասնավորապես ազգային փոխհարաբերություններին և արևմտահայության կացությանն առնչվող տարբեր հիմնահարցեր:

Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունների շուրջ Դե Կուրսոնի առաջադրած մեկնաբանություններն ակնհայտորեն խարսխվում են մի շարք էական հայեցակարգային դրույթների վրա, որոնք հանգում են Ջայուկական հարցի իմաստի աղավաղմա-

⁵⁷⁹ P. B. Allauch, La vérité sur l'Arménie. Récit d'un témoin oculaire, p. 33.

⁵⁸⁰Տե՛ս օրինակ 1917 թ. սեպտեմբերի 24-ին Թալեարի արտասահմած ճառը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի համընդհանուր վեհաժողովում. A. Beylerian, նշվ. աշխ., էջ 417-419:

⁵⁸¹ R. Des Coursons, La rébellion arménienne. Son origine-son but, Paris, 1895.

նը և, փաստորեն, դրա շրջանցմանը, Դայոց ցեղասպանության իրողության ժխտնանը, 1890-ական թվականներին կայսրության տարածքում սկիզբ առած, այսպես կոչված, հայկական «իսմորումների» պատասխանատվությունը Դնչակյան կուսակցության վրա բարդելուն և դրանց ծավալումն Անգլիայի «սադրիչ» քաղաքականությամբ պայմանավորելուն:

Դիմնավորելու համար այս ելակետային թեզերը, Դե Կուրսոնը նյութը շարադրում է օսմանյան կառավարության ազգային քաղաքականության գունազարդման և օսմանյան գահակալի՝ իբրև մեծ մարդասերի ջատագովման դիրքերից: Նկատենք, որ հեղինակի գլխավոր նպատակներից է նաև Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման հիմնավորումը: Դարկ է, անտարակույս, այս հանգամանքով բացատրել, որ Դե Կուրսոնը, Դանութոյի հետքերով, ոչ միայն չի ակնարկում պատմական Դայաստանի բռնագրավման և ռազմակալման փաստերը, այլև բացահայտորեն ժխտում է նույնիսկ նախորդ դարաշրջաններում Դայաստանի՝ իբրև ինքնուրույն պետության գոյության իրողությունն ընդհանրապես: Ուստի նա հանդիմանում է բոլոր նրանց, ովքեր օգտագործում են «Դայաստան» բառը, քանզի ըստ նրա՝ տվյալ պարագայում խոսքը կարող է վերաբերվել լոկ Ասիայում գտնվող մի տարածաշրջանի, որը նա առաջարկում է անվանել «Քրդստան»: Նման արտառող եզրահանգումը Դե Կուրսոնը ջանում է հիմնավորել տարածաշրջանում բնակվող ժողովուրդների թվաքանակին առնչվող շինուու տվյալների վկայակոչմամբ, ըստ որոնց՝ ութ հարյուր հազար հայերի դիմաց այդտեղ բնակվում են մեկ և կես միլիոն քրդեր՝⁵⁸²:

Այս հորինվածքին արժանահավատություն հաղորդելու համար Դե Կուրսոնը, հիմնվելով Քինեի ոչ ստույգ տվյալների վրա, մանրազնին քննարկում է ժողովրդագրական հիմնախնդիրը, «ճշգրտում» կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների թվաքանակը և հանգում իրականության հետ առնչություն չունեցող հետևությունների: Ըստ նրա կեղծ հաշվարկների՝ տարածաշրջանում բնակվող մահմեղականների թիվը շուրջ երեք անգամ գերազանցում է քրիստոնյանների թվին, իսկ հայերը կազմում են վերջիններիս միայն կեսը»⁵⁸³:

⁵⁸² Նույն տեղում, էջ 6:

⁵⁸³ Նույն տեղում, էջ 32: Այդ մասին տե՛ս սույն գոքի երկրորդ գլխի առաջին ենթագլխում:

Դայեցակարգային այս մոտեցումն ավելի համոզիչ դարձնելուն է միտքած նաև Դե Կուրսոնի կողմից մեկ այլ թեզի առաջադրումը, որով նա հայերին հանիրավի գրկում է տարածաշրջանում բնիկ ժողովուրդ լինելու կարգավիճակից՝ միտումնավոր ծևով այն վերագրելով քրդերին: Այս խիստ եական հարցի նկատմամբ նման դիրքորոշումը պայմանավորվում է հեղինակի ինքնին վերացական հարցադրման, այն է՝ Անգլիայի հովանու ներքո՝ «Դայաստանի թագավորության» ստեղծման անհավանականությունը հիմնավորելու անհրաժեշտությամբ: Այս առիթով նա գրում է. «Քրդերն անառարկելիութեն երկրի (նկատի ունի, հավանաբար, Արևմտյան Դայաստանը – Վ.Պ.) իսկական տեր ու տնօրեններն են, նախ և առաջ այն պատճառով, որ բնիկներ են, իսկ այնուհետև կազմում են բնակչության ճնշող մեծամասնությունը»⁵⁸⁴:

Վիճակագրական տվյալների բացահայտ կեղծիքի և քրդերին իբրև բնիկների ներկայացնելու հենքի վրա Դե Կուրսոնը հեզնանքով է արտահայտվում հայկական թագավորության ստեղծման հավանականության շուրջ, քանզի հայերը, որոնք նման պարագայում կարող են գրավել իշխանությունը և ղեկավարել այլոց, ըստ նրա՝ կազմում են ամբողջ բնակչության ընդամենը մեկ վեցերորդ մասը⁵⁸⁵:

Արդյու Դամիդ Ա-ի՝ իբրև Օսմանյան կայսրության այլազգի հպատակների, մասնավորապես հայերի նկատմամբ խիստ բարյացակամորեն տրամադրված միապետի «մարդասիրական» քաղաքականությունը հիմնավորելու համար Դե Կուրսոնը նենգափոխում է թե՛ օսմանահպատակ հայերի կացության և թե՛ նրանց ու թուրքերի փոխհարաբերությունների իրական պատկերը՝ ներկայացնելով դրանք բացառապես վարդագույն երանգներով: Դայերի արժանիքների և կարողությունների մասին հեղինակն արտահայտվում է անկողմնակալ դիրքերից, բնորոշելով նրանց իբրև քաջարի, խաղաղասեր, շատ խելացի ժողովորդի, որը «զարմանալի ունակություններ» ունի հաշվարկներ կատարելու, լեզուների յուրացման և այլ ասպարեզներում⁵⁸⁶:

Այդուհանդերձ, հայ ժողովորդի հանդեպ արտաքուստ բարեհաճ վերաբերմունքի այս դրսերումը զերծ չէ ենթատեքստից, քանզի դրանով նա ցանկանում է ավելի ընդգծել հայերին խիստ բնորոշ հնագանդությունը: Իբրև դրա հիմնավորում՝ նա վկայակոչում է

⁵⁸⁴ R. Des Courses, նշվ. աշխ., էջ 31:

⁵⁸⁵ Նույն տեղում, էջ 32:

⁵⁸⁶ Նույն տեղում, էջ 7, 25:

հայերի հանդեպ օսմանյան վարչակարգի դրսնորած բարյացակամությանն արնչվող մտացածին փաստարկներ: Ըստ նրա մեկնակերպի՝ Բարձր Դուռը հայերին ընծեռել էր մայրենի լեզվով խոսելու, եկեղեցիներ, սոցիալական հաստատություններ, դպրոցներ ունենալու և նի շարք այլ արտոնություններ: Այս պայմաններում, իրենց նկատմամբ սուլթանի դրսնորած բարեհած վերաբերմունքից գոհ հայերին միանգամայն խորթ են եղել հեղափոխական տրամադրությունները կամ ապստամբական հակումները⁵⁸⁷: Ահա այսպիսին է այն միակ՝ Եվրոպական հանրությանն ապակողմնորոշելու նպատակ հետապնդող հետևողությունը, որին կարելի է հանգել հեղինակի խորհրդածությունների արդյունքում:

Իրականում, խոսքը կենտրոնացնելով արևմտահայերի՝ իբրև հնագանդ հպատակներ լինելու հանգամանքի վրա, Դե Կուրսոնը ցանկանում է ավելի ցցուն դարձնել արտասահմանում, մասնավորապես Սեծ Բրիտանիայում գտնվող «հրահրիչների» կարծեցյալ նենգ դերը, որոնք նրանց դրդել են ապստամբության, ինչը պատճառ է դարձել մարդկային գոհերի և տարածաշրջանում առաջ է բերել խառնաշփոք⁵⁸⁸:

Այդուհանդերձ, Դե Կուրսոնն ընդունում է, որ Օսմանյան կայսրությունում բնակվող հայերը գտնվում են սոցիալական ծանր պայմաններում, սակայն, այս հարցում ևս նա բացահայտորեն աղավաղում է իրավիճակի հավաստի պատկերը, ըստ եռթյան, որևէ զանազանություն չարձանագրելով նրանց և սուլթանի մահմեդական հպատակների կացությունների միջև: Ծրջանցելով միայն քրիստոնյաներից գանձվող հարկերին, ինչպես նաև ազգային ճնշումներին և Վերջիններիս քաղաքական իրավագրկությանն առնչվող փաստերը, նա, փոխարենը, առանձնացնում է քրիստոնյաների «օգտին» վկայող մեկ հանգամանք՝ ուշադրությունը իրավիրելով նրանց զինապարտ չլինելու իրողության վրա: Սակայն, նա խուսափում է որպա իրական պատճառը մեկնաբանելուց, որը հանգում էր Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների նկատմամբ կիրառվող վերաբերմունքի հերթական նկատացուցիչ դրսնորմանը՝ նրանց գենք կրելու իրավունքից գրկելուն: Չեղինակը քննադատում է թուրքերին պարբերաբար գրպարտող անգլիացի տարբեր հեղինակների, որոնց փաստարկների հենքն է համարում «բոլոր իրավախախտումների և քրեական հանցանքների, կողոպուտների, տեղական ընդհարում-

⁵⁸⁷ Նույն տեղում, էջ 7-9:

⁵⁸⁸ Նույն տեղում, էջ 12:

ների հանրագումարը, որը հանրությանն է ներկայացվում իբրև մահմեղականների վայրագությանը զոհ դարձած խեղճ հայերի դեմ ուղղված հալածանք»⁵⁸⁹: Այս եզրահանգմանը, նա ամբողջությամբ ժխտում է Օսմանյան կայսրությունում երմիկական հողի վրա տեղի ունեցող հալածանքների ու տնտեսական կեղեցումների իրողությունը: Արդյունքում, թուրքերի և հայերի միջև գոյություն ունեցող «ավանդական հակակրանքը», ինչպես նաև մոլեռանդ մահմեղականների կողմից քրիստոնյաների հարստահարումը նա հանիրավի համարում է միմիայն անգլիացի գրողների երևակայության արգասիքը⁵⁹⁰:

Օսմանյան կայսրությունում ազգամիջյան փոխհարաբերությունների ասպարեզում Արդուլ Դամիդ II-ի քաղաքականության ջատագովնան և ըստ այդմ՝ այս ասպարեզում ևս իրավիճակի պատկերի նենգափոխման դիրքերից է Դե Կուրսոնը լուսաբանում նաև թուրք-քրդական և հայ-քրդական փոխհարաբերությունները: Այդ մասին են վկայում Արդուլ Դամիդի կողմից համիդիդե պատժի գորամիավորումների կազմավորման կապակցությամբ հեղինակի հիմնազուրկ մեկնաբանությունները: Դե Կուրսոնը հակված չէ «հպարտ և անկանխատեսելի քոչվորներին»⁵⁹¹, օսմանահպատակ քրդերին, համարելու սուլթանի կամակատարներ: Պատահական չէ, որ մեծ մասամբ քրդերից քաղկացած համիդիե պատժի գորամիավորումներ կազմավորելու՝ Արդուլ Դամիդի նախաձեռնությունը նա մեկնաբանում է իբրև նրանց սանձահարելու և, միաստորեն, սուլթանին ենթարկելու նպատակ հետապնդող միջոց⁵⁹²: Ոչ միայն քրդեր, այլև մահմեղական տարբեր ժողովուրդներ ընդգրկող համիդիե գորամիավորումների կազմավորման իրական նպատակը (մասնավորապես քրիստոնյաների հարստահարման) շրջանցող հեղինակը նույնիսկ չի ակնարկում արևմտահայության հանդեպ նրանց գործած անհամար չարիքների և ոճիրների մասին:

Թեև Դե Կուրսոնը չի ժխտում նախկինում հայ ընտանիքների՝ քուրդ թեյերին հարկատու լինելու հանգամանքը, այդուհանդերձ, հերթական անգամ կեղծելով իրականությունը, նույնիսկ հավատում է, թե իբր 1890-ական թվականներին հայերն են արդեն քրդերից տուրքեր գանձել, քանզի իրենց ձեռքում կենտրոնացնելով ամ-

⁵⁸⁹ Նույն տեղում, էջ 36:

⁵⁹⁰ Նույն տեղում, էջ 26:

⁵⁹¹ Նույն տեղում, էջ 29:

⁵⁹² Նույն տեղում, էջ 30:

բողջ առևտուրն ու բանկային գործը, այն օգտագործել են իբրև լժակ՝ նրանց շահագործելու համար⁵⁹³: Ըստ Եության, այս պարագայում ևս նա անթաքույց ստանձնում է Արդուլ Շամիդի դատապաշտպանի դերը և դրվատելով ազգային քաղաքականության ասպարեզում օսմանյան կառավարության գործունեությունը՝ նշում. «Այս ստորացուցիչ և ստրկական փրկազնի վերացնան հանար քրիստոնյաները պարտական են Ժամանակակից թուրքական կառավարությանը»⁵⁹⁴.

Ինչ վերաբերում է «անհուն մեծահոգությամբ» օժտված սուլթանին, ապա Դե Կուրսոնը գտնում է, որ Եվրոպայում ոչ մի գահակալ այնքան լուտանքների չի արժանացել, այդքան չի գրպարտվել և անվանարկվել, որքան Արդուլ Շամիդը: Ըստ Նրա՝ սուլթանի հասցեին տեղացող Վիրավորանքները հասնում են ամերևակայելի չափերի և անբարյացականության դրոշն կրող այդ «կողմնակալ կարծիքը հոգնեցնում է ընթերցողին, հատկապես, եթե խորհում ենք այն մասին, որ խոսքը վերաբերում է այնպիսի նրբազգաց, խելացի, աշխատասեր միապետի, ինչպիսին է Արդուլ Շամիդը»⁵⁹⁵:

Ինչպես տեսնում ենք, Օսմանյան կայսրությունում ազգամիջյան փոխհարաբերությունների՝ Դե Կուրսոնի ներկայացրած հենքի վրա այլազգի հպատակների դեմ Արդուլ Շամիդի ցեղասպան քաղաքականության մասին, անտարակույս, խոսք անգամ լինել չի կարող: Ուստի քողարկելու հանար 1894-1895 թթ. սուլթանի մտահղացնամբ կազմակերպված հայկական կոտորածների փաստը, նա դրանք մեկնաբանում է հակադարձ կտրվածքով, այն է՝ իբրև «հայկական ապստամբություն», որի հետևանքով հակամարտող կողմերը տվել են զոհեր⁵⁹⁶: Իրադարձության պատասխանատվությունը նա բարդում է բացառապես Ղնչակյան կուսակցության և Անգլիայի դեկավակար շրջանակների խառնակից գործունեության վրա: Ղնչակյաններին ներկայացնելով իբրև «անարխիստների» և հեղափոխականների, հետևաբար, Արևմտյան Շայաստանի տարրեր քաղաքներում տեղի ունեցած զանազան բողոքի ցույցերի միակ կազմակերպիչների, հեղինակը նրանց մեղադրում է հանդիյան բիրտ վարչակարգի ճիրաններում հեծող տարրեր, այդ թվում մահմեղական, ժողովուրդներին օսմանյան լծից ազատագրելու և սոցիալական հեղափոխու-

⁵⁹³ Նույն տեղում, էջ 29:

⁵⁹⁴ Նույն տեղում, էջ 28:

⁵⁹⁵ Նույն տեղում, էջ 36, 92:

⁵⁹⁶ Նույն տեղում, էջ 59-61:

թյուն բռնկելու ցանկություն ունենալու մեջ, ինչի հետևանքով «ամբողջ Արևելքը» կարող էր դառնալ իրի ճարակ⁵⁹⁷:

Եթե 1891-1892 թթ. տեղի ունեցած անցքերը Դե Կուրսոնը նպատակահարմար է գտնում համարել «հայկական ապստանքության» նախապատրաստական փուլ, ապա 1893-1894 թթ. տարբեր վայրերում և, մասնավորապես Սասունում՝ «հայկական խնորումների» գարթոնքի մասին վկայող իրադարձությունները պայմանավորում է 1892 թ. Անգլիայում Գլազուոնի իշխանության գլուխ անցնելով⁵⁹⁸: 1894 թ. Սասունի՝ դաժանության առումով աննախադեպ հայկական կոտորածները ևս բնորոշելով իրեւ «ճակատագրական ապստամբություն», հեղինակը պնդում է, որ «սխալ կլինի կարծելը, թե այն նախօրոք խնամքով կազմակերպված չի եղել»⁵⁹⁹: Ուստի օրինաչափ է, որ նա ծանրանում է Արևմտյան Դայաստանում հնչայիանների ծավալած բեղուն գործունեության վրա, ինչի արդյունքում, ըստ նրա, իրահրիշները, բրիտանական կառավարության աջակցությամբ, հայերին նախապես գինել են, ֆինանսավորել և դրդել օսմանյան կառավարության դեմ ապստամբելու:

Դե Կուրսոնն առաջիններից է, որը Սասունի կոտորածների մեկնաբանության հենքի վրա առաջադրում է հետագա տասնամյակներում Դայոց ցեղասպանության կազմակերպիչների և պատմության կեղծարարների՝ իրադրության պատկերը խեղաթյուրող իիմնական կովաններից մեկը, ըստ որի՝ օսմանյան Վարչակարգն Անդոք սարում համախմբված և շրջակայի մահեղական բնակչության հանդեպ անհամար Վայրագություններ ու սարսափելի հանցանքներ գործած ապստամբ հայերին հարկադրված է եղել սանձահարել գինված ուժերի օգնությամբ⁶⁰⁰: «Ապստամբությունն անհրաժեշտաբար կյանքի և կոչում բռնություն, իսկ յուրաքանչյուր բռնություն՝ առաջադիմության այս կամ այն չափով երկարատև կասեցում», – այսպիսին է նրա հիմնական հետևություններից մեկը⁶⁰¹:

Դեղինակը կողմնակալ դիրքերից է վերլուծում նաև Սասունի կոտորածների հետաքննությունը վարած միջազգային հանձնաժողովի «Դամատեղ հաղորդագրությունը»⁶⁰²: Բացահայտորեն շեղվե-

⁵⁹⁷ Նույն տեղում, էջ 52:

⁵⁹⁸ Նույն տեղում, էջ 65, 67:

⁵⁹⁹ Նույն տեղում, էջ 69:

⁶⁰⁰ Նույն տեղում, էջ 70-76:

⁶⁰¹ Նույն տեղում, էջ 12:

⁶⁰² Բազիրը տե՛ս Rapport collectif des Délégués consulaires adjoints à la Commission d'enquête sur l'affaire de Sassoun:

լով փաստաթղթի բնագրից, նա ջանում է ընթերցողին համոզել, թե իր հանձնաժողովը հավաստել է արտասահմանից եկած գործակալների հրահրմամք՝ հայերի պատամբելու և տարրեր ոճիրներ գործելու փաստը, իսկ օսմանյան կառավարությունն օգտվել է իր «ամենաօրինական իրավունքից» և նրանց դեմ գործեր ուղարկել՝ պատամբությունը ճնշելու համար: Դե Կուրսոնը թեև դրվատում է օսմանյան գործերի հրամանատար՝ «մարդասիրությամբ» օժտված Ձերի փաշայի ջանքերը, այդուհանդերձ, հարկադրված է մեծահոգաբար ընդունել, որ հայերն, այնուամենայնիվ, տվել են «ընդամենը» երկուսից երեք հարյուր գոհեր⁶⁰³, ինչի պատասխանատվությունը, սակայն, ըստ նրա մոտեցման տրամաբանության՝ բարդվում է բացառապես հայերի վրա:

«Դամատեղ հաղորդագրությունը» Դե Կուրսոնն ակնհայտորեն մեկնաբանում է կամայականորեն: Դակառակ պարագայում, նա չէր անտեսի այդ կարևոր և արժանահավատ սկզբնաղբյուրի հեղինակների՝ այդ թվում ոչ միայն Անգլիայի, այլև այդ ժամանակաշրջանում բացահայտ թրքամետ քաղաքականություն որդեգորած տեղությունների՝ Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչների (համապատասխանաբար՝ Շիպլի, Պրժեալսկի, Վիլբեր) հիմնական եզրակացությունները, որոնք հիմնավորապես հերքում են հայկական ապստամբության վարկածի հավանականությունը: Այդ կապակցությամբ փաստաթղթում, մասնավորապես նշվում է, որ տարածաշրջանում բնակվող հայերի՝ օսմանյան կառավարությանը հարկեր վճարելուց հրաժարումը «չի վկայում բնակչիների՝ հեղափոխական ոգով տոգորված լինելու մասին»⁶⁰⁴: Վկայակոչելով հայերի կացությանն առնչվող բազում հավաստի փաստեր, տերությունների ներկայացուցիչները հանգում են միակ հնարավոր հետևության, այն է՝ Անդոք սարում հայերի համախմբման պատճառ դարձել են քրդերի հարձակումները⁶⁰⁵.

Փաստաթղթին քաջածանոթ Դե Կուրսոնն, անտարակույս, միայն կողմնակալ մոտեցման արդյունքում է շրջանցել հաղորդագրության հեղինակների մի շարք այլ գլխավոր եզրահանգումներ, որոնք աներկրայորեն հավաստում են հայ ժողովողի հանդեպ կիրառված աննախադեպ կոտորածը. «Ներքոստորագրյալները...

⁶⁰³ R. Des Coursons, նշվ. աշխ., էջ 79-80:

⁶⁰⁴ Rapport collectif des Délégués consulaires adjoints à la Commission d'enquête sur l'affaire de Sassoun, p. 106.

⁶⁰⁵ Նույն տեղում:

հարկադրված են կարծել, որ իրականում, այս իրադարձությունների ընթացքում, հայերը՝ տղամարդիկ, կանայք և երեխաները պարբերաբար հետապնդվել են կամ սպանվել զինվորների, քրդերի և զափթիեների կողմից՝ առանց տարիքի կամ սեռի զանազանության»⁶⁰⁶.

Բացի դրանից, հանձնաժողովի անդամներն անուղղակիորեն փաստում են հայկական կոտորածների կազմակերպումը պետական քաղաքականության նակարդակով, քանզի քացահայտորեն դրանց պատասխանատվությունը բարդում են հավասարապես «օսմանյան տեղական քաղաքացիական և զինվորական իշխանությունների վրա»⁶⁰⁷: Նշենք նաև, որ հաշվի առնելով թուրքական հորդաների կողմից տարածաշրջանի կատարյալ ավերումը, հանձնաժողովի անդամները հաճել են մեկ այլ խիստ կարևոր հետևության և, հավաստելով, որ պատճառված վնասների ծավալը չի կարող դիտվել իբրև «նույնիսկ ապատամբությունը պատժելու» նպատակ հետապնդող բռնություն»⁶⁰⁸:

Դե Կուրսոնը միևնույն աչառու մոտեցումն է ցուցաբերում նայիսյան բարենորոգումների ծրագրի քննարկման առնչությամբ: Նա խիստ քննադատում է հայ ժողովրդի կացության բարելավման նպատակ հետապնդող առաջարկություններ ամփոփող այս փաստաթուրը⁶⁰⁹, մասնավորապես կայսրության վիլայեթների թվի նվազեցման նախատեսման կապակցությամբ: Փաստաթուղթը նա անիրավացիորեն մեկնարանում է իբրև Ետին նպատակ հետապնդող, որն իբր նպատակառուղյամած է «Դայաստանի փոխթագավորության» վերականգնմանը:

Ծրագրի շուրջ Դե Կուրսոնի մեկնարանությունները, ըստ Էռյան, ամբողջությամբ համապատասխանում են Օսմանյան կայսրության տարածքում ազգամիջյան փոխհարաբերությունների առնչությամբ նրա առաջադրած հայեցակարգին: Աբդուլ Համիդի՝ ազգային փոքրանասնությունների հանդեպ դրսկորած կարծեցյալ բարյացական վերաբերմունքի՝ իր իսկ ուրվագծած շրջանակում, Դե Կուրսոնը բարենորոգումների մայսյան ծրագրով նախատեսվող միջոցառումները (կուսակալների ընտրություն, բարենորոգումները

⁶⁰⁶ Նույն տեղում, էջ 107:

⁶⁰⁷ Նույն տեղում, էջ 109:

⁶⁰⁸ Նույն տեղում:

⁶⁰⁹ Բնագիրը տե՛ս Mémorandum.- Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 45-48 ; Projet de réformes administratives à introduire dans les provinces arméniennes. – Նույն տեղում, էջ 48-56:

Վերահսկող գերագույն կոմիսարի նշանակում, վերահսկողության մշտական հանձնաժողովի ստեղծում (և այլն) գնահատում է իբրև սուլթանի և նրա նախարարների իշխանության վերացում. «Սա յուրօրինակ պրոտեկտորատ է», – եզրակացնում է նա⁶¹⁰: Ծրագրի քննարկումը պարփակելով այսպիսի շրջանակներում, Դե Կուրսոնը հանգում է պաշտոնական ֆրանսիայի թրքամետ քաղաքականության հիմնավորանը միանգանայն համահունչ հետևության, այն բնորոշելով իբրև Թուրքիայի դեմ ուղղված անօրինականություն, որը «նախապատրաստում է Օսմանյան կայսրության մասնատումը՝ ի նպաստ բացառապես հայ ազգության, կամ ավելի ստույգ՝ եվրոպական այն տերության, որն իրեն է վերագրել հայերին ներկայացնելու առաջելությունը»⁶¹¹: Սա արդեն բացահայտ ակնարկ է Անգլիայի հասցեին:

Միանգանայն ակնհայտ է, որ Դե Կուրսոնն աղավաղում է Դայկական հարցի իրական իմաստը և, փաստորեն, այն քննարկում բացահայտ կողմնակալ դիրքերից: Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրության հանդեպ Անգլիայի վարած «սարդիչ» քաղաքականության վերլուծությանը, ապա նա այս կարևոր հիմնահարցը մեկնաբանում է ակնհայտորեն չափազանցված կտրվածքով, գունազարդում բրիտանական կառավարության քաղաքականության «հակաօսմանյան» միտվածությունը, ինչն ունի հիմնավոր պատճառներ:

XIX դարի 70-ական թվականների սկզբից ի վեր, հիրավի, աճում է Անգլիայի հետաքրքրությունը Եգիպտոսի նկատմամբ: Դա պայմանավորված է եղել 1869 թ. նոյեմբերին բացված Սուեզի ջրանցքի ռազմավարական նշանակությամբ, քանզի այն Անգլիայի դեկավար շրջանակներին կարող էր հնարավորություն ընծեռել շատ ավելի կարճ ուղղով կապ հաստատել իրենց հիմնական գաղութի՝ Դներկաստանի հետ: Ըստ այդմ՝ 1870-ական թվականները նշանավորվում են Եգիպտոսում գերիշխող դիրքեր գրավելու համար Անգլիայի և Ֆրանսիայի միջև ծավալված համառ մրցապայքարով⁶¹²: Դանգուցալուծումը տեղի է ունենում 1882 թ., երբ Մեծ Բրիտանիան գենքի ուժով ռազմակալում է Եգիպտոսը⁶¹³, ինչն ավելի է սրում երկու

⁶¹⁰ R. Des Coursans, նշվ. աշխ., էջ 87:

⁶¹¹ Նույն տեղում:

⁶¹² Մանրամասն տես A. З. Манфред, Внешняя политика Франции 1871-1891 годов, с. 292-293, 301-303, 307-310; Ф. А. Ротштейн, Захват и закабаление Египта, М., 1959, с. 30-41, 51-60:

⁶¹³ Ф. А. Ротштейн, նշվ. աշխ., էջ 186-198:

տերությունների առանց այն էլ շիկացած փոխհարաբերությունները։ Այդուհետև, դրանց միջև պայքարը շարունակվում է երկար ու ծիգ տարիներ, քանզի ֆրանսիան դիվանագիտական ոլորտում ջանք ու եռանդ չեր խնայում անգլիական զորքերը Եգիպտոսից դուրս վիճություն համար⁶¹⁴։

Մեր կողմից քննարկվող պատմական ժամանակաշրջանը համընկնում է Ֆրանսիայում հակաանգլիական կրօնի բորբոքմանը, ինչն իր դրոշըն է թողել նաև պատմագիտական ուսումնասիրությունների ընդհանուր ոգու վրա։ Այս ժամանակաշրջանում ֆրանսիացի հեղինակներին խիստ բնորոշ է ամենուր անգլիական քաղաքականության չարգութակ ազդեցության «քացահայտումը»։ Դարկ է միմիայն այս էական հանգամանքով մեկնաբանել Դե Կուրսոնի և այլ հեղինակների՝ Դայկական հարցի մեկնաբանության ասպարեզում որդեգրած խիստ ընդգծված հակաանգլիական դիրքորոշումը⁶¹⁵, ինչը հանգեցրել է անհարկի չափազանցությունների և թյուր մեկնաբանությունների։

Դա արտացոլվել է նաև Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման հիմնախնդիրը քննարկելու և դրա անձեռնմխելիությունը հիմնավորելու առնչությամբ։ Այս հարցը Դե Կուրսոնը մեկնաբանում է խիստ միակողմանիորեն։ Գերազնահատելով Փօքր Ասիայում Սեծ Բրիտանիայի քաղաքականության նշանակությունը, նա պնդում է, որ «մշուշապատ Ալբիոնը» հետապնդում էր արհեստական ապստամբությունների միջոցով օսմանյան վարչակարգի ազդեցությունը թուլացնելու նպատակ, ինչը նրան հնարավորություն կընձեռեր տարածաշրջանում իրականացնել ավելի ակտիվ քաղաքականություն և հաստատել իր քաղաքական պրոտեկտորատը⁶¹⁶։

Անգլիայի արևելյան քաղաքականությունը նա մեկնաբանում է հիմնականում նրա «սարսափելի թշնամուն»՝ Ռուսաստանին հակազդելու անհրաժեշտությամբ⁶¹⁷։ Պատահական չէ, որ այս հարցը Դե Կուրսոնը քննարկում է լայն հենքի վրա, վկայակոչում նաև փաս-

⁶¹⁴ A. Z. Մանֆրեծ, նշվ. աշխ., էջ 310։

⁶¹⁵ Դե Կուրսոնն, ի դեպ, Եգիպտոսի բռնագրավումը բնորոշում է իրու «կոպիտ և լկտի» արարք։ Տե՛ս R. Des Coursons, նշվ. աշխ., էջ 18։

⁶¹⁶ Նույն տեղում։

⁶¹⁷ Նույն տեղում, էջ 17։

տեր, որոնք առնչվում են Սեծ Բրիտանիայի հակաօսմանյան քաղաքականությանը Կրետեում, Սակեղոնիայում⁶¹⁸:

Անգլիայի ընդգծված հակառուսական քաղաքականությունը Սերծավոր Արևելքում հիմնավորման կամ առարկումների կարիք ամենակին չունի, փոխարենը, սակայն, մեկնաբանման կարիք ունեն Դայկական հարցում Սեծ Բրիտանիայի քաղաքականության կապակցությամբ Դե Կուրսոնի խիստ չափազանցված մեկնաբանությունները: 1878 թ. հունիսի 4-ին Կոստանդնուպոլսում Անգլիայի դեսպան Լեյարդի և Աբդուլ Ջամիլի միջև գաղտնի բանակցությունների արդյունքում ստորագրված պայմանագիրը հիրավի կրում է ընդգծված հակառուսական բնույթ: Ըստ պայմանագրի՝ բրիտանական կառավարությունը պարտավորվում էր «գենքի ուժով» սատարել սուլթանին՝ Ռուսաստանի կողմից նրա ասիական տարածքների նկատմամբ ոտնձգությունների դեպքում: Փոխարենը, սուլթանը ոչ միայն Անգլիային էր գիշում Կիպրոս կղզին, այլև խոստանում կայսության տարածքում բնակվող քրիստոնյա և այլ հպատակների կացության բարելավման նպատակ հետապնդող անհրաժեշտ բարենորոգումներ իրականացնել⁶¹⁹: Օսմանահպատակ քրիստոնյաների համար բարենորոգումներ նախատեսող՝ պայմանագրի այս կետի առնչությամբ հարկ ենք համարում մանրամասնել, որ բրիտանական կառավարությունն իրականում շահագրգոռված էր ոչ թե նրանց վիճակի բարելավմամբ, այլ առաջնորդվում էր ընդամենը Եվրոպական տերությունների միջև հավասարակշռությունը պահպանելու շահերով: Արտաքուստ քրիստոնյա հպատակների շահերից բխող ննան նախաձեռնության իրական նպատակը բոլորովին այլ էր: Քրիստոնյաների կացության բարելավման միջոցով Սեծ Բրիտանիան ցանկանում էր նվազագույնի հասցնել, եթե ոչ խսպար բացառել Ռուսաստանի՝ Օսմանյան կայսրության գործերին միջամտելու հնարավորությունը, ինչը կարող էր հերթական անգամ (Սան-Ստեֆանոյի պայմանագրով նախատեսված հայկական տարածքների գիշումից հետո) հանգեցնել սուլթանին պատկանող տարածքների նոր կորստի: Արդյունքում, ռուսական ինքնակալության դիրքերը Մերծավոր Արևելքում ավելի կամրապնդվեին, ինչն ամենակին չեղ համապատասխանում «ծովերի տիրուհու» շահերին:

⁶¹⁸ Նույն տեղում, էջ 19-23, 50-51:

⁶¹⁹ Տե՛ս բնագիրը՝ Դայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթրերում (1828-1923), պրոֆ. Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 104:

Ինչպես հիմնավորապես ապացուցել է հայրենական պատմաբան Ա. Կիրակոսյանն անգլիական դիվանագիտական գրագրությունների ուսումնասիրության հիման վրա, անկախ այն բանից, թե 1870-1890-ական թվականներին որ քաղաքական ուժերն են դեկավարել բրիտանական կառավարությունը, այդ թվուն ազատականները՝ Գլազատոնի գլխավորությանք, Անգլիան, արևմտահայերի և առհասարակ քրիստոնյաների Վիճակի բարելավումը համարել է սոսկ անհրաժեշտ նախապայման ռուսական հարձակմանը դիմակայելու համար և որևէ էական քայլեր չի ծեռնարկել նրանց վիճակի բարելավմանն ուղղված բարենորոգումների իրականացնան ասպարեզում⁶²⁰: Դունիսի 4-ի պայմանագրի կապակցությանք նա հանգել է այն հետևողաբար առաջարկության մեջ մասնակի մասնագիտությունը հակադրության գգտումներին բրիտանական դիվանագիտությունը հակադրության էր Օսմանյան կայսրությունն ամբողջապես բարենորոգելու ժամանակ իսկ ընդունելու խոչընդուռում նրանց ազատագրության գործիմ⁶²¹:

Ինչ վերաբերում է 1880-ական թվականներին Անգլիայի արտաքին արևելյան քաղաքականության ելազգներին, ապա բրիտանական կառավարական շրջանակների «հայամետ» տրամադրվածությանն առնչվող վարկածի կատարյալ սնանկությունը մանրազնին քննարկել է ակադեմիկոս Վ. Խվոստովը: Տարբեր կտրվածքներով Անգլիայի մերձավորարևելյան քաղաքականության վերլուծության արդյունքում, դիվանագիտության պատմության խորհրդային անվանի մասնագետը հիմնավորապես դիմագերծել է «նենգ Ալբիոնի» երկումինի քաղաքականության եւրոպական հարցում: Ըստ նրա համոզիչ մեկնաբանությունների՝ բրիտանական քաղաքականությունը կերտողները, ելնելով իրենց եսասիրական շահերից, սոսկ հմտորեն շահարկում էին հայկական խաղաքարտը և այդ ճանապարհին դիմում երկու գործելամիջոցի: Դրանցից մեկը հանգում էր սուլթանի վրա ճնշում գործադրելուն, երբ «ազատական և հումանիստական դատարկ խոսքերից հյուսված բարեվայելուց պարեգուով զգեստավորված»՝ բրիտանական դիվանագիտությունը սուլթանից պահանջում էր հայկական վիլայեթներում բարենորոգումների իրականացում: Դաջորդը՝ Օսմանյան կայսրության մասնատման ծրագրերի առաջադրումն էր: Ի վերջո, Անգլիան գգտում էր

⁶²⁰ Ա. Կիրակոսյան, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX դարի 30-ական թթ.-1914 թ.), Երևան, 1999, էջ 193, 195, 225, 246:

⁶²¹ Սույն տեղում, էջ 107:

հայերի օգտին իր միջամտությամբ ճնշում գործադրել սուլթանի վրա և պարտադրել նրան հաշտվելու եգիպտոսի թռնագրավնան հետ, ինչպես նաև վերականգնել իր սասանված ազդեցությունն Օսմանյան կայսրությունում՝ հետապնդելով ասիական մայրաքանչաքաղաքական ստեղծման վերջնական նպատակ, որի կենտրոնում լինելու էր Ջնդկական օվկիանոսը⁶²²:

Ինքնին հասկանալի է, որ այս պայմաններում Անգլիային՝ իբրև հայկական խմորումների կազմակերպչի ներկայացնելու Դժ Կուրսոնի ջանքերը կատարելապես հիմնազուրկ են: Բրիտանական կառավարության ընդգծված հակառուսական քաղաքականության ետնախորքի վրա նույնքան անհիմն են նաև նրա կողմից Անգլիայի վրա բարդվող մեղադրանքներն Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության մասնատման հարցում, ինչը ևս պայմանավորված է Եգիպտոսի ուղղակալնամբ, քանզի դրանով Անգլիան, իրոք որ, բացահայտորեն ուժնահարել էր Եվրոպական տերությունների կողմից որդեգրված վարդապետությունը: Իրականում Անգլիայի քաղաքականությունը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, ըստ եռթյան, միտված էր գլխավորապես կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանը⁶²³:

Այսպիսին են Դժ Կուրսոնի հիմնական կովանները, որոնք հետագա տասնամյակներում բազմից վկայակոչելու են ոչ միայն թուրք, այլև այլազգի՝ Դայոց ցեղասպանության արժանահավատությունը ժխտող տարրեր հեղինակներ: Ինչպես տեսնում ենք, անկախ այն բանից, թե որոնք են դրա շարժառիթները (ամենայն հավանականությամբ՝ սուլթանի պատվերը), նա խեղաքյուրում է փաստերը, ամբողջությամբ շրջանցում 1878 թ. ի վեր մեծ տերությունների ղեկավար շրջանակներին բազում անհանգստություններ պատճառած Դայկական հարցի իրական իմաստը, ինչպես նաև Օսմանյան կայսրության տարածքում բնակվող քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ՝ համիդյան վարչակարգի կիրառած հալածանքները, գործադրած բռնությունները և արևմտահայության դեմ սանձազերծած ցեղասպանության գործընթացի իրողությունը:

Դժ Կուրսոնի Ելակետային դրույթներից մեկի, այն է՝ Անգլիայի՝ իբրև Օսմանյան կայսրությունում խառնակությունների իրակրիչի

⁶²² В. М. Хвостов, История дипломатии, т. II. Дипломатия в новое время 1871-1914, М., 1963, с. 334.

⁶²³ Մանրամասն տես՝ А. С. Сևաստ, նշվ. աշխ., էջ 210-211; Ա. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 184, 189, 199:

առիթով, նպատակահարմար ենք գտնում վկայակոչել Կամբոնի անաշար հավաստումը: Դայկական հարցին առնչվող խնդիրները բացառապես անկողմնակալ դիրքերից քննարկող և ըստ այդմ՝ պետական թրքամետ քաղաքականությամբ, ինչպես նշեցինք, բացահայտորեն հակադրվող դեսպանը, 1896 թ. հոկտեմբերի 29-ի թվակիր՝ Դանուտոյին հղած ճեպագրում, քննադատում է ռուսական կառավարությանը՝ Վերջին տարում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած տարրեր միջադեպերի պատճառն «անգլիական բանսարկությունների ազդեցությամբ» մեկնաբանելու համար, «չարիքի պատճառն» օսմանյան կառավարության գործելամիջոցներում որոնելու փոխարեն⁶²⁴:

Ինչ վերաբերում է Դե Կուրսոնի կողմից հայկական կուսակցություններին վերագրվող մեղադրանքներին, ապա հարկ ենք համարում նշել, որ այդ հարցը հիմնավորապես մեկնաբանել է նրա ֆրանսիացի ժամանակակիցներից տիկին Շուդրի-Սենոսը. «Սուլթանի խոստումները մնացին իրեն մեռյալ տառեր: Դայ երիտասարդության մի մասն այրժամ դիմեց ազգին՝ խնդրելով բողոքել և բարենորոգումների կենսագործման պահանջ ներկայացնել: Ազգային զարթոնք խթանելու նպատակով ձևավորվեցին հայրենասիրական կոմիտեներ (այն է՝ ազգային կուսակցություններ – Վ. Պ.): Դենց այս իրողությունն են անվանել հայկական ապստամբություն և այն վերագրել անգլիական մեքենայություններին»⁶²⁵.

Դայեցակարգային առունով միևնույն դիրքերից է համիոյան կոտորածները մեկնաբանում Դայոց ցեղասպանության պատճության ժխտողական ուղղության մեկ այլ նախակարապետ՝ Պ. Աբդոն Բուասոնը: Իր հետևություններին նա հանգում է մասնավորապես անգլիական մամուլի և մասսամբ «կապույտ գրքի» որոշ փաստաթրերի, այդ թվում 1894 թ. Սասունում կոտորածների հետաքննությունը վարած միջազգային հանձնաժողովի արձանագրության քննության հիման վրա⁶²⁶: Պատահական չէ, որ նա դրվագում է Դե Կուրսոնի գրքույկը, որն, ըստ նրա, Փարիզում առաջ է բերել սենսացիա⁶²⁷:

⁶²⁴ P. Cambon, Correspondance 1870-1924. Tome premier (1870-1898). Avec un commentaire et notes par Henri Cambon, Paris, 1940, p. 420.

⁶²⁵ Les massacres en Arménie par M^{me} Hudry-Menos, p. 5.

⁶²⁶ P. Abdon Boisson, L'agitation anglo-arménienne, Paris, 1896.

⁶²⁷ Նոյն տեղում, էջ 3:

Աբդոն Բուասոնը խիստ քննադատության է Ենթարկում Անգլիայի պաշտոնական շրջանակներին՝ Օսմանյան կայսրության տարածքում հայկական «հեղափոխական խմորումներ» հրահրելու և անգլիական մամուլին՝ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ «կեղծ լուրեր» տարածելու համար: Անգլիայի պաշտոնական շրջանականների միջամտությունը հիմնավորելու և Օսմանյան կայսրությունում բնակվող մահմեդական ժողովուրդների համար դրա կործանարար ու ողբերգական հետևանքներն ավելի ցայտուն դարձնելու մտադրությամբ՝ բացահայտորեն կեղծելով պատմական իրականությունը, նա վկայակոչում է մտացածին մի փաստարկ, ըստ որի՝ Օսմանյան կայսրությունում հիմք հարյուրամյակ շարունակ հայերը մահմեդական ժողովուրդների՝ լազերի, քրդերի և, մասնավորապես թուրքերի հետ համատեղ ապրել են իբր առանց որևէ խնդիրների: Ուստի նա հանգում է «տրամաբանական» հետևության և իր զարմանքը հայտնում, թե այս պայմաններում հայերն ինչպես կարող էին անհնազանդություն ցուցաբերել՝ առանց արտասահմանում գտնվող տարբեր սաղրիչների հրահրման⁶²⁸:

Չեղինակի հաջորդ գլխավոր միտումը հանգում է սուլթանական վարչակարգի ցեղասպան քաղաքականության ժխտմանը: Աբդոն Բուասոնի դիրքորոշումն այս հարցում ևս միանգամայն համահունչ է Դե Կուրսոնի հայեցակարգին: 1893-1895 թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայկական կոտորածները, ինչպես և նախորդ հեղինակը, նա մեկնաբանում է իբրև լայնածավալ «հայկական ապստամբություն», որի հետևանքով առաջ եկած խմորումների պատասխանատվությունը բարդում է բացառապես Անգլիայի վրա: Ի վերջո, նա հայերին ներկայացնում է իբրև մահմեդական ժողովուրդների դահճի, իսկ վերջիններին՝ իբրև «ապստամբ» հայերի գոհերի:

Չիդելով որևէ սկզբնաղբյուր, նա, փաստորեն, անսպառ երևակայության շնորհիվ մանրամասնորեն «նկարագրում» է 1893 թ. ի վեր Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր տարածաշրջաններում (Մուշ, Երզնկա, Բաբերդ, Ղիարբեքիր, Խարբերդ և այլուր) մահմեդական բնակչության նկատմամբ ապստամբ հայերի «գործած» անհամար ոճիրները: Ըստ հեղինակի՝ ապստամբ հայերը ոչ միայն անխնա կոտորել են և զանգվածաբար բնաջնջել մահմեդականներին,

⁶²⁸ Նույն տեղում, էջ 5, 6:

այդ թվում կանանց և երեխաներին, այլև ավերվել են նրանց բնակավայրերն ու մզկիթները, կողոպտել նրանց ունեցվածքը⁶²⁹:

Աբդոն Բուասոնն Անգլիայի՝ իրեն կարծեցյալ «հայկական ապստամբության» կազմակերպչի դերն ավելի ընդգծելու և ակնառու դարձնելու համար անառարկելի է համարում «ապստամբության» նախապես կազմակերպված լինելու հանգանանքը, շեշտում, որ այն կյանքի է կոչվել և իրականացվել՝ ըստ նախօրոք մշակված ծրագրի⁶³⁰: Բացի դրանից, ի տարբերություն Դե Կուրսոնի, հեղինակը համիդյան կոտորածների պատմությանն անտեղյակ ընթերցողին «հայկական ապստամբության» վարկածի արժանահավատության մեջ հավաստիացնելու համար ընդլայնում է մահմեդական ժողովուրդների հանդեպ հայերի գործած կարծեցյալ զանգվածային բռնությունների և կոտորածների աշխարհագրական շրջանակները, նշում, որ «ապստամբական շարժումը» ծավալվել է Արևմտյան Հայաստանի տարածքից դուրս՝ ներառելով նաև Անգորայի, Աղանայի, Կոնիայի և Յալեափի վիլայեթները:

Ավելի ազդու դարձնելու համար իր խոսքը, հեղինակը մանրամասնում է, որ Արևմտյան Հայաստանից դուրս ևս մահմեդական ժողովուրդների շրջանում «հայկական ապստամբությունը» պատճառել է մեծաքանակ զոհեր⁶³¹: Աբդոն Բուասոնն, ի վերջո, հավաստում է, որ «ապստամբ» հայերի իրականացրած «կոտորածների» հետևանքով մահմեդականներն ունեցել են «առասպելական» թվերի հասնող զոհեր, որոնք, ի թեպ, գերազանցում են, ըստ նրա՝ ամբողջ Անատոլիայում բնակվող հայերի թվիմ⁶³²: Սակայն, քանի որ նա չի հստակեցնում ո՞չ մահմեդականների կարծեցյալ զոհերի և ո՞չ կայսրության կամ նույնիսկ միայն Անատոլիայի տարածքում բնակվող հայերի թվաքանակը, ըստ այդմ՝ իրականության հետ հեռավոր առնչություն չունեցող նրա «հավաստումները» ոչնչով չեն տարբերվում մերկապարանոց բարբազանքներից:

Դեղինակն, այդուհանդերձ, միայն մեկ առիթով է հարևանցիորեն հիշատակում հայերի կրած մարդկային կորուստների մասին և այն պատճառաբանում Անատոլիայում նրանց և մահմեդականների միջև ծագած ընդհարումներով, որոնց արդյունքում հակամարտող կողմե-

⁶²⁹ Նույն տեղում, էջ 6-11:

⁶³⁰ Նույն տեղում, էջ 8:

⁶³¹ Նույն տեղում, էջ 11:

⁶³² Նույն տեղում:

որ տվել են բազմաթիվ գոհեր՝⁶³³ Ըստ նրա շարադրանքի՝ կարելի է հանգել միայն մեկ հնարավոր հետևության՝ որոշ թվով հայեր դարձել են իրենց իսկ ապստամբության հետևանքով ծագած ընդհարումների գոհեր և ըստ այդմ՝ դրա պատասխանատվությունը կարող է բարդվել միայն նրանց վրա:

Աբդոն Բուասոնը չի շրջանցում օսմանյան զորքերի միջամտությունը, ինչը, սակայն, մեկնաբանում է, փաստորեն, իբրև հայերի մտացածին ապստամբությունը սանձահարելու և կարգը վերականգնելու ։ նպատակ հետապնդող՝ օսմանյան կառավարության կողմից կիրառված հարկադրական միջոց՝⁶³⁴ Դե Կուրսոնի հետքերով՝ Աբդուլ Շամիդ II-ին համարելով «ամենախաղաղասեր գահակալներից մեկը», հեղինակը դրվատում է նրան, որի նախաձեռնության շնորհիվ հայերի պատճառած վնասների հետևանքները «հնարավորության սահմաններում» վերացվել են⁶³⁵:

Անդրադարձ Աբդոն Բուասոնի քննարկած մի շարք այլ կարևոր հարցերի ևս: Ինչպես և Դե Կուրսոնը, նա շրջանցում է պատմական Շայաստանի բռնագրավումը և ժխտում Շայաստանի գոյության փաստն իսկ, ինչը միանգամայն համահունչ է նրա հայեցակարգին: Ուստի իմանավորելու համար պատմական անցյալի այս հերթական խեղաքյուրումը, նա հիմնվում է հայտնի հայատյաց ռուս պետական գործիչ Ա. Լորանով-Ռոստովսկու հայտարարություններից մեկի վրա, ըստ որի՝ «չկա այդպիսի տարածք, որը կարող է բնորոշվել իբրև Շայաստան»⁶³⁶:

Դարկ ենք համարում նշել, որ ըստ Եության, Դե Կուրսոնի և Աբդոն Բուասոնի մոտեցումների միջև առկա սակավաթիվ զանազանություններից մեկը վերջինիս կողմից ռուսական ինքնակալության հակահայկական քաղաքականության քննարկումն է Շայկական հարցում: Այս զգալի տեղը, որը նրա մտորումներում հատկացված է այս հարցին, պայմանավորված է, անկասկած, գլխավորապես ռուս-ֆրանսիական դաշինքի կայացումից հետո Երրորդ հանրապետության և ռուսական ինքնակալության՝ Շայկական հարցում համահունչ քաղաքականության իմանավորման անհրաժեշտությամբ: Ֆրանսիայի դաշնակցին սիրաշահելու նպատակով, որն ինչպես նշեցինք վերը, XIX դարի վերջին կարում էր ոչ հայանպաստ քաղա-

⁶³³ Նույն տեղում, էջ 3:

⁶³⁴ Նույն տեղում, էջ 6:

⁶³⁵ Նույն տեղում, էջ 10:

⁶³⁶ Նույն տեղում, էջ 12:

քականություն, Արդոն Բուլասոնը հաճույքով է ընդգծում այն փաստը, որ Ռուսաստանը հակված չէ Փոքր Ասիայում հայերին տրամադրելու մի տարածք, որը կարող է դառնալ «հայկական անկախ թագավորության հիմքը»⁶³⁷: Պատահական չէ, որ նա շեշտում է նաև Լոբանով-Ռոստովսկու՝ Փոքր Ասիայում կարգ ու կանոն հաստատելու հարցում սուլթանին գործելու ազատություն ընծեռելուն առնչվող կարծիքը, որը կրցուտությամբ սատարում էր Հանուտոն:

Ըստ այդմ՝ հեղինակը, ինչպես և ֆրանսիացի իր ժամանակակիցների գերակշռող մասը, հանդես է գալիս իբրև Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու ջատագով, խելամիտ համարում Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելուց ծերնպահ մնալու քաղաքականությունը, ինչպես նաև գովերգում ռուսական գահակալին՝ «սուլթանին կատարյալ անկախություն» տրամադրելու քաղաքականությանը հետամուտ լինելու համար, ինչը համարում է ոչ միայն Եվրոպայում խաղաղության, այլև հայերի բարեկեցության ապահովության երաշխից⁶³⁸.

Այս հոդվածում Արդոն Բուլասոնը չի օգտագործել, ըստ եռթյան, ոչ մի սկզբնաղբյուր, բայց Սասունում կոտորածների հետաքննությունը վարած միջազգային քննիչ հանձնաժողովի «Դամատեղ հաղորդագրությունից», որի հիմնական հետևողությունները մեկնաբանում է միևնույն փաստարդին Դե Կուրսոնի տված գնահատականների ոգով, շրջանցում սկզբնաղբյուրի հեղինակների՝ հայկական «ապստամբության» վարկածի հավանականությունը հիմնավորապես հերքող եզրակացությունները, որոնց անդրադառնք վերը: Այս պայմաններում, միանգամայն օրինաչափ է, որ աբբա Գրիգելն Արդոն Բուլասոնին իրավամբ բնութագրել է իբրև՝ բացահայտորեն սուլթանի ջատագովմանը միտված և Անգլիայի դեմ ուղղված պանֆլետի հեղինակի⁶³⁹:

Արդոն Բուլասոնի թեզերի կապակցությամբ իմաստ ունի հիշատակել, իրադարձությունների ժամանակակից թուրք գործից Սուլրադ բեյի վկայությունը. «Երբ Թուրքիայում արտասանում էին «հայ-

⁶³⁷ Նույն տեղում:

⁶³⁸ Նույն տեղում:

⁶³⁹ L'abbé E. Griselle, Une victime du pangermanisme. L'Arménie Martyre, Paris, 1916,

տարին ազգ» բառերը, ամենքը հասկանում էին, որ խոսքը վերաբերում է հայերին»⁶⁴⁰:

Մեր ժամանակակից պատմաբաններից՝ Դե Կուրսոնի և Արդոն Բուասոնի հայրենակից ի. Տերնոնը նրանց իսկ քննարկած՝ 1895 թ. տեղի ունեցած իրադարձություններին տվել է հետևյալ մեկնաբանությունը, որի հետ մենք ամբողջությամբ համամիտ ենք. «1895 թ., բացառությամբ Բարբ Ալիի ցույցի, հայերը չեն, որ տեղիք են տվել բռնությունների սանձազերծնանը: Նրանք երբեւ բացահայտորեն չեն ապատամբել իշխանության դեմ: Ինչ վերաբերում է հայկական հեղափոխական շարժմանը, այն դեռևս կայացման փուլում էր: Սուլթանի հպատակ հայերի մեծամասնությունը պահանջում էր սոսկ՝ առնվազն տասնութ տարուց ի վեր խոստացված բարենորոգումների կիրառում: Այսպիսով, ոչ մի բռնություն չէր արդարացվում»⁶⁴¹:

Ի տարբերություն նախորդ կեղծարարների՝ Լուի Ռուսոն հայկական կոտորածների հավաստիությունը ժխտում է Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված գրքում, որտեղ քննարկում է, մասնավորապես XIX դարում տարբեր՝ մտավոր, ռազմական, տնտեսական և այլ ոլորտներում տեղի ունեցած «առաջընթացները»⁶⁴²: Հեղինակը բացահայտորեն հետապնդում է օսմանյան գահակալներին, հատկապես, Արդուլ Ջամիլ II-ին մեծարելու, Օսմանյան կայսրությունն իրեն արևմտյան երկրներն ալեկոծած առաջադիմական միտումներն ընդօրինակող պետություն ներկայացնելու նպատակ: Ռուսոն ոչ միայն շեշտում է «առաջադիմության և գեղեցիկի» նկատմամբ թուրքերի ունեցած կարծեցյալ հակումը⁶⁴³, այևս դիմելով կեղծարարության՝ ժխտում է XIX դարում օսմանյան վարչության բռնակալական բնույթը, այն ներկայացնում իրեն օրենքների վրա հիմնվող պետություն⁶⁴⁴: Այլ կերպ ասած, հետամնաց և բռնակալական Օսմանյան կայսրությունը նրա գրչի տակ հաօնում է, ըստ ժամանակակից տերմինաբանության՝ իրեն իրավական պետություն, որն ինչպես հեղինակը ջանում է ապացուցել՝ պարբերաբար բարելավել է իր տարածքում բնակվող տարբեր ժողովուրդների կացությունը:

⁶⁴⁰ Mourad bey, Le Palais de Yildiz et la Sublime Porte. Le véritable mal d'Orient, Paris, 1895, p. 16.

⁶⁴¹ Y. Ternon, Les Arméniens. Histoire d'un génocide, p. 123.

⁶⁴² L. Rousseau, L'effort ottoman, Paris, 1907.

⁶⁴³ Նույն տեղում, էջ 50:

⁶⁴⁴ Նույն տեղում, էջ 111:

Անհրաժեշտ ենք համարում այս հենքի վրա քննարկել Արդուլ Սեցիդի՝ 1856 թ. փետրվարի 18-ի՝ սոսկ սին խոստումներ շռայլած հաբը-հումայունին տված Ուլսոյի մեկնաբանությունները, ըստ որոնց՝ այդ հրովարտակով թուրքերն իբր դադարել են լինել «նվաճող ազգ» և մուտք են գործել «Եվրոպական մեծ ընտանիք»⁶⁴⁵: Դարկ է մանրամասնել, որ այս առիթով՝ հեղինակը հերթական անգամ շեշտում է սոսկ թուրքերի՝ Եվրոպական կենսակերպի չափանիշներին մերձենալու կարծեցյալ ծգտումը, ամբողջությամբ անտեսելով այն պատմական հանգամանքները, որոնք օսմանյան դեկավարներին դրդել էին հրապարակել Թանգիհարի երկրորդ փուլը սկզբնավորած այս հրովարտակը: Ուլսոն շրջանցում է փաստաթղթի հրապարակման հիմնական նպատակը, այն է՝ Եվրոպական նորամուծություններն ընդորինակելու միջոցով Օսմանյան կայսրության փլուզման կանխումը և թուրքերի հովանու ներքո՝ կայսրության տարածքում բնակվող ժողովուրդներին մեկ՝ օսմանական ազգի մեջ միաձուլումը⁶⁴⁶:

Ելենլով իր իսկ որդեգրած հայեցակարգից՝ Ուլսոն լուրերյան է մատնում Դայկական հարցն ու Դայոց ցեղասպանության գործընթացը: Դենց դրանով է բացատրվում նաև այն, որ Օսմանյան կայսրության կազմավորման առիթով նա հիշատակում է օսմանյան տարրեր գահակալների կողմից Բյուզանդիայի, բալկանյան երկրների նվաճման մասին (ի դեպ, դրվատում է Կոստանդնուպոլիսն արյամբ հեղեղած, ավերած ու կողոպտած արյունության Մեհմեդ II-ին, որն, ըստ նրա՝ քաղաքի պարիսպների վրա փառապանծորեն «ծածանել է Սուլիանեղի դրոշը»)⁶⁴⁷, սակայն, որևէ տեղ, նույնիսկ հպանցիկ, չի ակնարկում հայկական պատմական տարածքների ռազմակալման մասին:

XIX դարի վերջին թե՛ Բարձր Դոանը և թե՛ Եվրոպական պետություններին արդեն մեծ անհանգստություններ պատճառած Դայկական հարցը, որի լուծումը հիդ էր կայսրության տարածքային ամբողջականության տրոհմամբ, դարձել էր արևմտահայության ցեղասպանության գործընթացի սանձազերծման հիմնական պատճառը: Ուստի օսմանյան գահակալին մեծարող ֆրանսիացի հեղինակը գերադասում է շրջանցել դրա գոյության փաստը, խուսափելու համար Արդուլ Դամիդի վրա ստվերի նշույլ իսկ ծգելուց: Նույնիսկ համիդիեն

⁶⁴⁵ Նույն տեղում, էջ 294:

⁶⁴⁶ Այդ մասին տե՛ս P. A. Սաֆրատյան, նշվ. աշխ., էջ 49:

⁶⁴⁷ L. Rousseau, նշվ. աշխ., էջ 149:

գորամիավորումների գործողությունները, որոնք, ինչպես պարզ կում է, կարող էին միայն «պատերազմի պարագայում օգտակար» լինել, նա պարփակում է արարների՝ Եմենում բռնկված ապստամբությունը ճնշելու շրջանակներում⁶⁴⁸, չիշատակելով Արևմտյան Դայաստանում գործած նրանց չարիքների նասին:

Ուստի ոչ միայն անտեսում է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, այլև գերադասում է ազգամիջյան հարաբերություններն Օսմանյան կայսրությունում չփարձնել ուսումնասիրության առանձին թեմա: Այդուհանդերձ, Ելնելով հեղինակի զանազան դիտարկումներից, կարելի է, ընդհանուր գծերով, քննարկել նրա տեսակետները նաև այս ասպարեզում:

Օսմանյան կայսրության տարածքում բնակվող տարբեր ժողովուրդների ֆիզիկական բնաջնջման և տնտեսական կեղեցման իրողությունները ժխտող, թուրքիայում խաղաղություն հաստատելու ուղղությանը Արդուլ Դամիդի «Զանքերը» ներբողող պատմաբանը⁶⁴⁹, ընդունում է, այնուամենայնիվ, XIX դարում կայսրությունը ցնցած «մեծ ապատամբությունների» և դրանց մնշման ընթացքում գործադրված վայրագությունների փաստը, որոնց պատասխանատվությունը, սակայն, բարդում է ոչ թե Բարձր Դուռ կամ նույնիսկ «Քուրքական կանոնավոր բանակի գինվորների», այլ չերքեզ բաշիրողուկների և ալբանացի կամավորների վրա⁶⁵⁰, որոնք, ինչպես կարելի է ենթադրել, հավանաբար, գործել են սեփական նախաձեռնությամբ:

Դարևանցիորեն հիշատակելով միայն բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժումների նասին, Ուստի ամբողջությամբ ժխտում է թե՛ օսմանյան պետության՝ Բալկաններում վարած ցեղասպան քաղաքականության փաստը և թե՛ օսմանյան բռնատիրության դեմ՝ բալկանյան ժողովուրդների մղած պայքարի ազգային-ազատագրական բնույթը, շրջանցում դրա պատճառները: Օսմանյան կեղեցիչ լուծը թոքափելու, հայրենիքի ազատագրման համար պայքարի ելած հույններին, սերբերին և բուլղարացիներին նա ներկայացնում է իրու հրոսակախմբերում միավորված՝ ահաբեկչություն սփոռող, գավառներն ամայացնող, քաղաքներն ու գյուղերը հրկիզող, խաղաղ բնակչությանը ոչնչացնող «համարձակ ավազակների»⁶⁵¹:

⁶⁴⁸ Նույն տեղում, էջ 167:

⁶⁴⁹ Նույն տեղում, էջ 247:

⁶⁵⁰ Նույն տեղում, էջ 143:

⁶⁵¹ Նույն տեղում, էջ 175:

Միտումնավոր խեղաթյուրելով Բալկանյան թերակղզում տիրող իրավիճակի հավաստի պատկերը, Ուստու ջանում է հիմնավորել բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները ճնշելու ուղղությամբ օսմանյան վարչակարգի կիրառած բռնությունների անհրաժեշտությունը և օրինականությունը, ընդկառում բոլոր նրանց դեմ, ովքեր «համարձակվում են մեղադրել օսմանյան գործերին՝ ոչ մահմեդական ժողովուրդների նկատմամբ գործած վայրագությունների համար»⁶⁵².

Անկախ այս ամենից, ինչպես տեսնում ենք, Ուստու, այնուամենայնիվ, ընդունում է Օսմանյան կայսրությունն ալեկոծած ազգային-ազատագրական շարժումների իրողությունը և դիմելով բացահայտ կեղծիքի՝ դրանք մեկնաբանում, ինչպես և Ալոշը (առանց ծշգրտելու, սակայն, թե որ ժողովուրդների ներկայացուցիչներին է վերաբերում խոսքը), գլխավորապես, արտասահմանում բնակվող՝ կայսրության տարբեր ժողովուրդներին՝ անհնազանդության դրդող հրահրիչների գործունեությամբ⁶⁵³: Ըստ այդմ՝ Օսմանյան կայսրությունում բարենորդումների իրականացնանը ցանկալի ընթացք տալու համար, նա անհրաժեշտ է համարում կասեցնել թե՛ ազգային կուսակցությունների գործունեությունը, որոնք ի թիվս պառակտողական բնույթի այլայլ արարքների, «ենթակա դասակարգերին զինում են միմյանց դեմ, սերմանում տարածայնություններ» և թե՛ արգելել «ապստամբ հոգևորականությանը կապեր պահպանել արտասահմանի հետ»⁶⁵⁴:

Ուստու, սակայն, չի բավարարվում օսմանյան վարչակարգին անհանգստություններ պատճառող խնորումների համար պատասխանատվությունն ազգային կուսակցություններից (այդ թվում, հավանաբար, նաև հայկական) բացի նաև հոգևորականության (հեղինակն, ի դեպ, չի մեկնաբանում, թե որ ժողովուրդների պարագայում) վրա բարդելով: Օսմանյան կայսրությունում բռնկված ապստամբությունների համար Աբրու Դամիոհին և նրա վարչակարգը փոքր-իսկ պատասխանատվությունից գերծ պահելու նտադրությամբ՝ նա պնդում է, որ կայսրության տարածքում հուգումների բռնկման և «եղբայրասպան պատերազմների» սանձագերծնան պատճառ միշտ դարձել է քրիստոնեությունը⁶⁵⁵: Ակնհայտ է, որ օսմանյան վարչա-

⁶⁵² Նույն տեղում, էջ 176:

⁶⁵³ Նույն տեղում, էջ 176, 247, 307, 309:

⁶⁵⁴ Նույն տեղում, էջ 309:

⁶⁵⁵ Նույն տեղում, էջ 309-310:

կարգի և հպատակեցված ժողովուրդների միջև կայսրությունում տեղի ունեցող ընդհարումների հիմնական պատճառները (հալածանքներ, պետական քաղաքականության մակարդակով իրականացվող զանգվածային բնաջնջումներ, մշակութային առաջընթացի արգելակում, մշակութային արժեքների ոչնչացում և այլն) հեղինակը գիտակցաբար խեղաթյուրում է, իսկ առաջակատումների պատճառը փորձում մեկնաբանել սոսկ կրոնական դավանանքների զանազնությամբ:

Միաժամանակ Ռուսում ձգտում է հիմնավորել Բարձր Դօան՝ «դավաճանությունները, նենգությունները, չարագործությունները» պատժելու իրավասությունները: Այս հարցում հեղինակը ևս մեկ անգամ ուշադրությունը իրավիրում է սուլթանի՝ կայսրությունում կրքերը մեղմացնելու, համընդիանուր խաղաղություն հաստատելու, քրիստոնյաների և մահմեդականների մերձեցումն ապահովելու և աղանդավորությունն արմատախիլ անելու ուղղությամբ գործադրած ջանքերի վրա⁶⁵⁶.

Ինչպես տեսնում ենք, Ռուսոյի հայեցակարգն աչքի է ընկնում ակնհայտ միտումնավորությամբ, որը չեր կարող, բնականաբար, իր դրոշմը չթողնել ոչ միայն քննարկվող հարցերին տված նրա մեկնաբանությունների, այլև նրա շարադրանքում ընդգրկված հիմնախնդիրների ընտրության վրա (մասնավորապես, Հայկական հարցի շրջանցում):

Զատագովական դիրքերից է գրված նաև Է. Լո Ժոնի գրչին պատկանող Աբդուլ Համիդի կենսագրականը, որը ոչնչով զգանազանվելով սրբերի վարքագրությունից, ընդգրկում է սուլթանի գործունեության դրվագները մինչ հայկական կոտորածների սանձազերծումը⁶⁵⁷:

Աբդուլ Համիդին գովաբանող հեղինակներին, այդ թվում անուղղակիորեն նաև Լո Ժոնին, «Դրոշակի» խմբագրությունը տարիներ անց բնութագրել է իբրև «զագիր գրչակների», որոնք նրան «սիրով ու յաճախ ներկայացնում են որպես ուժեղ, աննկուն, անպարտելի մի նկարագիր»⁶⁵⁸: Աբդուլ Համիդի ջատագովների դիրքորոշումը բնութագրելու համար միանգամայն հատկանշական են Դ. Սպիրովի խոսքերը. «Սուլթանին անվանել մարդասեր, այն սուլթանին, որի

⁶⁵⁶ Նույն տեղում, էջ 308:

⁶⁵⁷ E. Le Jeune, Comment on sauve un empire. S. M. I. le Sultan Ghazi Abdul Hamid Khan II et son œuvre, 2^{ème} éd., Paris, 1895.

⁶⁵⁸ «Դրոշակ», 1909, թիվ 4, էջ 44:

հրամանով ամեն ամիս մորթվում է 500 գյավուր, անհերթություն է, իսկ եթե ուզում եք՝ նաև խայտառակություն, և միայն ցնդած ուղեղը, մարդկային մթագնած միտքն ու խիղճը կարող են նման բան ասել»⁶⁵⁹.

Մեր կարծիքով, հայկական կոտորածների պատմությունն աղավաղող, դրանց փաստն անսօրող հերքող գրականությունը երևան է եկել անձամբ Աբդուլ Չամիդի պատվերով։ Մենք կասկածներ իսկ չենք տածում, որ Դե Կուրսոնի և Աբդոն Բուասոնի տպածոները կյանքի են կոչվել ի պատասխան՝ Սասունում կոտորածների հետաքանությունը վարած, Վերը հիշատակված, միջազգային քննիչ հանձնաժողովի «Չամատեղ հաղորդագրության» հրապարակման և հետապնդել դրանում ամփոփված հիմնական դրույթների հերքման նպատակ։ Բացի դրանից, լինելով խիստ խելացի, օսմանյան գահակալն, անտարակույս, առաջնորդվել է «verba volant, scripta manent» սկզբունքով և ըստ այդ՝ նրա պատվերով հանդես եկած հեղինակների հիմնական խնդիրներից մեկը եղել է ապագա սերունդների ապակողմնորոշումը։ Ընդհանուր առնամբ, նրանց դիրքորոշումն ամբողջությամբ համապատասխանել է Չայկական հարցում ֆրանսիական կառավարության որդեգրած՝ խիստ ընդգծված թրքամետ քաղաքականությանը։

Այդուհանդերձ, անկախ այն բանից, թե ինչ դրդապատճառներից ելնելով են քննարկված գրքերի և հոդվածների հեղինակները կեղծել Օսմանյան կայսրության պատմությունը, շրջանցել հայ և քրիստոնյա այլ ժողովուրդների բնաջնջման՝ օսմանյան միապետների քաղաքականությունը, կատարել են արդյոք Բարձր Ղօան պատվերը, թե սեփական նախաձեռնությամբ են սատարել Ֆրանսիայի պետական քաղաքականությունը, նրանք, փաստորեն, Չայոց ցեղասպանության պատմության պատմագրության մեջ սկզբնավորել են այս իրադարձության արժանահավատությունը Ժխտող և առ այսօր հարատևող ուղղությունը»⁶⁶⁰։

Ինչպես տեսանք, Չայոց ցեղասպանության փաստը Ժխտող՝ պատմական իրադարձությունների գիտական մեկնաբանության

⁶⁵⁹ Դ. Ա. Սպիրով. Աշվ. աշխ., էջ 48:

⁶⁶⁰ Նշենք, որ 1890-ական թվականներին Չայոց ցեղասպանության պատմագրության Ժխտողական ուղղության առաջին ներկայացուցիչների ծայնը, անտարակույս, ոչ այնքան խրոխտ, որքան Ֆրանսիայում, լսելի է եղել նաև Շվեյցարիայում. Le Vieux de la Montagne, Arméniens et Arménophiles, Genève, 1896. Այդ մասին մանրամասն տե՛ս P. Videlier, Nuit turque, [Paris], 2005, p. 20-24:

հետ հեռավոր առնչություն չունեցող պատմագիտական գրականության տեսակարար կշիռ նվազ է: Առավել ևս, եթե նկատի ունենանք ֆրանսիական պատմագրության ծեռքբերումներն այս ասպարեզում, ապա ակնքախ կդառնա, որ նշված հեղինակները չեն կարող ապակողմնորոշել 1890-ական թվականների հայկական կոտորածների պատմությանն իրազեկ ֆրանսիացի ընթերցողին և վճռորոշ ազդեցություն ունենալ ֆրանսիական հասարակական կարծիքի ձևավորման վրա: Մեկնաբանենք, որ նրանց աշխատանքները, ըստ եռթյան, շրջանցվել են ոչ միայն կոտորածների ժամանակակից և դրանց փաստը հավաստող ու օսմանյան վարչակարգը դատափետող պատմաբանների և գործիչների, այլև հետագա տասնամյակներում Դայոց ցեղասպանության պատմությունը գիտականորեն մեկնաբանած արհեստավարժ ուսումնասիրողների կողմից⁶⁶¹:

Այդուհանդերձ, հարկ է նաև նկատի ունենալ, որ 1890-ական թվականներին Ֆրանսիայում դեռևս ոչ բոլորն ունեին համիդյան կոտորածներին առնչվող հավաստի տեղեկություններ և չի բացառվում, որ այս բնույթի գրականությունը սուլթանի համար, հավանաբար, կարող էր ունենալ որոշակի դրական արդյունքներ:

Դամիդյան կոտորածների իրողությունը ժխտող՝ հեղինակների հիմնական թեզերը, կապված, մասնավորապես պատմական Դայաստանի գոյության փաստի ժխտման, դարերից ի վեր թուրք և այլազգի ժողովուրդների խաղաղ գոյակցության, հայկական ապստամբության վարկածների հետ միանգամայն համահունչ են հետագա տասնամյակներում Դայոց ցեղասպանության արժանահավատությունը ժխտած թե՝ օսմանյան պետական գործիչների և թե՝ այլազգի. ինչպես նաև թուրք տարատեսակ գրչակների առաջադրած մեկնաբանություններին: Դայոց ցեղասպանության իրողությունը տարբեր երկրներում ժխտող հեղինակները, մասնավորապես 1970-ական թվականներին ի վեր թուրք պատմաբանները, բազմիցս որդեգրել են իրենց ֆրանսիացի նախորդների հիմնական թեզերը:

⁶⁶¹ Սեզ հայտնի հեղինակներից միայն արքա Գրիգելն է, ինչպես նշեցինք, թրուցիկ հիշատակել սոսկ Արդյուն Բուասոնի հոդվածի մասին և այդ առնչությամբ քննադատական խոսքեր ուղղել հեղինակի հասցեին:

ԳԼՈՒԽ III

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՎՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՍՎՐԱԿԱԿԱՎՆ ՄՏՔԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՍԲ

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԵՎ ԳՐՈՂՆԵՐԸ 1894-1896 ԹԹ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես արդեն նշեցինք, XIX դարի վերջին և XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունում հայկական կոտորածների կազմակերպիչների դիմագերծմանը մեծապես նպաստել են ֆրանսիացի զանգան, անգամ թևեռային քաղաքական հավատամքներ դավանող նշանավոր քաղաքական գործիչներ, այդ թվում պահպանողականներ և սոցիալիստներ: Նրանց թվում առանձնանում է ականավոր պետական և քաղաքական գործիչ, 1875 թվականից արմատականների պարագլուխ, 1906-1909 և 1917-1920 թթ. Ֆրանսիայի վարչապետ, գրական հարուստ ժառանգություն թողած (թե՝ քաղաքական և թե՝ գեղարվեստական բնույթի 26 գրքի հեղինակ) Ժորժ Կլեմանսոն: Արագին անգամ համիլյան կոտորածներին նա անդրադարձել է 1896 թ. Փարիզում լույս ընծայված՝ «Դայաստանի կոտորածները. ականատեսների վկայություններ» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուի առաջարաբնում, ուր ջարդարարներին տվել է խստաշունչ գնահատականներ⁶⁶²: Կլեմանսոյի համոզմանը «այս ժողովածուն շատ պատեհ է այն պահին, երբ սկսում են կրկին խոսել հայկական նահանգներում տեղի ունեցող «խոռվությունների» մասին: Դայտնի է, թե ինչ ինաստ է պարունակում այս բառը: Այսպիսին է հայերի պարբերական կոտորածները մատնանշող պաշտոնական մեղմ

⁶⁶² G. Clemenceau, Préface.— Les massacres d'Arménie. Témoignages des victimes, p. 5-18. Նշենք, որ Կլեմանսոյի առաջարաբնը մասնակի կրօնումներով տպագրվել է նաև «Պրո Արմենիա» երկշարաբերում («Pro Armenia», 10-25 avril 1902), իսկ վերջերս Ֆրանսիայում վերատպագրվել. Les massacres d'Arménie : témoignages de victimes, par Georges Clemenceau // Arménie une passion française «le mouvement arménophile en France 1878-1923», p. 143-147:

արտահայտությունը: Այս տեսակետից, անտեղյակ ծևանալն այլևս թույլատրելի չէ»⁶⁶³:

Առաջին իսկ ելույթում Կլեմանսոն Արևմտյան Դայաստանում ծավալված իրադարձությունները բնութագրում է իրու «նողկալի» և «սոսկալի» տեսարաններ, իսկ հայ ժողովողի կրած տառապանքները՝ «զարդուրելի նարտիրոսություն»: Նա ցավով ընդգծում է, որ թերևս անհնար կլինի երբեւ ունենալ մարդկային հասարակության համար անպատճաբեր այն տեսարանների ամբողջական պատկերը, որոնց թատերաբեմն է դարձել Անատոլիան ՀՀ դարի նախաշեմին»⁶⁶⁴:

1901 թ. «Պրո Արմենիա» լրագրում լույս ընծայած «Արյունու ծեռքը» հոդվածում Կլեմանսոն Դայոց ցեղասպանությունը քննարկում է արդեն շատ ավելի լայն ետնախորքի վրա և այն դասում XIX-XX դարերի սահմանագծում տարբեր աշխարհամասերում (Աֆրիկա, Ասիա) տեղի ունեցած զանազան զանգվածային բռնությունների շարքը: Օսմանյան կայսրությունում ընթացքի մեջ գտնվող հայկական կոտորածների վերաբերյալ նա, մասնավորապես, նշում է. «Փոքր Ասիան դարձել է նողկալի տեսարանների ականատեսը, որոնք նվազ նշանակալից չեն: Այստեղ կարմիր սուլթանն է, որը քրիստոնեության բարեհած հովանավորությամբ, սրով ու հրով, դեկավարում է բնաջնջումը Դայաստանի նահանգներում»: Ըստ այդմ՝ նա Արդու Դամիդին անվանում է քաղաքներն ու գյուղերը կողոպտող, անգեն մարդկանց կոտորող, կանանց, երեխաններին և ծերունիներին եկեղեցիներում հրկիզող, մարդկանց ստվար զանգվածներն ամայի հարթավայրեր քշող «քագակիր ավազակ»⁶⁶⁵:

Արևմտահայության ցեղասպանության մանրամասները մշտապես տեսադաշտում պահու Կլեմանսոն 1904 թ. կոտորածների ժամանակաշրջանում առանձնահատուկ ուշադրություն է իրավիրում օսմանյան կառավարության նենգ գործելամիջոցների վրա, ներկացնում սուլթանի՝ ջարդերի պատասխանատվությունը հայերի վրա բարդելու արատավոր վարքագիծը: Ինչպես նա նշում է, Վանում հայերի ապստամբության «հետքն իսկ նշանիլի չէ: Եթե հայերն ապստամբեն, թուրք խիստ երջանիկ կլինի պաշտոնապես այդ հա-

⁶⁶³ G. Clemenceau, նշվ. աշխ., էջ 5-6:

⁶⁶⁴ Նույն տեղում, էջ 10-11:

⁶⁶⁵ G. Clemenceau, La main sanglante // «Pro Arménia», 25 novembre 1900.

վաստելու համար»⁶⁶⁶: Դրանով իսկ նա հերքում է օսմանյան իշխանությունների կողմից հայերին վերագրվող՝ կարծեցյալ ապստանքության վարկածը:

Դուտորական եզակի տաղանդով օժտված, խորհրդարանական նիստերում ծավալված բանավեճերի ընթացքում քաղաքական ախոյաններին բազմիցս ջախջախիչ հարվածներ հասցրած և դեռևս XIX դարի 80-ական թվականներին «Կառավարություններ տապալող» ու «Վագր» մականունների արժանացած Կլեմանսոյի ըմբոստ ոգին ամբողջությամբ դրսեորվում է նաև Յայկական հարցին նվիրված ելույթներում: Դուրս բերված վեհաժողովի ընդունած պայմանագրի 61-րդ հոդվածը՝ նա ցավով արձանագրում է, որ միջազգային պայմանագրերը խաբեություններ են, իսկ սուլթանի խոստումները և բոլոր տերությունների պատվիրակների ստորագրած պայմանագրերի՝ հայերի հովանավորմանն առնչվող հոդվածները՝ սոսկ մեռյալ տառեր: Ըստ այդմ՝ նա հանգում է միակ հնարավոր հետևողական: «Ոչինչ չի փոխվել, ոչինչ չի արվել. այն դեպքում, երբ մեկ վճռական խոսքը կարող էր բավարար լինել այդչափ աղետները կանխելու համար՝ նույնիսկ ոչինչ չի ասվել»:

1893 թ. ի վեր ֆրանսիական խորհրդարանի պատգամավորի կարգավիճակ այլևս չունեցող և ընդդիմության մեջ գտնվող Կլեմանսոյի շանթերը, մասնավորապես, անողոք են ֆրանսիական կառավարության ղեկավարների հանդեպ. «Մեր կառավարողները ոչինչ չեն արել և, բացի դրանից, այսօր ևս ոչինչ չեն անում խոչընդոտելու համար այդ վայրագության կրկնությանը», – գրել է նա դեռևս 1896 թ.⁶⁶⁷: Տա հետևողականորեն կշտամբում է «մարդու իրավունքների» օրրան Ֆրանսիայի կառավարությանը, որը չի համարձակվել «արդարություն պահանջել կամ նույնիսկ մարդասիրական որևէ խոսք ասել» և որի պաշտոնական ներկայացուցիչը՝ 1898-1902 թթ. պատգամավորների պալատի նախագահ Պոլ Գեշանելը, սեղմում է «մորթված երեխաների արյան մեջ կարմրագունած» Աբդուլ Յամիդի «արյունոտ ծեռքը»⁶⁶⁸:

⁶⁶⁶ G. Clemenceau, Pour les Arméniens // «Pro Armenia», 15 septembre 1904. Յայերի կարծեցյալ ապստանքության վարկածի մասին տե՛ս Ն. Վ. Կարապետյան, 1904 թ. Սասունի ինքնապաշտպանությունը. – Յայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 474; Վ. Ս. Պողոսյան, Սասունի պատմություն (1750-1918), Երևան, 1985, էջ 255-266:

⁶⁶⁷ G. Clemenceau, Préface, p. 13.

⁶⁶⁸ G. Clemenceau, La main sanglante.

Սակայն, չբավարարվելով սոսկ իրադարձությունների նկարագրությամբ կամ դրանց մեկնաբանությամբ, կլեմանսոն դեռևս առաջին ելույթում առաջադրում է ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու իր տարրերակները: Ըստ նրա՝ Օսմանյան կայսրությունում ժողովուրդների և կրոնների միջև թշնամանքը դադարեցնելու միակ միջոցն օսմանյան կառավարության կողմից ամենքի՝ մահմեդականների և քրիստոնյաների համար բարեհած վերաբերմունքի ապահովումն է: Ուստի նրա կարծիքով, սուլթանի տիրույթներում իշխանությունը հարկ է տրամադրել այնպիսի վարչակարգի, որը հետևողականորեն իրականացվող սպանության, կողոպուտի, մոլեռանդ բարբարոսության սանձազերծած զազրելի բռնությունների փոխարեն իշխակի լինի արդարադատության և իրավունքի հովանու ներքո խաղաղություն հաստատել⁶⁶⁹:

Ստեղծված անելանների կացությունը շտկելու համար կլեմանսոն պահանջում է ընտրել միակ հնարավոր՝ կոտորածների կասեցման ուղին: ճիշտ է, հարցի լուծման նախընտրած նրա սկզբնական տարբերակը, ինչպես այդ ակնհայտ դարձավ շնորհիկ իրադարձությունների զարգացման հետագա ընթացքի, ամենաին իրատեսական չէ. «Բավական կլինի սուլթանին հասկացնել, — գրում է նա, — որ չկա փրկության այլ միջոց, քան խաղաղ բարենորդումները, անկողմնակալ ծնով արդարություն և վերահսկողություն սահմանող կառավարության հաստատումը, որը կհաջորդի ամենագարշելի, քնահած իշխանությանը և հավասարապես օգտակար կլինի նրա բոլոր հապտակների համար»⁶⁷⁰: Դակառակ դեպքում, ինչպես ենթադրում է կլեմանսոն, կծագի տերությունների զինված ուժերի միջամտության անհրաժեշտությունը:

Իրադարձությունների ծավալումը հետագա տարիներին՝ կլեմանսոյին աստիճանաբար հանգեցնում է Դայոց ցեղասպանությունը միմիայն Եվրոպական մեծ տերությունների գործնական և համատեղ ջանքների միջոցով կասեցմնելու անհրաժեշտության գաղափարին: Նա բազմիցս անդրադառնում է այս հարցի կարևորությանը, խստագույնս քննադատում թե՛ Ֆրանսիայի և թե՛ Բեռլինի պայմանագրի ներքո ստորագրած մյուս տերությունների կառավարություններին՝ ստանձնած պարտավորությունները չկատարելու պատճառով: Տերությունները «չեն հասել նույնիսկ այն բանին, որ մեծ դահիճները

⁶⁶⁹ G. Clemenceau, Préface, p. 15.

⁶⁷⁰ Նույն տեղում, էջ 16:

պաշտոնանկ արվեն», – մի առիթով նշում է նա⁶⁷¹: 1904 թ. կոտորած-ները Կլեմանսոյին դրդում են «կարմիր սուլթանի՝ Դայաստանում կազմակերպած՝ պարբերաբար տեղի ունեցող կոտորածներին վերջ տալու» նպատակով հանդես գալ Ֆրանսիայի և նրա դաշնակից Ռուսաստանի միջև այդ խնդրին առնչվող համաձայնություն կայաց-նելու առաջարկությամբ⁶⁷²:

Այս հարցն իր արտացոլումն է գտել նաև 1904 թ. հունիսի 29-ին Լոնդոնում գումարված միջազգային կոնֆերանսին հղած Կլեման-սոյի նամակում, ուր վերստին մատնանշելով արևմտահայության նկատմամբ իրականացված վայրագությունները, որոնց նախադե-պը, նրա իսկ խոսքերով, «ինարավոր չի պատկերացնել բարբարո-սության ամենամռայլ ժամանակներում», նա արդեն առաջադրում է Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու անհրաժեշ-տությունը: «Այսօր հայտնի է, – գրում է նա, – որ անհնար է այնտեղ ունենալ վայրագության սանձազերծման կրկնությունն արգելակող որևէ այլ երաշխիք, քան այնպիսի վարչակարգի հաստատումը, որը տերությունների հաճածայնության շնորհիվ վերջապես կարգ ու կանոն և խաղաղություն կպարտադրի ու կխարսխավի միայն բոլոր քաղաքացիների հանդեպ անկողմնակալ արդարություն հաստա-տող հենքի վրա: Դարկ է, որ տերությունները միջամտեն (ընդգծումը մերն է – Վ. Պ.): Անհնար է ամոթավի անտարբերությամբ շարունակ քաջալերել վերջին շնչում գտնվող ինքնակալության խելահեղ հան-ցագործներին»⁶⁷³:

Կլեմանսոն, ըստ նրա կենսագիրներից մեկի բնորոշման՝ «հա-նուն գաղափարի պայքարող մարտիկ է, այլ ոչ թե պամֆլետա-գիր»⁶⁷⁴: Ըստ այդմ՝ ընծեռված բարենպաստ առիթը նրա ուշադրու-թյունից չի վրիպել այս հարցում Վատիկանի գրակած անկարեկից դիրքորոշումը դատապարտելու համար: Այդ քայլն, անկասկած, պայմանավորված էր XIX դարի 80-90-ական թվականներին կաթոլիկ եկեղեցու դեմ արմատակամների մղած անգիջում պայքարով, որոնք ի թիվս այլ խնդրիների, համառորեն առաջադրում էին եկեղեցին պետությունից անջատելու պահանջը⁶⁷⁵, որն իրակացել է միայն

⁶⁷¹ G. Clemenceau, Pour les Arméniens.

⁶⁷² G. Clemenceau, Rappel au devoir // « Pro Armenia », 15 juin 1904.

⁶⁷³ « Pro Armenia », 15 juillet 1904.

⁶⁷⁴ G. Lecomte, Clemenceau, Paris, 1919, p. 224.

⁶⁷⁵ Այդ մասին տես՝ III. Սանլուս, Третья республика 1871-1900.— История XIX века. Под ред. Лависса и Рамбо, т. 7, М., 1939, с. 34-59; Э. Шенон, 214

1905 թ.: «Դումի եկեղեցին, որը մեծ ազդեցություն ունի միապետությունների և հանրապետությունների ժողովուրդների ու քաջավորների վրա, արդյո՞ք այս առիթով այն ամենն է արել, ինչ նրան թույլատրում են ամել գործելուն նպաստող՝ նրա ունեցած բացառիկ միջոցները։ Դա այդպես չի թվում», – Եգրակացնում է նա⁶⁷⁶: Ի դեպ, Դումի պապի հասցեին, որի կողմից «լսելի չէ բողոքի որևէ խոսք, խոճնտանքի կոչ», քննադատական խոսքեր են հնչել նաև Կլեմանսոյի հետագա ելույթներից մեկում⁶⁷⁷։

Դայոց ցեղասպանության առաջին փուլի կազմակերպիչներին անարգանքի սյունին գանձած ֆրանսիացի գործիչների թվում Կլեմանսոն առաջիններից էր, որը ոչ միայն բողոքի իր խրոխտ ծայնն է բարձրացրել և մինչ այդ՝ արևմտահայերի կոտորածներին գրեթե անտեղյակ ֆրանսիական ու Եվրոպական հանրությանը ներկայացրել Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող անցքերի հավաստի պատկերը⁶⁷⁸, այլև, ի տարրերություն այլոց, նահատակվող ժողովրդի հանդեպ դրսնորած անշշտակից վերաբերմունքի հանարդատապարտել Ֆրանսիայի պետական քաղաքականությունը։ Բացի դրանից, հարկ է արժնորել նրա մոտեցման մեկ այլ առանձնահատկություն ևս։ Ի կապարվելով Ֆրանսիայում գերիշխող հավաքական մտածողությանը, նա ժամանակի սակավաթիվ գործիչներից է, որը հանուն արևմտահայության փրկության հանդես է եկել անգամ

Римская церковь и некатолические культуры 1870-1900. — Там же, т. 8, М., 1939, с. 60; **В. И. АНДЮХИНА-МОСКОВЧЕНКО**, նշվ. աշխ., էջ 177-181, 190, 215:

⁶⁷⁶ G. Clemenceau, Préface, p. 14.

⁶⁷⁷ G. Clemenceau, La main sanglante.

⁶⁷⁸ Ինչպես նշեցին Վերը, Կլեմանսոյի առաջարանով լույս տեսած «Պայաստանի կոտորածները» ժողովածուն արձագանքներ է ունեցել ֆրանսիական մամուլում, ուստի և միանգամայն օրինաչափ է, որ թե՝ այս ժողովածուի լույս ընծայումը և թե՝ մասնավորապես Կլեմանսոյի առաջարանը հարուցել են Արդուլ Շամիի անսանձ զայրությը։ Սովորան անհապաղ արձագանքել է արմատականների պարագլիք ելույթին, հանդես եկել նրան անվանարկող ծավալուն պատասխանով, որտեղ Կլեմանսոյին անվանել է «քրիստոնյա, շուն» (Réponse du sultan à M. Clemenceau. Traduite par Urbain Gohier, Paris, 1896, p. 7, 11): Ըստ ավելի՝ Եվրոպական տերությունների գաղութատիրական քաղաքականության հեմ ուղղված «philippika», քան «pro domo sua» հիշեցնող Արդուլ Շամիի պատասխանը պարզորոշ վկայում է, որ նա, ըստ էության, ընդունում է կայսրության տարածքում հայ ժողովովի բնածննջան փաստը։ Շամառակ դեպքում, նա չէր հավաստի, որ «մեր (իմա՝ թուրքերի – Վ. Պ.) ծեռքերի վրա արյուն կա» (նույն տեղում, էջ 41): Արդուլ Շամիի օգտագործած արտահայտությունների առնչությամբ, ի դեպ, նշենք, որ 1913-1916 թթ. Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Շենքի Մորգենթաուն «չուն» բար համարում է թուրքերի շրջանում՝ քրիստոնյաներին բնորոշելու համար «տարածված արտահայտություն»։ Տե՛ս H. Morgenthau, Ambassador Morgenthau's Story, New York, 1918, p. 276:

Օսմանյան կայսրության ներքին գործերին զինված ճանապարհով միջամտելու առաջարկությամբ: Նման նախաձեռնությունը չէր համապատասխանում Երրորդ հանրապետության որդեգրած արտաքին քաղաքականության խիստ թրքամետ ուղղվածությամբ: Ինքնին հասկանալի է, որ այդպիսի գաղափար կարող է դա հղանալ միայն ընդդիմադիր քաղաքական ուժի ներկայացուցիչը, առավել ևս պարագլուխը և դրանում համոզվում ենք անձամբ Կիեմանսոյի հետագա քաղաքական գործունեության վրա նետած հպանցիկ իսկ հայացքից հետո:

Բազում տարիներ անց, 1905-1907 և 1917 թթ. ռուսական հեղափոխությունների ազդեցության ներքո, Կիեմանսոյի հայացքներն ապրել են ակնհայտ բարեշրջություն, նա շեշտակի շրջադարձ է կատարել ձախից աջ՝ մեկընդիշտ լրելով արմատական ժողովրդավարի դիրքերը: Անփոփոխ չի մնացել նաև նրա դիրքորոշումը Հայկական հարցում: Դիցուկ, 1909 թ. կիլիկիահայության կոտորածների ժամանակաշրջանում վարչապետ Կիեմանսոն՝ ելենով իր պետության շահերից, որի ուշի մոտ գտնվում էր, արդեն մոռացության էր մատնել հայ ժողովրդին սատարելու անհրաժեշտությունը և այն վեհ սկզբունքները, որոնցով առաջնորդվում էր մեր կողմից քննարկվող տարիներին, ինչն իրավամբ տեղից է տվել ժամանակակիցներից ոմանց խիստ քննադատությանը⁶⁷⁹:

Դա, սակայն, դեռևս առջևում էր, իսկ տվյալ ժամանակաշրջանում Կիեմանսոն հանդես է գալիս դեռևս իբրև հայ ժողովրդի ջերմեռանդ պաշտպան, ուստի, հարկադրված ենք միայն ցավով նշել, որ նրա քաղաքական գործունեությանն առնչվող այս դրվագները հանդիպակի չեն արժանացել նրա կենսագիրներից շատերի ուշադրությանը⁶⁸⁰:

⁶⁷⁹ Տե՛ս օրինակ Ժ'Առեզայ Յ., Au pays des massacres. saignée arménienne de 1909, Paris, 1910, թ. 4: Այդ մասին մանրամասն տե՛ս Վ. Պողոսյան, 1909 թ. կիլիկյան կոտորածները Ֆրանսիական պատմագրության գնահատմամբ, Երևան, 2009, էջ 75-76: Այս առնչությանը իմաստ ունի պարզաբանել, որ է. Քայացյանի այն հավաստումը, ըստ որի՝ 1896 թ. «մինչև իր կյանքի ավարտը Կիեմանսոն կսատարի Հայկական հարցը», ցավոք, իրականությանը չի համապատասխանում: Է. Խայաճյան, Le mouvement arménophile en France // Arménie une passion française «le mouvement arménophile en France 1878-1923», թ. 57.

⁶⁸⁰ Տե՛ս օրինակ Գ. Լեկոմտ, Աշխ.:; Գ. Գեֆրոյ, Clemenceau, Paris, 1919 ; Գ. Suarez, Clemenceau, թ. 1, Paris, 1932 ; W. Williams, The Tiger of France, New York, 1949; Ճ. Ա. Պրատկեր, Ջօրջ Կլեմանսո. Политический портрет, Մ., 1983: Համիլոյան կոտորածների ամիրով Կիեմանսոյի ելույթների նախն ակնարկ իսկ չկա նաև «Հայ-216

Դամիդյան կոտորածները դատապարտած ֆրանսիացի հանրահայտ քաղաքական գործիչների թվում է գրող, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1911), պահպանողական, Դենի Կոշենը (1851-1922), որի հետաքրքրությունը Դայկական հարցի նկատմամբ ծագել է Վերը հիշատակված «Դայաստանի կոտորածները» ժողովածուում անփոփոխ փաստաթղթերին ծանոթանալուց հետո⁶⁸¹: Մեծ թվով գրքերի հեղինակ Կոշենի գրական ժառանգությունից մեզ հետաքրքրում է «Բարբարոսների դեմ» խորագիրը կրող ժողովածում⁶⁸², որն անփոփոխ է քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ թուրքերի գործած ոճրագործություններին և գաղության քաղաքականության հարցերին նվիրված՝ 1896-1899 թթ. Ազգային ժողովում նրա ունեցած մերկացուցիչ Ելույթները: 1896 թ. նոյեմբերի 3-ի և 1897 թ. ապրիլի 3-ի Ելույթներն ուղղակիորեն առնչվում են հայկական կոտորածներին, ևս մեկը՝ 1897 թ. փետրվարի 12-ի Ելույթը՝ արևելյան երկրներում տեղի ունեցած իրադարձություններին, այդ թվում՝ Դայոց ցեղասպանության առաջին փուլին:

1896 թ. նոյեմբերի 3-ին, Ազգային ժողովի նիստում, ուր առաջին անգամ քննարկվում էր Դայկական հարցը⁶⁸³, Կոշենը հանդես է եկել ծավալուն գեկուցմամբ: Առաջին իսկ Ելույթում նա թեև չի Ժխտում վաղուց ի վեր հայ ժողովրդի գլխին դամոկլյան սրի նման կախված վտանգի առկայությունը, այնուանայնիվ, ցնցված հայկական կոտորածների չափերից՝ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունները բնորոշում է իրեն երևակայությունից վեր գտնվող, որոնք հասել են այնպիսի սարսափելի աստիճանի, որը հնարավորություն չի ընձեռում նույնիսկ դրանք կանխատեսելի համարելու⁶⁸⁴:

Դայտադարձ հայացք նետելով դարեր ի վեր հայ ժողովրդին վիճակված արհավիրքների վրա, Կոշենն արևմտահայերի ցեղա-

կական հարց» համբագիտարանում: Տե՛ս Ռ. Սահակյան, Կենանառ.- Դայկական հարց, Երևան, 1996, էջ 186-187:

⁶⁸¹ Տե՛ս Ե. Khayadjian, Archag Tchobanian et le mouvement arménophile en France, p. 75:

⁶⁸² D. Cochin, Աշխ. աշխ.:

⁶⁸³ Կոշենի այս Ելույթը, որը հիմնվում էր նաև Պ. Կամրոնից անմիջականորեն ստացված տեղեկությունների վրա (տե՛ս V. Duclert, Աշխ. աշխ., էջ 52) տպագրվել է նաև «Անալ կարողիկ» ամսագրում. տե՛ս Discours d'interpellations relatives aux événements d'Arménie // «Annales catholiques», 7 novembre 1896, N 1336, p. 37-53. Ըստ Սապահ-Գյուլյանի վկայության՝ այս քննարկումը կազմակերպվել էր հնչայլան կուսակցության նախածեռնությամբ: Տե՛ս Ս. Սապահ-Գիլեան, Աշխ. աշխ., էջ 173:

⁶⁸⁴ D. Cochen, Աշխ. աշխ., էջ 1:

սպանության կազմակերպիչներին և իրականացնողներին ոչնչով չի գանազանում նախկին բարբարոսներից: 1895 թվականն անվանելով «տիսուր և միաժամանակ ամենանողկալի, ամենաարտաքոց տարի», նա թուրքների ոճիրները համենատուն է այնպիսի ասպատակիչների ամենադժնի արարքների հետ, ինչպիսիք են Լենկ Թեմուրն ու շահ Աբբասը⁶⁸⁵:

Դիմնվելով «Ղեղին գրքի» վրա, Կոչենը մանրամասնորեն հիշատակում է 1894 թ. Սասունում թուրքերի գործած վայրագությունների մասին: Առակատման պատճառ համարելով արևմտահայերի անհանդուրժելի Վիճակը, նա ուշադրությունն այդուհանդերձ, հրավիրում է ավելի կարևոր՝ պետական պաշտոնյայի հրամանատարությամբ գործող, զինված ուժերի միջամտության հանգամանքի վրա, «որոնք խաղաղությունը վերականգնելու պատրվակով սպանում էին և կողոպտում»: Ի վերջո, «Սասունում հաստատվել է կարգ ու կանոն, բայց այդ կարգ ու կանոնն այնտեղ հաստատվել է, որով հետև այնտեղ այլև գոյություն չունի ո՛չ մի կանգուն տուն, որով հետև ո՛չ մի բնակիչ այլև կենդանի չէ», – եզրակացնում է նա⁶⁸⁶:

Կոչենը ներկայացնում է Կոստանդնուպոլսում և Արևմտյան Դայաստանի տարրեր քաղաքներում տեղի ունեցած կոտորածների ահարկու տեսարանները, չի վարանում ընդգծել, որ մարդկանց հիշողության մեջ դրանք վերակենդանացնում են վաղեմի ժամանակների, բարբարոսական երկրների պատմությանն առնչվող եղելությունները: 1896 թ. Տրավիզոնի «նշանավոր և սոսկալի» կոտորածը, ըստ նրա՝ «սարսափելիության առումով գերազանցել է մյուս բոլորին»: Ընդհանուր առնամբ, ինչպես նա բազմիցս նշում է, Օսմանյան կայսրությունում մոլեզնում է «ահարեկզություն և հանցագործություն սփոռող սարսափելի վարչակարգ», «կանխանամտածված ձևով կյանքի կոչված զարգելի համակարգ»⁶⁸⁷:

Դայկական կոտորածները Կոչենը, փաստորեն, դիտում է իբրև օսմանյան կառավարության՝ վաղուց ի վեր հայերի նկատմամբ կիրառած քաղաքականության տրամաբանական շարունակություն, ինչը մենք իրավասու ենք համարել նրա արժանիքը: Նրա տեսադաշտից չեն վրիպել օսմանյան կառավարության կողմից հայկական դպրոցների փակնան, Եկեղեցիների գործունեության արգելման, հայերի նկատմամբ կիրառվող հալածանքների, նրանց ունեցվածքի

⁶⁸⁵ Նույն տեղում, էջ 5-6, 22:

⁶⁸⁶ Նույն տեղում, էջ 10, 40-41:

⁶⁸⁷ Նույն տեղում, էջ 46, 51, 89:

կողոպուտի, գանձվող՝ զարհութելի չափերի հասնող հարկերի իրողությունները, որոնցով և պայմանավորում է հայերի ըմբռստությունը:

Առանձնահատուկ կարևորություն տալով այս հարցին, Կոշենը հանգամանորեն քննարկում է Բարք Ալիի ցույցը և սուլթանին հղած հայերի հանրագրի պահանջները, որը բնութագրում է իբրև հնչակյան կուսակցության դրոշը կրող՝ «հեղափոխական բնույթի փաստաթուղթ»: Դաշվի առնելով օսմանյան պետության դեկավարների շահարկած՝ այս հարցի ամբողջ կարևորությունը, պատգամավորների պալատի նիստում Կոշենը հրապարակում է փաստաթղթի բնագիրը, այն ենթարկում մանրակրկիտ վերլուծության և հավաստում, որ հանրագիրը ոչ միայն «խելահեղ հեղափոխականների» մտքի արգասիքը չէ, այլև չի պարունակում որևէ չափազանցություն: «Ես մեծ կարևորություն են տալիս ծեզ դրան իրազեկելու հարցին,— դիմում է նա պատգամավորներին,— որովհետև թե՛ հայերի դեմ ուղղված և թե՛ թուրքական իշխանությանը պաշտպանելու համար օգտագործվող հզոր փաստարկը հանգում է հետևյալին. բոլոր երկրներում կան հեղափոխականներ, նիհիլիստներ, անարխիստներ. նիհիլիստներ՝ որոնց թուրքական իշխանությունը հարկադրված է եղել ամենախիստ ձևով պատճել»⁶⁸⁸: Այսպիսով, դեռևս կոտորածների արշալույսին Կոշենը հիմնավորապես հերքել է հայկական ապստամբության ստահող Վարկածը:

Լինելով չափավոր հայացքների տեր քաղաքական գործիչ, խորհրդարանական նիստերի դահլիճում տեղ գրադեցնելով աջ պատգամավորների կողքին, Կոշենն ազնվորեն հայտարարում է հեղափոխականների հանդեպ տածած իր անհամակրալից վերաբերմունքի մասին, սակայն, «կառավարությունները,— շարունակում է նա,— հնձում են այն, ինչ ցանում են, և եթե նրանք ձգտում են խաղաղության՝ վստահություն շահելու և ազատություն ընձեռելու միջոցով, պարտավոր են քաղաքացիների խաղաղությունն ապահովելու ցանկություն դրսնորել: Ես կարծում են, որ երբ նրանք, դրա փոխարեն, ի վիճակի են միայն ավերածություն սփռող ահարեկչական իշխանություն հաստատել, ապա չպետք է տևական հնագանդություն ակնկալեն»⁶⁸⁹: Կասկած չտածելով, որ հայ ժողովուրդը փոքր իսկ պատասխանատվություն չի կրում ստեղծված իրավիճակի համար, Կոշենը «հանցագործներ» է անվանում նրանց, ովքեր հղացել

⁶⁸⁸ Նույն տեղում, էջ 11:

⁶⁸⁹ Նույն տեղում:

Են «անհանգստություններ պատճառող ազգությանը բնաջնջելու հրեշավոր գաղափարը (ընդգծումը մերն է – Վ. Պ.), նրանց, ովքեր ազատություններ տալով կրթերին՝ դիմել են զենքի»⁶⁹⁰:

Ընթանելով Դայոց ցեղասպանության գլխավոր պատճառը՝ Կոչենն այն ուղղակիորեն պատճառաբանում է «Դայկական հարցին՝ հայերին ոչնչացնելու միջոցով լուծում տայու (ընդգծումը մերն է – Վ. Պ.) սուլթանի մտադրությամբ, որը նա սկսել է կենսագործել»⁶⁹¹ և այն պայմանավորում Օսմանյան կայսրության դեկավարների՝ պետական մակարդակով իրականացրած քաղաքականությամբ: Նշելով, օրինակ, Ուրֆայի կոտորածների մասին, նա առանց փոքր-իսկ այլևայլության ընդգծում է, որ ամեն ինչ կատարվում էր «իշխանությունների հրահրմանը և օսմանյան կառավարության նողկալի օժանդակությամբ»: Մեկ այլ առիթով, տալով ջարդերի ընդհանուր գնահատականը՝ նա պարզաբանում է. «Այսպիսիք են թուրքական իշխանության աչքի առջև, նրա մասնակցությամբ և օգնությամբ իրականացված արարքները»⁶⁹²:

Կոչենը քննադատական խոսքեր է ուղղում եվրոպական պետությունների դեկավարների հասցեին՝ արևմտահայությանն օժանդակություն չցուցաբերելու պատճառով, հավաստում, որ եվրոպական ժողովուրդները քսան տարուց ի վեր ոչինչ չեն արել հայերի տառապանքներն ամոցելու, նրանց իրենց հովանու ներքո վերցնելու համար, իսկ «քաղաքակիրք տերությունների բարեհաճ թողտվությունը» ճանապարհ է հարթել բարբարոսական հանցագործությունների իրականացման համար: Փակուղուց ելնելու նպատակով՝ նա առաջարկում է սատարել ոչ թե միայն մեկ ժողովրդի և միայն նրա համար երաշխիքներ ու արտոնություններ պահանջել, այլ բարենորոգել ամբողջ Օսմանյան կայսրությունը⁶⁹³.

Դամահունչ դիրքերից են Դայոց ցեղասպանության առաջին փուլին առնչվող հիմնահարցերը մեկնաբանել նաև քաղաքական այլ ուժերի ներկայացուցիչներ: Նրանց թվում՝ համիլյան կոտորածների կազմակերպիչներին նշավակելու գործում, ցանկանում ենք նաև արժենորել ֆրանսիացի սոցիալիստների, մասնավորապես Ժան Շորեսի և Ֆրանսիսի դը Պրեսանսեի անուրանալի ներդրումը: XIX դարի վերջին Ֆրանսիայի քաղաքական երկնականարում փայլ-

⁶⁹⁰ Նույն տեղում, էջ 30:

⁶⁹¹ Նույն տեղում, էջ 39:

⁶⁹² Նույն տեղում, էջ 25-26:

⁶⁹³ Նույն տեղում, էջ 30:

տակում էր սոցիալիստական և միջազգային բանվորական շարժման ականավոր գործիչ, բոցաշունչ հոեստոր Ժան Ժորե (1859-1914): Անշուշտ, նրա՝ իքրեւ 1905 թ. ի վեր ֆրանսիական սոցիալիստական միասնական կուսակցության ղեկավարի, «Յումանիտե» սոցիալիստական լրագրի հիմնադրի (1904) քաղաքական գործունեության հիմնական դրվագները դեռևս առջևում էին: Այդուհանդերձ, 1885-1889, 1893-1898 թթ. լինելով Ազգային ժողովի պատգամավոր, ժորեսը ծավալել է բազմաբնույթ և բեղուն քաղաքական գործունեություն: Այս առիթով նրա հակիրճ, սակայն, դիպուկ գնահատականը տվել է ֆրանսիական սոցիալիստական շարժման պատմության անվանի հետազոտող ժան Բրյուան. «Չէ՝ որ ժորեսն առաջին հերթին գործունյա մարդ էր կամ ավելի ստույգ՝ բարձրաշնորհ քարոզիչ, մարդ, որը պայքարում էր օրեցօր, հոետոր, լրագրող, որը որևէ լուր ստանալուն և պետք է ելույթ ունենար, չնայած այն բանին, որ նրան, բնականաբար, դեռևս հայտնի չէին այս կամ այն իրադարձության բոլոր կողմերը, որոնց առիթով հարկ էր գրավել որոշակի դիրքորոշում»⁶⁹⁴.

Դիրավի, առաջին իսկ հպանցիկ ծանոթությունը ժորեսի՝ 1896-1897 թթ. ելույթներին մեզ հանգեցնում է այն համոզման, որ Եվրոպայում տեղի ունեցող և ոչ մի նշանակալից՝ այդ թվում Եվրոպական պետությունների գաղութատիրական քաղաքականության առնչվող իրադարձություն, չի Վրիպել նրա աչալուրջ հայացքից: Այս ժամանակաշրջանում արդեն գաղութատիրության կործանարար հետևանքները հետևողականորեն դատապարտող ժորեսը չէր կարող, բնականաբար, շրջանցել այնպիսի մի արտառոց և աննախադեպ եղելություն, ինչպիսին էր Դայոց ցեղասպանությունը, որին նվիրված ելույթները նրա քաղաքական գործունեության անքակտելի մասն են: Ուստի պատահական չէ, որ ի թիվս՝ մեծ հոետորի անողոք քննադատությանը ենթարկված՝ Եվրոպական տերությունների գաղութատիրական քաղաքականությանն առնչվող հիմնահարցերի, խորհրդային ականավոր պատմաբան Ալբերտ Սանֆրենը հիշատակում է նաև հայկական կոտորածների կազմակերպիչների խարազանման իրողությունը, մասնավորապես ընդգծելով, որ

⁶⁹⁴ Ж. Брюа, Жан Жорес и колониальная проблема.— Французский ежегодник — 1958, М., 1959, с. 59.

նա «զայրույթով էր նշավակում հայերի կոտորածներն ու բնա-ջնջումը թուրքական սուլթան Աբդուլ Համիդի կողմից»⁶⁹⁵:

Դայկական հարցի հանդեպ ժորեսի հետաքրքրությունը ծագել է դեռևս 1894 թ., երբ «Լա պտիտ ռեպուբլիկ» լրագրում լույս է ընծայել «Դայաստանում» հոդվածը: Այս կապակցությամբ հետաքրքիր մեկնարանություններ է առաջադրում Ֆրանսիացի պատմաբան, սոցիալիստական շարժման պատմության ճանաչված մասնագետ Մադլեն Ռեբերիուն, որը հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ ժորեսի հետաքրքրությունը պայմանավորում է նրա սոցիալիստական հայացքներով: Ռեբերիուի մեկնարանություններն իրատեսական են. սկզբնական շրջանում ժորեսին շատ ավելի մտահոգել է հայերի սոցիալական ազատագրության խնդիրը, որին լուծում տալն, անկասկած, անհնար էր, քանի դեռ հայ ժողովուրդը շարունակում էր հեծել նվաճողների լծի տակ⁶⁹⁶: Դայերի կացությունն ապացուցում էր Մարքսի գաղափարների օրինաչափությունը, քանի որ հարկերի տակ կքած նրանց մանր սեփականատերերը հարկադրաբար լրում էին հայրենի հողերը, իսկ նրանց հոսքը մեծ քաղաքներ՝ նրանց վերածում էր քաղաքային բանվորների: Ընդգծելով, որ Դայաստանը չի խուսափել թե՝ Անգլիային և թե՝ Ֆրանսիային բնորոշ միևնույն գործընթացից, ժորեսն, ըստ այդմ՝ ցանկացել է, փասորեն, ապացուցել, որ այս առնչությամբ Մարքսի առաջադրած գաղափարները կրում են համընդհանուր բնույթը⁶⁹⁷:

Բուն Դայոց ցեղասպանության մեկնարաննան հարցում ժորեսի դիրքորոշման պարզաբանման համար խիստ հատկանշական է մեծ աղմուկ հարուցած «Դայերի կոտորածները» թեմայով ելույթը, որով 1896 թ. նոյեմբերի 3-ին նա հանդես է եկել Ազգային ժողովում: Ժորեսը, որին այդ քննարկնանը մասնակցելու առաջարկությամբ դիմել է Սապահ-Գյուլյանը, տալով իր համաձայնությունը՝ խնդրել է վերջինիս իրեն տրամադրել հայ ժողովրդի անցյալին վերաբերող տեղեկություններ և նրա աջակցությամբ ծանրթացել անհրաժեշտ գրականության, այդ թվում Վ. Լանգուայի աշխատասիրությամբ լույս

⁶⁹⁵ А. З. Манфред, Жан Жорес — борец против реакции и войны (к столетию со дня рождения).— А. З. Манфред, Очерки истории Франции XVIII-XIX вв. Сборник статей, М., 1961, с. 412.

⁶⁹⁶ M. Rebérioux, Jean Jaurès and the Armenians // “Armenian Review”, 1991, v. 4, N 2, p. 2.

⁶⁹⁷ Նույն տեղում, էջ 2-3:

ընծայված՝ հայ պատմիչների (Մովսես Խորենացու, Եղիշեի և այլոց) գործերի թարգմանություններն ամփոփող ժողովածուին⁶⁹⁸:

Իր Ելույթում նկարագրելով հայկական վեց վիլայեթում տեղի ունեցող կոտորածները, որոնք, ըստ նրա՝ հազիվ թե կարող էին նախադեպ ունենալ, ժորեսը նկատում է. «Այլևս փոքր խմբերով չե, որ կոտորում էին, այլ քաղաքներում՝ մեկ օրում 3000 և 4000 զոհերից բառկացած ստվար զանգվածներով՝ շեփորի հնչյունների ներքո, դատավճոի իրականացման կանոնավորությամբ»⁶⁹⁹. «Ամենանողկալի կոտորածների»⁷⁰⁰ մանրանասները նրան հանկարծակիի են բերել, և այդ վայրագություններից ապշահար՝ ժորեսը հայտարարել է. «Ինձ թվացել է, թե այդ հեռավոր և դժոնակ արևելյան երկնակամարում հառնել են Երեսնամյա պատերազմի բոլոր սարսափները»: Այդուհանդերձ, նրա խորագնին հայացքն անմիջապես թափանցել է Եղելության մեջ: Այս Ելույթում արդեն նա բացահայտել է արևմտահայության ոչնչացման իրողությունը՝ պետական քաղաքականության նակարդակով, եականը և նշանակալիցը համարելով ոչ թե մարդկային վայրագության սանձազերծումը, այլ այն, որ հայերի բնաջնջումը կյանքի է կոչվել ոչ թե տարերայնորեն, այլ հրահրվել է և քաջալերվել օսմանյան կառավարության կողմից: Այդ իսկ պատճառով, կոտորածների ամբողջ պատասխանատվությունը նա բարդում է դրանք կազմակերպած և անձանք զեկավարած Աբդուլ Շամիդի վրա⁷⁰¹:

Չբավարարվելով, սակայն, այս փաստի արձանագրմամբ, ժորեսը մեծ հմտությամբ և խորաթափանցությամբ ի հայտ է բերել Աբդուլ Շամիդի հայատյաց քաղաքականության ակունքները, Շայոց ցեղասպանության սանձազերծման պատճառներից մեկն իրավացիորեն մեկնարանել բալկանյան որոշ երկրների՝ օսմանյան լոի թրափմամբ, որից երկյուղած սուլթանը մեծ մտավախություն է դրսնորել հայերի առաջադրած պահանջների նկատմամբ:

Ըստ այդմ՝ ժորեսն ամբողջ խորությամբ չէր կարող չըմբռնել

⁶⁹⁸ Ա. Սապահ-Գիլեան, Աշվ. աշխ., էջ 173:

⁶⁹⁹ (Œuvres de Jean Jaurès. Pour la paix. T. 1. Les alliances européennes (1887-1903).

Textes ressemblés, présentés et annotés par Max Bonnafous, Paris, 1931, p. 125. Աշխենք, որ ժորեսի հայանապատ Ելույթները վերցերս վերահրատարակվեցին առանձին գրքույնով. J. Jaurès, Il faut sauver les Arméniens. Établissement de l'édition, notes et postface par Vincent Duclert, Paris, 2006. Տես' սույն գրքույնի հայերեն թարգմանությունը. Ժ. ժորես, Պետք է փրկել հայերին, թարգմանություն՝ Գրիգոր Զանիկյանի, Երևան, 2009:

⁷⁰⁰ (Œuvres de Jean Jaurès, p. 126, 132, 159.

⁷⁰¹ Նույն տեղում, էջ 125:

նաև ցեղասպանության գլխավոր պատճառը. համաձայն նրա իրատեսական մեկնաբանության՝ ի վիճակի չլինելով բարենորոգումների միջոցով արդարացի վարչակարգ հաստատել, կայսրության տարածքային ամբողջականության հնարավոր մասնատումը կանխելու մտադրությամբ, Արդուլ Շամիդը գերադասել է դիմել Շայկական հարցի լուծման ուժային տարբերակին՝ Եվրոպային կատարված փաստի, այն է՝ իրականացված կոտորածի առջև կանգնեցնելու ակնկալությամբ: «Նա տեսել է, թե ինչպես է Եվրոպան վարանում, որքան է նա անվճռական, տարածայնություններով բզկտված և մինչ կոտորածի եռուն շրջանում՝ իիրավի տարանջատված ու անզոր դեսպանները նրան ծանծրացնում էին մարդասիրությանը և բարենորոգումներին վերաբերող ծիծաղելի խոսակցություններով, նա դաշույնի միջոցով ավարտին էր հասցնում բնաջնջումը՝ ծերազատվելու համար Շայկական հարցից (ընդգծումը ներն է – Վ. Պ.)»⁷⁰²: Ակնհայտ է, որ ինչպես և Կոչենը, ժորեսն իրադարձության այն ժամանակակիցներից է, որն ի գորու է եղել բացահայտելու արևմտահայության ողբերգության գլխավոր պատճառը, այն է՝ հայերին ոչնչացնելու միջոցով Շայկական հարցին լուծում տալու Արդուլ Շամիդի նախընտրած միակ հնարավոր եղանակի եռությունը:

Սուլթանի որդեգրած քաղաքականությունն, ի վերջո, ինչպես 1896 թ. նոյեմբերի 11-ին «Ղեանց դը Տուլուզ» լրագրում լույս ընծայած «Նոր փաստ» հոդվածում հավաստել է ժորեսը, հանգեցրել է այն բանին, որ «Երկու տարուց ի վեր ավելի քան հարյուր հազար մարդ կոտորվել է, բռնությունների ենթարկվել, խոշտանգվել»⁷⁰³: Ելնելով իրականության անսօրդ պատկերից, նա եզրակացրել է. «Շայաստանը գտնվում է Վայրագություններ իրագործող Վարչակարգի տիրապետության տակ, որոնց հետ, հայտնի չեն, թե արդյո՞ք համեմատելի են մոնղոլների ասիական բռնությունները»⁷⁰⁴:

Ընդհանուր առմանք, ի տարբերություն այլոց, ժորեսի՝ հայկական կոտորածների ընթացքը շոշափող բոլոր ելույթներին բնորոշ է ոչ թե փաստերի խճողումը կամ սոսկ թվարկումը, այլև, հռետորա-

⁷⁰² Նույն տեղում, էջ 126:

⁷⁰³ Նույն տեղում, էջ 136: Նշենք, որ 1896 թ., մեկ այլ առիթով, հավանաբար, ավելի ստուգ տվյալներ ստանալուց հետո, նա «Արդուլ Շամիդի հրամանով և մասնակցությամբ ոչնչացված հայերի թիվը» հասցնում է 200000 մարդու: Տե՛ս Ժ. Ժօրես, Против войны и колониальной политики. Редакция и вступительная статья А. З. Манфреда, М., 1961, с. 115:

⁷⁰⁴ Œuvres de Jean Jaurès, p. 136.

կան կրթից բացի⁷⁰⁵, պատշաճ մակարդակով իրադարձությունների հանդեպ դրսենորած վերլուծական մոտեցումը⁷⁰⁶: Ինչ վերաբերում է Դայոց ցեղասպանության պատճառների բացահայտումից զատ՝ նրա քննարկած հարակից հարցերին, ապա առաջին հերթին նկատելի է արևմտահայության հանդեպ եվրոպական տերությունների և, մասնավորապես Ֆրանսիայի ղեկավար շրջանակների անկարեկից վերաբերմունքի անողոք քննադատությունը: Ընդդիմության մեջ գտնվող սոցիալիստը չէր կարող լռությամբ շրջանցել՝ արևմտահայերի ճակատագրում կործանանար նշանակություն ունեցած այս էական հանգամանքը, որը, հիրավի, նրա գրեթե բոլոր այն ելույթների կիզակետում է, որոնցում, գուցեն հարևաններեն, քննարկվել են Դայոց ցեղասպանությանն առնչվող զանազան խնդիրներ⁷⁰⁷:

1896 թ. նոյեմբերի 3-ի ելույթում բանավիճելով արտաքին գործերի նախարարի հետ հայկական կոտորածների առնչությամբ՝ ժողովը Դանուտոյի ուշադրությունը հրավիրել է ոչ միայն սուլթանի, այլև Եվրոպայի կրած պատասխանատվության վրա: Քանի որ մեծ տերությունները չեն կատարել Բեռլինի Վեհաժողովի պայմանագրով ստանձնած պարտականությունները, նա արևմտահայերին հանրել է «Եվրոպական բանարկության զոհեր»⁷⁰⁸: Դեռ ավելին, ֆրանսիական կառավարությանը, որը չի կամեցել բողոքի որևէ խոսք ուղղել ջարդարարների հասցեին, նա իրավամբ բնորոշել է իբրև

⁷⁰⁵ Դր. Աճառյանը, որը Փարիզում մասնակցել է ժողովի հայկական կոտորածներին նվիրված ելույթներից մեկին, այն բնութագրել է իբրև «հոյակապ»: Ժողովը, նրա հավաստմամբ՝ «առյուծի պես բռավ տեղից և իր որոտալի ծայնով այնպիսի մի ճառ սկսեց, որ ամրող հասարակությունը ցնծալի ծափերով ողջունեց»: Տե՛ս Դր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 176: Ժողովի՝ 1896 թ. նոյեմբերի 3-ի ելույթին բարձր գնահատական է տվել Մ. Վարանդյանը՝ անվանելով այն «ընդարձակ ու մտրակող ճառ», որը «ճշմարիտ փոքրորիկ մը հանեց պարլամենտական և կառավարական շրջաններուն մէջ» (տե՛ս Մ. Վարանդյան, Դ. Յաշնակցութեան պատմութիւն, առաջին հատոր, Պարիզ, 1932, էջ 192):

⁷⁰⁶ Արմենոբելով, օրինակ՝ ժողովի՝ 1896 թ. նոյեմբերի 3-ի ելույթը, Սապահ-Գյուլյանը նշել է: «Ժողովի այդ օրուայ ճառը կը մնայ մի գլուխ-զործոց՝ մարդկային լեզուի ճարտարախոսութեան մէջ: Դեմուրենես, Կիկերոն ունեին հրաշակերտներ, բայց նրանցից և ո՛չ մէնը հաջողել է այնպիսի կենդանի պատկեր տալ, ինչպէս արածուսը՝ Սասունի 1894-ի ժողովրդական ապստամբութեան և կորի իրադարձութիւնները ներկայացնելիս... Դայ յեղափոխականները, մեր նահատակները, մեր Ս. Գործը երթեր աւելի բարձր բարգան չեին կարող ունենալ»: Տե՛ս Ս. Սապահ-Գիլեան, նշվածին, էջ 174-175:

⁷⁰⁷ Տե՛ս օրինակ 1897 թ. փետրվարի 22-ին Ազգային ժողովում արտասահմած «Կրետեի իրադարձությունները» ելույթը. *Œuvres de Jean Jaurès*, p. 140-147:

⁷⁰⁸ Նույն տեղում, էջ 123:

«լիակատար բնաջնջման» «մեղսակից»: Թեպետ ժորեսի այս հայտարարությունն առաջ է բերել նիստի նախագահի ընդունումը, որը նրանից պահանջել է հրաժարվել այդ բարից, քանզի, նրա համոզմամբ՝ հայկական կոտորածների հարցում ֆրանսիական կառավարությունը որևէ մեղսակցություն չի ունեցել, աննկուն հոեստորն, այնուամենայնիվ, մնացել է անսասան. «Եթե ես կարողանայի, պարոնայք, – ոդինել է նա պատգամավորներին, – ակնքարթորեն Վերացնել Վերջին երեք տարվա պատմության ընթացքում մեր բոլորի վրա բարդվող պատասխանատվությունները, որքան ոյուրին կլիներ ինձ համար... հրաժարվել իմ միտքն արտահայտող այդ բարից, նի բան, որը շատ վաղուց արած կլինեի»⁷⁰⁹:

Մեծ տերություններին բնորոշ անվճռական վարքագիծը ժորեսը, Վերջին հաշվով, միանգամայն իրավանք պատճառաբանել է նրանց միջև առկա տարածայնություններով, նրանց հատուկ «Նկրտումներով, նախանձով, ամորթալի եսասիրությանք», ինչի արդյունքում նրանք «քույլատրել են կոտորել մի ամբողջ ժողովրդի»⁷¹⁰:

Դակարպելով ռուս-ֆրանսիական դաշինքի հենքի վրա խարսխված երրորդ համրապետության և ռուսական ինքնակալության համահունչ արևելյան քաղաքականության ջատագովներին՝ ժորեսը մանրանասն քննության է ենթարկում ոչ միայն Ֆրանսիայի, այլև Ռուսաստանի՝ Դայկական հարցում գրաված պարսակելի դիրքորոշումը: Նա ինքնակալությանը մեղադրում է Դայաստանն ավելի թուլացնելու մտադրությամբ՝ տեղի ունեցող եղեռնական անցքերին միջամտելուց գիտակցաբար ծերնպահ մնալու համար, որը կարող էր նրան հնարավորություն ընծեռել հետագայում շատ ավելի ոյուրությամբ իր տիրապետությունը հաստատել այդ երկում, իսկ Ֆրանսիային՝ իր դաշնակցին սիրաշահելու նպատակով՝ «Ղեղին գրքի» հրատարակությունը հետաձգելու համար⁷¹¹: Ինչ վերաբերում է ֆրանսիական կառավարությանը, ապա նա խստագույնս քննադատում է պետության դեկավարներին՝ երեք տարուց ի վեր արևելյան գործերի շուրջ լրություն պահպանելու, հայ ժողովրդի կոտորածների կապակցությամբ անտարբեր դիտորդի դեր ստանձնելու, հատկապես ժամանակին հայերի համար բարենորոգումներ չպահանջելու հանար⁷¹²: Այս առնչությամբ ժորեսի քննադատության

⁷⁰⁹ Նույն տեղում, էջ 133:

⁷¹⁰ Նույն տեղում, էջ 127:

⁷¹¹ Նույն տեղում, էջ 131:

⁷¹² Նույն տեղում, էջ 139, 141:

թիրախում մշտապես գտնվել է ֆրանսիական մամուլը՝ պահպանած «կատարյալ լրության» պատճառով, որի «մի մասին, – ինչպես նա նշում է, – ուղղակիորեն կամ անուղղակիորեն, լռակյացության համար վճարել են»⁷¹³:

Հստակորեն կողմնորոշվելով ֆրանսիական կառավարության թրքամետ քաղաքականության ոլորտում, ժորեսն Աբդու Շամիդին անվանում է ֆրանսիական կառավարության և արտաքին գործերի նախարարության ղեկավարների «բարեկամ»⁷¹⁴, որին, նրա համոզմանք, մեծապես քաջալերել է «Եվրոպայի մեղսակցությունը»⁷¹⁵:

Ժորեսն անդրադառնում է նաև մեծ աղմուկ հարուցած՝ Օսմանյան կայսրության մասնատման խնդրին, որի ծագումը պայմանավորում է «պարզապես այն փաստով, որ սուլթանի իշխանության ներքո համախմբված տարբեր ժողովուրդներն այնտեղ (կայսրությունում – Վ. Պ.) անհրաժեշտ երաշխիքներ չեն ունեցել: Արևելյան հարցը կրկին կյանքի է կոչվել, որովհետև հայ ժողովուրդը կոտորվել է», – հավաստում է նա⁷¹⁶: Սակայն, ի վերջո, ի տարբերություն կլեմանսոնի, ձեռնապահ մնալով գինված միջամտության անհրաժեշտության առաջադրումից, նա ևս, ինչպես արևմտահայությանը սատարած ժամանակի գրեթե բոլոր ֆրանսիացի գործիչները, սահմանափակվել է սոսկ իր համաձայնությունը հայտնելով Շանոտոյի՝ օսմանյան հարցի վերջնական կարգավորնանը վերաբերող այն առաջարկության հետ, ըստ որի՝ սուլթանը պարտավոր է ընդունել կայսրության բոլոր ժողովուրդների համար նախապատրաստված բարենորդումների ծրագիրը, քանզի հակառակ դեպքում կարող է ծագել «դրանք նրան պարտադրելու» միջամտության անհրաժեշտությունը: 1897 թ. փետրվարի 22-ին պատգամավորների պալատում ունեցած ելույթում նա սոսկ կսկիծ է հայտնել նման քաղաքականությունը «շատ մեծ ուշացումով» որդեգրելու առնչությանք⁷¹⁷:

Ինչպես տեսնում ենք, ժորեսի ելույթներն առանձնանում են ոչ միայն նրան խիստ բնորոշ կրքոտությամբ, այլև կրում են պատմական այն ժամանակաշրջանի դրոշնը, երբ նա գործել է: Խիստ չափավոր է, մասնավորապես նրա դիրքորոշումը հայ ժողովրդին փրկության ձեռք մեկնելու միջոցների ընտրության հարցում: Դա բա-

⁷¹³ Նույն տեղում, էջ 132:

⁷¹⁴ Նույն տեղում, էջ 150:

⁷¹⁵ Նույն տեղում, էջ 168:

⁷¹⁶ Նույն տեղում, էջ 140:

⁷¹⁷ Նույն տեղում, էջ 142:

ցատրվում է նրա ֆրանսիացի ժամանակակիցներին բնորոշ հավաքական մտածողության առանձնահատկություններով, ըստ որի՝ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանումն անհրաժեշտ էր Եվրոպական պետությունների միջև հավասարակշռությունն անսասան թողնելու համար:

Ինչպես և ժորեսը, հայ ժողովրդին մեծ հետևողականությամբ և կրօստությամբ սատարել է մեկ այլ սոցիալիստ՝ Սարդու իրավունքների լիգայի նախագահ, Ազգային ժողովի պատգամավոր Ֆրանսիս Դը Պրեսանսեն, որն, ի դեպ, Դայկական հարցով սկսել է հետաքրքրվել ավելի վաղ, քան շատ այլք, այդ թվում ժորեսը: Տարբեր ատյաններում Դայոց ցեղասպանության կազմակերպիչների դատապարտմանը բազմիցս հանդես եկած Պրեսանսեի առաջին հոդվածը, որը նախորդել է փաստաթղթերի տարբեր ժողովածուների, այդ թվում «Դեղին գրքի» լույս ընծայմանը, նրա հետագա ելույթներից զանազան վում է հեղինակի՝ իրադարձություններին տված մեկնաբանությունների հարցում դրսնորած չափավոր մոտեցմանը, որն, անկասկած, պայմանավորված է եղել կոտորածներին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների բացակայությամբ, նրա անբավարար իրազեկությամբ⁷¹⁸:

Պրեսանսեն համառոտակի անդրադառնում է համիդյան ջարդերի ամենացայտուն դրվագներին, ընդհանուր գծերով ներկայացնում 1894 թ. Սասունի «Վայրագ» կոտորածը, որը տեղի էր ունենում «գերազույն իշխանությունների իրամանով և նրանց աչքի առջև»: Դավանաբար, տակավին որևէ հստակ պատկերացում չունենալով, թե ովքեր են մարմնավորում «գերազույն իշխանությունները», նա շարունակում է. «Ասկել է, որ վերից իրահանգ է տրվել այս տարածաշրջանների հայերին բնաշնչելու մասին: Անկախ այն բանից, թե որ կողմ է շրջվում հայացքը, ի հայտ են զայիս միայն դահիճներ՝ բայց ոչ հովանավորներ կամ դատավորներ»⁷¹⁹:

Միևնույն գուսապ վերաբերմունքն է նա դրսնորում 1895 թ. Կոստանդնուպոլսում հայերի զանգվածային կոտորածների գնահատման հարցում, չափավոր դիրքերից ակնարկելով իշխանությունների բողոքության, անգամ, նրանց՝ հայերի, դեմ սանձազերծված շարժումը դեկավարելու հանգանանքները: Արդյունքում, հայ ժողովրդի բնաշնչման կազմակերպիչների բացակայությունան առնչվող նրա

⁷¹⁸ F. de Pressencé, La Question arménienne // « Revue des deux mondes », 3^e livraison, 1^{er} décembre 1895.

⁷¹⁹ Նույն տեղում, էջ 675:

հիմնական եզրակացությունը կրում է հեղինակի տարակուսանքի դրոշմը, ինչը դեռևս 1895 թ. հարցը քննարկող ֆրանսիացի գործի համար միանգամայն օրինաչափ է. «Արդյո՞ք հարկ է հավատ ընծայել բարբարոսական մաքիավելիականությամբ ոգեշնչվելու հանգամանքին և Ելղոզ-Բյոշիցից տրված նշանաբանին: Դայերն այդ են պնդում, բայց անհերքելի փաստերը չեն բավականացնում»: Այսպես, անհրաժեշտ սկզբնաղբյուրների սակավության պատճառով Պրեսանսեն սահմանափակվում է սոսկ ընդհանուր բնույթի դիտողություններով, որոնք, հարկավ, բավական հեռու են քննարկվող հարցերին սպառիչ մեկնաբանություններ տալուց: Այդուհանդերձ, նա անվարան մատնացույց է անում ծայր առաջ վայրագությունների սանձահարման հարցում օսմանյան կառավարության՝ իր կարծիքով դրսերած անզորությունը⁷²⁰:

Դաջորդ տարիներին աճել է Պրեսանսեի հետաքրքրությունը հայերի և քրիստոնյա այլ ժողովուրդների հանդեպ օսմանյան կառավարության կիրառած ցեղասպան քաղաքականության նկատմանը, իսկ ծանոթությունը զանազան փաստաթղթերի ժողովածուներում հրապարակված վավերագրերի հետ նպաստել հայկական կոտորածների ծավալի, ընթացքի և դրանց կազմակերպիչների շուրջ նրա մոտ ամբողջական պատկերացումների ձևավորմանը: Այդ մասին է վկայում Դայոց ցեղասպանության մեկնաբանության հարցում նրա դիրքորոշման կրած էական փոփոխությունը: Թե՛ ֆրանսիական խորհրդարանում և թե՛ այլ ատյաններում բազմիցս մասնակցելով համիդյան կոտորածների շուրջ ծայր առաջ քննարկումներին և ունենալով ծավալուն մերկացուցիչ ելույթներ, XX դարի սկզբին նա հանդես է գալիս արդեն իբրև թուրք ջարդարանների և առաջին հերթին Արդուլ Դամիդի հետևողական դատափետող:

1903-1904 թթ. Պրեսանսեն պարբերաբար լուսաբանում է հայկական կոտորածները, դրանք բնութագրում իբրև Դայաստանում «ահեղի չափերով» տեղի ունեցած «զարդուրելի ողբերգություն»⁷²¹: Պատգամավորների պալատում ունեցած զանազան ելույթներում նա մանրազնին քննարկում է 1894-1896 թթ. Սասունի և Մուշի ջարդերը, հայերի անհնազանդությունը մեկնաբանում այն բանով, որ ոչ միայն Բարձր Դուռը հովանավորությունը հայցող նրանց դիմումներն են մնացել անարձագանք, այլև իշխանությունների ներկայացուցիչներն են եռանդագին ջանքեր գործադրել նրանց ունեց-

⁷²⁰ Նույն տեղում, էջ 683-684:

⁷²¹ Pour l'Arménie et la Macédoine, p. 85, 93.

վածքը կողոպտելու հարցում: Դրան հետևել է «մարդասպան զորավար» Զեքի փաշայի գլխավորությամբ գործող զորքերի միջամտությունը, որը հանգեցրել է Սասունում «սարսափազդու ողբերգության ծավալմանը»⁷²²:

XIX դարի 90-ական թթ. կոտորածների ընդհանուր գնահատականի առնչությամբ, Պրեսանսեն, Փարիզում կայացած 1903 թ. փետրվարի 15-ի ելույթում, փաստում է ցեղասպանության իրականացումն ըստ մշակված ծրագրի. «Քաղաքակիրք աշխարհին հատկապես շանթահարում է հենց այն, որ խոսք չի վերաբերում ժողովրդի մոլեռանդության հանկարծահաս ժայթքմանը: Ո՞չ, դա կազմակերպված բարբարոսություն էր, քանզի մեծ մարդասպանի դրոշմը կրող սուլթանի աչքի առօտ կոտորած սկսվում էր և ավարտվում ստույգ ժամի, Վերսկսվում՝ երբ դրան վերաբերող հրաման էր արձակվում՝ արյունաներկ անելով մի ամբողջ Երկրամաս՝ սկսած Կանա լճի ափերից մինչև Կոստանդնուպոլիս»⁷²³:

1904 թ. Սասունում հայերի ըմբոստության պատճառ Պրեսանսեն համարում է ժողովրդի տառապահց Վիճակը և այն վիատությունը, որի մեջ նրան նետել էր «արևմտյան դիվանագիտությունը», հանգամանք, որը սասունցիներին դրդել էր «անհրաժեշտ դիմադրություն» կազմակերպել⁷²⁴: Դիմնվելով Ֆրանսիացի դիվանագետների գրագրությունների վրա, նա ևս մեկ անգամ Դայոց ցեղասպանության ամբողջ պատասխանատվությունը բարդում է օսմանյան կառավարության և անձանք Աբդուլ Համիդի վրա, քանզի, ըստ նրա՝ գրեթե մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը տեղի է ունեցել ըստ վերջինիս հրահանգների⁷²⁵, որին բնութագրում է «մեծ մարդասպան», «Դայաստանի դահիճ», «Քագակիր դահիճ», «Ելղոզ-Զյոշը մենակյաց», որի մեռքը կարմրագունել է արյունից» պիտակներով⁷²⁶: Ինչպես տեսնում ենք, 1900-ական թվականների սկզբին արդեն, Պրեսանսեն Դայոց ցեղասպանությունը դիտում է իրեւ պետական քաղաքականության մակարդակով իրականացվող իրադարձություն, որը վկայում է նրա հայացքների ակնհայտ բարեշրջության նասին:

Ինչպես և Ժորեսը, Պրեսանսեն կրցոտությամբ դատապարտում

⁷²² Sassoun et les atrocités hamidiennes, Genève, 1904, p. 13, 14.

⁷²³ Pour l'Arménie et la Macédoine, p. 23.

⁷²⁴ F. de Pressencé, Les massacres d'Arménie // « Pro Armenia », 1^{er} juin 1904.

⁷²⁵ Sassoun et les atrocités hamidiennes, p. 15, 17.

⁷²⁶ Նոյն տեղում, էջ 3, Pour l'Arménie et la Macédoine, p. 33, 38 ; F. de Pressencé, Les massacres d'Arménie.

Ե Եվրոպական տերությունների, այդ թվում Ֆրանսիայի ամոթալի վարչագիծը Հայկական հարցում, որը դարձել է «1896 թ. կոտորածների անգործունյա, եթե ոչ անտարբեր ականատեսը»⁷²⁷: Նա տարակույս իսկ չի տաժում, որ 300000 հայի կոտորածի պատասխանատվությունը միանշանակորեն կրում է Եվրոպամ⁷²⁸: Ինչ վերաբերում է Երրորդ հանրապետության քաղաքականության քննադատությանը, ապա՝ Պրեսսանսեն մեղադրում է, մասնավորապես Հանուտոյին՝ ամենակարևոր դիվանագիտական վավերագրերը «Դեղին գրքում» աղճատված գետեղելու համար, ինչը հանգեցրել է իրականության ամբողջական պատկերի խեղաքյուրմանը⁷²⁹: Պրեսսանսեն շատ ավելի անողոք է նախարարի քաղաքականության ընդհանուր գնահատականի հարցում, քանզի նրա համոզմամբ՝ Հանուտոն «խարեւությունը վերածել է մեղսակցության»⁷³⁰:

Հայկական հարցն անվանելով «սուրբ գործ»⁷³¹, Պրեսսանսեն ջանքեր է գործադրում դրա լուծնան լավագույն տարբերակը որոնելու ուղղությամբ և, ի վերջո, հանդես գալիս իրք սոսկ դիվանագիտական ուղիներով Եվրոպական մեծ տերությունների միջամտության կողմնակից: Վկայակոչելով 1904 թ. Սասունում 21 օյուտի հրկիզման իրողությունը, նա այդ փաստն ինքնին բավարար է համարում պահանջելու Եվրոպայի և, մասնավորապես Ֆրանսիայի հրատապ միջամտությունը⁷³²: «Ավելի քան երեկ, – նշում է նա, – ես համառորեն հավատում եմ, որ բոլոր նրանք, ովքեր ստորագրել են Բեռլինի պայմանագիրը և [Բարձր] Պռան կոնցեսիաների պատճառով չեն կորցրել իրենց խիղճը, պետք է Կոստանդնուպոլսում համատեղ քայլ ծեռնարկեն, որը բավական կլինի արյունահեղությունը կասեցնելու համար»⁷³³:

Այդուհանդերձ, նա հավուր պատշաճի խորամուխ չի եղել Եվրոպական պետությունների և, դրանց թվում, Ֆրանսիայի վարածքքամետ քաղաքականության պատճառների բացահայտման մեջ, մասնավորապես Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպաննան առնչությամբ: Ինչ վերաբերում է հարցի

⁷²⁷ F. de Pressencé, Asie Mineure // « Pro Armenia », 15 septembre 1904.

⁷²⁸ Sassoun et les atrocités hamidiennes, p. 17.

⁷²⁹ Pour l'Arménie et la Macédoine, p. 40.

⁷³⁰ F. de Pressencé, Les massacres d'Arménie.

⁷³¹ F. de Pressencé, Asie Mineure ; տե՛ս նաև Une lettre de M. Pressencé // « Pro Armenia », 15 avril 1904.

⁷³² F. de Pressencé, Les massacres d'Arménie.

⁷³³ Նույն տեղում:

լուծնան եղանակներին, ինչպես տեսնում ենք, թե՝ ժորեսը և թե՝ Պրեսանսեն եվրոպական պետությունների միջամտությունը սահմանափակել են Բարձր Դռան վրա դիվանագիտական խողովակներով ճնշում գործադրելու և արևմտահայության հանար նախատեսված բարենորոգումները նրան պարտադրելու շրջանակներում, շրջանցելով, փաստորեն, օսմանյան իշխանությունների ներքին գործերին զինված միջամտություն ցուցաբերելու հնարավորության տարբերակը:

Այդուհանդեռձ, կասկածից վեր է, որ ժորեսի և Պրեսանսեի բռաշունչ ելույթները նշանակալից երևույթներ են ֆրանսիական քաղաքական դաշտում (առավել և եթե նկատի ունենանք, որ դրանց մի մասը հնչել է Ազգային ժողովի ամբիոնից), որոնց ճառագայթները լույս են սփռել այն քողի վրա, որով ֆրանսիական կառավարության թրքամետ քաղաքականությունն օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձություններն անցրպետում էր եվրոպական հասարակության լայն խավերից:

Դայոց ցեղասպանությանն առնչվող խնդիրների բազմազանությամբ աչքի է զարնում հայտնի քաղաքական գործիչ, պատգամավոր, կոմս Ալբեր դը Մունի (1841-1914) ելույթը, որով 1896 թ. նոյեմբերի 3-ին նա հանդես է եկել Ազգային ժողովի նիստում⁷³⁴:

Դայկական հարցն իրավամբ դիտելով իբրև «հիմնավոր և ահարկու» Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս⁷³⁵, դը Մունը հակադրվում է եվրոպական հանրության շրջանում լայն տարածում գտած այն նտայնությանը, ըստ որի՝ օսմանյան կառավարությունն ի վիճակի չի եղել սանձահարելու հայկական զանգվածային կոտորածներն իրականացնող արյունուշտ բարբարոսների հրոսակախմբերի գործողությունները: Նա հիմնավորապես բացահայտում է Աբդուլ Դամիդի դերն ու մասնակցությունը համիդին գորամիավորումների կազմավորման գործում, որոնք կրելով նրա անունը, դրանով իսկ ստացել են «պաշտոնական ինվեստիտուրա»: «Ես կարդացել եմ, – հավաստում է նա, – որ հաջողության են հասել, մասնավորապես քրդերից բաղկացած՝ կազմակերպված զարդարարների հրոսակախմբեր ստեղծելու հարցում»⁷³⁶.

Ընդգծելով Դայոց ցեղասպանության՝ իբրև պետական քաղա-

⁷³⁴ Discours d'interpellations relatives aux événements d'Arménie // «Annales catholiques», 14 novembre 1896, N 1338.

⁷³⁵ Նույն տեղում, էջ 81:

⁷³⁶ Նույն տեղում, էջ 72:

բականության մակարդակով տեղի ունեցող գործընթացի բնույթը, դը Մունը մանրամասնորեն քննարկում է կոտորածներն անմիջականորեն իրականացնողների դերակատարումը և հակադրվելով իր ժամանակակիցներից ոմանց՝ բացահայտում քրդերից, լազերից, չերեզներից բարկացած համիդին զորամիավորումների մասնակցությունը դրանց⁷³⁷:

1896 թ. օգոստոսի 26-ին Կոստանդնուպոլիսում տեղի ունեցած կոտորածների առիթով, դը Մունը հիմնվելով «բոլոր ականատեսների» վկայությունների վրա, հավաստում է «մարդասպանների հրոսակախմբերի վերածված՝ թուրք բնակչության» մասնակցությունը հայերի բնաշնչնանը, որին նախապես զինել էին նմանատիպ մահակներով և այնքան լավ նախապատրաստել, որ «տարօրինակ ներդաշնակությանք կոտորածը Ստամբուլում սկսվում էր այն նույն ժամին, երբ Բանկ օտոնանի դեմ կատարված գործից հետո այն բռնկվում էր Ստամբուլից ահօնելի տարածության վրա գտնվող Ղալաթիայում»⁷³⁸:

Նայոց ցեղասպանության՝ իրեն վերից տրված իրահանգների հիման վրա իրականացված եղելության բնույթը դը Մունը հաստատում է նաև նահանգներում օսմանյան պաշտոնյաների դերի բացահայտման միջոցով: Այս հարցում նա ցուցաբերում է համակողմանի մոտեցում և վկայակոչում հավաստի փաստեր առ այն, թե ինչպես էին օսմանյան պաշտոնյաներից ոմանք սատարել հայերին: Դրանով նա մեկ անգամ ևս ընդգծում է այն համգանանքը, որ ցանկության առկայության պարագայում, ցեղասպանության գործընթացը հիմարավոր է եղել կանխել: «Իրավասու չենք ասելու, թե ավագակներին սանձահարելն անհնարին էր, թե պաշտոնյաները թույլ էին, անզոր: Ո՛չ, ամենուր, որտեղ ցանկություն է դրսնորվել այդ անելու՝ հաջողության են հասել: Եղել են մի քանի ազնիվ պաշտոնյաներ, որոնք դիմակայել են կոտորածներին... Եթե օսմանյան պաշտոնյաները դրսնորին եռանդ և հաստատակամություն, կառող էին խոչընդոտել նվազագույնը կոտորածների գերակշռող մասի իրականացմանը», – այսպիսին է նրա եզրակացությունն այս առնչությամբ⁷³⁹:

Նայոց ցեղասպանության՝ իրեն կանխամտածված իրադարձության փաստը դը Մունը հիմնավորում է նաև օսմանյան պաշտոնյաների նկատմամբ կենտրոնական կառավարության որդեգրած

⁷³⁷ Նույն տեղում, էջ 72, 73:

⁷³⁸ Նույն տեղում, էջ 74:

⁷³⁹ Նույն տեղում, էջ 73:

վարքագի հենքի վրա, ընդգծելով այն անառարկելի իրողությունը, ըստ որի՝ հայկական կոստորածները դեկապարած ոչ մի օսմանյան ստորադաս պաշտոնյա, երբեւ որևէ պատժի չի ենթարկվել: «Ամենամեղավորները, ամենավարկաբեկվածները, – գրում է նա, – արժանացել են բարեհաճ վերաբերմունքի և պարզաւորվել: Նրանցից ոմանց կանչել են Կոստանդնուպոլիս և մեծարել: Փոխարենը, նրանց, ովքեր իրենց պարտականությունն անբողոքությամբ չեն կատարել, ովքեր ջանացել են դիմադրել՝ հանդիմանել են, պաշտոնանկ արել, երբեմն ենթարկել ավելի խիստ պատժի»⁷⁴⁰: Այս հետեւություններով, ի դեպ, նա անուղղակիորեն արժանի հակահարված է տվել արևմտահայության բնաջնջումը սոսկ կրոնական առճակատմանք պայմանավորող իր ժամանակակիցներին, ինչի անհրաժեշտությունը պատմական այս ժամանակահատվածում մեծապես զգացվել է:

Դը Մունն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում օսմանահպատակ հայերի նկատմանք իշխանությունների գործադրած զանազան բռնություններին (խուզարկություններ, բանտարկություններ, աքսոր), որոնք շատերին հարկադրում էին որդեգրել տարագրության դժնիակ ճանապարհը և հանգրվանել այլ երկրներում: «Խոսքը վերաբերում է օջախից գուրկ և հուսալքված մի ամբողջ ժողովողի աղետալի զանգվածային տարագրությանը», – եզրակացնում է նա⁷⁴¹: Այս հարցի մեկնաբանության ասպարեզում նրա դիրքորոշումն ընդգրկուն է և անկողմնակալ: Դը Մունն առաջադրում է սպառիչ բացատրություններ՝ հիմնավորապես մերկացնելով օսմանյան իշխանությունների ստոր գործելամիջոցները: Խոսքը վերաբերում է անելանելի կացության հետևանքով հայերի տարագրությանն առնչվող հարցում նրա գրաված սկզբունքային դիրքորոշմանը: «Արդարացնելու համար այս բոլոր սարսափները, Անատոլիայի քաղաքներն են ուղարկվում հատուկ պաշտոնյաներ, – գրում է նա, – որոնք, ահարեւէզության և խոշտանգումների միջոցով, կոտորված բնակչության դժբախտ բեկորներից, սպառնալիքի տակ, կորզում են գրավոր հայտարարություններ, որոնցով նրանք ընդունում են, որ միակ, իրական մեղավորները հայերն են և, բախտի տարօրինակ քմահաճուքով, սուլթանին են հղում շնորհակալություններ այն հովանավորության համար, որը նրա կառավարությունը դրսենորում է իրենց հանդեպ»⁷⁴²:

⁷⁴⁰ Նույն տեղում, էջ 74:

⁷⁴¹ Նույն տեղում, էջ 75:

⁷⁴² Նույն տեղում:

Ի տարբերություն իր բազմաթիվ ժամանակակիցների՝ Դը Մունն անդրադառնում է նաև հայկական կուսակցությունների, մասնավորապես հնչակյանների գործունեությանը, որոնց նկատմամբ, Ելելով նրա ելույթից կարելի է հավաստել, որ համակրանքի նշույլ իսկ չի տածել: Այդուհանդերձ, նրանց, իր կարծիքով, անշրջահայաց գործողությունները չեն կարող արդարացնել օսմանյան կառավարության վայրագությունը: Դատակեցնելով իր դիրքորոշումը, նա հարցի նկատմամբ ցուցաբերում է միանգամայն անկողմնակալ մոտեցում և փաստում, որ բօնություններին ծեռնամուլս լինելու խնդրում թուրքերը չեն սպասել հնչակյան կուսակցության կազմավորմանը, ուստի ազգային այս կուսակցության կազմավորումը նա, հիմնվելով հավաստի փաստերի վրա, համարում է շատ ավելի հակահարված, քան սադրանը⁷⁴³:

Դայերի ընդդիմությանն անդրադառնալով շատ ավելի լայն հենքի վրա, դը Մունն այն ըննարկում է նահանգներում՝ նրանց համար առկա «անհանդուրժելի» կացությամբ և վկայակոչում բազմաթիվ փաստեր առ այդ, այդ բվում հորում հայ ականատեսների վկայությունները⁷⁴⁴:

Դը Մունի խորհրդածություններում որոշակի տեղ է գրադեցնում նաև մեծ տերությունների՝ արևմտահայության ճակատագրի հանդեպ դրսնորած անտարեր վարքագիր քննադատությունը: Ըստ նրա համոզման՝ Եվրոպան պարտավոր է եղել միջանտել, քանզի Բեռլինի վեհաժողովի ընդունած պայմանագրի 61-րդ հոդվածով ստանձնել էր նման պարտավորություն: Նա կսկիծով է հավաստում տասնութ տարուց ի վեր՝ բարենորդումների իրականացման ուղղությամբ տերությունների դրսնորած անգործությունը, որի արդյունքում անպատճելիության հետևանքով՝ տարիների ընթացքում բազմապատկվել են հայերի «անընդմիջելի չարաշահումներն» ու տառապանքները⁷⁴⁵:

Դը Մունը, սակայն, հանդես է գալիս ոչ միայն իբրև Արևմտյան Դայաստանի համար նախատեսված բարենորդումների կենսագործման ջերմեռանդ պաշտպան, այլև Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման կողմնակից և հավաստում, որ «խաղաղության երաշխիքը» բաքնված է հենց դրա-

⁷⁴³ Նույն տեղում, էջ 78:

⁷⁴⁴ Նույն տեղում, էջ 78-80:

⁷⁴⁵ Նույն տեղում, էջ 80:

նում⁷⁴⁶: Այսուամենայնիվ, նա գտնում է, որ կայսրության տարածքային ամբողջականության պահպանումը կարող է խարսխվել միմիայն դրա «քնակիչների ապահովության» վրա, «մասնավորապես, նրանց, որոնց ազգությունը, կրոնը զանազանվում են իրենց տիրակալների ազգությունից և կրոնից»⁷⁴⁷:

Դայ ժողովրդին դը Մունը մատուցել է մեկ այլ մեծ ծառայություն ևս: Ժորեսի ու Կոչենի հետ մեկտեղ, նա պահանջել է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության արխիվում պահպող՝ հայկական կոտորածներին առնչվող վավերագրերի լույս ընծայումը⁷⁴⁸, որն իրականացվել էր դրանից մեկ տարի անց:

* * *

Դայոց ցեղասպանության շուրջ Եվրոպական հանրությանը հավաստի տեղեկություններ հաղորդելու հարցում քաղաքական գործիչներից զատ մեծ ավանդ են ունեցել նաև ֆրանսիացի որոշ գործներ, որոնք իրենց ամբողջ հեղինակությունը գործադրել են հայկական կոտորածների կասեցման համար:

Դայ ժողովրդի շահերն ու իրավունքները սատարած ֆրանսիացի մտավորականների փայլուն համաստեղության մեջ իր ուրույն տեղն ունի աշխարհահօչակ վիպասան Անատոլ Ֆրանսը (1844-1924), որի հետաքրքրությունը Դայկական հարցի նկատմամբ երբեք չի խամրել: Դամիդյան կոտորածները նրան դրդել են ամենաեռանդուն ձևով աջակցելու՝ ի նպաստ նահատակվող արևնտահայությանը Ֆրանսիայում ձևավորվող շարժմանը⁷⁴⁹: Պատահական չէ, որ 1900 թ. ժամանակակից ժամանակակից աշխարհահօչակ Վարիզուանական կուսակցությունը կուտակում է Դայ գանձերու Փարիզում հիմնադրված⁷⁵⁰ և արևմտահայության հուսակտուր վիճակն ու հայկական կոտորածները լուսաբանող «Պրո Արմե-

⁷⁴⁶ Նույն տեղում, էջ 82:

⁷⁴⁷ Նույն տեղում:

⁷⁴⁸ Նույն տեղում, էջ 71:

⁷⁴⁹ Այդ շարժման մասին տե՛ս V. Duclert et G. Pécout, *La mobilisation intellectuelle face aux massacres d'Arménie (1894-1900).— Les exclus en Europe, 1830-1930. Sous la direction d'A. Guslin et D. Kalifa*, Paris, 1999, p. 325-326: XIX դարի 90-ական թվականներին հայ ժողովրդի պաշտպանությամբ հանդիս եկած Անդր Ոռշփորի (1831-1913) հայանպատ գործությունն մասին տե՛ս E. Kheyadjians, նշվ. աշխ., էջ 44-46:

⁷⁵⁰ Լեռ, Թուրքահայ հեղափոխության զաղափարաբանությունը, հ. Բ, Փարիզ, 1935, էջ 33; Ծ. Պ. Աղայան, Դայկական ջարդերը և մեծ տերությունների քաղաքականությունը.— Դայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 281:

նիա» Երկշաբաթաթերթի (1900-1908, 1912-1914) ղեկավար մարմնի կազմում⁷⁵¹:

Սկսած XIX դարի 90-ական թթ. Երկրորդ կեսից Ֆրանսը պարբերաբար նասնակցել է ոչ միայն Ֆրանսիայում, այլև Եվրոպական այլ Երկրներում գումարվող՝ օսմանյան վարչակարգի խարազանմանը նվիրված միջազգային գիտաժողովների աշխատանքներին, ջարդարարներին տվել հակիրճ, սակայն դիպուկ գնահատականներ: Նրա առաջին ելույթն առնչվում է 1897 թ. մարտի 9-ին Փարիզի Աշխարհագրական ընկերության սրահում կայացած Չոպանյանի՝ հայ ժողովուն պատմությանը և հայ գրականության անցած ուղղուն նվիրված հրապարակային դասախոսությանը: Նախագահելով այս նիստը, բացման համառոտ խոսքում Ֆրանսը համիլյան կոտորածները բնութագրում է իրեն դժմակ և հետևողականորեն իրականացվող գործողություն, որի ընթացքում՝ «իր հզորությամբ ու փոքրոգությամբ սարսափազդու, ահարեւկցության նկատմամբ մեծ հակում ունեցող բռնակալ սուլթանի հրամանով զոհվել է Երեք հարյուր հազար հայ»⁷⁵²: Դիշարժան է, ի դեպ, սուլթանին տված նրա շատ ավելի սպառիչ մեկ այլ բնորոշում: «Եր թշվառ ամենազորության գրկում մշտապես դողահար մի իրեշ՝ Աբրուլ Շամիդ II-ը, որը սոսկում է իր հանցագործություններից և սփոփովում նոր հանցանքներին ի տես, 1893-1895 թթ. կախել, քառատել, կենդանի այրել է Երեք հարյուր հազար հայի և դրանից հետո նողկալի շրջահայացությամբ և հետևողականորեն հետամուտ է այս որբացած ժողովորդի ոչնչացմանը»⁷⁵³: Դայոց ցեղասպանությունը, Ֆրանսի կարծիքով, իրականացվում էր նրա իսկ որդեգրած քաղաքական ծրագրի հիմն վրա, որի նպատակն ամբողջ հայ ժողովորդի բնաշնչումն էր⁷⁵⁴:

Դայ ժողովորդի ոչնչացմանը խոչընդոտելու ամենաարդյունավետ միջոցը մեծ գրողը համարում է Աբրուլ Շամիդի ծրագրերի մերկացումը և դրանց կենսագործման յուրաքանչյուր փորձի մասին ամբողջ աշխարհին իրացեկելը՝ առաջին իսկ նախանշանի ի հայտ գալուն ևեթ: Դենց այս հարցում է, որ նրա համոզմամբ, Փրանսիացիներն ի զրոյ են եղել օժանդակելու հայերին, քանզի ըստ նրա՝ «կո-

⁷⁵¹ 1912-1913 թթ. Երկշաբաթաթերթը լույս է տեսել այլ՝ «Pour les peuples d'Orient» («Դամուն Արևելքի ժողովուրդների»), խորագրով:

⁷⁵² A. France, [Préface].— A. Tchobanian, L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient. Conférence faite le 9 mars 1897 à la salle de la Société de Géographie sous la présidence de M. Anatol France, Paris, 1897, p. 6.

⁷⁵³ Pour l'Arménie et la Macédoine, p. 185.

⁷⁵⁴ A. France, Pour l'union arménienne // «Pro Armenia», 25 mai 1901.

տորածներն անհրագործելի են դառնում, երբ դրանք ազդարարվում են աշխարհում»⁷⁵⁵: Միաժամանակ Ֆրանսն առաջարկում է ստեղծել հայկական համայնքների ամրակուռ միություն, որը նրանց հնարավորություն կընծեռեր հովանավորելու «սպառնալիքի տակ գտնվող իրենց եղբայրներին: Նրանց գործողությունը միայն այս պայմանով կարող է արդյունավետ լինել, քանզի այն համընդիանուր կլինի: Նրանց գործը մարդկության գործն է», – եզրահանգում է նա⁷⁵⁶: Այս իսկ պատճառով, Ֆրանսը չի զլանում կշտամբանքի խոսքեր ուղղել ֆրանսիական կառավարության և մամուլի հասցեին, որոնք իրենց լրությամբ հասարակությանը «գորեք անտեղյակության մեջ» էին պահում⁷⁵⁷:

Իրադարձությունների զարգացմանը զուգընթաց՝ Ֆրանսի հետաքրքրությունը հայերի ճակատագրի նկատմամբ աճել է, մղելով նրան դարասկզբին ակտիվորեն մասնակցելու հտալիայում՝ Դայաստանի և Մակեդոնիայի հարցերին նվիրված միջազգային հավաքների աշխատանքներին: 1903 թ. մայիսի 7-ին, Շոռմում՝ Սամուլի միության սրահում կազմակերպված նիստում հանդես գալով բացման խոսքով, նա կրկին անդրադառնում է համիդյան կոտորածներին, մատնանշում «ամոթաբեր լրություն պահպանող Եվրոպայի առջև՝ բնաջնջող սուլթանի գործած սպանությունները» և պահանջում հանուն հայերի իրավունքների պաշտպանության «անհրաժեշտ ու վեհ գործի» կենսագործել Բեռլինի վեհաժողովի ընդունած պայմանագրի որոշումները⁷⁵⁸:

Միևնույն պահանջը նա առաջադրում է հաջորդ Ելույթներում: 1903 թ. մայիսի 21-ին, Շոռմի «Ազդիանո» թատրոնում ունեցած իրապարակային Ելույթում հայերի նկատմամբ՝ ըստ Բեռլինի Վեհաժողովի հոդվածների՝ տերությունների ստանձնած պարտավորությունների ի կատար ածճանն առնչվող պահանջը Ֆրանսը համարում է «արդարացի» և գտնում, որ հարկ է Եվրոպայում ծևավորել այնպիսի հասարակական կարծիք, որը նպաստեր 61-րդ հոդվածի կենսագործնան ու ապահովեր «Դայաստանի և Մակեդոնիայի անդորրը, ազատագրեր Եվրոպան անընդմեջ անհանգստություն պատճառող և վաղուց ի վեր Արևելյան հարց կոչվող հասկացությունից»⁷⁵⁹:

⁷⁵⁵ Նույն տեղում:

⁷⁵⁶ Նույն տեղում:

⁷⁵⁷ A. France, [Préface], p. 6.

⁷⁵⁸ Pour l'Arménie et la Macédoine, p. 172-173.

⁷⁵⁹ Նույն տեղում, էջ 185-186:

Մեկ այլ առիթով՝ 1904 թ. հունիսի 29-ին Լոնդոնում գումարված՝ Դայկական հարցին և Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակին նվիրված միջազգային գիտաժողովի մասնակիցներին հղած նամակում նա վերստին ակնարկում է մեծ տերությունների՝ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձություններին միջամտելու անհրաժեշտության մասին. «Այն, ինչ դուք պահանջում եք, հստակ է, օրինական, գործնական... Արդյո՞ք հնարավոր է, որ հովանավորի դեր ստանձնած և, հետևաբար, պատասխանատվություն կրող Եվրոպան... անզոր լինի սուլթանի երեք հարյուր հազար հպատակների սպանության հարցում»⁷⁶⁰:

Ինչպես տեսնում ենք, Դայոց ցեղասպանությանը նվիրված առաջին իսկ ելույթներում Ֆրանսը ոչ միայն արևմտահայերի կոտորածները դիտել է իբրև պետական քաղաքականության նակարդակով իրականացվող իրադարձություն և համուն արևմտահայության փրկության տերություններից պահանջել իրականացնել գործնական քայլեր, այլև ցեղասպանության իրողությունը քողարկելու համար քննադատել է Եվոպական, այդ թվում, ֆրանսիական կառավարություններին⁷⁶¹:

Ֆրանսիացի գրողների թվում՝ առաջիններից մեկը, որն անկողմնակալ դիրքերից քննարկել է համիդյան կոտորածների սկզբնական փուլը գրող Կարոլին Ռեմին (1855-1929) է, որը պատմության մեջ հայտնի է Սևերին Կեղծանվամբ: Ծավալված իրադարձությունների շուրջ դեռևս չունենալով նույնիսկ մանրակրկիտ տեղեկություններ, հայկական կոտորածներին վերաբերող առաջին իսկ լուրերը ստանալուն ևեր նա ձեռնամուխ է Եղել Սասունում 1894 թ. տեղի ունեցած կոտորածների պատկերը, թեկուզ և հապանցիկ, ֆրանսիական համրությանը ներկայացնելու գործին: Սևերինի «Դայաստանի կոտորածները» խորագիրը կրող հոդվածը կարելի է անվարան համարել առաջին «լույսի շողը» մեզ հետաքրքրող հարցում «խավարի թագավորության» մեջ խարխափող ֆրանսիական իրականության մեջ⁷⁶²:

⁷⁶⁰ Տե՛ս նաև «Pro Armenia», 15 juillet 1904.

⁷⁶¹ Ա. Ֆրանսի այս ժամանակաշրջանի հայանպատ ելույթների մասին տե՛ս նաև Գ. Չովնան, Անատոլ Ֆրանսը և հայերը (Ժննդյան 150-ամյակի առթիվ).—«Սովետական գրականություն», 1969, թիվ 6; Ե. Գասպարյան, Անատոլ Ֆրանսը և հայ ժողովուրդը, Երևան, 2003, էջ 22-94:

⁷⁶² Այն տպագրվել է «Լա լիր պարու» լրագրում 1895 թ. փետրվարի 3-ին: Մենք, սակայն, հիմնավում ենք մեզ մատչելի՝ հոդվածի վերատպության վրա. Séverine, Les massacres d'Arménie // «L'Arménie», 1^{er} avril, 1895:

Սևերինը համառոտակի անդրադառնում է Սասունի տարածքում տեղի ունեցած անցքերին, հիշատակում հրկիզված գյուղերի անունները, նշում, որ սասունցիներին գրոհած 50000 օսմանյան զինվորների գերակշռող մասը (շուրջ 40000-ը) եղել են քրդեր, որոնց համեմատում է «վայրենի զազանների» հետ: Դանրությանը «հրեշավոր վայրագություններին» առնչվող նանրամասներին նա տեղեկացնում է շվեյցարական թերթերից մեկում տպագրված հոդվածից մեջբերումներ կատարելով:

Դավանաբար, անհրաժեշտ սկզբնաղբյուրների բացակայության պատճառով Սևերինը սխալմամբ Դայոց ցեղասպանությունը մեկնաբանում է իբրև կրոնական պատճառներ ունեցող իրադարձություն: «Չեր նման նարդիկ, – դիմում է նա իր հայրենակիցներին, – նենգորեն, նողկալիորեն կոտորվել են հազարներով, բայց նրանց կոտորել են քրիստոնյա լինելու պատճառով»⁷⁶³:

Դետաքրքրական է Սևերինի գրաված սկզբունքային դիրքորոշումը՝ ֆրանսիական կառավարության որդեգրած քաղաքականությունը խարազանելու հարցում: Նա խստագույնս դատապարտում է Ֆրանսիայի ղեկավար շրջանակների անկարեկից վարքագիծը, նրանց լրակյացությունը բնութագրում իբրև՝ «եսասիրությունից սկիզբ առնող հանցագործ անտարբերություն, եսասիրություն, որը փակում է աչքերն ու ականջները»: Ուստի Սևերինը հաստատակամորեն կոչ է անում «անարգանքի սյունին գամել» ֆրանսիական քաղաքականությունը կերտողներին, որոնց անվանում է «քարբարոսների հանցակիցներ»⁷⁶⁴:

Մեր վերլուծած ելույթներն ակնբախ են դարձնում այն հետաքրքրությունը, որը հայկական կոտորածների սանձազերծման պահից ի վեր արևմտահայության ճակատագրի հանդեպ դրսկորել են մի շարք ֆրանսիացի քաղաքական գործիչներ՝ հայ

⁷⁶³ Դարկ է նշել, որ Դայոց ցեղասպանության մասին առաջին տեղեկությունները Սևերինը ստացել է հայր Շարմետանից, որն այդ ժամանակաշրջանում արևմտահայության բնաջնջումը մեկնարանում էր իբրև լոկ կրոնական դրդապատճառներ ունեցող եղելություն: Այս հանգամանքն, անտարակույս, իր դրոշմն է քողել Սևերինի մեկնարանությունների վրա: Ըստ նրա վկայության՝ հայր Շարմետանը նրան հրավիրել է իր մոտ և գրուց ունեցել Արևմտան Դայաստանն ալեւոծած իրադարձությունների շուրջ: Դայաստանը, ինչպես հավաստում է Սևերինը, մինչ այդ նրա համար եղել է սոսկ աշխարհագրական հասկացություն: Միայն նրա հետ ունեցած գրուցից հետո է Սևերինը գինվորագրվել հայ ժողովրդի շահերի պաշտպանության գործին: *Sur l'Arménie indépendante*, Paris, 1920, p. 65-66:

⁷⁶⁴ Սևերինի հաջորդ ելույթների մասին տես'ս *E. Khayadjian*, նշվ. աշխ., էջ 28, 41-44:

Ժողովրդի պատմության ամենաօրհասական ժամանակաշրջան-ներից մեկում: Չայած նրանք ունեցել են միանգամայն տարրեր, երբեմն անհամատեղելի, քաղաքական համոզմունքներ, Դայոց ցեղասպանության կազմակերպիչներին խարազանելու, Եվրոպական մեծ տերությունների, այդ թվում Ֆրանսիայի, ղեկավար շրջանակների վարած թրքամետ քաղաքականության, հայ ժողովրդի գոյատևման խնդրում նրանց ի հայտ բերած անտարբեր վերաբեր-մունքի քննադատության հարցերում ցուցաբերել են անկողմնակալ մոտեցում և համուն արևմտահայության փրկության հանդես Եկել, ընդիհանուր առմամբ, միասնական դիրքերից, առաջարել կոտո-րածների կասեցման զանազան տարբերակներ: Դասկանալի է, որ նրանցից ոմանք Ելենով քաղաքական նկատառումներից՝ իրենց Ելույթներում արծարծվող հարցերը, ըստ անհրաժեշտության, օգ-տագործել են քաղաքական այս կամ այն ախոյանին կամ խնճակ-ցությանը պախարակելու, անգամ տապալելու միտումից դրդված: Թեև նրանց ջանքերը, ցավոք, շշափելի արդյունքների չեն հանգեց-րել, այդուհանուերձ, անհետևանք չեն մնացել: Ցանկանում ենք, մասնավորապես, ընդգծել այն մեծ դերը, որը նրանք ունեցել են հա-միոյան կոտորածների հավաստի պատկերը ֆրանսիական հասա-րակությանը ներկայացնելու գործում, որն ուրանալն անբույլատրե-լի է:

Պատմագիտական առումով հարկ է ընդգծել նրանց մեծ պահանջը Դայոց ցեղասպանության պատմությանն առնչվող որոշ հիմնահարցերին տված մեկնաբանությունների խնդրում, որոնք ծեռք են բերում մեծ այժմնեականություն: Նախ նրանցից շատերը հստակորեն փաստել են ցեղասպանության գործընթացի իրակա-նացումը պետական քաղաքականության մակարդակով, ոմանք նույնիսկ այն պայմանավորել Դայկական հարցին լուծում տալու անհրաժեշտությամբ և դրանով իսկ անվավեր դարձրել կրոնական հակամարտության հողի վրա արևմտահայության ոչնչացման հա-վանականությունը, ինչպես նաև բացահայտել հայերի ապամբու-թյանն առնչվող ստահող բարբաջանքների սնանկությունը:

Բացի դրանից, հարկ ենք համարում չանտեսել մեկ այլ էական հանգամանք ևս: Դ. Կոշենի, Ժ. Ժորեսի, Ա. դը Մունի և խորիդարա-նային խնճակցության այլ պատգամավորների (Գ.-Ա. Շուբար, Ա. Մի-լերան)՝ Ազգային ժողովում ծավալած հայանպաստ գործունեու-թյունը նշանավորել է Դայկական հարցի քննարկման նոր փուլ: Նրանց ջանքերի շնորհիվ Ֆրանսիայի օրենսդիր մարմնում 1896-

1897 թթ. բազմիցս հավուր պատշաճի, հանգանանալից քննարկվել են համիոյան կոտորածներին առնչվող տարբեր հարցեր, որոնց հետևել են մի շարք պատգամավորների՝ օրակարգով հաստատված՝ արտաքին գործերի նախարարից բացատրություններ պահանջող հարցերը⁷⁶⁵, ինչը միանգամայն նոր երևույթ էր, առաջընթաց քայլ՝ Հայկական հարցին և հայկական կոտորածներին Եվրոպայում հրապարակայնություն տալու ասպարեզում:

Ֆրանսիացի որոշ պատգամավորների գործունեությունն այս ասպարեզում հիրավի արժանի է դրվատանքի: 1896 թ. նոյեմբերի 3-ին Ազգային ժողովում ժողովուի նորեսի ելույթից հետո Կոչենը, Շուբարը և ոյ Մունը Հանուտոյից պահանջել են բացատրություն՝ Հայկական հարցում վարած քաղաքականության շուրջ: Թեև արտաքին գործերի նախարարի քաղաքականությունը, որը հանգել է ոչ թե հայերի, այլ Օսմանյան կայսրության տարածքում բնակվող բոլոր նահմեդական և քրիստոնյա ժողովուրդների կացության բարելավման պահանջին և միաժամանակ Եվրոպական պետությունների համատեղ ջանքերով՝ կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանը⁷⁶⁶, ինչն, անշուշտ, նրան շատ ավելի է մտահոգել, ծայների բացարձակ մեծամասնությամբ (402-ը 80-ի հարաբերությամբ)⁷⁶⁷ արժանացել է պատգամավորների հավանությանը, այդուհանդերձ, ֆրանսիական խորհրդարանում Հայկական հարցի քննարկումն ինքնին աննախադեպ երևույթ էր⁷⁶⁸: Ուստի օրինաշափ է, որ Հայկական հարցի պաշտպանների վարքագիծն արժանացել է հայ ժամանակակիցներից Ս. Վարանդյանի բարձր գնահատականին⁷⁶⁹:

⁷⁶⁵ Այդ մասին մանրամասն տե՛ս V. Duclert et G. Pécout, նշվ. աշխ., էջ 330-331:

⁷⁶⁶ Discours de M. Hanotaux, Ministre des Affaires étrangères, à la séance de la Chambre des députés du 3 novembre 1896.—Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 312-319. Հանուտոյի այս ելույթի հիմնական թեզերը հայ ընթերցողին և ներկայացրել «Մշակը» (1896, թիվ 10-11, էջ 1372-1376):

⁷⁶⁷ Տե՛ս Հանուտոյի՝ 1896 թ. նոյեմբերի 3-ի բվակիր ճեպագիրը Կամրոնին. Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 312:

⁷⁶⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս V. Poghosyan, նշվ. աշխ., էջ 468-483:

⁷⁶⁹ Ս. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 193:

2. 1894-1896 թթ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ՊԻԵՌ ՔՐԱՅԸ

Դայոց ցեղասպանության հավաստի պատկերը լուսաբանելու, թուրք ջարդարաբներին խարազանելու, մեծ տերությունների՝ հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ դրսնորած անվշտակից վերաբերմունքը նշավակելու ասպարեզում անգնատահելի ավանդ է ներդրել հայ ժողովրդի անմնացորդ նվիրյալ, բանաստեղծ, գրականագետ և թարգմանիչ Պիեռ Քիառը (1864-1912), որի հետաքրքրությունը Դայկական հարցի նկատմամբ ծագել է Դայոց ցեղասպանության գործընթացի սանձազերծումից ի վեր և ընդլայնվել դրա զարգացմանը գուգընթաց:

1893-1896 թթ. Կոստանդնուպոլսում աշխատանքային գործունեությունը ծավալած Քիառը ֆրանսիացի այն սակավաթիվ ժամանակակիցներից է, որն արևմտահայության կոտորածների սկզբնական փուլում գտնվել է Օսմանյան կայսրությունում: Այստեղ նրան աշխատանքի էին հրավիրել Բերայի հայկական ուսումնարաններից մեկում ֆրանսերեն և լատիներեն դասավանդելու համար: Կոստանդնուպոլսում հաստատվելուց փոքր անց, նա փիլիսոփայություն և գրականության պատմություն դասավանդելու հրավեր է ստացել նաև Ղալաթիայի հայկական Կեղրոնական վարժարանից, որն ընդունել է⁷⁷⁰:

Այսպես, ըստ ֆրանսիացի ժամանակակիցներից Ա. Ֆերդինանդ Շերոլիի դիպուկ բնորոշման՝ «Արևելք կատարած այցելությունը փոխել է Քիառի կյանքի ընթացքը»⁷⁷¹: Թեպետ >XIX դարի վերջին և XX դարի սկզբին նա ծավալել է քաղաքական բազմաբնույթ գործունեություն (ակտիվորեն նաև ակտիվ է Սակեղոնիայում տեղի ունեցած իրադարձություններին, Դրեյֆուսի գործին, Զոլայի դատավարությանն առնչվող քննարկումներին, եղել է Մարդու իրավունքների լիգայի հիմնադիրներից, 1904 թ. ընտրվել է դրա կենտրոնական կոմիտեի անդամ, իսկ 1911 թ.՝ գլխավոր քարտուղար)⁷⁷², այդուհանդեռ, Դայկական հարցը մշտապես գտնվել է նրա նմտորումների և զբաղումների առանցքում:

Դայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ Քիառի հետաքրքրության ամիսն մեծապես նպաստել են 1894 թ. սկիզբ առած նրա բարե-

⁷⁷⁰ E. Khayadjian, նշվ. աշխ., էջ 26:

⁷⁷¹ À la mémoire de Pierre Quillard, Paris, 1912, p. 143.

⁷⁷² Այդ մասին տե՛ս Ֆ. դը Պիեռսանսեի և այլ ժամանակակիցների՝ նրա հիշատակին նվիրված ելույթները: Նույն տեղում, էջ 73-99, 149, 168:

կամական փոխհարաբերություններն ու սերտ համագործակցությունն Արշակ Չոպանյանի հետ, որոնք ընդհատվել են միայն ֆրանսիացի մտավորականի վաղաժամ մահվամբ⁷⁷³:

Ֆրանսիական հանրության ուշադրությունը հայկական կոտորածների վրա առաջին անգամ թիարը հրավիրել է դեռևս 1895 թ., երբ Սորիս Լևեր կեղծանվամբ⁷⁷⁴ հանդես է եկել 1894 թ. Սասունի անցքերին նվիրված հողվածով⁷⁷⁵: Դեղինակը տեղի ունեցած «սարսափելի կոտորածների», «բարբարոսական, զազրելի գործողությունների» մասին, ըստ իր հավաստման՝ առաջին լուրերը քաղել է անգլիական և ֆրանսիական որոշ լրագրերից: Դիմնվելով նատչելի, թեև դեռևս սակավարիվ, այդուհանդերձ, «անառարկելի արժանահավատություն» ունեցող սկզբնաղբյուրների վրա (խոսքը Վերաբերում է, մասնավորապես, Սասունի կոտորածների հետաքննությունը վարած քննիչ հանձնաժողովի «Դամատեղ հաղորդագրությանը»)⁷⁷⁶ և կոտորածների երեք հայ ականատեսներից ստացված տեղեկություններին), նա հետապնդում է «անկողմնակալ և ստուգ շարադրանքի» միջոցով՝ Օսմանյան կայսրության տարածքն ալեկոծած այն իրադարձություններին հրապարակայնացում տալու նպատակ, որոնց մինչ այդ ֆրանսիական հանրությունն անհրագեկ է եղել⁷⁷⁷:

Դավանաբար, դեռևս հստակ պատկերացում իսկ չունենալով թե՛ Դայկական հարցի ծագումը պայմանավորած պատմական հանգամանքների և թե՛ դրա գոյության մասին, թիառն, այնուամենայնիվ, մակերեսորեն անդրադառնում է օսմանյան «բարբարոսական վարչության» կողմից «ճնշված ու սնանկացած» արևմտահայության կացությանն Օսմանյան կայսրությունում մինչ Բեռլինի վեհաժողովի գումարումը և իրավամբ մատնանշում, որ հայերը դարեր շարունակ

⁷⁷³ Ա. Չոպանյանի արխիվում պահպանվել է թիառի՝ նրան հղած տասնութ նամակ՝ նրանց գործունեության պոլիսյան ժամանակաշրջանից ի վեր, որոնց սակայն, նվիրված են երկրորդական խնդիրների: Տե՛ս ԳԱԹ, ֆ. Ա. Չոպանյանի, բաժին III, վավ. 9455-9473: 1908 թ. թիառի առաջարանով է լույս ընծայվել Չոպանյանի թարգմանությամբ իրականացված հայ հեղինակների պումբների ժողովածուն. A. Tchobanian, Poèmes. (Traduction française). Préface de Pierre Quillard, Paris, 1908.

⁷⁷⁴ Այդ մասին տե՛ս վերը նշված՝ թիառի հիշատակին նվիրված նիստում Ա. Չոպանյանի ելույթը. À la mémoire de Pierre Quillard, p. 35.

⁷⁷⁵ M. Leveyre, Les massacres des Sasounkh // « Revue de Paris », livraison du 1^{er} septembre 1895.

⁷⁷⁶ Բնագիրը տե՛ս «Նեղին գրում»՝ Rapport collectif des Délégués consulaires adjoints à la Commission d'enquête sur l'affaire de Sassoun:

⁷⁷⁷ M. Leveyre, ԱշՎ. աշխ., էջ 74:

«ուժի դեմ ուժով գործելու» ցանկություն չեն դրսնորել։ Վերջիններս, սակայն, նրա կարծիքով, քառորդ դարից ի վեր «գիտակցել են տարրական, այդ թվում, կողոպուտին և կոտորածին դիմակայելու իրավունքներ ունենալու անհրաժեշտությունը»⁷⁷⁸։ Ինչ վերաբերում է Բեռլինի վեհաժողովին հաջորդած տասնամյակներին, ապա հեղինակը գտնում է, որ իրադարձությունների զարգացման ընթացքը «դաժանորեն հուսախարել է» հայերին և հողմացրիվ արել բարենորդությունների ճանապարհով «լավագույն ճակատագրի» արժանանալու նրանց հույսերը։

Օսմանյան կայսրությունում անընդմեջ տեղի ունեցող խնդրումների փաստը նա մեկնաբանում է տեղական իշխանությունների գործադրած կեղեքումների սաստկացմանը և արդարադատության կատարյալ բացակայությամբ⁷⁷⁹։ Այդ հենքի վրա է նա քննարկում նաև արևմտահայության նկատմամբ կիրառված զանգվածային բռնությունների շարժառիթները։ Ըստ նրա՝ 1894 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Սասունում տեղի ունեցած կոտորածների անմիջական պատճառ դարձել է այն անելամելի կացությունը, որում գտնվում էին տարեկան վեց կամ յոթ անգամ կեղեքից հարկեր վճարելու անընդունակ հայերը, որոնք հարկադրված են եղել զինված պայքարի ելնելու իրենց անողոքաբար կողոպտող հարստահարիչների դեմ⁷⁸⁰։

Հեղինակը Սասունի տարբեր գյուղերում տեղի ունեցած կոտորածների գլխավոր իրականացնողներ համարում է քուրդ Ելուզակներին և համիդիե զորամիավորումներին, չանտեսելով, այդուհանդերձ, Մուշից ժամանած զորքերի դերը ծավալված իրադարձությունների ընթացքում, քանզի նրանք հանդես են եկել ոչ միայն իրեն հայկական գյուղերի վրա կազմակերպված հարձակումների «անտարբեր» դիտորդներ, այլև ակտիվ մասնակիցներ⁷⁸¹։

Քիարի ուշադրությունից չեն վրիպել նաև ջարդարարների ստորգործելամիջոցները։ «Քանի որ բնաջնջումը կատարյալ չի եղել՝ այն ավարտին հասցնելու մտադրությամբ դիմել են խորամանկության», – նշում է նա⁷⁸²։ Ըստ այդմ՝ զենքերը վայր դնելու պայմանով հայերին ներում են խոստացել, սակայն, Անդրք լեռան ստորոտում անձնատուր եղած վարսուն երիտասարդի կենդանի թաղել են։

⁷⁷⁸ Նույն տեղում, էջ 75։

⁷⁷⁹ Նույն տեղում, էջ 76։

⁷⁸⁰ Նույն տեղում, էջ 79-80։

⁷⁸¹ Նույն տեղում, էջ 83։

⁷⁸² Նույն տեղում, էջ 84։

Այդուհանդերձ, «ամենանողկալի վայրագությունները», ինչպես նա նշում է, «սառնասրտորեն իրականացվել» են Գելիեգուզանում⁷⁸³: Ընդհանուր առմամբ, ըստ հեղինակի հաշվարկների՝ Սասունի տարածքում «վայրագորեն կոտորվել» է շուրջ վեց հազար բնակիչ և ավերվել հազար ութսունութ տնից բաղկացած քսաներկու գյուղ:⁷⁸⁴

Ինչպես տեսնում ենք, Քիառը շեշտը դնում է Սասունում արձանագրված դեպքերի թվարկման վրա և անկողմնակալորեն ուրվագծում իրադարձությունների ընդհանուր պատկերը: Այս առումով, կասկածից վեր է, որ իր առջև ծառացած հիմնական խնդիրը նա կատարել է հավուր պատշաճի: Կանգ առնենք, սակայն, նրա սակավաթիվ մեկնաբանությունների վրա:

Ընդունելով, որ կոտորածները Սասունում «սարսափելիության առումով շատ ավելի ողբերգական» են, քան այլ Վայրերում տեղի ունեցած անցքերը, նա իրավանք եզրակացնում է. «Ամենակին հավաստի չէ կարծել, որ չափ ու սահման չունեցող վայրագությունից զատ, դրանք եղել են անսպասելի: Դրանք ընդամենն այն անհանդուրժելի բռնությունների կրկնությունն են, սակայն, ավելի ծանր հանգամանքներում, որոնց զոհը հայերն անընդմեջ դարձել են գրեթե ամենուր և որոնք կարող են, ի դեպ, այսօր կամ վաղը հատել բարբարոսության միևնույն Վերջնազիջը»⁷⁸⁵: Այս հարցում հարկ է նրան արժանին հատուցել:

Կոտորածների պատասխանատուններին դիմագերծելու հարցում, սակայն, Քիառի մեկնաբանություններն ամենակին սպառիչ չեն: Դայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ Աբդուլ Ջամիդին նա գերծ է պահում նվազագույն իսկ պատասխանատվությունից և ենթադրում, որ սուլթանի ապաշնորի խորհրդականներին չի հաջողվի նույրեցնել «խելացիությամբ» ու «բարյացակամությամբ» օժտված միապետին, ում կհաջողվի վերահաստատել «խաղաղությունը» և ապահովել հայ ժողովրդի «բարգավաճումը»⁷⁸⁶: Առավել ևս Օսմանյան կայսրության մայրաքաղաքում բնակվող՝ իրադարձությունների տեղիք է տալիս: Անտարակույս, այն գուցեն պայմանա-

⁷⁸³ Նույն տեղում:

⁷⁸⁴ Նույն տեղում, էջ 86: Սասունում զոհված հայերի թվաքանակի շուրջ ստույգ տվյալներ չկան. այս տատանվում է մինչ տասը հազարի սահմանում: Այդ մասին տես՝ Յ. Ա. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 202-203:

⁷⁸⁵ M. Leveyre, նշվ. աշխ., էջ 86-87:

⁷⁸⁶ Նույն տեղում, էջ 91:

Վորված է եղել Քիառի՝ ցեղասպանության գործընթացին ոչ լիարժեք իրազեկությամբ, ինչի հետևանքով նա դեռևս անկարող է եղել ըմբռնել դրա եռությունը և այն դիտել իրու պետական քաղաքականության մակադրակով կյանքի կոչված իրադարձություն։ Նման մեկնարանությունը, սակայն, թվում է անհավանական։

Մտորելով Վերոնշյալ հարցում Քիառի գրաված դիրքորոշման շուրջ, հարկ է չանտեսել մի շարք էական հանգամանքներ։ Նախ չի բացառվում, որ սկիզբ առած կոստորածները կանխարգելելու ցանկությամբ նա գործադրել է օսմանյան իշխանություններին սրափեցնելու ժիգեր և, հավանաբար, փորձել սուլթանին սիրաշահելու միջոցով խոչընդոտել դրանց հետագա ծավալմանը։ Բացի դրանից, պատահական չէ, անշուշտ, որ Կոստանդնուպոլսում բնակվող օտարերկրացին կոստորածներին նվիրված իր առաջին հոդվածները լույս է ընծայել կեղծանվամբ⁷⁸⁷։ Դակառակ դեպքում, նա կարող էր, ըստ Շոպանյանի վկայությամ՝ հարվածի տակ դնել ոչ միայն իրեն, այլև այն հաստատությունները, ուր աշխատում էր⁷⁸⁸։

Դարկ է չանտեսել նաև այն իրողությունը, որ ֆրանսիացի մտավորականը կոստանդնուպոլսում գտնվել է թուրքական ոստիկանության աշալուրց հսկողության ներքո, հանգամանք, որն, անկասկած, իր կնիքը է դրոշմել նրա չափավոր մեկնարանությունների վրա⁷⁸⁹։

1896 թ. Փարիզ Վերադառնալուց հետո, Քիառի հայանապատճ գործունեությունը թեակոյսում է նոր փուլ։ XIX դարի Վերջին և XX դարի սկզբին նա գրում է հայկական կոստորածներին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ, պարբերաբար հանդես գալիս ֆրանսիական մամուլում, մասնակցում Դայկական հարցին նվիրված միջազգային հավաքների աշխատանքներին, 1897-1902 թթ.

⁷⁸⁷ Այս ժամանակաշրջանում Քիառի՝ համիլյան կոստորածներին նվիրված հաջորդ հոդվածը ևս լույս է տեսել, ինչպես վերը նշեցինք, կեղծանվամբ (M. L. Rogre, *Les massacres d'Arménie. Quelques documents et remarques en l'honneur de sultan Abdul-Hamid, de la civilisation européenne et de l'alliance franco-russe* // « Mercure de France », septembre 1896, p. 385-403)։ Այդ մասին ներքո Ե. Khayadjian, Աշվ. աշխ., էջ 61; A. Vahramian, *De l'affaire Dreyfus au mouvement arménophile : Pierre Quillard et Pro Armenia* // « Revue d'histoire de la Shoah ». Le monde juif, N 177-178, janvier-août 2003. Ailleurs, hier, autrement : connaissance et reconnaissance du génocide des Arméniens, p. 341։

⁷⁸⁸ À la mémoire de Pierre Quillard, p. 35.

⁷⁸⁹ Նշենք, ի դեպ, որ օգտագործած կեղծանունն, այդուհանդերձ, չի փարատել Քիառի՝ իրու հոդվածադրի հանդեպ թուրքական ոստիկանության տածած կասկածները, ինչը և հանգեցրել է նրա կարճատև ծերբակալությանը։ Քիառն ազատ է արձակվել ֆրանսիական դեսպանության միջամտությունից հետո միայն։ Տե՛ս նույն տեղում, էջ 36։

անդամակցում Չոպանյանի նախաձեռնությամբ Փարիզում հիմնադրված «Ֆրանս-հայկական կոնյտեին», որի կազմում ընդգրկված էին նաև հայ ժողովրդի շատ այլ բոցաշունչ պաշտպաններ, ինչպիսիք էին Ա. Վանդալը, Ե. Լավիսը, Վ. Բերարը, Դ. Կոշենը, հայր Շարմետանը և այլք⁷⁹⁰: Կասկածից վեր է, որ Քիառի հայանպատ գործունեության ամենավառ դրվագներն անքակտելիորեն կապված են «Պրո Արմենիա» երկշարաբերի հրատարակության հետ: Այս լրագիրն, ի դեպ, ինչպես նշել է Մ. Վարանդյանը՝ «պիտի հանդիսանար ոչ միայն իբրև տեղեկատու աղբիւր և հայկական դատի արծարծող, — նա պիտի դառնար կենդանի օճախ մը, որու շուրջը հետզիետ պիտի համախմբիւն Ֆրանսայի ու բոլոր երկիրներու հայատերները՝ ընդհանուր ճիգերով յառաջ տանելու Հայաստանի ազատագրութեան դատը»⁷⁹¹: Այս ասպարեզում Քիառը, հիրավի, իրեն դրսկորել է իբրև անգերազանցելի մարտիկ: Ստանձնելով պարբերականի խմբագրի պարտականությունները՝ նա լրագրի գործե յուրաքանչյուր համարում հանդես է եկել ծավալուն հոդվածներով և ամենայն մանրամասնություններով լուսաբանել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների ընթացքը, մեկնաբանել մեծ տերությունների քաղաքականության ելեւցները⁷⁹²: Գործունեության այս շրջանում նրա առաջարաններով հրատարակվել են նաև Հայկական հարցին և դրան հարակից հարցերին նվիրված նի քանի գրքեր⁷⁹³:

Փարիզում հաստատվելուն հաջորդած տարիներին հայկական կոտորածների ծավալումը և դրանց առնչվող ստույգ տեղեկությունների հոսքը, ինչպես նաև ծանոթությունն արդեն հրապարակի վրա

⁷⁹⁰ Ե. Khayadjian. Աշվ. աշխ., էջ 75:

⁷⁹¹ Մ. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 204: Դ. Տասնապետյանը «Պրո Արմենիա» բնորոշել է իբրև «միջազգային օտարալեզու քանդակ հայ ժողովրդի դատին»: Դ. Տասնապետյան, Դ.Յ. Դաշնապուրինը իր կազմութենաւ մինչեւ Ծ. լընդի. ժողով (1890-1924), Արենք, 1988, էջ 57:

⁷⁹² Լրագրի հիմնադրման մանրամասների, այդ ասպարեզում Քիառի ներդրած լումայի, ինչպես նաև նրա՝ իբրև գլխավոր խմբագրի գործունեության մասին տե՛ս Ա. Vahramian, նշվ. աշխ., էջ 343-347: Ի դեպ, Ա. Վահրամյանը Քիառին իրավամբ անվանում է «լրագրի ողին»: Նոյն տեղում, էջ 345:

⁷⁹³ L'assassinat du Père Salvatore par les soldats turcs. Témoignage d'Aghassi, un des quatre chefs de l'insurrection de Zeitoun. Avec préface de Pierre Quillard, Paris, 1897 ; G. Dorys, Abdul-Hamid intime. Préface de Pierre Quillard, Paris, 1903 ; Pour l'Arménie et la Macédoine. Préface de Victor Bérard. Introduction de Pierre Quillard, Paris, 1904 ; Aknouni, Les plaies du Caucase. Avec préface de Francis de Pressensé et introduction de Pierre Quillard, Genève, 1905.

գտնվող՝ «Ղեղին զրքին», մեծապես նպաստել են իրադարձությունների շուրջ Քիառի պատկերացումների ընդլայնմանը: Նրա հայացքների ակնհայտ բարեշրջության դրոշմն են կրուն նրա բազմապիսի ելույթները, որոնց բնորոշ են Դայոց ցեղասպանության՝ իբրև պետական քաղաքականության մակարդակով իրականացվող իրադարձության մեկնաբանումը, այդ գործնքացի առանձնահատկությունների բացահայտումն ու մանրազնին քննությունը, Աբդուլ Շամիդի և նրա հանցախմբի դիմագերծումն ու դատափետումը, Եվրոպական պետությունների, մասնավորապես Ֆրանսիայի, անկարեկից դիրքորշնան անողոք քննադատությունը:

Քիառի ելույթների թիրախում հառնում է Աբդուլ Շամիդ II-ի հայտյաց կերպարը, որին նա պարբերաբար հիմնավորապես մերկացնում է իբրև հայկական կոտորածների կազմակերպչի, անվանում «մեծ մարդասպան», «կայսերական ավագակ», «կարմիր գագան», «մարդկային կերպարանք ունեցող հրեշչակոր գագան», «նորին արյունոտ մեծություն»⁷⁹⁴ և այլն: «Սուլթանը, – գրում է նա, – կրում է անձնական պատասխանատվություն: Աբդուլ Շամիդը և ստորադաս հանցագործները, որոնք նրա հպատակները լինելով իշխում են նրա վրա, հայերի տառապանքների իրական հեղինակներն են... Նրա ցանկությամբ են սպանում. Նրա բանագնացները կտրում-անցնում են նահանգները, իսկ կոտորածների ազդանշանը տրվում է նրա փոքրիկ սպիտակ ձեռքով»⁷⁹⁵.

Ինչպես տեսնում ենք, դրանից մի քանի տարի առաջ՝ հայկական կոտորածներին Աբդուլ Շամիդի ունեցած մասնակցության հարցում, անկախ այն բանից, թե ինչ պատճառներով, դեռևս թերահավատություն դրսւորող Քիառն այժմ արդեն հանդես է գալիս նրան անարգանքի սյունին անողոքաբար գամողի դերում: Նրա համոզմանք՝ բարենորոգումների փոխարեն, Աբդուլ Շամիդը նախապատրաստել է և 1893-1896 թթ. իրականացրել «սարսափազդու կոտորածներ, որոնք ամենանշանավոր տիրակալների զահակալության պատմության ընթացքում երբեւ չեն արձանագրվել»⁷⁹⁶.

⁷⁹⁴ P. Quillard, Préface.– G. Dorys, Abdul-Hamid intime, p. VII, X ; Առյօն՝ La Quinzaine // « Pro Armenia », 10 décembre 1900 ; Առյօն՝ La Quinzaine // « Pro Armenia », 25 septembre 1901 ; Առյօն՝ La Quinzaine // « Pro Armenia », 15 juillet 1904.

⁷⁹⁵ P. Quillard, Pro Armenia // « Pro Armenia », 25 novembre 1900.

⁷⁹⁶ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, Cahiers de la quinzaine (3^e série, 19^e année) Paris, 1902, p. 6. Նշենք, ի դեպ, որ այս գործի հանձնարարականը Քիառը ստացել է «Cahiers de la quinzaine» մատենաշարի հրատարակիչ Շաոլ Պեղիկց: Այդ մասին տես' G. Leroy, L'Arménie dans l'œuvre et la pensée de Charles Péguy // « Revue

Ի դեպ, Քիառն ամբողջությամբ բացահայտում է XIX դարում Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների հանդեպ՝ օսմանյան գահակալների վարած ցեղասպանությունը քննարկում շատ այլ, այդ թվում մահմեղական, ժողովուրդների բնաջնջման ընդհանուր ետնախորքի վրա, որը վկայում է հարցի նկատմամբ նրա դրսերած ընդգրկում մոտեցման մասին: «Դայտնի է, գրում է նա 1906 թ., թե վերջին դարի ընթացքում ինչ է իրենից ներկայացրել բռնությունների այս վարչակարգը: Այն պարբերաբար ողողվել է արյան ծովերով, սակայն կոտորածները թիւ-անց՝ պարբերաբար հանգեցրել են կայսրության տարածքի նվազեցմանը»: Քիառն մատնանշում է 1822-1904 թթ. Օսմանյան կայսրության տարածքում տեղի ունեցած զանգվածային կոտորածները, որոնց գոհը դարձել են հույները, քաղդեացիները, մարոնիտները, բուլղարացիները, եղիները, հայերը⁷⁹⁷: Խոսքը կենտրոնացնելով Արդուլ Յամիդ II-ի քաղաքականության վրա, նա վերջինիս բնութագրում է իրեն զանազան ժողովուրդների, այդ թվում բուլղարի դահճի, սակայն, միաժամանակ հավաստում, որ սուլթանն «իր արյունակի գործը պատճեն է սառնասրտորեն մտահղացված և հետևողականորեն իրականացված երեք հարյուր հազար հայի բնաջնջմամբ»⁷⁹⁸:

1895 թ. հայերի կազմակերպած՝ Բաքը Ալիի բարենորդումների իրականացման խնդրանք հետապնդող «խաղաղ ցույցի» ճնշմանը հետևում է «մեծ կոտորածների ժամանակաշրջան»: Որի ընթացքում երեք հարյուր հազար մարդ ոչնչացվում է զագրելի միջոցներով, ինչպիսիք են մասնատումը, քառատումը⁷⁹⁹: Այս ջարդերի պատասխանատվությունը Քիառն բարդում է Պալեի վրա, որի իշխանությունը բնորոշում է իրեն «կանայական և անհամուրժելի»: Ինչպես նա նշում է, համընդհանուր անապահովության մթնոլորտում խարխափող Օսմանյան կայսրությունում գոյություն ունի «գաղտնի, հա-

d'*histoire de la Shoah* ». Le monde juif, N 177-178, p. 359-361: Այս գրքի մասին մանրամասն հաղորդագրությունն է տպագրել «Դրոշակը» (1902, թիվ 8, էջ 125-126):

⁷⁹⁷ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 15 mars 1906.

⁷⁹⁸ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 25 décembre 1900.

⁷⁹⁹ P. Quillard, Diplomatie secrète du sultan (novembre 1897-octobre 1898) // « Revue de Paris », livraison du 15 juin 1899, p. 883. Այս հոդվածի հայերեն թարգմանությունը («Ենր կեանք», Բ տարի, 1899, թիվ 12, էջ 186-191) մանրագնին քննության է ենթարկել Ս. Քոչար. տե՛ս Մ. Կոչար, Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос в конце XIX — начале XX веков, Ереван, 1988, с. 53-63:

մահավաք և պատասխանատվությունից գուրկ իշխանություն, որի չարագուշակ դերը պարբերաբար ի հայտ է եկել մեր միջամտության անհրաժեշտությունն առաջադրող իրադարձությունների ընթացքում»: Տվյալ պարագայում նա նկատի ունի «Պալեին, որն ըստ նրա՝ «անյայացրել է Երկիրը և իր բռնություններով ու բռնատիրությամբ ամենուր ապստամբությունների պատճառ դարձել»⁸⁰⁰: Ընդհանուր առնամբ, հայկական կոտորածները նա դիտում է իրք «համատեղ ջանքերով և վաղուց ի վեր նախապատրաստված» ծրագրի հիման վրա իրականացվող եղելություն⁸⁰¹:

Չբավարարվելով սոսկ Աբդուլ Ջամիդի մտահղացմամբ իրականացված՝ հայկական զանգվածային կոտորածների փաստի արձանագրումը, Քիառը վերլուծում է հայերի հանդեպ նրա վարած Երկդիմի քաղաքականությունը, որն իրականացվել է տարբեր գործելամիջոցներով: Անվանելով նրան «Աստծո ստվերը Երկրի վրա», որն անձանբ է զբաղվում այն ամենով, ինչ տեղի է ունենում Օսմանյան կայսրությունում, Քիառն այս հարցում դրսնորում է համակողմանի մոտեցում և հավաստիացնում, որ հավանաբար, վատահություն չտածելով կառավարման իր իսկ կիրառած միջոցների գերազանցության հանդեպ, սուլթանը վճռել է փոխել մարտավարությունը և Երկուղներից ծերբազատվել «մեր դիվանագիտության, մեր ուժի միջոցով»⁸⁰²:

Քիառը վեր է հանում հայկական կուսակցությունների գործունեությամբ քաջատեղյակ Աբդուլ Ջամիդի նենգ վարքագծի եռթյունը, որը չի խորշել Փարիզում հայ քաղաքական գործիչների հետ հարաբերություններ հաստատել⁸⁰³ և Վիլիելմ II-ի Արևելք ուղարկվելու նախօրյակին⁸⁰⁴, հնարավոր, սակայն, տիած միջադեպերից

⁸⁰⁰ P. Quillard & L. Margery, նշվ. աշխ., էջ 27-28:

⁸⁰¹ P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie // « Revue des revues », livraison du 15 octobre 1901, p. 115.

⁸⁰² P. Quillard, Diplomatie secrète du sultan, p. 884.

⁸⁰³ Մ. Քոչարը հիմնավորապես ապացուցում է, որ սուլթանի հանձնարությամբ Նրանսիայում Օսմանյան կայսրության իսւաման Սուլնիր թեյր կարող էր բանակցել միայն Լոնդոնից Փարիզ ժամանած վերակազմյալ հնչակյան կուսակցության ներկայացուցիչների հետ: Տե՛ս Մ. Կովար, նշվ. աշխ., էջ 62-63: «Պատահական չեն, ի դեպ, որ նրա «Սուլթանի գաղտնի դիվանագիտությունը» հողվածը գրեթե ամբողջությամբ քարզմանարար լույս է ընծայել, ինչպես նկատեցինք, այդ կուսակցության օրգան՝ «Նոր կյանք» ամսագրում:

⁸⁰⁴ 1898 թ. Վիլիելմ II-ի՝ Օսմանյան կայսրություն կատարած այցի մասին մանրամասն տե՛ս A. C. Ерусалимский, նշվ. աշխ., էջ 492-494; J.-P. Garnier, նշվ. աշխ., էջ 71-73:

խուսափելու մտադրությամբ՝ 1897 թ. հոկտեմբերին սկսել է բանակցել նրանց հետ⁸⁰⁵: Նա հանգանանորեն վերլուծում է հայերին ներում շնորհող և բազմապիսի սին խոստումներ շռայլող՝ 1898 թ. ապրիլի 15-ին Արդուլ Դամիդի հրապարակած հրովարտակը և ընդգծում, որ սուլթանը չի իրականացրել իր խոստումներից ոչ մեկը⁸⁰⁶: Այս պայմաններում, Քիառը միանգանայն օրինաչափ է հանրում հեղափոխական գործունեությունը շարունակելու ուղղությամբ հայկական կուսակցությունների հաստատականությունը, քանզի Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում տիրող իրավիճակը նրանց ամեննեին չէր տրամադրում որդեգրելու «պասիվ դիրքորոշում»:

Դամիդյան կոտորածների պատմությունը վերլուծած ֆրանսիացի ժամանակակիցների մեծամասնությունը խոսքը կենտրոնացրել է զերազանցապես 1894-1896 և 1904 թվականներին տեղի ունեցած իրադրությունների վրա: Ի տարրերություն նրանց՝ Քիառը բազմիցս հավաստել է Դայոց ցեղասպանության գործընթացի շարունակական բնույթը, պարբերաբար անդրադարձել 1899-1901 թթ. Սասունում տեղի ունեցած կոտորածներին և, որոնց նվիրված նրա ուսումնասիրություններն առանձնանում են ոչ միայն արժանահավատությամբ, այլև սպառչչ մեկնաբանություններով⁸⁰⁷: XIX-XX դդ. սահմանագծին «գաղտնի հետապնդումների» կարծատև ժամանակահատվածին հաջորդած՝ Մուշում և Սասունում վերսկսված քոնությունները նա անկանխատեսելի չի համարում: Մանրամասն նկարագրելով 1899-1901 թթ. Սասունի զանազան գյուղերում ծավալված իրադրությունները (քողերի և կանոնավոր զորքերի կողմից գյուղերի կողոպուտ, ավերում, հրկիզում, բնակչության կոտորած և այլն), Քիառը Մուշի և Բիթլիսի շրջակայթում տեղի ունեցած ջարդե-

⁸⁰⁵ Նշենք նաև, որ դեռևս 1896 թ. հոկտեմբերին Արդուլ Դամիդն իր ներկայացուցիչների միջոցով սկսել էր Ժնևում բանակցություններ վարել նաև ՀՅԴ ներկայացուցիչների հետ, որոնք ընթացել են մինչև 1899 թ. մարտը: Այդ մասին տե՛ս Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 196-199, Մ. Կուար, նշվ. աշխ., էջ 41-52: Ըստ Մ. Վարանդյանի դիպոլկ բնորոշման՝ վերջիններին հետ սուլթանը բանակցում էր սոսկ «Երոպայի աշքին թող փշելու նպատակով»: Բանակցությունների գործընթացը նա անվանում է «նենգամիտ խաղ», որով, ըստ նրա՝ «էին աղւած կուգէր մէկ քարով երկու թռչուն որսալ. իեղափոխական բռնկումներու սպասնալիքը հեռացնել և մէկ ալ թերանց գոցել արեւմտեան ազգերուն, որոնք կը շարունակէին ուժորմներու գործադրությունը պահանջել»: Տե՛ս Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 197, 199:

⁸⁰⁶ P. Quillard, Diplomatie secrète du sultan, p. 886.

⁸⁰⁷ Տե՛ս օրինակ Պ. Quillard, Les nouveaux massacres d'Arménie ; Թույնի՝ Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 44-50:

որ պատասխանատվությունն աներկրայորեն բարդում է օսմանյան կառավարության վրա, որը երկու տարրուց ի վեր որոշել էր «հաշիվ-ները մաքրել սասունցիների հետ»⁸⁰⁸:

Նշենք, որ 1901 թ. Մուշի հարթավայրում տեղի ունեցած կոտորածները նա պայմանավորում է XIX դարի սկզբից ի վեր հայ բնակչության թվաքանակի աճով⁸⁰⁹: Ի վերջո, օսմանյան կառավարության գործադրած ջանքերի շնորհիվ, ինչպես կավիճով արձանագրում է Քիառը, Մուշի հարթավայրում 1901 թ. հուլիսի 23-ից ի վեր, «տիրում է կատարյալ լռություն՝ մահվան լռությունը»⁸¹⁰:

Յիրավի, համիդյան ժամանակշրջանում Հայոց ցեղասպանության գործընթացին բնորոշ են եղել թե՝ փուլային, անհամաշափ զարգացումը և թե՝ բնակչության ոչնչացման զանազան եղանակների կիրառումը, որը չի Վրիպել Քիառի խորաթափանց հայացքից⁸¹¹: Սուլթանը, ինչպես կատարելապես բացահայտում է Քիառը, զանգվածային կոտորածների միջանկյալ ժամանակահատվածներում դիմել է արևմտահայության ոչնչացման տարատեսակ գործելամիջոցների, ինչպիսիք են անհատական սպանությունները, արիեստականորեն կազմակերպված սովոր, առանց իշխանությունների թույլ-տվության՝ մարդկանց բնակավայրից բնակավայր տեղափոխվելու արգելքը⁸¹², բանտերում կիրառվող խոշտանգումները, բռնի կրոնափոխությունը և այլն: Ի վերջո, Աբրուց Համիդի քաղաքականության իրական նպատակը, անկախ դրա կենսագործման եղանակների զանազանությանը՝ ըստ Քիառի իրատեսական նեկնարբանության, հանգում էր հայ ժողովորդի «համատարած բնաջնջմանը»⁸¹³:

Հայոց ցեղասպանությունը պայմանավորելով պետական քաղաքականությամբ, Քիառը կտրականապես մերժում է այն իրեն կրոնական հենք ունեցող իրադարձություն մեկնաբանող տեսակե-

⁸⁰⁸ P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie, p. 120.

⁸⁰⁹ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 63.

⁸¹⁰ P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie, p. 124.

⁸¹¹ Տե՛ս օրինակ P. Quillard, Diplomatie secrète du sultan p. 898 ; Առևանդի՛ Պրո Armenia // « Pro Armenia », 25 novembre 1900 ; Առևանդի՛ Պրո l'Arménie. Mémoire et dossier, p. 10-36 ; Pour l'Arménie et la Macédoine, p. 251-255:

⁸¹² Այդ մասին մանրամասն տե՛ս Ա. Ս. Չամբարյան, նշվ. աշխ., էջ 48: Նշենք, որ բնակչության ոչնչացման նպատակ հետապնդող նման գործելամիջոցները՝ ժամանակակից ցեղասպանագետները բնուրագրում են իրեն երնսուայդ (etnocide): Տե՛ս 1. W. Charny, Proposition de cadre de définition pour les crimes de génocide.- Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides, p. 38:

⁸¹³ Տե՛ս 1903 թ. հոկտեմբերի 25-ին Փարիզի Սառա-Բեռնար բատրոնում գումարված նիստում նրա ելույթը. Pour l'Arménie et la Macédoine, p. 256:

տղ: Լուի Սարժերիի հետ մեկտեղ նա վճռականորեն հանդես է գալիս այս անընդունելի մոտեցման կողմնակից Դանուտոյի դեմ⁸¹⁴ և խիստ քննադատության ենթարկում նրա թքամետ դիրքորոշումը: Վկայակոչելով 1896 թ. Բանկ օտոմանի գրավման միջադեպին հաջորդած՝ Կոստանդնուպոլսում տեղի ունեցած կոտրածների ընթացքում մայրաքաղաքում մահմեդական բնակչության՝ հայերին ապաստանելու փաստերը, Քիառն ապացուցում է, որ քրիստոնյաների ու մահմեդականների միջև առկա հակամարտությունը և կրոնական զանազանության հոդի վրա բուրքերի դրսերած մոլեռանդության հանգամանքն արևմտահայության բնաջնջման գործընթացում վճռորոշ դեր չեն ունեցել⁸¹⁵:

Բանավիճելով Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունների պատկերը խեղաթյուրող հեղինակների հետ՝ Քիառը հիմնավորապես հերքում է սկզբունքային նշանակություն ունեցող մի շարք հարցերում նրանց առաջադրած ոչ ստույգ տեսակետները կապված, մասնավորապես Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի թվաքանակի նվազեցման հետ:

Քիառն ընդգում է Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերի թվաքանակի նվազեցմանը միտված՝ իր որոշ ժամանակակիցների գործադրած ծիգերի առնչությամբ: Դիմնվելով Բեյլինի վեհաժողովին՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի ներկայացրած Վիճակագրական տվյալների վրա, կայսրության տարածքում բնակվող հայերի թիվը նա սահմանում է շուրջ երեք միլիոնի շրջանակներում: «Ճպում է, թե Ներսես պատրիարքի վիճակագրությունը, – գրում է նա, – շատ ավելի մոտ է իրականությանը, քան եվրոպացի դիվանագետների վիճակագրությունը, որոնք, կարելի է հավաստել, որ թույլ են տալիս երկու սխալ: 1. Դայ բնակչության ընդհանուր թվաքանակը շատ ավելի մեծ է, քան այն, որը նրանք հավաստում են: 2. Ասիական Թուրքիայի որոշ տարածաշրջաններում այդ բնակչությունը կազմում է բացարձակ մեծամասնություն»⁸¹⁶:

Քիառն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հայկական կուսակցությունների գործունեությունն իրեն անգլիական և ռուսական «քանսարկությունների» հետևանք մեկնաբանող թյուր տեսակետի վրա և այն ևս վիճարկում: Իր իրազեկության սահմաններում

⁸¹⁴ Այդ մասին տե՛ս սույն գրքի երկրորդ գլուխ երրորդ ենթագլխում:

⁸¹⁵ P. Quillard & L. Margery, Եշվ. աշխ., էջ 17-18:

⁸¹⁶ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 59-60.

նա խոսքը կենտրոնացնում է, մասնավորապես, 1893 թ. Սարգա-
նում տեղի ունեցած իրադարձությունների վրա, որոնց ընթացքում
հնչակյանների նախաձեռնությամբ՝ մահմեդականներին՝ սուլթանին
գահընկեց անելու կոչող պաստառների տարածմանը հաջորդել էին
հայերի նկատմամբ գործադրված քռնությունները, իսկ ամերիկացի
միսիոներների կառուցած օդիորդաց քոլեզը կիսով չափ իրկիզմել
էր: Սանրամասն քննարկելով օտարերկրյա միսիոներների վարքա-
գիծն այս անցքերի ընթացքում՝ նա եզրակացնում է, որ նրանց և հայ
հեղափոխականների միջև որևէ հանաձայնություն երբեւ չի կայաց-
վել: Ընդհակառակը, նա ընդգծում է, որ Արևմտյան Հայաստանում
գտնվող միսիոներներն Անգլիայում և ԱՄՆ-ում իրապարակայնորեն
հայտնում էին իրենց անհամաձայնությունը հայերի ծավալած հեղա-
փոխական գործունեության կապակցությամբ⁸¹⁷:

Հայկական հեղափոխական շարժման հանդեպ՝ ինքնակալա-
կան Ռուսաստանի մոտեցման հարցում ևս Քիառօք գրավում է խիստ
սկզբունքային դիրքորոշում, մանրամասն անդրադառնում Սարգիս
Կուկունյանի խմբի գործունեությանը և դատավարությանը⁸¹⁸, մեր-
կացնում ռուսական ինքնակալության հայահալած քաղաքականու-
թյունը: Հայ ժողովրդի բնաջնջման առնչությամբ նա զայրույթով ար-
ձանագրում է, որ ռուսական ինքնակալությունը դաժանորեն հալա-
ծել է բոլոր նրանց, ովքեր անկախ այն բանից, թե ինչ ծնուզ՝ խոսքով
կամ գրչով, փորձել են հիշատակել այդ ողբերգության մասին: «Եթե
որևէ մեկը սպանվածների նկատմամբ հանակրանք էր ցուցաբե-
րում, — նշում է նա, — նրան բաժին էին հասնում խուզարկությունները,
բանտարկությունները, արտաքսումը»⁸¹⁹:

Քանի որ Հայոց ցեղասպանության հարցում ինքնակալության
որդեգրած նման պարսավելի քաղաքականությունը համահունչ էր
մեծ տերություններից շատերի, այդ բվում, հատկապես Ֆրանսիայի
դիրքորոշմանը⁸²⁰, միանգամայն օրինաչափ է, որ հայ ժողովրդի

⁸¹⁷ Նույն տեղում, էջ 70:

⁸¹⁸ Նույն տեղում, էջ 71-73:

⁸¹⁹ Նույն տեղում, էջ 73:

⁸²⁰ XIX դարի 90-ական թվականներին Հայկական հարցում Ռուսաստանի և
Ֆրանսիայի գրաված համահունչ դիրքորոշման խնդիրը մանրամասն վերլուծել է
խորհրդային նշանավոր պատմաբան ակադեմիկոս Վ. Խվոստովը, որն այդ տա-
րիներին ինքնակալության և սուլթանի միջև հաստատված բարեկամությունը համա-
րել է Օսմանյան կայսրությունում «բոլոր ազատագրական շարժումներին» խոչընդո-
տող հանգամանք: Ste'v B. Хвостов, Близкое-восточная кризис 1895-97 гг.—
“Историк-марксист”, 1929, թ. 13, ս. 22: Քննարկվող ժամանակաշրջանում ինքնա-

անմնացորդ նվիրյալի գործունեության ասպարեզում մեծ տեղ է գրավել Եվրոպական տերությունների քաղաքականության խարազանումը: Քիառը բազմից անարգանքի է Ենթարկում արևմտահայության ճակատագրի հանդեպ Եվրոպական պետությունների անկարեկից վերաբերմունքը. «1895-1896 թթ. կոտորածներն, այսպիսով, նախապատրաստվել են երբեմն վեց ամիս առաջ: Դյուպատուններն ու դեսպանները գուր են տեղեկացրել իրենց նախարարներին, որոնք պարբերաբար մնացել են կույր ու համր»,— ցավով նշում է

կալության քաղաքանության ընդգծված հակահայկական բնույթն ավելի մանրամասնորեն վերլուծել է ակադեմիկոս Ֆ. Ուտչտենյը, մասնավորապես փաստելով, որ Ռուսաստանը սուլթանից չեր բաքնում իր բացասական դիրքորոշումը Դայկական հարցում նրա նկատմամբ հարկադրական միջոցների կիրառան խնդրում և նրան հասկացնում էր, որ «կրավարարվի այն միջոցառումներով, որոնք սուլթանն ինքը կկարողանա իրականացնել»: Տե՛ս Փ. Ա. Ռոտտեն, Մеждународные отношения в конце XIX века, М.-Л., 1960, с. 305-307: Դամանման գնահատականի ենք հանդիպում Ե. Կուրդինյանի մոտ. տե՛ս Ե. Ա. Կորցинյան, Европейская дипломатия и армянский вопрос в 90-х годах XIX в.— Ученые записки Московского областного педагогического института им. Н. К. Крупской, т. 191, История СССР, выпуск 9, М., 1969, с. 223-224: Ակադեմիկոս Ե. Տարեն և փաստել է ինքնակալական Ռուսաստանի քաղաքականության հակահայկական բնույթը XIX դարի վերջին. տե՛ս «Թուրքիան և Եգիպտոսը 1870-1900 թթ.» հոդվածին կից նրա ծանոթագրությունը՝ «XIX դարի պատմությունը» բազմահատորյակում (История XIX века. Под редакцией Лависса и Рамбо, т. 8, М., 1939, с. 6):

Դայկական հարցում Ռուսաստանի և Ֆրանսիայի հետաքրքրությունների համընկնան հարցում խորհրդային պատմամաններից մանրամասն անդրամասն գումարած է նաև Ն. Կինյապինան: Դանգամանորեն հիմնավորելով դայկականությունը կամ այլ առաջնային դաշտում էր սոսկ սուլթանի Վարչ հայերի համար բարենորոգումների իրականացնան պահանջ հետապնդող «դիվանագիտական ճնշման», նաև, սակայն, ինքնակալության արևելյան քաղաքականության ընդհանուր գնահատականի հարցում առաջարի է, մեր կարծիքով, վիճահարուց մի թեզ, այս է՝ 1890-ական թվականներին Ռուսաստանը, հավատարիմ իր ավանդական քաղաքականությանը, ստանձնել էր քիչատունաների հովանավորի դիր: Տե՛ս Հ. Ս. Կոնյապինա, Восточный вопрос во внешней политике России второй половины XIX в.— Восточный вопрос во внешней политике России. Конец XVIII — начало XX в. Отв. ред. Հ. Ս. Կոնյապինա, М., 1978, с. 262-263: Նշենք նաև, որ Ֆրանսիայի քաղաքականությունը Դայկական հարցում Ա. Վարանդյանն իրավամբ ամրողությամբ պայմանագորի է Ռուսաստանին սիրաշահելու՝ Ֆրանսիական դեկապար շրջանակների մտադրությամբ: «1871ին պարտած և յօշուտած Ֆրանսան դեռ կը դոդար գերման թշնամու հանդեպ և Ռուսաստանը անոր կը թէր միակ փրկութեան խարիսխը... Ռուսան այ խոր կարեկցութիւն ու համակրանք ուներ Ֆրանսան հայ տառապող ժողովրդի հանդէա, իր սեփական շահը այնուամենանիւ վեր դասեց ամեն ուրիշ մտահոգութեն և չկամեցաւ «հայոց խարեր» հարιած մը տալ Ֆրանս-Ռուսական դաշնակցութեան»: Տե՛ս Ս. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 316:

նա⁸²¹: Ֆրանսիացի մտավորականը տալիս է տերությունների դեկավար շրջանակների դիրքորոշման անողոք, դիպուկ և մերկացուցիչ գնահատականը, որոնք հայերին հաջորդաբար դավաճանել են. «Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, հանրապետությունները, միապետությունները, գահակալները նրանց նատնում են իրենց թշվառ ճակատագրին կամ ակտիվորեն դառնում Աբդուլ Համիդի հանցակիցները»⁸²².

Եվրոպական պետությունների քաղաքականությունը կերտող պետական գործիչներին քննադատելուց բացի, որոնց հետաքրքրություններին համապատասխանում է, որ «տասնչորս տարեկան երեխաների լեզուն կտրեն, աղջիկներին բռնաբարեն, տղանարդկանց սպանեն, գյուղերն ավերեն»⁸²³, հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած անտարբեր վերաբերմունքի համար նա, ի տարբերություն իր ժամանակակիցների, պախարակում է նաև Եվրոպական ժողովուրդներին, որոնք ոչինչ չեն ճենանարկել խոչընդոտելու համար հայ ժողովրդի ոչնչացմանը⁸²⁴: Այս հարցում, սակայն, նա փոքր-ինչ տուրք է տալիս չափազանցությունների, քանզի 1890-ական թվականներին հայանպատ շարժումը Ֆրանսիայից դուրս ծավալվել էր նաև տարբեր երկրներում, այդ թվում Անգլիայում և Ռուսաստանում:

Քիառօ պարբերաբար ընդգծում է Եվրոպական պետությունների մեջսակցությունը հայկական կոտորածների սանձազերծմանը, Եվրոպային անվանում 1894-1896 թթ. «Նարդկության դեմ իրականացված՝ պատմության մեջ աննախադեպ հանցագործության» մեղսակից⁸²⁵: Նրա համոզմամբ՝ ամենազորության և անպատճելիության գաղափարը սուլթանին ներշնչել է մեծ տերությունների թողտվությունը, որը նա բնորոշում է իրեն «ամոթալի»⁸²⁶: Այս արթով նա գրում է. «Թուրքիայում չեն սպանում առանց Եվրոպայի թույլտվության և հանցագության: Եթե միայն մեկ տերություն արգելի սպանել, գազանն ազատություն չի տա իր մագիլներին: Ահա այսպիսին է ծշմարտությունը»⁸²⁷: Եվրոպական պետությունների անգործությունը Քիառօ մեկնարանում է նրանց միջև առկա անհամաձայնությամբ, որը ոչ միայն ճանապարհ է հարթել զանգվածային կո-

⁸²¹ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 25 janvier 1901.

⁸²² P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 10 avril 1901.

⁸²³ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 25 décembre 1901.

⁸²⁴ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 10 avril 1901.

⁸²⁵ P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie, p. 125.

⁸²⁶ P. Quillard, Préface.— Dorys, Abdul-Hamid intime, p. XI.

⁸²⁷ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 10 octobre 1901.

տորածների իրականացման համար, այլև հուսալքել է հայերին⁸²⁸: Ըստ այդմ՝ նա հետագայում հավաստում է, որ սուլթանն իրավասու էր արյամբ հեղեղել և իրկիզել Բալկաններից մինչև Արարատ, Սև ծովից մինչև Պարսից ծոցն ընկած տարածքները, իսկ սոսկ իրենց շահերով առաջնորդվող քաղաքակիրք պետությունները, այդ ամենին ի տես, մնալու էին, այդուհանդերձ, անտարբեր դիտորդի դեռևս⁸²⁹:

Չքավարարվելով այս փաստի արձանագրմամբ՝ Քիառօ խորանում է լինում տերությունների անտարբեր քաղաքականության ակունքներում: Ստացված «վատքարագույն տեղեկությունների» հիման վրա ներկայացնելով Արևմտյան Դայաստանում տիրող իրավիճակը, նա ընդգծում է, որ Եվրոպական հյուպատոսներն ու դեսպանները չեն միջամտում իրադարձությունների ընթացքին, քանզի շատ ավելի մտահոգված են ֆինանսական կոնցեսիաներ և շքանշաններ ստանալու, քան բարենորոգումներ պահանջելու հարցով⁸³⁰: Միևնույն պատճառաբանությամբ նա հետևողականորեն մեղադրում է Եվրոպական պետական գործիչներին, որոնք «իրենց համարում են իրատես և առանց խորշանքի շնչում են թափված արյան հոտը: Նրանք մնում են անտարբեր, երբ սուլթանը սպանում է իր երեք հարյուր հազար հպատակներին, հուսալով, որ փոխարենն իրենց ազգերն ու իրենք կատանան հանքերի և երկաթուղիների կոնցեսիաներ կամ պատվազրկող շքանշաններ»⁸³¹:

Քիառօ հիմնավորապես բացահայտում է հատկապես ֆրանսիական կառավարության թրքամետ քաղաքականության գլխավոր պատճառը. «Կայսրության մասնատումից խուսափելու համար (ընդգծումը մերն է – Վ. Պ.), Ֆրանսիան ամորահար է լինելու՝ զոհերի և դափիճների պայքարում վերջիմներիս աջակցելու պատճառով» (ընդգծումը հեղինակինն է – Վ. Պ.)⁸³²: Նշենք, որ նա ամողոք է, մասնավորապես Դանուտոյի նկատմամբ, որը, նրա համոզմամբ, «իրեն պատվազրկել» է⁸³³ և դարձել «մարդասպանին նվիրված՝ նրա հանգակիցը»⁸³⁴:

⁸²⁸ P. Quillard & L. Margery, Աշվ. աշխ., էջ 11, 16, 19:

⁸²⁹ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 25 décembre 1900.

⁸³⁰ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 10-25 avril 1902.

⁸³¹ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 1^{er} mai 1903.

⁸³² P. Quillard & L. Margery, Աշվ. աշխ., էջ 24:

⁸³³ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 25 janvier 1901.

⁸³⁴ P. Quillard, Préface.– Dorys, Abdul-Hamid intime, p. X.

Երջանցելով Ղայկական հարցի ծագման հանգամանքները, Քիառն արևմտահայության վիճակը բարելավելու նպատակով պահանջում է Բեռլինի Վեհաժողովի ընդունած պայմանագրի 61-րդ հոդվածի կենսագործումը՝ Եվրոպական տերությունների գործուն միջամտությամբ: «Ղայկական նահանգների «բնականոն» վիճակը, գրում է նա, – մնում է սարսափազդու և աշխարհի ոչ մի ժողովուրդ չէր կարող, առանց անհետանալու նույնագույն երկար գոյատևել նման վարչակարգի ենթակայության ներքո: Ուստի մենք չենք դադարելու պահանջել... Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի կենսագործումը: Պահանջելով ոչ թե արտոնություններ, այլ իրավունքներ, որոնք նրանց հատկացվել են իրավաբանական այս հինան վրա՝ հայերը չեն ներկայացնում որևէ չափազանցված կամ անիրազործելի պահանջ»⁸³⁵:

Վկայակոչելով պատմական անցյալը, Քիառը փոքր-իսկ պատրանքներ չի տածում՝ կապված հայկական նահանգներում բարենորոգումների իրականացման հարցում օսմանյան վարչակարգի կարծեցյալ ցանկության հետ, մանակորապես ընդգծելով, որ ավելի քան հիսուն տարուց ի վեր, օսմանյան կառավարությունն ապացուցել է բարենորոգվելու հարցում իր անկարողությունը: Ղաշվի առնելով այն հանգամանքը, որ նախորդ վարչակարգերի համեմատությամբ՝ համիդյան վարչակարգն ավելի է վատթարացրել կացությունն Օսմանյան կայսրությունում, նա անհնար է համարում որևէ բարենորոգման իրականացում առանց Եվրոպական տերությունների միջամտությամբ: «Յոթ տարվա պարերական հարստահարումներից, գաղտնի սպանություններից, մասնակի կոտորածներից հետո, այսօր հայերի կացությունը նույնագույն ճգնաժամային է, որքան 1896 թ., որովհետև Եվրոպան չի ցանկացել պահանջել և վերահսկել այն բարենորոգումները, որոնք պահանջում եր նոտաներով ու հուշագրերով և որոնց մասին մոռանում էին դրանց ներքո ստորագրելուց անմիջապես հետո»⁸³⁶, – գրում է նա 1903 թ.: Ուստի «պարզունակ բանավոր դիտողությունները», որոնցով, անհրաժեշտության դեպում, կարող է հանդես գալ 1898-1906 թթ. Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Տեոֆիլ Դելկասեն (1852-1923), ըստ նրա՝ բավարար չեն կարող լինել⁸³⁷:

⁸³⁵ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 25 novembre 1902.

⁸³⁶ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 15 décembre 1903.

⁸³⁷ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 15 mars 1903.

Նշելով, որ սուլթանի խոստումները գրեթե նույնջան անհամար են, որքան և նրա զոհերը, օսմանյան վարչակարգի նենգ քաղաքականության ելեկցիներին քաջածանոթ Քիառը պնդում է, որ հայերի համար նախատեսված բարենորոգումները հարկ է սուլթանին «պարտադրել, այլ ոչ թե խոնարհաբար ներկայացնել»⁸³⁸ (ընդգծումը մերն է – Վ. Պ.): «Կարմիր գազանին» սանձահարելը և ոչնչացնելը նա համարում է «կայսերական մարդասպանի» գոյությունը հանդուրժող և նրան քաջալերող քրիստոնյա և քաղաքակիրթ ժողովուրդների ներկայացուցիչների և դեկավարների հրատապ պարտականությունը⁸³⁹:

Ստեղծված անելանելի կացությունը շտկելու «միակ հնարավոր» ուղին, նրա համոզմամբ, ոչ միայն հայկական վեց վիլայեթում բարենորոգումների հրականացումն է, այլև Եվրոպական բարձրաստիճան պաշտոնյաների հսկողության ներքո գտնվող վարչակարգի հաստատումը⁸⁴⁰:

Ըստ այդ՝ միանգամայն օրինաչափ է, որ, ի տարբերություն, հայ ժողովրոիդ իր ժամանակակից ֆրանսիացի գրեթե բոլոր պաշտպանների, Քիառը, ինչպես և Կլեմանսոն, հանդես է գալիս իբրև Օսմանյան կայսրության ներքին գործերին Եվրոպական տերությունների գինված միջամտության կողմնակից: «Եվրոպական գինված միջամտությունը, – գրում է նա, – որը հանապատասխանում է պայմանագրերի տառին և ոգուն, ամենաարդյունավետ միջոցներից է՝ հարկադրելու համար մեծ մարդասպանին անձնատուր լինել»⁸⁴¹: Քիառը սոսկ իր տարակուսանքն է հայտնում, որ գինված միջամտության նպատակահարմարության շուրջ կարող է հարուցվել փոքր-իսկ կասկած: Ըստ նրա՝ գինված միջամտությունն առաջադրվել է ոչ թե հայերի քնահաճույքի հիման վրա, այլ Բեռլինում, երբ Եվրոպական տերությունները և Թուրքիանց միմյանց հետ ստորագրել են 61-րդ հոդվածը, հավաստելով բարենորոգումների անհրաժեշտությունը՝ Եվրոպայի վերահսկողությամբ: «Բնագիրը հստակ է և փոքր-իսկ երկիմաստության տեղիք չի տալիս», – նշում է նա⁸⁴²:

⁸³⁸ Pour l'Arménie et la Macédoine, p. 257.

⁸³⁹ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 10 juillet 1901.

⁸⁴⁰ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 97.

⁸⁴¹ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 1^{er} novembre 1901.

⁸⁴² Նույն տեղում: Ինչպես նշեցինք, այս հարցն իրավաբանական հենքի վրա մեկնարանել է և հիմնավորել Սուրբեզին: Այդ մասին տե՛ս սույն գրքի երկրորդ գլուխ երկրորդ ենթագլխում:

Զինված միջամտության անհրաժեշտությունը Քիառը ջանում է հիմնավորել միանգամայն տարբեր կտրվածքներով։ Նախ՝ նա հարցը քննարկում է բարոյական հարթության վրա, շեշտում XX դարի սկզբին տերությունների՝ Դայոց ցեղասպանության գործընթացին իրազեկ լինելու հանգամանքը, որոնք, ոչ հեռավոր անցյալում ընթացքի մեջ գտնվող լայնածավալ կոտորածների մասին հստակ պատկերացումներ դեռևս չունեին։ «Արդյոք Եվրոպան կրողնի, որ Մարդասպանն անպատճելիորեն գործի երկրորդ անգամ։ Թեև քաղաքակիրթ կոչվող կառավարությունների երկչութությունը չափ ու սահման չունի, նրանց համար դժվար կլինի չնիշամտել. չորս տարուց ի վեր լույս է սփռվել իրականացված իրեշավոր դաժանությունների վրա և դժվարությամբ ենք ըմբռնում, որ Աբդուլ Շամիդն ի վիճակի կլինի կրկին կոտորել, դեռևս լրակյացությամբ գործող մեծ տերությունների հանցակցությամբ»⁸⁴³։ Դայ ժողովրդի նկատմամբ նոր բռնությունները կանխարգելելու նպատակով՝ նա իր պարտքն է համարում անխոնջ մերկացնել Աբդուլ Շամիդի իրականացրած հանցանքները, քանզի հարկ չկա, որ «նրա Եվրոպացի հանցակցները՝ ցարերը, կայսրերը, թագավորները, հանրապետության նախարարները կարողանան գանգատվել անհրազեկությունից, ինչպես 1895-1896 թ.»⁸⁴⁴։

Այնուհետև՝ Ելնելով XX դարի սկզբին Եվրոպայում տիրող քաղաքական իրավիճակի առանձնահատկություններից, Քիառն առաջադրում է զինված միջամտության իր տարբերակը. այն է՝ պարտադրելու համար սուլթանին վերջապես կենսագործել Բեռլինի պայմանագրի հոդվածները, օստ նրա՝ ամենակին անհրաժեշտ չի լինի ապահովել Եվրոպական բոլոր մեծ տերությունների համաձայնությունը։ Նա գտնում է, որ հայ ժողովրդին կատարյալ բնաջնջումից փրկելու համար բավական կլինի մեծ տերություններից ընդամենը մի քանիսի միջև դաշինքի կայացումը»⁸⁴⁵։

Դայոց ցեղասպանության գործընթացի կասեցման ասպարեզում Եվրոպական տերությունների միջամտության արդյունավետությունը Քիառը բազմից հիմնավորում է, մասնավորապես վկայակոչելով XX դարի սկզբին Մուշի շրջակայքում ծավալված իրադարձություններին առնչվող հավաստի փաստեր, եթե ֆրանսիացի պատգամա-

⁸⁴³ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 25 mars 1901.

⁸⁴⁴ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 25 juillet 1901. Տե՛ս նաև P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 25 novembre 1902:

⁸⁴⁵ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 98.

Վորոների ջանքերով այնտեղ ուղարկված հյուպատոսական գործակալի սոսկ ներկայությունը բավական է եղել կանխելու հայ ազգաբնակչության՝ նախապատրաստված կոտորածը: «Անեն ինչ պատրաստ էր կոտորածի համար, սակայն համիլյան ծրագիրը ժամանակին հայտնի դարձակ Եվրոպայում: Մասնավորապես Ֆրանսիայում՝ բոլոր կուսակցություններին հարող պատգամավորները հուզվեցին: Նրանք հասան այն բանին, որ նախարարը (արտաքին գործերի – Վ. Պ.) հյուպատոսական գործակալ ուղարկի, որին հայերն ընդունեցին իրեն փրկչի: Այս տարի (1903 թ. – Վ. Պ.) այլևս չսպանեցին»⁸⁴⁶:

1901-1902 թթ. պատգամավորների՝ այս ուղղությամբ ճեռնարկած քայլերը Քիառը համարում է արդյունավետ, քանզի նախազգուշական, շատ պարզունակ այդ միջոցի շնորհիվ հաջողվել է 1903 թ. Սասունում և Սուշում խուսափել սուլթանի նախապատրաստած կոտորածներից: «Կերպին տարում Մուշի հարթակայրի գյուղացիները Ֆրանսիացի պատգամավորին դիտել են իրեն ազատարարի», – գրում է նա⁸⁴⁷: Այդ իսկ պատճառով նա դրվագում է Դեկաստին, որը 1902-1903 թթ. իրեն «փառքով» է պսակել՝ խոչընդոտելով վերջնական կոտորածի իրականացմանը⁸⁴⁸:

Միանգամայն ակնհայտ է, որ Եվրոպական պետությունների գինված միջանտության հետ կապված Քիառի հիմնավորումները խիստ հեռու են իրատեսական լինելուց: Շեշտը դնելով, փաստորեն, գլխավորապես հարցի բարոյական կողմի վրա, նրա խորհրդածությունների շրջանակից, այս պարագայում արդեն, անբողջությամբ դուրս են մնում մեծ տերությունների աշխարհաքաղական շահե-

⁸⁴⁶ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 1st aout 1903.

⁸⁴⁷ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 1st septembre 1903. Տե՛ս նաև P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 25 novembre 1902:

⁸⁴⁸ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 1st aout 1903. Դարկ է նշել, որ Ա. Վարանյանը և բարձր է զնահատել այս ժամանակաշրջանում տարածաշրջանի հայության փրկության ուղղված Ֆրանսիացի դիվանագետների գործողությունները և սկզբնադրյունների հիմնա վրա հավատել, որ «Փրանսիական հիւպատուսը գտներ է իր մարդկային կոչովմի բարձրութեան վրա, որ նա ճշնարիտ հայու մը պէս պաշտպաներ է հայ ժողովուրդը... և որ հիւպատուսներու նշանակումը ուրիշ վտանգած վայերում ու անոնց աշալուրջ հսկողութիւնը միևնույն ժամանակ Պոլսոյ դեսպանի մշտնջենաւոր յորդորներն ու ազդարարութիւնները Բարձր] Դրան՝ ազատեցին մեր ժողովուրդը միև վիլայեթներուն մէջ ևս»: Ա. Վարանյան, նշվ. աշխ., էջ 318: Տե՛ս նաև Կոստանդնուպոլիսի հայոց պատրիարք Սատթես Իզմիրյանի 1896 թ. ապրիլի 23/մայիսի 5-ի թվակիր նամակը Կամքունին, որով նա իր հիացմունքն է հայտնում դեսպանին՝ Դիարբեքիրում Սելիհեի անձնուրաց վարքագիր առիթով. Վ. Պողոսիան, Ֆրանսիացի հայաւոր գործիչները՝ Սատթես Իզմիրլեանի զնահատմամբ. – «Դանդս ամսօրեայ», 2010, թիվ 1-12, էջ 502-503:

որ, որոնք բացառում էին Օսմանյան կայսրության ներքին գործերին զինված միջամտություն ցուցաբերելու հնարավորությունը: Ուշադրությունը կենտրոնացնելով առաջին հերթին տերությունների՝ Օսմանյան կայսրությունում ունեցած ֆինանսական շահերի վրա, նա ամբողջությամբ անտեսում է նրանց կրաՎորական վարչագծի հիմնական պատճառը, քանզի վերջիններս ծեռնպահ էին մնում նման ծայրահեղ միջոցից՝ կայսրության տարածքային ամբողջականությունը հարցականի ներքո դնելու մտավախությունից դրդված, ինչն անհարիր էր նրանց շահերին:

XIX դարի վերջերին Եվլողայում ձևավորվող ռազմաքաղաքական դաշինքների կայացման ետնախորքի վրա հիմնազուկ է նաև Օսմանյան կայսրության ներքին գործերին զինված միջամտություն ցուցաբերելու նպատակով մեծ տերություններից ընդամենը մի քանիսի միջև հնարավոր դաշինքի ձևավորմանն առնչվող Քիառի առաջարկը: Եթե համատեղ ուժերով նման քայլի դիմեին այս կամ այն խմբավորման մեջ ընդգրկված տերությունները, ապա այն անխուսափելիորեն կիանգեցներ հակամարտող կողմերի ռազմական բախմանը: Ինչ վերաբերվում է միևնույն դաշինքում ընդգրկված տերություններին, ապա դրանցից որևէ մեկը, բնականաբար, չէր կարող որդեգրել այնպիսի քաղաքականություն, որն անհամատեղելի լիներ իր դաշնակցի ռազմավարությանը, ինչը և կիանգեցներ ռազմական դաշինքի փլուզմանը: Քիառն, ըստ էության, հակառվում է երրորդ հանրապետության արտաքին գերատեսչության դեկավարի՝ արևելյան քաղաքականության ասպարեզում որդեգրած հիմնական սկզբունքին, որը Դանուտոն անթաքույց հօչակել էր 1896 թ. նոյեմբերի 3-ին Ազգային ժողովում ունեցած ելույթում, այն է՝ կտրականապես բացառել Եվրոպական տերությունների տարանջատ գործողությունների հնարավորությունը⁸⁴⁹, հաշվի չառնելով իրադարձությունների՝ իր ուղղով նախանշած զարգացման անհավանականությունը:

Այս վճռորոշ հանգամանքներն ամբողջությամբ անտեսվել են Քիառի կողմից: Այս հարցի կապակցությամբ նա թերևս չի ունեցել ամբողջական և հստակ պատկերացումներ, ուստի և բավարարվել է սոսկ ֆրանսիացի քաղաքական գործիչների և դիվանագետների միջամտության նախավոր փաստերի հիշատակնամբ, ինչը պարզորոշ վկայում է նրա սահմանափակ մոտեցման մասին:

⁸⁴⁹ Այդ մասին տե՛ս սույն գրքի երկրորդ գլուխ երրորդ ենթագլուխում:

Իրադարձությունների զարգացումը, սակայն, ընդունում է բոլորվիճ այլ ընթացք, որը Քիառն ի Ազգբանն չէր կարող կանխատեսել: 1904 թ. օսմանյան Վաշչակարգը նախապատրաստվում է Սասունում իրականացնել հայկական նոր կոտորածներ: Այդ ամենին քաջատեղյակ Քիառը մեկ անգամ ևս զուր ջանքեր է գործադրում Եվրոպական պետությունների դեկավարներին սրափեցնելու ուղղությամբ: Քանի որ սուլթանի մտահղացած նոր հանցանքը դեռևս չէր իրականացվել, իսկ Եվրոպական երկրների դեկավար շրջանակները չեն կարող գանգատվել անիրազեկությունից, նա առաջարկում է նախօրոք փրկարար միջոցներ ծեռնարկել՝ մինչ նոր կոտորածների իրականացումը պաշտոնանկ անել Զեքի փաշային, ետ կանչել կայսերական գործերը և ցիրուցան անել քուրդ աշիրեթներին: Այլապես, նրա կարծիքով, Եվրոպական կառավարությունները՝ նույնքան, որքան Արդուլ Դամիդը, պատասխանատվություն կկրեն թափված արյան համար⁸⁵⁰: Դաշվի առնելով Եվրոպայում ստեղծված ռազմաքաղաքական նոր իրավիճակը՝ Քիառը մատնանշում է, մասնավորապես ֆրանսիական, անգլիական և ռուսական կառավարություններին, որոնք թեպետ այս անգամ ժամանակին տեղեկացվել են, այնուամենայնիվ, հանուն հայերի փրկության գործնական միջոցներ չեն ծեռնարկել: Ուստի նա ցավով գրում է. «Չգործելով եռանդուն ձևով, Եվրոպական տերություններն ի սկզբանն մասամբ դարձել են ներկա կացության պատասխանատուններ և հանցակիցներ՝ ոչ այնքան անտարբերության, որքան ցանկության բացակայության հետևանքով»⁸⁵¹:

Այդուհանդեռձ, Եվրոպական տերությունների գինված միջամտությունը հապաղում է, որին հետևում են հայկական կոտորածները Սասունում 1904 թ.: Դիասրափված Քիառն այլևս չունենալով հարցի լուծնան այս տարբերակի հետ կապված երաշխիքներ, արդեն արձանագրում է, որ առկա պայմաններում չի կարող լինել որևէ այլ գործնական այլընտրանք, քան հայերի հեղափոխական գործունեությունը⁸⁵²:

Պատահական չէ, որ հայ ժողովրդի ազատագրական շարժումների մանրամասները մշտապես գտնվել են Քիառի ուշադրության կենտրոնում, որոնք նա ենթարկել է մանրազնին Վերլուծության: Ելնելով հարցի կարևորությունից, որի պատմությունը խեղաթյուրում

⁸⁵⁰ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 15 mars 1904.

⁸⁵¹ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 15 mai 1904.

⁸⁵² P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 1^{er} novembre 1905.

Են թուրք պատմաբանները⁸⁵³, ինչպես նաև հաշվի առնելով դրա նկատմամբ հայրենական պատմաբանների ցուցաբերած հետաքրքրությունը⁸⁵⁴, նպատակահարմար ենք գտնում քննարկել նրա մեկնաբանություններն այդ առնչությամբ, որոնք ծեղոք են թերում նետ այժմեականություն:

Ի տարբերություն զանազան քաղաքական կողմնորոշումներ ունեցող ֆրամսիացի բազմաթիվ գործիչների (Կլեմանսո, Ժորես, Կոշեն և այլք)՝ նա իրադարձությունների եվրոպացի եզակի ժամանակակիցներից է, որն անդրադառնում է հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին և փորձում, սկզբնաղբյուրների ընծեռած հնարավորությունների սահմաններում, հավուր պատշաճի արժեվորել հայ Ֆիդայիների ծավալած պայքարի մանրամասները: Նախ նա դիմազերծում է հայերին արիության բացակայության համար անհիմն մեղադողներին, որոնց կարծիքով նրանք թույլատրել են իրեն սպանել առանց դահիճների դեմ դիմադրություն կազմակերպելու: Դայկական կոտորածների հնարավորությունը նա իրավամբ պատճառաբանում է այն բանով, որ թե՛ Կոստանդնուպոլսում և թե՛ նահանգներում անզեն հայերը գտնվել են կանոնավոր զորքերի, ոստիկանների և համիդիների դեմ հանդիման: Այդուհանդերձ, նա բազմիցս փաստում է նրանց ինքնապաշտպանությունը. «Ամենուր, որտեղ հայերը գենք ունեն՝ այնպես, ինչպես հելեն պալիկարներն ու

⁸⁵³ Տե՛ս օրինակ K. Gürsoy, նշվ. աշխ., էջ 127-162; E. Uras, *The Armenians in History and the Armenian Question*, Istanbul, 1988, p. 713-780: Այդ մասին մանրամասն տե՛ս Ս. Գ. Ներսիսյան, Դայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական քառապետության դեմ 1850-1890 թթ., Երևան, 2002, էջ 307-324:

⁸⁵⁴ Ծ. Պ. Աղայան, Դայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից: Առվելի՝ Ամդումների դարաշրջան, նեմքեր, Երևան, 1994; Յ. Ս. Պողոսյան, նշվ. աշխ.; Յ. Ո. Միմոնյան, Անդրամնիկի ժամանակը, գիրք Ա-Բ, Երևան, 1996; Առվելի՝ Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I-IV, Երևան, 2003-2010; Ս. Գ. Ներսիսյան, Դայ ազատագրական շարժումը օսմանյան քոնապետության դեմ և պատմության կեղծարարները.— Ս. Գ. Ներսիսյան, Պատմության կեղծարարները (հոդվածներ և հաղորդումներ), Երևան, 1999, էջ 58-75; Առվելի՝ Դայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական քառապետության դեմ; Ա. Ս. Դամբարյան, նշվ. աշխ.; Կ. Զ. Թառոյան, նշվ. աշխ.; Յ. Բ. Գրիգորյան, Դայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Երևան, 2002; Առվելի՝ Դայոց ազատամարտի գիննան և ֆինանսավորման խնդիրը (1890-1908 թթ.), Երևան, 2004; Է. Կոստանդնոյան, Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Երևան, 2005, էջ 133-157:

արմատուները և սերբ կամ բուլղար հայդուկները, գիտեն՝ թե ինչպես պաշտպանվեն»⁸⁵⁵.

Ազատագրական պայքարի օրինաչափությունը Քիառը հիմնավորում է օսմանյան բռնատիրության պայմաններում օրինականության կատարյալ բացակայությամբ: Նրա համոզմամբ՝ կայսրության տարածքում, ուր գոյություն չունի օրինական ճանապարհով հասարակական կարծիքի դրսորման որևէ եղանակ, ուր չկան մամուլի ազատություն կամ նույնիսկ «խորհրդակցական ժողով» և որտեղ ամեն ինչ կախված է գահակալի հայեցողությունից, հարկ է, որ հրաշք տեղի ունենա, որպեսզի վերջինս կամովին հրաժարվի անսահմանափակ իշխանությունից: «Դրաշքի բացակայության պարագայում, – նշում է նա, – միակ ազդու միջոցը մնում է ազատամիտ մարդկանց կամքը, որոնք նախապես անմնացորդ նվիրաբերել են իրենց կյանքը»⁸⁵⁶:

Իրատեսական այս մոտեցումն իր արտացոլումն է գտել Քիառի՝ Դայոց ցեղասպանությանը նվիրված դեռևս առաջին՝ Մորիս Լևեյր կեղծանվամբ լուս ընծայված հորվածում: Այստեղ առաջադրված վերլուծությունները, որոնց արդեն անդրադարձանք, պարզորոշ վկայում են, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարը նա ի սկզբանե պայմանավորում է սոսկ օսմանյան վարչակարգի ճիրան-ներում հեծող արևմտահայության հուսակտուր վիճակով:

Դաշորդ ելույթներում՝ թուրք ելուզակների դեմ հայ ժողովրդի մղած պայքարը Քիառը դիտում է իրեն ինքնապաշտպանության ցայտուն դրսնորում: 1895 թ. սեպտեմբերին Բաբը Ալիի ցույցի առիթով նա ընդգծում է ցուցարարների հիմնական նպատակը, այն է՝ օսմանյան «Վերնախավին տեղեկացնել բարենորդումների հրականացմանն առնչվող Կոստանդնուպոլիսի հայերի ցանկություններին»: Քիառը ցավով է նշում, որ բռնությունների տեղիք տված՝ միանգամայն խաղաղ նպատակ հետապնդող այս գործողության ընթացքում ոստիկանությունը՝ զինված մահմեդական բնակչության օժանդակությամբ, կոպտորեն ետ է մղել ցուցարարներին, որից հետո արդեն հայերը ոչ միայն ապաստանել են Եկեղեցիներում, այլև, ինչպես նա նշում է, նրանցից շատերը, ովքեր «գենքեր են ունեցել՝ վճռել են պաշտպանվել յուրաքանչյուր նոր հարձակումից»⁸⁵⁷:

⁸⁵⁵ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 83.

⁸⁵⁶ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 1^{er} novembre 1905.

⁸⁵⁷ P. Quillard, Diplomatie secrète du sultan, p. 883.

Յայերի՝ ընդամենը պաշտպանվելու, այլ ոչ թե նախահարծակ լինելու՝ մեծ կարևորություն ունեցող հանգամանքը, Քիառն ընդգծում է բազմիցս, Վկայակոչում 1895 թ. Զեյթունում, 1896 թ. Կանում և այլուր արձանագրված՝ ազատագրական պայքարի այլևայլ դրվագներ⁸⁵⁸: 1901 թ. ի վեր, Արևմտյան Յայաստանի զանազան վայրերում սուլթանի հայահալած քաղաքականության սաստկացման հետ կապված՝ Քիառը պարբերաբր քննարկում է այս հարցը. «Այսօր նրանք (հայերը – Վ. Պ.) պաշտպանվում են, ինչպես արդեն պաշտպանվել են Զեյթունում, Սասունում, Բանկ օտոմանում: Արդեն նույնիսկ այն տարածաշրջաններում, ուր կայսերական կամքն իրականացնողներն ամենադաժան ծևով ավերածություններ են սփռել, հայտնվել են վրիժառուներ, որոնք ուժին դիմակայում են ուժով և սպանում իրենց ազգի դահիճներին»⁸⁵⁹: Քննարկելով 1904 թ. ապրիլի 10-ից մինչև մայիսի 5-ը Սասունում տեղի ունեցած անցքերը, ի թիվս բազում անհերքելի փաստերի վկայակոչման, ինչպիսիք են օսմանյան կառավարության քաղաքականության կանխամտածված ընույթն ու նրա սաղրիչ գործողությունները կամ բազում ամիսներ ի վեր, նոր կոտորածների նախապատրաստման համար ճանապարհ հարթած եվրոպական պետությունների հանցավոր անտարբերությունը, նա առանձնացնում է նաև «հայերի հերոսական դիմադրության» իրողությունը⁸⁶⁰:

Չքավարարվելով, սակայն, ընդհանուր բնույթի դիտարկումներով, Քիառը համակողմանի վերլուծության է ենթարկում ֆիդայական շարժման հետ կապված զանազան մանրամասներ, որը նրա մոտեցման անժամտելի արժանիքներից է: Նախ հայ վրիժառուներին նա զերծ է պահում արյունալի իրադարձությունների հետևանքով նրանց վրա բարդվող փոքր-իսկ պատասխանատվությունից, իրադարձություններ, որոնք «վերստին տեղի են ունենում և անընդմեջ շարունակվում հայկական վիլայեթներում: Բոլոր նրանց կարծիքով, ովքեր տեղում աննիջականորեն իրազեկ են դարձել մի ամբողջ ազգի աղետին՝ ազգերի գոյության բնականոն պայմանները դժոխային են: Այստեղ և այլուր ժողոված անհամար վկայություններն ապացուցում են, որ թվում է, թե ցանկացած բնույթի հարստահումների և տառապանքների ենթակա այս դժբախտների համար, որոնք շրջապատված են թշնամիների վերածված հարևաններով,

⁸⁵⁸ Տե՛ս օրինակ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 83-88:

⁸⁵⁹ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 10 septembre 1901.

⁸⁶⁰ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 1^{er} juin 1904.

մահն ազատագրում է»⁸⁶¹: Այս պայմաններում, Քիառը ոչ միայն ֆիդայական շարժման ժագումն է համարում միանգամայն օրինաչափ, այլև նվազագույն իսկ տարակուսանք չի տածում արևմտահայության՝ ֆիդայիններին սատարելու հարցում դրսկորած բուռն ցանկության շուրջ. «Այս շարժումն արհեստաձին չէ, – գրում է նա, – և հայ ժողովուրդը, որն ամբողջությամբ գիտակցել է իր աղետալի վիճակը, չի հապաղի, ընդհանուր առմամբ, լռակյացությամբ կամ բացահայտորեն զորավիզ լինել այն անծանց, որոնց եկրոպական փաստաթղթերում այլևս չեն համարձակվում ավագակներ անվանել»⁸⁶².

Դայոց ցեղասպանության պատմագրության ժխտողական ուղղության կնքահայրերը և հետևորդներն ի սկզբանե շրջանառության մեջ են դրել, ինչպես արդեն նշեցինք, այսպես կոչված՝ «հայկական ապստամբության» վարկածը, ըստ որի՝ զանգվածային կոտորածների պատճառ են դարձել հայերի «խռովությունները»: Այս հարցի շուրջ 1904 թ. բանավեճի մեջ ընդգրկվելով Դելկասեի հետ, Քիառը գրում է. «Երբ ամենավայրագ բռնակալությանը ենթակա մարդիկ գենքի են դիմում և պաշտպանում յուրայինների պատիվն ու կյանքը, դա բռնություն չէ. այդ կոտորածն է, որը բնութագրում է իբրև գերագույն իշխանության գործողություն և հեղված արյան համար հարկ է հաշվետվություն պահանջել միայն սուլթան Աբդուլ Համիդից»⁸⁶³:

Դիմնվելով զանգվան սկզբնաղբյուրներից քաղված տեղեկությունների վրա, Քիառը հերքում է համիդյան պաշտոնյանների, մասնավորապես, Ֆրանսիայում Օսմանյան կայսրության դեսպան Մունիր բեյի՝ 1904 թ. Փարիզում տարածած ստահոդ լուրերը, ըստ որոնց՝ Սասունի իրադարձությունները կարող են վաղուց ի վեր հրահրած լինել հեղափոխականները⁸⁶⁴: Այս արիթով Քիառն ապացուցում է հակառակը՝ իիմնվելով 1901 թվականից ի վեր գորքերի՝ Սասունում զորանցներ կառուցելու ստացած հանձնարարության վրա, որն ընդամենը հանգեցրել է բնակիչների բռղոքին: Ստեղծված լարված մքնուրսուում նա թե՛ գործերի և թե՛ քուրդ աշիրեթների տեղաշարժը դեպի Սասուն մեկնաբանում է կողոպուտի և ավարառության նրանց նախապատրաստությամբ⁸⁶⁵:

Ընդհանուր առնամբ, Քիառը գտնում է, որ «երկարատև ու

⁸⁶¹ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 15 novembre 1904.

⁸⁶² Նոյն տեղում:

⁸⁶³ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 15 juin 1904.

⁸⁶⁴ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 1^{er} juillet 1904.

⁸⁶⁵ Նոյն տեղում:

ճարպկորեն հղացած ծրագրին հետամուտ»՝ Աբդուլ Ջամիջը 1904 թ. գարնանը խորհում էր, որ բարենպաստ պահը վրա էր հասել հայկական նոր կոտորածների ծեռնամուխ լինելու համար: Ըստ այդմ՝ նա ուշադրությունը հրավիրում է հայ ֆիդայիներին նախապես վարկարեկելու ուղղությամբ սուլթանի ծեռնարկած քայլերի վրա: «Միաժամանակ ստահող հեռագրերը տարածում են ֆիդայիների իրականացրած բռնություններին առնչվող առասպելը, – գրում է նա, – որոնց մեղադրում են մահմեդականների գյուղերում կամանց ու երեխաններին կոտորելու և քուրդ աղջիկներին առևանգելու համար: Դա ծշմարտությանը հակասող պատկեր է»: Այս առիթով Քիառը բերում է Անդրանիկի օրինակը, որը գրուել է Դապիկ գյուղը և նախքան տղամարդկանց պատճելը, նախ և առաջ քուրդ աղջիկներին ու կանանց և վնասազերծել ցանկացած չարիքից՝ նրանց ուղեկցելով հայկական ընտանիքներ:

Փաստի արձանագրումը համարելով անբավարար, նա ստահող լուրերի տարածումն իրավամբ պատճառաբանում է նախքան Սասունի և Մուշի հարթավայրի բնակչությանը կոտորելը, ֆիդայիներին ոչնչացնելը՝ եվրոպական հասարակական կարծիքի առջև նրանց վարկարեկելու անհրաժեշտությամբ⁸⁶⁶: Նշենք, որ հայ ֆիդայիներին բնորոշ վեհության ու մեծահոգության էական հանգամանքը, Քիառն ընդգծել է նաև Խանասորի արշավանքին նվիրված գրավոր ելույթում (որին կանդրադառնանք ստորև), ուր հավաստում է, որ ռազմական այս գործողության ընթացքում հաղթանակած ֆիդայիներին արգելված էր կողոպտել և բռնություններ գործադրել կանանց ու երեխանների նկատմամբ⁸⁶⁷:

Այսպես, վկայակոչելով հայ ֆիդայիների՝ մահմեդական բնակչության հանդեպ դրսևորած բարյացակամությունը, Քիառը միաժամանակ ուշադրությունը բևեռում է մեկ այլ կարևոր իրողության, այն է՝ նրանց նկատմամբ թուրք ժողովրդի ցուցաբերած համապատասխան վերաբերմունքի վրա: Նրա համոզմանք՝ ֆիդայիները պարկեցտ վարքագծով արժանացել են թե՛ զորքերի և թե՛ իրենց գործողությունների ականատեսը դարձած թուրք գյուղացիների հարգալից վերաբերմունքին ու հիացմունքին: «Այդ բնակչությունը և տառապում է: Նա արդեն գիտակցում է, որ հայկական ապստամբությունն օրինաչափ է (ընդգծումը մերն է – Վ. Պ.) և որ փրկությունը

⁸⁶⁶ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 15 mai 1904.

⁸⁶⁷ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 85.

կարելի է ակնկալել միայն քաղաքակիրթ տերությունների՝ սուլթանին պարտադրած բոլորովին այլ կարչակարգի հաստատումից»⁸⁶⁸:

Քիառը խորին ակնաժանքով է արտահայտվում «աներեր քաջությամբ»⁸⁶⁹ դեպի մահն ընթացող ֆիդայիների մասին, որոնք, ինչպես նա նշում է, շռայլորեն հեղել են իրենց արյունը հանուն անհուսալի գործի⁸⁷⁰: «Երբեք, ի դեպ, – գրում է նա, – ֆիդայիները չեն զլացել իրենց գործողությունների պատուղները ճաշակելուց: Նրանք, անկասկած, կարող էին ապրիլին (1904 թ. – Վ. Պ.) ստանալ իրենց անձնական անվտանգության բոլոր երաշխիքները: Նրանք այդ չեն ցանկացել, քանզի համառորեն վճռել էին պահանջել նվազագույն բարենորոգումներ, որոնք Եվրոպան, ահա ավելի քան քառորդ դարից ի վեր, խոստացել եր նրանց հայրենակալիցներին»⁸⁷¹: Ի դեպ, Քիառի խիստ բարյացական վերաբերմունքը հայ ֆիդայիների նկատմամբ աննկատ չի մնացել նրա ժամանակակիցների համար: Ն. Մառն այս առիթով ընդգծել է. «Էսկ երք հայ յեղափոխականի յաջողութեան մասին է խօսում, որպիսի գուրգուրանք, որպիսի փայփայանք դէպի հայ ֆիդային: Ոյժի ու կարողութեան մրմունց է դա՝ ուղղուած հեռաւոր Դայաստանի բարձունքում կրուղ ու ընկնող քաջարի բազուկին»⁸⁷²:

Ինչ վերաբերում է ֆիդայիների նպատակներին, ապա դրանք, ըստ Քիառի՝ հանգում էին սոսկ հայ ժողովրդի ոտնահարված տարրական իրավունքների նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսնորման պահանջին: Անդրադառնալով կաթողիկոս Խրիմյանի՝ 1904 թ. տերություններին հղած նամակներից մեկին, որով Վերջինս պահանջում էր ոչ թե ազգային անկախություն, այլ միայն բարենորոգումների իրականացում և ժողովրդի գոյության պահպանման նվազագույն երաշխիքներ, ինչպիսիք են բռնագրավկած ունեցվածքը կողոպտված հայերին վերադարձնելը, վտարանդիներին հայրենիք վերադառնալու բռլյատվության ընձեռումը, հայերի ազատ տեղաշարժը թե՛ երկրի ներսում և թե՛ որանից ոդւրս, համընդհանուր ներման շնորհումը, քրդերից և չերքեզներից պաշտպանվելու իրավուն-

⁸⁶⁸ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 15 novembre 1904.

⁸⁶⁹ Նոյն տեղում:

⁸⁷⁰ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 1st novembre 1905.

⁸⁷¹ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 15 novembre 1904.

⁸⁷² Ա. Մար, Սեր Քիյեառը. – Սզապսակ Փիեր Քիյեառի յիշատակին, Կ. Պոլիս,

քը⁸⁷³, Քիառը գրում է. «Արդյո՞ք ֆիզիկական և բարոյական տառապանքներից վհատված ֆիդայինները... չարացած սարսափելի պայքարից, որը մղում են հազար անգամ գերազանցող ուժերի դեմ, յուրաքանչյուր պահի հալածվում են և գտնվում մահվան սպառնալիքի տակ, կրավարարվեն նման ողջախոհ և չափավոր պահանջներով։ Այսօր դրանում կասկածներ տածելն իսկ անհնար է։ Անդրանիկի՝ Եկրոպացի հյուպատոսներին հանձնած հուշագիրը⁸⁷⁴, որը վերջիններս խոստացել են փոխանցել իրենց համապատասխան կառավարություններին, որևէ հիմնահարցում չի զանազանվում կաթողիկոսի նամակից»⁸⁷⁵.

Դարկ է նաև նշել, որ ազատագրական շարժման վերելքը XX դարի սկզբին Քիառը մասսաբ պայմանավորում է նաև Եկրոպական պետությունների կատարյալ անտարբերությամբ, մասնավորապես ընդգծելով, որ եթե պաշտոնական Եկրոպան արևմտահայության հանդեպ չկատարի իր տարրական պարտականությունները, ապա Ֆիդայինները կպաշտպանեն իրենց հայրենակիցներին⁸⁷⁶։

Արդեն ազատագրական շարժման ելաւճների առիթով, Քիառը մեկ անգամ ևս փաստում է հայ ժողովրդի հաստատակամությունն ու անկոտրում կամքը պայքարը շարունակելու հարցում և առանձնացնում մի նոր իրողություն՝ կապված հայ ֆիդայինների մասին Եկրոպայում բարեհած պատերազումների ծևավորման հետ, քանզի փաստերը «հայերին ներկայացնում են այլ լույսի ներքո և բույլ չեն տալիս նրանց դիտել իրեն նախախնամության կողմից՝ գոհերի ողորմելի կացության դատապարտվածների»⁸⁷⁷։ Իրեն այս հավաստնան հիմնավորում՝ Քիառը խոսքը կենտրոնացնում է, մասնավորապես, հայ ժողովրդի ազատագրական պայքարի ամենացայտուն դրվագներից խանասորի արշավանքի և Առաքելոց վանքում Անդրանիկի կազմակերպած դիմադրական պայքարի վրա։

⁸⁷³ Կաթողիկոսի այս և այլ նամակների մասին տե՛ս Է. Ա. Կոստանդյան, Մկրտիչ Խրիմյան, էջ 434։

⁸⁷⁴ Անդրանիկի և ՀՅԴ գործիչներ Սարիատի (Գևորգ Չառլզ) ու Տարոնեցու ստորագրությունները կրող՝ 1904 թ. հուլիսի 5-ի պահանջագրի մասին մանրամասն տե՛ս Յ. Ռ. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, գ. Ա, էջ 196-199։ Ի դեպ, Յ. Սիմոնյանը հավաստում է, որ պահանջագրը «չուներ Օսմանյան կայսրությունից անջատվելու որևէ տրամադրություն»։ Նույն տեղում, էջ 198։

⁸⁷⁵ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 15 août 1904.

⁸⁷⁶ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 1^{er} août 1903.

⁸⁷⁷ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 83.

Խանասորի արշավանքի մասին Քիառը, ըստ իր խոստովանության՝ տեղեկությունները քաղել է 1897 թ. գերմանական «Ցուցունֆտ» պարբերականում լույս ընծայված հոդվածից⁸⁷⁸ և ջանացել ընդհանուր գծերով ոչ միայն ներկայացնել այդ գործողության պատկերը, այլև, ինչն ավելի կարևոր է, անգամ բացահայտել դրա պատճառները: 1897 թ. հուլիսի 24-ի լույս 25-ի գիշերը ՀՅԴ նախաձեռնությամբ 253 դաշնակցականից բաղկացած ռազմաշավային մի խումբ հատում է պարսկա-թուրքական սահմանը, ներխուժում Պարսկաստանին սահմանամերծ տարածք և խանասորի դաշտում խիզախ հարձակում իրականացնում մազրիկ ցեղին պատկանող քուրդ հրոսակախմբերից մեկի վրա՝ հակառակորդին պատճառելով մեծ կորուստներ: Տալով ընդամենը 19 զոհ, խումբը վերադառնում է Պարսկաստան⁸⁷⁹: Խանասորի արշավանքը հետապնդում էր գլխավորապես Եվրոպական դիվանագիտության ուշադրությունը Հայկական հարցի վրա Վերսատին հրավիրելու նպատակ և համապատասխանում էր ՀՅԴ որդեգրած՝ ազատագրական շարժման նոր մարտավարությանը⁸⁸⁰:

Գիտակցելով խանասորի արշավանքի կարևորությունը⁸⁸¹, Քիառը, չունենալով ստույգ տեղեկություններ, ուշադրությունն, այդուհանդերձ, կենտրոնացնում է դրա վրա: Նա, սակայն, արշավանքը մեկնաբանում է իբրև ինքնաբուխ ծնունդ առած գործողություն և այն պայմանավորում բացառապես հայ ֆիդայինների վրեժինդրությամբ⁸⁸², որը կյանքի էր կոչվել ի պատասխան 1896 թ. Պարսկաստան տեղափոխվող՝ Վանի ինքնապաշտպանության մասնակիցներից շատերի կոտորածի, որոնց նահանջի ճանապարհին պաշարել էր քրդական նշված ցեղին պատկանող հրոսակախումբը (անհավա-

⁸⁷⁸ Խոսքը վերաբերում է գերմանացի ճանապարհորդ Յ. Ֆիշերի «Հայոց մի յաղորդիմնը» հոդվածին, որը Լևոն Աքարեկյանի բարգմանությամբ տպագրվել է «Դիլոշակում» (1897, թիվ 13, էջ 106-108):

⁸⁷⁹ Խանասորի արշավանքի մասին տե՛ս Ս. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 177-189, Յ. Գրիգորյան, Դայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., էջ 65:

⁸⁸⁰ Մանրամասն տե՛ս Յ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 56-57:

⁸⁸¹ Խանասորի արշավանքն, ի դեպ, հայրենական պատմագրության մեջ տեղիք է տվել իրարամերծ գնահատականների: Եթե Յ. Պողոսյանի կարծիքով արշավանքն ընդամենը «ծախողված գործ էր», ապա՝ Յ. Գրիգորյանն այն համարում է «աննախադեպ երևույթ հայոց ազատամարտի համար»: Յնթ. Յ. Ս. Պողոսյան, Վասպորականի պատմությունից (1850-1900), Երևան, 1988, էջ 289; Յ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 65:

⁸⁸² P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 84.

սար պայքարում հայերը տվել էին 384 զոհ): Ինչպես տեսնում ենք, հավաստի սկզբնաղբյուրների բացակայության պատճառով՝ Քիառը չի ընթանել այս գործողության նշանակությունը: Բացի դրանից, ակնհայտ է, որ ազատագրական շարժումների արդի պատմագրության նվաճումների լույսի ներքո՝ նրա մեկնաբանություններն ամենին սպառիչ չեն (նույնիսկ ԴՅԴ՝ իբրև հարձակման նախամեռնողի մասին նրա շարադրանքում չկա փոքր-իսկ ակնարկ): Իրադարձության մասին ունենալով, ըստ Էռության, աղոտ պատկերացումներ, նա չի խուսափել նաև փաստական անծտություններից (ըստ նրա՝ ռազմարշավային խումբը բաղկացած է եղել 300 մարտիկից, իսկ մարտադաշտից ծողոպրած մազդիկ ցեղի առաջնորդ՝ իբր սպանվել է):

Քիառի զանազան ելույթներում բազմիցս հառնում են հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ղեկավար գործիչները, մասնավորապես, Սերոբն ու Անդրանիկը: «Այնպիսի ղեկավարներ, ինչպիսին Սերոբն է, որին անվանել են Սերոբ Փաշա, մարտնչել են բազում տարիներ շարունակ՝ քուրոյ և թուրք բռնակալիկների ղեմ գործադրելով արդարացված բռնություններ»⁸⁸³: Նա ցավով է արձանագրում, թե ինչպիսի նենգ եղանակներով է իրականացվել Սերոբի սպանությունը, սակայն, միաժամանակ անվարան ընդգծում է, որ Վանում, Մուշում և Սասունում նրա սկսած պայքարը հաջողությամբ շարունակում է Անդրանիկը⁸⁸⁴:

Վերջինիս մասին Քիառն արտահայտվում է առանձնակի համակրանքով, նրա գործունեությանն առնչվող դրվագները քննարկում իր զանազան ելույթներում: Օրինակ՝ 1904 թ. նայիսին Քիառը մանրամասն վերլուծելով նրա առաջադրած պահանջները, մեկ անգամ ևս հիմնավորում է ֆիդայական շարժման՝ նատչելի միջոցներով հայ ժողովրդին պաշտպանելու միակ նպատակը⁸⁸⁵: Ներկայացնելով Անդրանիկի կենսագրությանն առնչվող համառոտ տեղեկություններ, Քիառը հանգամանորեն կանգ է առնում 1901 թ. հոկտեմբեր ամսին Մուշից արևելք գտնվող Առաքելոց վանքում վերջինիս կազմակերպած հերոսական դիմադրության վրա, որը նպատակ ուներ դիմակայել թուրք հարստահարիչներին և մատնացուց անել:

⁸⁸³ Նույն տեղում, էջ 86:

⁸⁸⁴ Նույն տեղում:

⁸⁸⁵ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 15 mai 1904.

հայ ժողովրդի կենսունակությունը⁸⁸⁶: Վկայակոչելով իր տրամադրության տակ եղած՝ մի փաստաթուղթ, Քիառօթ թվարկում է այն հայտարարությունները, որոնցով պատագրական շարժման պարագլուխը նոյեմբերին հանդես է եկել վաճքում տեղի ունեցած զնդիարումների ժամանակ հակառակորդի պատվիրակումների հետ վարած բանակցությունների ընթացքում և դրանք համարում է «արժեքավոր»: Նա Անդրամիկի ներկայացրած հայտարարություններն ամփոփում է վեց կետում.

1. Որ ինքն ու իր խումբը ապստամբներ չեն, այլ պաշտպանում են իրենց և քրոների զոհը դարձած հայրենակիցների կյանքը:
2. Որ իրենք երբեւ չեն կողոպտել գյուղերը, հարձակվել բանագնացների վրա, սպանել անպաշտպան մարդկանց:
3. Որ իրենք սպանել են Բշարե Խալիլին և երեք այլ քրոների, որոնք եղել են Շուշնամերկի սպանությունների հեղինակները:
4. Որ փոխարենը (և նա ներկայացնում է ամբողջական թվարկում), ինչպես Մուշի, այնպես և Սասունի գյուղերում քրոներն են իրականացրել անհամար կողոպուտներ, գողություններ, սպանություններ և կոտորածներ:
5. Որ իրենք ճանաչում են սուլթանի իշխանությունը, բայց որ մեկ սուլթանը բավական է և չեն ցանկանում ունենալ այլոց՝ հանձինս քուրդ առաջնորդների, որոնք՝ ինչպես սուլթաններ, տնօրինում են հայերի կյանքը և ունեցվածքը, նրանցից հարկեր գանձում և ըստ իրենց քամահաճույքների՝ օրենքներ կիրառում:
6. Որ իրենք անձնատուր կլիմեն, եթե երաշխավորվի իրենց և երկրի հայերի անվտանգությունը»⁸⁸⁷:

Վերլուծելով «ոչ այնքան պահանջկոտ հեղափոխական» Անդրամիկի հայտարարությունները, Քիառօթ դրանք բնորոշում է իրեն «գործողության ծրագիր, որը չի կարող սարսափեցնել ոչ մեկի, նույ-

⁸⁸⁶ Առաքելոց վաճքում Անդրամիկի խմբի մղած մարտերի մասին տե՛ս Ծ. Պ. Աղայան, Դայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, էջ 189-196; Յ. Մ. Պողոսյան, Սասունի պատմություն (1750-1918), էջ 250-253; Յ. Ռ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 118-130; Ա. Ս. Դամբարյան, նշվ. աշխ., էջ 189-191:

⁸⁸⁷ P. Quillard, La Quinzaine // «Pro Armenia», 15 mai 1904.Տե՛ս նաև P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 87: Դարկ է նշել, որ Անդրամիկն առաջարիկ էր նաև քաղաքական պահանջներ, օրինակ՝ պահություն շնորհել Տարոնում ծերթակալված քաղաքական հայ բանտարկյալներին, որոնք վրիպել են Քիառօթ ուշադրությունից: Տե՛ս Յ. Մ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 252; Յ. Ռ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 124:

նիսկ նորին կայսերական մեծությանը»⁸⁸⁸ և ըստ այդմ՝ ևս մեկ անգամ ընդգծում հայ Ֆիդայիների առաջադրած պահանջների օրինականությունը:

Թեպետ Քիառն ընդունում է ազատագրական շարժման ղեկավարների պահանջների չափավորությունը, այնուամենայնիվ, չի ժխտում հեղափոխական տրամադրությունների առկայությունը հայերի շրջանում, որը սակայն հիմնավորում է Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող պայմաններով: Դեգնելով նրանց, ովքեր Օսմանյան կայսրությունում և Ուստափանում հայերին բնորոշում են իրեն հեղափոխականների, նա բացառում է միայն ահաբեկչության և պայքարի անհրաժեշտության հանդեպ նրանց ունեցած կարծեցյալ հակումը: Փաստելով օսմանահպատակների թվում հայերի գերակշռող մասին՝ ավելի, քան այլոց բնորոշ հնազանդությունը, նա մեկնաբանում է «հեղափոխականի» պիտակին նրանց արժանանալու հիմնական պատճառը, որը հանգում էր կայսրությունում տիրող բացարձակ անհշխանության պայմաններում արևմտյան գաղափարների և մշակույթի տարածմանը»⁸⁸⁹:

Ինչպես տեսնում ենք հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժմանը Քիառի տված գնահատականները միանգամայն իրատեսական են և անկողմնակալ: Նրա անուրանալի արժանիքներից շեշտենք, մասնավորապես հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին առնչվող բազմապիսի խնդիրների քննությունը: Այս պայմաններում, Մ. Վարանդյանն ունեցել է բոլոր իրավունքներն ընդգծելու նրա համակրալից վերաբերնություն ազատագրական շարժման նկատմամբ. «ճնշւած, լացող, հոգեվարող Շայաստանը ցնցում էր նրա բարի, զգայուն սիրող, բայց աւելի և ցնցում էին Անդրանիկների յուսահատ և գահավետ բոիշքները, – հայկական մարտիրոսագրութիւնից շատ ավելի հրապուրիչ էր նրա համար՝ հայկական դիւցազներգութիւնը»⁸⁹⁰:

Հայ ժողովրդին սատարելու ասպարեզում Քիառի ծավալած բազմաբնույթ գործունեությունը և ցուցաբերած մեծ հետևողականությունը պայմանավորված էին գլխավորապես նրա քաղաքացիական ուրույն դիմագծով, որին բնորոշ են թե՝ ազնվությունն ու շիտակությունը և թե՝ հանուն արդարության մարտնչելու անսամձահարե-

⁸⁸⁸ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 15 mai 1904.

⁸⁸⁹ P. Quillard, La Quinzaine // « Pro Armenia », 15 mars 1906.

⁸⁹⁰ Մ. Վարանդյան, Փիեր Քիյեա.- Սգապսակ Փիեր Քիյեա յիշատակին, էջ

լի ցանկությունն ու կիրքը⁸⁹¹: Նրա ժամանակակիցներից ոմանք (Ա. Ժերար, Ա. Ֆոնտենաս) իրավամբ ընդգծել են այն հանգամանքը, որ Կոստանդնուպոլիսում բնակվելու ժամանակաշրջանուն նա խիզախել է վտանգի ենթարկել իր ազատությունը և նույնիսկ կյանքը՝ հանուն հայ ժողովրդի ողբերգության հավաստի պատկերը եվրոպական հանրությանը ներկայացնելու գործի⁸⁹²: Դետագայում՝ 1903 թ., Հայաստանում և Մակեդոնիայում ծավալված իրադարձությունների շուրջ՝ Վ. Բերարի և իր ցուցաբերած մեծ հետաքրքրությունը Քիառը մեկնաբանել է հետևյալ կերպ. «Մենք տեղում ծանոթացել ենք այս ժողովուրդների երկարատև նահատակությանը, հետաքրքրվել նրանցով և պատմելով այն մասին, ինչ տեսնել ենք, կատարել ենք սոսկ մեր պարտքը, ասել ճշմարտությունը»⁸⁹³.

Ըստ այս ամենի՝ Ֆ. ղը Պրեսամսեն, անտարակույս, ունեցել է բոլոր իրավունքները հավաստելու, որ ի դեմս Քիառի «հայերն ունեին անվեհեր մարտիկի, անխոնջ պաշտպանի, խելամիտ խորհրդականի»⁸⁹⁴:

Դայ իրականության մեջ Քիառի հայանպաստ գործունեությունը թեև հավուր պատշաճի չի արժեսորվել, այնուամենայնիվ, չի շրջանցվել լուրջամբ: Նրա անունը հնչել է, մասնավորապես, 1912 թ.: Նրա վաղաժամ մահվան կապակցությամբ, որի բորբ ցնցել է ոչ միայն հայ ժողովրդի պաշտպաններին, այլև անհուն վիշտ պատճառել հայ գործիչներին և մտավորականներին⁸⁹⁵:

Ի շարս քաղաքական և հասարակական կազմակերպությունների (ՀՅԴ, Հնչակյան կուսակցություն, Թուրքիայի Դայոց պատրիարքարան; Կոստանդնուպոլիսի Կեղրոնական վարժարան), նրանցից շատերը (Անդրանիկ, Ս. Զավարյան, Ռ. Զարդարյան, Վարդգես, Գ. Զոհրապ, Սիամանթը և ուրիշներ) ցավակցական հեռագրեր են հղել Քիառի այրում⁸⁹⁶, հանդես եկել նրան նվիրված հոդվածներով⁸⁹⁷:

⁸⁹¹ Նշենք, որ «Դրոշակի» խմբագրությունը Քիառին բնութագրել է իրքն «հզօր գրիչ մը, անկաշկան միտք մը, բարձր հոգի մը» ունեցող անձնավորության: Տե՛ս «Դրոշակ», 1899, թիվ 8, էջ 114:

⁸⁹² Տե՛ս À la mémoire de Pierre Quillard, p. 44, 50:

⁸⁹³ Pour l'Arménie et la Macédoine, p. 304.

⁸⁹⁴ À la mémoire de Pierre Quillard, p. 193-194.

⁸⁹⁵ Մի շարք պարբերականներ տպագրել են նրա մահախոսականները (անստորագիր): Տե՛ս «Ազատամարտ», 25-ը հունվարի/7-ը փետրվարի 1912, «Դրոշակ», 1912, թիվ 2, էջ 17-20, «Ռահվարայ», 10-ը/23-ը փետրվարի 1912:

⁸⁹⁶ Տե՛ս «Ազատամարտ», 25-ը հունվարի/7-ը փետրվարի – 31-ը հունվարի/13-ը փետրվարի 1912:

Մեր կարծիքով, Պիեռ Քիառը հայ ժողովրդին սատարած ֆրանսիացի մտավորականների համաստեղության ամենափայլուն ներկայացուցիչն է, որը զինվորագրվելով հայ ժողովրդի գոյատևման պայքարի խնդրին, իր գործունեությունը չի սահմանափակել սուկգիտական բնույթի աշխատանքների հրատարակմամբ, այլ հանուն նրա փրկության, ծավալել է նաև բեղուն հրապարակախոսական գործունեություն, ցուցաբերած անձնվիրությամբ և անշահախնդրությամբ դարձել իր ժողովրդի՝ ժողովրդավարական հինավուրց ավանդույթների անմար իրի ջահակիր:

Դայ ժողովրդի բնաջնջման հիմնահարցերի հանդեպ Քիառի մոտեցումն աչքի է զարնուն նախ իրադարձությունների շուրջ հավատի և անհերքելի փաստերի թվարկմամբ, ինչը և խիստ գնահատելի է, եթե առավել ևս նկատի ունենանք այս կապակցությամբ այն գրեթե կատարյալ անիրազեկությունը, որում խարխափում էր ֆրանսիական և Եվրոպական հասարակությունը: Այս առումով, նրա բազմաբնույթ գործունեությունը մեծապես օժանդակել է Դայոց ցեղասպանության շուրջ Եվրոպական հասարակայնության տեղեկատվության ընդլայնմանը, ինչը փոքր-իսկ տարակուս չի կարող հարուցել:

Նրան բնորոշ են Դայոց ցեղասպանության պատմությանն առնչվող հիմնահարցերի ընդգրկումը լայն կտրվածքով և դրանց խոր վերլուծությունը: Մեր կարծիքով, Քիառի մոտեցման ակնհայտ թերությունը Դայոց ցեղասպանության պատճառների վերլուծության անտեսումն է: Խա թեև բազմիցս ակնարկում է Բեռլինի վեհաժողովի ընդունած պայմանագրի 61-րդ հոդվածով նախատեսված բարենորդումների շրջանցումն օսմանյան կառավարության կողմից, այնուամենայնիվ, հավուր պատշաճի չի մեկնաբանում Դայկական հարցի ծագումը և ըստ այդմ՝ Արդուլ Դամիդ II-ի առջև ծառացած դրա լուծման անհրաժեշտությունը, որը և օսմանյան գահակալին դրդել էր արևմտահայության բնաջնջման գաղափարի մտահղացմանը և իրականացմանը ձեռնամուխ լինելուն: Այդուհանդերձ, նրա կողմից քննարկված հայ ժողովրդի ցեղասպանության հարցերի

⁸⁹⁷ Նույն տեղում, 29-ը հունվարի/11-ը փետրվարի 1912: Նրանցից ոմանց հողվածները ֆրանսերեն բարգմանությամբ զետեղվել են նաև Քիառի հիշատակին նվիրված՝ 1912 թ. Փարիզում լույս ընծայված ժողովածուի մեջ: St's A la mémoire de Pierre Quillard, p. 215-236: Թվով տասնուր նշանավոր գրողների, բանաստեղծների և քաղաքական գործիչների, ինչպես նաև Ն. Սարու ելույթներն ամփոփված են նաև Քիառի մահվան տարելիցի կապակցությամբ լույս ընծայված՝ «Ծգապսակ Պիեռ Քիյառի հիշատակին», վերը հղված ժողովածուում:

բազմագանությունը բնորոշ չէ նրա ժամանակակիցներից և ոչ մեկին:

Քիառօ ջանացել է գիտականորեն մեկնաբանել Դայոց ցեղասպանության գործընթացին առնչվող բազում բարդ հիմնախնդիրներ, որոնք առ այսօր տարակարծությունների տեղիք են տալիս պատմաբանների շրջանում: Նրա հայացքները որոշ հարցերի շուրջ, հարկավ, բարեշրջություն են ապրել, ինչը միանգամայն օրինաչափ է: Եթե գործունեության սկզբնական շրջանում նա, անկախ այն բանից, թե ինչ պատճառներով, տարակուսանք է հայտնել սուլթանի հանցակցության առնչությամբ, ապա իրադարձությունների զարգացմանը զուգընթաց բացահայտել է նրա մեղասկցության առյուծի բաժինը և Դայոց ցեղասպանության իրականացումը մեկնաբանել պետական քաղաքականությամբ, բացառելով կրոնական հակամարտության հենքի վրա դրա ծավալման հնարավորությունը: Խստ արժեքավոր են, մասնավորապես հայ ժողովորի ազատագրական շարժմանը տված նրա անկողմնակալ գնահատականները, քանզի հայ Ֆիդայիների հերոսական պայքարը նա պատճառաբանում է բացառապես արևմտահայության հանդեպ օսմանյան վարչակարգի դրսնորած աննարդկային վերաբերմունքով և հողմացրիվ անում հայկական կարծեցյալ ապստամբության վարկածը:

Քիառօ չի սահմանափակվել միայն եվրոպական պետությունների, այդ թվում Ֆրանսիայի կրավորական քաղաքականության հիմնավոր քննադատությամբ, այլև գտնվելով որոնումների մեջ, փորձել է առաջադրել հայ ժողովորի ողբերգական կացությունը շտկելու տարբերակներ, անկասկած, ոչ այնքան իրատեսական: Անկախ այդ հանգամանքից, դա ևս նրա անժխտելի արժանիքներից է:

3. 1894-1896 թթ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԴՈԳԵՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԼՈՒՍԲԱՍՆԱՄԱՐ

Խարազանումների ընդհանուր հորձանուտում, որը XIX դարի 90-ական թվականներին ֆրանսիայում կյանքի էր կոչվել Դայոց ցեղասպանության կազմակերպիչներին դատապարտելու անհրաժեշտությամբ, ուրուսն տեղ են զբաղեցնում ֆրանսիացի հոգևոր գործիչների բազմազան ելույթները: Նրանք իրականացրել են արժեքավոր սկզբնադրյուրների ժողովածուների իրատարակություններ, տպագրել գրքույկներ և հոդվածներ, հանդես եկել իրապարակային

դասախոսություններով և իրենց նպաստը բերել Հայոց ցեղասպանության գործընթացին ճանաչում տալուն:

Նահատակվող հայ ժողովորդի պաշտպանությամբ հանդես եկած ֆրանսիացի հոգևոր գործիչների դրոշակակիր հայր Ֆելիքս Շարմետանը (1844-1921) XIX դարի 90-ական թթ. լայնածավալ աշխատանք է իրականացրել ոչ միայն Հայոց ցեղասպանության գործընթացի հավաստի պատկերը ֆրանսիական հասարակությունների միջոցով արևմտահայերին նյութապես օժանդակելու ասպարեզում:

Ի տարրերություն ֆրանսիացի շատ այլ ժամանակակիցների՝ հայր Շարմետանն Օսմանյան կայսրությունուն տեղի ունեցող անցքերի մասին տեղեկություններ պարբերաբար ստացել են տեղերում գտնվող ֆրանսիացի միսիոներներից⁸⁹⁸: Արևմտահայության բոցաշունչ պաշտպանը համիդյան ջարդերը նշավակող՝ Փարիզի Լյուքսեմբուրգյան ակումբում 1896 թ. մայիսի 18-ին ունեցած իր առաջին իսկ հրապարակային ելույթում ցեղասպանության մեկնաբանման հարցում գրավել է միանգամայն հատակ դիրքորոշում՝ այն դիտելով իբրև բացառապես կրոնական պատճառներ ունեցող եղելություն. «Սահմեդական մոլեռանդությունը մի ամբողջ ժողովորդի դատապարտել է բնաջնջման և մահվան՝ նրա հավատքի պատճառով»⁹⁰⁰: Ինչ վերաբերում է մազապուրծ հայերի վերապրած սարսափներին, ապա բռնություններ, ըստ նրա՝ հայերի հանդեպ հարկադրաբար կիրառել էին նրանց հավատափոխ անելու մոլուցքից դրդված⁹⁰¹:

Հայր Շարմետանը սրտի անհուն կսկիծով է արձագանքում յաբղանից փրկված հայերի անելանելի կացությանը. «Ենչ արհավիրք, ինչ թշվառություն կարող է համեմատվել հազարավոր քրիստոնյաների արհավիրքների և թշվառությունների հետ, որոնցից խնեմ ամեն ինչ, որոնց տները կողոպտել են ու հրկիզել և որոնք մնում

⁸⁹⁸ **Pjèlej Fjelijs Charmetant**, Martyrologe arménien. Tableau officiel des massacres d'Arménie dressé après enquêtes par les six ambassades de Constantinople et statistique dressée par des témoins oculaires, Paris, s. d. ; **Առյանի՝ L'Arménie agonisante et l'Europe chrétienne. Appel aux chefs d'État.** Paris, s. d. ; **Առյանի՝ Le Livre jaune et la question d'Orient // « Revue diplomatique et coloniale »** (Paris), 1897, N 1, du 1^{er} mars:

⁸⁹⁹ Pour les Arméniens // « Annales catholiques », 16 mai 1896, N 1286, p. 137-138 ; E. Khayadjian, նշվ. աշխ., էջ 78:

⁹⁰⁰ Conférences sur les massacres d'Arménie.— La vérité sur les massacres d'Arménie, p. 91. **Տե՛ս նաև R[évérend] Pjèlej Fjelijs Charmetant, Livre d'or des martyrs de la Charité. Hommage aux victimes de la catastrophe du 4 mai 1897,** Paris, 1897, p. VIII, IX:

⁹⁰¹ Conférences sur les massacres d'Arménie, p. 91-92.

Են անապաստան, առանց հագուստի, առանց մթերային պաշարների, որոնք դատապարտված են կամ ուրացության, կամ սովամահության՝ եթե մենք նրանց շուտափույթ օգնության չհասնենք»⁹⁰²:

Ողբերգական իրադարձությունների ծավալմանը զուգընթաց՝ ընդլայնվել են նաև հայոց Շարմետանի հայանպաստ գործունեության ոլորտները: Ցանկանում ենք նախ ընդգծել նրա մեծ ներդրումը հայկական կոտորածների վրա լույս սփռող արժանահավատ փաստաթղթերի հրապարակման գործում: Դարձ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այս խիստ էական հանգամանքի վրա, քանզի նա առաջիններից էր, որը մինչ այդ՝ Դայոց ցեղասպանության մասին աղոտ պատկերացումներ ունեցող ֆրանսիական հասարակության սեփականությունն է դարձել Օսմանյան կայսրությունում ծավալված իրադարձությունների անսրող պատկերն արտացոլող վավերագրերի՝ փոքրածավալ, սակայն արժեքավոր ժողովածուներ, որոնց օգնությամբ հնարավոր է եղել թեև մասամբ, այդուհանդերձ, ստույգ պատկերացում կազմել կոտորածների իրական ընթացքի և ծավալների մասին:

Դայոց Շարմետանի՝ հավանաբար, 1896 թ. լույս ընծայած խիստ կարևոր՝ «Դայկական նահատակություն» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուն անփոփում է ֆրանսիական և հայկական ծագում ունեցող մի շարք արժանահավատ վավերագրեր, որոնք ուղեկցվում են նրա սեղմ, սակայն, ընդգրկուն մեկնաբանություններով: Դրանց թվում առանձնանում է «Դայաստանի կոտորածների պաշտոնական այլուսակը», որը ֆրանսիայում առաջին անգամ հրատարակվել է նրա նախաձեռնությամբ (ավելի ուշ այն գետեղվել է նաև «Դեղին գրքում»)⁹⁰³:

Այս փաստաթուղթն առաջին անգամ, ըստ եղիքյան, արժեկութել է Կամբոնը՝ արտաքին գործերի նախարար Մարսելին Բերտելոյին հղած՝ 1896 թ. հունվարի 25-ի թվակիր նամակում. «Այս աշխատանքն իրականացրել են վեց դեսպան՝ ըստ համապատասխան հյուպատոսների՝ իրենց հղած գեկուցագրերի: Այդ գեկուցագրերը ըննարկվել են համատեղ և համեմատվել, որոնց համադրությունից

⁹⁰² Նույն տեղում, էջ 93:

⁹⁰³ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 199-211. Առաջին անգամ այս փաստաթուղթը հրատարակվել է «Կապույտ գրքում». տե՛ս "Turkey", N 2 (1896). Correspondence relative to the Armenian Question, and Reports from her Majesty's Consular Officers in Asiatic Turkey, London, p. 298-337.

ծնունդ է առել այս աղյուսակը»: Կամբոնն, ի դեպ, աղյուսակում ամփոփված տեղեկություններն ամենակին սպառիչ չի համարում, քանզի, ըստ նրա հավաստման՝ «փոստն այդ իրադարձությունների մասին ամեն օր հաղորդում է նորանոր մանրամասներ»⁹⁰⁴:

Ամեն դեպքում, խոսքը վերաբերում է անժխտելի հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթի, որն ամենայն մանրամասնությամբ արտացոլում է 1895 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Օսմանյան կայսրության վիլայեթներից տասնմեկում ծավալված իրադարձությունները: Աղյուսակը բաղկացած է հինգ սյունակից, որոնք տեղեկություններ են հաղորդում համապատասխանաբար՝ կոտորածների բնակավայրերի, ամսաթվերի, գոհերի քանակի, տեղի ունեցած անցքերի և դրանց դրդապատճառների, իշխանությունների գրաված դիրքորոշման մասին: Փաստաթղթում բազմիցս հստակորեն մատնանշվում է հայերի ոչնչացման իշխանությունների ունեցած մասնակցությունը, որոնց բողոքվությամբ, իսկ հաճախ՝ կարգադրությանը տեղի են ունեցել կոտորածները, ինչպես նաև ընդգծվում է զորքերի մասնակցությունը ջարողերին ու կողոպուտինին⁹⁰⁵:

Դայր Շարմետանը գնահատելով այս պաշտոնական փաստաթուղթն իբրև բացարձակապես արժանահավատ, չափազանցություններից գերծ, որն ըստ հավաստի փաստերի՝ անողոքաբար իրազեկում է արևմտահայության բնաջնջման իսկությանը, դրա լույս ընծայումը համարում է իր «մարդասիրական և հայրենասիրական պարտքը»⁹⁰⁶:

Թեև հայր Շարմետանը հաղորդում է փաստաթղթի ծանոթության շնորհիվ իրադարձության ծավալի և ահարկու մանրամասների շուրջ թե՛ ժամանակակիցներից ոմանց և թե՛ իր պատկերացումների ընդլայնման մասին, այդուհամերժ, սկզբնաղբյուրի հանդեպ դրսերելով քննադատական մոտեցում, դրանում ամփոփված տեղեկություններն ամենակին ամբողջական և վերջնական չի համարում: Աղյուսակի վերլուծությունից նա հանգում է միակ հնարավոր և իրատեսական հետևության, պնդելով, որ խոսքը վերաբերում է իսկական մարտիրոսության: «Արժանահավատ թվերի միջոցով այն օր առ օր, ամիս առ ամիս, հավաստում է, որ գոհերի՝ միայն հիմնական բնակավայրերում ծշգրտված թիվը հասնում է գրեթե երեսուն հազար կո-

⁹⁰⁴ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 198.

⁹⁰⁵ Բլերէ Ֆլելիք Չարմետան, Martyrologe arménien, p. 10-40.

⁹⁰⁶ Նույն տեղում, էջ 3:

տորված քրիստոնյայի, եթե նույնիսկ մի կողմ թողնենք այն մարդկանց շատ ավելի ահօնի թիվը, ովքեր սպանվել են հյուպատոսների տեսադաշտից դուրս, քրիստոնյամերի՝ այսօր ավերված հազարավոր գյուղերում»⁹⁰⁷ (ընդգծումը հեղինակին է – Վ. Պ.):

Ժողովածուում հրապարակված այլ փաստաթղթերից ամենահետաքրքիրն ականատեսների վկայությունների հիման վրա՝ ուղղափառ եպիսկոպոսության անդամներից մեկի կազմած «Դամառության վիճակագրություն՝ ըստ ականատեսների հաղորդագրությունների» անստորագիր փաստաթուղթն է: Այստեղ արդեն մանրամասնորեն նկարագրվում են ոչ միայն Օսմանյան կայսրության տասնմեկ վիլայեթի գյուղերում տեղի ունեցած վայրագությունները, կանանց (այդ թվում հղի), նկատմամբ գործադրված սոսկալի բռնությունները, այլև քահանաների սպանությունները, եկեղեցիների և վանքերի պղծումն ու կողոպտումը»⁹⁰⁸:

«Դայկական նահատակություն» ժողովածուից բացի, հայր Շարմետանը, հավանաբար, 1897 թ., առանձին գրքույկով լույս է ընծայել ևս մեկ արժեքավոր փաստաթուղթ. խոսքը վերաբերում է արևմտահայերի՝ «Ռուսական տարածքում գտնվող Արարատի և Կովկասի մեր հայ Եղբայրներին» հետաձգության 15-ի թվակիր դիմումին: Դրան նա կցել է «Բեռլինի պայմանագիրը ստորագրած վեց մեծ տերությունների պետական դեկավարներին, վարչապետներին, դեսպաններին և նախարարներին» հետաձգության 15-ի թվակիր դիմումին: Դրան նա կցել է «Բեռլինի պայմանագիրը ստորագրած վեց մեծ տերությունների պետական դեկավարներին, վարչապետներին, դեսպաններին և նախարարներին» հետաձգության 15-ի թվակիր դիմումին: Դրան նա կցել է «Ամենքի կողմից լրված այս ժողովությին, որը ներկայումս բնաջնջվում է ոչ թե մեծ հեկատոմբերում, այլ կրելով՝ պատմության մեջ երես չարձանագրված ամենանողկալի, ամենասարսափելի տառապանքներ»⁹⁰⁹: Ինչ վերաբերում է Արևմտյան Դայաստանի բնակիչների կազմած փաստաթղթին, ապա դրանում մանրամասնորեն շարադրված են զանգվածային կոտորածներին հաջորդած ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում հայ բնակչության տեղում, էջ 4:

⁹⁰⁷ Նույն տեղում, էջ 4:
⁹⁰⁸ Նույն տեղում, էջ 46-70: Նշենք, որ ժողովածուում զետեղված են Արևմտյան Դայաստանում տիրող իրավիճակը ներկայացնող՝ հայկական ծագում ունեցող ևս չորս անստորագիր վավերագրեր: Նույն տեղում, էջ 71-80, 80-81, 82-93, 93-94: Մեզ հետաքրքրող, սակայն, հայր Շարմետանի մեկնարանություններն են:

⁹⁰⁹ Père Fleïjx Charnierant, L'Arménie agonisante et l'Europe chrétienne, p. 1-2. Այս փաստաթղթերը վերահրատակվել են նաև «Անալ կատողիկ» ամսագրում. «Annales catholiques», 28 avril 1897, N 1385, p. 521-529 ; 1^{er} mai 1897, N 1386, p. 17-28: Դայր Շարմետանի այս կոչը «Դրոշակն» անվանել է «սրտամնիկ»: Տե՛ս «Դրոշակ», 1899, թիվ 3, էջ 46:

չության հանդեպ դրսևորվող նոր վերաբերմունքի առանձնահատկությունները՝ անողոք հալածանքները, անհատական սպանությունները, տնտեսական կեղեցումը, կրոնափոխության պարտադրումը և այլն, որոնք հետապնդում են «հայ ազգի դանդաղ, սակայն հավաստի բնաջնջման» նպատակ⁹¹⁰.

Տարբեր առիթներով թուրքերին համեմատելով ամենավայրագ բարբարոսների հետ, ինչպիսիք էին Չինգիզ խանը, վանդալները, հոները՝ հայր Շարմետանը մատնանշում է այն եական զանազանությունները, որոնք առկա են նրանց և թուրքերի վարքագի միջև։ Ըստ նրա՝ եթե նախորդ դարաշրջաններում նարդկային հասարակության պատմության խաչմերուկներում քրիստոնյա ժողովուրդների հետ ունեցած շփումների ընթացքում իրենց արյունոտ հետքը թողած բարբարոսների հանցանքները պարբերական բնույթ չեն կրել, ապա թուրքերը «դարեր ի վեր մնացել են տարբեր քրիստոնյա ազգերի ազակ և վայրենի բռնակալները», որոնք քրիստոնյաների նկատմամբ կիրառում են Դոմետիանոսի և Ներոնի հայածանքները սաստկությամբ գերազանցող կատարի հալածանքներ՝⁹¹¹։

Դիմնավոր ծանոթությունը վերը նշված փաստաթղթերի հետ հայր Շարմետանին հնարավորություն է ընծեռել մասամբ ընկալելու հայերի նկատմամբ թուրքերի կիրառած քաղաքականության ոլորտում ի հայտ եկած փոփոխությունների գլխավոր իմաստը և ըստ այդմ՝ փաստել նրանց կողմից նոր նարտավարության որդեգրումն ու մեկնաբանել դրա հիմնական առանձնահատկությունը, որը հանգում էր ժողովորի ոչնչացման տարբեր միջոցների կիրառմանը։ «Քրիստոնյաներին իրենց կայսրությունում բնաջնջելու համար՝ նրանց այլևս չեն կոտորում զանգվածաբար, այլ աշխատում են ամայացված նահանգներում բարոյալքել քրիստոնյա կմոջը, որին, կոտորածների պահին, ավելի հաճախ խնայել են և ուրանալու դրդել հայկական ընտանիքների ու համատարած գյուղերի բնակչությանը»⁹¹²։

Մարտավարության այս փոփոխությանը, մեկ այլ առիթով, նա տալիս է սպառիչ մեկնաբանություն, պատճառաբանելով այն եվրոպական մեծ տերությունների՝ հնարավոր զինված միջամտության մտավախությամբ։ 1895-1896 թթ. Եվրոպական տարբեր երկրներում, մասնավորապես Ֆրանսիայում և Անգլիայում ուժգնորեն հնչում էին բողոքի ծայներ՝ կապված հայերի ոչնչացման հետ, ինչը չեր կարող

⁹¹⁰ Père Fleïjx Charmetant, L'Arménie agonisante et l'Europe chrétienne, p. 11.

⁹¹¹ Père Fleïjx Charmetant, Martyrologe arménien, p. 41, 42.

⁹¹² Նույն տեղում, էջ 42:

աննկատ մնալ Օսմանյան կայսրությունում: Ինչպես նշեցինք Վերը, Աբդուլ Համիդը նույնիսկ հարկադրված է եղել գրավոր պատասխանել Կլեմանտոյին: Հաշվի առնելով այս էական հանգամանքները՝ իրադարձությունների ընթացքին ուշիմ հետևող հայր Շարմետանը՝ ակնհայտ է, որ ոչ միայն նկատել է օսմանյան խորամանկ վարչակարգի քաղաքականության կրած փոփոխությունները, այլև ընթոնել ու հավուր պատշաճի մեկնարանել դրանց իրական իմաստը: «Թուրքերը հասկացել են,— գրում է նա,— որ այս սպանություններից Եվրոպան վերջապես սկսել է վրդովկել, և քանի որ նրանք այժմ երկյուղում են զինված միջամտությունից՝ փոխել են մարտավարությունը: Մեկ տարուց ի վեր, հատկապես ամենահեռավոր նահանգներում, նրանք ամենաահարկու և ամենաանողոք հալածանքների միջոցով որդեգրել են հայ ազգին տանջահարությամբ նահատակելու, քողարկված ձևով բնաջնջելու մեթոդները, որին երդվել են անհետացնել դանդաղորեն, բայց անվարան, դիմելով սակայն անհրաժեշտ գգուշությունների, որպեսզի Եվրոպային մեծ հուզմունք չպատճառեն»⁹¹³.

Նշված ժողովածուներում իրատարակված փաստաթղթերին հայր Շարմետանի տված մեկնարանությունները վկայում են Օսմանյան կայսրությունում 1890-ական թվականներին ծավալված ողբերգական իրադարձությունների վերլուծության հարցում նրա դիրքորոշման կրած էական փոփոխությունների մասին⁹¹⁴: Եթե մինչ այդ հայերի կոտորածները նա պայմանավորում էր բացառապես կրոնական առճակատումից բխող՝ մահմեդական մոլեռանդ բնակչության գործողություններով, ապա այժմ, վերստին մատնացույց անելով կրոնական մոլեռանդության և քրիստոնյա հայ ժողովրդի դեմ մահմեդականների ցուցաբերած մոլեգնության հանգամանքները, պարբերաբար ընդգծում է ջարդերի իրականացման հարցում օսմանյան իշխանությունների դերը, ցեղասպանության «կանխամտածված և նախապատրաստված» բնույթը⁹¹⁵: «Մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի,— գրում է նա,— մահմեդական միապետը, որին իր ոճիրները մարդկային հասարակությունից օտարելու են, կարծ ժամանակամի-

⁹¹³ Père Félix Charmetant, *L'Arménie agonisante et l'Europe chrétienne*, p. 4.

⁹¹⁴ Նշենք, որ նրա հայացքների բարեշրջումը կրել է շարունակական բնույթը. եթե 1895 թ., իր առաջին ելույթներից մեկում, նա դեռևս տուրք է տվել հայկական ապստամբության վարկածին, ապա արդեն 1896 թ. վերանայել է իր դիրքորոշումը. այդ մասին տես' E. Khayadjian, *Le mouvement arménophile en France*, p. 58:

⁹¹⁵ Père Félix Charmetant, *Martyrologe arménien*, p. 41.

ղոցում, հանիրավի դատապարտել է անհետացնան»⁹¹⁶: Բոլորովին այլ առիթով անդրադառնալով կայսրության տասնմեկ նահանգում օսմանյան իշխանությունների ներկայացուցիչների՝ հայկական կոտորածների հարցում ունեցած մասնակցությանը, նա նշում է, որ հենց նրանք են «քույլատրել քրիստոնյա բնակչության կոտորածը, եթե դրանք՝ նրանք իսկ չեն կազմակերպել»⁹¹⁷:

Թեև հայր Շարմետանի հայացքների համակարգում Դայոց ցեղասպանության մեկնաբանության հարցում կրոնական զանազանության հանգամանքի վճռորոշ նշանակությունը շարունակում է պահպանել գերիշխող դիրքեր, այդուհանդերձ, ակնհայտ է, որ նոր փաստաթղթերի հետ ծանոթության արդյունքում, նրա ուշադրությունը հավասարապես սևեռվել է նաև հայ ժողովրդի բնաջնջման ասպարեզում օսմանյան իշխանությունների դեկավար դերի վրա: Ի դեպ, բուրքերի մարտավարության փոփոխությունները ևս նա մեկնաբանում է պետական քաղաքականության հենքի վրա. «Այստեղ ևս, թվում է, թե գոյություն ունի մի ծրագիր, որին իշխանությունները հետևում են համաշափորեն՝ թե՝ քրիստոնյա կանանց բարոյալքելու և թե՝ հայերին իսլամ պարտադրելու համար»⁹¹⁸: Ընդհանուր առմամբ, նա արդեն հավաստում է, որ 1895-1896 թթ. «սարսափելի հեկատոմբերը» երևան են եկել «ըստ տրված հրամանի և ազդանշանի»⁹¹⁹:

Եզրափակելով իր մտորումները, հայր Շարմետանը հավաստում է, որ Թուրքիայում տեղի ունեցած սարսափելի ողբերգության արդյունքում՝ երեք ամսում քրիստոնյաների իսկական հեկատոմբերն ի հայտ են եկել ոչ թե անցողիկ, ծայրահեղ գրգռվածության հետևանքով, «այլ ներդաշնակ, խնամքով նախապարաստված և սառնասրտորեն կենսագործված ծրագրի հիման վրա»⁹²⁰: Ըստ այս ամենի՝ նա հանգում է միակ հնարավոր հետևության, այն է՝ ցեղասպանության սանձագերծման համար «սուլթանին ուղղակիորեն պատասխանատու ճանաչելու» անհրաժեշտությանը⁹²¹:

1897 թ. լույս ընծայված «Ղեղին գրքում» անփոփած դիվանագիտական գրագրությունների ուսումնասիրությունը մեծապես

⁹¹⁶ Père Félix Charmetant, L'Arménie agonisante et l'Europe chrétienne, p. 1.

⁹¹⁷ P[ère] Félix Charmetant, Martyrologe arménien, p. 96.

⁹¹⁸ Նույն տեղում, էջ 42:

⁹¹⁹ Père Félix Charmetant, L'Arménie agonisante et l'Europe chrétienne, p. 4.

⁹²⁰ P[ère] Félix Charmetant, Martyrologe arménien, p. 95-96.

⁹²¹ Նույն տեղում, էջ 96:

նպաստել է հայր Շարմետանի հայացքների հետագա բարեշրջմանը: Այդուհետև՝ նա Հայոց ցեղասպանության գործընթացին տվել է ավելի սպառիչ, քան մինչ այդ, մեկնաբանություններ՝ դրանք դիտելով իրու «մի ամբողջ ազգի կանխամտածված, անողոք և դիտավորյալ բնաջնջում, որը մոլեռանդ մահմեդականների միջոցով իրականացրել են թուրքական իշխանությունները, կանոնավոր բանակն ու կառավարության գործակալները, որոնք թվում են, թե պարտադրել են շատ ավելի արյունարորու՝ քան Զինգիդ խանները և Լենկ Թեմուրները միապետի՝ վաղուց ի վեր նախապատրաստած ծրագրի համաշխափ կենսագործումը»⁹²²: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ընդգծել, որ չնայած մեզ հետաքրքրող հարցում հայր Շարմետանի մտահորիցոնի ընդլայննանը և իրադարձությունների նկատմամբ շատ ավելի ընդգրկուն նոտեցման դրսնորմանը, նա, այդուհանդերձ, ամբողջությամբ չի ընթանել օսմանյան կառավարության հայացինց քաղաքականության գլխավոր պատճառը, որը հանգում էր արևմտահայության ոչնչացման միջոցով բռնագրավված հայկական պատմական տարածքների մաքրազարդմանն «ավելորդ» և «անհանգստություններ պատճառող» ժողովրդից:

Հարկ ենք իամարում հայր Շարմետանի հայացքների համակարգում առանձնացնել նաև ուշադրության արժանի մեկ այլ առանցքային՝ Եվրոպական մեծ տերությունների և, մասնավորապես Ֆրանսիայի ղեկավար շրջանակների քաղաքականության խարազանման հանգամանքը, որոնք, ինչպես նա նշում է, ոչ մի «պաշտոնական խոսք չեն ասել ի նպաստ զոհերի»: «Իբրև մարդ, իբրև ֆրանսիացի և իբրև քահանա, – հայտարարել է նա դեռևս իր առաջին ելույթներից մեկում, – ես դրա համար զգում եմ եռակի ամոթ»⁹²³:

Սանրամասն վերլուծելով համիդյան կոտորածների ընթացքում արևմտահայության հանդեպ Եվրոպական պետությունների գրաված անկարեկից և անտարբեր Վարքագիծը, հայր Շարմետանը չի վարենել զանազան առիթներով խստագույնս դատապարտել նրանց պարսավելի դիրքորոշումը: Ցեղասպանության «իրական մեղավորը», նրա կարծիքով, Եվրոպան է⁹²⁴, այն «քրիստոնյա Եվրոպան», որը թույլատրել է Հայաստանում 300000 քրիստոնյայի կոտորածը՝ ի նեպ, ինչպես նա մանրամասնում է՝ տարբեր վայրագ միջոցներով և

⁹²² F[élix] Charmant, *Le Livre jaune et la question d'Orient*, p. 3.

⁹²³ Conférences sur les massacres d'Arménie, p. 92.

⁹²⁴ P[ère] F[élix] Charmant, *Martyrologe arménien*, p. 96.

ամենասարսափելի խոշտանգումների պայմաններում⁹²⁵: Նա դառնությամբ է արձանագրում երեք տարի շարունակ, հայ ժողովրդի բնաջնջման ծրագրի կենսագործման ընթացքում, Բեռլինի պայմանագրի ներքո ստորագրած տերությունների անգործությունը, որոնք ոչ մի քայլ չեն ծեռնարկել կոտորածների ընթացքը կասեցնելու համար, իսկ փոխարենը՝ սահմանափակվել են բանակցություններ վարելով կամ անօգուտ սպառնալիքներով, որոնք թուրքիան չի բարեհածել նույնիսկ լրջորեն ընդունել⁹²⁶:

Դայր Շարմետանի ուշադրությունից չեն վրիպել նաև թուրքական դիվանագիտության խորամանն կերենայությունները: Ինչ վերաբերում է «Թուրքին», ապա նա ընդգծում է, որ Վերջինս դիվանագիտության ազպարեզում և ոչ մեկից չի երկյուղում. «Խուսափողական պատասխաններ տալու, հարցերի լուծումը հետաձգող բանաձների մշակման արվեստին նա տիրապետում է ամենաբարձր մակարդակով. նա սերեներելու արվեստի, անպտուղ քննարկումների վարպետ և ոչ մեկն ի վիճակի չէ, ավելի հմտորեն, քան նա, բանակցություններն ապարդյուն դարձնել և վճիռները հետաձգել ու իրեն ճնշող գործառնությունները ծախողելու համար անհրաժեշտ ժամանակ շահել»⁹²⁷:

Երբեք ազնիվ ֆրանսիացի՝ հայր Շարմետանը խիստ ազդվել է, մասնավորապես, Դայր ցեղասպանությանն ի տես՝ Երրորդ հանրապետության դեկավարների պահպանած լոռությունից: «Ղեղին գրքի» ընթերցումից հետո՝ նա այդ արիթով հայտնել է իր բուռն զայրույթը. «Դիրավի, մնում ենք ապշահար և վրդովված, որ ֆրանսիական կառավարությունը կարող էր նման փաստաթղթերը հրատարակելու համար սպասել չորս տարի, որոնց ընթացքում նա՝ Ֆրանսիան, խորհրդարանը, հասարակական կարծիքն անջրպետել է այս դարի ամենանշանակալից, ամենաահարկու և ամենաողբերգական անցքերից և դրանք պահել ամենակատարյալ անհրազեկության մեջ: Արդյո՞ք մենք ապրում ենք հանրապետական, թե կամայական վարչակարգի օրոք: Թվուն է, թե Լյուդովիկոս XIV-ը և Նապոլեոնը կվարանեին, այսչափ երկար ժամանակ, գաղտնի պահել նման կառորություն ունեցող փաստաթղթերը»⁹²⁸:

⁹²⁵ R[évérend] P[ère] F[élix] Charmetant, Livre d'or des martyrs de la Charité, p. IX.

⁹²⁶ F[élix] Charmetant, Le Livre jaune et la question d'Orient, p. 3.

⁹²⁷ Նույն տեղում:

⁹²⁸ Նույն տեղում, էջ 4:

Հայր Շարմետանն անողոք է, հատկապես, իր լռությամբ իրականությունը հասարակական կարծիքից թաքցնող ֆրանսիական մամուլի նկատմամբ, «ամենաքաջարի և ամենանարտնչող լրագրերի մեծամասնությանը» նա մեղադրում է հայկական կոտորածներին առնչվող հաղորդումները տպագրելուց հրաժարվելու և գրեթե կտարյալ լռություն պահպանելու մեջ⁹²⁹:

Փոխարենը, նա գովեստի խոսքեր ու ուղում եկեղեցու հասցեին, որը չի զլացել օգնության ծերո մեկնել զոհերին և իրեն քաջալերել է նրանց համար հանգանակությունների կազմակերպման միջոցով գումարներ հայթայթելու հարցում⁹³⁰, շեշտում է բազմաթիվ եպիսկոպոսների ցուցաբերած աջակցությունը⁹³¹: Նշենք նաև, որ չնայած օսմանյան կառավարության հարուցած խոչընդոտներին, ժողոված նյութական միջոցներն արևմտահայությանը բաշխվել են Կամբոնի միջոցով: Այս առիթով, նա 1896 թ. փետրվարի 5-ին գրել է Բերտելոյին: «Քանի որ Դուռը ընդդիմանում է Եվրոպացի բանագնացների միջոցով՝ զոհերի համար նախատեսված օգնության բաշխմանը,

⁹²⁹ Conférences sur les massacres d'Arménie, p. 92.

⁹³⁰ Այս կապակցությամբ հայր Շարմետանը նշել է: «Կոտորածների առաջին խկանակից մենք մեր գոստեմակմերում կազմակերպել ենք հասարակական հանգանակություն, որի շնորհիվ հազարավոր հայեր արդեն փրկվել են աներկրա մահից կամ հավատափոխությունց» (տե՛ս Rlévérend Pélerej Fleliix Charmetant, Livre d'or des martyrs de la Charité, p. IX): Այս հարցի կապակցությամբ տե՛ս նաև հայր Շարմետանի 1896 թ. ապրիլի 29-ի թվակիր նամակը «Անալ կատողիկ» ամսագրի տնօրնենին, որտեղ մանրամասն խսպում է հանգանակությունների ընթացքի մասին (La Question arménienne // «Annales catholiques», 9 mai 1896, N 1284, p. 82-83): Ի դեպ, թե՛ 1897 մայիսի 4-ին Փարիզի Գրության շուկայում բռնկված հրդեհի զոհերի հիշատակին նվիրված՝ վերոնշյալ գիրքը և թե՛ 1896 թ. Իրատարակած «Հայկական նահատակություն» խորագիրը կրող փաստարդերի ժողովածուն, նա վաճառքի է դուրս բերել հօգուտ հայկական կոտորածների զոհերի կազմակերպված հանգանակության:

⁹³¹ Conférences sur les massacres d'Arménie, p. 92-93. Այս առիթով արքա Պիգանին ևս, անդրադառնալով Ֆրանսիայում ծեռնարկված հայանապատ միջոցառումներին, 1896 թ. մայիսին հավաստել է: «Ննարավոր է դարձել ավելի քան 200000 ֆրանկ ուղարկել՝ հոգալու համար ամենահրատասապ կարիքները. սովոր և գրտահարությունց մահվան դուռը հասած այս դժբախտներին հաց և հազուստ է տրամադրութել»: Տե՛ս L'abbé P. Pisani, Les massacres d'Arménie. Conférence faite à l'Institut Catholique de Paris le 3 mai 1896, Paris, 1896, p. 22: Ըստ Միլիերի հայկաստման՝ հայր Շարմետանի ուղարկած գումարների շնորհիւ՝ 1898 թ. Տրավիզոնում հայերին հատկացվել է 40000 կիլոգրամ հաց. տե՛ս 1895. Massacres d'Arméniens. Alphonse Cilliére, consul de France à Trébizonde. Texte présenté par Gérard Dédéyan, Claire Mouradian et Yves Ternon, Toulouse, 2010, p. 174: Նկատենք, որ շնորհիվ հայր Շարմետանի ջանքերի՝ 1897 թ. սկզբին արևմտահայերին առարված գումարն արդեն հասել է 400000 ֆրանկի: Տե՛ս Pour les Arméniens // «Annales catholiques», 27 février 1897, N 1368, p. 509:

Արևելքի դպրոցների բարեգործական ընկերությունն իր գումարները և հագուստի արկղերը պետք է ուղարկի դեսպանատուն: Ես դրանք կառաքեմ իյուպատոսներին, որոնք բարեգործական ընկերության անունից և ըստ հ[այր] Շարմետանի ցուցումների՝ կապահովեն դրանց բաշխումը»⁹³²:

Դատկանշական է, որ ամենախիստ ձևով դատապարտելով ոչ միայն Արդուլ Շամիդի և Բարձր Դասն արյունորուշտ քաղաքականությունը, այլև նեծ տերությունների անտարեր Վարքագիծը, հանդիմանելով Եվրոպային, պատասխանատվության իր եական բաժինն ունեցող՝ «բարբարոս մահմեղականների համագործակցի վերածվելու», «հարյուր հազար հայի սպանությունը թույլատրելու» և այդ ողբերգության «իրական մեղավորը» դառնալու հարցում⁹³³, ինչպես և իր ժամանակի ֆրանսիացի մտավորականների գերակշռող մասը, հայր Շարմետանը ևս հանդես է եկել իբրև Օսմանյան կայսրության տարածքային անքողջականության պահպանման ջատագով՝ ֆրանսիական դիվանագիտության առջև ծառացած խնդիրը սահմանափակելով լոկ Արևմտյան Հայաստանում արմատական բարենորոգումների անցկացմանն ուղղված վճռական քայլերի իրականացմանը:

Ներ ավելին. ելնելով Ֆրանսիայի ռազմավարական շահերից, ինչպես նաև Եվրոպայում ուժերի հավասարակշռությունն անսասան պահպանելու մտադրությամբ՝ հայր Շարմետանը համառել է, որ թուրքերի գործադրած բռնություններից հայերին սատարելու հետ մեկտեղ Ֆրանսիան պարտավոր է միաժամանակ հանդես գալ թուրքերի հովանավորի դերում՝ դիմակայելով Օսմանյան կայսրության նկատմամբ Եվրոպական տերությունների ոտնձգություններին⁹³⁴: Նման դիրքորոշումը միանգաման հասկանալի է, քանզի Օսմանյան կայսրության տրոհումը, որը կարող էր հանգեցնել Եվրոպական տերություններից մեկի դիրքերի շեշտակի ամրապնդմանը Փօքր Ասիայում, անհարի էր Ֆրանսիայի ավանդական արտաքին քաղաքականության շահերին:

Թերևս հենց այս պատճառով է հայր Շարմետանը, չնայած Հայկական հարցում իր պետության ղեկավար շրջանակների ցուցաբերած կրավորական դիրքորոշման անողոք քննադատությանը, այ-

⁹³² Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, p. 213-214.

⁹³³ Pjeleri Fjeli x Charmetant, Martyrologe arménien, p. 96.

⁹³⁴ Fjeli x Charmetant, Le Livre jaune et la question d'Orient, p. 8, 13, 14.

նուամենայնիվ, ձեռնպահ է մնացել այս տիսուր փաստի իրական պատճառների մեկնաբանությունից, դեռևս նույնիսկ չգիտակցելով նման քաղաքականության էության բացահայտման անհրաժեշտությունը:

Դայոց ցեղասպանությանը Ֆրանսիայում իրապարակայնացում տալու ասպարեզում հայր Շարմետանն ունի ևս մեկ արժանիք, որն իրավասու չենք անտեսել: Ինչպես վերը նշեցինք, նա ի սկզբանն վճռական քայլեր է ձեռնարկել Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող արևմտահայության բնաջնջման գործընթացի շուրջ ֆրանսիացի մտավորականներին հավաստի տեղեկություններ հաղորդելու միջոցով նրանց դրդելու գորավիճ լինել նահատակվող հայ ժողովրդին:

Ինչպես տեսնում ենք մեծ է հայ ժողովրդի բարեկամ հայր Ֆելիքս Շարմետանի լուսան 1890-ական թվականներին սանձազերծված հայկական կոտորածների անկողմնակալ պատկերը ֆրանսիական և Եվրոպական հասարակությանը ներկայացնելու գործում⁹³⁵: Նրա թեև համեստ, բայց գործնական ջանքերի շնորհիկ կործանումից, հիրավի, փրկվել են մեծաքանակ արևմտահայեր: Ուստի ամփոփելով, ցանկանում ենք մեր կատարյալ համաձայնությունը հայտնել Բարոյական գիտությունների ակադեմիայի անդամ Անատոլ Լեռուա-Բոլիոյի հետ, որը հավուր պատշաճի արժենորել է հայր Շարմետանի բազմաբնույթ գործունեության նշանակությունը. «Թե՛ այս փաստաթղթերը իրապարակելով և թե՛ ասիական բարբառոսության զոհերի օգտին արշավ ծեռնարկելով, հայր Շարմետանը, Արևելքի դպրոցների բարեգործական ընկերությունը, մեր միսիոներներն առհասարակ, կարևոր ծառայություն են մատուցել ոչ միայն Դայաստանի քոհստոնյաներին, այլև Եվրոպային, Ֆրանսիային, քաղաքակրթությանը»⁹³⁶:

Դայր Շարմետանը, սակայն, կաթոլիկ եկեղեցու միակ նվիրյալը չէր, որը ջանքեր է գործադրել հանուն հայ ժողովրդի փրկության: Բացի նրանից, արևմտահայության իրավունքների պաշտպանությամբ XIX դարի 90-ական թթ. հանդես է եկել նաև պատմաբան-

⁹³⁵ Նշենք, որ Ս. Իզմիրլյանը 1896 թ. ապրիլի 19-ի (մայիսի 1-ի) թվակիր նամակով դիմել է հայր Շարմետանին և իր խորին երախտագիտությունը հայտնել նրան՝ «Հայկական նահատակություն» խորագորվ փաստաթղթերի ժողովածուի լուս ընծայման կապակցությամբ: Նախակի բնագիրը տե՛ս Վ. Պողոսեան, Ֆրանսիացի հայաստ գործիները՝ Սատրեն Իզմիրլեանի գնահատմանը, էջ 499-502:

⁹³⁶ Les Arméniens et la Question arménienne. Conférence faite par M. Anatole Leroy-Beaulieu, membre de l'Institut à l'Hôtel des Sociétés savantes le 9 juin 1896, p. 30.

Ներին նվազ հայտնի մեկ այլ հոգևոր գործիչ՝ աբբա Պիզանին, որի հայանպաստ, սակայն, շատ ավելի համեստ, քան նախորդի գործունեությունը շրջանցվել է լրությամբ:

Ի դեպ, ամենայն քաղաքական կողմնորոշման և իրադարձություններին տված՝ երբեմն անընդունելի գնահատականների հանգամանքներից, Պիզանին այն սակավաթիվ ֆրանսիացի ժամանակակիցներից է (Ֆ. որ Պրեսանսե, հայր Շարմետան և ուրիշներ), որոնք կործանման դատապարտված արևմտահայության ճակատագրի հանդեպ ի սկզբանե դրսեորել են անքաջուց մտահոգություն, մասնակցել Ֆրանսիայում Հայոց ցեղասպանությանը նվիրված հրապարակային դասախոսություններին⁹³⁷, համիլյան կոտորածներին առնչվող, առաջին իսկ, դեռևս ոչ լիարժեք տեղեկությունները ստանալուն և արծագանքել Օսմանյան կայսրությունուն ժակարված անցքերին:

Արևմտահայության ճակատագրին նվիրված աբբա Պիզանիի առաջին հոդվածը լույս է ընծայվել 1895 թ.⁹³⁸, երբ Եվրոպայում դեռևս որևէ հստակ պատկերացում չունեին Օսմանյան կայսրությունուն տեղի ունեցող իրադարձությունների մասին: Դիմնվելով մատչելի, սակայն հաճախ անսույց և նույնիսկ հակասական տեղեկությունների վրա, Պիզանին փորձում է բացահայտել օսմանյան լծի տակ հեծող արևմտահայերի ծանր կացության պատճառները և հպանցիկ ուրվագծել 1894-1895 թթ. տեղի ունեցած եղելությունների համառոտ պատկերը:

Հայկական հարցի նկատմամբ իր հետաքրքրությունն առաջ բերած դրդապատճառների առիթով Պիզանին նշում է. «Նենց նոր դժգոհության մի ալիք սահեց Եվրոպայի Վրայով և քաղաքակիրք ազգերն իրագեկ դարձան բարբարոսական, վայրագ արարթների: Հազարավոր քրիստոնյաներ հեծում են գարշելի լծի տակ: Կքված հարկերից, ամենասարսափելի թշվառության եզրին հասած՝ նրանց ապարդյուն դիմում են դատարաններին, ուր նիստեր են գումարում նրանց ամենասիսերիմ թշնամիները: Նրանց, այսպիսով, մնում է լրել իրենց նախնիների հողը և բռնել տարագրության թախծոտ ճանապարհը, որը լի է այն մարդկանց դիակներով, որոնք սովոր ու վատքար վերաբերմունքից կնքում են իրենց մահկանացուն»⁹³⁹:

⁹³⁷ Նույն տեղում, էջ 2:

⁹³⁸ P. Pisani, Les affaires d'Arménie, Paris, 1895.

⁹³⁹ Նույն տեղում, էջ 5:

Դամառոտակի հիշատակելով այն բևեռային տեսակետների մասին, որոնց տեղիք է տվել Օսմանյան կայսրությունն ալեկոծած իրադարձությունների ընարկումը Եվրոպացի ժամանակակիցների շրջանում, Պիզանին, հավանաբար, գիտակցելով, որ տիրապետում է սահմանափակ տեղեկությունների, իր հիմնական խնդիրն է հաճարում «հնարավորության սահմաններում ճշմարտության առնվազն մի մասի բացահայտումը և այդ հարցի կարևորության արժենորումը հավուր պատշաճի»⁹⁴⁰: Ուստի Օսմանյան կայսրությունում առկա իրավիճակը հիմնավորապես ընթանելու մտադրությամբ, հեղինակը գերադասում է նախ Վերլուծել հայ ժողովորի անցած ուղու հիմնական դրվագները մինչ Դայկական հարցի ծագումը 1878 թ.: Պիզանին ուշադրությունը գլխավորապես կենտրոնացնում է հայ ժողովորի կյանքում հավատքի և եկեղեցու դերի վրա, որը պայմանավորված է նրա՝ իբրև հոգևորականի աշխարհընկալման յուրահատկություններով:

Ի շարս այն հիմնահարցերի, որոնք նա ենթարկել է մանրազնին քննության, առանձնացնենք, մասնավորապես, ժողովրդագրական գործոնը: Այս հարցում, ցավոք, սահմանափակվելով սոսկ ֆրանսիացի պատմաբան Վ. Բինեի՝ կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների թվաքանակին վերաբերվող անստույգ տվյալներով, նա հանգում է իրականությանն ամենակին չհամապատասխանող եզրակացությունների: Դուրս կարգացնելու հաշվարկները, որն իր հերթին այդ տվյալները քաղել էր հայ բնակչության թվաքանակը կեղծող թուրքական սկզբնադրյուրմերից («սալմամեներ»), Պիզանին պնդում է, որ Փօքր Ասիայում հայերը կազմում էին բնակչության նվազագույն մասը, քանզի նրանց թիվը՝ 13500000-ի հասնող բնակչության ընդհանուր թվում հասնում էր 1250000-ի: «Ոչ մի տեղ, գրում է նա, – քրիստոնյաների մեծամասնության չենք հանդիպում: Կանի վիլայեթի հյուսիսում, ինչպես նաև Աղանայի վիլայեթի որոշ տարածաշրջաններում նրանց և սահմեդականների թվաքանակը հավասար է: Ինչ վերաբերում է հայերին, ապա Բիթլիսի վիլայեթում նրանք կազմում են բնակչության մեկ երրորդը, իսկ Աղանայի վիլայեթում՝ մեկ քառորդը»⁹⁴¹: Դեռ ավելին, ըստ հեղինակի՝ 1865-1878 թթ. հայկական բոլոր տարածքներում ապրող 2500000 բնակչից միայն 500000-ն էին հայեր: Դիմնվելով այս թյուր տվյալների վրա, աբբա Պիզանին հանգում է իրականության հետ առնչություն

⁹⁴⁰ Նույն տեղում, էջ 6:

⁹⁴¹ Նույն տեղում, էջ 19:

չունեցող եզրակացության, ըստ որի՝ հայերը կազմում էին փոքրա-
մասնություն ոչ միայն Օսմանյան կայսրությունում, այլև «բոլոր
վիլայեթներում և գրեթե բոլոր մարզերում» բնակվող քրիստոնյա
ժողովուրդների թվում⁹⁴²:

«Անհանգստություններ պատճառող» այս փոքրամասնությունը,
սակայն, ինչպես նա նշում է, «ձգտում է անկախության», ինչը
սպառնալից է թե՝ մահմեդականների և թե՝ քրիստոնյաների հա-
մար⁹⁴³: Դարկ է մեկնարանել, որ այս հարցում հեղինակը տուրք է
տվել անհարկի չափազանցությունների, քանզի քննարկվող ժամա-
նակաշրջանում հայերին վերագրվող «անկախության ձգտումը» չի
հանապատասխանում իրականությանը: Իսկ ինչ վերաբերում է հայ-
կական պատճական տարածքներում բնակվող քրիստոնյաներին՝
հայերից սպառնացող կարծեցյալ վտանգին, Պիզանին առանց
պարզաբանումների՝ վերացականորեն հիշատակում է այն տարա-
ծայնությունների մասին, որոնք ի հայտ էին եկել Լևանտի քրիս-
տոնյանների (մասնավորապես, հայերի ու հույնների) կրօնական դա-
վանանքների միջև առկա զանազանությունների հետևանքով: Արդ-
յունքում՝ խնդրո առարկա հարցի մանրամասների վերլուծությունից
ծեռնպահ մնացող հեղինակի՝ քրիստոնյաների համար սպառնալիք
ներկայացնող՝ հայերի ձգտումներին վերաբերող հայտարարությու-
նը մնում է ծայն բարբառո անապատի: Փոխարենը, նա մանրա-
մասնորեն քննարկում է (և դա նրա մոտեցման առավելությունն է),
օսմանյան կառավարության քաղաքականության այլայլ ելաջններն
ազգամիջյան փոխհարաբերությունների կարգավորման ասպարե-

⁹⁴² Նույն տեղում: Ինչպես արդեն վերը նշեցինք, 1860-1870-ական թթ.
Օսմանյան կայսրությունում բնակվում էր շուրջ 3000000 հայ, որից 2000000-ը՝
Արևմտյան Հայաստանում: Ի դեպ, Քինեկ տվյալներն անընդունելի են համարում նաև
Ժամանակակից ամերիկայի պատմաբան Ս. Ա. Քարայանը, որն Արևմտյան
Հայաստանի տարբեր նահանգների բնակչության բվաքանակի շուրջ կատարելով
անհրաժեշտ ճշգրտումներ՝ նշում է. «Քինեկ քառահատոր «Ասիական Թուրքիան»
աշխատությունը չի կարող դիտվել իրեն արժանահավատ տեղեկատվական
սկզբնաղբյուր՝ Ասիական Թուրքիայի կենտրոնական և արևելյան վիլայեթներում
եղած հայ բնակչության համար: Այս չի կարող դիտվել նաև իրեն ընդհանուր
տեղեկատվական բնույթի արժանահավատ սկզբնաղբյուր Արևելյան Թուրքիայի
(հայվանարար, Ակատի ունի Արևմտյան Հայաստանը – Վ. Դ.) հայերի համար 1880-
ական թթ.»:Տե՛ս S. A. Karayan, Vital Cuinet's La Turquie d'Asie: A Critical Evaluation of
Cuinet's Information about Armenians // "Journal of the Society for Armenian Studies", 2000,
vol. 11, p. 62: Այդ մասին տե՛ս նաև Յ. Գ. Գալստյան, Արևմտյան Հայաստանի
բնակչության կազմը ըստ Վիտալ Քինեկի վիճակագրության.- Սերծավոր և Միջին
Արևելյան երկրներ և ժողովուրդներ, հ. XII, Թուրքիա, Երևան, 1985, էջ 59-79:

⁹⁴³ P. Pisani, Աշվ. աշխ., էջ 19:

զում, բացահայտում, նաև անվճռական դիրքորոշումը՝ ծայր առաջ ընթառական գործությունները ճնշելու, վայրագությունները կանխելու և դրանց մեղավորներին պատժելու հարցում:

Պիզանիի համոզմամբ թուրքն անփույթ է և «գերադասում է հանդուրժել անկարգությունները, քան դրանք կանխել, ժխտում է վտանգի առկայությունը, որպեսզի այն վերացնելու հարկը չունենա... և անտարբեր է այն ամենի հանդեպ, ինչ տեղի է ունենում իր շուրջը»⁹⁴⁴: Ըստ նրա՝ թուրքերի թույլ տված զանցանքը հանգում է նախ և առաջ թողտվության, ինչի հետևանքով տեղի են ունեցել մեծ ապօրինություններ, որոնք կանխարգելելու համար ոչինչ չի ձեռնարկվել⁹⁴⁵:

Բացի դրանից, Պիզանին հմտությամբ բացահայտում է նաև քրիստոնյաների նկատմամբ թուրքերի մեջ արմատացած ատելության ակունքները. «Քրիստոնյաների հանդեպ նա (թուրքը – Վ. Պ.) տածում է զլխավորապես ատելություն, որովհետև օրինակելի մահմեղական է, սակայն այդ ատելությունը, կարծեք, պարուրված է արհամարհանքով»⁹⁴⁶: Վկայակոչելով պատմության քառութիներում արձանագրված անառարկելի փաստեր, Պիզանին շեշտում է քրիստոնյաների ծայրաստիճան անապահովությունն Օսմանյան կայսությունում, ուր նրանց ֆիզիկական գոյության համար չկային նվազագույն երաշխիքներ: Թուրքերն, ըստ նրա, ընդունակ են «կողոպտչական գործողությունները պատժելու հարցում՝ զայրույթ հարուցող դանդաղկոտություն ցուցաբերելու, մեղմ և երբեմն անքավարար ճնշումներ գործադրելու, մեղավորներին հապճեպ ներում շնորհելու, երբ այդ մեղավորները մահմեղականներ են, իսկ զոհերը՝ քրիստոնյաներ, կեղեքվողների ամենաարդար պահանջների նկատմամբ խորին արհամարհանքով վերաբերվելու՝ երբ այդ կեղեքվողները քրիստոնյաներ են, իսկ կեղեքիչները՝ մահմեղականներ»⁹⁴⁷: Ինչպես տեսնում ենք, Պիզանին հաջողվել է ընկալել թուրքերին բնորոշ մի շարք էական հատկանիշներ:

Այդուհանդերձ, անդրադառնալով կայսրության տարածքում քրդերի գործողություններին, աբբա Պիզանին, ելնելով իր համոզմունքներից, առաջադրում է վիճակարույց մեկնաբանություններ. «Միանգամայն գուր են նրանց մեզ ներկայացնում իբրև սուլթանի

⁹⁴⁴ Նույն տեղում, էջ 20:

⁹⁴⁵ Նույն տեղում, էջ 21:

⁹⁴⁶ Նույն տեղում, էջ 20-21:

⁹⁴⁷ Նույն տեղում, էջ 22:

Վրիժառություններն իրականացնող գաղտնի գործակալների: Արդյոք թուրքերը երբեւ հրամաններ են տվել քրդերին: Դա խիստ կասկածելի է թվում, քանզի չկա այնպիսի ազգություն, որն ավելի տենչա անկախության»⁹⁴⁸: Խուսափելով ամբողջ քուրդ ժողովողի վրա նման մեղադրանք քարդելու պատասխանատվությունից, նշենք, այնուամենայնիվ, որ Պիզանիի՝ այս հարցում որդեգրած դիրքորոշումն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է Օսմանյան կայսրությունում ընթացքի մեջ գտնվող իրադարձություններին անբավարար իրազեկությամբ: Նա, հավանաբար, դեռևս անտեղյակ է եղել 1891 թ. Արդուլ Շամիդ II-ի կազմավորած՝ համիդիե անունը կրող պատժի զորամիավորումների գոյությանը, որոնք համարվում էին գլխավորապես քրդերից:

Ծրջանցելով 1878 թ. ի վեր Շայկական հարցի գոյությունը, Պիզանին, այնուամենայնիվ, անուղղակիորեն անդրադառնում է թե՛ դրա նախապատմության հիմնական դրվագներին և թե՛ ծագման փուլերին: Թերևս հստակ պատկերացում իսկ չունենալով այդ հարցի եղության, անգամ գոյության նաև նա, դրան առնչվող հանգամանքների պարզաբանման խնդրում ցուցաբերում է հախոււն մոտեցում: Շայկական հարցի վերհանման հենքում կարելի է տեղադրել սուլթան Արդուլ Մեջիդի՝ 1839 և 1856 թթ. օսմանահպատակներին ձևական ազատություններ շնորհած հրովարտակների քննությունը, թեպետ հեղինակը դրանք չի դիտում իբրև հարցի ծագման նախադրյալներ: 1839 թ. Գյուլհանեի հաթթը-շերիֆով «[Բարձր] Դոան ազդարարած, անկախ կրոնական զանազանությունից, բոլոր հպատակների՝ օրենքի առջև հավասարության սկզբունքը», Պիզանին իրավամբ համարում է ձևական: 1856 թ. հաթթ-հումայունին տված նրա գնահատականը և ընդունելի է, քանզի նա գտնում է, որ այն պարունակել է միայն սին խոստումներ, իսկ դրանում արձանագրված կրոնական հավասարությունը մնացել է թոթի վրա⁹⁴⁹:

Պիզանիի հետագա շարադրանքը պարզողող վկայում է, որ նա չի ընթանել այն նրբությունները, որոնք ժամանակի թելադրանքով՝ մեծ տերությունների դիվանագիտական մեջենայությունների հետևանքով, ծնունդ են տվել Շայկական հարցին: Շղելով, դիցուք, Սան-Ստեֆանոյի և Բեղլինի վեհաժողովի պայմանագրերի՝ Արևմտյան Շայաստանին առնչվող հոդվածները, նա, որքան տարօրինակ է, անտեսում է դրանցում արձանագրված այն եական զանազա-

⁹⁴⁸ Նույն տեղում, էջ 23:

⁹⁴⁹ Նույն տեղում, էջ 24:

նությունը, որը կապված է արևմտահայության հանդեպ՝ Բարձր Դուռը պարտադրվող պարտավորությունների ի կատար ածման հարցում վերջինիս ստանձնած պատասխանատվության հետ (Եթե առաջինը նախատեսում էր Բարձր Դուռն հաշվետվությունը միայն Ռուսաստանի առջև, ապա երկրորդը՝ բարենորդումների իրականացման հարցում սահմանում էր մեծ տերությունների վերահսկողությունը):

Նման պայմաններում, առավել ևս, Եթե նկատի ունենանք իրադարձությունների լուսաբանման նրա որդեգրած մեկնակետը, միանգամայն օրինաչափ է, որ Պիզանին Բարձր Դուռ՝ ստանձնած պարտավորություններին ընթացք տալուց ձեռնպահ մնալը մեկնաբանում է սոսկ կրոնական հողի վրա խարսխված շարժառիթներով. «Մահմեդականների և քրիստոնյանների իրավահավասարությունն անհամատեղելի է մահմեդական կրոնական օրենքի հետ, որի վրա խոյանում է Թուրքիայի ամբողջ սոցիալական կառույցը», – եզրակացնում է նա⁹⁵⁰:

Վերը նշված իրողությունը, ինչպես իրավամբ նշում է Պիզանին, վերջնականապես հուսախաբում է հայերին, և դրդում նրանց ապստամբական գործողությունների: 1890-ական թվականների սկզբին հայ-թուրքական ընդհարություններն էրգորումում և Կոստանդնուպոլսում⁹⁵¹ նա քննարկում է ազգային կուսակցությունների գործունեության հենքի վրա: Այս իրադարձությունների շուրջ ունենալով, սակայն, հակասական տեղեկություններ, նա ցավով արձանագրում է. «Ո՞վ երեւ հասու կլինի ծշնարությանը, երբ այդչափ անձինք շահագրգուված են այն շղարշելու հարցում»⁹⁵²:

1894 թ. հուլիսին Սասունում տեղի ունեցած «նշանավոր կոտորածներին»՝ վերստին ստույգ տեղեկությունների սակավության պատճառով, Պիզանիի տված մեկնաբանություններն աղոտ են ու մակերեսային: Անտեսելով հայերի ընթոսության իրական պատճառները՝ նա նրանց ընդգրումը պայմանավորում է սոսկ Հանքարձում Պոյաճյանի ծավալած նախապատրաստական աշխատանքով:

⁹⁵⁰ Նույն տեղում:

⁹⁵¹ Կոստանդնուպոլսում տեղի ունեցած իրադարձությունների մասին մանրամասն տես 3. Գ. Վարդանյան, Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները XIX դ. վերջին քառորդում, Երևան, 1967, էջ 184-187; Ս. Ս. Մարկոսյան, Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Երևան, 1968, էջ 172-177; Է. Ա. Կոստանդյան, Գում Գափուի ցույցը (100-ամյակի առիվ). – «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, թիվ 8, էջ 67-79:

⁹⁵² P. Pisani, նշվ. աշխ., էջ 26:

Ինչ վերաբերում է կոտորածներին հաջորդած՝ Եվրոպական տերությունների լիազոր ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի հետաքննությանը, ապա Պիզանին դրա արդյունքները բնութագրում է իբրև «մշուշապատ» և այդ իրողությունը պայմանավորում թե՛ հանձնաժողովի անդամների նոտեցումների զանազանությամբ և թե՛ «որոշ թուրք պաշտոնյաների անկեղծության բացակայությամբ»⁹⁵³.

Ակնհայտ է, որ հեղինակը կամ դեռևս ամբողջական պատկերացումներ չի ունեցել Օսմանյան կայսրության տարածքում աստիճանաբար թափ ստացող հայկական կոտորածների մասին, կամ գիտակցաբար շրջանցել է դրանց վերաբերող հավաստի տեղեկությունները: Անկախ այս հանգամանքից, Պիզանիին, անշուշտ, հաջողվել է լուծել իր առջև դրված հիմնական խնդիրը, այն է՛ բացահայտել «Ճշմարտության առնվազն մի մասը», քրիստոնյաների և, մասնավորապես հայերի նկատմամբ թուրքերի դրսնորված վերաբերմունքի կտրվածքով:

Սշենք նաև, որ Պիզանիի հաճախ մակերեսային, անգամ իրականությանը չհամապատասխանող նեկնաբանությունները չեն վրիպել ֆրանսիացի ժամանակակիցների ուշադրությունից: Մեկ տարի անց, բարոն Կարա դը Վոն, համիլյան կոտորածներին նվիրված իր հրապարակային դասախոսությունում, որին անդրադարձանք վերը, տվել է նրա հոդվածի հետևյալ դիպուկ գնահատականը. «Պ[արոն] Պիզանին Դայաստանի գործերի մասին խոսում է խորին իմացությամբ: Սակայն նրա հոդվածի ընդհանուր տոնը, որը ներծծված էր այն ժամանակ դեռևս տիրապետող կասկածամտությամբ, հանրահայտ ճշմարտության առջև այսօր թվում է դժմի»⁹⁵⁴:

Այս հարցի կապակցությամբ որոշ պարզաբանումներ է տվել նաև անձանք Պիզանին՝ 1896 թ. մայիսի 3-ին, Փարիզի Կաթոլիկական ինստիտուտում կայացած՝ հայկական կոտորածներին նվիրված իր հրապարակային դասախոսությունում. «Էրադարձությունները... ինչպես ինձ թվում է, ես ներկայացրել եմ անկողմնակալորեն, Արևելքի գործերին՝ իմ իրազեկությունից քիսող թերահավատությամբ: Ինձ հանդիմանել են պարտվածների նկատմամբ դժմի, զոհերի հանդեպ անողոք լինելու համար, սակայն մոռացել են, որ այն պահին, երբ ես գրում էի, զոհերը միայն այն անզգույշ անձինց էին,

⁹⁵³ Նույն տեղում, էջ 28:

⁹⁵⁴ Les massacres d'Arménie. Conférence faite au salon Bibliographique le 9 mars 1896.

որոնք հրահրել էին դաժան բռնությունները: Ես կանխազգում էի, որ ամեն ինչ չէ, որ ավարտին է հասել, որ գրգռելով քնած վագրին, նրան կմղենք սարսափազդու զարրոնքի (ընդգծումը մերն է – Վ. Պ.), բայց ոչ մեկն այդ ժամանակաշրջանուն չէր կարող ենթադրել քրիստոնյա ազգի դեմ հյուսված զազեռի դավադրության մասին»⁹⁵⁵: Դեղինակի այս խոստովանության լույսի ներքո, կարելի է ենթադրել, որ 1895 թ. նա ոչ միայն ամբողջությամբ չի պատկերացրել քննարկվող հարցի եռությունը, այլև միաժամանակ, հավանաբար, գիտակցաբար լրություն է պահպանել նույնիսկ իրեն արդեն հայտնի որոշ արյունալի անցքերի շուրջ՝ դրանց սաստկացմանը չնպաստելու մտադրությամբ:

Իրադարձությունների սրընթաց զարգացումը, Դայոց ցեղասպանության գործընթացի ծավալուն ու դրա արձագանքները Ֆրանսիայում, զարկ են տվել Դայկական հարցի հանդեպ աբբա Պիզանիի հետաքրքրության աճին, իսկ ջարդերի անկողմնակալ պատկերն արտացոլող փաստաթղթերի որոշ հրապարակումներն օժանդակել նրա իրազեկության ընդլայնմանը և նրան մոտել համիլոյան կոստորածների անսքող պատկերը, մատչելի սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորության շրջանակներուն, ներկայացնելու ավելի լայն հենքի վրա: Այդ մասին է վկայում արդեն հիշատակված նրա հրապարակային դասախոսությունը, որը զգալիորեն տարբերվում է նախորդ հողվածից, քանզի ծանոթությունը 1896 թ. հայր Շարմետանի հրատարակած «Դայկական նահատակություն» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուում⁹⁵⁶ զետեղված՝ ֆրանսիական և հայկական ծագում ունեցող վավերագրերի հետ, մեծապես նպաստել է կոտորածների չափերի ու զոհերի քանակի շուրջ նրա պատկերացումների հստակեցմանը:

Աբբա Պիզանին Դայկական հարցը, որի գոյությունն, ի դեպ, արդեն ընդունում է, քննարկում է Օսմանյան կայսրության տարածքում և նրա սահմաններից դրւս տեղի ունեցած զանազան անցքերի լայն ետնախորքի վրա, բազմիցս մատնանշում Դունաստամում, Լիքանանում, Բուլղարիայում տեղի ունեցած քրիստոնյա ժողովուրդների կոտորածները: Դա, անկասկած, նրա դիրքորոշման կրած փոփոխության հետևանքն է: Այդուհանդեմ, նա շարունակում է իրադարձությունները մեկնաբանել խիստ սահմանափակ տեսանկյունից

⁹⁵⁵ L'abbé P. Pisani, Les massacres d'Arménie. Conférence faite à l'Institut Catholique de Paris le 3 mai 1896, p. 15.

⁹⁵⁶ Père J. Félix Charmetant, Martyrologe arménien.

և հավաստում է, որ դրանք ծնունդ են առել բացառապես կրոնական առճակատման հնոցում:

Օսմանյան իշխանությունների՝ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ գործադրած բռնությունները, տնտեսական կեղեցունը, կայսրության տարածքում նրանց համար արդարադատության բացակայությունը նա քննարկում է միմիայն քրիստոնյաների և մահմեդականների դավանանքների միջև առկա տարրեղության, «անհավատների» հանդեպ թուրքերի անհանդուրժողականության հենքի վրա: «Խալանի պատմությունը երկարատև նահատակության պատմություն է, որի ընթացքում արյունոտ տառերով միմյանց են շաղկապվել այն բոլոր քրիստոնյա ժողովուրդների անունները, որոնք կը ված են մահմեդականների տիրապետության տակ», – գրում է նա⁹⁵⁷:

Ի շարս օսմանյան լծի տակ հեծող քրիստոնյաների՝ աբբա Պիգանին առանձնացնում է հայերին, որոնց և այլ ժողովուրդների ճակատագրերի միջև համեմատության իսկ եզրեր չի նշմարում. «Ղեռևս ստրկության մեջ գտնվող քրիստոնյա ազգերի թվում, չկա այնպիսինը, որի ճակատագրը համեմատելի լինի հայերի ճակատագրի հետ», – նշում է նա⁹⁵⁸:

Դպրանցիկ հայացք նետելով հայ ժողովորդի պատմական զարգացման առանձնահատկությունների վրա, նա մատնանշում է, մասնավորապես, վաղուց ի վեր Դայաստանի անկախության կորուստը և փորձում վերլուծել այն պատճառները, որոնք XIX դարի վերջին խոչընդոտում էին հայերին ծեռք բերել բաղաձայի ազատագրումն օսմանյան լժից: Այս հարցում ևս աբբա Պիգանին գերադասում է նախապատվությունն անվերապահորեն հատկացնել կրոնական գործոնին. ըստ նրա՝ դեռևս V դարում հայերը խզել են կրոնական բոլոր առնչությունները կաթոլիկություն դավանող ժողովուրդների հետ և հենց «այդ կրոնական մեկուսացումը մեծապես նպաստել է քրիստոնեական տերությունների միջամտության հետաձգմանը»⁹⁵⁹: Ակնհայտ է, որ աշխարհայացքի սահմանափակության հետևանքով՝ մեծ տերությունների՝ Դայկական հարցում գրաված պասիվ դիրքորոշումը նա մեկնարանում է իրականության հետ հեռավոր առնչություն չունեցող հանգամանքով, անտեսելով դրա իրական պատճա-

⁹⁵⁷ L'abbé P. Pisani, *Les massacres d'Arménie*, p. 5.

⁹⁵⁸ Նույն տեղում, էջ 8:

⁹⁵⁹ Նույն տեղում, էջ 9:

ո՛ը, այն է՝ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանումը:

Դերթական անգամ Պիզանին փոքր-իսկ տարակուսանք չի հայտնում 1839 և 1856 թթ. հայերին շնորհված հրովարտակներով նախատեսված, սակայն, «երբեք անկեղծորեն հավանության չարժանացած» արտոնությունների չկենսագործման հարցում: Նրա կարծիքով, այլ կերպ չեր կարող լինել «մի ժողովրդի մոտ, որն իրեն գերազույն օրենք ընդունում է Դուրանք: Մահմեդականի համար, – շարունակում է նա, – մարդկային հասարակությունը բաժանված է երկու մասի՝ հավատացյալների և անհավատների. որևէ հավասարություն այս երկու կատեգորիայի միջև հավասարագոր է սրբազնության և անհեթերություն է»⁹⁶⁰:

Բացի դրանից, նա շեշտում է հայերի վիճակը վատթարացնող ևս մեկ համգանձանք. Արևմտյան Դայաստանի տարածքում բնակվող տարբեր մահմեդական ժողովուրդների և առաջին հերթին անհնագանդ քրիստոնյաց ցեղերի հետ նրանց անմիջական հարևանությունը, որն իր նախադեպը չի ունեցել այն երկրներում, որոնք արդեն թոթափել են օսմանյան լուծը: Այս առիթով, հարկ է նշել, որ Պիզանին, ի տարբերություն նախորդ ելույթի, անդրադառնում է արդեն համիլիե գորամիավորումների կազմակորմանը և տալիս նրանց գործողությունների համառոտ, սակայն ընդգրկուն գնահատականը, հիշատակում նրանց իրականացրած անհամար գործությունների, քրիստոնյաների հանդեպ անարգանքների, բռնի արարքների և սպանությունների մասին⁹⁶¹: Այս հարցում աբբա Պիզանիի հավաստումները հիմնավորում են, որ ժամանակակից ցեղասպանագետների առաջդրած՝ «ցեղասպան հասարակություն» կատեգորիան խիստ հատկանշական է Օսմանյան կայսրությանը⁹⁶² և մեծապես օժանդակում է դրա տարածքում ազգամիջյան խմբումների հիմնավոր ընբոննանը:

Այսպիսով, «հայերը, – ինչպես նա նշում է, – շարունակում էին ենթարկվել զարթելի բռնությունների, չնայած Բեռլինի պայմանագրում արձանագրված հստակ երաշխիքներին»⁹⁶³: Ըստ այդմ՝ փակուղին հաղթահարելու միակ հնարավոր՝ զենքի դիմելու միջոցն աբբա Պիզանին մեկնաբանում է ոչ թե հայերին բնորոշ հեղափոխա-

⁹⁶⁰ Նույն տեղում, էջ 7:

⁹⁶¹ Նույն տեղում, էջ 12:

⁹⁶² Այդ մասին տե՛ս սույն գրքի երկրորդ գլուխ առաջին ենթավիճում:

⁹⁶³ L'abbé P. Pisani, Les massacres d'Arménie, p. 12.

կան կարծեցյալ հակումներով կամ օտար երկրների հրահրմանք, ինչպես վարվել են նրա որոշ ժամանակակիցներ, այլ ելնելով հայերի համար ստեղծված անելանելի կացությունից, ինչով և պայմանավորում է տարբեր երկրներում հայկական կուսակցությունների հիմնադրումն ու նրանց ծավալած քարոզչական աշխատանքը: Սակայն, նրա կարծիքով, «որքան նրանց կուսակցության դեկավարները ծեռներեց էին, նույնքան ազգի հիմնական գանգվածը նվազ հակում ուներ գենք կրելու»: Միակ նշանակալից ըմբռստությունը, որն այս անգամ ևս արժանացել է նրա ուշադրությանը՝ 1894 թ. Սասունում բռնկված ապստամբությունն է, որի ճնշումը հանգեցրել է «ջարդի»⁹⁶⁴:

1895 թ. հայերի կազմակերպած Բարք Ալիի ցույցը Կոստանդնուպոլսում աբբա Պիզանին անհրավացիորեն համարում է «վտանգավոր ուղու» ընտրություն, որն, այդուհանդերձ, որդեգրվել է, չնայած այն բանին, որ «հոգևորականությունը, որի շարքերում կային շատ մեծ հայրենասերներ, բայց նաև զգույշ ու փորձառու անձինք, նման նախազգին վերաբերվում էր անհանգստությամբ»⁹⁶⁵: Ցույցին հաջորդած մի քանի օրվա ընթացքում, ինչպես նա նշում է, «հայերին հետապնդել են, կալանավորել, կոտորել... վայրագ անբոխը և ոչ պակաս վայրագ ոստիկանությունը»⁹⁶⁶:

Դիմնվելով հայր Շարմնետանի հրատարակած, վերը նշված, «Դայկական նահատակությունը» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուում ամփոփված վավերագրերի վրա, աբբա Պիզանին վկայակոչում է Դայաստանի տարբեր բնակավայրերում տեղի ունեցած հայկական ջարդերը, թվարկում տարբեր վիլայեթներում զանգվածային կրօնափոխությանը, կանանց առևանգմանը, հոգևորականների նկատմամբ գործադրված կտտանքներին, վանքերի և եկեղեցիների կողոպատմանը վերաբերող փաստեր, ընդգծում կոտորածների իրականացման ընթացքում մահմեղական մոլեռանդ բնակչության, ոստիկանության և կանոնավոր բանակի գինվորների համագործակցությունը:

Իրադարձությունների նկատմամբ տեղական իշխանությունների որդեգրած վարքագծի վերլուծության հարցում նա դրսկորում է անկողմնակալ մոտեցում, մատնանշում տարբեր բնակավայրերում որոշ օսմանյան պաշտոնյաների՝ հայերի հանդեպ դրսկորած բար-

⁹⁶⁴ Նույն տեղում, էջ 13:

⁹⁶⁵ Նույն տեղում, էջ 13-14:

⁹⁶⁶ Նույն տեղում, էջ 14:

յացակամ Վերաբերմունքը: Ելնելով հաճանման ստույգ փաստերից, աբրա Պիզանին իրավամբ եզրակացնում է, որ ցանկության դեպքում, Վերջիններս կարող են, այդուհանդերձ, խոչընդոտել ոճիրների իրականացմանը⁹⁶⁷, մեկ անգամ ևս անուղակիորեն օսմանյան պետության դեկավար շրջանակների վրա բարդելով հայ ժողովրդի բնածնջման պատասխանատվությունը:

Աբրա Պիզանին ընդունում է ցեղասպանության կանխամտածված բնույթը. «Դույներին, – նշում է նա, – ամենուր խնայել են: Սեր առջև կուրացած ամբոխի վայրագությունները չեն, որ հառնում են. ո՛չ, իրականացնողները գործել են ոչ թե տարերայնորեն, այլ նախօրոք ընտրել են և մատնացուց արել մահկան դատապարտվածներին»⁹⁶⁸: Կոտորածների իրականացման հարցում նա ընդգծում է թուրք փաշաների դերը, որոնք «քաջալերում էին վայրագություններ գործող մոլեռանդներին»: Դեռ ավելին. Պիզանին, փաստորեն, համիլյան կոտորածները դիտում է իրու պետական քաղաքականության մակարդակով տեղի ունեցող իրադարձություն. «Կարելի է կարծել, – գրում է նա, – որ մի գաղտնագրված բանագնաց կտրելանցել է երկիրը՝ հաղորդելով այս իրամանը (կոտորածներին առնչվող – Վ. Պ.), որին յուրաքանչյուրն իր պարտքն է համարում ենթարկվել: Նկատելի է նաև, որ կոտորածները հաճախ սկսվել են ուրբաթ օրը, այնժամ, երբ մահեղականները՝ սրբազն պատերազմի մի քանի մոլեգին կոչերով ոգեշնչված դուրս էին գալիս մզկիթից»⁹⁶⁹:

Այս հարցում, սակայն, նրա դիրքորոշումը միանշանակ չէ: Նա թեև փաստում է Դայոց ցեղասպանության հիմնական պատճառը, սակայն, ինչ Վերաբերում է պատասխանատունների դիմազերձմանը՝ նրա մեկնաբանությունները մնում են, այդուհանդերձ, խիստ մակերեսային և անընդունելի: Արձանագրելով, որ դրանից դեռևս մեկ տարի առաջ՝ 1895 թ., ոչ մեկը չէր կարող ենթադրել արևմտահայության նկատմամբ նման նողկալի դավադրության մասին, նա ջանում է բացահայտել հայ ժողովրդի ողբերգության պատճառները. «Ասել և գրել են, որ հայերի բնածնջումը, որը Դայկական հարցի լուծնան ամենից արմատական միջոցն է, նախապատրաստում է սուլթանի կառավարությունը: Ես վարանում եմ ընդունել այդ կարծիքը... Ըստ իս՝ բնածնջման իրամանը կայսերական ապարանքից չի արձակվել. դա, հավանաբար, տրվել է ավելի բարձրից: Սուլթանից Վեր

⁹⁶⁷ Նույն տեղում, էջ 20:

⁹⁶⁸ Նույն տեղում, էջ 17-18:

⁹⁶⁹ Նույն տեղում, էջ 17:

գտնվում են հոգևոր Եղբայրությունները, որոնք իսլանում ամենազոր են»⁹⁷⁰:

Այսպես, իրադարձությունների քննարկումը պարփակելով սոսկ կրոնական առակատման շրջանակում, նա, ցավոք, չնայած այդ ժամանակաշրջանում իրապարակված փաստաթղթերի ընձեռած հնարավորությանը, այդուհանդերձ, անկարող է գտնվել հաղթահարելու իր հսկ հայացքների սահմանափակությունը և ցուցաբերելու համակողմանի մոտեցում: Ի վերջո, սոսկ հիշատակելով Դայկական հարցին լուծում տալու՝ Աբդուլ Ջամիդի նախընտրած տարբերակի մասին, բայց դեռևս չըմբռնելով դրա ինաստը, նա սուլթանին ամբողջությամբ գերծ է պահում հայկական կոտորածների հարցում նվազագույն հսկ պատասխանատվությունից:

Պիզանին փաստում է, ինչպես նշեցինք, նաև այն նյութական աջակցությունը, որը հայր Շարմետանի ջանքերի շնորհիվ Ֆրանսիայում կազմակերպվել էր ցեղասպանությունից մազապուրծ հայերի օգտին: Ի տարբերություն հայր Շարմետանի՝ ծեռնպահ մնալով Եվրոպական տերությունների՝ արևմտահայության ճակատագրի հանդեպ ցուցաբերած անկարեկից վերաբերմունքի հասցեին քննադատական խոսքեր ուղղելուց, նա բավարարվում է սոսկ կոչ անելով իր հայրենակիցներին այդուհետև և հայերին տրանադրել նյութական օգնություն:

Ինչպես տեսնում ենք, աբբա Պիզանիի ելույթների միջև կան եական զանազանություններ, որոնք պայմանավորված են վերն արդեն հիշատակված հանգամանքներով: Դրանց թվում, անկասկած, կարևորագույնը՝ նրա ելույթների միջանկյալ շրջանում հայկական ջարդերի սաստկացումն է, որի արիթով նա իր իրապարակային ելույթի եզրափակիչ մասում հայտարարել է. «Նման դժբախտություններին ի տես, հարկը չկա խորհրդածելու, թե արդյոք զրիերն անզգույշ են եղել՝ գրգռելով իրենց կլանած հրեշին»⁹⁷¹: Մենք համոզված ենք, որ հենց այս հանգամանքն է դրույթ աբբա Պիզանիին Դայոց ցեղասպանության շուրջ հանդես գալու շատ ավելի արմատական դիրքերից:

Չնայած առարկելի, անգամ իրականությանը չհամապատասխանող որոշ մեկնաբանությունների, այդ թվում սկզբունքային հարցերում, առաջադրմանը, աբբա Պիզանիի ելույթներն, անտարակույս, վկայում են ֆրանսիական հասարակության տարբեր խավերի

⁹⁷⁰ Նույն տեղում, էջ 16:

⁹⁷¹ Նույն տեղում, էջ 22:

շրջանուն Հայոց ցեղասպանության շուրջ անթաքրության աճի մասին: Դրանք հարստացրել են Ֆրանսիայում այս հարցի պատմությանը նվիրված պատմագիտական գրականության անդաստանը, նպաստել ժամանակակիցների տեղեկատվության ընդլայնմանը:

Հայոց ցեղասպանությունը միևնույն ելակետային դիրքերից է լուսաբանել նաև արբա L. Գոնդալը, որի հայեցակարգը ևս կրում է իրադարձությունների վրա մահմեղականների և քրիստոնյաների միջև առկա կրոնական առճակատման թողած վճռորոշ ազդեցության կնիքը: Նրա համոզմամբ՝ «այդ դժբախտ երկրում» ազգային անջրպետներն իրենցից ոչինչ չեն ներկայացնում կրոնական զանազանությունների համեմատությամբ, քանզի «քուրքը՝ անհաջող մահմեղականը, քրիստոնյայի հանդեպ տածում է այնպիսի ատելություն, որը ոչնչով չի կարող հագենալ և կասեցվել»⁹⁷²:

Իրադարձությունների անմիջական տպավորության ներքո է գրվել ավետարանական քահանա Ժորժ Ապիայի⁹⁷³, Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում տեղի ունեցած կոտորածների պատմությանը նվիրված գրքույկը⁹⁷⁴: Հեղինակը սահմանափակվում է հպանցիկ դիտարկումներով, թօուցիկ հայացք նետում մի շարք քաղաքներում (Վան, Ձեյրուն և այլուր) տեղի ունեցած անցքերին: Համառոտակի ուրվագծելով 1895 թ. հոկտեմբերի 28-ից ի վեր Ուրֆայուն տեղի ունեցած կոտորածների ընդհանուր պատկերը՝ Ապիան նշում է թե՝ համիդիե գորամիավորումների և թե՝ քրդական հրոսակախմբերի մասնակցությունը հայերի ոչնչացնան գործընթացին, հավաստում «քազում հարյուրավոր» մարդկանց բնաջնջման փաստը, 1500 կրապակի կողոպուտը, բազմաթիվ քրիստոնյաների՝ բռնի կրոնափոխության իրողությունը⁹⁷⁵:

Թեև հեղինակը չի անտեսում մահմեղականների մոլեռանդության նշանակությունը, փաստեր է բերում, թե ինչպես են զանազան

⁹⁷² L. Gondal, La Question arménienne // « Annales catholiques », 6 mai 1896, N 1283, p. 55.

⁹⁷³ Նրա մասին տե՛ս J. Lepsius, Die armenische Konferenz in London // “Der Christliche Orient”, 1897, H. V/VI, S. 244; Deutschland, Armenien und die Türkei 1895-1925. Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes Lepsius-Archiv an der Martin-Luther-Universität Halle-Wittenberg. Teil 3. Hermann Goltz und Axel Meissner. Thematisches Lexikon zu Personen, Institutionen, Orten, Ereignissen, München, 2004, S. 25.

⁹⁷⁴ G. Appia, Enfants arméniens. Souvenirs de Noël 1895. Récits authentiques, Paris, 1896.

⁹⁷⁵ Նույն տեղում, էջ 5:

Վայրերում քնակվող մահմեդականները հանդիմանել Ուրֆայի հավատակիցներին հայերի հանդեպ «մեղմ» վերաբերմունք ցուցաբերելու համար⁹⁷⁶, այդուհանդերձ, ուշադրությունը կենտրոնացնում է հայկական կոտորածների ծրագրված լինելու համգանանքի վրա: Նա ընդգծում է, մասնավորապես տեղական իշխանությունների թողտվությունը, որոնք ոչինչ չեն արել հանցագործներին պատժելու համար և մահմեդական խաժամուժին թույլատրել են կողոպտել հայերի ունեցվածքը:

Ցավով արձանագրելով, որ 1895 թ. հոկտեմբերին Ուրֆայում տեղի ունեցած իրադարձություններն ազդարարել են սոսկ շատ ավելի լայնածավալ կոտորածների սկզբանավորումը, Ապիան համառոտակի անդրադառնում է դեկտեմբերի վերջին տեղի ունեցած հայկական ջարդերի նախապատրաստական աշխատանքներին. «Թուրքական արդարադատության պաշտոնական ներկայացուցիչները՝ քաղաքի ամենաբարձրաստիճան ղեկավարներից մեկի՝ ոմն Շուսեյն փաշայի գլխավորությամբ,— նշում է նա,— գումարել են նիստ և վճռել, որ բոլոր քրիստոնյաներին գինաբափելուց հետո, հարձակում կգործեն նրանց վրա Սուրբ ծննդի հաջորդ օրը՝ 1895 թ. դեկտեմբերի 27-ին»⁹⁷⁷: Ապիան բացահայտում է նաև թուրք ջարդարաների պարագլուխների որդեգրած նենգ գործելամիջոցները, որոնք կոտորածների պատասխանատվությունը հայերի վրա բարդելու նպատակով կեղծ կրակոց են կազմակերպել թուրքական գործերի հրանատարի վրա, ինչը և դարձել է կոտորածի շարժադրը⁹⁷⁸: Ընդհանուր առմանք, հեղինակը հավաստում է, որ միևնույն փաստերն են արձանագրվել երկրի ամբողջ տարածքում, որոնց հետևանքով գոհվել է 100000 հայ, իսկ տասնյակ հազարավորներ՝ հարկադրաբար ուրացել են իրենց հավատը⁹⁷⁹.

Ելնելով նյութի ցաքուցրիկ շարադրանքից, կարելի է հավաստել, որ Ապիան դեռևս ստույգ պատկերացումներ չի ունեցել Հայոց ցեղասպանության գործընթացի պատճառների և մանրամասների, Բարձր Շահն քաղաքականության եկածների, մեծ տերությունների՝ Հայկական հարցում գրաված դիրքորոշման վերաբերյալ: Նա սահմանափակվել է, ըստ երթյան, իր անձնական տպավորությունները թրին հանձնելով: Ըստ այդմ՝ նպատակահարմար ենք գտնում

⁹⁷⁶ Նույն տեղում:

⁹⁷⁷ Նույն տեղում, էջ 6:

⁹⁷⁸ Նույն տեղում:

⁹⁷⁹ Նույն տեղում, էջ 9:

արժևորել նրա կատարած աշխատանքի՝ իր ժամանակի համար ունեցած զուտ տեղեկատվական նշանակությունը:

Նշված հոգևոր գործիչների՝ համիդյան կոտորածների պատմության ուսումնասիրության ասպարեզում շնորհակալ գործի շարունակողը XX դարի սկզբին դարձել է մեկ այլ հոգևոր գործիչ՝ աբբա Գրիգելը, որը շեշտն ակնհայտորեն դրել է իրադարձությունների նկարագրողական կողմի վրա: Այդուհանդեռձ, նրա որոշ մեկնաբանություններն արժանի են ուշադրության: Դեղինակը հիմնվում է հավաստի, մասնավորապես ֆրանսիական ծագում ունեցող սկզբնադրյուրների վրա, հաճախակի հղում «Դեղին գիրք», որից մեջքերում է ընդարձակ քաղվածքներ:

Աբբա Գրիգելն ընդգծում է «ստրկացման քաղաքականության շարունակականությունը, որը հետևողականորեն իրականացվել է հօգուտ գերազանցության հավակնող ազգության», փաստում հայ ժողովրդի բնաջնջման գործընթացի հարատևությունը⁹⁸⁰: Դայոց ցեղասպանության պատմագրության մեջ բուռն բանավեճեր հարուցած այս հիմնախնդրի հանդեպ նման մոտեցումը բխում է Դայկական հարցի շուրջ հեղինակի որդեգրած իրատեսական հայեցակարգից: Դայկական հարցի ծագումը նա շաղկապում է XIX դ. 70-ական թվականներին տեղի ունեցած դիվանագիտական բանակցություններին: Ի տարբերություն իր մեծաթիվ ժամանակակիցների, նա թափանցում է հարցի ծագման ակունքների մեջ, հստակորեն մատնանշում Սան-Ստեֆանոյի և Բեղլինի Վեհաժողովի պայմանագրերում զետեղված՝ արևմտահայությանն առնչվող հոդվածների էական տարբերությունը, մանրամասնում, որ բարենորոգումների երաշխավորումն ըստ Երկրորդ Փաստաթղթի՝ Ուսասատանի փոխարեն ստանձնում էին վեց մեծ տերությունները⁹⁸¹: Ելնելով դրանից՝ աբբա Գրիգելը Դայոց ցեղասպանությունը միանգամայն իրավամբ մեկնաբանում է իբրև սուլթանի որդեգրած՝ Դայկական հարցին լուծում տալու տարբերակ⁹⁸², ինչը պարզորոշ վկայում է, որ նրան հաջողովել է հիմնավորապես բացահայտել արևմտահայության բնաջնջման հիմնական պատճառը:

Սահմեդականներին բնորոշ մոլեռանդության հենքի վրա, աբբա Գրիգելը փաստում է հայերի հանդեպ թուրքերի տածած ավանդա-

⁹⁸⁰ L'Abbé E. Griselle, Une victime du pangermanisme. L'Arménie Martyre, Paris, 1916, p. 99.

⁹⁸¹ Նույն տեղում, էջ 35:

⁹⁸² Նույն տեղում, էջ 83:

կան ատելության նշանակությունը հայկական կոտորածներում, ինչը նպաստել է թե՛ թուրքերի և թե՛ հաճախ նրանց իսկ զոհը դարձած քրդերի համախմբմանը, քանզի այս պարագայում արդեն վերջիններս վերածվել էին իրենց իսկ դահիճների օժանդակ ուժի⁹⁸³: Այս հարցում նրա մեկնաբանություններն ամենին սպառիչ չեն, քանզի կայսրության տարածքում բնակվող քրդերի որոշ մասի մասնակցությունը հայերի ոչնչացմանը պայմանավորված էր այլայլ, նրան դեռևս անհասանելի դրդապատճառներով, այդ բվում Արդուլ Դամիդի՛ վերջիններիս միջոցով հայկական կոտորածների իրականացման ցանկությամբ⁹⁸⁴:

Արևատահայության հանդեպ հարստահարիչների ատելությունն արբա Գրիգելը պատճառաբանում է նաև հայերի այնպիսի արժանիքներով, ինչպիսիք են աշխատասիրությունը, տարբեր ասպարեզներում բանիմացությունը, որոնք աննկատ չեն մնացել օսմանյան իշխանությունների և դրանց գործակալների կողմից⁹⁸⁵: Այս պայմաններում, հաշվի առնելով պատճական Դայաստանի բաժանման հանգամանքը և ելեւլով հայ ժողովրդի շահերից, նա դրական վերաբերմունք է ցուցաբերում Արևատյան Դայաստանի՝ Ուսասատանին միացման հնարավոր տարբերակի հանդեպ⁹⁸⁶:

Բեռլինի Վեհաժողովին հաջորդած ժամանակաշրջանում արևատահայության հալածանքները (չարաշահումների սաստկացում, արդարադատության կատարյալ բացակայություն, համիդի գորամիավորումների իրականացրած բռնություններ) արբա Գրիգելը քննարկում է ըստ Կամբոնի զեկուցագրերի՝ և հայերի համար ստեղծված իրավիճակը պատճառաբանում գլխավորապես Եվրոպական պետությունների անտարբերությամբ⁹⁸⁷:

Դարկ է մատնանշել, որ արբա Գրիգելը չի թաքցնում իր հիմնական նպատակը, այն է՝ Դայոց ցեղասպանության առնչությամբ բավարարվել սոսկ պաշտոնական և անօռարկելի վկայություններից քաղված փաստերի վկայակոչմամբ⁹⁸⁸: Ըստ այդմ՝ ծեռնպահ մնալով ցեղասպանության առաջին փուլի պատմության հիմնահարցերի գիտական մեկնաբանությունից, նա սահմանափակվում է 1894-1896

⁹⁸³ Նույն տեղում, էջ 17-19:

⁹⁸⁴ Դայոց ցեղասպանությանը քրդերի մասնակցությանն առնչվող հանգամանքների մասին մանրամասն տե՛ս Ն. Դովիաննիսյան, նշվ. աշխ., էջ 97-111:

⁹⁸⁵ L' Abbé E. Griselle, նշվ. աշխ., էջ 21:

⁹⁸⁶ Նույն տեղում, էջ 16:

⁹⁸⁷ Նույն տեղում, էջ 35:

⁹⁸⁸ Նույն տեղում, էջ 40:

թթ. հայկական կոտորածների բազմաթիվ մանրամասների թվարկ-մանք: Ուստի անհրաժեշտ ենք համարում հավաստել, որ հղելով ֆրանսիական տարրեր սկզբնադրյուրներ, մասնավորապես, «Դեղին գիրքը» և Սեբաստիայում Ֆրանսիայի փոխհյուպատոս Կարլիեի տիկնոց օրագիրը, իր առջև դրված խնդիրը նա, ըստ եռթյան, կատարել է: Ըստ դրանցից մեջքերված ընդարձակ քաղվածքների՝ նա ուրվագծում է Արևմտյան Հայաստանի տարրեր նահանգներում ընթացքի մեջ գտնվող կոտորածների հավաստի պատկերը⁹⁸⁹:

Այնուամենայնիվ, աբբա Գրիգելի շարադրանքում նկատվում են նաև սակավաթիվ հեղինակային միջամտություններ, որոնք մասամբ վերաբերում են օսմանյան իշխանությունների հանցագործ քաղաքականության բացահայտմանը: Դեղինակը փաստում է կոտորածներին ի տես՝ վերջիններիս կրավորական պահվածքը, որը հանգում էր լրություն պահպանելուն, պատասխանատուններին թաքցնելուն կամ որոշ տեղական բարձրաստիճան պաշտոնյաների առաջընթացին նպաստելուն՝ իբրև հայկական կոտորածների ծավալման ուղղությամբ գործադրած ջանքերի փոխհաստուցում⁹⁹⁰:

Առավել արժեքավոր են, սակայն, Հայկական հարցում մեծ տերությունների որդեգրած քաղաքականությանն առնչվող աբբա Գրիգելի մեկնաբանությունները: Ինչպես և իր նախորդներից շատերը, նա ևս խստիվ նշավակում է Գերմանիայի հակահայկական քաղաքականությունը, Վիլհելմ II կայսրին անվանում Աբդուլ Համիդի «բարեկամ ու շողոքոր» և խարազանում Ֆրանսիայի ախոյանին այն «ամորթալի աջակցության» համար, որը նա ցուցաբերել է քրիստոնյա ժողովորդի դահիճներին՝ նրա կատարյալ բնաջնջման ընթացքում⁹⁹¹:

Միաժամանակ որոշ հայեցակարգային հարցերում նա շեղվում է XIX դարի վերջի և XX դարի սկզբի ֆրանսիացի պատմաբանների տեսակետներից և առաջադրում շատ ավելի ընդգրկուն մեկնաբանություններ: Այս առումով, հարկ է առանձնացնել Ռուսաստանի քաղաքականության գնահատականը, քանզի այս հարցում աբբա Գրիգելը, ինչպես իր միակ նախորդը՝ կոմս Շողորդին, սակայն, ի տարբերություն նրա՝ զուսպ դիրքերից, քննադատում է ցարին, որը երկար ժամանակ ցանկություն չի դրսելու գրադարձու Հայկական

⁹⁸⁹ Նույն տեղում, էջ 41-67:

⁹⁹⁰ Նույն տեղում, էջ 49, 62: .

⁹⁹¹ Նույն տեղում, էջ 99:

հարցով⁹⁹²: Նշված ժամանակահատվածում ֆրանսիացի պատմաբանները ելնելով ռուս-ֆրանսիական դաշինքի ամրապնդման անհրաժեշտությունից՝ ծեռնպահ են մնացել ֆրանսիայի դաշնակցի հասցեին քննադատական բնույթի եզրահանգումներից: Դեղինակի անկողմնակալ և մերկացուցիչ այս դիտարկումը կարելի է մեկնաբանել սուս այն բանով, որ նրա գիրքը թղթին է հանձնվել Առաջին համաշխարհային պատերազմի սանձագերծումից հետո, երբ ահեղ դաշնակցին հաճոյանալու կարիքը ֆրանսիան այլևս չուներ:

Դեղինակը, սակայն, շրջանցում է XIX դարի վերջին և XX դարի սկզբին Ռուսաստանի արևելյան քաղաքականությանը համահունչ ֆրանսիայի թքամետ արտաքին քաղաքականության վերլուծությունը, որը մեծապես նպաստել է հայկական կոտորածների իրականացմանը: Փոխարենը, նա մեծ տեղ է հատկացնում Օսմանյան կայսրության տարածքում հավատարմագրված ֆրանսիացի դիվանագետների՝ Կամրոնի, Մելիքի անձնուրաց գործունեության դրվատմանը, բնորոշելով նրանց վարչագիծն իրու հերոսական և պարզաբանելով, որ առանց նրանց միջամտության կոտորածներն ավելի սաստիկ կլինեին⁹⁹³: Այս պարագայում, մեր կարծիքով, նրան որևէ չափազանցության մեջ հանդիմանելն աննպատակահարմար է:

Մեր քննարկած ֆրանսիացի հոգևոր գործիչների, մասնավորապես հայր Շարմետանի և արքա Պիզանիի աշխատություններին բնորոշ է համիլյան կոտորածների պատմությանն առնչվող քազմագան բարդ հիմնախնդիրների ընդգրկումը, դրանց հանդեպ վերլուծական մոտեցման ցուցաբերումը: Ի շարս այլ կարևոր հարցերի, կամա, թե ակամա, նրանք բացահայտել են, մասնավորապես հայկական կոտորածների մտահղացումն ու իրականացումը պետական քաղաքականության մակարդակով: Նրանց թվում նշանակալից է հայր Շարմետանի ներդրումը, որի ջանքերի շնորհիվ իրատարակված փաստաթղթերը մեծապես օժանդակել են ֆրանսիացի ժամանակակիցներից շատերի ծիշտ կողմնորոշմանը՝ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող Դայոց ցեղասպանության գործընթացին առնչվող զանազան մանրամասներում:

Անշուշտ, նրանց որոշ ոչ սպառիչ, երբեմն անգամ անընդունելի մեկնաբանությունները, այդ թվում հայեցակարգային խնդիրներում, պայմանավորված են մասամբ նրանց՝ իրու հոգևորականների աշխարհայացքի ակնհայտ սահմանափակվածությամբ: Դասկանալի է,

⁹⁹² Նույն տեղում, էջ 83:

⁹⁹³ Նույն տեղում, էջ 40, 50, 65-67:

որ այս էական հանգամանքը չեր կարող անհետևանք մնալ, ուստի այն իր անջնջելի դրոշմն է թողել Յայոց ցեղասպանության գործընթացն իրուն՝ գլխավորապես, կրոնական զանազանության հողի վրա տեղի ունեցած իրադարձություն մեկնաբանող թյուր տեսակետին տուրք տալու հարցում:

Յոգևոր գործիչների որոշ մեկնաբանություններն ավելի մասնավոր խնդիրներում բացահայտորեն վկայում են նրանց ոչ լիարժեք տեղեկատվության մասին, ինչը պայմանավորված է հատկապես օգտագործած սկզբնաղբյուրների սակավությամբ: Այդ հանգամանքը բացահայտորեն դրսնորվել է Յայոց ցեղասպանության պատճառների քննարկման պարագայում: Աղբյուրագիտական հենքի ընդլայնմանը զուգընթաց թեև ակնառու է իրադարձության հիմնախնդիրների քննարկումն ավելի լայն ետնախորքի վրա, ինչպես նաև նրանցից ոնանց հայացքների մասնակի բարեշրջումը, այդուհանդերձ, անվիճելի են այն, որ նրանք ի վիճակի չեն եղել անբողջությամբ հաղթահարելու իրենց իսկ աշխարհընկալման սահմանափակությունը, որի հետևանքով, փաստելով ցեղասպանության իրականացումը պետական քաղաքականության մակարդակով, շարունակել են մեկնաբանել դրա պատճառները խիստ նեղ՝ կրոնական առճակատման հենքի վրա:

Այնուամենայնիվ, ֆրանսիացի հոգևոր գործիչները նպաստել են օսմանյան լծի տակ տառապող հայ ժողովրդի ողբալի կացության շուրջ Ֆրանսիայում պատկերացումների ծևավորմանն ու հայասիրական շարժման ընդլայնմանը, ինչը ևս, անտարակույս, դասվում է նրանց հիմնական արժանիքների շարքը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Անփոփելով Դայոց ցեղասպանության պատմագրության մեջ առաջին անգամ ուսումնասիրվող սույն թեմային նվիրված մեր մենագրության արդյունքները, հարկ ենք համարում ուշադրությունը բևեռել էական նշանակություն ունեցող մի շարք խնդիրների վրա: Ինչպես տեսանք, Դայոց ցեղասպանությունն անկողմնակալ դիրքերից լուսաբանող ֆրանսիացի հեղինակները մի շարք սկզբունքային հարցերի տալիս են իրարամերժ գնահատականներ: Ըստ այդմ՝ իմաստ ունի մանրամասնել նրանց մեկնաբանությունների զանազանության պատճառները: Այդ կապակցությանը նպատակահարմար ենք գտնում սահմանափակվել սոսկ առանցքային նշանակություն ունեցող առավել կարևոր հարցերի քննարկմամբ:

Դարկ է, մասնավորապես նկատի ունենալ, որ ֆրանսիացի պատմաբանների և մտավորականների մի մասը Դայոց ցեղասպանության առաջին փուլին նվիրված իրենց աշխատությունները գրել են մինչև «Դեղին գրքի» և փաստաթղթերի այլ ժողովածուների լույս ընծայումը, որը նրանց՝ պատմական անցքերի մեկնաբանության ակնբախ միակողմանիության հիմնական պատճառներից է: Դակառակ դեպքում, ինչպես բացատրել նրանցից մի մասի (Պ. Քիառ, Ֆ. դը Պրեսսանսե, հայր Շարմետան) հայացքների ակնհայտ բարեշրջությունը, որը տեղի է ունեցել ոչ միայն իրադարձությունների զարգացմանը զուգընթաց, այլև՝ ըստ ուսումնասիրվող թեմայի աղբյուրագիտական հենքի ընդլայնման, ինչի արդյունքում նրանք հայ ժողովրդի բնաջնջման գործընթացին տվել են շատ ավելի սպառիչ և ընդգրկուն մեկնաբանություններ:

Ոմանք համիդյան կոտորածները քննարկել են Բարձր Դռան՝ կայսրության տարածքում բնակվող քրիստոնյա և մահմեդական այլ ժողովուրդների նկատմամբ կիրառած քաղաքականության ընդհանուր հենքի վրա, ինչն ինքնին ողջախոհ մոտեցում է: Այդուհանդերձ, նրանք երբեմն չեն մատնանշել այն հանգամանքները, որոնք հայ ժողովրդի պարագայում Բարձր Դռան կիրառած՝ օսմանյան պետական քաղաքականությունը զանազանում էին կայսրության տարածքում բնակվող այլ ժողովուրդների նկատմամբ գործադրվող զանգ-

Վածային բռնություններից: Արդյունքում՝ նրանք անտեսել են, մասնավորապես Դայկական հարցին լրիցում տալու՝ Աբդուլ Շամիդ II-ի որդեգրած յուրօրինակ տարրերակը, որի նպատակը Դայկական հարցից մեկընդիշտ ծերբազատումն էր և բռնագրավված հայկական տարածքների նկատմամբ Օսմանյան կայսրության իրավունքների ամրագրումը:

Ֆրանսիայի ավանդական արևելյան քաղաքականության շահերին համապատասխանող՝ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու անհրաժեշտության գաղափարն արձարձվել է ֆրանսիացի մտավորականների գերակշռող մասի ելույթներում: Պաշտոնական Ֆրանսիայի դիրքորոշումն այս հարցում լավագույնս ներկայացրել է արևմտահայության ամենամեծ բարեկամներից մեկը՝ Պոլ Կամբոնը, Գաբրիել Շանոտոյին հղած՝ 1896 թ. հուլիսի 9-ի թվակիր ճեպագրում. «Ինչպես և դուք, ես կարծում եմ, որ մենք ոչ մի շահ (ընդգծումը հեղինակին է - Վ. Պ.) չունենք Օսմանյան կայսրության տրոհումից»⁹⁹⁴: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ այդ գործընթացը կարող է տերի ունենալ ինքնարերաբար, քանի որ բարենորոգումների իրականացման անհրաժեշտության հարցում սուլթանին համոզելը «ցնորը» է, կայսրության մասնատումը կամնելու նպատակով՝ Կամբոն առաջարկում է նախարարին կազմակերպել Եվրոպական տերությունների համատեղ և արդյունավետ միջամտությունը սուլթանի գործերին⁹⁹⁵:

Այսպիսին եր նաև ֆրանսիացի մտավորականների գրեթե անսասան դիրքորոշումը, որը հանգում էր կայսրության տարածքային ամբողջականության պահպաննան հիմնավորմանը, միանգամայն օրինաչափ է: Անարգանքի սյունին գամելով Շայոց ցեղասպանության կազմակերպիչներին և հանդես գալով հանուն հայ ժողովրդի շահերի պաշտպանության, նրանք, չնչին բացառություններով, հանդես են եկել գլխավորապես Օսմանյան կայսրության տարածում նրա համար ստեղծված անհանդուրժելի պայմանների բարելավմանն ուղղված բարենորոգումների կենսագործման պահանջով:

Շայոց ցեղասպանության գործընթացի կասեցումը ենթադրող՝ մեծ տերությունների գինված միջամտությունն անխուսափելիորեն կիանգեցներ Օսմանյան կայսրության տարածքի մասնատմանը և իբրև դրա անմիջական հետևանք՝ Ֆրանսիայի ախոյաններից որևէ

⁹⁹⁴ P. Cambon, նշվ. աշխ., էջ 410:

⁹⁹⁵ Նույն տեղում, էջ 411:

մեկի դիրքերի ամրապնդմանը Մերձավոր Արևելքում⁹⁹⁶, ինչն ամենահին չէր համընկնում Ֆրանսիայի ռազմավարական շահերին:

